



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:


*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

Գիրքը հրատարակվել է  
ԳԱՍՈՒՍՏ - ԳՅՈՒԼՔԵՆԿՅԱՆ  
հիմնարկության հովանավորությամբ

Նվիրում են ծնողներին՝  
Հարություն Միհրանի Հարությունյանի  
և Արփենիկ Սերգոյի Մատինյանի  
պայծառ հիշատակին:



Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՄԵԾ ՀԱՅՔԻ  
ՎԱՐՉԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ  
ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՅ»- Ի  
Մաս Ա**  
(Արևմտյան և հարավային աշխարհներ)

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ.Ն.**

Հ 422 «Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, -Եր., Երևանի համալս. հրատ., 2001, 404 էջ:

Ներկա աշխատությունը նվիրված է Մեծ Հայքի թագավորության վարչա-քաղաքական բաժանման համակարգի համակողմանի քննությանը «Աշխարհացոյց»-ի, ինչպես նաև հայկական և օտարալեզու սկզբնաղբյուրների նյութերի հիման վրա: Առաջին անգամ փորձ է արված յուսարանելու Մեծ Հայքի ըստ աշխարհների, վարչական բաժանման ձևավորման գործընթացը, հանգամանակից վերլուծված է թագավորության գավառաբաժանումը, ինչպես նաև ավարապիրության ունեցած ազդեցությունը ներկի վարչական բաժանման գարգացումների վրա:

Աշխատությունը կարող է օգտակար լինել հայագետներին, արևելագետներին, ուսանողությանը և հայագիտությանը հետազոտող ընթերցող հասարակայնությանը:

Հ 0503020913  
704(02) 2001

ԳՄԴ 63.3 (2Ն)

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Մեծ Հայքի թագավորությունը առանձնահատուկ տեղ ունի հայկական պետականության պատմության մեջ: Ծնունդ առնելով Հայաստանի երվանդունիների միասնական թագավորությունից, որը մ.թ.ա. IV դարի երկրորդ կեսին, ինչ-ինչ հանգամանքներում, բաժանվել էր Մեծ և Փոքր Հայքերի պետությունների, այն սկզբում երվանդունիների, իսկ այնուհետև Արտաշեսյանների ու Արշակունիների իշխանության ներքո գոյատևեց շուրջ յոթ ու կես հարյուրամյակ, անգնահատելի դեր խաղալով հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության մեջ: Հայտնվելով Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզում որպես ստրկատիրական պետություն, այն II-III դարերի սահմանագլխին, ավատատիրական կարգերի հաղթանակի հետևանքով, վերածվում է վաղ ավատատիրական միապետության, որի արդյունքում լուրջ փոփոխությունների է ենթարկվում թագավորության վերնաշենքը իր քաղաքական, իրավական և այլ հաստատություններով: Վերնաշենքային հաստատությունների մեջ իր որոշակի տեղն ունի պետության վարչա-քաղաքական բաժանման համակարգը, որը պատմա-աշխարհագրական քննության ուրույն և կարևոր բնագավառ է:

Հայաստանի վարչա-քաղաքական բաժանումների պատմության ուսումնասիրությունը մեծ կարևորություն ու հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հայագիտության, այլև կովկասագիտության և արևելագիտության համար: Այն իր նշանակալից նպաստն է բերում Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության քննությանը: Վարչա-քաղաքական բաժանումը վերնաշենքի քաղադրամասերից է: Կ. Մարքսը, անդրադառնալով հասարակության տնտեսական հիմքին և վերնաշենքին, գրել է. «Իրենց կյանքի հասարակական արտադրության ժամանակ մարդիկ մտնում են որոշակի, անհրաժեշտ, իրենց կամքից անկախ հարաբերությունների՝ արտադրական հարաբերությունների մեջ, որոնք համապատասխանում են նյութական արտադրողական ուժերի զարգացման որոշակի աստիճանին: Այդ արտադրական հարաբերությունների ամբողջությունը կազմում է հասա-



րակության տնտեսական ստրուկտուրան, այն իրական բազիսը, որի վրա բարձրանում է իրավական և քաղաքական վերնաշենքը և որին համապատասխանում են հասարակական գիտակցության որոշ ձևերը»<sup>1</sup>: Պետությունը քաղաքական վերնաշենքի հիմնական, թեև ոչ միակ հաստատությունն է, որի էական հատկանիշներից մեկը որոշակի տարածքի առկայությունն է, որի սահմանները եզրափակվում են տվյալ պետական իշխանությամբ: Պետության վարչա-քաղաքական բաժանումը, այսինքն նրա տարածքի բաժանումը տարբեր վարչա-տարածքային միավորների՝ մարզերի, նահանգների, երկրամասերի, կողմերի, գավառների, գավառակների, շրջանների և այլն, հանդիսանում է պետության վարչա-քաղաքական կառուցվածքը, որն, անկասկած, պայմանավորված է տվյալ պետության դասակարգային էությամբ ու խնդիրներով, հասարակության տնտեսական հիմքի բնույթով: Յուրաքանչյուր պետության վարչա-քաղաքական բաժանման համակարգը նպատակ ունի արդյունավետ դարձնելու պետական կառավարման և, մասնավորապես, պետական իշխանության տեղական մարմինների գործունեությունը:

Հայաստանի վարչա-քաղաքական բաժանումների պատմության ուսումնասիրությունն ունի ոչ միայն զուտ գիտական, այլև կարևոր քաղաքական նշանակություն: Թուրքական պատմագրությունը, որ հեռուն գնացող քաղաքական նպատակներ հետապնդելով, ըստ ամենայնի նենգափոխում է հայոց պատմության հիմնահարցերը, փորձում է կասկածի տակ առնել հայկական պետականության գոյությունն անգամ: Հետևաբար հայկական պետականությանը նվիրված ամեն մի լուրջ աշխատության հանդես գալը կարևոր ներդրում է թուրքական պատմագրության նենգափոխումների և քաղաքական նկրտումների բացահայտման գործում:

Հայաստանի պատմա-աշխարհագրական խնդիրների, այդ թվում նաև վարչա-քաղաքական բաժանումների քննությունը մեծ հնչեղություն և արդիականություն է ձեռք բերում Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման մեր օրերում, երբ հայ ժողովուրդը ազգային ազատագրական պայքարի հաղթանակից հետո՝ խիստ ծանր տնտեսական պայմաններում, կերտում է իր վերածնված պետականությունը:

Հայաստանի և առաջին հերթին Մեծ Հայքի վաղ ավատատիրության շրջանի վարչա-քաղաքական բաժանման համակարգի ուսումնասիրության ուղղությամբ կատարված է մեծ աշխատանք: Մեծ Հայքի պատմական աշխարհագրությամբ զբաղվող հեղինակները՝ հանձին հայագիտության երախտավոր-

<sup>1</sup> Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, տե՛ս Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, երեք հատրով, հ. Ա. Երևան, 1972, էջ 689:

ներ Ղ. Ինճիճյանի, Ղ. Ալիշանի, Հ. Հյուբշմանի, Հ. Մարքվարթի, Ն. Ադոնցի, Հ. Տաշյանի, Ս. Երեմյանի, Թ. Հակոբյանի և այլոց, իրենց աշխատություններում նշանակալից ուշադրություն են դարձրել վարչա-քաղաքական բաժանման համակարգի ուսումնասիրությանը: Այսուհանդերձ, պետք է խոստովանել, որ Հայաստանի վաղ ավատատիրության շրջանի վարչա-քաղաքական բաժանման համակարգը մինչև օրս էլ ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնց լուսաբանումն ու գիտական վերլուծությունը հայագիտության համար առաջնահերթ նշանակություն ունեն: Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ շատ խնդիրներ ու հարցադրումներ, որոնք գրեթե անլուծելի էին կամ գոնե անբացատրելի XIX դարում և XX դարի առաջին կեսին, հայագիտության վերջին նվաճումների լույսով ստանում են միանգամայն հիմնավոր գիտական բացատրություններ ու մեկնաբանություններ մեր օրերում:

Գիտական հասարակայնության դատին ներկայացվող սույն մենագրությունը, որ նվիրված է Մեծ Հայքի թագավորության վաղ ավատատիրական շրջանի վարչա-քաղաքական բաժանման համակարգի քննությանը, նպատակ ունի ինչ որ չափով լրացնել այդ բացը: Հայաստանի և առաջին հերթին Մեծ Հայքի վարչական բաժանումը հեղինակին ներկայանում է ոչ թե անփոփոխ մի հաստատություն, այլ կենդանի մարմին, որը զարգանում և փոփոխվում էր Մեծ Հայքի և ընդհանրապես Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթաց: Քննությունը կատարելով ժամանակի և տարածության մեջ, քաղաքական պատմության և հասարակական զարգացման լայն հենքի վրա, վեր են հանվում վարչական այն իրողությունները և տեղաշարժերը, որոնց ենթարկվեց Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը վաղ ավատատիրության դարաշրջանը թևակոխելիս: Ուսումնասիրությունը կատարված է ձեռագրական նյութերի, հրապարակի վրա եղած հայկական և օտար սկզբնաղբյուրների, բազմաբնույթ ուսումնասիրությունների հիման վրա:

#### Սկզբնաղբյուրներ

Հայաստանի վաղ ավատատիրության, ինչպես նաև անուղղակիորեն՝ դրան նախորդող շրջանի վարչա-քաղաքական բաժանման համակարգի ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրը «Աշխարհացոյց»-ն է, որ մեզ հասել է ընդարձակ և համառոտ խմբագրություններով: «Աշխարհացոյց»-ն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ: Համառոտ խմբագրությունը հրատարակվել է առաջին անգամ 1668 թ. Ամստերդամում՝ նշանավոր Ոսկան



5. Մի քանի հայկական աշխարհներ համարվում են վրացական և աղվանական, իրողություն, որ հնարավոր էր լուկ հայոց թագավորության անկումից հետո, այսինքն 428 թվից հետո:

6. Շատախ գավառանունը Չորրորդ Հայք աշխարհում հանդիպում է նրա հանդես գալուց երկու դար առաջ: Ըստ որում, գավառի ձևավորման ժամանակը Սեն-Մարտենը որոշում է համաձայն Հովհան Մամիկոնյանի վկայության:

7. Ապառաժ Արարիայի Փառնիտիս մարզում «Աշխարհացոյց»-ի հեղինակը տեղադրում է «տունն Աբրահամու», որն, ամենայն հավանականությամբ, Մեքքան է: Սակայն այդ անունը կարող էր Հայաստանում հայտնի լինել Մուհամեդի հանդես գալուց հետո:

8. Բաբելոնի նկարագրության մեջ հիշատակվում են Բասրան (Պասրա) և Բուֆահը (Բուֆ), որոնք հիմնադրվել են VII դարի կեսին արաբների կողմից:

9. Թուրք ցեղանունը, որ հիշատակվում է «Աշխարհացոյց»-ում, բյուզանդացիներին հայտնի դարձավ միայն VI դարի վերջին:

10. Փարսախ բառաձևը (այսինքն Ֆարասանգը) ցույց է տալիս, որ այն կարող էր կիրառվել Հայաստանում արաբների ազդեցությամբ, ուստի չէր կարող հանդիպել V դարի հեղինակի երկում:

11. Ռուան երկրանունը մուսուլմանները տվել են Հայաստանի այն մասին, որտեղ գտնվում էր Երևանը:

12. V դարի հեղինակը հազիվ թե կարող էր հիշատակել «Կինեսրին»-ը Ասորիքում և Մոսուլը՝ Ասորեստանում<sup>1</sup>:

Սեն-Մարտենը օգտվել էր, և ինքն էլ շեշտում է այդ հանգամանքը ներածականում, մի սխալաշատ, հետագա ընդմիջարկություններով ու աղավաղումներով լի ձեռագրից: Հեռուն գնացող եզրակացությունների համար հարկ էր ծանոթանալ «Աշխարհացոյց»-ի մյուս ձեռագրերին ևս, սակայն ֆրանսիացի հայագետը՝ բավարարվելով դրանով և, ըստ էության վերջնական համարելով քննության արդյունքները, իր հրատարակած տեքստը վերնագրեց «Աշխարհացոյց ստոյ Մովսիսի Խորենացու»<sup>2</sup>: Սեն-Մարտենի աշխարհացույցյան քննությունը, չնայած իր մի շարք դրական կողմերին, վերը նշված պատճառով խիստ խոցելի էր:

Խիստ ազդված Սեն-Մարտենի քննադատությունից և քննության արդյունքներից, որոնք կասկածի տակ էին առնում հայ մշակույթի նշանավոր կոթողներից մեկի վաղեմիությունը, վենետիկյան մխիթարյան Ղուկաս Ին-

<sup>1</sup> Անդ, էջ 305-314: Sté'u ևսն Армянская География VII в. по р. X., էջ V-VI:

<sup>2</sup> Անդ, էջ 318:

ճիճյանը հանդես եկավ ֆրանսիացի հայագետի տեսակետների հերքումով: Անդրադառնալով Սեն-Մարտենի օգտագործած տպագիր օրինակին, նա ցույց էր տալիս, որ նրանում «բազում ինչ են՝ որք քանզի գլխի Խորենացույն եղեն, նմին իրի գլանայ նորին մատենագրի ասել զայն աշխարհագրութիւն, այլ ի յետագայից յերկրեալ կարծէ որ յիններորդ կամ ի տասներորդ դարու բայց ոչ զիտէ թէ այնպիսի բանք ոչ գտանին ի ձեռագիրս»<sup>3</sup>: Չնայած Բ. Պատկանյանի կարծիքով «В его возражениях не столько было веских доводов, сколько требование, чтоб и французский ученый относился с должным пиететом к памятнику армянской древности. В конце концов результатом полемики было то, что всякий безпристрастный читатель невольно становится на сторону Сен-Мартена, который поддерживает свое мнение научнообразно и с целым арсеналом доказательств, тогда как его противник органичивается голословными опровержениями»<sup>2</sup>, մենք գտնում ենք և կիրորձենք ստորև ցույց տալ, որ Ղ. Ինճիճյանը ձեռագրական նյութի հիման վրա հերքեց Սեն-Մարտենի բերած կովանների նշանակալից մասը: Այսպես, նա ցույց տվեց, որ առավել հին և ընտիր օրինակներում ընդհանրապես բացակայում են «որ է Յօզու Ռուսաց» արտահայտությունը և Շատախ գավառանունը, Տավրիկյան կամ Տավրական թերակղզին կոչվում է ոչ թե Արիս, այլ «Բեռաին կամ Բեռուն ցամաք կղզի», երկրամասի անունը ոչ թե Ռուան է, այլ Ռուել, որը գտնվում է Մարաստանում և բնավ չի նույնանում Երևանի հետ<sup>3</sup>: Հետաքրքիր են հեղինակի պրպտումները և եզրակացությունները Սեն-Մարտենի որոշ սխալների ակունքների առնչությամբ: Պարզվում է, որ հին և ընտիր ձեռագրերում ֆրանկները բնավ էլ հզոր ազգ չեն դիտվում, որովհետև տպագիր օրինակի «Ռուսի (Գալլիան - Շ.Բ.) քաղաքս և ազգս բազումս և հզորս զազգն ֆռանկաց»-ին ձեռագրերում համապատասխանում է «Ռուսի քաղաքս և ազգս բազումս և հզորս. և զազգն Փռանգաց» արտահայտությունը<sup>4</sup>: Դժվար չէ տեսնել, որ նման կացություն Գալլիայում իրոք գոյություն ուներ V դարում, ըստ որում վերջերին: Ղ. Ինճիճյանը միանգամայն հիմնավոր ցույց էր տալիս, որ Արիսի թերակղզու բնակիչների քրիստոնեության ընդունումը չպետք է կապել ռուսների քրիստոնեացման հետ (ըստ հեղինակի

<sup>1</sup> Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. 9, Վենետիկ, 1835, էջ 305:

<sup>2</sup> К. П. Патканов, Армянская География VII века по р. X., էջ VI:

<sup>3</sup> Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. 9, էջ 305-308:

<sup>4</sup> Անդ, էջ 309:

986թ.), որովհետև Ղրիմը, գեթ մասամբ, դեռ մինչև հռոմեական իշխանության տակ ընկնելը, պետք է քրիստոնեությունը ընդունած լիներ<sup>1</sup>: Հարկ է խոստովանել, որ այս հարցում Սեն-Մարտենի դիրքերը հույժ խախուռ են, որովհետև, ինչպես ճիշտ նշում է Հ. Մանանդյանը, «Քեռսունը քրիստոնեական խոշոր կենտրոն էր արդեն չորրորդ և հինգերորդ դարերում, և հատկապես Քեռսուն քաղաքում գտնված են եկեղեցիների ավերակներ, որոնցից հնագույնը կառուցված է եղել դեռևս չորրորդ դարում»<sup>2</sup>: Իսկ եթե ֆրանսիացի հայագետը այդ կապում է Պապոս Աղեքսանդրացու ժամանակաշրջանի հետ, երբ իրոք կասկածելի է Ղրիմում քրիստոնեական մեծ համայնքի առկայությունը, ապա նա թույլ է տալիս երկրորդ մեծ սխալը, կարծելով, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը լույ ծաղկաբաղ է կատարել հույն աշխարհագետից, հանդես չբերելով ինքնուրույնություն: Վերջինս ի հայտ է գալիս ոչ միայն Հայաստանի և հարևան երկրների նկարագրության մեջ, այլև բազմաթիվ այլ հատվածներում: Երիցս իրավացի է Ղ. Ինճիճյանը, երբ ցույց է տալիս, որ Մեքքայի Աբրահամու տուն լինելը Հայաստանում կարող էին իմանալ մինչև Մուհամեդի հանդես գալը<sup>3</sup>: Ավելին, եթե խորանանք հարցի մեջ, ապա կտեսնենք, որ VII դարում մահմեդականության բուռն տարածման և Մուհամեդի հռչակի հետևանքով, Մեքքայի կապելը Աբրահամի անվան հետ, ըստ էության, ժամանակավորեալ երևույթ էր, որովհետև VII կամ հետագա դարերի հեղինակը Մեքքայի անվանումն, ամենից առաջ, կկապեր իսլամի հիմնադրի անվան հետ: Ուշադրության արժանի են հեղինակի դիտողությունները «փարսախի» հայ իրականության մեջ օգտագործման, «թուրք» ցեղանվան հիշատակության ժամանակի, V դարի քաղաքական կացության, Բասրա քաղաքի հիմնադրության և այլ հարցերի վերաբերյալ<sup>4</sup>:

Վերջացնելով իր խոսքը, Ղ. Ինճիճյանը գրել է. «Այսչափ են ընդդիմութիւնք յառաջ բերեալք ի Սեն-Մարտենէ, անզօրք և անբասականք առ ի օտարացուցանել զայն աշխարհագրութիւն թէ չիցէ հարազատ մատենագրութիւն Խորենացոյն. այլ առ մեզ ընդունելի է աներկբայ նորին գոլ ըստ ամենայն խորագրաց օրինակացն. և չգտանեմք ի նմա տարադէպ ինչ և հակառակ գրուածոց և կամ ժամանակի Խորենացոյն: Եւ եթէ սակս այսպիսի չնչին պատճառաց արժան էր չհամարել զայս աշխարհագրութիւն հարազատ գործ մատենագրին, ի դէպ էր յայնժամ և զայլ գործս բազմաց մատենագրաց Յունաց և հռոմայեցոց չհամարել հարազատ գործ նոյն հեղինակաց՝ գորոց

զանուանս կրեն. զի և ի նոսա ոչ սակաւ ընդդիմութիւնք այդպիսիք ընդ առաջելանեն քաջ քննաբանից. բայց ոչ ոք համարձակի յայնպիսիս»<sup>1</sup>:

Հիշյալ վեց հրատարակությունները, որ մեկը մյուսի արտատպություններն էին, ծագում էին մի սխալաշատ ձեռագրից, որն ուներ գրիչների կողմից կատարված հավելումներ և ընդմիջարկություններ<sup>2</sup>: Սեն-Մարտենի քննադատությունից խիստ վիրավորված Վենետիկի մխիթարյանները 1843 թ. հրատարակեցին «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության բնագիրը վեց գրչագրերի համեմատությամբ, որոնցից հինգը պատկանում էին Վենետիկի մխիթարյանների, իսկ վեցերորդը՝ Էջմիածնի մատենադարանին<sup>3</sup>: Յավոք, հրատարակության համար օգտագործված ձեռագրերը անթվական էին և հրատարակիչները չէին նշել նրանց կարգահամարները: Սակայն, ինչպես ճիշտ նշել է Ք. Պատկանյանը, անգամ այդ վիճակով նոր հրատարակությունը կարող էր ծառայել գիտությանը: Պատահական չէ, որ «Աշխարհացոյց»-ի 1843 թ. տպագիր օրինակը նույնությամբ վերահրատարակվեց Վենետիկում 1865 թ.<sup>4</sup> և հիմք ծառայեց Ք. Պատկանյանի «Армянская География VII века по р. X.»-ի հրատարակության համար<sup>5</sup>: Նշանավոր հայագետը ոչ միայն ռուսերենի էր թարգմանել «Աշխարհացոյց»-ը, այլև այն օժտել ընդարձակ ներածականով և բազմաթիվ արժեքավոր ծանոթագրություններով:

Ղ. Ինճիճյանի հերքումը, բնականաբար, վերջ չուրվեց «Աշխարհացոյց»-ի շուրջ ծավալված վեճին: 1873 թ. գերմանացի մեծ աշխարհագրագետ և քարտեզագետ Հ. Քիփերթը (Կիպերտ) հանդես եկավ Բեռլինի Ակադեմիայում «Աշխարհացոյց»-ի ստեղծման ժամանակի մասին զեկուցմամբ, որտեղ նա ցույց է տալիս, որ եվրոպայի, Աֆրիկայի, Արաբիայի և Արևելյան Ասիայի նկարագրությունները փոխ են առնված III (IV?) դարի ինչ-որ հունական աղբյուրից, հռոմեական Ասիայի խմբագրությունը վերաբերում է Թեոդոսիոս Ա-ից մինչև Հուստինիանոսն ընկած ժամանակներին, իսկ պարսկական Ասիայի՝ Հուստինիանոսի և Մավրիկիոսի միջև ընկած շրջանին: Քիփերթի կարծիքով, եթե մի կողմ թողնենք Հայաստանի և Պարսկաստանի նկարագրությունը, կարելի է «Աշխարհացոյց»-ը համարել Մովսես Խորենացու գրչի արգասիք: Հեղինակը հանգել էր այն մտքին, որ Հայաստանի աշխարհացոյցյան նկարագրությունն իր վերջնական տեսքն էր ստացել VI դարի խմբագրությունից հետո և որ նրա տեսակետը պատրաստ է պաշտ-

<sup>1</sup> Անդ, էջ 309-310:

<sup>2</sup> Հ. Մանանդյան, Խորենացու անեղծվածի լուծումը, էջ 29:

<sup>3</sup> Անդ, էջ 310:

<sup>4</sup> Անդ, էջ 310-314:

<sup>1</sup> Անդ, էջ 314:

<sup>2</sup> Հ. Մանանդյան, Խորենացու անեղծվածի լուծումը, էջ 11:

<sup>3</sup> «Արքայ իօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843:

<sup>4</sup> «Արքայ իօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865:

<sup>5</sup> К. П. Патканов, Армянская География VII века по р. X., СПб, 1877.

պանել Հայաստանի պատմական աշխարհագրության այնպիսի հեղինակություն, ինչպիսին Ղ Ալիշանն էր<sup>1</sup>: Մոտավորապես նույն տեսակետն էր առաջ քաշում Ա. Գուտշմիդը, որը վերագրում էր «Աշխարհացոյց»-ը Մովսես Խորենացուն և այն համարում V դարի գործ իր Մովսես Խորենացուն նվիրված առաջին հոդվածում<sup>2</sup>:

XIX դարի 70-ական թվականների երկրորդ կեսին գիտական բանավեճի մեջ ակտիվորեն ներառնվեց Ք. Պատկանյանը: Անդրադառնալով նախորդ ուսումնասիրողների տեսակետներին և քննադատելով դրանք, նա գտնում էր, որ «Знакомому с древним армянским языком безпристрастному исследователю и в голову не может придти приписывать этот безимянный трактат Хоренскому. Ни язык, ни способ изложения, ни степень знания греческого языка, не дают право делать Хоренского автором этой Географии»<sup>3</sup>. Ընդունելով հանդերձ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի և «Աշխարհացոյց»-ի միջև ընդհանուր հատվածների առկայությունը, նա գտնում էր, որ «две три общие фразы ничего не могут доказывать. Для меня ясно, что один из первых списков этой Географии вписан был в рукописный сборник вслед за Историей Хоренского, но без имени автора. Это обстоятельство послужило для последующих переписчиков безмолвным доказательством того, что автор Истории был в тоже время и автором Географии. Раз принятое и неопровергнутое мнение пошло из рода в род, из поколения в поколение и дошло до нас уже окончательно установившимся»<sup>4</sup>:

Ք. Պատկանյանը ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրում է այն փաստերի վրա, որոնք, նրա կարծիքով, ապացուցում են «Աշխարհացոյց»-ի VII դարի հուշարձան լինելը, հետևաբար և Մովսես Խորենացու գրչին չպատկանելը: Քննության առնելով Կոստանդին Անտիոքացու ինքնության հարցը, նա ցույց է տալիս, որ նրա «Քրիստոնեական տեղագրություն»-ից «Աշխարհացոյց»-ում մեջբերված հատվածները հանդիպում են Կոսմա Հնդկաչուկի «Χριστιανική τοπογραφία παντός Κόσμου» աշխատության մեջ: Եվ քանի

որ, հետազոտողների կարծիքով, վերջինիս Կոսմա անունը տվել են հետագայում Κόσμου, այսինքն աշխարհի տեղագրություն գրելու համար և նրա անունը արդեն Փոտ պատրիարքի օրոք անհայտ էր, ապա հեղինակը գալիս է տրամաբանական այն եզրակացությանը, որ Կոստանդին Անտիոքացին և Կոսմա Հնդկաչուկն միևնույն անձնավորությունն են, որի իսկական անունը պահպանել է լուկ «Աշխարհացոյց»-ը<sup>1</sup>:

Քննադատելով Հ. Քիփերթին «Աշխարհացոյց»-ի ստեղծման ժամանակի խնդրում, նա փորձում է հիմնավորել այն տեսակետը, որ հիշյալ աշխարհագրական երկը չէր կարող ստեղծվել VII դարից առաջ: Առավել որոշակիացնելով ժամանակաշրջանը, Ք. Պատկանյանը գտնում էր, որ այն կարող էր ստեղծվել պարսից արքայից արքա Խոսրով Բ-ի և բյուզանդական կայսր Հերակլի օրոք, մինչև արաբական արշավանքները Հայաստան, քանի որ այնտեղ չի արտացոլվում արաբների կատարած հեղաշրջիչ դերը Առաջավոր Ասիայի կյանքում<sup>2</sup>: Նման տեսակետի են մղում հեղինակին միայն երեք Արաբիաների արաբներով բնակեցված լինելը, արաբական արտասանության ազդեցության լիակատար բացակայությունը Սասանյան Պարսկաստանի շուրջ 60 երկրամասերի անվանումների վրա, վերջիններիս թվում Պարսկաստանում այնքան արագ տարածված և կիրառություն գտած զուտ արաբական տեղանունների բացակայությունը, ինչ անհնարին էր և բացառվում արաբական նվաճումների և տիրապետության շրջանում<sup>3</sup>: «Աշխարհացոյց»-ը դասելով VII դարի հուշարձանների շարքին, Ք. Պատկանյանը դրանով իսկ այն ազատում էր մի շարք ժամանակավրեպ տեղեկություններից, քանի որ ըստ նրա Քեռստը VII դարում իրոք պատկանել է քրիստոնյաներին, VII դարի հեղինակը կարող էր ֆրանկներին համարել Գալլիայի բնակիչներ, Մեծ Հայքի հյուսիսային մի քանի աշխարհներ վարչականորեն գտնվել են Վրաց և Աղվանից մարզպանությունների կազմում, «թուրք» ցեղանունը հայտնի էր Հայաստանում VII դարում և հիշատակվում է Սեբեոսի ու Մովսես Կաղանկատվացու երկերում, Ակողան (սովորաբար նույնացվում է Քուֆի կամ Քուֆահի հետ), Բասրան, Մոսուլը և Կինեսրինը կարող էին գոյություն ունենալ VII դարի առաջին կեսին և ծանոթ լինել «Աշխարհացոյց»-ի հեղինակին, պարսկական ֆարսանգը հայերենում կարող էր ունենալ ոչ միայն հրասախ կամ բարբառային խրասախ, այլև փարսախ համարժեքը, որոնցից վերջինը պետք է լիներ ուշ շրջանի փոխառություն և այլն<sup>4</sup>:

<sup>1</sup> H. Klapert, Ueber die Zeit der Abfassung des dem Moses von Chorni zugeschriebenen geogr. Kompendiums, տե՛ս «Monatsberichte der Königl. Preuss. Akademie der Wissenschaften zu Berlin», 1873, էջ 599-600: Հրատարակվել է հեղինակի եզրակացությունների սուղ շարադրանքը:

<sup>2</sup> Gutschmid A., Kleine Schriften, B. III, Leipzig, 1892, էջ 278, ծան. 1:

<sup>3</sup> К.П. Патканов, Армянская География VII века по. р. X., էջ VIII-IX.

<sup>4</sup> Անդ:

<sup>1</sup> Անդ, էջ X-XII:

<sup>2</sup> Անդ, էջ XII-XIII:

<sup>3</sup> Անդ, էջ XIII:

<sup>4</sup> Անդ, էջ XIII-XV:

Քննադատելով Հ. Քիփերթին, Ք. Պատկանյանը փորձում էր հիմնավորել, որ «Աշխարհագրոց»-ը գրվել է ոչ թե մաս առ մաս երկու դարերի ընթացքում, այլ եղել է մեկ հեղինակի գործ: Ելակետ ունենալով «Աշխարհագրոց»-ի տվյալները, նա գտնում էր, որ վերջինիս հեղինակը, իր իսկ խոստովանությամբ, իր առջև խնդիր էր դրել տալու մարդկությանը ծանոթ աշխարհի լիակատար աշխարհագրությունը: Ծաղկաբաղ անելով Պապոս Աղեքսանդրացու աշխատությունից, նա որոշ դեպքերում կատարել է հավելումներ, իսկ Աղվանքի, Վիրքի, Հայքի և Պարսի նկարագրության հատվածում հանդես է բերել մեծ ինքնուրույնություն, օգտվել է բազմաթիվ այլ աղբյուրներից, որովհետև հույն հեղինակների տեղեկությունները թերի էին: Հետևաբար, եզրակացնում էր նա, «Нет причин предполагать, чтоб География пережила несколько переделок в течении двух веков и не сохранила памяти авторов»<sup>1</sup>:

Համարելով «Աշխարհագրոց»-ի հեղինակին VII դարի անձնավորություն, Ք. Պատկանյանը, բնականաբար, պետք է փորձեր պարզելու նրա ինքնությունը: Նրա կարծիքով, «Աշխարհագրոց»-ի հեղինակ կարող էր լինել VII դարի հայ մեծ բնագետ, մաթեմատիկոս Անանիա Շիրակացին, որին հավասարապես մատչելի էին և՛ Պտղոմեոսի, և՛ Պապոս Աղեքսանդրացու, և՛ Հնդկաչուի գործերը<sup>2</sup>: Պետերբուրգի հայագետը ընդգծում էր այն փաստը, որ մինչև IX դարը հայ հեղինակների շարքում չի հանդիպում մաթեմատիկական գիտություններով զբաղվող մեկ այլ անձնավորություն, ուստի ի նկատի առնելով Անանիա Շիրակացու չափագիտական և տիեզերագիտական աշխատությունները, որոնք բնորոշում են հեղինակի հետաքրքրությունների ուղղությունը, ինչպես նաև նրա աշխատություններից մեկում հանդիպող մի հատվածի ամբողջությամբ պահպանվելը «Աշխարհագրոց»-ում, նա հիշյալ աշխարհագրական երկը, որ հայ մատենագրությունը դարեր շարունակ վերագրում էր Մովսես Խորենացուն, ճանաչում է Անանիա Շիրակացու մտքի արգասիք<sup>3</sup>:

Ք. Պատկանյանի թննությունն, անկասկած, նշանավորում էր նոր փուլ «Աշխարհագրոց»-ի ուսումնասիրության ասպարեզում: Լույս աշխարհ բերելով սույն աշխատությունը, նա դարձավ հայագիտության մեջ այն ուղղության հիմնադիրը, որի ներկայացուցիչները, ի տարբերություն հիմնադրի ենթադրության կամ թեական կարծիքի, անվերապահորեն «Աշխարհագրոց»-ի հեղինակ հռչակեցին Անանիա Շիրակացուն: Իր պատմա-աշխարհագրական մեծ արժեքավորությամբ հանդերձ Ք. Պատկանյանի թննությունը զերծ չէր թե-

րություններից և բնավ էլ անխոցելի չէր: Չունենալով իր տրամադրության տակ ձեռագրագիտական նյութեր և, ըստ էության առաջնորդվելով միայն «Աշխարհագրոց»-ի 1843 թ. Վենետիկյան հրատարակությամբ, Ք. Պատկանյանը չկարողացավ և չէր էլ կարող կատարել լիարժեք թննություն: Հասկանալի պատճառներով նրա ուշադրությունից դուրս մնացին բազմաթիվ կղզվաններ ու իրողություններ, որոնք խոսում էին նրա տեսակետի դեմ, իսկ որոշ հանգամանքներ, որոնք իրենց նպաստն էին բերում հիշյալ փաստաթղթի V դարում ստեղծվելու տեսակետի օգտին, այդպես էլ չընկալվեցին և չիմաստավորվեցին նրա կողմից:

«Աշխարհագրոց»-ի ամեն մի թննություն, որ կասկածի տակ էր առնում Պատմաժողովի հեղինակ լինելը, Վենետիկյան մխիթարյաններին մղում էր նոր հետազոտությունների, որոնք նպատակ ունեին ապացուցելու վերոհիշյալ հուշարձանի V դարին վերաբերելը: Մովսես Խորենացու հեղինակային իրավունքները վերահաստատելու և պատմական ճշմարտությունը վերականգնելու նպատակով հանդես եկավ մխիթարյան միաբան Արսեն Սուբրյանը, որը 1881 թվին Վենետիկում հրատարակեց «Աշխարհագրոց»-ի ընդարձակ խմբագրության բնագիրը, տալով ոչ մեծ ներածություն և կցելով նրան ֆրանսերեն թարգմանությունը<sup>4</sup>: Յայսօր մեզ հայտնի ընդարձակ խմբագրության միակ ձեռագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում № 1245 թվահամարով: Հարկ է խոստովանել, որ Ա. Սուբրյանի հրատարակությունը մեծ իրադարձություն էր «Աշխարհագրոց»-ի ուսումնասիրության ասպարեզում: Ֆրանսերեն ներածության մեջ, բնավ էլ չժխտելով «Աշխարհագրոց»-ում տեղ գտած բազմաթիվ հավելումների և ընդմիջարկությունների առկայությունը, որոնք նա վերագրում է 600-700 թվականներին, Մխիթարյան միաբանը հիշյալ փաստաթուղթն իր ամբողջության մեջ համարում է V դարի գործ, հիմնավորելով իր տեսակետը ներքոհիշյալ կավաններով<sup>5</sup>: Ըստ նրա հայ աշխարհագետը քայլ առ քայլ հետևել է Պտղոմեոսին, հանգամանք, որ երևում է յուրաքանչյուր երկրի նկարագրությունից, դրանց սահմանազատումից, մարզային բաժանումից և այն անուններից, որ նա տալիս է այդ երկրներից յուրաքանչյուրին<sup>6</sup>: Ա. Սուբրյանը նույնպես հակված է Կոստան-

<sup>1</sup> Géographie de Moïse de Corène d'après Ptolémée, Texte Arménien, traduit en français par le P. Arsène Soukry Mékhitariste, Venise, Imprimerie Arménienne, 1881. Ընդարձակ խմբագրության բնագիրն ունի «Աշխարհագրոց Մովսեսի Խորենացու յանելաճովք նախնեաց» խորագիրը (Վենետիկ, 1881):

<sup>2</sup> Անդ, էջ III:

<sup>3</sup> Անդ, էջ III: Պատահական չէ, որ Ա. Սուբրյանը ֆրանսերեն թարգմանությունը վերնագրել է «La Géographie de Moïse de Corène (d'après Ptolémée)» (էջ 1):

<sup>1</sup> Անդ, էջ XVI-XVII:

<sup>2</sup> Անդ, էջ XVII:

<sup>3</sup> Անդ, էջ XVIII:





յանցը <sup>1</sup> «Աշխարհացոյց»-ի հեղինակ էին համարում Անանիա Շիրակացուն, հետագայում նրանց միացավ նաև Հ. Մարքվարթը <sup>2</sup>, որը դարի սկզբին ենթադրում էր, որ հիշյալ փաստաթուղթը ստեղծվել է VII դարի վերջին և VIII դարի սկզբին <sup>3</sup>: Հետաքրքիր տեսակետով հանդես եկավ գերմանացի մեծ հայագետ Հ. Հյուբշմանը, որի կարծիքով կամ «Պատմութիւն Հայոց»-ը և «Աշխարհացոյց»-ը մինևույն հեղինակի գործերն են, ուստի համարվելու են կամ V դարի երկեր, որ անկարելի է, կամ էլ VII-VIII դարերի հուշարձաններ: Հյուբշմանը հավանական չէր գտնում նաև այն տեսակետը, ըստ որի «Պատմութիւն Հայոց»-ի երկասիրողը գրել է օտար երկրների աշխարհագրությունը, իսկ հետագայում մեկ այլ հեղինակ «Աշխարհացոյց»-ի մեջ մուծել է Հայաստանի և հարևան մի քանի երկրների նկարագրությունը: Նա ենթադրում է, որ հիշյալ երկերի հեղինակները տարբեր անձեր են, ուստի «Պատմութիւն Հայոց»-ի ստեղծման ժամանակը կարելի է որոշել առանց «Աշխարհացոյց»-ն ի նկատի ունենալու, որը գրվել է Պատմահոր երկից շատ ուշ, ամենաշուտը VII դարում <sup>4</sup>: Նիկողայոս Ադոնցը, ձեռնպահ մնալով «Աշխարհացոյց»-ի հեղինակի ինքնության հարցերը քննարկելուց, գտնում էր, որ այն արտացոլում է Հայաստանի VI դարից հետո ընկած ժամանակաշրջանի վարչական բաժանումը <sup>5</sup>:

Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումից հետո «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրությունը թևակոխեց նոր փուլ: Կամենալով մեկընդմիշտ լուծել Մովսես Խորենացու առեղծվածը, մենագրությամբ հանդես եկավ Հ. Մանանդյանը, որը՝ հենվելով Հ. Մարքվարթի որոշ ուսումնասիրությունների վրա <sup>6</sup> և համեմատական քննության ենթարկելով «Պատմութիւն Հայոց»-ը և «Աշխարհացոյց»-ը, հանգեց այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ը նույնպես պատկանում է Պատմահոր գրչին: Չնայած ձեռագրական նոր նյութեր չօգտագործելուն, քննությունը, կարելի է ասել, փայլուն էր կա-

տարված, սակայն եզրակացությունները, որոնց հանգել էր ճանաչված հայագետը, բնավ էլ չէին բխում ուսումնասիրության իրական արդյունքներից: Հ. Մանանդյանի կարծիքով, «Աշխարհացոյց»-ը գրվել է IX դարում Բագրատունյաց տոհմի ուժեղացման դարաշրջանում: Ջարգացնելով իր միտքը, նա գրում էր, որ Անանիա Շիրակացին չի կարող լինել դրա հեղինակը, որովհետև «Աշխարհացոյց»-ի հեղինակի և Անանիա Շիրակացու հայացքներն աշխարհագրության հարցերում չեն համընկնում: Այսպես, ըստ «Աշխարհացոյց»-ի հեղինակի երկրագունդը գնդաձև է, իսկ ըստ Անանիա Շիրակացու՝ քառակողմ հարթություն, «Աշխարհացոյց»-ի մեջ արեգակը փոքր է երկրագնդից, իսկ Անանիա Շիրակացու կարծիքով այն նշանակալից մեծ է երկրագնդից և այլն: Մանանդյանը գտնում էր, որ «Մղոնաչափքը» նույնպես գրվել է IX դարում և պատկանում է Պատմահոր աշխատությունների թվին <sup>1</sup>:

Չխորանալով այլևս մանրամասների մեջ, որովհետև հարգարժան պատմաբանի քննության արդյունքների նշանակալից մասը մենք օգտագործելու ենք մեր ուսումնասիրության մեջ, նշենք, որ հիշյալ աշխատությունը պատմագիտության մեջ առաջ բերեց ուժեղ հակադեցույթություն: Ուսումնասիրելով Մատենադարանում պահվող «Աշխարհացոյց»-ի ձեռագրերը, Աշ. Աբրահամյանը հանդես եկավ «Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը» աշխատությամբ, հանգելով այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ն ստեղծվել է VII դարում, մինչև Հայաստանի արաբների կողմից նվաճվելը <sup>2</sup>: Հեղինակի կարծիքով, «Աշխարհացոյց»-ը սխալմամբ է Խորենացուն վերագրվել, որովհետև ՀԽՍՀ Պետ. Մատենադարանի 1600 թ. առաջ գրված «Աշխարհացոյց»-ներից և ոչ մեկի վերնագրում չի հիշատակվում Խորենացու անունը <sup>3</sup>: Ի մի բերելով իր քննության արդյունքները, նա գրում էր. «Աշխարհացոյց»-ի՝ Շիրակացու ապրած ժամանակաշրջանում գրվելը,

<sup>1</sup> Г. Халатьянц, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, опыт критики источников, Москва, 1896, էջ 18:

<sup>2</sup> Jos. Markwart, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, էջ 56, <sup>x</sup> 14, 39, 58, 374 և այլն:

<sup>3</sup> Dr. J. Marquart, Eränšahr nach der Geographie des Ps. Moses Chorenac'i, Mit historisch-kritischem Kommentar und historischen und topographischen Exkursen, Berlin, 1901, էջ 6:

<sup>4</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, թարգմանեց Հ.Բ. Պիլեգիլձեան, Կիևնա, 1907, էջ 263, 267:

<sup>5</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 235:

<sup>6</sup> J. Markwart, Die Genealogie der Bagratiden und das Zeitalter des Mar Abas und Ps. Moses Chorenac'i, տե՛ս Caucasia, Fasc. 6, 2. Teil, Leipzig, 1930, էջ 67:

<sup>1</sup> Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, էջ 35-89: Գրեթե Հ. Մանանդյանի աշխատության հանդես գալու ժամանակներում «Աշխարհացոյց»-ի խնդիրն հպանցիկ անդրադարձավ Հ. Ֆոն Մծիկը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» հետ կապված: Համաձայն հեղինակի, «Աշխարհացոյց»-ը «Պապոսի (երկն) և հայկական հագուստով», իսկ տարբերություն կազմող տվյալները ծագում են հայկական, պարսկական, արաբական և քրիստոնեական աղբյուրներից, այնպես ինչպես քարտեզագրական նյութը ուղեկցում է Պտղոմեոսի «Աշխարհագրությանը»: Մծիկը թարգմանել է «Աշխարհացոյց»-ի ներածության սկզբնամասը գերմաներեն և երկի հեղինակությունը վերագրել է Կեղծ Մովսեսին (Pseudo-Moses): H. v. Mitzl, Neue Geschichtspunkte zur Würdigung der Bedeutung der «Geographie» des Klaudias Ptolemaios ..., տե՛ս Litterae Orientales 54 (Leipzig, 1933), էջ 1-16:

<sup>2</sup> Աշ. Աբրահամյան, Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, Երևան, 1940, էջ 114:

<sup>3</sup> Անդ, էջ 113:

նրա՝ Շիրակացու այլ աշխատություններին կից ձեռագրերում գտնվելու հանգամանքը, երկրաչափական և աստղաբաշխական նյութերի ծանոթ լինելու փաստը, կոտորակի գործածությունը, «Աշխարհացոյց»-ում՝ Շիրակացու այլ աշխատություններից որոշ հատվածների գործածությունը և մատենագրական մի շարք այլ փաստեր վկայում են, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը VII դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին է»<sup>1</sup>, որի «Աշխարհացոյց»-ը «Երկրաչափ» խորագրով հիշատակված է Գրիգոր Մագիստրոսի մոտ»<sup>2</sup>։ Աշ. Աբրահամյանի քննության ամենաարժեքավոր կողմն, անշուշտ, ձեռագրագիտական հարուստ նյութերի գիտական շրջանառության մեջ մտցնելն էր։ Հաջող էր կատարված, ընդհանուր առմամբ, նյութի գիտական մեկնությունը, սակայն պատմա-աշխարհագրական քննության բացակայության պատճառով հեղինակի ուշադրությունից վրիպել էին այնպիսի իրողություններ, որոնք, ըստ էության, հակասում էին նրա հիմնական եզրակացություններին։

«Աշխարհացոյց»-ի հետագա ուսումնասիրության ասպարեզում կարևոր դեր կատարեց Աշ. Աբրահամյանի կողմից համառոտ խմբագրության մի տարբերակի հրատարակությունը 1944 թ.։ Վերջինիս համար հիմք ծառայեց Մատենադարանի թիվ 582 ձեռագիրը, որն ուներ «Աշխարհացոյց»-ի այլ ձեռագրերում չհանդիպող հատվածներ և կարևոր տարբերություններ<sup>3</sup>։

1947 թ. «Աշխարհացոյց»-ի հեղինակի ինքնության և ստեղծման ժամանակի իր տեսակետների պաշտպանությամբ կրկին հանդես եկավ Հ. Մանանդյանը «Византийский временник» պարբերականի էջերում։ Սակայն, ըստ էության, նորություն չկար ոչ փաստարկների և ոչ էլ մեկնաբանությունների ասպարեզում<sup>4</sup>։

Դարիս 50-ական թվականներին «Աշխարհացոյց»-ի քննությանը նվիրված հոդվածներով հանդես եկավ Թ. Հակոբյանը։ «Դիտողություններ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ի մասին» ուսումնասիրության մեջ նա անվերապահորեն միանում էր բոլոր այն ուսումնասիրողներին, որոնք «Աշխարհացոյց»-ը հա-

մարում էին Անանիա Շիրակացու ստեղծագործությունը։ Հեղինակի կարծիքով, «Աշխարհացոյց»-ի ընդարձակ և համառոտ խմբագրությունների տեսքերը համառոտված են ոչ թե միևնույն նախնական բնագրից, այլ տարբեր ձեռագրերից<sup>5</sup>։

«Աշխարհացոյց»-ի քննության ասպարեզում առ այսօր ամենամեծ լույս է մտնել Ս. Երեմյանը։ 1963 թ. լույս տեսավ նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատությունը, որի ներածության մեջ հեղինակը ցույց էր տալիս, որ «Աշխարհացոյց»-ը սկզբում եղել է մոտավորապես 15 քարտեզների ժողովածու-ատլաս, որոնց մեջ հիմնականը եղել է իր կողմից վերակազմված Մեծ Հայքի, Կողքիսի, Վիրքի և Աղվանքի քարտեզը<sup>6</sup>։ Նրա կարծիքով, «Աշխարհացոյց»-ի հեղինակը նկարագրում է Հայաստանը և Անդրկովկասը երկու ժամանակաշրջանում։ Առաջինն այն ժամանակաշրջանն է (մինչև 387 թ.), երբ Հայաստանը մի ընդարձակ կենտրոնացված պետություն էր «Մեծ Հայք» անունով, որ նրան հարևան Անդրկովկասի երկրների հետ իբրև առանձին քարտեզ տալիս ենք սույն հրատարակությունով, իբրև վերակազմության փորձ ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա։ Երկրորդը՝ հեղինակի ապրած ժամանակաշրջանն է և արտացոլում է Հայաստանի վարչա-տերիտորիալ բաժանումը 591-610 թվականների միջև»<sup>7</sup>։ Ս. Երեմյանը գտնում է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Պտղոմեոսի գործերին ծանոթացել է ոչ միայն Պապոսի միջոցով, այլև անմիջականորեն<sup>8</sup> և որ իրավացի է Յ. Ֆիշերը, ենթադրելով, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը իր ձեռքի տակ է ունեցել ոչ միայն Պտղոմեոսի բնագիրը, այլև նրա կողմից կազմված քարտեզները, որոնց հիման վրա պիտի գրված լիներ մեզ չհասած Պապոս Աղեքսանդրացու աշխարհագրական երկը<sup>9</sup>։ Հեղինակն իրավացիորեն քննադատում է այն ուսումնասիրողներին, որոնք «Աշխարհացոյց»-ը համարել են Պտղոմեոսի կամ նրանից օգտված Պապոս Աղեքսանդրացու երկերի ընդօրինակություն<sup>6</sup>։ Այսպես, եթե Ա. Սուբրյանը «Աշխարհացոյց»-ի ֆրանսերեն թարգմանությունը վերնագրել է «Géographie de Moïse de Corène d'après Ptolémée»<sup>7</sup>, ապա Յ. Ֆիշերի կարծիքով ավելի ճիշտ կլիներ այն խորագրել

<sup>1</sup> Անդ, էջ 116։

<sup>2</sup> Անդ։ 1940 թ. լույս տեսավ Առ. Մալխասյանցի «Մոսկովյան առեղծվածի շուրջը» (Երևան, 1940) աշխատությունը, որով հեղինակը փորձում էր կրկին ապացուցել Մովսես Խորենացու V դարի պատմիչ լինելը, սակայն, ելնելով Աշ. Աբրահամյանի հիմնավորումներից, ամբողջությամբ ընդունում էր նրա տեսակետը «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցում։ «Ինչ համար այլևս կասկած չմնաց, որ Աշխարհացոյցը անշուշտ Անանիա Շիրակացու գործն է», — գրում էր նա (էջ 24)։

<sup>3</sup> Թ. Հակոբյան, Դիտողություններ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ի մասին, տե՛ս «Երևանի համալսարանի գիտական աշխատություններ», հ. 43, աշխ. գիտ. սերիա, պրակ 1, 1954, էջ 121-122։

<sup>4</sup> Я.А. Манандян, Когда и кем была составлена «Армянская География», приписываемая Моисею Хоренскому, տե՛ս «Византийский временник», том I (XXVI), Москва, 1947, էջ 127-143։

<sup>1</sup> Թ. Հակոբյան, Դիտողություններ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ի մասին, էջ 122։

<sup>2</sup> Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, ՄՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1963, էջ 7, 16։

<sup>3</sup> Անդ, էջ 7։

<sup>4</sup> Անդ, էջ 11։ Այս հարցում նա հետևում է Ա. Սուբրյանին։

<sup>5</sup> Անդ։

<sup>6</sup> Անդ։ J. Fischer, Pappus und die Ptolemäuskarten, տե՛ս «Zeitschrift der Gesellschaft für Erdkunde zu Berlin», 1919, էջ 340։ Տե՛ս նաև J. Marquart, Eränšahr, էջ 154, ծան. 49։

<sup>7</sup> Arsène Soukry, Géographie de Moïse de Corène d'après Ptolémée, էջ 1։

«Géographie de Moïse de Corène d'après Pappé d'Alexandrie»<sup>1</sup>: Շարունակելով իր միտքը զարգացնել, նա նշում էր, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ընդհանուր առմամբ հետևում է Պտղոմեոսի երկի շարադրության հաջորդականությանը, սակայն հայ-քարտեզագետ-աշխարհագրագետը նախ և առաջ իր ժամանակաշրջանի ծնունդն էր և Պտղոմեոսից իր երկի մեջ թողնում էր միայն այն տվյալները, որոնք համապատասխանում էին նաև իր ապրած ժամանակաշրջանին, հակառակ դեպքում նա աշխատում էր նոր նյութերով համապատասխան դարձնել իր ժամանակվա վիճակին<sup>2</sup>։ Ա. Երեմյանի կարծիքով, հեղինակի ինքնուրույնությունը որոշակիորեն նկատվում է Փոքր Ասիայի, Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի, Կողքիսի, Ասիական Սարմատիայի և Պարսկաստանի (Յաղագս Պարսից) նկարագրության մեջ<sup>3</sup>։ «Աշխարհացոյց»-ի մանրագնին քննությունը հեղինակին բերում է այն եզրակացության, որ ինչպես Պտղոմեոսը, այնպես էլ «Աշխարհացոյց»-ի հեղինակը հետապնդել են նույն նպատակը, տալու «քարտեզների ժողովածու-ատլաս, և միևնույն ժամանակ այդ քարտեզների տվյալները շարադրել առանձին, տալով աշխարհագրական ձեռնարկ՝ որը հասել է մեզ, իսկ քարտեզները բաժանել են Պտղոմեոսի քարտեզների բախտը՝ նրանք կորել են»<sup>4</sup>։ Հեղինակը քննության է առնում «Աշխարհացոյց» բառը և եզրակացնում, որ հին հայերենում, բացի «քարտեզ» բառից գործ են ածել նրան հոմանիշ և ավելի հասկանալի «Աշխարհացոյց» բառը, ուստի «Աշխարհացոյց»-ի հեղինակը «աշխարհացոյց» ասելով հասկացել է «քարտեզ» կամ «քարտեզների ժողովածու»՝ «ատլաս», սակայն երբ քարտեզները ժամանակի ընթացքում կորել են և մնացել են միայն նրանց նկարագրող տեքստերը, նույն վերնագիրը ստացել է «աշխարհագրության ձեռնարկի» իմաստ<sup>5</sup>։ Անդրադառնալով Մեծ Հայքի վարչական բաժանմանը, նա գրում է, որ «Տրդատ Մեծի ժամանակաշրջանի Մեծ Հայքի տերիտորիայի բաժանումը 15 նահանգների՝ իրականում գոյություն է ունեցել կարճ ժամանակ, 591 թ. սկսած մինչև 610 թ. մոտերը, երբ նոր գահ բարձրացած Հերակլ Ա (610-640) կայսրը վերացրեց այն բոլորը, ինչ որ կապված էր Մավրիկիոսի անվան հետ»<sup>6</sup>։ Նման եզրակացության նրան մղում է ոչ միայն Մավրիկիոսի վարչական բարենորոգումների փաստը, այլև Մավրիկիոսի հիշատակությունը «Աշխարհացոյց»-ում, ուստի շարունակելով իր խոսքը, նա գտնում է, որ 591-610 թթ. միջոցին էլ հավանաբար ստեղծվում

է «Աշխարհացոյց»-ը<sup>1</sup>։ Հեղինակն «Աշխարհացոյց»-ի ստեղծման սահմանագիծ է համարում հայ և վրաց եկեղեցիների դավանաբանական բաժանումը, որ կատարվեց 608/609 թ., որովհետև հիշյալ փաստաթղթում որոշակիորեն երևում է Այսրկովկասյան երկրների կրոնա-դավանաբանական միասնությունը<sup>2</sup>։ Իրավացի է միանգամայն Ա. Երեմյանը, երբ հենվելով «Աշխարհացոյց»-ի «Մայր եկեղեցեացն Կաթողիկէ, և մարտիրոսեացն մատրունքն» արտահայտության վրա, ենթադրում է, որ «Աշխարհացոյց»-ը կազմվել է այն ժամանակ, երբ դեռ չէին կառուցվել Հռիփսիմեի (618 թ.) և Գայանեի կենտրոնագմբեթ տաճարները<sup>3</sup>։ Ի վերջո, ելնելով իր քննության արդյունքներից, հեղինակը հանգում է այն մտքին, որ «Աշխարհացոյց»-ը չի կարող պատկանել Անանիա Շիրակացու աշխատությունների շարքին<sup>4</sup>։

Ա. Երեմյանը հիշյալ աշխատությանը կից հրատարակեց «Աշխարհացոյց»-ի այն հատվածները, որոնք բովանդակում էին Մեծ Հայքի և նրան անմիջականորեն սահմանակից երկրների նկարագրությունը<sup>5</sup>։ Ըստ որում, նա առաջին անգամ փորձեց վերականգնել նախնական բնագիրը՝ միաձուլելով ընդարձակ և համառոտ խմբագրությունները։ Այս աշխատաձևը, որ մի շարք դեպքերում արդյունավետ էր եղել, երբեմն հանգեցրել է բացահայտ թյուրիմացությունների, բնագրի աղճատման և խաթարման, ինչպես նաև բռնազբոսիկ բացատրությունների ու մեկնաբանությունների։ Որոշ դեպքերում բնագրային փոփոխություններն ու միջամտությունները ոչ միայն հիմնավորված չեն, այլև ունեն կամայական բնույթ։ Դեռևս 70-ական թվականների սկզբների հեղինակը նույն սկզբունքներով հրատարակեց նաև «Աշխարհացոյց»-ի մնացյալ հատվածների մեծ մասը<sup>6</sup>։ Այսպես, բնավ էլ համոզիչ չեն նրա մտքերն այն մասին, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը, լինելով VI դարի վերջի և VII դարի սկզբի անձնավորություն, տալիս է Փոքր Հայքի նախահուստինիանոսյան վիճակը, հետապնդելով որոշակի նպատակ, ցույց տալ Մեծ Հայքի տերիտորիան նրա ամբողջական վիճակում, այսինքն՝ մինչև նրա տրոհումը և 387 թ. բաժանումը<sup>7</sup>։ Բացատրությունը կամայական է և անհիմն, որովհետև նման մոտեցման դեպքում Վիրքը և Աղվանքը պետք է նկարագրվեին 387-428 թթ. կացությամբ։

<sup>1</sup> Անդ։

<sup>2</sup> Անդ, էջ 25։

<sup>3</sup> Անդ, էջ 82։

<sup>4</sup> Անդ, էջ 26։

<sup>5</sup> Անդ, էջ 100-115։

<sup>6</sup> Ա. Տ. Երեմյան, «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ, տե՛ս ՊԲՀ, 1972, թիվ 4, էջ 209-230, 1973, թիվ 1, էջ 238-252, 1973, թիվ 2, էջ 261-274։

<sup>7</sup> Անդ, ՊԲՀ, 1973, թիվ 1, էջ 249։

<sup>1</sup> J. Fischer, Pappus und die Ptolemäuskarten, էջ 337։

<sup>2</sup> Ա. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 13։

<sup>3</sup> Անդ, էջ 13-14։

<sup>4</sup> Անդ, էջ 17։

<sup>5</sup> Անդ։

<sup>6</sup> Անդ, էջ 24։

իր առաջ քաշած տեսակետները հեղինակը փորձեց առավել հիմնավորել իր նոր աշխատություններում<sup>1</sup>, իսկ 1980 թ. հրատարակած աշխատանքներից մեկում նա, ի զարմանս ուսումնասիրողների, «Աշխարհացոյց»-ի հեղինակ ճանաչեց Անանիա Շիրակացուն. «XIX դարում գիտության մեջ այն կարծիքն էր իշխում, թե իբր «VII դարի Աշխարհացոյցը»-ը Պտղոմեոսի աշխարհագրական աշխատության համառոտ տարբերակն է: Նաև այն ենթադրությունը կար, թե Պապոս Աղեքսանդրացու՝ Դիոկղետիանոսի (284-305) ժամանակակցի, «Երկրագրության» հայերեն շարադրանքն է: Ներկայումս վստահորեն կարելի է ասել, որ այդ աշխատությունը հայ գիտնական Անանիա Շիրակացու ինքնուրույն ստեղծագործությունն է»<sup>2</sup>: Որպես տրամաբանական արդյունք իր եզրակացությունների, նա հանգում է այն մտքին, որ «Աշխարհի հին հայկական ատլասը կազմող «Աշխարհի քարտեզը» և մյուս քարտեզները վերականգնելուց հետո հնարավոր է դառնում վերականգնել նաև հին հայկական պատմության» ակադեմիական հրատարակության Բ հատորում, ինչպես նաև «Գիտություն և տեխնիկա» գիտահանրամատչելի պարբերականի էջերում<sup>4</sup>:

Ս. Երեմյանի տեսակետները, որոնք, ինչպես ճիշտ նկատել է Գ. Պետրոսյանը, հենվում էին Ա. Սուքրյանի և Յ. Ֆիշերի եզրակացությունների վրա<sup>5</sup>, բնավ էլ միանշանակ ընդունելություն չգտան: Ավելին, ուսումնասիրողների մի մասը այն ենթարկեց սուր քննադատության: 1965 թ. լույս տեսավ Թ. Հակոբյանի «Պրոֆ. Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատության մասին» գրախոսությունը, որտեղ նա, դրվատելով հեղինակի կա-

տարած աշխատանքը, միաժամանակ փորձում է հերքել նրա առաջ քաշած տեսակետները: Գրախոսի կարծիքով, «Աշխարհացոյց»-ը երկրագրական աշխատություն է և իր բնույթով նման է Ստրաբոնի ու հին մյուս հեղինակների աշխարհագրական երկերին: Պտղոմեոսի «Աշխարհագրության» նմանությունները պայմանավորված են Պապոս Աղեքսանդրացու երկով, որից օգտվել է «Աշխարհացոյց»-ի հեղինակը, և ոչ թե «Աշխարհացոյց»-ի հեղինակի Պտղոմեոսի երկից անմիջականորեն օգտվելու արդյունք<sup>1</sup>: Այնուհետև, անդրադառնալով «Աշխարհացոյց» տերմինի իմաստին, նա գրում է. «Հնարավոր է, որ երկրագրության հետ միասին «Աշխարհացոյց» տերմինը նշանակի նաև «քարտեզների ժողովածու», «ատլաս» կամ «քարտեզ», ինչպես վկայակոչելով զանազան բառարաններ և XVII դարի վերջերին Ամստերդամում հրատարակված կիսագնդերի քարտեզի վերնագիրը, եզրակացնում է պրոֆ. Երեմյանը (տես էջ 17): Սակայն հարգելի հեղինակը ինչո՞ւ այդ բառի տակ չի հասկանում նրա առաջին իմաստը, որը նշանակում է «երկրագրություն», «աշխարհագրություն»: Չէ որ «Աշխարհացոյց»-ի հեղինակին հայտնի էր քարտեզը («Արդ կամիմ զդոսս մանրամասնաբար պատմել, թե եւ սակաւ ինչ աշխատիցիմ ի գիր եւ ի քարտեզ», — ասված է «Աշխարհացոյց»-ի մեջ, տե՛ս Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, էջ 349: Ընդգծումը մերն է — Թ. Հ.): Եթե այդ աշխատանքը քարտեզագրական լիներ, ապա նրա հեղինակը այդտեղ ևս կօգտագործեր այդ՝ իր համար միանգամայն հասկանալի ու սովորական բառը՝ «քարտեզ»-ը»<sup>2</sup>: Գրախոսը չի մերժում «Աշխարհացոյց»-ին կից քարտեզների գոյության հնարավորությունը, սակայն դրա հետ մեկտեղ նշում է, որ «այն իր բովանդակությամբ երկրագրական աշխատություն է, որին հատուկ չէ քարտեզների բացատրական տեքստերի միակողմանիությունը և երկրների ու աշխարհագրական այլ օբյեկտների անունների չոր ու ցամաք թվարկումները՝ կոորդինատային թվական ցուցանիշների նշումներով: «Աշխարհացոյց»-ը սոսկ քարտեզների բացատրական տեքստ դիտելը կամա, թե ակամա մեծապես արժեզրկում է նրա նշանակությունը»<sup>3</sup>: Թ. Հակոբյանը քննադատում է Ս. Երեմյանին «Աշխարհացոյց»-ը քաղաքական-վարչական աշխարհագրություն համարելու հարցում, ընդգծելով, որ հին աշխարհում քաղաքական-վարչական աշխարհագրություն ընդհանրապես չի գրվել: Անգամ Սասանյան Պարսկաստանի վարչա-քաղաքական բաժանումը,

<sup>1</sup> S.T. Eremlian, Ptolemy's «Third Map of Asia» and the «Ašharhacoyc», տե՛ս XXVII International Congress of Orientalists. Papers by the USSR delegation, Moscow, 1967, 1-12: С. Т. Еремян, Древнеармянский атлас мира- «Ашхарацуйц», տե՛ս Actes du XI<sup>e</sup> congrès International d'histoire des Sciences, IV, Osoolineum, 1968: С.Т. Еремян, «Ашхарацуйц» (Армянская география VII века) - выдающийся памятник географии и картографии древнего мира, տե՛ս ЗУУЗ ԳԱ «Երաբեր հասարակական գիտ.», 1968, թիվ 5, էջ 43-60:

<sup>2</sup> С.Т. Еремян, География и картография, տե՛ս «Культура раннефеодальной Армении (IV-VII вв.)», Ереван, 1980, էջ 232 (թարգմանությունը Գ. Պետրոսյանի):

<sup>3</sup> Անդ, էջ 235:

<sup>4</sup> «Հայ ժողովրդի պատմություն», ЗУУЗ ԳԱ հրատարակություն, հատոր Բ (Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում), Երևան, 1984, էջ 544-549: Ս. Երեմյան, Երկրագունդը ըստ Անանիա Շիրակացու, տե՛ս «Գիտություն և տեխնիկա», 1984, թիվ 1, էջ 32-33: Ս. Երեմյանը 1984 թ. հրատարակել է նաև թեզիսներ հին հայկական գեոգրաֆի վերաբերյալ: Տե՛ս С.Т. Еремян, Древнеармянский глобус, «Второй всесоюзный симпозиум по проблемам этноистической культуры на Востоке», Май, 1984, Тезисы докладов, Ереван, 1984, էջ 24-25:

<sup>5</sup> Գ. Պետրոսյան, VII դ. հայկական «Աշխարհացոյց»-ի նոր լուսաբանության մի փորձի մասին, տե՛ս ЗУУЗ ԳԱ «Երաբեր հաս.գիտ.», 1986, թիվ 6, էջ 60:

<sup>1</sup> Թ. Հակոբյան, Պրոֆ. Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատության մասին, տե՛ս Երևանի համալսարանի «Գիտական տեղեկագիր», հաս.գիտ., հ.96, պրակ 8, Երևան, 1965, էջ 86-87:

<sup>2</sup> Անդ, էջ 87:

<sup>3</sup> Անդ, էջ 88:

որ տեղ է գտել «Աշխարհացոյց»-ում, ըստ գրախոսի հիմք չի տալիս հիշյալ փաստաթուղթը քաղաքական աշխարհագրություն համարելու համար<sup>1</sup>։ Թ. Հակոբյանն իր անհամաձայնությունն է հայտնում նաև «Աշխարհացոյց»-ի հեղինակի ինքնության հարցում, գտնելով, որ «Աշխարհացոյց»-ը ստեղծվել է VII դարի 40-50-ական թվականներին Անանիա Շիրակացու կողմից<sup>2</sup>։

«Աշխարհացոյց»-ի շուրջը ծավալված բանավեճին հետագայում միացան նաև այլ ուսումնասիրողներ, որոնցից Մ. Խաչատրյանը այն ճիշտ միտքն առաջ քաշեց, որ «Մղոնաչափք»-ը ոչ մի կապ չունի «Աշխարհացոյց»-ի հետ, այլ խոսքով վերջինիս շարունակությունը չէ<sup>3</sup>։ Իր հաջորդ «VII դարի «Աշխարհացոյց»-ի մասին» հոդվածում, ընդունելով, որ «Աշխարհացոյց»-ը քարտեզագրական ու աշխարհագրական գիտելիքների կոմպլեքս է, որի քարտեզը, ինչպես նկատել է Ս. Երեմյանը, անհետացել է ժամանակի ընթացքում, ինչպես էրատոսթենեսի ու Պտղոմեոսի քարտեզները և՛ Ռուսաստանի XVII դարի Մեծ Գծագիրը, նա հակադրվում է Ս. Երեմյանին, թե «Աշխարհացոյց»-ը տարբեր երկրների քարտեզների ժողովածու է։ Նրա կարծիքով, «Աշխարհացոյց»-ն ունեցել է միայն աշխարհի քարտեզ, իսկ բնաշխարհները տրվել են շարադրանքով, համաձայն Պապոս Աղեքսանդրացու «Վորոզրաֆիա» աշխատության, որը քարտեզներ չի ունեցել<sup>4</sup>։ Հեղինակը գտնում է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը չի օգտվել Պտղոմեոսի, Կոստառիցի, Ագաթանգեոսի և Պապոս Աղեքսանդրացու քարտեզներից<sup>5</sup>։ Հետաքրքիր է Մ. Խաչատրյանի «Աշխարհացոյց»-ի հեղինակը աշխարհի քարտեզի պրոեկցիայի համար օգտագործել է ոչ թե էրատոսթենեսի՝ միմյանց փոխադարձաբար ուղղահայաց գծերից բաղկացած աստիճանացանցը կամ Պտղոմեոսի հասարակ կոնային պրոեկցիան, այլ կեղծ կոնայինը, որի քարտեզի և՛ միջօրեականները, և՛ զուգահեռականները կորագիծ են<sup>6</sup>։ Ըստ նրա, իրականության չի համապատասխանում այն դրույթը, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է ոչ միայն Պտղոմեոսի բնագիրը, այլև նրա կազմած քարտեզները<sup>7</sup>։ Համադրելով «Աշխարհացոյց»-ի և Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութեան» տվյալները, Մ. Խաչատրյանը գալիս է այն

եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ը չի կարող պատկանել Անանիա Շիրակացու գրչին, որովհետև սկզբունքային մի շարք հարցերում նրանցում առաջ քաշված տեսակետները տրամագծորեն հակառակ են՝ միմյանց ժխտող ու հակասող<sup>8</sup>։ Ամփոփելով իր միտքը, նա հանգում է այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ը գրված է եղել 570 և 622 թթ. միջև ընկած ժամանակահատվածում, երբ Անանիա Շիրակացին 10-12 տարեկան էր և գիտական աշխատության հեղինակ լինել չէր կարող<sup>9</sup>։

«Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի շուրջը ծավալված վեճը ստիպեց կրկին հանդես գալ Ա. Աբրահամյանին և այլ հեղինակների։ Գտնելով, որ իր աղբյուրագիտական մանրակրկիտ ուսումնասիրություններն արդեն պատասխան են տվել հիշյալ հարցերին, Ա. Աբրահամյանը խիստ քննադատության ենթարկեց Մ. Խաչատրյանի տեսակետները իր «Աշխարհացոյց»-ի հեղինակի պրոբլեմը՝ հոդվածում<sup>10</sup>։ Համեմատելով «Աշխարհացոյց»-ի և «Տիեզերագիտութեան» տվյալները և քննարկելով երկրի ձևի, արեգակի, երկրի ու լուսնի համեմատական մեծության, արեգակի ջերմության աղբյուրի, ծովի և ցամաքի փոխհարաբերության, տարվա եղանակների ու կլիմայական գոտիների և այլ հարցեր, նա փորձում է կրկին հիմնավորել իր տեսակետները այդ աշխարհագրական կոթողի հեղինակի և ստեղծման ժամանակի վերաբերյալ, ցույց տալ, որ այն անվերապահորեն Անանիա Շիրակացու ստեղծագործությունն է։

Արտասահմանյան հայագետներից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ռոբերտ Հյուսընի «Աշխարհացոյց»-ի քննությանը նվիրված ուսումնասիրությունները, ինչպես նաև այդ երկի հիման վրա կազմած քարտեզները։ Հեղինակի կարծիքով «c. 610 is too early a date for the terminus ad quem of the Ašx («Աշխարհացոյց»), but the terminus cannot by much later than 636, the year in which the Persian Empire was destroyed by the Arabs»<sup>11</sup>, այլ խոսքով «Աշխարհացոյց»-ը կարող էր ստեղծվել 610-636 թթ. միջոցին։ Հյուսընը գտնում է, որ հարցիս քննության համար կարևոր նշանակություն ունի Բյուզանդական Հայաստանի նկարագրության ուսումնասիրությունը, որը բնագրի իրական մասն է կազմում և ընդմիջարկություն չէ։ Հեղինակը հատկապես ուշադրություն է դարձնում «Աշխար-

<sup>1</sup> Անդ, էջ 88-89։

<sup>2</sup> Անդ, էջ 91։

<sup>3</sup> Մ.Մ. Խաչատրյան, Հռոմեական աշխարհաքարտեզը և հայկական մղոնաչափը, տե՛ս «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», Երևան, 1967, թիվ 4, էջ 11։

<sup>4</sup> Մ.Մ. Խաչատրյան, VII դարի «Աշխարհացոյցի» մասին, տե՛ս ՊԲՀ, 1968, թիվ 4, էջ 81-83։

<sup>5</sup> Անդ, էջ 84։

<sup>6</sup> Անդ։

<sup>7</sup> Անդ, էջ 88։

<sup>1</sup> Անդ, էջ 90։

<sup>2</sup> Անդ, էջ 99։

<sup>3</sup> Ա.Պ. Աբրահամյան, «Աշխարհացոյց»-ի հեղինակի պրոբլեմը, տե՛ս ՊԲՀ, 1969, թիվ 3, էջ 226-240։

<sup>4</sup> Robert H. Hewson, On the Date and Authorship of the Ašxarhac'oc'yc', տե՛ս Revue des Études Arméniennes, Nouvelle série, tome IV, էջ 423։



հացոց»-ում չորս Հայքերի առկայության վրա, որով 536 թ. որոշակի սահման է դառնում քննության համար, և Մորիկ կայսեր վարչական վերակառուցումների վրա, որոնց համաձայն երկրորդ Հայքը գտնվել է Առաջինից հյուսիս, իրողություն, որ կարող էր գոյություն ունենալ 591-640 թթ. միջոցին: Ի մի բերելով իր քննության արդյունքները, արտահայտելով իր խորին հարգանքը Ս. Երեմյանի խորագիտության նկատմամբ<sup>1</sup>, նա այնուամենայնիվ հետևեց նաև, որ «Աշխարհացոց»-ի հեղինակը Անանիա Շիրակացին է:

Հեղինակի աշխարհագրյան քննության արդյունքները առավել ամբողջական տեսքով ներկայանում են հեղինակի «Introduction to Armenian Historical Geography» աշխատության մեջ<sup>2</sup>, որտեղ ոչ միայն պաշտպանում է իր տեսակետը «Աշխարհացոց»-ի VII դարի սկզբի աշխատություն լինելու և Անանիա Շիրակացու գրչին վերաբերելու մասին, այլև քննարկում է Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման ծագման և մի շարք այլ հարցեր: Հեղինակի ընկալմամբ, Հայաստանն իրենից չի ներկայացրել ուժեղ կենտրոնացված ազգ, ինչպես եգիպտական պետությունը, կամ էլ ամբողջ կազմակերպված տերություն, ինչպես Հռոմեական կայսրությունը, այլ ավելի շուտ անհանգիստ դաշնակցություն էր, որի մաս կազմող իշխանությունների վրա թագավորները փորձում էին տարածել ավատատիրական հսկողությունը: Այսուհանդերձ նա հակված է կարծելու, որ Հայաստանը երբեք չդարձավ իսկական ավատատիրական ազգ<sup>3</sup>:

Քննության առնելով 15 աշխարհների ծագման խնդիրը, Ռ. Հյուսընը գտնում է, որ մինչև «Աշխարհացոց»-ի հանդես գալը իրականում գոյություն ունեին 4 աշխարհներ՝ Սյունիքը, Աղձնիքը, Մոկքը և Փայտակարանը կամ Կասպքը: Գուգարքը և Ծոփքը, հեղինակի ընկալմամբ, ստեղծվել էին Մեծ Հայքի պաշտպանության համար, Սյունիքը, Աղձնիքը և Մոկքը իշխանություններ էին, Գուգարքը՝ բղեշխություն: Նրա կարծիքով Կորձայքը, Ուտիքը, Այրարատը և Տայքը գոյություն ունեին որպես հին Հայաստանի վարչական միավորներ, բայց ոչ այնպիսին, ինչպես «Աշխարհացոց»-ում, որովհետև դրանց հետո նոր տարածքներ կցվեցին<sup>4</sup>: Համաձայն հեղինակի, Տուրուբերանը, Վասպուրականը և Բարձր Հայքը չեն եղել հայկական վարչա-քաղաքական միավորներ և հանդես են եկել միայն 591 թվից հի՛տո: Ռ. Հյուսընը,

ելնելով իր քննության արդյունքներից, եզրակացնում է, որ 15 աշխարհները միաժամանակ հանդես չեն եկել: Մ.թ.ա. 56 թ. մինչև 298 թ. ընկած շրջանում եղել են Սյունիքը, Աղձնիքը, Մոկքը, Գուգարքը և Փայտակարանը, Ուտիքը, Տոսպքը, Ծոփքը, Կորձայքը և Այրարատը գոյություն են ունեցել ավելի փոքր տարածքով, Տուրուբերանը և Վասպուրականը ստեղծվել են 591 թ. կամ դրանից հետո, Բարձր Հայքը՝ 387-390 թթ., Արցախը՝ 363 թ. և Պարսկահայքը՝ 591-636 թթ.<sup>1</sup>:

Հեղինակը փորձում է ցույց տալ, որ Հայաստանում տարբերություն չէին դնում «աշխարհի» և «գավառի» միջև, որ գավառները բաժանվում էին երկու խմբի՝ պաշտոնականի և ոչ պաշտոնականի: Ըստ նրա Հայոց ձորը ոչ պաշտոնական գավառ էր, որից ստեղծվել են մի քանի պաշտոնական գավառներ, ինչպես Երվանդունիքը և այլն: Անդրադառնալով վարչական բաժանման մանրամասներին, նա նշում է, որ Սպերը, Բասենը, Գողթնը և այլն պատկանում էին իրենց իշխանական տներին, Դարանաղին, Եկեղեցը և այլն՝ եկեղեցուն, Դվինը կամ Վաղարշապատը ունեին քաղաքային տարածքներ: Հեղինակը, Դվինը կամ Վաղարշապատը ունեին քաղաքային տարածքներ: Հեղինակը Տոսպքը, Սյունիքը և Մոկքը համարում է բազմագավառ քաղաքական միավորներ (Multi-district political units), իսկ բղեշխությունները՝ ռազմական պաշտպանության գոտիներ, որոնք կարող էին ընդգրկել տարբեր տիպի գավառներ, որոնք սակայն գտնվում էին բղեշխի կամ փոխարքայի հրամանատարության ներքո<sup>2</sup>:

Այլ խնդիր է, անշուշտ, թե որքանով են ճիշտ Ռ. Հյուսընի վերոբերյալ տեսակետները և կամ որքանով են «Աշխարհացոց»-ի տվյալները վերաբերում նրա նշած ժամանակաշրջանին, որոնք որոշ դեպքերում վիճակահարույց են կամ անգամ անընդունելի: Սակայն պարզ է մի իրողություն, որ նա այսօր «Աշխարհացոց»-ի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների շրջանում առավել հայտնի դեմքերից է: Հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի «Caspiane, An Historical-Geographical Study» աշխատությունը<sup>3</sup>, որտեղ քննության են առնվում միայն Կասպք-Փայտակարանի պատմա-աշխարհագրական խնդիրները: Ուշագրավ է վերջինիս «Armenien und Georgien. Christentum und Territorialentwicklung von 4. bis 7. Jahrhundert» քաղաքագրական հիմքում անշուշտ դրված են «Աշխարհացոց»-ի տվյալները:

<sup>1</sup> Անդ, էջ 90:

<sup>2</sup> Անդ, էջ 91-93:

<sup>3</sup> R.H. Hewson, Caspiane, An Historical-Geographical Study, St' u Հանդես ամսօրեայ, 77, 1-3, Wien, 1973:

<sup>4</sup> Robert H. Hewson, Armenien und Georgien. Christentum und Territorialentwicklung von 4. bis 7. Jahrhundert, տե՛ս «Tübinger Atlas des Vorderen Orients (TAVO)», der Universität Tübingen, Wiesbaden, 1987, Masstab 1:2000000:

<sup>1</sup> Ի նկատի ունի Ս.Երեմյանի նախնական տեսակետը, որի համաձայն Անանիա Շիրակացին չէր կարող լինել «Աշխարհացոց»-ի հեղինակը:

<sup>2</sup> R.H. Hewson, Introduction to armenian historical Geography, տե՛ս Revue des Études Arméniennes, Nouvelle série, tome XIII, էջ 77-97:

<sup>3</sup> Անդ, էջ 84:

<sup>4</sup> Անդ, էջ 88-89:



տությունը, գտնելով, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ղեկավարվել է Պըտղոմեոսի տեքստով և նրա քարտեզներով: «Աշխարհացոյց»-ի «Այժմ ցանկանում եմ նրանց մասին մանրամասն խոսել, քանի որ փոքր-ինչ աշխատել եմ գրի և քարտեզի վրա» տեղեկությունը նա մեկնաբանում է որպես փաստարկ քարտեզ կազմելու մասին: Ս. Երեմյանը փորձում է ապացուցել, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ընդհանուր մասում օգտվել է Պտղոմեոսի երկից, իսկ առանձին երկրների նկարագրությունը տվել է ըստ Պապոս Աղեքսանդրացու: Հեղինակի կարծիքով, «Աշխարհացոյց»-ի քարտեզագրական բնույթի մասին են վկայում վերջինիս այն բաժինները, որտեղ շարադրված են քարտեզ և գլոբուս կազմելու եղանակները: Քննարկվող հարցը, որ անշուշտ դեռ շատ ջուր կվերցնի, ունի իր կողմնակիցները և հակառակորդները, սակայն հարկ է նշել, որ Ս. Երեմյանի պատասխանը ավելի շատ զգացմունքային էր, քան փաստերով հիմնավորված, որովհետև, այնուամենայնիվ, եթե Պտղոմեոսի երկը մեզ հասած չլիներ, ապա «Աշխարհացոյց»-ի տվյալներով, եթե չասենք անհնարին, ապա խիստ դժվար կլիներ աշխարհի քարտեզի կազմումը: Անշուշտ մեծ Հայքի նկարագրությունը իր մանրամասնությամբ քարտեզ կազմելու հնարավորություն կարող է ընձեռել, սակայն այն ոչ այնքան քարտեզ կլիներ, որքան երկրագրական սխեմա:

Աշ. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի գիտական համագործակցության օգտավետ արդյունքներից մեկը եղավ «Աշխարհացոյց»-ի աշխարհագրաթարգմանությունը<sup>1</sup>, որն անշուշտ մեծ օգնություն էր գրաբարին չտիրապետող պատմաբաններին և ընթերցող լայն հասարակությանն ու ուսանողությանը:

«Աշխարհացոյց»-ի առավելապես տիեզերական խնդիրները բնության են առնված է. Դանիելյանի աշխատություններում, որի արդյունքներն ամբողջական տեսքով ի մի են բերվել հեղինակի «VII դարի հայկական տիեզերագիտական աշխատությունները Տիեզերքի կառուցվածքի մասին» աշխատության մեջ<sup>2</sup>: Վերջինս ամբողջությամբ կիսում է Ս. Երեմյանի տեսակետները ոչ միայն «Աշխարհացոյց»-ի հեղինակի, այլև ստեղծման ժամանակի խնդրում:

«Աշխարհացոյց»-ի հեղինակի և ստեղծման ժամանակի հարցերի լուսաբանության ասպարեզում հաճելի անակնկալ էր Աբխազիայի անկախության պատերազմում վերջերս զոհված Վ. Բուտբայի «Աշխարհացոյց»-ի բուլղարական ցեղանունների իմաստաբանության շուրջ» հոդվածը<sup>3</sup>, որտեղ հեղինակը

<sup>1</sup> Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջարկը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Գ. Պետրոսյանի, Երևան, 1979:

<sup>2</sup> Э.Л. Даниелян, Армянские космографические труды VII века о строении вселенной, Е., 1978:

<sup>3</sup> В.Ф. Бутба, К семантике болгарских этнонимов «Ашхарацуйца» (Опыт реконструкции процесса формирования общности), տե՛ս ՊԲՀ, 1989, թիվ 4, էջ 169-181:

հիմնավոր ցույց է տալիս, որ Հյուսիսային Կովկասում չորս բուլղարական ցեղերի հիշատակությունը որոշակիորեն արտացոլում է V դարի իրողություն, որն այլևս ժամանակավրեպ էր VII դարում, երբ նրանց մի մասը հեռացել էր Կովկասից: Հասկանալի է, որ այս իրողությունը մատնանշում է, որ Ասպարուխի մասին «Աշխարհացոյց»-ի հիշատակությունը ոչ թե բնագրային է, այլ ընդմիջարկություն:

Մեր ուսումնասիրությունները մեզ բերել են այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ը V դարի ստեղծագործություն է և պատկանում է հանձարեղ Մովսես Խորենացու գրչին: Հասկանալի պատճառներով այս խնդիրը մենք իր բոլոր մանրամասներով չենք քննում, որովհետև այն առանձին հետազոտության հարց է: Սակայն հաշվի առնելով հարցիս սկզբունքային նշանակությունը, մենք կփորձենք լուսաբանել դրա առավել կարևոր հարցադրումները՝ կապված փաստաթղթի ստեղծման ժամանակի և հեղինակի անձնավորության հետ:

«Աշխարհացոյց»-ի ստեղծման ժամանակը որոշելիս ուսումնասիրողների կողմից առավել կարևոր կռվաններ են համարվել փաստաթղթում չորս Հայքերի հիշատակությունը, հեղինակի կողմից Կոնստանդին Անտիոքացու (Կոսմա Հնդկաչու) «Քրիստոնեական տեղագրութիւն» աշխատության օգտագործումը, Մավրիկապոլսի գոյությունը, Մավրիկիոսի վարչական վերակառուցումների առկայությունը և այլն և այլն: Հարկ ենք համարում նշել, որ աշխարհագրական այս կոթողը մեզ անաղարտ չի հասել և մասնավորապես VII դարում և հետագա ժամանակաշրջանում ենթարկվել է լուրջ խմբագրության, որը և ծնել է այն պատրանքը, թե «Աշխարհացոյց»-ը ստեղծվել է VII դարում: Ի պատասխան այն հետազոտությունների, որոնք վերջինս թվագրում են VII դարով, կամենում ենք նշել, որ իրականում «Աշխարհացոյց»-ը բնորոշող և նրա ստեղծման ժամանակաշրջանը հավաստող նյութերը V դարի են: Այսպես, Կապկոհ թուստակի նկարագրության մեջ հաղորդվում է, որ այն բաղկացած է 13 աշխարհներից, սակայն դրանք թվարկելիս հիշատակվում են 14-ը<sup>1</sup>: Հասկանալի է, որ մեկը ավելացվել է հետագայում խմբագրողների կողմից և, ի բարեբախտություն մեզ, խմբագրողը հետևողական չի եղել իր գործունեության մեջ, այլապես հիշատակության սկզբնամասում նույնպես աշխարհների քանակը կարող էր դարձնել 14 և այդ դեպքում ամեն ինչ կծածկվեր պատմական շղարշով: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավելացվածը ոչ թե Շանձանն է (այժմ Զենջան), այլ Սիսականը, որն առանձին աշխարհի կարող էր վերածվել 571 թ. հետո, երբ Վահան Սյունի իշխանը իր

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 40:

տիրույթները մտցրեց Փայտակարանի աշխարհագրի մեջ<sup>1</sup>: Այս իրողության բացահայտումը ինքնստիներյան անհնարին է դարձնում «Աշխարհացոյց»-ի ստեղծումը 571 թ. հետո:

Էլ ավելի ծանրակշիռ փաստարկ է, առաջին հայացքից, հեղինակի կողմից Կոնստանդին Անտիոքացու աշխատությունից օգտվելը: Սակայն բանասիրական ոչ մեծ բնությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրա գոյության մասին չի էլ իմացել և նշված աշխատության հիշատակությունը լուր խմբագիրների քրիստոնեական գաղափարախոսությանը տուրք տալու հետևանք է: Հեղինակը հենց սկզբից խոստովանում է, որ «Յաստուածաշունչ գիրս ոչ գտանի կատարեալ գիտութիւն աշխարհաց որպիսութեանց, վասն որոյ հարկաւորիմք ձեռնարկել յարտաքինսն, որք զաշխարհագրութիւն յարմարեցին ի ճանապարհորդութենէ եւ ի նաւարկութենէ, եւ ստուգեցին յերկրաչափութենէ. եւ ինքն երկրաչափութիւն գտաւ յաստեղաբաշխութենէ»<sup>2</sup>: Սակայն տառացիորեն երկու էջ հետո նա դիմում է Կոնստանդին Անտիոքացու կամ Կոսմա Հնդկաչուի աշխատությանը.

«Արդ այսպէս չափեցին զերկիր եւ զծով, սկսեալ յԱյրեալ գօտւոյն, յորում ոչ ինչ բուսանի, արեգականն ընդ այն գնալոյ յեղանակէն ամարան՝ մինչեւ ի ձմեռնայինն, եւ անդրէն վերադառնայ: Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքր քան զերկիր. քանզի վաթսուն եւ վեց մասն ասեն զարեգակն, զերկուս նահանգս ասելով զբովանդակութիւն արեգական, այսինքն օթեանս քառասուն. յորմէ ըստ հեղման շողոյն նրբացելոյ բորբոթեան՝ ասացին զայրեցական գօտւոյն, եւ աստի անտի նորա Ովկիանոս ընդմիջելով զնա ի բնակութենէս եւ ի հարաւային կիսագնդէն, զոր Ընդդէմ երկիր կոչեցին բնակեցելոյ երկրիս. մեծութեամբ ոչ ըստ

«Արդ այսպէս չափեցին զերկիր եւ զծով, սկսեալ յԱյրեալ գօտւոյն, յորում ոչ ինչ բուսանի, արեգականն ընդ այն գնալոյ յեղանակէն ամարան՝ մինչեւ ի ձմեռնայինն, եւ անդրէն վերադառնայ: Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքր քան զերկիր. քանզի վաթսուն եւ վեց մասն ասեն զարեգակն, զերկուս նահանգս ասելով զբովանդակութիւն արեգական, այսինքն օթեանս քառասուն. յորմէ ըստ հեղման շողոյն նրբացելոյ բորբոթեան՝ ասացին զայրեցական գօտւոյն, եւ աստի անտի նորա Ովկիանոս ընդմիջելով զնա ի բնակութենէս եւ ի հարաւային կիսագնդէն, զոր Ընդդէմ երկիր կոչեցին բնակեցելոյ երկրիս. մեծութեամբ ոչ ըստ

սմա՝ այլ ըստ հիւսիսային կիսագնդին, զոր կոչեն Գօսացեալ. քանզի նմա ասեն փոքրագոյն գծագրիլ, վասն անձուկ գոլոյ բոլորակին. եւ ընդդէմ նա, նմանապէս նորին ի հարաւային եզրն, զոր կոչեն ցամաքեալ: Եւ ոչ միայն զայրեցեալ գօտեան, այլ եւ զամենայն աշխարհաւ շուրջ ասեն բնակեալ. զոր և Կոստանդիանոս Անտիոքացի ի Քրիստոնեական Տեղագրութեան, որ ասաց զտապանն բարեւեան երկրէն առ մեզ անցեալ: Բայց Պտղոմէոս՝ որոյ արք բազմաշրջութեամբ զամենայն երկիր չափեցին, ոչ ասացին զՈվկիանոս շուրջ լինել, այլ ի մի կողմանէ անգեան հիւսիսային յարեւմտից, եւ ընդ հիւսիսի յարեւմտեւ յերկիւս տարածել յերկիւս մասն մի. եւ ընդ արեւմուտս ի հարաւ կոյս՝ ի չորից մասանց մասն մի. եւ ընդ արեւմուտս ի հարաւ կոյս՝ ի չորից մասանց յերկիւս մասունս. եւ ի նմանէ սկսեալ զանծանօթ երկրէ ասէ շրջապատեալ զբնակութիւն մարդկան. եւ զերկից ծովուցն՝ զՀնդկացն եւ զՅունացն եւ զԿասբիցն որ է Վրկանի, բնակութիւն մարդկան ասէ լինել շուրջ զնոքօք. եւ ճշմարիտ է: Քանզի զՅունականաւն եւ զԿասբիցն՝ եւ ի մենջ մարդիկ շուրջ անցին. նոյնպէս վարկանիմ եւ զՀնդկայինն. եւ ոչ որպէս արտաքինքն Դիոնեսիոս եւ Ապոլոն եւ ընկերք իրեանց ասեն, պարունակել Ովկիանոսի զամենայն: Որում եւ Կոստանդին Անտիոքացի հանդիպի վիճել ընդ ընկերս իւր յաստուածային գրոց, յորմէ ոչ տեսաց հատումն ինչ բան [առ] բանի

սմա՝ այլ ըստ հիւսիսային կիսագնդին, զոր կոչեն Գօսացեալ. քանզի նմա ասեն փոքրագոյն գծագրիլ, վասն անձուկ գոլոյ բոլորակին. եւ ընդդէմ նա, նմանապէս նորին ի հարաւային եզրն, զոր կոչեն ցամաքեալ: Եւ ոչ միայն զայրեցեալ գօտեան, այլ եւ զամենայն աշխարհաւ շուրջ ասեն բնակեալ. քայց Պտղոմէոս՝ որոյ արք բազմաշրջութեամբ զամենայն երկիր չափեցին, ոչ ասացին զՈվկիանոս շուրջ լինել, այլ ի մի կողմանէ անգեան հիւսիսային յարեւմտից, եւ ընդ հիւսիսի յարեւմտեւ յերկիւս տարածել յերկիւս մասն մի. եւ ընդ արեւմուտս ի հարաւ կոյս՝ ի չորից մասանց յերկիւս մասունս. եւ ի նմանէ սկսեալ զանծանօթ երկրէ ասէ շրջապատեալ զբնակութիւն մարդկան. եւ զերկից ծովուցն՝ զՀնդկացն եւ զՅունացն եւ զԿասբիցն որ է Վրկանի, բնակութիւն մարդկան ասէ լինել շուրջ զնոքօք. եւ ճշմարիտ է: Քանզի զՅունականաւն եւ զԿասբիցն՝ եւ ի մենջ մարդիկ շուրջ անցին. նոյնպէս վարկանիմ եւ զՀնդկայինն. եւ ոչ որպէս արտաքինքն Դիոնեսիոս եւ Ապոլոն եւ ընկերք իրեանց ասեն, պարունակել Ովկիանոսի զամենայն:

Իսկ յաղագս երկրի բնակելոյ մարդկան՝ երկայնութեամբ յարեւելից յարեւմուտս, վասն բարեխառնութեան. եւ ի հարաւոյ եւ ի հիւսիսոյ՝

<sup>1</sup> Գատուրիւն Արեւոյի, աշխատասիրութեամբ Գ.Վ. Արզաբազանի, Երևան, 1979, էջ 67-68:

<sup>2</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացու», էջ 5:

պատասխանելով. զի երկոքին գտանին յատուածաքին գիրս, եզարար եւ յոգնաբար ասացեալ, «ժողովեսցին ջուրքդ ի ժողով մի. եւ ի ժողովս իւրեանց», եւ թէ «Զժողովս ջուրցն կոչեաց ծովս»:

Իսկ յաղագս երկրի բնակելոյ մարդկան՝ երկայնութեամբ յարեւելից յարեւմուտս, վասն բարեխառնութեան. եւ ի հարաւոյ եւ ի հիւսիսոյ՝ անբնակ լինել, վասն սաստիկ ջերմոյ և սառնամանեաց»<sup>1</sup>:

Մենք ամբողջությամբ մեջբերեցինք սույն հատվածը Կոստանդին Անտիոքացուն վերաբերող տեղեկություններով և առանց դրանց, ակնառու ցույց տալու համար, որ վերջինները ոչ մի կերպ բնագրին վերաբերել չեն կարող: Առաջին հիշատակությունը այնքան բռնագրոսիկ է ընդմիջարկված, որ հանելուց հետո նրա գոյությունն անգամ չի զգացվում, իսկ հաջորդող նախադասությունը պարզապես օրգանապես կապվում է նախորդող նախադասությանը: Նույնը կարելի է ասել երկրորդ հիշատակության առնչությամբ, չնայած այն, հայտնվելով պարբերության վերջում, որոշ վիճաբանությունների տեղիք կարող է տալ: Այսուհանդերձ ընդհանուր հենքի մեջ այն նույնքան օտար կարող է տալ: Կոստանդին Անտիոքացին, որին Ք. Պատկանյանն իրավացիորեն նույնացնում է Կոսմա Հնդկաչուի հետ<sup>2</sup>, VI դարի հեղինակ է, հետևաբար, երբ ապացուցվում է, որ նրա աշխատությունը չէր կարող հիշատակվել «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրում, փաստաթուղթը VII դարի հուշարձան հռչակողները զրկվում են այդ կարևոր կռվանից:

Չորս Հայքերը որպես վարչական միավորներ ստեղծվել են Հուստինիանոս կայսեր օրոք (527-565) և վերաձևման են ենթարկվել Մավրիկիոս կայսեր շրջանում (582-602): Անտարակոյս է, որ եթե չորս Հայքերը եղել են «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրում, ապա փաստաթուղթը VII դարով թվագրողները ուժեղ փաստարկ են ձեռք բերում: Սակայն ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ «Աշխարհացոյց»-ում սկզբնապես չորս Հայքերը չէին կարող հիշատակվել: Խնդիրն այն է, որ Առաջին և երկրորդ Հայքերը իրենց վարչա-տարածական ընդգրկումով ոչ թե նույնանում են Հուստինիանոս կամ Մավրիկիոս կայսեր Առաջին և երկրորդ Հայքերին, այլ Թեոդոսիոս կայսեր ստեղծած պրովինցիաներին, որոնք նույնպես կոչվում էին Առաջին

և երկրորդ Հայք: Ուստի միանգամայն տեղին է մտածել, որ ոչ մի հեղինակ չէր մատուցի Թեոդոսյան Առաջին և երկրորդ Հայքերը, իսկ այնուհետև հուստինիանոսյան կամ մավրիկիոսյան երրորդ և Չորրորդ Հայքերը: Չեռագրերի համադրումից պարզվում է<sup>1</sup>, որ նրանց մեծ մասում եղել է երկրորդ Հայք կամ անթվակիր Հայք, Առաջին Հայք և երկրորդ Հայք Փոքր Հայքի նկարագրության բաժնում: Երբ VII դարում «Աշխարհացոյց»-ը ենթարկվել է լուրջ խմբագրման, խմբագիրները, ազդվելով իրենց ժամանակի վարչական իրողություններից, Մոսիքը տվել են Չորրորդ Հայք անունով, սակայն որևէ փոփոխություն չեն կատարել Փոքր Հայքի հատվածում: Դրա հետևանքով ստացվել են Առաջին, երկրորդ և Չորրորդ Հայքեր, որն ավելի ուշ ժամանակներում գրիչներին ստիպել է Փոքր Հայքի տարածքում հիշվող անթվակիր Հայքը կամ առաջին երկրորդ Հայքը դարձնել երրորդ Հայք: Արդյունքում Հայքերը թվարկվում են ոչ թե Առաջին, երկրորդ և երրորդ հերթականությամբ, ինչպես պետք էր սպասել, այլ երրորդ, Առաջին և երկրորդ դասավորությամբ, որն՝ աշխարհագրական դիրքից ելնելով, ոչ մի հիմնավորում չունի: Ըստ որում, այդ ուղղումը կատարված է ոչ բոլոր ձեռագրերում, որը և հնարավորություն է տալիս հետևել բնագրի աղավաղմանը: Եթե խմբագիրներն առաջնորդվեին բոլոր իրողությունները իրար հետ ամբողջ բնագրում հարմարեցնելու սկզբունքով, ապա նշված փոփոխությունը կկատարվեր բոլոր ձեռագրերում և այժմ մենք զրկված կլինեինք աղբյուրագիտական այս կարեւոր կռվանից, սակայն, բարեբախտաբար, նրանք դրանով չէին առաջնորդվում և դրա հետևանքով մասնակի խմբագրումները այնպիսի հակասություններ են առաջացրել «Աշխարհացոյց»-ում, որոնց լուսաբանումը լույս է սփռում փաստաթղթի ստեղծման ժամանակի և հեղինակի խնդրի վրա:

Մեր փաստարկները, բնականաբար, սրանցով չեն սահմանափակվում: Դրանք հասնում են տասնյակների: Բերենք ևս մի քանիսը: «Աշխարհացոյց»-ում ասված է, որ «(Իտալիան) Ունի և մայրաքաղաքս երկուս՝ զհոյակապն Ռաւեննայ և զմեծն Հռոմ»<sup>2</sup>: Այս տեղեկությունը VII դարի կողմնակիցների կողմից համարվում է կարևոր և արժանահավատ փաստ, ըստ որի Ռավեննան՝ լինելով էկզարխատի կենտրոն, միայն VII դարում կարող էր համարվել Իտալիայի մայրաքաղաք: Իրականում, Ռավեննան արդեն V դարում, Արևմտա-Հռոմեական կայսրության մայրամուտի վերջին տասնամյակներում պետության պաշտոնական մայրաքաղաքն էր, իսկ Հռոմը ավանդույթի ուժով

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Բ.Է. Շարությունյան, «Աշխարհացոյց»-ը և չորս Հայքերի խնդիրը, Երևան, 1997: Չորս Հայքերի և Չորրորդ Հայքի խնդրին, մասնավորապես, անդրադառնում ենք Մոսիքի առնչությամբ:

<sup>2</sup> К.П. Патканов, Армянская география VII века, էջ 9:

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խրեմացւոյ», էջ 7-8:

<sup>2</sup> К.П. Патканов, Армянская География VII века, էջ X-XIII:

շարունակվում էր դիտվել մայրաքաղաք: Այլ խոսքով, «Աշխարհացոյց»-ը արտացոլում է V դարի վարչա-քաղաքական կացությունը: Փայտակարան քաղաքը, ըստ մեր աշխատության, գտնվել է «առ եզերքն Կասբից, ի մուտս Երասխայ»<sup>1</sup>, այսինքն քաղաքը հեղինակի օրերում տեղակայվում էր Երասխի գետաբերանում, Կասպից ծովի ափին: Սակայն «Մղոնաչափք»-ում, որ VII դարի փաստաթուղթ է, Փայտակարանը տեղադրվում է Կասպից ծովից 60 մղոն հեռավորության վրա<sup>2</sup>: Այդ իրոք համապատասխանում է պատմական ճշմարտությանը, որովհետև V դարում Կասպից ծովի մակերևույթը բավականին բարձր էր, իսկ VI դարում և VII դարի սկզբներին՝ ծովի հերթական իջեցման հետևանքով, ջուրը նահանջեց և Փայտակարանը հայտնվեց նրանից նշանակալից հեռավորության վրա:

Կարելի է, անշուշտ, այս շարքը շարունակել, բերել ոչ միայն զուտ պատմա-աշխարհագրական կովանները, այլև այլ բնույթի փաստեր, որոնց անդրադարձել են հարցիս ուսումնասիրողները, սակայն պարզ է մի բան, որ Ասպարուխի հիշատակությունը և VII դարին աղերսվող մի քանի իրողություններ բնագրային չեն, այլ խմբագրության արդյունք, ուստի չեն կարող փաստաթղթի թվագրման հիմքում դրվել: Հասկանալի է, որ այս մոտեցման դեպքում այլևս խոսք չի կարող գնալ Անանիա Շիրակացուն «Աշխարհացոյց»-ի հեղինակությունը վերագրելու մասին: Մեր քննությունը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ աշխարհագրական այս երկը պատկանում է հանձարեղ Մովսես Խորենացու գրչին: Այդ վերջնականապես փաստարկելու համար անհրաժեշտ է կատարել մանրազնին աղբյուրագիտական աշխատանք, որն անմիջապես մեր երկասիրությանը չի վերաբերում, սակայն որին աշխատության երկրորդ մասում նվիրել ենք մեկ ամբողջ գլուխ:

Մեծ Հայքի և ընդհանրապես Հայաստանի վարչա-քաղաքական բաժանման համակարգի քննությունը կատարելիս մենք դիմել ենք հայկական և օտարազգի բազմաթիվ և բազմապիսի սկզբնաղբյուրների օգնությանը:

Հայկական սկզբնաղբյուրների մեջ մեր հարցի քննության տեսակետից մասնավորապես առանձնանում են Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու երկասիրությունները: Բուզանդի «Պատմութիւն Հայոց»-ը<sup>3</sup> անգնահատելի աղբյուր է ոչ միայն հայկական վաղ ավատատիրության, այլև IV դարի քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային պատմության, ինչպես նաև Մեծ Հայքի պատմական աշխարհագրության համար: Մենք կհստակ ենք այն հեղինակների կարծիքը, որի համաձայն Փավստոսի գործը V դարի ստեղծագործություն է: Այդ են վկայում ոչ միայն ժամանակագրու-

թյան գրեթե բացակայությունը, այլև այնպիսի իրողությունների հիշատակությունը, որոնք կարող էին վերաբերել V դարի ապրողին: Մ. Աբեղյանը գտնում է, որ Բուզանդի երկը ծագել է գլխավորապես ավանդական գրույցներից ու վեպից, ուստի չի կարելի օգտվել դրանից անվերապահորեն, իբրև պատմական ստույգ աղբյուրից<sup>1</sup>: Մեր հետազոտություններն աներկբայորեն հավաստում են, որ Բուզանդի աշխատությունն առավել հուսալի և արժանահավատ սկզբնաղբյուրներից է և երիցս իրավացի է անգլիացի պատմաբան Բենյունը, երբ Փավստոս Բուզանդին համարում է Հայաստանի մեծագույն պատմիչը<sup>2</sup>: Հարկ է նշել, որ «Աշխարհացոյց»-ի շատ իրողություններ մեզ համար այդպես էլ առեղծված կմնային, եթե ինչ-ինչ պատճառներով Փավստոսի երկը չպահպանվեր:

Հայ միջնադարի և թերևս հայ պատմագիտական մտքի ամենափառապանծ ներկայացուցիչը Մովսես Խորենացին է, որի «Պատմութիւն Հայոց»-ը<sup>3</sup> հայ ժողովրդի ազգային դիմագծի պահպանման, ինքնագիտակցության բարձրացման և ազգային զարթոնքի գործում մեծ դեր է խաղացել և այսօր էլ խաղում է: Ի տարբերություն Փավստոս Բուզանդի, Պատմահայրը մեզ ներկայանում է որպես լիակատար ձևավորված պատմաբան, որը քննադատաբար է վերաբերվում օգտագործված նյութին և այն մատուցում է ընթերցողին միայն իր հզոր ուղեղի բովով անցկացնելուց հետո: Հարկ է խոստովանել, որ այսօրվա պատմաբանի համար շատ ավելի հաճելի է գործ ունենալ Փավստոս Բուզանդի երկի հետ, որի հերոսները կենդանի մարդիկ են, օժտված մարդկային բոլոր առաքինություններով և թերություններով, մարդիկ, որոնք մեր աչքի առաջ պատմություն են կերտում, քան թե Պատմահոր երկասիրության հետ, որի մեջ ամեն մի փաստը կամ իրադարձությունը կորցրել է սկզբնական իր անաղարտությունը, անցնելով հեղինակի վերլուծության և իմաստավորման խոհանոցով: Մովսես Խորենացու երկը, որի շնորհիվ հեղինակը «բերթողահայր» հռչակվեց նրա հետնորդների կողմից, սուկ հայ ժողովրդի համահավաք պատմության ստեղծման փորձ չէր, այլև հայ ազգային ազատագրական շարժման քաղաքական ծրագիր պետականությունը կորցրած հայ ժողովրդի համար, որը ծնվեց Սահակ Բագրատունու ուղեղում և միս ու արյուն ստացավ Պատմահոր կողմից: Իր համապարփակ ընդգրկմամբ, մատուցված նյութի բազմազանությամբ, սկզբնաղբյուրների առատությամբ, արժանահա-

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, էջ 172-173:

<sup>2</sup> Norman H. Baynes, Rome and Armenia in the fourth Century, տե՛ս The English Historical Review, vol. XXV, New-York — Bombay — Calcutta, 1910, էջ 625:

<sup>3</sup> «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղյան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913:

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 29:

<sup>2</sup> Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 355:

<sup>3</sup> «Փավստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց», ի չորս դպրութիւնս, Վենետիկ, 1832:



վատությանը և գիտականությանը խորենացու երկասիրությունն անզնահատելի է ոչ միայն հայ ժողովրդի պատմության, այլև Հայաստանի ու հարևան երկրների պատմական աշխարհագրության և, մասնավորապես, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանումների ուսումնասիրման համար: Որոշ ուսումնասիրողներ փորձել են տեղաշարժել հեղինակին VII և հետագա դարերը, անգամ նսեմացնել նրա երկասիրության արժեքը, սակայն հնագիտական ու այլ գյուտերը և նորանոր ուսումնասիրությունները գալիս են լուրի հավաստելու նրա V դարի հեղինակ լինելը և աշխատության մեծ արժեքն ու արժանահավատությունը:

Լայնորեն օգտվել ենք Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ից<sup>1</sup>, որն արժեքավոր տեղեկություններ է պահպանել Մեծ Հայքի ըստ աշխարհների հինավուրց վարչական բաժանման վերաբերյալ: Որոշ իմաստով նրա տվյալները վկայում են, թե ինչպե՞ս Հայոց թագավորության ըստ աշխարհների վարչական բաժանումը աստիճանաբար տեղի էր տալիս ավատատիրական վարչական բաժանման սկզբունքներին, երբ վարչական միավորի հիմքում ընկած էր նախարարական տիրույթը:

Մեծ Հայքի վարչական բաժանման համակարգի, գավառների տեղադրության, նոր գավառների առաջացման և պատմա-աշխարհագրական այլ հարցերի վերաբերյալ ստույգ և արժեքավոր նյութեր են պարունակում Կորյունի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Ղևոնդի պատմագիտական աշխատությունները, որոնք համակողմանիորեն արտացոլվել են ուսումնասիրության մեջ<sup>2</sup>: Հարցիս ըննության համար ոչ պակաս կարևորություն ունեն Շապուհ Բագրատունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Ասողիկի, Մովսես Կաղանկատվացու (Դախխուրանցի), Ուխտանեսի, Արիստակես Լաստիվերտցու, Մատթեոս Ուռուխյեցու, Վարդան Արևելցու, Ստեփաննոս Օրբելյանի, Կիրակոս Գանձակեցու, Սամվել Անեցու և

<sup>1</sup> «Ագաթանգեղոսի Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կանախանց, Տիգրիս, 1909: Տե՛ս նաև Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (Арабская версия), СПб, 1905: Gérard Garitte, Documents pour l'Étude du livre D'Agathange, Cita del Vaticano, 1948: «Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարդ)», թարգմ. հունարեն բնագրից Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Էջմիածին, 1966:

<sup>2</sup> Կարյուն, Պատմութիւն վարոց եւ մահուան սրբոյն Մետրոպոլ վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիս, 1913: Կարյուն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1981: «Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», ի լոյս ածելու բաղադատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957: «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տիգրիս, 1904: «Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրութեամբ Գ. Վ. Արզարյանի, Երևան, 1979: Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարսուղ, աշխատութեամբ Աշ. Արրահամյանի, Երևան, 1941: «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ա. Պետերբուրգ, 1887:

առավել ուշ շրջանի հայ հեղինակների գործերը<sup>3</sup>: Արժեքավոր և հավաստի հարուստ նյութ են ամբարում հայկական հիշատակարանները, որոնք հատկապես մեծ կարևորություն են ներկայացնում տեղադրությունների համար<sup>4</sup>:

Փորձել ենք ըստ ամենայնի խոսեցնել «Գահնամակ» կոչված փաստաթղթերի նյութը: Մեզ հասած երեք «Գահնամակ»-ներից առաջինը, որ վերագրվում է Սահակ Պարթևին, իրականում Խոսրով Դ-ի ստեղծած վավերաթուղթն է (IV դարի վերջ), որն արքունի հրովարտակով օրենսդիր ակտի է վերածվել<sup>5</sup>, երկրորդը, որ հայտնի է «Ներսիսյան Գահնամակ» անունով, թերևս VII դարի կեսերի գրական փաստաթուղթ է, որի հիմքում ընկած են հիշյալ գահնամակի և թերևս այլ գահնամակների շատ արժանահավատ նյութեր<sup>6</sup>, իսկ երրորդը, որ ներկայացնում է Մեծ Հայքի թագավորության բանակի ռազմածր ըստ չորս զորաբանակների, արքունի, մարդպետական և նախարարական

<sup>3</sup> «Պատմութիւն Անանու Ջրուցարի», կարծեցեալ Շապուհ Բագրատունի, թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարթիսյան-Սելիքյանի, Երևան, 1971: «Յովհաննես Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912: «Պատմութիւն տանն Արծրունեաց ի թովմայ վարդապետէ Արծրունտ», Կոստանդնուպոլիս, 1852: Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի, Երևան, 1983: «Ստեփաննոսի Տարսուցոյ Ասողկան Պատմութիւն Տիգրեարական», հրատ. Ստ. Մալխասեանց, Ա. Պետերբուրգ, 1885: Ուխտանես Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց և Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, 1871: «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ», աշխատասիրութեամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963: «Մատթեոսի Ուռուխյեցոյ Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898: «Մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ Պատմութիւն Տիգրեարական», ի լոյս ընծ. Ա. Էմին, Մոսկու, 1860: «Պատմութիւն Նահանգին Սիսական», արարեալ Ստեփաննոսի Չրբեկեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910: Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961: «Մամուկի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», հրատ. Արշակ Տեր-Միքայելյանի, Վաղարշապատ, 1893, և այլք:

<sup>4</sup> «Յիշատակարան ձեռագրաց», կազմեց Գարեգին Ա կաթողիկոս Յովսեփեանց, հատ. Ա, Անթիլիաս, 1951: «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ժ րդ.», աշխատասիրութեամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988: «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար», կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984: «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950: «ԺԸ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, մասն Բ, Երևան, 1958, մասն Գ, Երևան, 1967, կազմեց Լ. Ս. Խաչիկյան: «Հայերեն ձեռագրերի ԺԹ դարի հիշատակարաններ», հատոր Ա, կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974, հատոր Բ, կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1973, հատոր Գ, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1984:

<sup>5</sup> Մանգ Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 430: Տե՛ս նաև Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 249-250: Բ. Հարությունյան, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, տե՛ս ՊԲՀ, 1976, թիվ 2, էջ 57-74:

<sup>6</sup> Մանգ Ալիշան, Այրարատ, էջ 432-433: «Պատմութիւն սրբոյն Լորսիսի Պարթևի Հայոց հայրապետի», տե՛ս «Սովիեր Հայկականք», Զ, Վենետիկ, 1953, էջ 32-38: Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 257-259:

գնդերի ու Ն. Արտնցի կողմից պայմանականորեն կոչվել է «Ջորանամակ», հինավուրց հավաստի նյութերի հիման վրա, հավանաբար, VII դարի առաջին կեսին ստեղծված գրական փաստաթուղթ է<sup>1</sup>:

Մեծ Հայքի և հարևան երկրների վարչա-քաղաքական բաժանման և գավառների տեղադրության վերաբերյալ հարուստ նյութեր է պահպանել Վարդանի «Աշխարհացոյց»-ը<sup>2</sup>: Մեր կողմից օգտագործվել են «Կանոնագիրք Հայոց»-ը<sup>3</sup>, «Գիրք թղթոց»-ը<sup>4</sup>, Հայաստանի տարածքով մեկ սփռված արձանագրությունները<sup>5</sup>, «Մանր ժամանակագրություններ»-ը<sup>6</sup> և բազմաթիվ այլ նյութեր:

Մեծ կարևորություն են ներկայացնում հարցիս քննության համար հունահռոմեական սկզբնաղբյուրները, մասնավորապես այն հեղինակների երկերը, որոնք Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ կարևոր նյութեր են պարունակում: Հիշված հեղինակների մեջ առանձնանում են Ստրաբոնի, Պլինիոս Ավագի և Կլավդիոս Պտղոմեոսի աշխատությունները:

Ամստեցի հույն աշխարհագրագետ Ստրաբոնի (մ.թ.ա. 65թ.-մ.թ. 21թ.) «Աշխարհագրության» մեջ<sup>7</sup> արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Հայաստանի ընդհանրապես և Մեծ Հայքի աշխարհագրության վերաբերյալ մասնավորապես: Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում հայկական առանձին երկրամասերի (Ծոփք, Դերջան, Կարին, Տմորիք և այլն) հիշատակությունները, կապված քաղաքական իրադարձությունների, վարչական բաժանումների և այլ խնդիրների հետ: Համաձայն Ստրաբոնի նկարագրության Մեծ Հայքը մեզ ներկայանում է որպես տարբեր վարչական միավորների մի ամբողջություն, որոնցից մի քանիսը համարժեք են աշխարհացոյցյան գավառներին, իսկ մյուսներն իրենց մեջ ներառնում են մի քանի գավառներ (Ալիլիսենե, Տամորիտիս): Անկասկած է, որ դեռևս ավարտուն տեսքով չեն

ձևավորվել Մեծ Հայքի աշխարհները: Ստրաբոնն օգտվել է բազմաթիվ և տարբեր ժամանակների աղբյուրներից, որոնց համադրումը երբեմն ծնել է ժամանակավորեպ իրողություններ, այնպես որ հույն աշխարհագրագետի վկայություններն ու հաղորդումները պետք է օգտագործել ժամանակի, տարածության և զարգացման մեջ, այլապես հնարավոր են որոշ թյուրիմացություններ: Ստրաբոնի նկարագրած Մեծ Հայքն իր տարածքով գրեթե համապատասխանել է աշխարհացոյցյան Մեծ Հայքին, մի փոքր գերազանցելով վերջինիս հյուսիսում, հարավ-արևմուտքում և հարավում: Նրա տեղեկություններով հստակորեն որոշվում են Մեծ և Փոքր Հայքերի սահմանները:

Լատին հեղինակ Պլինիոս Ավագի «Բնապատմություն»-ը<sup>1</sup>, որն անկասկած հավաքչական բնույթ ունի, ոչ պակաս արժեքավոր տվյալներ է պահպանել Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ: Հեղինակն օգտագործել է 327 հույն և 146 հռոմեացի հեղինակների աշխատություններ, որոնց մեծ մասը, դժբախտաբար, մեզ չի հասել: Պլինիոս Ավագը տալիս է Մեծ Հայքի մանրամասն նկարագրությունը, ուրվագծում սահմանները, նշում, որ այն բաղկացած էր 120 զորավարություն-պրեֆեկտուրաներից, որոնցից սակայն տալիս է միայն Կարինի, Դերջանի և Եկեղիքի անունը: «Աշխարհացոյց»-ի քննությունը ցույց է տալիս, որ հիշյալ զորավարությունները համապատասխանել են Մեծ Հայքի գավառներին, որոնց թիվը մի քանի տասնյակով աճում է հետագայում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հետևանքով: Միայն են այն հեղինակները, որոնք փորձում են 120-ը սրբագրել 20 և այն կապել Մեծ Հայքի պտղոմեոսյան շրջանի վարչական բաժանման հետ: 120 զորավարությունները պետք է սերտ աղերս ունենային հայոց բանակի թվաքանակի հետ, որը համաձայն «Ջորանամակ»-ի, կազմել է 120000 մարդ: Այսինքն միջին հաշվով ամեն մի զորավարություն կամ գավառ մարդադաշտ է դուրս բերել 1000 զինվոր:

Անտիկ շրջանի ամենաճանաչված աշխարհագրագետն է Կլավդիոս Պտղոմեոսը, որի երկը մեծ ազդեցություն է թողել աշխարհագրական գիտության զարգացման վրա ոչ միայն հնում, այլև միջնադարում, երբ վերածնունդ ապրող Եվրոպան իր աշխարհագրական գիտելիքները փորձում էր հարստացնել ավելի քան հազար տարի առաջ ստրաբոնյան հույն աշխարհագրագետի հանրագիտարանային բնույթ ունեցող «Աշխարհագրության»<sup>2</sup> ուսումնասիրությամբ:

<sup>1</sup> Plinius Secundus C., Naturalis historiae, vol. 1-10, Cambridge, Mass.-London, 1950-1962: Հայերեն թարգմանությունները կատարել է Գ. Մուրադյանը:

<sup>2</sup> Claudii Ptolemaei Geographia, e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, voluminis primi, pars secunda, Parisiis, 1901, V, 6-12: Strabon's Geographia, edidit Carolus Fredericus Augustus Noebs, I-III, Lipsiae, 1843-1845: Հայերեն թարգմանությունները կատարված են Գ. Մուրադյանի կողմից:

<sup>1</sup> Ղևոնդ Ալիշան, Այրարատ, էջ 425: Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 251-252:

<sup>2</sup> «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատարակություն Հայկ Պերպերեանի համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960:

<sup>3</sup> «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Ա, Երևան, 1964, Բ, Երևան, 1971:

<sup>4</sup> «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901:

<sup>5</sup> «Դիվան իայ վիճագրութեան», բոլոր պրակները, Երևան, 1960-1982: «Վիճական տարեգիրք», կազմեց Կ. Կոստանանց, Պետերբուրգ, 1913:

<sup>6</sup> «Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ.», կազմեց Վ.Ա. Հակոբյան, Ա, Երևան, 1951, Բ, Երևան, 1956:

<sup>7</sup> The Geography of Strabo, with an English translation by Horace Leonard Jones, in eight volumes, V, London, 1989: Страбон, География в 17 книгах, перевод, статьи и комментарии Г.А. Стратановского, Ленинград, 1964: Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճաթյան, Երևան, 1940:

Հայտնի է, որ Դիոկլետիանոս կայսեր (284-305) ժամանակակից Պապոս Աղեքսանդրացին համառոտագրել է այդ աշխատությունը և վերածել երկրագրության, որն էլ ընկած է եղել «Աշխարհացոյց»-ի հիմքում՝ վերջինիս հեղինակի իսկ հաղորդմամբ: Ցավոք, Պապոսի գործը մեզ չի հասել, հետևաբար դժվար է վերականգնել այն պատկերը, ինչ իրենից ներկայացրել է Պտղոմեոսի երկը ծաղկաբաղ արվելուց հետո: Սակայն անտարակույս է և այդ բացահայտ երևում է «Աշխարհացոյց»-ի շարադրանքից, որ եթե «Աշխարհացոյց»-ի հեղինակն անգամ անմիջապես չի օգտվել Պտղոմեոսի «Աշխարհագրությունից», ապա վերջինիս շատ իրողություններ բառացի տեղ են գտել «Աշխարհացոյց»-ում Պապոսի «Խորոգրաֆիա»-ի միջոցով<sup>1</sup>: Պտղոմեոսի «Աշխարհագրությունը»-ը ստեղծվել է «Աշխարհացոյց»-ից ավելի քան երեք դար առաջ, հետևաբար Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը այդ ընթացքում պետք է լուրջ փոփոխություններ ապրեր: Ուստի միանգամայն հասկանալի և բացատրելի են նրանց տարբերությունները Մեծ Հայքի նկարագրության բաժնում: Ուսումնասիրողները չեն կարողացել բացահայտել այդ նկարագրության մեջ Մեծ Հայքի վարչական բաժանման համակարգը, ուստի այն պատկերն է ձևավորվել, որ Պտղոմեոսի երկը պահպանել է հայոց թագավորության լոկ մի քանի երկրամասերի անունները: Այսպես, համաձայն ցայսօր հրապարակի վրա եղած հետազոտությունների Բասիլիսենեն թերևս նույնական է Բասենին, Սիրակենեն՝ Շիրակին, Կոտայան՝ Կոտայքին, Սոֆենեն՝ Ծառուկաց Ծոփքին, Թոսպիտիսը՝ Տոսպ գավառին, Ասթաունիտիսը՝ Հաշտեանքին և այլն, սակայն իրականում, ինչը մենք ցույց կտանք և կաշխատենք համակողմանի հիմնավորել հետագա շարադրանքում, Պտղոմեոսի երկը պահպանել է Մեծ Հայքի II դարի վարչական բաժանման լիակատար պատկերը: Խնդիրն այն է, որ այդ բացահայտվում է միայն ու միայն «Աշխարհացոյց»-ի տվյալների լույսով, սակայն վերջինիս վարչական բաժանման համակարգի բանային վերջին հաշվով Պտղոմեոսի երկասիրությունն է: Հույն աշխարհագրագետի հաղորդումները պարզորոշ վկայում են, որ Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանումը գոյություն է ունեցել դեռ մինչև Պտղոմեոսը և, որոշակի ձևափոխությունների ենթարկվելով, իր արտահայտությունն է գտել «Աշխարհացոյց»-ում: Այս ամենը վկայում է ոչ թե այն մասին, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Մեծ Հայքի նկարագրությունը փոխառել է Պտղոմեոսի երկասիրությունից, այլ Մեծ Հայքի երկու ժամանակաշրջանների վարչական բաժանումների միջև ծագում-

նաբանական կապի մասին: Քննությունը ցույց է տալիս, որ երկրի հասարակական-տնտեսական և քաղաքական զարգացման հետևանքով աշխարհների թիվը նվազում է, 20-ից իջնելով 15-ի: Որոշ աշխարհներ միակցվում են, ծնունդ տալով նույն անունը կրող կամ այլ անվանում ստացած աշխարհների: Այսպես, Թոսպիտիս-Տոսպի և Մարդոի-Մարդպետական աշխարհներից Սասանյան շրջանում ձևավորվեց Վասպուրական աշխարհը, կամ Կատարգենե-Կղարքը և Գոգարենե-Գուգարք աշխարհները միացվելով կազմեցին աշխարհացոյցյան Գուգարք աշխարհը:

Մեծ հետաքրքրություն և գիտական արժեք է ներկայացնում Մեծ և Փոքր Հայքերի նկարագրության մեջ հանդիպող բնակավայրերի տեղադրության խնդիրը: Ավելի քան 120 քաղաքների, ավանների և գյուղերի հիշատակությունը՝ ըստ տեղադրության կոորդինատների, ուսումնասիրողին անսպառ նյութ է տալիս հայկական տեղանունների քննության համար: Դժբախտաբար այն մեզ չի հասել անաղարտ վիճակում: Տեղանունների մեծ մասը արտագրությունների ընթացքում ենթարկվել է մեծ փոփոխությունների, որոնք դժվարացնում կամ անգամ անհնարին են դարձնում տվյալ բնակավայրերի անունների վերականգնումն ու տեղորոշումը: Պտղոմեոսյան կոորդինատների հիմքում, որքան էլ ուսումնասիրողները փորձել են դրանք ընկալել որպես իրական մաթեմատիկական սկզբունքով արված տեղադրություններ, ընկած են զանազան ուղեցույցների տվյալները, որոնք հույն աշխարհագրագետը փորձել է վերածել կոորդինատների: Ուստի բնավ պատահական չէ, որ բնակավայրերի որոշ խմբեր քարտեզի վրա դասավորվում են գրեթե ուղիղ գծով: Պտղոմեոսի հիշատակած բնակավայրերի մի մասը մենք փորձել ենք տեղադրել վարչական բաժանման հարցերը քննելիս, սակայն այդ խնդիրը այլ ուսումնասիրության նյութ է և դուրս է գալիս մեր աշխատության հետաքրքրությունների բուն շրջանակից:

Այլևայլ հարցերի առնչությամբ օգտագործվել են Պլուտարքոսի, Հովսեփ Փլավիոսի, Ապպիանոսի, Արրիանոսի, Դիոն Կասիոսի, Ամիանոս Մարկելինոսի, Եվտրոպիոսի, Ստեփան Բյուզանդացու և այլոց գործերը:

Հարցիս քննության համար մեծ կարևորություն են ներկայացնում բյուզանդական, վրացական, ասորական և արաբական սկզբնաղբյուրները: Բազմաթիվ՝ հեղինակի կողմից բարձրացված կարծիքներ ու տեսակետներ փաստվել են Պրոկոպիոս Կեսարացու, Թեոփիլակտես Միմոկատտայի, Հովհաննես Սկիլիցեսի, Թեոփանես Խոստովանողի, Թեոփանեսի Շարունակողի, Կոստանդին Ծիրանածնի և այլոց երկերով: Մեծ Հայքի արևմտյան աշխարհների վարչա-քաղաքական պատմության հարցերը քննարկելիս մասնավորապես մեծ արժեք ունի Լ. Գելցերի հրատարակած Գևորգ Կիպրացու «Descriptio orbis

<sup>1</sup> Պտղոմեոսի և Պապոսի երկերի վերաբերյալ ուշագրավ աշխատություն է գրել Յ. Ֆիշերը (Pappus und die Ptolemäuskarten, in: u Zeitschrift der Gesellschaft für Erdkunde zu Berlin, 1919, s. 336-358):

Romani»-ն, որի հետ մեկտեղ լույս են տեսել «Basili Notitia»-ն և «Nova Tactica»-ն <sup>1</sup>: Մեծ Հայքի հյուսիսային աշխարհների վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է պահպանել «Քարթլիս ցխովերան» <sup>2</sup>: Օգտագործվել են Մշիխա Զեխայի, Յոշվա Ստիլիտի (Սյունակյաց), Զաքարիա Հռետորի, Հովհան Եփեսացու, Միխայել Ասորու, արաբ հեղինակներ Իբն Խորդադեբեհի, Իբն Հաուքալի, Իսթահրիի, Մուկադասիի, Բալաձորիի, Կուդամայի և այլոց գործերը հայերեն, ռուսերեն կամ այլալեզու թարգմանություններով <sup>3</sup>:

### Ուսումնասիրություններ

Մեծ Հայքի վաղ ավատատիրության շրջանի վարչա-քաղաքական բաժանման համակարգի վերաբերյալ գրվել են առանձին աշխատություններ, իսկ շատ հեղինակներ էլ՝ քննության առնելով այլևայլ խնդիրներ, նշանակալից տեղ են հատկացրել նաև հիշյալ հարցերին: Աշխատությունների մի մասին արդեն անդրադարձանք «Աշխարհացոյց»-ը որպես սկզբնաղբյուր ներկայացնելիս: Այժմ կանգ առնենք այն հիմնարար աշխատությունների վրա, որոնք լուսաբանում են Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանումները, նրանց ձևավորումը և զարգացումը:

Առաջին ամբողջական գործը, որ նվիրվել է Մեծ Հայքի աշխարհացույցյան նկարագրությանը, Ղ. Ինճիճյանի (Վենետիկի մխիթարյաններից) «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատությունն է <sup>4</sup>: Չնայած այն հիմնականում կրում է հավաքչական բնույթ, երկասիրությունը գիտական մեծ նվաճում էր անցյալ դարի սկզբների համար: Հեղինակին հաջողվել է ի մի բերել Մեծ Հայքի աշխարհների և գավառաբաժանման վերաբերյալ իր ժամանակներում հայտնի գրեթե ողջ նյութը, որ նա հավաքել է հայկական և օտար աղբյուրներից, ձեռագիր մատյաններից, և փորձել գիտական վերլուծության ենթարկել այն: Ըստ էության նշված աշխատությունը Մեծ Հայքի պատմական

աշխարհագրության հանրագիտարան է և շատ օգտակար արդի ուսումնասիրողի համար: Անշուշտ, հայագիտության արդի նվաճումներն ստիպում են կասկածի տակ առնել հեղինակի եզրակացությունների և կոահումների նշանակալից մասը, սակայն երկասիրությունը ցայսօր էլ չի կորցրել իր թարմությունը: Հեղինակի շատ եզրակացություններ, չնայած հայագիտության հետինձիճյանական շրջանի մեծ նվաճումներին, մինչև այսօր էլ կասկած չեն ենթարկվում ուսումնասիրողների կողմից: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» եռահատոր աշխատությունը <sup>1</sup>, որի առաջին հատորը նվիրված է Հայաստանի աշխարհագրական նկարագրությանը: Քննարկվող հարցի տեսանկյունից ոչ պակաս արժեքավոր է Ղ. Ինճիճյանի՝ հետազոտողների կողմից պայմանականորեն «Լոր Հայաստան» կոչված աշխատանքը <sup>2</sup>: Այստեղ հեղինակն անդրադառնում է Հայաստանի XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի կացությանը և հաճախ՝ պատմական զուգահեռներ անցկացնելով, արժարժում է Մեծ Հայքի հին վարչական բաժանումներին վերաբերող մի շարք հարցեր:

Գիտական և ճանաչողական մեծ արժեք են ներկայացնում Վենետիկի Մխիթարյան միաբանության մեկ այլ ներկայացուցչի՝ Ղ Ալիշանի գործերը: Հարկ է խոստովանել, որ դրանք ևս նշանակալից չափով հավաքչական բնույթ են կրում, որը թերևս պայմանավորված էր հայագիտության այն ժամանակվա կացությամբ և պահանջմունքներով: Սակայն ի պատիվ մեծ գիտնականի և հետազոտողի, անհրաժեշտ է արձանագրել, որ հեղինակն իր մեծ գիտելիքների և սուր պրպտող մտքի շնորհիվ կարողացել է բարձրացնել և լուծել պատմա-աշխարհագրական բնույթի բազմաթիվ խնդիրներ: Ահռելի նյութ է ամբարված Ղ Ալիշանի «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատության <sup>3</sup> մեջ, չնայած նրա համեմատաբար ոչ մեծ ծավալին: Այստեղ հեղինակը, ըստ մեծի մասին, ճիշտ համարել է Մեծ Հայքի գավառները XIX դարի վարչական միավորներին: Իր «Այրարատ», «Շիրակ», «Սիսական» և այլ աշխատություններում <sup>4</sup> Ղ Ալիշանը կատարել է բազմաթիվ հիանալի տեղադրություններ,

<sup>1</sup> Georgii Cyprii Descriptio orbis Romani, accedit Leonis Imperatoris Diatyposis genuina adhuc inedita, edidit praefatus est commentario Instruxit Henricus Geizer, Lipsiae, 1890:

<sup>2</sup> «Քարթլիս ցխովերանի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությամբ և բազրթով լույս ընծայեց Իլիա Արուստան, Քրիստի, 1953: Տե՛ս նաև «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով և հավելված. պրոֆ. դր. Լ Մելիքսեթ-Բեկ, հատոր Ա (Ե-ժԲ դար), Երևան, 1934:

<sup>3</sup> Այն հեղինակների երկերը, որոնց մատենագրությունը ներածության մեջ չենք տալիս տեղի սղոթյան պատճառով, շարադրանքի մեջ հղված են մատենագրական մանրամասն տվյալներով:

<sup>4</sup> Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1822:

<sup>1</sup> Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. Ա, Բ, Գ, Վենետիկ, 1835:

<sup>2</sup> Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ասիա, հատոր Ա, Վենետիկ, 1806:

<sup>3</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855:

<sup>4</sup> Ղ. Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890: Լույսի՝ Շիրակ, Վենետիկ, 1881: Լույսի՝ Սիսական, Վենետիկ, 1893: Լույսի՝ Արցախ, տե՛ս «Բազմավեպ», 1988, թիվ 1-4, էջ 228-273, 1989, թիվ 1-4, էջ 186-220: Լույսի՝ Ուտի, տե՛ս «Բազմավեպ», 1990, թիվ 1-4, էջ 72-100) և այլն:

բացահայտել վարչա-քաղաքական հետաքրքիր իրողություններ, որոնք այսօր էլ կարող են շարժել ուսումնասիրողի զարմանքը:

Մեծ Հայքի վարչա-տարածքային խնդիրների ուսումնասիրության ասպարեզում մեծ են գերմանացի հայագետներ Լ. Հյուբշմանի և Լ. Մարքվարթի ծառայությունները: Երկուսն էլ հիանալի տիրապետելով հայկական նյութին, քաջատեղյակ լինելով օտար աղբյուրներին, բոլորովին նոր բարձրության հասցրեցին Մեծ Հայքի պատմա-աշխարհագրական հետազոտությունը: Իր ընդգրկման ամբողջականությամբ, բարձրացված հարցերի բազմազանությամբ, խորը գիտականությամբ, սրամիտ և հիմնավորված լուծումներով, անբասիր բանասիրական և պատմագիտական քննությամբ արդի ուսումնասիրողին այսօր էլ հիացնում է Լ. Հյուբշմանի «Հին Հայք տեղայ անունները» աշխատությունը<sup>1</sup>: Հեղինակն անդրադարձել է Հին Հայաստանի վարչա-քաղաքական պատմության հիմնական խնդիրներին, քննության է առել Մեծ Հայքի բնակչության, աշխարհների անունների և ձևավորման, գավառանունների և գավառների զարգացման հարցերը, տեղանվանագիտական բազմաբնույթ խնդիրներ, աշխատությունն օժտել է մի շարք հավելվածներով: Գերմանացի հայագետի երկասիրությունը հանրագիտարանային բնույթ ունի և ոչ մի հետազոտող, որ զբաղվում է «Աշխարհացոյց»-ի կամ Մեծ Հայքի վարչա-տարածքային խնդիրների ուսումնասիրությամբ, չի կարող չըջանցել այն:

Հետադարձ հայացք նետելով Հայաստանի պատմական աշխարհագրության վերջին հարյուրամյակի ձեռքբերումներին, չենք կարող չնշել Լ. Մարքվարթի առանձնահատուկ նպաստը այդ ասպարեզում: Վերջինիս «Երանշահոր» աշխատությունը<sup>2</sup>, չնայած վերաբերում է Սասանյան Պարսկաստանի վարչական բաժանումների խնդրին, իր նշանակալից մասով նվիրված է Հայաստանի պատմա-աշխարհագրական իրողությունների քննությանը: Հեղինակը մատենագիտական ամբողջ նյութը հաջողությամբ խոսեցրեց իր մեկ այլ՝ «Հարավային Հայաստանը և Տիգրիսի աղբյուրակունքը» երկասիրության մեջ<sup>3</sup>: Հայկական և ասորական, հունական, լատինական և արաբական աղբյուրների

<sup>1</sup> H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, Mit Beiträge zur historischen Topographie Armeniens und einer Karte, Strassburg, 1904: Տե՛ս նաև Լ. Հյուբշման, Հին Հայք տեղայ անունները, թարգմանեց Լ. Բ. Պիլեգիկճեան, Կիևնա, 1907:

<sup>2</sup> J. Marquart, Eränšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Mit historisch-kritischem Kommentar und historischen und topographischen Exkursen, Berlin, 1901:

<sup>3</sup> J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930:

նյութերը դարձել են այն հենքը, որի վրա բազմավաստակ գիտնականը հյուսել է իր աշխատությունը: Փայլուն տեղադրությունները, բանասիրական ճշգրտումները, պատմական և աշխարհագրական հետազոտությունները հեղինակին հնարավորություն են տվել Հարավային Հայաստանը մատուցել իր մանրամասներով ու բազմերանգությամբ: Անշուշտ, կարելի է վիճարկել հեղինակի որոշ դրույթներ, կասկածի տակ առնել եզրակացությունների մի մասը, սակայն իր ամբողջության մեջ այն արժեքավոր գործ է:

1908 թ. Սանկտ-Պետերբուրգում լույս տեսավ Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» հանձարեղ աշխատությունը<sup>1</sup>, որը տասնամյակներ շարունակ իր անշնջելի հետքը թողեց հայագիտության զարգացման վրա: Երկասիրությունը նման խորագրով կոչելը ըստ էության պայմանական բնույթ ունի, քանի որ հեղինակը քննության է առնում իրոք որ բազմաբնույթ և բազմապիսի խնդիրներ, որոնց մեջ պատշաճ տեղ են զբաղեցնում Հայաստանի պատմական աշխարհագրության և Մեծ Հայքի վարչա-տարածքային հարցերը: Թող ընթերցողին զարմանք չպատճառի, եթե ասենք, որ Ն. Ադոնցը գիտական իր հմայքով և հեղինակությամբ տասնամյակներ շարունակ կատեցրեց իր քննարկած հարցերի ուսումնասիրությունը այլ հետազոտողների կողմից: Հեղինակի մի շարք եզրակացություններ անվերապահ ճշմարտության արժեք ձեռք բերեցին և էպպես ազդեցին Հայաստանի պատմական աշխարհագրության հետագա զարգացման վրա, չնայած՝ ինչպես ցույց են տալիս վերջին ուսումնասիրությունները, կատարված էին սխալ աղբյուրագիտական հիմքի վրա: Հեղինակի կարծիքով, Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանումը կապվում է բյուզանդական Մավրիկիոս կայսեր վարչական վերակառուցումների հետ, այլ խոսքով թագավորության շրջանում գոյություն չի ունեցել: Այստեղից էլ նրա եզրակացությունը, թե «Աշխարհացոյց»-ը VII դարի ստեղծագործություն է: Սակայն այս թեկուզ և ոչ ճիշտ գիտական հետևությունները չէ, որ բնորոշում են Ադոնցի երկը: Հեղինակը հանդես է բերել գիտական անսպառ երևակայություն, փաստական նյութի փայլուն իմացություն, տեղադրություններ կատարելու բացառիկ օժտվածություն, վարչա-տարածքային քննություն կատարելու բնատուր ունակություն:

Մեծ Հայքի թագավորության պատմության և վարչա-քաղաքական բաժանումների համակարգի ուսումնասիրության ասպարեզում հիրավի մեծ են Հայաստանի հանրապետությունում պատմական աշխարհագրության և քարտեզագրության հիմնադիր, ակադեմիկոս Ս.Տ. Երեմյանի ծառայությունները: Հեղինակի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատությունը, բազմա-

<sup>1</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908: Տե՛ս նաև Ն.Ա. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի շրջանում, Երևան, 1987:

թիվ հողվածներն ու քարտեզները<sup>1</sup> նվիրված են նշված հարցերի քննությանը: Ա. Երեմյանը սովորաբար մեջտեղ չի բերում իր խոհանոցը և ուսումնասիրողը ստիպված է վերստին հաղթահարել հեղինակի անցած ուղին կամ էլ կռահումներ կատարել նրա այս կամ այն եզրակացության կապակցությամբ: Անկախ այն հանգամանքից, թե ընդունելի են կամ ոչ ընդունելի հեղինակի գիտական հետևությունները, համապատասխանում են թե ոչ պատմական իրականությանը, մեր ուսումնասիրության փորձը մեզ հուշում է, որ դրանք կատարվել են ինչ-ինչ նյութերի, թեկուզ և չհիմնավորված երբեմն, հիման կատարվել են ինչ-ինչ նյութերի, թեկուզ և չհիմնավորված երբեմն, հիման վրա: Հեղինակը թերևս առաջինն է, որ փորձել է «Աշխարհացոյց»-ը, դրանով իսկ Մեծ Հայքի վարչա-տարածքային հարցերը քննության առնել իրենց զարգացման, ժամանակի և տարածության մեջ: Այդ իմաստով հետաքրքիր են նրա բնագրային մի շարք սրամիտ սրբագրումներն ու շտկումները, պատմական իրողությունների հետքերը վարչական բաժանումների մեջ տեսնելը և այլն: Այս ճանապարհին, լինելով նման հետազոտության եղանակի առաջամարտիկը, նա թույլ է տվել նաև ցավալի վրիպումներ և սխալներ: Այսպես, հեղինակը փորձել է «Խանիցխ» ընթերցումից «վերականգնել» երբեք գոյություն չունեցած Խանիցխ անունով մի գավառ, երբ ձեռագրերի համեմատությունից պարզվում է, որ այն պարզապես Խառնիսխել գավառի անվան աղավաղումն է: Հենվելով Կունեն գյուղի գոյության վրա, Ա. Երեմյանը Մեծ Կունենից կամ Մեծ Կողմանք գավառը տեղադրել է Աղստև գետի հովտում, երբ Մովսես Կաղանկատվացին հստակորեն գավառը տեղորոշում է Տրտու (այժմ Թարթառ) գետի ավազանում: Կամ փորձելով միաձուլել Այրարատ աշխարհի գավառաբաժանման վերաբերյալ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ և համառոտ խմբաբաժանումների տվյալները, նա հանգում է այն եզրակացության, որ Այրարատն ունեցել է ոչ թե 16 (ըստ ընդարձակ խմբ.) կամ 20 (ըստ համառոտ խմբ.), այլ 22 գավառ և ըստ այդմ էլ համապատասխան սրբագրություն է կատարում բնագրում, որը ոչ միայն չի կարելի, այլև նման եզրակացությունների հնարավորություն չի ընձեռում: Այսուհանդերձ այս վրիպումները չեն կարող ստվեր ձգել Ա. Երեմյանի մեծ ժառանգության վրա: Ոչ պակաս գնահատելի է հեղինակի կողմից Հայաստանի պատմական աշխարհագրության և պատմական քարտեզագրության ըստ ամենայնի մասսայականացումը մեր հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

Մեծ Հայքի վարչա-տարածքային բաժանումների հարցերը քննության են առնվել նաև Թ. Հակոբյանի «Հայաստանի պատմական աշխարհագրություն»

<sup>1</sup> Ա.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963: Տե՛ս նաև քարտեզը: Նույնի՝ «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.)», Երևան, 1979: «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ.Ա, Երևան, 1971, հ.Բ, Երևան, 1984:

աշխատության մեջ<sup>1</sup>, որտեղ բավականին հանգամանակից տրվում են Մեծ Հայքի աշխարհները, առավել նշանավոր գավառները, փորձ է արվում լուսաբանելու «Աշխարհացոյց»-ի հետ առնչվող զանազան խնդիրներ: Հեղինակը նշված հարցերին անդրադարձել է նաև իր «Դիտողություններ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ի մասին» աշխատության մեջ<sup>2</sup>, որտեղ նա հիմնականում կիսում է Ն. Աղոնցի տեսակետները: Հետաքրքիր ուսումնասիրություն<sup>3</sup> ունի Արևմտյան Հայաստանի վաղբույրական դարերի ռազմավարական բաժանումների մասին է. Դանիելյանը, որտեղ նա, հենվելով ձեռագրական նյութի վրա, անդրադառնում է Մեծ Հայքի արևմտյան աշխարհներին: Արևելյան Հայաստանի վարչա-տարածքային հարցերը նա քննել է իր մեկ այլ՝ «Արևելյան Հայաստանի վարչա-տարածքային բաժանումը (591-629)» հոդվածում<sup>4</sup>: Մեզ հետաքրքրող հարցերը, այս կամ այն չափով արծարծվել են է. Հոնիգմանի, Վ. Մինորսկու, Ս. Կանայանցի, Մ. Բարխուդարյանցի, Հ. Մանանդյանի, Ռ. Հյուսընի, Հ. Կարազյոզյանի, Ա. Դարազյոզյանի և այլոց աշխատություններում, որոնց կանդրադառնանք շարադրանքի ընթացքում:

Մեծ Հայքի վարչա-քաղաքական համակարգի քննությունը մեզ բերեց միանգամայն նոր մոտեցումների և եզրակացությունների: Սկզբնապես մենք ևս կանգնած էինք քաղաքացիություն ստացած այն տեսակետների վրա, որ «Աշխարհացոյց»-ը VII դարի ստեղծագործություն է, պատկանում է Անանիա Շիրակացու գրչին, իսկ ըստ աշխարհների վարչական բաժանումը անմիջականորեն կապվում է Մավրիկիոս կայսեր վարչական վերակառուցումների հետ: Աստիճանաբար մեր պատկերացումները խարխլվեցին, իսկ այնուհետև փաստական նյութի նոր իմաստավորումը մեզ հանգեցրեց այն մտքին, որ աշխարհները կամ նահանգները որպես վարչական միավորներ ծնունդ են առել դեռևս I դարում, ամենայն հավանականությամբ, Տրդատ Ա թագավորի գահակալության շրջանում:

Հունահռոմեական հեղինակների հաղորդումները և «Աշխարհացոյց»-ի տվյալները համադրելով, մենք փորձել ենք լուսաբանել Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման ծնունդը, զարգացումը, ավատատիրական հարաբերությունների խորացման հետևանքով՝ անկումը և նրա մասնակի

<sup>1</sup> Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ուրվագծեր, Երևան, 1968:

<sup>2</sup> Թ. Խ. Հակոբյան, Դիտողություններ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ի մասին, տե՛ս Երևանի համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր 43, Աշխարհագրական գիտ. սերիա, պրակ I, Երևան, 1954, էջ 119-149:

<sup>3</sup> Է. Լ. Դանիելյան, Հայկական աղբյուրները Արևմտյան Հայաստանի վաղբույրական դարերի ռազմավարական բաժանումների մասին, տե՛ս ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 99-113:

<sup>4</sup> Է. Լ. Դանիելյան, Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը (591-629), տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, թիվ 8, էջ 55-67:



վերակենդանացումը Մավրիկիոս կայսեր վարչական վերակառուցումների շնորհիվ: Հույն աշխարհագրագետ Ստրաբոնի տեղեկությունները հավաստում են, որ Մեծ Հայքը բաղկացած է եղել բազմաթիվ գորավարություններից կամ գավառներից, որոնք քանակը նա չի հայտնում: Պլինիոս Ավագի հաղորդումներից մեկի համաձայն Մեծ Հայքը I դարի կեսերին դեռևս բաժանված էր 120 գորավարությունների կամ գավառների, որոնցից նրա «Բնապատմություն»-ը պահպանել է միայն երեքի անվանումները, իսկ արդեն II դարի կեսերին, ինչպես հավաստում է Կղավդիոս Պտղոմեոսի երկասիրությունը, Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանումն արդեն իրողություն էր, հայոց թագավորությունը բաժանված էր 20 գորավարությունների կամ աշխարհների: Ըստ աշխարհների վարչա-քաղաքական բաժանումն, անշուշտ, քարացած չէր: Երկրի քաղաքական և հասարակական-տնտեսական զարգացման հետ մեկտեղ այն որոշակի փոփոխություններ է կրում, որոնք աշխարհագրային նյութերի տեսքով դրվում են Մեծ Հայքի աշխարհացոյցյան նկարագրության հիմքում: Այլ խոսքով, աշխարհացոյցյան Մեծ Հայքը իր տարածքով և սահմաններով, ինչպես նաև իր վարչական բաժանումով արտացոլում է հիմնականում III դարի, ամենայն հավանականությամբ, կեսերի վարչա-քաղաքական կացությունը: Նոր հայացքով անդրադառնալով Ագաթանգեղոսի երկին, մենք ցույց ենք տվել, որ այն հավաստում է Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման հինավուրց ծագումը, մեզ մատուցելով IV դարի սկզբին դեռևս հիմնականում պահպանվող հիշյալ բաժանումը և Մեծ Հայքի աշխարհները ներկայացնող աշխարհակալ իշխանությունները: Բռուն ավատականացման հետևանքով աշխարհակալ իշխանների մի մասը վեր է ածվում ժառանգատեր աշխարհատեր իշխանների, իրողություն, որն արձանագրում է Փավստոս Բուզանդի աշխատությունը: Հայագիտությունը Ագաթանգեղոսի երկում աշխարհների հիշատակությունը, հակառակ աղբյուրագիտական նյութի, մինչև օրս փորձել է կապել VI դարի վերջի և VII դարի սկզբի վարչա-քաղաքական կացության հետ, որը սակայն մեր քննության լույսով ամբողջովին բացառվում է:

Մանրակրկիտ պատմա-աշխարհագրական և բանասիրական քննությունը մեզ բերեց այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ը գրվել է V դարում և հեղինակը, մեր կարծիքով, Մովսես Խորենացին՝ հանձարեղ Պատմահայրը, տուրք տալով իր ժամանակների վարչա-քաղաքական որոշ փոփոխություններին, վերջիններս մուծել է «Աշխարհացոյց»-ի մեջ, որով և Մեծ Հայքը մեզ է ներկայանում արդեն դասական դարձած իր 15 աշխարհներով: Գիտական նորություն պետք է դիտել այն հանգամանքը, որ մեր ուսումնասիրության մեջ բացահայտվեց Մեծ Հայքի թագավորության պտղոմեոսյան և աշխարհացոյց-

ցյան նկարագրությունների սերտ, օրգանական կապը: Չլիներ «Աշխարհացոյց»-ը, մեզ համար ըստ էության նշանակալից չափով անբացատրելի կմնային Մեծ Հայքի պտղոմեոսյան նկարագրության վարչա-քաղաքական իրողությունները, իսկ եթե ինչ-ինչ պատճառներով պատմությունը մեզ չհասցներ Պտղոմեոսի հռչակավոր «Աշխարհագրություն»-ը, ապա «Աշխարհացոյց»-ը այդպես էլ կընկալվեր որպես VII դարի ստեղծագործություն, որն, իհարկե, ինչպես Ք. Պատկանյանի օրերում, կվերագրվեր Անանիա Շիրակացուն:

Փաստական հարուստ նյութով փորձել ենք ցույց տալ, որ VI դարի վերջի և VII դարի սկզբի վարչական կացության որոշ նմանությունները «Աշխարհացոյց»-ի վարչական բաժանումներին ոչ թե արդյունք են վերջինիս Անանիա Շիրակացու կամ որևէ մեզ դեռևս անհայտ հեղինակի գրչին պատկանելու, այլ պայմանավորված են բյուզանդական կայսր Մավրիկիոսի կողմից հին հայկական վարչա-քաղաքական միավորները վերակենդանացնելու քաղաքականությամբ: Ըստ որում, այդ ոչ այնքան նրա անձնական և անգամ կամայական վերակառուցումների արդյունք էր, որքան Հայկական լեռնաշխարհի մակերևույթով պարտադրված իրողություն: Արդեն հայոց թագավորների օրոք Մեծ Հայքի պետությունը, առավելագույնս բանական ձևով, բաժանվել էր ըստ աշխարհների, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում էր բնաշխարհագրական և տնտեսական ամբողջություն: Ժամանակի ընթացքում երկրի բնականոն զարգացումը, իսկ երբեմն էլ արտաքին քաղաքական անցքերը որոշակի սրբագրություններ էին կատարել աշխարհների սահմանների մեջ, որոնք այսօր հզոր կռվաններ են «Աշխարհացոյց»-ի ներքին օրինաչափությունները բացահայտելու գործում: Մավրիկիոս կայսրը, վերակենդանացնելով Մեծ Հայքի արևմտյան հատվածի հին հայկական վարչական բաժանումները, հասկանալի պատճառներով որևէ ձևով կաշկանդված չէր այդ քաղաքական իրողություններով, ուստի այն շեղումները, որ հակառակ երկրի լեռնագրության պարտադրած վարչական բաժանումների, տեղ են գտել «Աշխարհացոյց»-ում, նրա կողմից հաշվի չեն առնվել: Կայսրը ավելի շատ առաջնորդվել է Մեծ Հայքի լեռնագրական կացությամբ, որի համար պետք է նրան երիցս շնորհակալ լինենք, որովհետև հին հայկական ըստ աշխարհների վարչական բաժանման համակարգը անփոփոխ վերականգնելու դեպքում գրեթե անհնարին կդարձներ մեր քննությունը:

Մեր հետազոտությունը պատմա-աշխարհագրական բնույթ ունի: Քննությունը կատարվել է ժամանակի և տարածության մեջ, այլ խոսքով Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը դիտարկվել է իր զարգացման մեջ, որպես կենդանի մարմին, որը որոշակի փոփոխությունների է ենթարկվել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հետևանքով: Մեծ տեղ է տրվել Մեծ

Հայքի աշխարհների կամ նահանգների ձևավորմանը, գավառաբաժանմանը և ավատատիրական հարաբերությունների հետևանքով գավառների տրոհմանն ու նոր վարչական միավորների հանդես գալուն: Ցույց է տրվում, որ Պլինիոս Ավագի տեղեկությունն այն մասին, որ Մեծ Հայքը բաղկացած է եղել 120 զորավարություններից կամ գավառներից, պատմական իրողություն է և «Աշխարհացոյց»-ում դրանից ավել հիշատակված 67-73 գավառները երկրի ավատատիրական զարգացման արդյունք են: Ճշտված են, որչափ աղբյուրները հնարավորություն են ընձեռում, գավառների սահմանները, շատ գավառների համար առաջարկված են նոր տեղադրություններ, որոնք կատարված են աղբյուրների նոր մեկնաբանության, երբեմն էլ բանասիրական սրբագրությունների ճանապարհով:

Քննության պատմա-աշխարհագրական եղանակը մեզ հնարավորություն տվեց բնագրերում կատարել որոշ սրբագրություններ, որոնք արդարացված են ոչ միայն աշխարհագրական, այլև բանասիրական տեսանկյունից: Դրա վառ օրինակներից է «ընդ Վարագի ձոր և հասանի ընդ այգն առաւօտն՝ յԼոննայ. քամեաց ի գեօղ և գիշերագնաց հասեալ մինչ ի Տարօնայ կոչեցեալ գետ» տեղեկությունը, որ ձեռագրերում վերածվել էր «Ընդ Վարագի Զարևահասանի. և ընդ այգն ընդ առաւօտն՝ յԼոննայ Յամաց գեօղ և գիշերագնաց հասեալ մինչ ի Տարօնայ կոչեցեալ գետ»: Կատարված են ժամանակագրական ճշտումներ, բացահայտված են քաղաքական պատմության այնպիսի մանրամասներ, որոնց վերաբերյալ սկզբնաղբյուրները ուղղակի տեղեկություններ չեն պահպանել:

Մեր քննության հիմքում, անշուշտ ընկած են «Աշխարհացոյց»-ի տվյալները, սակայն ուսումնասիրությունը կատարված է աղբյուրների ըստ ամենայնի և համակողմանի օգտագործմամբ, անհրաժեշտության դեպքում հետազոտության ժամանակագրական շրջանակները հասցնելով մինչև սեպագրական շրջան և Մավրիկիոս կայսեր վարչական վերակառուցումների ժամանակաշրջանը:

Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգի մեր քննությունը, լինելով տասնյակ տարիների տքնաջան աշխատանքի արդյունք, ծավալուն գործ առացվեց: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ կազմելով մեկ կուռ ամբողջություն, աշխարհների շարադրանքը միաժամանակ ներկայանում է որպես առանձին ուսումնասիրություններ, որի հետևանքով որոշ կրկնությունները պարզապես դարձան անխուսափելի: Մեր աշխատության արդյունքները կարող են օգտագործվել «Հայ ժողովրդի պատմության» անտիկ և վաղ ավատատիրական շրջաններին նվիրված գործերում, «Հայ ժողովրդի պատմության» ընդհանուր շարադրանքում և մասնագիտական դասընթացներում, ինչպես նաև «Հայ ժողովրդի պատմության առլաս»-ում:

Ընթերցողի դատին ներկայացնելով այս աշխատությունը, մենք հեռու ենք այն մտքից, որ ստեղծել ենք թերություններից զերծ կատարյալ գործ: Տեղին են այս կապակցությամբ հայագիտության մեծ երախտավոր Լ. Ադունցի ներքոհիշյալ խոսքերը. «Հայոց անցյալն ուսումնասիրողները հարկադրված են պատմական բազմաթիվ հարցերին մոտենալ խարխափելով, ավելի կամ պակաս հաջող կռահումներ անելով, որոնց մի մասը կարող է հետագայում հաստատվել, մյուսը՝ ոչ»<sup>1</sup>: Նյութի սակավությունը և շատ դեպքերում կցկտուր բնույթը հաճախ ուսումնասիրողներին հանգեցնում են տարբեր և անզավ իրարամերժ տեսակետների: Հեղինակը լուկ հույս է փայփայում, որ նրան հաջողվել է մի քայլ առաջ ընթանալ և մի աղյուս ավելացնել հայագիտության հոյակապ կառույցին:

Հայաստանի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ուսումնասիրելիս հեղինակը մշտական օժանդակություն է ստացել Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնից, համալսարանի գիտական գրադարանի և մատենադարանի աշխատակիցներից: Իրենց խորհուրդներով և անմիջական օժանդակությամբ նրան աջակցել են գործընկերներ Պ. Մուրադյանը, Հ. Բարթիկյանը, Գ. Սարգսյանը, Հ. Կարագոյանը, Է. Պիվազյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Փափազյանը, Գ. Նալբանդյանը, Գ. Մուրադյանը, Գ. Տեր-Վարդանյանը, Մ. Դարբինյանը և շատ ուրիշներ, որոնց նա հայտնում է իր խորին շնորհակալությունը:

<sup>1</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ XIV:

**ԳՆՈՒՄ Ա**  
**Բ Ա Ր Ձ Ր    Ն Ա Յ Ք**

Մեծ Հայքի վարչա-քաղաքական և աշխարհագրական նկարագրությունը «Աշխարհացոյց»-ում սկսվում է Բարձր Հայքից: Մեծ Հայքի թագավորության Արարատակենտրոն կառուցվածքի պայմաններում այդ հանգամանքը առաջին հայացքից տարակուսանք է առաջացնում: Նման նախապատվությունը կարծես հեշտությամբ բացատրվում է այն իրողությամբ, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը՝ հետևելով Պտղոմեոսի և նրան համառոտագրող Պապոս Աղեքսանդրացու երկերի կառուցվածքին, Մեծ Հայքի նկարագրությունը ևս տվել է արևմուտքից արևելք ուղղությամբ: Սակայն չի բացառվում, որ նմանօրինակ նախապատվությունը արդյունք է նաև հիշյալ երկրամասի հայ ժողովրդի և հայկական պետականության պատմության մեջ խաղացած կարեւոր դերով: Կասկած չի հարուցում այն իրողությունը, որ Բարձր Հայքը հանդիսացել է հայ ժողովրդի և հայ պետականության ձևավորման հնագույն կենտրոններից մեկը: Այն փաստը, որ անգամ Արշակունյաց թագավորության շրջանում հայոց թագավորների, քրմապետների, իսկ քրիստոնեության ընդունումից հետո նաև կաթողիկոսների դամբարան-հանգստարանները գտնվում էին Բարձր Հայքում, երբ կարծես պարթևական ծագում ունեցող արքունի հարստությանը ոչ մի ավանդույթ չէր կարող կաշկանդել և կապել նշված երկրամասի հետ, խոսում է Բարձր Հայքի խաղացած կարևոր դերի և մշակութային հզոր ու կենսունակ ավանդույթների մասին: Այդ տեսակետից բնավ էլ պատահական չէ, որ Մեծ Հայքի թագավորության հեթանոսական նշանավոր մեհյանների մեծ մասը նույնպես գտնվում էր Բարձր Հայքում:

«Աշխարհացոյց»-ի Մեծ Հայքի աշխարհների թվարկման հատվածում նրա մասին ասված է. «Առաջին աշխարհի Բարձր Հայք, այսինքն Կարնոյ քաղաք»<sup>1</sup>: Անկասկած այստեղ Բարձր Հայքին որպես համարժեք «Կարնոյ քաղաքի» հիշատակությունը կամ պետք է սրբագրվի «Կարնոյ կողմն», ինչպես, հենվելով «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության<sup>2</sup> վրա, կատարում է Ս. Տ. Երեմյանը<sup>3</sup>, կամ էլ այն ճիշտ է, ուստի նրան նախորդող «այսինքն»

բառը պետք է սրբագրվի «որում» բառով: Այս դեպքում հիշյալ հատվածը ձեռք կբերի նոր իմաստ, որ Բարձր Հայքում գտնվել է Կարնո քաղաքը: Երկու եզրակացություններն էլ խիստ հիմնավոր են և դժվար է անշուշտ նրանցից որևէ մեկին առավելություն կամ նախապատվություն տալ: Սակայն համառոտ խմբագրության տեղեկությունը կշեռքի նժարը թերևս թեքում է հօգուտ «այսինքն Կարնոյ կողմն» արտահայտության<sup>4</sup>:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Բարձր Հայքի մասին ասված է. «Արդ ունի առաջին աշխարհի գաւառս Ք. Դարանաղի, Աղին, Մզուր, Եկեղեց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շաղգամք, Կարին. և բարձր ոչ միայն քան զՀայք, այլ և քան զամենայն երկիր. վասն որո Կատար երկրի կոչեցին զնա, զի ի Դ կողմ աշխարհի ջուր արձակէ. զի բոյսէ Դ գետս զաւրեղս. զԵփրատ՝ յարևմուտս, և զԵրասխ՝ յարևելս, զԳայլ՝ ի հարաւ, ԶԱսամսիս, որ է Վոհ՝ ի հիւսիս: Ունի լեռինս մեծս Գ: Ունի երես, եղջերու, այծ և քաշա, առն և արտի, վիթ և կըկիթ և խոզ. և ի հաւուց ճարակաւորս, զորս կաքաւ, զարաւշ, զասիդ և զայլս. ունի և ճերմուկս և աղտս և զամենայն պարարտութիւնս երկրի»<sup>2</sup>:

Մինչ այս հատվածի քննությանն անցնելը հարկ ենք համարում մեջբերել նաև «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության լավագույն ձեռագրերից մեկի համապատասխան հատվածը. «Արդ ունի Բարձր Հայք գաւառս ինն. Դարանաղի, Առիւծ, Մընձուր, Եկեղեց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շատգամք, Կարին: Եվ ըստ անուանդ արդարև բարձր է Հայք քան զամենայն երկիր, քանզի ընդ չորս կողմանս գետս արձակէ: Ունի և լեռինս երիս. և երես բազումս և հաւս պիտանիս, և ջերմուկս, և աղաղատք, և զամենայն պարարտութիւն, և քաղաք զԹեոդուպալիս»<sup>3</sup>:

Հիշյալ հատվածների համեմատությունը «Աշխարհացոյց»-ի այլ ձեռագրերի տվյալների հետ հնարավորություն է տալիս հստակություն մտցնելու գավառանունների գրության մեջ, կատարելու մի շարք սրբագրություններ և մի քանի նախնական ենթադրություններ ու եզրակացություններ, որոնք հան-

<sup>1</sup> Հովհաննես Դրասխանակերտցին երկրամասն անվանում է Կարնայ աշխարհ. «Կարձեպ զաշխարհին Կարնայ, յորում մայրաքաղաք է Թեոդոսուպոլիս՝ անուանէ զնա Մեծ Մասն Մեծ Հայոց» (տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց», էջ 68):

<sup>2</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ», տե՛ս Վենետիկի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. թիվ 1245, 22 բ: Տե՛ս նաև «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ», էջ 29-30:

<sup>3</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. թիվ 1267, 358 ա: Տե՛ս նաև К.П. Патканов, Армянская география VII века, էջ 17-18: «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 349:

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց», էջ 29:

<sup>2</sup> Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 348:

<sup>3</sup> Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 106:

գամանալից վերլուծության կենթարկվեն հետագա շարադրանքում: Գավառանունների տարընթերցումները ներկայացնում են ներքոհիշյալ պատկերը.

- |   |   |                    |
|---|---|--------------------|
| 1. Դարանաղի, Դարաղի, Դարանալի   | } | Դարանաղի, Դարանալի |
| 2. Աղիւն, Առիւծ, Առեւծ, Աղիծ, Առիծ  |   | Աղիւն, Առիւծ       |
| 3. Մզուր, Մձոր, Մնձուր, Մընձուր, Մնձոր, Ազուր, Սղութ, Սղուռ, Սղուր?                         | } | Մզուր, Մնձուր      |
| 4. Եկեղեց, Եկեղեաց  |   | Եկեղեաց            |
| 5. Մանանաղի, Մանաղի, Մանանի աղի, Մանանալի, Մանունալի  | } | Մանանաղի, Մանանալի |
| 6. Դերջան, Դերջենան, Դերջճան, Դերջան  |   | Դերջան             |
| 7. Սպեր, Իսպեր, Սեպեր, Պեգեր, Պըգեր Պգեր  | } | Սպեր               |
| 8. Շատգոմք, Շատգոմք, Շատգամք, Շամգոմք Շատգոմգ, Շատգոմ, Շաղգամք, Շաղգոմք, Շաղագոմք, Ջաղագոմք |   | Շատգոմք, Շաղագոմք  |
| 9. Կարին, Կարի  | } | Կարին              |

Ինչպես դժվար չէ համոզվել բերված ցուցակից, Բարձր Հայքի գավառանունների տարընթերցումները մեծ տարակարծությունների տեղիք չեն տալիս: Այսպես, ամենից առաջ հարկ է նշել, որ Աղիւն գավառը մի շարք ձեռագրերում հանդես է գալիս Առիւծ անվանումով<sup>1</sup>, որը Ղ. Ինճիճյանի<sup>2</sup> և Ղ. Ալիշանի<sup>3</sup> կողմից դիտվել է որպես հիմնական անուն: Նման, սխալ տեսակետի համար առիթ է ծառայել Փավստոս Բուզանդի կողմից Եկեղեաց գավառի մերձակայքում Առյուծ (Առիւծ) լեռան հիշատակությունը<sup>4</sup>: «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության Շատգոմքին ընդարձակ խմբագրության մեջ համապատասխանում է Շաղգամքը, որը, դատելով Պատմահոր և Ղազար Փարպեցու

<sup>1</sup> Մերոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 582 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի տեքստը հրատարակելիս «Աղիւն» գավառանունը սխալմամբ տպագրվել է «Առիւ» (տե՛ս «Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349):

<sup>2</sup> Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 2:

<sup>3</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23:

<sup>4</sup> Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, էջ 73, 218-219:

տեղեկություններից, իրականում ունեցել է Շաղգոմք կամ Շաղագոմք գրությունը<sup>1</sup>: Բնականաբար հարց է ծագում, թե դրանցից ո՞րն է ճիշտ ձևը: Մենք կիսում ենք Հ. Կարազյոզյանի տեսակետը, ըստ որի գավառանվան երկու տարբերակներն էլ, հավանաբար, զուգահեռ գոյություն են ունեցել: Ըստ որում ծագումնաբանորեն Շաղգոմքը սերում է Շատգոմքից, որն արդյունք է  $t > |$  հնչյունափոխության<sup>2</sup>, որ հատուկ է Հայկական լեռնաշխարհի տեղանուններին: Հեղինակի կարծիքով, տեղանվան առաջին մասը՝ «Շատ»-ը կամ «Շաղ»-ը ծագել է «կատ»-ից և նշանակել է «ներքին» կամ «ստորին»: Բնական է, որ նման բացատրության դեպքում միանգամայն ավելորդ է դառնում «Շատաղագոմ» նախատիպի հնարավորությունը, որից իբր հետագայում կարող էին առաջանալ Շատգոմք և Շաղգոմք տարբերակները<sup>3</sup>: Թե՛ Շատգոմքը և թե՛ Շաղգոմքը նշանակել են Ստորին կամ Ներքին Գոմք:

Ս. Երեմյանը «Բարձր ոչ միայն քան զՀայք...» արտահայտությունը սրբագրել է «բարձր (ե) ոչ միայն քան (զմնացյալ) Հայք»<sup>4</sup>, որտեղ, մեր կարծիքով, երկրորդ հավելումը արդարացված չէ, որովհետև հեղինակը «զՀայք»-ի տակ հասկանում է Մեծ Հայքի ողջ թագավորության տարածքը: Ա. Սուբրյանը իրավացիորեն Ասամսիսը սրբագրել է Ակամսիս, հենվելով «Աշխարհացոյց»-ի այլ տեղեկությունների և հունա-լատինական աղբյուրների վկայությունների վրա<sup>5</sup>: Բարձր Հայքը, համաձայն «Աշխարհացոյց»-ի, ունեցել է երեք մեծ լեռներ, սակայն Ղ. Ինճիճյանի վկայությամբ որոշ ձեռագրերում աշխարհին վերագրվում է 4 լեռ<sup>6</sup>: Լեռների քանակական անհամապատասխանությունն, անտարակույս, արդյունք է «գ» և «դ» տառերի շփոթի, որ այնքան հատուկ է հայկական գրչագրերին, իսկ լեռնանունների բա-

<sup>1</sup> «Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց», էջ 339: «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնյան, էջ 145:

<sup>2</sup>  $t > |$  հնչյունափոխության վրա մեր ուշադրությունը հրավիրեց Հ. Կարազյոզյանը: Այն առաջին անգամ ցույց է տվել Ի. Դյակոնովը, ապացուցելով 'Tugdammil -ի (АВННУ, № 78) և Λιγδομεις-ի (Strabo, I,3,21) համարժեքությունը (տե՛ս АВННУ, № 78, ծանոթ. 3 և «История Мидии», М.-Л., 1956, էջ 240):

<sup>3</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 73:

<sup>4</sup> Անդ, էջ 106:

<sup>5</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 35: Arriani Nicomediensis scripta minoro, iterum rec. K. Hercher, edende car. A. Eberhard, Lips., Teubn., 1885, 7, 4-5: Procopii Caesariensis opera omnia, recognovit Jacobus Haury, Vol. II., De bello Gothico, IV, 2, Lipsiae, 1963:

<sup>6</sup> Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, էջ 2: Տե՛ս նաև Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Առաջին. Ասիա, հատոր Ա, Հայաստան (այսուհետև Նոր Հայաստան), Վենետիկ, 1806, էջ 58-65:

ցակայությունը ցույց է տալիս, որ մեզ չհասած նախնական բնագրում երկրամասի նկարագրությունը եղել է ավելի մանրամասն: Երկրամասի կենդանական աշխարհի ներկայացուցիչները, որպես կանոն, հիշատակվում են եզակի թվով, որը մտածել է տալիս, թե բնագրի «երես»-ը պետք է սրբագրել «երե», սակայն հաշվի առնելով գրաբար բնագրերի հաճախակի շեղումները, այն թողնում ենք անփոփոխ: Նշանակալից հետաքրքրություն է ներկայացնում Ա. Սուբըրյանի կողմից բնագրի «քաշա»-յի «քաղա» սրբագրությունը: Առաջին տպավորությունն այն է, որ հրատարակչի սրբագրությունը կասկածից դուրս է: Սակայն ձեռագրի մեջ «քաշա»-յի «շ»-ն անգամ հեռավոր նմանություն չունի «ղ»-ի հետ, որը բնականաբար վիճելի է դարձնում բնագրային փոփոխությունը: Ինչպես մեզ հուշեց է. Պիվազյանը, «քաշա»-ն պետք է սրբագրել «քաշա», որը նշանակում է վայրի արու այծ և իմաստով նույննում է «քաղ»-ին<sup>1</sup>: Ընդարձակ խմբագրության «և ի հաւուց ճարակաւորս, զորս կաքաւ, զարաւ, զասիդ, և զայլս» հատվածում Ա. Սուբըրյանը «զորս» բառի «զ» նախդիրը փոխարինել է «ի» նախդիրով և դարձրել «յորս», իսկ «զասիդ»-ը սրբագրել է «զանիդ»<sup>2</sup>: Հիշյալ սրբագրությունը մեզ ոչինչ չի ասում: Մեզ պարզ չեն դրա շարժառիթները, իսկ մենք ինքներս էլ, չունենալով անհրաժեշտ կռվաններ, ձեռնպահ ենք մնում այն հաստատելուց կամ մերժելուց: Սակայն մենք չենք կիսում նրա կողմից «զ» նախդիրը «ի»-ով փոխարինելու առաջարկը: Նշված հատվածը մենք թարգմանում ենք «և թևավորներից ճարակավորներ, որոնք են կաքավը, արոսը, անիդը (ասիդը) և այլն», որի դեպքում գրաբար բնագիրը կունենա ներքոհիշյալ տեսքը. «և ի հաւուց ճարակաւորս, զորս (են) զկաքաւ, զարաւ, զասիդ, և զայլս»: Վերջապես հարկ է նշել, որ «ձերմուկս»-ը պետք է ուղղել «ջերմուկս», իսկ համառոտ խմբագրության նկարագրության վերջում որոշ ձեռագրերում հանդիպող «Կարնոյ քաղաք» կամ «քաղաք գԿարնոյ», իսկ մյուսներում՝ «քաղաք գԹեղուպալիս» արտահայտություններից նախապատվությունը պետք է տալ վերջինին: Ավելին, մենք հակված ենք կարծելու, որ «քաղաք գԿարնոյ» ձևը անցումային է: Թեոդուպոլիսը փոխարինվել է «Կարնոյ» բառով, որն իր վրա է վերցրել նախորդի «զ» նախդիրը: Ավելի ուշ շրջանում քերականորեն սխալ «քաղաք գԿարնոյ» արտահայտությունը վերաձևվել է «Կարնոյ քաղաք»-ի:

Հիշյալ քննությունից հետո Բարձր Հայքի նկարագրությունը ստանում է ներքոհիշյալ տեսքը. «Արդ ունի առաջին աշխարհ գաւառս ինն. Դարանաղի, Աղիւն, Մզուր, Եկեղեց, Սանանաղի, Դերջան, Սպեր, Շատգոմք (Շաղգոմք),

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 30: Երկրագրի նկարագրում Հայկազեան լեզուի, հատ. Բ, Երևան, 1981, էջ 1019:

<sup>2</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 30:

Կարին. եւ (ե) բարձր ոչ միայն քան զՀայք, այլ եւ քան զամենայն երկիր, վասն որոյ Կատար երկրի կոչեցին զնա, զի ի չորս կողմ աշխարհի ջուր արձակէ. զի բոլիւ չորս գետս զաւրեղս. գեփրատ՝ յարեւմուտս, եւ գերասխ՝ յարեւելս, զԳայլ՝ ի հարաւ, զԱկամսիս, որ է Վո՛՛՛ ի հիւսիս: Ունի լերինս մեծս երիս: Ունի երես, եղջերու, այծ եւ քաւշս, առն և արտի, վիթ եւ կրկիթ եւ խոզ. եւ ի հաւուց ճարակաւորս, զորս (են) զկաքաւ, զարաւ, զանիդ (զասիդ) և զայլս: Ունի եւ ջերմուկս եւ աղտս և զամենայն պարարտութիւնս երկրի»:

Բարձր Հայքի գավառները պատմության մեջ հիշատակվում են բազմիցս, ուստի ուսումնասիրողները հնարավորություն են ունեցել մեծ ճշտությամբ որոշել նրանց տեղագրությունն ու սահմանները: Գավառների հիշատակությունը, ինչպես վերը տեսանք, սկսվում է Դարանաղի գավառից, որը դատելով թվարկման աշխարհագրական հերթականությունից, եղել է Բարձր Հայքի ծայր արևմտյան գավառը: Հովհաննես Երզնկացին Լուսավորչին նվիրված ճառում գավառի մասին գրել է. «Լերամբք ծաղկաւէտ. ձորովք ջրաբուղիս, եղեմաբուղիս աղբերն Եփրատայ յորդառատ գետոյն ընդունակ... այլ և ի ծոր-ծորս քո լերանց ի ներքո երկրի աղբիւրս աղի դարանացեալ ունիս և ի խորութենէն ի վեր եկեալ ի ջերմութենէ արեգականն՝ զխառնեալ ջուրսն առանց աղի ծծէ հրոյն զօրութիւն. և յստակեալ պարզի աղն համեմիչ անուշահոտ. որով և Դարան աղի կոչիս յայսմ ներգործութենէ»<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, հեղինակը տուրք է տվել ժողովրդական ստուգաբանությանը և փորձել գավառանունը՝ աղահանքերի առկայության հետ կապված, համարել Աղի դարան, սակայն տեղանվանս համեմատությունը Հայաստանի մի շարք այլ անունների հետ լոկ վկայում է դրա հնագույն ծագումը և միաժամանակ կասկածի տակ առնում հիշյալ ստուգաբանությունը:

Դարանաղիում էր գտնվում Սեպուհ լեռը<sup>2</sup>, որը Ղ. Ինձիճյանը նույնացնում է քարտեզների Գոհանամ լեռանը և որն, անկասկած, նույնական է մենակյացների համար բնակատեղի ծառայած քարանձավներով հարուստ Մանեայ այլքին<sup>3</sup>: Սեպուհ լեռը ըստ Հովհաննես Երզնկացու գտնվում էր Դարանաղեաց և Եկեղեց գավառների սահմանագլխին: Այստեղ էին գտնվում Գառնին

<sup>1</sup> «Սոփերք», V, էջ 143: Սեբեոսի մոտ գավառանունը Դարանաղաք է (տե՛ս Պատմութիւն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 165):

<sup>2</sup> Սեպուհ լեռը չի հանդիպում հայկական հնագույն աղբյուրներում: Նրա մասին վկայում են հետազոտյալ հեղինակները:

<sup>3</sup> Ղ. Ինձիճյան, Նոր Հայաստան, էջ 60, 100: Ղ. Ալիշան, Հայապատում, հ. Ա, Վենետիկ, 1901, էջ 77: Մովսես Խորենացի, II, ԱԱ. «... ի գառաին Դարանաղեաց ի լորինն Մանեայ այլքս»: Լեռը հայտնի էր նաև «լեռան Դարանաղեաց» անունով, ինչպես վկայում է «Յայսմաւորքը» (5-ը հոկտեմբերի), Կ. Պոլիս, 1730:

և թորդան ավանը կամ գյուղը<sup>1</sup>, Անի ամրոցը<sup>2</sup>, որը հայկական մի շարք սկզբնաղբյուրներում նույնացվում է Կամախին<sup>3</sup>։ Ս. Երեմյանը փորձել է Անին և Կամախը դիտել որպես առանձին միավորներ, որոնցից առաջինը եղել է սրբավայր և երկրորդը՝ արքայական հանգստարան<sup>4</sup>։ Մեր կարծիքով սրբավայրը և արքունական ամրոցը գտնվել են եփրատ գետի աջ ափին, իսկ հանգստարանը, որ կոչվել է Կամախ, ձախ ափին, որոնք, ինչպես կարելի է եզրակացնել սկզբնաղբյուրներից, սկզբնապես կազմել են մեկ միասնություն։ Սակայն, երբ հանգստարանը վեր է ածվել առանձին բնակավայրի, հանգստարանի անվանումը վերածվել է տեղանվան։ Ինչ վերաբերում է Կամախին, որ այսօր կոչվում է Քեմախ, ապա այն բազմիցս հիշատակվում է խեթական, բյուզանդական, հայկական աղբյուրներում։ Հետսագույն դարերում Կամախ անունը տարածվում է ողջ գավառի վրա և փոխարինում է Դարանաղիին<sup>5</sup>։ Դարանաղիի տարածքում պահպանվել են Բագառիճ անունով երկու գյուղ, որոնք՝ ի տարբերություն Դերջանի Բագառիճի, աղբյուրներում չեն հիշատակվում<sup>6</sup>։ Կասկածից վեր է, որ ժամանակին այնտեղ գտնվել են հեթանոսական աստվածությունների մեհյաններ։

Ղ Ինձիճյանը փորձել է նույնացնել Պտղոմեոսի հիշատակած Daranisa-ն Դարանաղիի հետ, որին, հարկ է խոստովանել, ինքն էլ առանձնապես չի հավատացել, քանի որ Պտղոմեոսի տեղագրությունը նման ենթադրության օգտին չի խոսում<sup>7</sup>։

Մինչև Դարանաղիի սահմանների վերջնական ճշգրտմանն անցնելը, ի շահ ջննության, անդրադառնանք հաջորդ գավառի տեղագրությանը, որն, ինչպես ասվեց, հայտնի է Աղիւն կամ Առիւծ անուններով։ «Աշխարհացոյց»-ի

<sup>1</sup> «Ազարանգեղայ Պատմութիւն Հայոց», էջ 408: Մովսէս Խորենացի, էջ 128, 244, 269, 272: Փավստոս Բուզանդ, III, ԺԷ:

<sup>2</sup> Ազարանգեղոս, էջ 409: Փավստոս Բուզանդ, III, ԺԸ, IV, ԽԴ: Մովսէս Խորենացի, էջ 123, 127, 164, 183, 201, 216, 268, 288 և այլք:

<sup>3</sup> Սամվել Անեցի, Հասարմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 91: «Աշխարհացոյց Կարդանայ Կարթուպետի», էջ 22, 47:

<sup>4</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 35-36: Տե՛ս նաև քարտեզը:

<sup>5</sup> Гр. Капанцяи, Хайаса-колыбель армян, этногенез и их начальная история, Ерван, 1948, էջ 46-51: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայ անունները, Վիեննա, 1907, էջ 127, Mansel, XI, 993, Theophan, Chronogr., I, 377, 444, 489, Const. Porphy., De adm. imp., § 50, Dones de Tell-Mahre ed. Chabot, էջ 86, թրգմ. էջ 74-81, Ibn-Serapion (Տե՛ս Journal of the Royal Asiatic society, 27, 10), Արիտակես Լաստիվերցի, Պատմութիւն, Երևան, 1963, էջ 116 և այլք):

<sup>6</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայ անունները, էջ 127-128:

<sup>7</sup> Ղ Ինձիճյան, Ատրազոութիւն Հին Հայաստանայց, էջ 3: Claudii Ptolemaei Geographia, Voluminis primi, pars secunda, Parisiis, 1901, էջ 943:

ձեռագրերում գավառանունը հանդիպում է նաև Աղիծ և Առիծ տարընթեր-ցումներով<sup>1</sup>, որոնցից եթե երկրորդը Առիծի աղավաղումն է, ապա առաջինը Աղիւնի Առիւծի վերածման անցումային ձև է, որը՝ գավառանվան ճիշտ ձևը որոշելիս, ստիպում է նախապատվությունը տալ Աղիւն ընթերցմանը։ Հերիք է, որ «ն»-ն շփոթի հետևանքով վերածվեր «ծ»-ի, այնուհետև մեծ դժվարություն չէր ներկայացնում այն Առիւծ իմաստավորելը։ Իսկ ինչո՞ւ Աղիծը կարող էր և ծնել է Առիւծ կամ Առիւծ անվանաձևը։ Կարծում ենք, փոքրիշատե հավանական բացատրությունը մեկն է։ Գրչագիրները Աղիծը կարծել են Առիւծի աղավաղում և, բացահայտորեն ազդվելով Փավստոս Բուզանդից<sup>2</sup>, որը մոտավորապես այդ կողմերում հիշատակում է Առիւծ լեռը, սրբագրել են այն Առիւծի։ Սակայն վերաբերում էր այդո՞րք Առիւծ լեռը Աղյուն գավառին։ Ս. Երեմյանը, հիմնվելով Հակոբ Կարնեցու աշխատության տվյալների վրա, համաձայն որոնց «Ղուռուչան, երկիր խոր եւ թաւամայրի, որ ի գրոց Աղնցիք ասեն»<sup>3</sup>, տեղադրել է գավառը Մաղենդերեսի կամ Ղուռուչայ գետի հովտում<sup>4</sup>։ Նման տեղագրությունը ընդունելի է մի քանի տեսանկյունից։ Նախ հարկ է նշել, որ Առիւծ լեռը, որի մոտ հայոց Արշակ Բ թագավորը դիմավորեց Կեսարիայից վերադարձող ներսես կաթողիկոսին, չէր կարող առնչություն ունենալ Աղիւն գավառի հետ։ Դեպի Հռոմեական կայսրություն տանող ճանապարհը հնում և մինչև վերջին ժամանակներս անցնում էր Եփրատի ձախ ափով, հետևաբար Առիւծ լեռը աջ ափին գտնվել չէր կարող։ Ավելին, կարելի է անգամ ենթադրել, որ ճանապարհի հարևանությամբ գտնվող և ներկայումս Մեշե-բաշի կոչվող լեռը, որը գտնվում է Եփրատի կեռմանից մի փոքր արևելք, պետք է նույնանար Առիւծ լեռանը։ Տեղագրական այս կացությունը, մեր կարծիքով, մեկ անգամ ևս հավաստում է Առիւծի գրչագրական սխալ լինելը։ Եվ վերջապես «Աշխարհացոյց»-ում գավառների հիշատակության հերթականությունը խոսում է գավառի Եփրատից հյուսիս գտնվելու օգտին, քանի որ գավառների թվարկումը կատարվում է ոչ միայն արևմուտքից արևելք, այլև, ինչպես շուտով կհամոզվենք, հարավից հյուսիս՝ աշխարհագրական հերթականությամբ։

Շարունակելով իր միտքը զարգացնել, Ս. Երեմյանը գտնում է, որ Ղուռուչայ գյուղի մոտ գտնվել է բյուզանդական աղբյուրների Ἀναλιβόσπορα-Անա-

<sup>1</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. թիվ 1482, 1518, 1770:  
<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 73, 218, 219:  
<sup>3</sup> Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, տե՛ս Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հատ. Բ., Երևան, 1956, էջ 55:  
<sup>4</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 33: Ն. Ադոնցը չգիտի Աղիւնի տեղագրությունը։ Նրա կարծիքով, Աղիւնի հիշատակությունը Դարանաղիից հետո, հավանական է դարձնում նրանց հարևանությունը (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 55):

դիւնաձոր ամրոցը, որն անտիկ շրջանի Ἀναλιβα-ն է: Ըստ որում Ἀναλιβνα - Analibna վայրը, որ ըստ հեղինակի Ղուռու-չայն է, Նիկոպոլիս - Զիմարա ձանապարհի կայաններից մեկն էր<sup>1</sup>: Անադիւնը նա համարում է Անի-Ադիւն-ի աղավաղում, իսկ վերջինիս գոյությունն էլ մեկնաբանում է որպես երկու Անիների գոյության հանգամանք, որով Ադիւնի Անին տարբերակվել է Դարանադիի Անիից<sup>2</sup>: Բնավ չկամենալով խորանալ այս հարցերի մեջ, որոնք պահանջում են լեզվագիտական փայլուն պատրաստություն, մենք կամենում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել միայն մի հանգամանքի վրա: Այսպես, համաձայն Պտղոմեոսի «Աշխարհագրության», Անալիբնա-ն, եթե այն անգամ ամենասերտ աղերսն ունի Ադիւնին, գտնվել է Փոքր Հայքում<sup>3</sup>, իսկ Ադիւն գավառը՝ Մեծ Հայքում: Հետևաբար մեզ համար անհասկանալի է Անալիբնայի տեղադրությունը Ադիւնի տարածքում: Երկուսից մեկը, կամ Ադիւնի սահմանները պետք է տանել Մադեն-դերեսի կամ Ղուռու-չայ գետով և դրանից արևմուտք փնտրել Անալիբնան, որն անկենսունակ է դարձնում նման սահմաններով Ադիւն գավառը, կամ էլ Անալիբնան պետք է փնտրել հեղինակի իսկ անցկացրած Ադիւնի սահմաններից դուրս: Ադիւնի և Անալիբնայի վերլուծությանը հանգամանալից անդրադարձել է Ն. Ադոնցը<sup>4</sup>, սակայն քանի որ նրա քննությունը կատարված է ըստ էության բոլոր գավառների անվանումների ընդգրկումով, ապա դրան կանդրադառնանք գավառների տեղադրությունը ներկայացնելուց հետո:

Վերոհիշյալից ելնելով, դժվար չէ որոշել Դարանադիի և Ադիւնի հավանական սահմանները: Քանի որ Անին գտնվում էր Դարանադիում, իսկ Խախն ու Թիլ՝ Եկեղիքում և Մանեայ ալքը կամ Սեպուհ լեռը նրանց սահմանագծի վրա էր, ապա Ադիւնի տեղադրությունը հնարավոր է լույս Դարանադիի հյուսիս-արևմուտքում, ինչ հավաստում է Հակոբ Կարնեցին: Եփրատ և Գայլ (Լյուկոս) գետերի ջրբաժանը պետք է հանդիսանար նրանց հյուսիսային սահմանը, եկեղիք և Դարանադի գավառների միջև սահմանն անցնելու էր Մուզուր (Մզուր) լեռներից սկիզբ առնող ու Երզնկայի դաշտը արևմուտքից երիզող լեռնաբազուկով և Գայլ գետի (Երզնկայի շրջանի) ավազանի արևմտյան սահման հանդիսացող Մանեայ այրքի լեռնաբազուկով: Դարանադին հարավից եզրափակվելու էր Մուզուր լեռներով, իսկ Ադիւնից տարանջատվելու էր Ղուռու-չայ գետի արևելյան ջրբաժանով: Թե Ադիւնը և թե Դարանադին արևմուտքից

պետք է սահմանագատվեին գետերով՝ առաջինը Սևակն կամ Կարաբուլաղ գետակով, որ Եփրատի վտակն է, իսկ երկրորդը՝ Եփրատ գետով<sup>5</sup>:

Բարձր Հայքի երրորդ՝ Մզուր կամ Մնձուր գավառը, ինչպես վերը տեսանք, հայտնի է նաև աղավաղված Ազուր, Սդուր, Սդուր (Ազուր?) տարբերակներով<sup>6</sup>, որոնք բոլորն էլ անտարակույս Մզուրի գրչական աղավաղումներ են, կապված Մ > Ս > Ա և զ > ղ փոխների հետ: Երկու ձեռագրեր<sup>3</sup> ունեն «Մզուր, որ է Կամախ իւր թեմովն» արտահայտությունը, որի ուշ շրջանի ընդմիջարկում լինելը կասկածից վեր է: Համենայն դեպս, այն արդյունք է այնպիսի իրողության, երբ Մզուրը, որ նաև Մուզուր էր արտասանվում, և Կամախը միասին կազմել են մեկ եկեղեցական թեմ: Որ գավառանունը հնում հնչել է Մզուր կամ Մուզուր, հավաստվում է Գևորգ Կիպրացու «Descriptio»-ում հիշատակված κλίμα Μουζουρων անունով<sup>4</sup>: Իսկ թե ինչո՞ւ է բյուզանդացի հեղինակը Մուզուրը հիշատակում Չորրորդ Հայքի (Մոփքի) թեմում /'Επαρχία Ἰ Ἀρμενίας ἄλλης/, մենք դեռ քննության կառնենք Մոփքի անունությամբ, որովհետև այդ իրողությունը «Աշխարհացոյց»-ի հետաքրքիր առեղծվածներից մեկի բանալին է, իսկ այժմ լույս արձանագրենք, որ այն որպես գավառ հիշատակված է VI դարի վերջի և VII դարի սկզբի բյուզանդական աղբյուրում: Մզուրի ամենահին հիշատակությունը պահպանել է Փավստոս Բյուզանդի երկը: Նկարագրելով Մերուժան Արծրունու գլխավորությամբ պարսկական զորքերի արշավանքը Մեծ Հայք, նա գրում է, որ դրանք անցան «... ընդ Աղձնիս և ընդ Մոփս Մեծ, ընդ Անգեղ տունն և ընդ գաւառն Անձտայ ընդ Մոփս Շահունոց, ընդ Մզուր գաւառն և ընդ Դարանաղէ. ընդ Եկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն ասպատակել հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրև զջուրս բազումս»<sup>5</sup>: Դժվար է գերազնահատել այս տեղեկության նշանակությունը Մեծ Հայքի արևմտյան աշխարհների գավառների տեղադրության համար: Այն որոշակիորեն վկայում է, որ Մզուր-Մուզուրը գտնվել է Մոփք Շահունեացի և Դարանադիի միջև, որը վերահաստատվում է վերոհիշյալ երկու ձեռագրերում այն Կամախի հետ առնչելու փաստով: Վերջապես հարկ է նշել, որ Դարանադին հարավից եզրող լեռները ցայսօր կրում են Մնձուրի (Մոնզուր-դաղ) անունը<sup>6</sup>, իսկ գավառի միջով հոսող գետը՝ Մնձուրի ջուր (Մոն-

<sup>1</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 33:  
<sup>2</sup> Անդ:  
<sup>3</sup> Claudii Ptolemaei Geographia, vol. primi, pars secunda, էջ 885:  
<sup>4</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 55-59:

<sup>1</sup> Ս. Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դ. (298-385 թթ.), քարտեզ, Երևան, 1979:  
<sup>2</sup> Մեարոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. թիվ 1459, 1518, 1883, 3502, 4284:  
<sup>3</sup> Անդ, ձեռ. թիվ 1717 և 5613:  
<sup>4</sup> Georgii Cyprii Descriptio orbis Romani, էջ 49:  
<sup>5</sup> Փավստոս Բուզանդ, էջ 141:  
<sup>6</sup> Карта генерального штаба, Масштаб 1:200000, редактор И. А. Медведев, 1974, 10-37-4: Ուսական 5 և 10 վերստանոց քարտեզները:



զուր-սու) անվանումը<sup>1</sup>: Այս տվյալներն արդեն իսկ բավարար են գավառի հավանական տարածքը որոշելու համար, չնայած, ինչպես կոտեսները, այն հիշատակվում է ևս մի քանի աղբյուրներում: Հյուսիսում գավառի բնական սահման էին ծառայում Մզուր լեռները, հասնելով մինչև գրեթե Պախր (այժմ՝ Բաղր-դաղ) լեռ, հարավում, հարավ-արևմուտքում՝ Մզուրի ավազանը հարակից եզրափակող լեռնաբազուկները և Քըղի գետի (Մյուս Գալ գետ) ու Մզուրի արևելյան մեծ օժանդակ Բոլոմորի ջրբաժան գիծը: Իրականության մեջ հնարավոր են որոշ շեղումները, սակայն նշված տարածքը առավել հավանական տարբերակն է: Մուզուր-Մզուր անվան վերածվելը Մնձուրի հավանաբար կատարվել է շատ վաղուց, որովհետև բյուզանդական հեղինակ Հովհաննես Սկիլիցեսի շարունակողը հիշատակում է Մունձարոս լեռը<sup>2</sup>: Միջայել Ատտալիատեսի մոտ, որ նույն տեղեկություններն է հաղորդում, լեռան անունը պահպանվել է Μουζουρον գրությամբ<sup>3</sup>: Պահպանվել է նաև արաբական Marur գրությամբ, որը պետք է կարդալ Մազուր<sup>4</sup>:

Հ. Հյուբշմանի կարծիքով հին հայկական Մընձուր և Մզուր - Մըզուր ձևերը հավանաբար ծագում են հնագույն Մունձուր ձևից<sup>5</sup>: Մեր կարծիքով, սկզբնական ձևը հավանաբար եղել է Մուզուր, որը՝ հայերենի օրինաչափություններին համապատասխան, վերածվել է Մզուրի կամ Մըզուրի: Այնուհետև ավելացել է «ն» աճականը, իսկ «զ»-ն վերածվել է «ձ»-ի, որի հետևանքով Մուզուր-Մզուրը վեր է ածվել Մունձուր - Մնձուրի: Ուստի մենք չենք կարող համաձայնել մեծանուն հայագետի հետ, թե Փավստոսի վկայած Մըզուր ձևը Մնձուր գավառանվան երկրորդական մի հին ձևն է եղել<sup>6</sup>:

Բարձր Հայքի նշանավոր գավառների թվին է պատկանում Եկեղեացը, որ բազմիցս հիշատակվում է ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում: «Աշխարհացոյց»-ում գավառանունը վկայված է «Եկեղեաց» և «Եկեղեց» տարընթերցումներով, որ Եկեղիքի սեռական հոլովն է: Ի տարբերություն Մեծ Հայքի մեծ թվով գավառների, որոնց անունները պահպանվել են ուղղական հոլովով, Եկեղիք ձևը «Աշխարհացոյց»-ը չի պահպանել: Գավառանունը հիշատակվում է Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կորյունի,

Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Հովհան Մամիկոնյանի, Արիստակես Լաստիվերտցու և ուրիշների երկերում<sup>1</sup>: Պարզվում է, որ Եկեղեաց գավառում էին գտնվում Խախ ավանը<sup>2</sup>, Թիլ ավանը կամ գյուղը<sup>3</sup>, Երիզա (Երեզն, Երեզնավան) գյուղը կամ ավանը Անահտական կամ Արտեմիդի մեխյանով<sup>4</sup>, Չրմես ավանը<sup>5</sup> և Գալ (չչիոթել Փոքր Հայքի Գայլ և Մոփքի Մյուս Գայլ գետերի հետ) գետը<sup>6</sup>: Խախը և Թիլը իրենց անունները պահպանել են մինչև մեր օրերը և գտնվում են ներկայումս Չարդախլու-դերե կոչվող գետի ափին, որը պատմական Գալ գետն է<sup>7</sup>: Եվ իրոք Գրիգոր Լուսավորիչը Երեզից Թիլ գնալու համար կտրեց անցավ Գայլ գետը, որի տեղադրությունը ճշտվել համընկնում է Չարդախլու-դերեին: Երեզը կամ Երիզան հետագայի Երզնկա կամ Էրզինջան քաղաքն է, որի անունը թերևս առաջացել է Երեզնական ձևից: Վերջապես Չրմեսը ուսումնասիրողների կողմից նույնացվում է Մումինային կամ ձմին գյուղին, որը պահպանել է իր անվանումը Ջիմին արտասանությամբ<sup>8</sup>:

Եկեղեաց գավառն, իրավացիորեն, նույնացվում է հունական աղբյուրների Ակիլիսենեին և բյուզանդական աղբյուրների Եկելեսենեին կամ Կելցենեին: Հ. Հյուբշմանը գտնում է, որ «ծագմամբ այս մուք անունը՝ բնականապես հյ. եկեղեցի (սեռ. եկեղեցույ, յբ. սեռ. եկեղեցեաց) = յն. ἐκκλησια, բառին հետ առնչութիւն չունի: Թէ ինչո՞ւ ամէն անուններէն մէջէն միայն ասի (ի բաց թողլով Խոր. թով էջ 141 տեսնուած տարբեր ընթերցուածը) անհոլով է, չեմ կրնար մեկնել»<sup>9</sup>: Դժբախտաբար մենք ևս դժվարանում ենք որևէ բացատրություն գտնել Ակիլիսենե - Եկեղիքի համար, թողնելով այն հետագա ուսումնասիրողներին:

Ակիլիսենեի խնդիրն իր մեջ պարունակում է մի շարք հարցերի պատասխանները, որոնք առնչվում են Բարձր Հայքի ձևավորման պատմությանը,

<sup>1</sup> Տե՛ս նույն ցարտեղները:

<sup>2</sup> Հովհաննես Սկիլիցեսի շարունակող, տե՛ս «Բյուզանդական աղբյուրներ», 9, Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 230: «Այնտեղից նա Տավրոս լեռան վրայով, որին տեղացիները Մունզարոս են կոչում, հասնում է Կելցենե կոչված երկիրը՝ երկրորդ անգամ անցնելով Եփրատ գետը...»:

<sup>3</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 184:

<sup>4</sup> "Journal of the Royal Asiatic Society", 27, 11-12, 63:

<sup>5</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 128-129:

<sup>6</sup> Անդ, էջ 129:

<sup>1</sup> Ագաթանգեղոս, էջ 30, 409: Փավստոս Բուզանդ, էջ 6, 38, 114, 142, 216, 219, 262: Կորյուն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1981, էջ 98: Մովսես Խորենացի, էջ 190, 194, 244, 258, 306, 316, 340: Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, էջ 15-63: Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարսուոյ, Երևան, 1941, էջ 49, 125: Արիստակես Լաստիվերտցի, էջ 116 և այլն:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 216: Մովսես Խորենացի, էջ 306:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդ, էջ 6, 38, 219: Մովսես Խորենացի, էջ 244, 258, 306:

<sup>4</sup> Ագաթանգեղոս, էջ 30, 409: Մովսես Խորենացի, էջ 190:

<sup>5</sup> Մովսես Խորենացի, էջ 190:

<sup>6</sup> Ագաթանգեղոս, էջ 30:

<sup>7</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 54: Ա. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 46:

<sup>8</sup> Ա. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 57:

<sup>9</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 130:

ուստի դրան կանդրադառնանք ավելի ուշ: Այժմ միայն նշենք, որ Ն. Ադոնցը ցույց է տվել, որ Ակիլիսենեն անվամբ նույնանալով հանդերձ եկեղեցին, տարածքային առավել մեծ ընդգրկում է ունեցել<sup>1</sup>: Լինելով հեթանոսական կարևոր սրբատեղի, եկեղեցը կոչվել է Անահիտ աստվածուհու մեխյանի կապակցությամբ նաև Անահիտական, որի ընտելությանը կանդրադառնանք Ակիլիսենեի հետ մեկտեղ: Արդ, ունենալով վերոբերյալ տեղեկությունները, փորձենք որոշել գավառի սահմանները: Բնական է, ինչպես տեսանք նախորդ ընտելությունից, արևմուտքում այն պետք է սահմանակցեր Դարանաղիին նըշված սահմանագծով, հարավում՝ Սզուր-Մուզուրին, իր մեջ առնելով Երզնկայի դաշտը և տարածվելով այն եզերող ջրբաժանները, մինչև Անահիտայ Աթոռ կամ Սուրբ Գրիգոր (Ներկայումս՝ Սըբնգոր) լեռնազագաթը՝ հյուսիսում և Սուրբ Լույս (Ներկայումս՝ Սիլպոս) և Պախր լեռները՝ հարավում, մինչև Դերջան և Մանանաղի գավառները՝ արևելքում: Դերջանի և Մանանաղիի հետ ունեցած սահմանը կարող է հատուկ ընտելության, որին կանդրադառնանք Մանանաղիի առնչությամբ:

Մանանաղի գավառի վերաբերյալ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 1717 և 5613 ձեռագրերում հանդիպում է «Մանաղի որ է Երզնկան իւր թեմովն» հետսամուտ արտահայտությունը, որ, անկասկած, արտահայտում է եկեղեցական թեմական բաժանման որոշակի իրողություն, երբ գավառը ներառնված է եղել Երզնկայի թեմի մեջ: Սեբեոսը հիշատակում է Մանաղայք գրությանը, որը Մանանաղեայք-ի աղավաղումն է<sup>2</sup>: Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ գավառում էին գտնվում Շիրի կամ Շիրնի բերդաքաղաքը, Շիրնի ագարակը, որտեղից էր թոնդրակյան շարժման առաջնորդներից Կուսծիկ արեղան, որն իր անունն էր ստացել բերդաքաղաքից, Կաշե և Աղյոս (Աղիսոյ) գյուղերը կամ ագարակները որոնք պատկանում էին թոնդրակյան շարժման մեջ ներգրավված Հրանուշ, Ախնի և Կամարա թուրքերին, Պախր կամ Գայլախազուտ լեռան լեռնաբազուկներից մեկում գտնվող Բազմադքյուր ավանը, որը հետագայում թոնդրակեցիների կողմից ոչնչացված Սուրբ Խաչի անունով վերանվանվում է Սուրբ Խաչ կամ Խաչ, Ջերմ կամ Ջերմա քաղաքագյուղը, ուր աղվեսախարան դրոշմեցին մի խումբ թոնդրակեցիների դեմքերին<sup>3</sup>: Մանանաղիի միջով հոսում էր Մանանաղի գետը, որը թափվում էր

Եփրատի մեջ<sup>4</sup>: Ինչպես ձիշտ նկատել է Ն. Ադոնցը, Մանանաղի գետը ներկայիս Թուզլա-դարասի գետն է, Եփրատի ձախափնյա վտակը, որը ներկայիս Կոթուր գյուղից մի փոքր հյուսիս-արևմուտք թափվում է վերջինիս մեջ Կոթուրի հինավուրց կամրջի շրջանում<sup>5</sup>: Սակայն հարցը ընենելիս, նշանավոր հայագետը թույլ է տալիս սխալ, կարծելով, թե Կոթեր գյուղը, որի մասին հայտնում է Արիստակես Լաստիվերտցին, գտնվել է Եփրատի աջ ափին, այն դեպքում, երբ ներկայիս Կոթուրը տեղադրված է գետի ձախափնյակում:

Հայտնի է, որ բյուզանդական իշխանությունները Վավեր իշխանի բողոքը ընենելու համար, որի ագարակները ոչնչացրել էր Սամվել եպիսկոպոսը, վերջիններիս բնակիչների կողմից Բազմադքյուրի Սբ. Խաչը քարուքանդ անելու համար, Մանանաղի են ուղարկում Եղիա դատավորին, որը գալիս է Եկեղյաց գավառի Կոթեր գյուղը և պահանջում հայրապետ (իմա՝ եպիսկոպոս) Սամվելից ներկայանալ ու բացատրություն տալ: Երբ զինվորները նրան հայտնեցին դատավորի պահանջը, Սամվել եպիսկոպոսը «գրե (գլուխ եպիսկոպոսացն) հրովարտակս առ վիճակաւորս եկեղեցոյ, առ երիցունս և առ անապատաւորս, զի առանց իրիք ինչ զմտաւ ածելոյ առ նա ժողովեցին»<sup>6</sup>: Հսկայական բազմություն է հավաքվում, որը շարժվում է մինչև «յեզր գետոյն Եփրատայ, ուր Մանանաղի ի նմա խառնի: Եւ լինի յայնմ ժամու եկք անձրևի. և ի յորդութենէ անձրևին զարթեաւ եւփրատես և գայր լի դարիւ և դարիւ»<sup>7</sup>: Ջինվորները նավակով գետի մյուս ափն են անցկացնում ծերունի եպիսկոպոսին և նրա եղբորորդուն՝ Թեոդորոսին, որոնք Կոթերում ձերբակալվում են և բանտարկվում: Ժողովուրդը, տեսնելով զինվորների նենգությունը. վերջիններս խոստացել էին ժողովրդին ևս անցկացնել գետի մյուս ափը, վարարումից չվախենալով անցնում են գետը և փաստորեն ստիպում, որ հարցի ընտելությունը կատարվի Փորիս կոչվող եպիսկոպոսարանում<sup>8</sup>: Չխորանալով դատավարության հետագա ընթացքի մեջ, նշենք, որ Ն. Ադոնցը հիշյալ տեղեկություններից եզրակացնում է, որ ժողովուրդը եկել էր Մանանաղիի կողմից և հասել Եփրատի ափը, հետևաբար պատմական Կոթերը վերջինիս աջ ափում էր: Հեղինակը դրան ավելացնում է ևս մեկ փաստարկ, թե հաջորդ օրը, երբ Եղիան Կոթերից Սամվել եպիսկոպոսի հետ մեկնեց Փորիս, Եփրատն այլևս չանցան<sup>9</sup>: Առաջին հայացքից տրամաբանական թվացող այս ենթադրությունը

<sup>1</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, т. 54:

<sup>2</sup> Պատմութիւն Սեբեոսի, էջ 165: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 131:

<sup>3</sup> Արիստակես Լաստիվերտցի, էջ 125. «Թե որպէս եւ ի Մանանաղոյ սահմանս բորթոցեցաւ հորեհ մոլորութեանն», «Կուսծիկ ոմն շնանուն արեղայ որ քնակեր մօտ ի բերդաքաղաքն որ կոչի Շիրնի, որ դեռ ևս այսօր ագարակին գնորայն անուն կոչեն», էջ 128. «և զագարակսն ... որոց անուանքն կոչին միումն Կաշե և միւումն Աղիսոյ», «ի հատուած լերինն Պախրայ որ այժմ կոչի Գայլախազուտ, առաջին հարցն ասան ինչ էր զոր Բազմադքիւր կոչեն. ուր զԱստուածային նշանն բազմապայծառ վայելչութեամբ կանգնեալ էին. որ և զանուն գեղջն ի նոյն փոխեալ խաչ անուանեն մինչև ցայսօր», էջ 129. «Գայ ժողովով ի քաղաքագիւղն որ կոչի Ջերմայ, և աղուսախարանօք զդէմս նոցա դրոշմել հրամայէ»:

<sup>4</sup> Անդ, էջ 130. «... յեզր գետոյն Եփրատայ, ուր Մանանաղի ի նմա խառնի»:

<sup>5</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, т. 50:

<sup>6</sup> Արիստակես Լաստիվերտցի, էջ 130:

<sup>7</sup> Անդ:

<sup>8</sup> Անդ, էջ 130-132:

<sup>9</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, т. 50:

իրականում կառուցված է սխալ հիմքի վրա: Ամենից առաջ, եթե ընդունենք, որ Սամվելը Մանանաղիի եպիսկոպոսն էր, այնուամենայնիվ նրա աթոռանիս՝ ոչ թե Մանանաղիում էր, այլ Դերջանում, այլ խոսքով ասած նրա աթոռավայրը Փրրիս եպիսկոպոսարանն էր: Պատահական չէ, որ նա սովորական եպիսկոպոս չէր, այլ «հայրապետ»: Հետևաբար եպիսկոպոսի հետ դեպի Կոթեր գնացող բազմությունը շարժվում էր ոչ թե Մանանաղիից դեպի Եկեղեց գավառ, այլ Դերջանից: Հետևաբար եփրատն անցնելուց հետո Սամվել եպիսկոպոսը ձերբակալվեց գետի ձախափնյակում, որտեղ էլ գտնվում էր պատմական Կոթերը կամ ներկայիս Կոթուրը: Իսկ ինչո՞ւ հաջորդ օրը Փրրիս ուղևորվելիս չի հիշատակվում եփրատը: Պատասխանը կարծում ենք, առանձին դժվարություն չի ներկայացնում: Նախ և առաջ անձրևներից վարարած գետը հաջորդ օրը կարող էր նորից անցանելի դառնալ և, որ կարևորն է, գետի առաջին անցման ամենապարզ Արիստակես Լաստիվերտցին տրամադիր է ընդգծելու աստծո նախախնամությունը ժողովրդի կողմից գետն անփորձանք անցնելու պարագայում: Դեպի Փրրիս գնալիս աստծո նախախնամությունը շեշտելու կարիք այլևս չկար: Եվ վերջապես չմոռանանք, որ Մանանաղիում թոնդրակյան վարակը տարածվել էր ոչ միայն հակաՆե հանվանե հիշատակված գյուղերում, այլև այլ բնակավայրերում և ագարակներում: Ուստի հազիվ թե կարելի է մտածել, որ Մանանաղիի բնակիչներն էին եկել հասել եփրատի ափը: Ընդհակառակը, թեկուզ այն հանգամանքը, որ դատավոր Եղիան սկզբում ձերբակալել էր Սամվել եպիսկոպոսին և նրա եղբորորդուն, պետք է բացատրել այն իրողությամբ, որ վնասը և նրա հետ եկած բնակիչները վկայել էին ի վնաս Սամվել եպիսկոպոսի: Մեզ հայտնի է Փրրիսի տեղադրությունը, որը գտնվում է եփրատի աջ ափին, անկասկած, պատմական Դերջանի տարածքում և ներկայումս հայտնի է Փիրիս կամ Պիրիս անունով<sup>1</sup>: Այս ընկալությունից պարզ է դառնում, որ Եկեղեց գավառի սահմանները անհամեմատ ավելի արևելք էին ընկած, քան ընդունված է հայագիտության կողմից: Ըստ այդմ էլ կարելի է ենթադրել, որ Պախրը (ներկայիս Բաղդդադը) լոկ լեռնազագաթ չէր, այլև լեռնաշղթա, որը տարածվում էր արևելք, ջրբաժան հանդիսանալով Լճիկ (Եղեգիկ) և Թուրլա-դարասի (Մանանաղի) գետերի միջև: Եկեղեց գավառը, հարավ-արևելքում սահման ունենալով Պախր լեռները, տարածվել է մինչև ներկայիս Կոշան (Ղոշան) լեռնազագաթը (3050 մ), այնուհետև կտրուկ թեքվել հյուսիս և՛ ընթանալով Վժան (Վալուղլուկ) և Մանանաղի գետերի ջրբաժանով, հասել է Բուբակ-դաղ, հետո հատել է ներկայումս Սորկունուկ կոչվող գետակը (Ջորկուն?) և Աստա-

<sup>1</sup> Անդ, էջ 50: Տե՛ս Ռուսական 5- և 10-վերստանոց քարտեզների համապատասխան պլանշետները: Карта генерального штаба, Масштаб 1:200000, 10-37-5:

իր-թափասի լեռան վրայով հասել Մանանաղի գետին ներկայիս Խումլար գյուղի արևելակողմում: Այնուհետև սահմանը, անտարակույս, ընթացել է Մանանաղի գետով մինչև Կոթերի պատմական կամուրջը և ապա Աստոռի գոմ (ներկայումս՝ Աստոկոմու) գյուղից հարավ անցնող լեռնաբազուկով ներկայիս Աղբիևար (2162 մ) լեռը, իսկ այնտեղից էլ մինչև Երզնկայի դաշտը արևելքից եզերող լեռնաբազուկը:

Այսօրինակ սահմանագծումից հետո Մանանաղին ենթադրելի է Վժան գետի արևելյան ջրբաժանից արևելք և Պախր լեռներից հյուսիս ընկած շրջանում: Ինչպես փայլուն կերպով ցույց է տվել Ն. Ադոնցը, Թուրլա-դարասի գետի ավազանում ցայսօր պահպանվել է Չերմե բնակավայրը, որը պատմական Ջերմն է կամ Ջերման: Դրանից դեպի մի փոքր արևմուտք, հեղինակը Շիրին վայրում տեղադրում է Շիրնի բերդաքաղաքը<sup>1</sup>, իսկ Շիրնիից դեպի հարավ գտնվող Կուշնա բնակավայրը նույնացնում է Կաշեին<sup>2</sup>: Մեզ մատչելի հարավ մեծամասշտաբ բոլոր քարտեզներում մենք այդպես էլ չգտանք Շիրին բնակավայրը, որը մենք հավանաբար ենք տեսնելու ոչ թե Ջերմայից արևմուտք, այլ արևելք ընկած շրջանում: Խնդիրն այն է, որ Սամվել եպիսկոպոսը հազիվ թե թոնդրակյանների պատժելու տաներ «աղանդավորական» փստով վարակված Մանանաղիի խորքերը:

Չերմե-Ջերմայից հյուսիս-արևելք գտնվում է ներկայումս Խաչի գյուղը Դումանլու լեռան լանջին, իսկ դեպի հարավ Խաչ լեռն է կամ Խաչդաղը<sup>3</sup>: Ն. Ադոնցը՝ Պախրը նույնացնելով Բաղդ գագաթին, վերջինիս շարունակությունը կազմող լեռները համարում է Գայլախազուտ լեռներ, իսկ նրանց մեջ նր մտնող Խաչ-դաղի հյուսիսային լանջին տեղադրում է Բազմաղբյուրը<sup>4</sup>: Այսինքն, հեղինակը ներկայիս Խաչի գյուղը կամ Խաչի-քյոյը համարում է ուշ շրջանում ձևավորված բնակավայր և ոչ թե պատմական Բազմաղբյուրը: Մեր կարծիքով, Խաչի գյուղի առկա տեղադրությամբ պետք է որոշել Գայլախազուտ լեռների տեղը: Հայկական լեռնաշխարհում Բաղդ անունով լեռներ շատ կան: Հնարավոր է, որ դրանց մի մասը հնում իրոք Պախր է կոչվել: Սակայն

<sup>1</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 51: երիցյանի կարծիքով Շիրնին թուրքերեն բառ է (իմա՝ պարսկերեն) և նշանակել է քաղցր, սակայն Ն. Ադոնցը իրավացիորեն մերժում է այդ տեսակետը (տե՛ս Изв. Кавк. Отд. Импер. Русс. Геогр. Общ., Приложение к I вып. 8 тома 1883 года. Дополнения к списку населенных пунктов Эрзерумской области, էջ 97):

<sup>2</sup> Անդ, էջ 51:

<sup>3</sup> Անդ, էջ 51: Տե՛ս Копия Турецкой карты Анатолии, изданной в масштабе 1:210000 в 1330 году Гиджры, т. е. в 1911-1912 годах, издано в военно-топографическом отделе штаба Кавказского военного округа в 1915 году, Книги IV-14:

<sup>4</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 51:

Պախր կամ Գալախազուտ լեռները պետք է նույնանան տվյալ դեպքում Դու-մանլու-դադ լեռնաշղթային:

Մանանադին հայտնի է պատմության մեջ կապված հայոց Արշակ և Խոս-րով Արշակունի թագավորների հակամարտության հետ, որից պարզվում է, որ այն գտնվում էր Արշակ Գ-ի տիրույթներում՝ երկու թագավորությունների սահմանագլխին<sup>1</sup>: Խոսրով Վերջինի զորավար Սահակ Բագրատունին Մանա-նադի գավառի ամուր քարանձավներում ապաստանած Սուրեն Խորխոռու-նուն, Վահան Առավելեհնին և Աշխադար Դիմաքսյանին ազատելով Սամվել Մամիկոնյանի պաշարումից, որն ուզում էր Արշակ Գ-ի գանձերը ետ վերա-դարձնել, վերադառնում է գանձերով հանդերձ Խոսրովի տիրույթները: Հա-վանաբար, հենց այս շրջանում էլ՝ «ի գաւառն Մանանադույ ի լեռան՝ որ կոչի Սմբատայ բերդ», սելջուկ թուրքերը XI դարում քարանձավներում ապաստա-նած հազարավոր հայերի կոտորեցին<sup>2</sup>: Հիշյալ տեղեկությունների լույսով կարելի է ենթադրել, որ Մանանադիի արևելյան սահմանը անցնում էր Մա-նանադի գետի և Լջիկի ու Երասխի ջրբաժանով, այսինքն «Աշխարհացոյց»-ի հիշատակած Մեղեդուտիս լեռներով: Հետևաբար Մանանադին արևելքում սահմանակցել է Տավրուբերանի Մարդադի գավառին: Հյուսիսում Մանանա-դին սահմանակցել է Դերջանին Եփրատի և Մանանադի գետի ջրբաժանով մինչև Մալրամ (Մարիամ?) լեռը և այնտեղից իջել հարավ-արևմուտք Մա-նանադի գետի ներկայումս Չիրկիեի կոչվող վտակի արևմտյան ջրբաժանով մինչև Մամախաթուն (Դերջան) բնակավայրի արևելակողմը, քանի որ վեր-ջինս, անտարակույս, պետք է գտնվեր Դերջանի մեջ: Այստեղ էլ հենց սահ-մանը հասնում էր Մանանադի գետին<sup>3</sup>:

Դերջանը, ինչպես արդեն նշվեց, սահմանակցում էր Մանանադիին հյու-սիսից, այսինքն պահպանվում է ոչ միայն նկարագրության արևմուտքից արե-վելք, այլև հարավից-հյուսիս սկզբունքը: Գավառն առաջին անգամ հիշա-տակվում է Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ Յերօդոն աղավաղված գրությամբ: Համաձայն հույն աշխարհագրագետի, հայոց թագավորներ Ար-տաքսիաս-Արտաշեսը և Զարիադրես-Զարեհը այն գրավել էին խալդուսե-րից ու մոսինոյկներից և այն սահմանակից էր կամ էլ Փոքր Հայքի մաս էր

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 313. «...վարե յերկար մինչև ի սահմանս Մանանադույ», էջ 314. «Իսխաստայս արկանե յամուր այրս ի գաւառին Մանանադույ»:

<sup>2</sup> Արիստակես Լաստիվերոսցի, էջ 71. «զբազումս ի վերայ անձաւին ելեալք մեծամեծ վիմօք գլաջարդ առնէին»:

<sup>3</sup> Հ. Հրաբջանց, Ելնելով կինչի և Շաբեկերի քարտեզներից, չի կարողանում կողմնորոշվել, թե Պախրը Բաղըր լեռն է, թե Խաչը, թե թուրքովին մեկ այլ լեռ, այսինքն նա էլ տեսականորեն չի բացառում Դումանլու լեռների Պախր (Գալախազուտ) կոչվելու հնարավորությունը:

կազմում<sup>1</sup>: Ուսումնասիրողները իրավացիորեն Յերօդոն -ն սրբագրել են Δερօդոն, կապելով այն հայկական Դերջանի հետ<sup>2</sup>: Գավառանունն առավել ճիշտ գրությամբ պահպանել է Ղլինիոս Ավագի «Բնապատմությունը» Derze- ne և Derxene գրությամբ<sup>3</sup>: «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում հայտնի է նաև Դերջենան և Դերջան տարընթերցումներով, որոնք, անշուշտ, աղավաղում-ների արդյունք են<sup>4</sup>: Հիշատակվում է Ագաթանգեղոսի, Կորյունի, Խորենացու և մի շարք այլ հեղինակների երկերում<sup>5</sup>: Դերջանում էր գտնվում Բագայառիձ կամ Բագառիձ գյուղը, որը ցայսօր պահպանել է իր անունը<sup>6</sup>: Այս հինավուրց գյուղում հեթանոսության շրջանում գործում էր Հեփեստոսի կամ Միհրական (Միրական) մեծաբնույթը: Եթե այս բոլորին ավելացնենք նաև այն փաստը, որ Դերջանում էր գտնվում Խլաձորի վանքը կամ Սուրբ Գրիգորը, Բագառիձի դաշտը, ապա աշխարհագրական տեղեկությունները զավառիս վերաբերյալ կսպառվեն: Յայսմավուրջի մեջ Դերջանի և Երզնկայի սահմանակցության վրա հիշատակվում է Պարթենից դղյակը<sup>7</sup>, որն, ըստ երևույթին, վերաբերել է ոչ թե Դերջանին, այլ Երզնկային, համենայն դեպս, եթե անգամ Դերջանին էլ վերաբերեր, ապա երկու գավառների սահմանագատման մեջ սկզբունքային որևէ փոփոխություն տեղի չէր ունենա:

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհում ձևավորված վարչական միա-վորներն ունեին մեծ պահպանողականություն, որի հետևանքով երբեմն XIX կամ XX դարում ճշտիվ ստեղծվում էին այնպիսի գավառներ կամ մարզեր, որոնք կառարյալ պատճենահանումն են հին հայկական վարչական բաժա-նումների: Այդ տեսակետից թուրքական աղբյուրների Դերջանը, որը կազմված էր լինում սովորաբար վերին և ներքին հատվածներից, համապատասխանել է «Աշխարհացոյց»-ի Դերջան և Մանանադի գավառների տարածքին<sup>8</sup>: Դերջան

<sup>1</sup> The Geography of Strabo, XI, 14,5:

<sup>2</sup> Н. Адом, Армения в эпоху Юстиниана, էջ 53:

<sup>3</sup> Pline Secundi C., Naturalis historiae, vol. 1-10, Cambridge, Mass.— London, 1950-1962, V, 20, 83 (Loeb Classical Library):

<sup>4</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. թիվ 1518, 4284:

<sup>5</sup> Ագաթանգեղոս, էջ 411. «ի գաւառն Դերջան»: Կորյուն, էջ 114. «Եպիսկոպոսն Դերջանոյ»: Մովսես Խորենացի, էջ 335. «Եպիսկոպոսն Դերջանու», էջ 340. «ի Դերջան»:

<sup>6</sup> Ագաթանգեղոս, էջ 411-412. «ի Մրիական մեհեանն անուանեալ որդոյն Արամազդայ, ի գիւղն զոր Բագայառիձ կոչեն ըստ պարթաւարն լեզուին»: Մովսես Խորենացի, էջ 127. «զեփեստուն ի Բագայառիձ» (Բագառիձ): Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, էջ 251. «ի դաշտին Բագառ-ձոյ ի Դերջան գաւառի»:

<sup>7</sup> Ղ. Ռեձիձյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 22:

<sup>8</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Բ հատ., Երևան, 1964, էջ 41:

գավառի արևմտյան սահմանը եկեղեցի հետ անցել է ջրբաժան գծով մինչև Աթոռ Անահտա կամ Աբ. Գրիգոր (Աբրահամ) լեռը, այնուհետև ճորոխ և Եփրատ գետերի ջրբաժանով մինչև Խաղտոյառի գետի վերին հոսանքի շրջանը և այնուհետև վերջինիս արևմտյան ջրբաժանով մինչև Եփրատ գետը և Մանանդիի սահմանը, որը քիչ առաջ քննարկեցինք:

«Աշխարհացոյց»-ին հատուկ հաջորդականությամբ այնուհետև հիշատակվում է Սպեր գավառը, որ գտնվում է Դերջանից հյուսիս: Վերջինս «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում հայտնի է նաև Պեգեր, Պգեր, Պըգեր, Սեպեր և Իսպեր տարընթերցումներով<sup>1</sup>, որոնցից առաջին երեքի առաջացման պատճառները մեզ անհայտ են: Համաձայն Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու Սպերը հանդիսացել է Բագրատունիների տոհմական կալվածքը, որտեղ գտնվել են Սմբատավաճ շենը և Բայբերդ ամրոցը<sup>2</sup>: Սեբեոսը, անշուշտ, ի նկատի ունենալով Սպերի պատկանելիությունը Բագրատունիներին, վերջիններին կոչում է Սպերացիք<sup>3</sup>: Թովմա Արծրունու «Պատմութիւն»-ը Սպերում հիշատակում է Արամանեակ բերդը, որին տիրում էր Իշխանիկ Բագրատունին<sup>4</sup>: «Յայսմաւորք»-ում (մարտի 30) հիշատակվում են Սպեր գավառը և Սպերի լեռները<sup>5</sup>: Արիստակես Լաստիվերտցին հիշատակում է Սպերը սելջուկ-թուրքերի արշավանքների անչլությամբ և նրա տեղեկությունից կարելի է եզրակացնել վերջինիս և Տայքի հարևանությունը<sup>6</sup>: Շատ ավելի հստակ է Վարդան վարդապետի տեղեկությունը, ըստ որի Իսպիր գավառը սահմանակից է Տայ-

քին<sup>1</sup>: Սպերի մասին տեղեկություններ է պահպանել «Քարթլիս ցխովրեբան»: Ջուանշերի պատմության մեջ ասվում է. «Յայնմ ժամանակի մեռաւ կայսրն Յունաց, և թագաւորեաց Ջենոն որդի նորա և եկն աւգնել Վայթանգայ, և հասեալ ի Սպեր՝ լուաւ զբաւթն վիրաւորելոյն ի մահ զՎայթանգայ, և դարձաւ ի Կարնոյ քաղաք»<sup>2</sup>: Լեոնտի Մրովելուն ճորոխը հայտնի է նաև Սպերի գետ անունով. «զԹուղարս ի վերայ գետոյն Սպերոյ, որ ասի ճորոխ»<sup>3</sup>, իսկ Սև ծովը կամ Եվքսիանյան Պոնտոսը՝ Սպերի ծով անվանումով. «ի Խունանայ մինչև ի ծովն Սպերոյ»<sup>4</sup>: Ուսումնասիրողների կարծիքով Սպերի մասին հիշատակություններ են պահպանել անտիկ աղբյուրները: Ղ Ինճիճյանի կարծիքով Ստրաբոնի հիշատակած Սիսպիրիտիսը Սպերն է, որը թերևս նույնական է հույն աշխարհագրագետի մեկ այլ՝ Իսպիրադիս (Ίσπιδάτις) վայրին, որտեղ գտնվում էին ոսկեհանքերը<sup>5</sup>: Վաղուց ի վեր ուսումնասիրողները Իսպիրադիսը սրբագրել են Սիսպիրիտիս, որի հետևանքով հիշյալ երկու անվանումները նույնացվել են: Մենք հակված ենք կարծելու, որ սրբագրությունը տեղին չէ, ուստի Իսպիրադիսը կարող է և նույնանում է Սպերի ոսկեհանքերի հետ, իսկ Սիսպիրիտիսը, ինչպես գտնում է Ն. Ադունցը, «ճորոխ գետի վրայի հայկական Սպերը չէ, քանի որ այն հիշատակված է Կայաքենեի և Ադիաբենեի հետ, պետք է ենթադրել, որ դա Բաթման գետի լեռնային շրջանի Շոպրիան է»<sup>6</sup>: Թովմ է, թե այս եզրակացության օգտին չի խոսում Կոստանդին Միրանաձնի տեղեկությունը Սիսպիրիտիսի մասին. «Վերին և միջերկրյա շրջանները Փոքր Հայքի սկզբնավորությունն են և դա հաստատվում է հենց (իրենց) անուններով. Կելցենե, Սիսպիրիտիս, Գոյգանոն»<sup>7</sup>: Անշուշտ, այս վկայության մեջ Սիսպիրիտիսը նույնական է հայկական Սպեր գավառին, սակայն չպետք է մոռանալ, որ Սիսպիրիտիս - Սպեր նույնացումը կարող է սույլ հեղինակի եզրակացության արդյունք լինել, ինչպես նա վարվում է Գոյ-

<sup>1</sup> «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», էջ 37:

<sup>2</sup> «Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», էջ 186: Տե՛ս նաև էջ 198. «ի Սպեր գաւառ»:

<sup>3</sup> Անդ, էջ 24:

<sup>4</sup> Անդ, էջ 11:

<sup>5</sup> Strabo, XI, 14, 9. „Μέταλλα δ'έν μεν τῆ Συσπιδάτι ἐστὶ χρυσοῦ κατὰ τὰ Κάβαλλα, ἐφ' ἃ Μένωνα ἐπεμψεν Ἀλέξανδρος μετὰ στρατιωτῶν. ἀνηχθῆ δ' ὑπὸ τῶν ἐγγωρίων καὶ ἄλλα δ' ἐστὶ μέταλλα, καὶ δὴ τῆς σάνδυκος καλουμένης. ἦν δὴ καὶ Ἀρμένιον καλοῦσι χρῶμα, ὁμοιον κάλχη“: Տե՛ս նաև XI, 14, 12. „Συσπιδάτι“

<sup>6</sup> Կիկոզյան Արտեմ, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 325:

<sup>7</sup> Կոստանդին Միրանաձնի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, «Բանակաթմերի մասին», էջ 170:

<sup>1</sup> Մերոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. թիվ 582, 1482, 1717, 1883, 3160, 3502, 4284, 5613:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 256. «... տայր նմա զդուստր ասպետին Բագրատունոյ ի Սպեր գաւառէ: Մովսես Խորենացի, էջ 162. «բայց մի ոմն տղայ, Արտաշէս անուն, զոր առեալ ստընտով նորա՝ փախեալ ի կողմանս Հերայ, ի հովոսովանս Մադիսագանի, լուր առնելով դայեկի նորա Սմբատայ, որդւոյ Բիրատայ Բագրատունւոյ, ի Սպեր գաւառի, ի շէնն Սմբատաանի: Արդ՝ իբրև լսէ Սմբատ որդի Բիրատայ զբօթն Սանատրկոյ և զգոյժ կոտորման որդւոց նորա՝ առեալ զերկուս դուստրս իւր, զՍմբատանոյշ և զՍմբատուրիի՝ նստուցանէ ի Բայբերդի, արս քաջս թողլով ի վերայ ամրոցին. և ինքն հանդերձ միով կնաւ իւրով և սակաւ արամբք գայ անցանէ ի խնդիր մանկանն Արտաշեսի», էջ 312. «Ապա յայնժամ եղև քսութիւն սոստ զմմանէ յազգականաց իւրոց (Սահակ ասպետի) ի Սպեր գաւառէ...»:

<sup>3</sup> Սեբեոս, էջ 165. «Ընդ առաջ ելին նմա (Կոստանդին կայսրին) Սպերացիքն, իշխանքն Բագրատունեաց, և Մանադայքն, և Դարանադայքն...»:

<sup>4</sup> «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ», էջ 218. «... ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ, եւ էր յայնժամ առեալ յունաց գաղաքար իշխանիկ կոչեցեալ ի տոհմէ Բագրատունի, զբերոյն Արամանեակ կոչեցեալ, եւ ընկալեալ ի նմանէ մեծաշուք պատուով»:

<sup>5</sup> Ղ Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 26. «... եկն ետաս ի Սպեր գաւառ... անդէն եկաց և դադարեաց ամս է ի խորշ մի լերինն Սպերոյ»:

<sup>6</sup> Արիստակես Լաստիվերտցի, էջ 67. «մինչև ի Սպեր և մինչև յամուրսն Տայոց...»:

զանոն անվան առնչությամբ: Վերջապես Սպերի հետ փորձ է արվում նույնացնելու Հերոդոտի հիշատակած սասպեյրներին, որոնք բնակվում էին Աթենեյան Պարսկաստանի XVIII սատրապությունում<sup>1</sup>: Անդրադառնալով այդ խնդրին, Մարքվարթը նկատել էր, որ Կիրսիլիոս Փարսալացու և Մեդիոս Լարիսացու հիշատակած Σοσπιρίτις-ը տարբեր է Σάσπειρες-ից և Ὑσπιρίτις-ից, ինչպես նաև Ἐσπερίται-ից<sup>2</sup>, որ հանդիպում է Քսենոփոնի «Անաբասիս»-ում<sup>3</sup>: Առաջինը, ըստ գերմանացի հայագետի Շուպրիան է, երկրորդը՝ Սպերը: Ըստ այդմ էլ նա Σοσπιρίτις-ը սրբագրում է Σουσπιρίτις-ի: Արդեցը, լիովին համաձայնելով նշված սրբագրմանը, համակարծիք չէ Մարքվարթին, որը Σάσπειρες-ի մեջ տեսնում է վրացական sa - նախածանցը: Ըստ նրա, «Ժրականում խոսքը մինևույն ժողովրդի մասին է, որն իր անունը սվել է երկու վայրերի՝ տարբեր ժամանակաշրջաններում: Հռոդոսի Ապոլոնիոսը իր «Argonautica» քերթվածում, 3, 385, կոչում է Σάσπειρες նույն երկիրը, ինչ որ Հերոդոտի մոտ Σάσπειρες-ն է: Դա թույլ է տալիս վերջինն ուղղել Σάσπειρες-ի, հայկական Սպերի համաձայն, ինչպես և ըստ Ստրաբոնի Ὑσπιρί-τις-ի և Քսենոփոնի Ἐσπερίται-ի»<sup>4</sup>: Մեր տեսակետը այս կնճռոտ խնդրի վերաբերյալ, ունենալով հանդերձ ընդհանրություններ և Արդեցի եզրակացությունների հետ, ունի նաև սկզբունքային տարբերություններ: Անշուշտ Ὑσπιρί-τις-ը և Ἐσπερίται-ին նույնանում են հայկական Սպերին, սակայն Σάσπειρες-ը ծագումնաբանորեն աղերս ունենալով հանդերձ Սպերին, տեղադրվում է միանգամայն այլ շրջանում: Σάσπειρες-ը պետք է տեղորոշել Կիրքի, այսինքն Արևելյան Վրաստանի-տարածքում: Ենթադրյալ եզրակացության մեզ մղում են ոչ միայն Հերոդոտի տվյալները սատրապությունների մասին, այլև Լեոնտի Մրովելու հաղորդած ավանդությունը Այսրկովկասի ժողովուրդների ծագման մասին: Հայերի և մի շարք ժողովուրդների նախահայր Թարգամոսը (Թորգոմը) իր ութ զավակների միջև է բաժանում իր տիրույթները, որոնցից Հասսին (Հայկին) բաժին է ընկնում Հայաստանը, իսկ Քարթլոսին՝ Քարթլի ծմակաշատ աշխարհը: Ավանդության հետագա շարադրանքից պարզվում է, որ բոլոր եղբայրներն էլ խոսում էին հայերեն (սոմխուրի) լեզվով, սակայն «մինչ այժմ (երուսաղեմի գրավումը Նաբուքո-

դոնոսորի կողմից) Քարթլոսյանների լեզուն հայերենն (սոմխուրի) էր, որով և խոսում էին: Իսկ երբ անհամար ժողովուրդներ ժողովեցան Քարթլիում, այն ժամանակ վրացիք թողին հայերեն (սոմխուրի) լեզուն, և այս բոլոր ժողովուրդներից գոյացավ վրացերեն (քարթուլի) լեզուն»<sup>1</sup>: Օրինաչափորեն հարց է ծագում, թե ինչու վրաց ժողովրդի պատմական հիշողությունն արձանագրում է այնպիսի մի անիմաստ իրողություն, ինչպիսին վրացիների սկզբնապես հայախոս լինելն է: Եթե այն իրողություն է, ապա պետք է ստանա իր որոշակի բացատրությունը, իսկ եթե կապված է IX-X դարերի քաղաքական կացության հետ, երբ Հայ Բագրատունիները տիրապետող դիրք ունեին Այսրկովկասում, ապա պետք է ցույց տալ նման տեսության ձևավորման քաղաքական շարժառիթները: Մեր բացատրությունը հետևյալն է: Սպերում և նրա շրջակայքում՝ այլ խոսքով, ճորոխ գետի ավազանի արևմտյան մասում հաստատված հնդեվրոպական սկյութական ցեղախմբերը, որոնք ներգրավվել էին հայագոյացման ոլորտը և հայացել էին, մի մասով դեպի հյուսիս շարժվելով, հաստատվում են Կիրքի տարածքում և, գերազանցելով ռազմական ու տնտեսական առումով տեղաբնիկ քարթական ցեղերին, իրենց գերիշխանության տակ են գցում վերջիններիս: Սկյութական ցեղերի ճորոխի ավազանում հաստատվելու մասին մենք դեռ կխոսենք, իսկ այժմ նշենք, որ այն իրողությունը, երբ քարթական ցեղերի վրա իշխանություն հաստատածների լեզուն հայերենն էր կամ հայերենի բարբառներից մեկը, հետագայում եկվորներին ուժացրած քարթական ցեղերի շրջանում պետք է այն միտքը ծներ, որ իրենք՝ վրաց ժողովուրդը մի ինչ-որ ժամանակ հայախոս է եղել: Քարթլիում հաստատված ցեղախմբերը, ամենայն հավանականությամբ, կոչվում էին Σπειρες կամ Ἀσπειρες իրենց նախնական բնակության երկրի անունով, սակայն այն վրացական միջավայրում ձեռք է բերում հավաքական ամբողջության իմաստ, որի հետևանքով՝ Σπειρες-ը կամ Ἀσπειρες-ը վեր է ածվում Σάσπειρες-ի նույն ձևով, ինչպես ասաջացել է Մապիտիաշխոն կամ Սաքարթվելո-Վրաստանը: Հետևաբար sa-ն, ինչպես ենթադրում է Յ. Մարքվարթը, վրացական նախածանց է, սակայն սասպեյրների բնակության վայրը ոչ թե Սպերն է, այլ Կիրքը: Վերջապես, եթե մեր բացատրությունը համապա-

<sup>1</sup> Herodotus, Historiarum libri IX, 1-3, Cambridge, Mass.-London, 1948-1960 (Loeb Classical Library), III, 94: Σά'ς նաև Геродот, История в девяти книгах, перевод и примечания Г.А. Стратановского, Ленинград, 1972, III, 94:

<sup>2</sup> Dr. J. Marquart, Erānsahr, էջ 159. "Es wird also an den beiden anderen Stellen COMPIRITIS für CYSPIRITIC zu schreiben sein, und man hat genau zu scheiden zwischen Ὑσπιρίτις=Σάσπειρες, Ἐσπερίται. Sper, ἰ, Σουσπιρίτις = Supria in der Nähe des Tigris":

<sup>3</sup> Քսենոփոն, Անաբասիս, էջ 191:

<sup>4</sup> Լ. Արեց, Հայաստանի պատմություն, էջ 279:

<sup>1</sup> Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. ներածություն-ծանոթագրություններով և հավելվածներով, հատոր Ա (Ե-Ժ դար), կազմեց պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-բեկ Երևան, 1934, էջ 143-149: Σά'ς նաև «Քարթլիս Ծխովրեթայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», էջ 22. «Են մինչև ցայս վայր հայերեն էր լեզուն վրաց. և ապա սկսան այլայլել յազգացն, որ բնակեցան ի մեջ նոցա. և եղև ամենեցունցն խառնակել, և յայս միացյալ՝ որ այժմ ասի վրացերեն»: Σά'ς նաև Мровели Леонти, Жизнь картлийских царей, Извлечение сведений об абхазах, народах Северного Кавказа и Дагестана, перевод с дгевнегрузинского, предисловие и комментарии Г. В. Цулая, Москва, 1979, էջ 21-29:





է որպէս վրացական նախածանց, որն օգտագործվում էր երկրանուններ կազմելու: Հետևաբար, եզրակացնում է նա, ամենայն հավանականութեամբ, տրված քաղաքական միավորման գլուխ կանգնած էին քարթական կամ քարթվելական ցեղերը<sup>1</sup>: Վերջապէս հեղինակը հավանական է համարում այն, որ «սասպելոներ» հասկացությունը ընդգրկում էր նաև ժամանակակից Արևելյան Վրաստանը<sup>2</sup>: Մենք ևս կապում ենք «սասպելոների» անվանումը «իբերների» հետ, սակայն այն տարբերությամբ, որ սասպելոները կարող էին և բնակվել են միայն Արևելյան Վրաստանի տարածքում, սակայն այդ միավորումը գլխավորել են ոչ թե քարթական, այլ հնդկարոպական ցեղերը, սակայն միավորման մեջ մտած ցեղերը եղել են հիմնականում քարթական, այլապէս Լեոնտի Մրովելու հաղորդած ավանդությունը ոչ մի կերպ չի բացատրվի և մեկնաբանվի: Հարցի քննարկումը, կարծում ենք, վկայում է Սպերի հինավուրց ժամանակներից հնդկարոպական ցեղերով բնակեցված լինելու մասին, որոնց մի հատվածը գաղթելով Արևելյան Վրաստան իր անունն է սովել իբերներին կամ վրացիներին:

«Մղոնաչափքը» պահպանել է տեղեկություն այն մասին, որ Կարինից մինչև Փոսաղուրք կամ Փոսաղուռն 100 մղոն է եղել, իսկ այնտեղից էլ դեպի Կողոնիա՝ 90<sup>3</sup>: Ս. Երեմյանը, միանգամայն իրավացիորեն, Փոսաղուռնը կամ Փոսաղուրքը համարելով լեռնանցք, տեղադրում է այն Կարինից դեպի Կողոնիա տանող ճանապարհին, Մեծ և Փոքր Հայքերի սահմանագծի վրա, Գայլ (Լյուկոս) գետի ակունքների մոտ<sup>4</sup>: Նրա կարծիքով, Փոսաղուռնը համապատասխանում է Պրոկոպիոս Կեսարացու հիշատակած Γερμαλον φασαδον ամրությանը, որը գտնվել է լեռնանցքի մերձակայքում և որ հայերը իմաստավորել են այն «Փոս-խրամատ» բառով: Հեղինակը գտնում է, որ Փոսաղուռն լեռնանցքը համապատասխանում է ներկայիս Վավուկի լեռնանցքին

<sup>1</sup> Г. А. Меликишвили, К истории древней Грузии, էջ 233:

<sup>2</sup> Անդ, էջ 233. «Вполне возможно, что понятие „сасперов“ охватывало и совр. Восточную Грузию. Может быть, свидетельство этого нужно видеть в сильном увеличении в материальной культуре Вост. Грузии этого времени «южных элементов». Ведущиеся в настоящее время археологические раскопки раннеантичного комплекса на "Ховлегора" (сел. Ховле, близ ж/д. станции Гракали) дают материал, в некоторых отношениях близко стоящий к археологическому материалу из более южных районов, например, из урартских центров Южного Закавказья»: Կարծում ենք, որ հնագիտական նյութը վկայում է մեր տեսակետի օգտին, որ հնդկարոպական ցեղերը նաև հարավից շարժվել են Վրաստան և հաստատվել այնտեղ:

<sup>3</sup> «Կանն գիտութեան մղոնաչափաց», տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու Մատենագրությունը, էջ 355. «ի Դունա ի Կարին Մ մղոն. ի Կարնա ի Փոսաղուրս ձ. անտի ի Կողոնիա Դ.»:

<sup>4</sup> Ա. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 88:

(1660)<sup>1</sup>: Մեր կարծիքով, այս տեղադրությունը հավանական է, ուստի Ն. Ադոնցի տեսակետն այն մասին, թե Գերմանոսի Ֆոսաղուռնը Կերամեոնն է կամ ժամանակակից Կրոմին, որը գյուղ է Գյումուշխանեից հյուսիս ընկած շրջանում, ընդունելի չէ:

Ստրաբոնի մեկ տեղեկության համաձայն Միհրդատ Ջ Եվպատորը Մեծ Հայքի սահմանում կառուցել է 75 ամրոց գանձերը պահելու համար. «Մրանցից ամենից ավելի արժանի են հիշատակության՝ Հյուսարան, Բասգորարիգան և Սինորիան, որ գտնվում է Մեծ Հայաստանի սահմանում. սրա համար էլ Թեոփանեսը վերակոչել է այն՝ Սյունորիա»<sup>2</sup>: Ս. Երեմյանը Սինորիան նույնացնում է Սինոռի հետ, որը որպէս բնակավայր պահպանվել է մինչև մեր օրերը Փոսաղուռն լեռնանցքի մերձակայքում:

Այժմ, երբ մեր ձեռքի տակ են գրեթե բոլոր տեղեկությունները Սպերի մասին, փորձենք որոշել վերջինիս սահմանները: Հարավային սահմանը, անտարակույս, անցել է Եփրատի և Ճորոխի ջրբաժանով, որի վրա էր Բանկապանի լեռնանցքը<sup>3</sup>: Արևմուտքում սահմանագիծն անցնում էր Ճորոխի և Գայլ (Լյուկոս) գետի ջրբաժանով ու Փոսաղուռն լեռնանցքով, դեպի արևմուտք թողնելով Սատաղ փոքր քաղաքը, իսկ արևելք՝ Սինորիան կամ Սինոռը: Հյուսիսն էլ Սատաղ փոքր քաղաքը, իսկ արևելք՝ Սինորիան կամ Սինոռը: Հյուսիս-արևելյան սահմանը հստակ բնագծեր չունի, պարզ է լոկ մի իրողություն, որ սահմանն անցնելու է գավառի անունը պահպանած Սպեր կամ Խպեր բնակավայրի արևելակողմով, իսկ հարավ-արևելքում՝ Ճորոխի ու նրա վտակ Ազորդի ջրբաժանով ու Չորմայրի լեռնագագաթով<sup>5</sup>:

Շատգոմք կամ Շաղագոմ գավառը Բարձր Հայքի հազվադեպ հիշված գավառներից է: Այն հիշատակվում է Մեսրոպ Մաշտոցի գործունեության առնչությամբ, որից կարելի է հետևնել, որ Շաղագոմք-Շատգոմքը հեռու չէր

<sup>1</sup> Անդ, էջ 88: Տե՛ս նաև Պրոկոպիոս Կեսարացի, Բյուզանդական աղբյուրներ, Ա. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 196, 342:

<sup>2</sup> Strabo, XII, 3, 28: Տե՛ս նաև Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 75: Սյունորիա նշանակում է «սահմանային երկիր» կամ պարզապես «սահման»:

<sup>3</sup> Հիշյալ ջրբաժան լեռները ԽՍՀՄ գլխավոր շտաբի 1:200000 մասշտաբի քարտեզում (K - 37-XXXV) կոչվում են Հյուսիսային (Հայկական) Տավրոսի լեռնաշղթա:

<sup>4</sup> Карта генерального штаба СССР, Масштаб 1:200000, K - 37 - XXXV: Ներկայումս լեռնաշղթան ավելի շատ հայտնի է Արևելա-Պոնտական լեռներ անունով:

<sup>5</sup> Չորմայրի լեռը Ս. Երեմյանը նույնացնում է ներկայիս Խորտիկ-դաղին (3183): Տե՛ս «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», էջ 76:

Սպերից, Դերջանից և Եկեղեացից <sup>1</sup>: Շաղագոմքը հիշատակվում է Վահան Մամիկոնյանի ապստամբության առիթով. «*Եւ երթեալ (պարսիկ զորավար Հազարավուխտը - Հ.Բ.) յՈրջաղն՝ բանակէր մօտ ի գեօղն, որոմ անուն էր միոմն Գիւղիկ և միւստմն Վարդաշէն. և բնակեալ անդ զօրն զայն լսէր ի վաղիս, թէ Մամիկոնեանն Վահան մօտ է ի նա ի Վարայրվարոյն ի Հոռոմ տան, ի գաւառին որ կոչի Շաղագոմս*» <sup>2</sup>: Վկայությունից պարզվում է, որ Շաղագոմքը գտնվում էր հռոմեների կամ բյուզանդացիների կողմում, ի տարբերություն Տայքի Ոջաղե գավառի, որ Պարսկա-Հայաստանի սահմանումն էր: Ն. Ադոնցը ցույց է տալիս, որ Ոջաղեի նշված երկու գյուղերն էլ պահպանվել են նույն Գեղիկ և Վարդիշեն անուններով <sup>3</sup>, Թորթոմ գետի վտակ Կուղանցի կամ Կուղվանցի հովտում <sup>4</sup>, որով տեղորոշվում է Ոջաղեն: Բնական է, որ, ինչպես գտնում է Ն. Ադոնցը, Ոջաղեի հարևանությամբ, սարից այն կողմ՝ Սարչամա գետի հովտում, Կարինի և Սպերի միջև պետք է գտնվեր Շաղագոմք <sup>5</sup>: Ս. Երեմյանը համարիտ է նրան և գավառը տեղադրում է Օվաճըխ (իմա՝ Օվաջըք) վիճակի տարածքում, Սարչամա գետի վերին հոսանքի շրջանում <sup>6</sup>: Տեղադրությունը մենք կհստակ ենք, սակայն տարածքային ընդգրկման հարցում ունենք այլ կարծիք: Շատգոմքը կամ Շաղագոմքը ենթադրել է տալիս Գոմքի գոյությունը, որի նկատմամբ առաջինը աշխարհագրական տեսակետից ստորին դիրք էր գրավում: Հետևաբար միակ ճշմարտամտ ենթադրությունն այն է, որ գավառն իրականում ընդգրկել է ոչ միայն Սարչամա գետի վերին հոսանքը, այլև միջին ավազանի շրջանը, որտեղ էլ, ամենայն հավանականությամբ, գտնվել է Շատգոմք կամ Շաղագոմք բնակավայրը: Սարչամա գետի ստորին հոսանքի շրջանում գտնվել է Խաղտոյառիճը, ուստի պետք է պարզել. մտել է արդյո՞ք այն Շաղագոմքի մեջ: Ն. Ադոնցը հակված է հիշյալ բնակավայրը դիտելու Կարնո մաս <sup>7</sup>: Համեմատելով Լաստիվերտցու երկու հաղորդումները. «... ածեալ մինչ յամուրն որ կոչի Խաղտոյ Առիճ ի սպառուածն Կարնոր» <sup>8</sup> և «... հասան է ի սպառուածն Բասենոյ, ի տեղուցն որ կոչի

Սալքորայ» <sup>1</sup>, կարելի է գալ Ն. Ադոնցի եզրակացությանը, որ ինչպես Սալքորան Բասենի սահմանագլխին էր, այնպես էլ Խաղտոյառիճը՝ Կարնի: Հետևաբար չի կարելի համաձայնվել Ս. Երեմյանի հետ, որը Խաղտոյառիճը դուրս է թողնում Կարնո սահմաններից <sup>2</sup>: Այսպիսով, ընդհանրացնելով վերն ասվածը, Շաղագոմքի հարավային սահմանը կարելի է հասցնել մինչև Խաղտոյառիճի <sup>3</sup> հյուսիսակողմը, այսինքն գավառն <sup>4</sup> ընդգրկել է Սարչամա գետի վերին և միջին հոսանքը, իսկ վերջինիս ստորին հոսանքի շրջանը և Խաղտոյառիճ (Գաղտառիճ) գետի ավազանը մտել են Բարձր Հայքի վերջին՝ Կարին գավառի մեջ:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում Կարին գավառանունը ոչ մի տարընթերցում չունի, որը վկայում է վերջինիս հանրաճանաչության մասին: Գր. Ղափանցյանի կարծիքով Հայասա-Ազգիի թագավոր Կարանիի անվան վերլուծությունը «...определенно говорит за корневой элемент Kar - (qar-) и суф.- anni, resp.- ani. Первый корневой элемент Kar- (с возможным значением "сила, крепость, твердость"?) можно видеть в имени Կարին Karin, даваемом древними армянами современному городу Эрзерум (греч. Феодосиополь) и его району: Karnoj dašt «поле Карина», Karnoj šamb «камышевые болота Карина» (= Karnoj tsov «Море Карина»), Karnoj Khatakh «город Карина» и пр» <sup>5</sup>. Հեղինակը գտնում է որ Karin-ը ծագել է առավել հին Karina ձևից, որը կազմված է -ina վերջածանցով, ինչպես Թալինը, Արտինը, Աղինը, Պաղինը և այլ հայկական տեղանուններ, որոնք վերջանում են -in-ով: Սակայն նա փորձում է քաղաքանվան մեջ տեսնել Kar-an հիմքը, որն ավանդված է Պլինիոս Ավագի «Բնապատմության» մեջ. «Եփրատի մասին խոսելն էլ այս-

<sup>1</sup> Անդ, էջ 35:

<sup>2</sup> Ս. Տ. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), ուսումնական քարտեզ, Գ-4: «Աշխարհացոյց»-ի երկու ձեռագրերում (Մատենադարան, թիվ 1717, 5613) հետազայում ավելացվել է «Շատգոմք որ է Բաբերթ և Շաղային ձոր» արտահայտությունը, որը չի համապատասխանում Շատգոմքի իրական տեղադրությանը:

<sup>3</sup> Հ. Հյուբշմանը իրավացիորեն Խաղտոյառիճը նույնացնում է Լինչի քարտեզում հանդիպող Kagdarich-ին, Շորեկերի քարտեզի Kjadaritsch-ին, Կինեի՝ Kiaghid-Aridj-ին և Ղ Խն-Քagdarich-ին, Շորեկերի քարտեզի Kjadaritsch-ին, Կինեի՝ Kiaghid-Aridj-ին և Ղ Խն-Քagdarich-ին (Սոր Հայաստան, էջ 49) Գաղտառիճին: Գերմանացի հայագետի կարծիքով այս անվանումը հին Խայտոյառիճի թուրքական արտասանությունն է (Հին Հայոց տեղոյ անունները, էջ 135-136):

<sup>4</sup> Հ. Հյուբշմանը, անդրադառնալով Շաղագոմքի ծագման քննարկությանը, գրում է. «շաղ? + գոմք «ախոռոջ»: Ոչ հայկական» (Հին Հայոց տեղոյ անունները, էջ 389): Մենք արդեն տեսանք, որ Շաղագոմք նշանակում է «Ստորին Գոմք», սակայն Գոմքը, ըստ երևույթին, ոչ թե այնու էր նշանակում այլ բնակավայր, աղերս բերելով հունարեն *kómē* բառին (= գյուղ):

<sup>5</sup> Գր. Капанцян, хайаса - колыбель армян, էջ 67:

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 339. «Մեսրոպայ կացեալ յանապատ և ի հովանաւոր տեղիսն, որ Շաղագոմքն անուանին՝ բովանդակեալ զվարդապետութիւնս առաջին անելոց յմթիցն: ... Յետ որոյ թողեալ վերակացուս յիւրոց աշակերտացն ի նմին տեղուց, զՂևոնդ և զԵնուվք ի Սպեր, իսկ ի Դերջան, զնոցին եպիսկոպոսն զԳիւղ և յեկեղեաց զԴանան...»:

<sup>2</sup> Դազար Փարպեցի, էջ 145:

<sup>3</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 24:

<sup>4</sup> Копия Турецкой карты Анатолии, Масштаб 1:210000, II - 14 Испир. Карта Генштаба СССР, Масштаб 1:200000, К - 37 - XXXVI:

<sup>5</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 24:

<sup>6</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 73:

<sup>7</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 52:

<sup>8</sup> Արխատակես Լաստիվերտցի, էջ 35:

տեղ շատ նպատակահարմար կլիներ: Այն սկիզբ է առնում Մեծ Հայքի Կարանիտիս նահանգում (պրեֆեկտուրայում)»<sup>1</sup>: Մեզ համար դժվար է պարզել Կարինի կապը Կարանիի հետ, որը չի բացառվում, սակայն պարզ է մի բան, որ աղբյուրներում որպես կանոն հանդիպում է Կարինը իր զանազան արտա-  
որ հայտություններով: Կարնո ամենահին հիշատակությունը, որչափ մեզ հայտնի է, հանդիպում է Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ. «Χαλδῶν δὲ καὶ

Μοσυνοίκων Καρηνιτικῶν καὶ Ξερξιδῶν (Δερξιδῶν), ἃ τῆ μικρᾶ Ἀρμενιά ἐστὶν ὄμορα ἢ καὶ μῆρη αὐτῆς ἐστὶ»

(Իսախրներից և Մոսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որը Փոքր Հայքին սահմանակից է, կամ էլ նրա մասն է կազմում)<sup>2</sup>: Այսպիսով, եթե հույն աշխարհագրագետը կասկածներ ունի Դերքսենեի (Քսերքսենեի) Փոքր Հայքին պատկանելու խնդրում, պապ Կարենիտիսը միանշանակ դիտում է Փոքր Հայքից դուրս երկիր, որը հայերը ետ էին վերադարձրել խալուկներից և մոսինոյկներից: Այսինքն այն մտել է Մեծ Հայքի մեջ: Կարինը հիշատակված է Փավստոսի երկրորդ Խաղ տպիսկոպոսի ծննդավայր Մարագ գյուղի առնչությամբ և Կարնո դաշտի կապակցությամբ<sup>3</sup>: Մովսես Խորենացին նույնպես հիշում է Խաղի հայրենիքը Մարագ անունով<sup>4</sup>, իսկ Լաստիվերտցին գիտի Կարնո դաշտը<sup>5</sup>: Ղազար Փարպեցին գիտի Կարնո ծովը<sup>6</sup>, որի մասին Մովսես Խորենացին գրել է. «Եւ գեգերբ մօրին շամբք և բազմութիւն եղեգանց»<sup>7</sup>: Հովհաննես Դրասխանակերտցին, «Աշխարհացոյց»-ի ազդեցությամբ, թե զարգացած միջնադարում Կարնո քաղաքի դերով պայմանավորված, ամբողջ երկրամասը կոչել է «Կարնոյ աշխարհ»<sup>8</sup>: Սերբետսը Կարին գավառի բնակիչներին կոչում է «Կարնացիք»<sup>9</sup>:

<sup>1</sup> Pl., NH, V, 20-83 (թարգմանությունը Գ. Մուրադյանի): Գր. Ղափանցյանը հակված է Կարանիտիս տեսնելու նաև Ագաթանգեղոսի արարական խմբագրության մեջ, սակայն Ն. Արնոնցը այն համարում է Καρηνιτικ-ի աղավաղումը (Гр. Капанцян, Хаїаса-колыбель армян, էջ 68: Н. Адоиц, Армения в эпоху Юстиниана, էջ 328):

<sup>2</sup> Strabo, XI, 14, 5: Հրաչյա Աճառյանն այս հատվածը թարգմանել է լրիվ այլ իմաստով. «Կարենիտիս և Դերքանը, որոնք Փոքր Հայքի սահմանակից, թեև նրա մասերը չեն»: Տե՛ս Աստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, էջ 57:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդ, էջ 105. «Այս այս Խաղ բուն էր սա ի Կարին գառառ, ի գեղե՛ք Մարագաք»: էջ 241. «ի դաշտին Կարնոյ»: էջ 256. «ի գառան Կարնոյ»:

<sup>4</sup> Մովսես Խորենացի, էջ 279:

<sup>5</sup> Արիստակես Լաստիվերտցի, էջ 28. «(Բարսեղ Բ կայսրը - Հ.Բ.)... եկեալ իջևանս ասեկ յնդարձակ դաշտն Կարնոյ»: էջ 67. «յընդարձակ դաշտն Բասենոյ և Կարնոյ»:

<sup>6</sup> Ղազար Փարպեցի, էջ 148. «ծովուն Կարնոյ»:

<sup>7</sup> Մովսես Խորենացի, էջ 338:

<sup>8</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68:

<sup>9</sup> Սերբետս, էջ 165. «և Կարնացիք, և Տաթցիք, և Բասենացիք»:

Պատելով Հայկական լեռնաշխարհի և ոչ միայն Հայկական լեռնաշխարհի տեղանունների ձևավորման օրինաչափություններից, պետք է ենթադրել, որ գավառն<sup>1</sup> իր անունը ստացել է Կարին բնակավայրից, սակայն ավելի ուշ այն փոխանցել է բյուզանդացիների կողմից կառուցված Թեոդոսուպոլիսին: Հնարավոր է, որ հենց Կարին քաղաքի տեղում էլ գտնվել է հիշյալ բնակավայրը, սակայն չի բացառվում, որ այն, առավել մեծ հավանականությամբ, գտնվել է մեկ այլ վայրում, որովհետև Թեոդոսուպոլիսը սկզբնապես հայերի կողմից կոչվում էր ոչ թե պարզապես Կարին, այլ Կարնո քաղաք, այսինքն գավառի անունով: Թեոդոսուպոլիսի հիմնադրման մասին Մովսես Խորենացին գրել է. «Եւ առ ստորոտով մի գեղեցկանիստ լերինն գտեալ բազում աղբիւրս ականակիտս և մանուս բոխեալ՝ անդ տեղագրեաց (Անատոլ գորավարը - Հ.Բ.) զքաղաքն. զորով շրջափակեալ խոր փոսիւ՝ անդնդալիր հաստատեալ զհիմունս պատուարին. և ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց, յորոց զառաջինն Թեոդոս անուանեաց ի պատիւ Թեոդոսի: Եւ ի նմանէ և անդր շինեաց աշտարակս ժայռատրս իբրև զնաւացռուկս, և առանցս զոգաւոր խորշիւք, որ ընդդէմ հային լերինն: Սապէս և ընդդէմ դաշտին հիւսիսոյ. իսկ ընդդէմ արևելից և արևմտից կանգնեաց աշտարակս բոլորաձևս: Եւ ի մէջ քաղաքին ի բարձրաւանդակ վայրի մթերանոցս բազմապատիկս շինեաց, և Ագոստինոն անուանեաց ի պատիւ Ագոստոսի: Եւ այլ ջուրս ընդ յովով տեղիս ածեալ մտոյց անյայտ գնայիւք: Եւ ելից զինու և պահապան գնդիւք զքաղաքըն, և անուանեաց Թեոդոսուպոլիս, զի յիշատակաւ քաղաքին անմահ լիցի անունն: Ի վերայ ջերմն բոխեալ աղբերացն՝ յարկս ի վիմատաշ քարանց շինեաց»<sup>2</sup>: Կարնո քաղաքը կամ Կարինը պատմության մեջ հիշատակվում է այնպիսի հաճախականությամբ, որ իմաստ չունի անդրադառնալ բոլոր աղբյուրներին<sup>3</sup>: Նշենք միայն, որ այն հայտնի է «քաղաքն Կարնոյ»<sup>4</sup>, «Կարնային քաղաք»<sup>5</sup>, «Կարնոյ քաղաք»<sup>6</sup>, Թեոդուպոլիս<sup>7</sup>, Թեոդոսուպոլիս<sup>8</sup>,

<sup>1</sup> Գավառի մասին մանրամասն տե՛ս Հ. Յակոբ թ.վ. Զուեան, Բարձր Հայք, հատ.Բ., Կարնոյ գիւղերը, տեղագրութիւն, պատմութիւն եւ սովորութիւններ, Վիեննա, 1926:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, էջ 339:

<sup>3</sup> Կարին քաղաքի մասին մանրամասն տե՛ս Հ. Յակոբ թ.վ. Զուեան, Բարձր Հայք, հատ. Ա, Կարին քաղաքը. Վիեննա, 1925:

<sup>4</sup> Սերբետս, էջ 89: Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 124:

<sup>5</sup> Թովմա Արծրունի, էջ 260:

<sup>6</sup> «Կարնոյ քաղաք» գրութայմբ հանդիպում է սկզբնաղբյուրների մեծ մասում:

<sup>7</sup> Մովսես Խորենացի, էջ 339:

<sup>8</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68:

Θεοδοσιόπολις<sup>1</sup>. Qalinqala<sup>2</sup>, Qālīqala<sup>3</sup>. իսկ ավելի ուշ Արզան-ար-Ռում, Արզում, Էրզում անուններով<sup>4</sup>: Ուշ շրջանի անվանումները կապված են Արծն քաղաքի ավերման, նրա բնակիչների Կարին տեղափոխվելու հետ, որի հետևանքով այն ստացավ Արծն (Արզան) -ար-Ռում անունը, այսինքն «Հոռոմոց Արծն»:

Կարին գավառի Արծն քաղաքը ուսումնասիրողները իրավացիորեն նույնացնում են ներկայիս Կարաարս կամ Խարարզ բնակավայրին<sup>5</sup>: Այն Միջայել Աստալիատի, Հովհաննես Սկիլիցեսի, Կեդրենոսի երկերում հայտնի է «Αρζή. Ἀρτζή. Ἀρτζε գրությամբ<sup>6</sup>: Գավառում հիշատակվում են մի շարք բնակավայրեր ու եկեղեցիներ. Արծաթի և Բլուրք կամ Բլուրս գյուղերը, Հնձուց վանք մենաստանը, որոնցից առաջինը ուշ շրջանում կոչվում էր Արծթի ու գտնվում էր Կարնից հյուսիս, Բլուրը՝ քաղաքի արևմտակողմում էր, իսկ Հինձքը Կարմիր վանքով՝ հյուսիս-արևելքում<sup>7</sup>: Ինչպես վերը պարզեցինք, գավառում էր նաև Խաղտոյառիճը, որը Ասողկի մի վկայության համաձայն իր շրջակա տարածքով վեր էր ածվել առանձին վիճակի<sup>8</sup>, որի մեջ էր Կղեսուրը կամ լեռնանցքը: Կարնո գավառի տարածքում պահպանվել են ևս մի քանի գյուղեր, որոնք կազմված են «առիճ» (գյուղ, բնակավայր) բառով, որը հավաստում է նրանց հնությունը: Pazgaridj, որը Հ. Հյուբշմանի կարծիքով ենթադրել է տալիս հայերեն Բազկառիճը, Sungaritsch (Sungarisch), որը թերևս հին հայերենում եղել է Սնկառիճ<sup>9</sup>:

<sup>1</sup> Նշված գրությամբ հանդիպում է բյուզանդական շատ աղբյուրներում: Նշենք միայն Պրոկոպիոս Կեսարացուն (Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանություն բնագրից Հուշ Բարթիկյանի, Երեւան, 1967, էջ 24, 39, 42, 43, 80, 141, 142, 189, 193, 195, 196:

<sup>2</sup> Denys de Tell-Mahre, ed. Chabot, էջ 97 (թրգմ. էջ 82). տե՛ս Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 133: Ասորական Qalinqala ձևը Նյուդեյկեն համարում է սխալ և ոչ թե Կարին անվան արտահայտություն (Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 133-134):

<sup>3</sup> Հ. Հյուբշմանը բացատրություն չի գտել արաբական ձևի առաջացման հարցում (նշվ. աշխ., էջ 134):

<sup>4</sup> Ղ. Մսճիճյան, Նոր Հայաստան, էջ 65: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 134:

<sup>5</sup> Արիստակես Լաստիվերոսի, էջ 74, 79, 134, 63, 109: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 134:

<sup>6</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 134:

<sup>7</sup> Ղ. Մսճիճյան, Նոր Հայաստան, էջ 75: Ղազար Փարպեցի, էջ 148: Արիստակես Լաստիվերոսի, էջ 108: Ատեփանոս Տարսնեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 176, 185:

<sup>8</sup> Ասողիկ, էջ 192. «(Բարսեղ Բ կայսրը - Հ. Բ.) խոստանայ տալ նմա (Տայոց Կյուրապաղատ Դավթին - Հ. Բ.) զԽաղտոյառիճ Կղեսուրան, զՉորմայրի և զԿարին, զԲասեան և զԱնուվ բերուակ, որ է Մարդաղի, զՀարք և Ապահունիս»:

<sup>9</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 136:

Կարնո նկարագրությունը լիարժեք չի լինի, եթե չմատուցենք Պատմահոր հիշատակությունը գավառի հարստությունների և բնության մասին. «Անատոլեայ գորավարի ընկալեալ զհրամանն արքունի, և եկեալ յաշխարհս մեր և շրջեալ ընդ բազում կողմանս մեր՝ հաճի ի գաւառին Կարնոյ շինել զքաղաքն արգասանդահող, շատաջուր և բերրի. իբր միջոց վարկուցեալ զվայրսն, ոչ կարի ի բացեայ ի տեղեացն, ուր եփրատայ մասինն ինչ բոխեն աղբիւրք և հանդարտ գնացիւք յառաջացեալ ծովանան մօրաբար երևութիւք. յորում անբաւութիւնք ձկանց և զանազան հաւուց ճարակաւորաց, յորոց ի ձուոցն միայն կերակրեալ լինէին բնակիչքն: Եւ զեզերք մորին շամբք և բազմութիւն եղեգանց. և դաշտքն ունին զթանձրութիւն խոտոց և զքաջաբերութիւն սերմանաւոր պտղոց: Եւ լերինքն լի են երեովք կճղակաբաշխիւք և որոճայնովք. նա և զանասնոց պաճարս բազմացուցանեն, մեծահասակս, քաջամարմինս և յոյրս ցուցանեն, համակեալս ի գիրութիւն»<sup>1</sup>:

Արդ, որո՞նք էին գավառի սահմանները: Արևմուտքում, ինչպես արդեն ցույց տվեցինք, սահմանն անցնում էր Խաղտոյառիճի արևմտակողմով, հյուսիսում՝ Սարչամա գետի արևելյան ջրբաժանով, Ազորդ (Թորթում) և Եփրատ գետերի ջրաբաշխով մինչև Ոսկեանց լեռը, արևելքում՝ Բասեն (հնում՝ Երասխ) և Եփրատ գետերի ջրբաժանով մինչև Այծպտկունք և Կատարո լեռնազագաթները, իսկ հարավում՝ Մանանաղի (Թուզլա) ու Եփրատ գետերի ջրբաժանով: Բացառությամբ Խայտոյառիճի հատվածի, որտեղ բնական հստակ սահմաններն անցկացնելն իր մեջ կամայական տարր է պարունակում, մնացյալ մասերում սահմանագծի ճշտությունը երաշխավորված է: Նման սահմանները հաստատվում են ոչ միայն լեռնաշխարհի բնական պայմաններով, այլև պատմական տեղեկություններով, ըստ որի Խայտոյառիճը գավառի արևմտյան սահմանագլխին էր, իսկ Բասենի գավառում նրա հարևանությամբ գտնվում էր Դու գյուղը<sup>2</sup>, որը մինչև այսօր պահպանվել է<sup>3</sup>:

Վերջացնելով գավառների տեղադրությունը, անդրադառնանք ևս մի քանի կարևոր հարցերի, մասնավորապես Բարձր Հայքի քաղաքական պատմության և վարչականորեն որպես աշխարհ ձևավորվելու խնդիրներին: Ինչպես Աղին գավառի առնչությամբ նշեցինք, Ն. Աղոնցը ցույց է տվել, որ Բարձր Հայքի աշխարհագրական մի շարք անուններ ունեն -al թեքական մասնիկը. «K

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 338:  
<sup>2</sup> Ղազար Փարպեցի, էջ 146. «Եւ ինքն (պարսից զորավար Հազարավուխտը - Հ. Բ.) շուեալ յիջաղայ՝ իջաներ ի գաւառն Բասեան և բանակեր մօտ ի գեօղն որ անուանի Դու, ի դաշտին աղբերականց, զոր Արծաթաղբերս կոչեն»:  
<sup>3</sup> Ղ. Մսճիճյան, Նոր Հայաստան, էջ 90: XVIII և հետագա դարերում Բասենում հայտնի էին Մեծ և Փոքր Դու գյուղերը, որոնք հեղինակի կարծիքով համապատասխանում էին հիմնավորց Դու և Որդորու գյուղերին:

категории их относятся и Аливи *աղի-ւն* Арм. Георг. и *Analiba* или *Analibla*, как у Птолемоя; в последней части *An-alibna* нельзя не узнавать арм. *Աղիւն*, где -и является смягчением первоначального -F<sup>1</sup>: *Շարունակելով* իր միտքը, հեղինակը գրում է, որ Աղիւնը գավառ է, իսկ Անալիբնան բնակավայր Փոքր Հայքում, որը ըստ աղբյուրների գտնվել է *Զիմարայից* 15-16 մղոն հեռավորության վրա<sup>2</sup>: *Զիմարան* պահպանվել է մինչև մեր օրերը, նրա ավերակները գտնվում են համանուն գյուղի մոտ *Դոստալ* բնակավայրի մերձակայքում, ուստի Ն. Ադոնցը Աղիւնի տեղադրությունը կապում է այն տարածքի հետ, որտեղ ըստ մղոնաչափքերի կամ ուղեցույցների գտնվել է Անալիբնան<sup>3</sup>: Ըստ նրա, կառուցվածքային տեսակետից *An-alibna*-ն աղերս ունի *Դարանաղիին*, *Ալեաղիին* և նմանատիպ աշխարհագրական անուններին<sup>4</sup>: *Ալեաղի-Ակիլիսենային* կանդրադառնանք մի փոքր անց, իսկ այժմ տեսնենք թե ինչ բացատրություն է տալիս թեքական *ali* մասնիկին մեծ հայագետը: Նրա կարծիքով այն մինչհայկական ծագման է և համարժեք է գրաբարյան «-եղ»-ին ու վրացական յլაო -ին: Այսինքն. «Мард-али значит просто Мардская (область), Манали-Манская, Ак-илисена-Акийская (ср. Акё, область в Васпуракане)»<sup>5</sup>: *Զարգացնելով* իր դրույթը, նա Անալիբնան ծագումնաբանորեն կապում է *Ἀλινα* -vois ցեղի հետ, որն իր անունը տվել է *Դարանաղիի* և *Շիրակի* Անիներին ու Փայտակարանի Հանի գավառին: Հետևաբար Ատրպատականից գաղթած *այնիանների* նոր հայրենիքը եփրատի հովտում պետք է կոչվեր *Անի-ալի* Մարդաղիի նմանությամբ և դրանից էլ պետք է ծագեր *Analiba*-ն կամ *Analibna*-ն, որի մեջ -b-ն, ըստ հեղինակի ոչ այլ ինչ է, բայց եթե հոգնակիակերտ: *Analiba*-ն նշանակել է Անիացիներ, ինչպես վրացիքը առաջացել է *Վիր-ք-ից* և որտեղ «ք»-ն համարժեք է -«b»-ին<sup>6</sup>: Եկեղեցական արձանագրություններում *Դարանաղին*, *Կամախը* և *Անալիբնան*, ըստ Ն. Ադոնցի, կարծես թե հոմանիշներ են և արտահայտում են միևնույն գավառը: *Կամախը* Անիի այլ անվանումն է և նման նույնացումը հեղինակի տեսակետից միանգամայն հասկանալի է, սակայն անհասկանալի է մնում *Դարանաղիի* առնչությունը *Անալիբնային*: Հեղինակը *Դարանաղին* բաժանում է *dar-anali*-ի և դրա երկրորդ

մասում հայտնաբերում *analiba*-ի եզակի ձևը: Միաժամանակ նա փորձում է *dar*-ը, այսինքն *Դարանաղիի* առաջին հատվածը, համադրել *Դերջանի*, ըստ հեղինակի *Դեր-ձանի* կամ *der-xene*-ի *der*-ի հետ, իսկ ձանը կամ - *xene*-ն *Τζάνοι*-ի կամ *ձանիքի*-ի հետ, որի - «x»-ն, Ն. Ադոնցի կարծիքով, ծագում է -b-ից: *Դարանաղիի dar*-ը և *Դերջանի der*-ը նա կապում է ծագումնաբանորեն *Δρίλοι* ցեղին, ենթադրելով վերջիններիս անվան նախնական *dar* - ili-ը ձևը, որի հետևանքով ստացվում է, որ *Դերջանը* ոչ այլ ինչ է, բայց եթե երկու ցեղային անվանումների համադրություն, ինչպես *Պլինիոսի* հիշատակած *Armeno-chalybes*-ը<sup>1</sup>: Այս ամենը, անշուշտ, շատ հետաքրքիր է, սակայն Ն. Ադոնցն ինքն էլ խոստովանում է, որ իր բոլոր դատողությունները -ali-ի վերաբերյալ իրենց հաստատումը չեն գտնում Աղիւն տեղանվան մեջ, որովհետև վերջինիս առկայությունը ենթադրել է տալիս -ali-ի ավելի շուտ ինքնուրույն բառ լինելը, քան սովորական թեքական մասնիկ հանդիսանալը: Ուստի կարծում ենք, որ անիմաստ է հեղինակի կողմից *Աղիւն* ընթերցումը կասկածի տակ առնելը և <ան> *աղիւն* ձևի առկայության հնարավորությունն ընդունելը<sup>2</sup>: Սակայն չիրաժարվելով հանդերձ իր նախորդ քննության արդյունքներից, բայց և ստիպված լինելով ընդունել Աղիւնի իրական գոյությունը, Ն. Ադոնցը փորձել է գտնել մեկ այլ բացատրություն ևս, որ *ali(s)*-ը համադրվում է *Ἀλλυ-ς*-ին կամ *Haly-s*-ին, այսինքն Փոքր Հայքից սկիզբ առնող գետի անվանը: Ստրաբոնը անունս բխեցնում է աղահանքերից, որոնք գտնվում էին նրա հոսանքում<sup>3</sup>: Հետևաբար ըստ հեղինակի Հալիսը աղերս ունի *Ἀλί - ζωνες*-ի հետ, որը համաձայն Հոմերոսի, Հալիսի հովտում ապրող ցեղ էր և անունը տվել է գետին: Ստրաբոնը փորձում է ալիզոններին նույնացնել հին խալիբների հետ, որոնք նրա ժամանակներում խալիբայներ էին կոչվում և հավված է Հոմերոսի *Ἀλϋβη* -ն սրբագրել *Χαλϋβη*-ի<sup>4</sup>: Ն. Ադոնցը համամիտ է հեղինակին *Chalybes*-ի և *Chaldaei*-ի նույնացման խնդրում, գտնելով, որ այդ երկու բառերը համարժեք են նաև քերականական տեսակետից, քանի որ -ib-ն և di-ն ցույց են տալիս հոգնակի թիվ. վրացերեն յծ և հայերեն -տի<sup>5</sup>: *Շարունակելով* մտքերի ընթացքը, հեղինակը քիչ հավանական է գտնում *Ալյուբների* և *Խալյուբների* նույնացումը, քանի որ այլուբները արծաթ էին մշակում, իսկ խալյուբների հանքերը երկաթ էին պարունակում<sup>6</sup>:

<sup>1</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 55:

<sup>2</sup> Ըստ Պեվտինգերյան քարտեզի հեռավորությունը 15 մղոն է, իսկ ըստ Անտոնիոսի ուղեցույցի՝ 16 (Itinerarium Imp. Antonini Augusti & Tabula Peutingeriana sub Recueil des itinéraires anciens, publié par De Fortle D'urban, էջ 60, 64, 265, 266, 267):

<sup>3</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 55:

<sup>4</sup> Աղ, էջ 55:

<sup>5</sup> Աղ, էջ 56:

<sup>6</sup> Աղ, էջ 57:

<sup>1</sup> Աղ:

<sup>2</sup> Աղ, էջ 58:

<sup>3</sup> Strabo, XII, 3, 12:

<sup>4</sup> Աղ, XII, 3, 19-20:

<sup>5</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 58:

<sup>6</sup> Աղ, էջ 59:

Հարգարժան հայագետի եզրակացություններն, անշուշտ, արժանի են լուրջ ուշադրության, սակայն մի քանի խնդիրների վերաբերյալ մեր հետազոտությունները մեզ բերել են այլ եզրահանգումների: Այսպես, չնայած գիտական աշխարհը Ստրաբոնից սկսած հաված է խալդայներին նույնացնել խալուբներին և դրանց հռչակել վրացական ցեղ<sup>1</sup>, նրանք նույնանալ չեն կարող: Գ. Մելիքիշվիլին ժամանակին այն միտքն է հայտնել, որ չնայած անտիկ շրջանում լայն տարածված էր եվբսինյան Պոնտոսի շրջանում ապրող խալուբների մասին ավանդությունը, ըստ որի դրանք հայտնագործել էին երկաթը և հմուտ մետաղագործներ էին, լուրջ կասկածներ է հարուցում այդ անունը կրող ցեղի գոյությունը: Շարունակելով իր միտքը, նա գտնում է, որ «խալուբ» անվանման հետքեր հետազայում այլևս չեն նկատվում, այն դեպքում, երբ «խալդայ» և «խալդ» անվանումը նշված տարածքում երկար ժամանակ պահպանվում է: Առանց Ն. Ադոնցի անունը հիշելու, նա կրկին առաջ է քաշում «խալուբ»-ի և «խալդայ»-ի նույնության խնդիրը, գտնելով, որ «խալուբ»-ը առաջացել է «խալդ»-ից արևմտավրացական -ip (-ib) հոգնակիակերտ վերջածանցի հավելումով (hal-d-ib > halib)<sup>2</sup>:

Խալուբների բնակության շրջանը աղբյուրները հիմնականում կապում են Սև ծովի հարավային ափագծի հետ, տեղադրելով այն մոսսինոյկների արևմտակողմում և տիբարենների արևելակողմում<sup>3</sup>: Հեկատոնոս Միլետացին նրանց տեղադրում էր հայերից հյուսիս, որն, առաջին հայացքից, համընկնում է Քսենոփոնի տեղեկությանը, ըստ որի Հարպասոս գետից արևելք խալուբները եղել են հայերի հարևանները<sup>4</sup>: Սակայն Հեկատոնոսը նույնպես նկատի է ունեցել պոնտական Խալուբներին, որոնց, հների վրա հենվելով, Ստեփան Բյուզանդացին տեղադրում է Պոնտոս ծովի մոտ, Թերմոդոնտ գետի շրջանում<sup>5</sup>: Այդ է հավաստում էսքյուլեսի «Պոնտոսի»-ի ուշ սքոլիաներից մեկը,

<sup>1</sup> И. М. Дьяконов, "Эпиграфика Востока", VI, 1952, էջ 111-112: И. М. Дьяконов, История Мидии, М.-Л., 1956, էջ 351, ծանոթ. 1: И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 170-171: Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, էջ 117 և այլն: Г. А. Меликишвили, К истории древней Грузии, էջ 258 և այլն: «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. Ա, էջ 455. «Այս ցեղերի ծագումը վերջնականապես պարզված չէ, բայց ըստ երևույթին ալարոդները ուրարտացիներն էին, մարդերը իրանական ծագում ունեին, մատիները և տադիները՝ խորրիական, սասպերները կամ հեսպերիտները, փասիանները, խալդայները (խալիբները) թերևս՝ քարթվեական»:

<sup>2</sup> Г. А. Меликишвили, К истории древней Грузии, էջ 71:

<sup>3</sup> Քսենոփոն, Անաբասիս, Թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, էջ 121:

<sup>4</sup> В. В. Латышев, Известия древних писателей о Скифии и Кавказе, տե՛ս ВДИ, 1947, թիվ 1, էջ 301: Քսենոփոն, Անաբասիս, էջ 98:

<sup>5</sup> Известия древних писателей..., ВДИ, 1947, թիվ 1, էջ 301, 1948, թիվ 3, էջ 329:

թե Թեմիսկյուրեն Հայաստանում գտնվող վայրի կամ գետի անուն է<sup>1</sup>: Արդ, եթե Թեմիսկյուրեն քաղաք էր Հայաստանում, իսկ այդ կարող էր լինել մ.թ.ա. VI դարում և V դարի թերևս առաջին կեսին, երբ XIII սատրապությունը կազմող Հայաստանը դուրս էր գալիս եվբսինյան Պոնտոսի ափը, ապա բնական է, որ մոսսինոյկներից արևմուտք բնակվող խալուբները պետք է հարավից սահմանակցեին հայերին: Պոնտական խալուբների մասին տեղեկությունը պահպանել են եվրիպիդեսի «Ալկեստիս»-ի սքոլիան, Սկիլակոս Կարիանդացին, Ապոլլոնիոս Հռոդոսցին, Եվստաֆիոսը, Դիոնիսիոսը, Ապպիանոսը, Մարկոս Վալերիոս Պրոբոսի սքոլիան, Կուրտիոս Ռուփոսը, Պլինիոս Ավագը և ուրիշներ:

Հույն հեղինակները խալուբներ են հիշատակում Սկյութիայում, այսինքն մերձսևծովյան տափաստանների շրջանում: Ըստ էսքյուլեսի Կովկաս գնացողի ձախ թևի կողմում գտնվում են երկաթ մշակող խալուբները<sup>2</sup>: Հույների համար խալուբները հանդիսացել են երկաթը հայտնագործող ժողովուրդ, ուստի այդ պատիվը մեկ վերագրվում է սկյութական խալուբներին, մեկ պոնտական, չնայած հարկ է խոստովանել, որ երբեմն պոնտական խալուբները նույնպես համարվում են սկյութական ժողովուրդ<sup>3</sup>: Հույն պատմիչներից լուկ Քսենոփոնն է խալուբներին տեղադրում ձորոխից արևելք, հայերի հյուսիսային սահմանակցությամբ<sup>4</sup>:

Խալուբների վերաբերյալ տեղեկությունները պարզորոշ ցույց են տալիս, որ հունա-լատինական հեղինակներն այդ անվանումը ցեղանուն չէին դիտում, այլ զբաղմունք: Կալիմաքոսից սկսած շատ հեղինակներ ընդհանրական անեծք են հղում երկաթը հայտնագործած խալուբներին, որոնք չարի ստեղծագործությունը հանել էին գետնի տակից<sup>5</sup>: Դրանով իսկ հավաստվում է Գ. Մելիքիշվիլու ենթադրությունը «խալուբ»-ի ցեղանուն չլինելու մասին: Սակայն միաժամանակ հարց է ծագում, թե խալուբները ինչ-որ ցեղի մետաղագործներ էին, թե՛ ուրույն ցեղ, որի հիմնական զբաղմունքը մետաղագործությունն էր: Մեր կարծիքով, մոսսինոյկների ենթակայության տակ գտնվող խալուբները ուրույն ցեղ էին, որոնց անվանումը, որը պահպանվել է, դուրս է մղվել կիրառությունից զբաղմունքի կարևորության պատճառով: Ստեփան Բյուզանդացին պահպանել է Հեկատոնոս Միլետացու մի շատ կարևոր վկայու-

<sup>1</sup> Անդ , 1947, թիվ 1, էջ 307:

<sup>2</sup> Անդ , 1947, թիվ 1, էջ 303, 305:

<sup>3</sup> Անդ , 1947, թիվ 3, էջ 269, 287:

<sup>4</sup> Քսենոփոն, Անաբասիս, էջ 98, 99, 103:

<sup>5</sup> Известия древних писателей..., ВДИ, 1947, թիվ 3, էջ 263:

թյունն այն մասին, որ «**Մարերը**<sup>1</sup> մոսսինոյկներին հարևան ժողովուրդ են»<sup>2</sup>: Հերոդոտի տեղեկությունները, որոնք թերևս քաղված են Հելատուսի երկից, սակայն չի բացառվում, որ քաղված են պարսկական մի ինչ-որ աղբյուրից, համահունչ են վերն ասվածին. «**Մոսքերի, տիբարենների, մակրոնների, մոսսինոյկների և մարերի վրա սահմանվեց երեք հարյուր տաղանդ (հարկ)**՝ սա տասնիններորդ նահանգն էր»<sup>3</sup>: Կարծում ենք, որ մարերի մոսսինոյկներին հարևան լինելը և հարևանությամբ հիշատակվելը հավաստում են **մարերի և խալուբների** նույնությունը: Անշուշտ կարող է հարց ծագել, թե ինչու՞ Հելատոնու Միլետացին հիշատակում է թե մեկ և թե մյուս անվանումը: Բացատրությունը թերևս միանշանակ է: Հիշյալ ցեղը պարսիկներին հայտնի էր միայն «**մար**» անունով և պարսկական աղբյուրի միջոցով էլ անցել է հույներին<sup>4</sup>, իսկ վերջիններիս այն հայտնի էր առավելապես զբաղմունքի առումով, ուստի օգտագործվում էր ընդհանրական «**երկաթագործ**» = **խալուբ** անունով: Պատահական չէ, որ Լյուդիայի թագավոր Կրեսոսին ենթակա ժողովուրդներին թվարկելիս նա տալիս է նաև **խալուբների** անունը պափլագոնցիների հարևանությամբ, սակայն հույների մոտ այնքան այն ընդհանրական անվանում էր, որ Պատմահայրը նրանց համարում է Հալիսից արևմուտք գտնվող ժողովուրդ<sup>5</sup>: Եթե դրանք վերը հիշատակված **խալուբներն** են, ապա տեղեկությունը պարզապես ճիշտ չէ, իսկ եթե սոսկ երկաթագործ ցեղեր են, ապա անվանումը կապված է զբաղմունքի հետ: Զբաղմունքի տարածական ընդլայնումը ընդարձակել է **խալուբ** անունը կրողների տարածաշրջանը, որի վառ արտահայտությունն է Պոմպոնիոս Մելայի կողմից մեզ հասած այն տեղեկությունը, թե պափլագոնացիների ամենամերձակա **խալուբներին** են պատկանում Ամիսոս և Սինոպ քաղաքները, իսկ գետերից՝ Հալիսը և Թերմոդոնտը: Որ Մելան այդ **խալուբների** տակ փորձում է ընկալել հին աղբյուրների **խալուբներին**, երևում է այն հանգամանքից, որ նրա հաղորդմամբ **խալուբներն** ապրել են տիբարենների հարևանությամբ<sup>6</sup>:

<sup>1</sup> Խոսքը չի վերաբերում Մարաստանի մեզ - մարերին, որոնց հույն հեղինակները կոչում են ոչ թե մար, այլ մեզ կամ մար:

<sup>2</sup> Известия древних писателей..., ВДИ, 1947, №1, т. 301, 1948, №3, т. 322:

<sup>3</sup> Herodotus, III, 94: Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, III, 94: Տե՛ս նաև VII, 79. «Մարերը իրենց գլխին կրում էին տեղական հյուսկեն սաղավարտներ, կաշվե փոքր վահաններ և տեգեր: ... Մարերին և կոլխերին առաջնորդում էր Տեսասպիսի որդի Փառանդատեսը»:

<sup>4</sup> Սատրապությունների բնակչության կազմը կամ հույն-պարսկական պատերազմի մասնակից ժողովուրդներին նկարագրելիս, բնական է, որ օգտագործվել են պարսկական աղբյուրները:

<sup>5</sup> Herodotus, I, 28:

<sup>6</sup> Известия древних писателей..., ВДИ, 1949, №1, т. 273:

Այժմ տեսնենք, թե որտե՞ղ էին բնակվում հայերին սահմանակից ու հարեկան **խալուբները**, որոնց մասին հիշատակում է Քսենոփոնի «Անաբասիս»-ը: Հեղինակի վկայությամբ, հունական զորաբանակը փասիանների երկրով անցնելով հինգ կայան կամ երեսունհինգ փարասխ (շուրջ 175 կմ), մուտք է գործում տառխների երկիրը և ծանր կռիվներից հետո հասնում **խալուբների երկիրը**: «**Այստեղից նրանք խալուբների երկրի միջով գնացին յոթ կայան՝ հիսուն փարասխ**»<sup>1</sup>: Պատմիչը նշում է, որ իրենց հանդիպած ցեղերից սրանք առավել քաջ էին և ձեռնամարտի էին բռնվում: Խալուբները «**մտում էին քաղաքավայրերում և երբ հելլենները անցնում էին այդ տեղերով, նրանք հետևում էին անընդհատ կռվելով: Բնակվում էին ամրացված վայրերում, որտեղ հավաքել էին նաև իրենց մթերքները, այնպես որ հելլենները այստեղից ոչինչ չկարողացան վերցնել, այլ սնվում էին այն անասուններով, որ վերցրել էին տառխներից: Նրանց մոտից հելլենները հասան Հարպասոս գետը, որի լայնքը չորս պլեթրոն էր: Այստեղից առաջ ընթացան սկյութենների երկրի միջով չորս կայան՝ քսան փարասխ՝ հարթավայր տեղերով դեպի գյուղերը, որոնցում մնացին երեք օր և պարենավորվեցին**»:

Այստեղից նրանք անցան չորս կայան՝ քսան փարասխ, դեպի մեծ բարգավաճ և մարդաշատ մի քաղաք, որը կոչվում էր Գյոմնիաս: Այս քաղաքից երկրի իշխողը ուղեցույց ուղարկեց հելլեններին, որպեսզի սա առաջնորդի նրանց իրենց թշնամի երկրի միջով: Գալով (հելլենների մոտ), սա ասաց, որ հինգ օրվա ընթացքում կհասցնի այնպիսի մի վայր, որտեղից կտեսնեն ծովը. հակառակ դեպքում, հավաստեց նա, թող իրեն սպանեն: Նա առաջնորդեց նրանց ու, երբ մտավ թշնամու երկիրը, հրահրում էր նրանց այրել և ավերել երկիրը. այսպիսով պարզ դարձավ, որ նա այդ նպատակով է եկել և ոչ թե հելլենների նկատմամբ բարյացակամ լինելուց: Եվ հինգերորդ օրը նրանք հասան լեռը. իսկ լեռան անունն էր Թեքես: Երբ առաջապահները բարձրացան լեռը, մեծ աղմուկ առաջացավ: ... Եվ (ուղեկցողը - Հ.Բ.) ցույց տալով նրանց մի գյուղ, որտեղ կարող էին բանակել ու բացատրելով դեպի մակրոնները տանող ճանապարհը, երբ արդեն երեկոն իջավ, նա հեռացավ:

Այստեղից հելլենները մակրոնների (երկրի) միջով առաջ գնացին երեք կայան՝ տասը փարասխ: Առաջին իսկ օրը նրանք հասան գետը, որը մակրոնների երկիրը բաժանում էր սկյութենների երկրից: Նրանց աջ կողմում բարձրանում էր դժվարամատույց մի տեղանք, իսկ ձախ կողմում կար մի ուրիշ գետ, որի մեջ թափվում էր բաժանող սահմանային գետը և որը հարկավոր էր անցնել:

<sup>1</sup> Քսենոփոն, Անաբասիս, էջ 101-103:



(Մակրոնների հետ բարեկամական կապեր հաստատելով, հույները նրանց առաջնորդությամբ երեք օրո՞ւմ հասնում են Կոլխերի սահմանը:) Այստեղ մեծ լեռ կար, որի վրա շարքերով դասավորվել էին կոլխերը: ... իսկ հեյլենները (կոլխերին պարտության են մատնում - Հ.Բ.), բարձրանալով լեռը, բանակեցին բազմաթիվ գյուղերում, որտեղ մթերքի առատություն կար: ...

Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ յոթը փարսախ, և ծով հասան Տրապեզունտի մոտ, որը բազմամարդ հեյլենական քաղաք էր Եվքսինյան Պոնտոսում. այն Սինոպի գաղութն էր կոլխերի երկրում»<sup>1</sup>:

Մենք մանրամասն մեջբերեցինք Քսենոփոնի զինվորների անցած երթուղին, որը, մեր համոզմամբ, պատասխան է տալիս այն հարցին, թե արդյո՞ք խալյուբները նույնական են խալդայներին: Սկարագրության մեջ հստակ է միայն Տրապիզոնի տեղադրությունը, ուստի մենք կփորձենք երթուղին ճշտել հակառակ ուղղությամբ: Տրապիզոնից յոթ փարսախ կամ 35 կմ դեպի հարավ-արևմուտք ընկած շրջանում գտնվում է Զիգանայի լեռնանցքը, որը տեղակայված է Ծանախոձոր գետի արևելյան ջրբաժանի վրա: Լեռնանցքի հարեվանությամբ գտնվող լեռնագագաթներից մեկն էլ հենց այն լեռն է, որտեղ կոլխերը ամրացել էին:

Հույները մակրոնների երկրով անցան տասը փարսախ կամ 50 կմ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նահանջող զորամասը ստիպված էր հարմարվել Հայկական լեռնաշխարհի լեռնային տեղանքին, պետք է ենթադրել, որ մակրոնների երկիրը գտնվել է Ծանախոձորի կամ Քարշիտ գետի հովտում: Զիգանայի լեռնանցքից 50 կմ ետ գնալով մենք հայտնվում ենք ներկայիս Փիրահմեդ գյուղից արևելք ընկած շրջանում, որտեղ Ծանախոձորի ներկայումս Սիֆոն<sup>2</sup> կոչվող վտակը խառնվում է Փիրահմեդ գյուղի միջով հոսող մեկ այլ վտակի, որի անունը քարտեզը չի տալիս: Այդ դեպքում Թեքես լեռը, ամենայն հավանականությամբ, ներկայումս Խուրլար (2433) կոչվող լեռնագագաթն է, որտեղից հույները առաջին անգամ տեսան ծովը: Իհարկե, ուղեկցողը հույներին կարող էր տանել Վավուկի լեռնանցքով (1810 I-XII), որն անհամեմատ դյուրամատչելի էր, սակայն նա ավելի շատ զբաղված էր հույն դաշնակիցների օգնությամբ թշնամի սկյութենների հարվածելով, քան առավել կարճ ճանապարհը ցույց տալով: Եթե մեր եզրակացությունները ճիշտ են, ապա Ծանախոձորի վերին հոսանքի շրջանը հիշյալ ժամանակաշրջանում զբաղեցնում էին սկյութենական ցեղերը, քանի որ Թեքես լեռից իջնելիս հույն զինվորները սկզբում անցան սկյութենների երկրով և միայն գետն անցնելուց հետո մտան մակրոնների երկիրը:

Գյումնիաս քաղաքից հետո, որն ուսումնասիրողները սովորաբար տեղադրում են Բաբերդի տեղում<sup>1</sup>, հույները Թեքես լեռը հասան հինգ օրվա ընթացքում, սակայն, որքան էր այդ չվերթի երկարությունը փարսախներով, Քսենոփոնը մեզ չի հայտնում: Բաբերդից մինչև Խուրլար լեռը շուրջ 65-70 կմ է, որն անշուշտ մեծ հեռավորություն չէ հինգ օրվա համար: Սակայն հաշվի առնելով, որ հույները կռվելով և ավերելով էին անցնում արևմտյան սկյութենների երկրով, ապա այն նշանակալից մեծություն է: Գյումնիասի Բաբերդի հեռավորությունը էապես նպաստում է նաև այն իրողությունը, որ հույների երեք օրով դադար առնելու վայրի և Գյումնիասի միջև ընկած քսան փարսախ հեռավորությունը ճշտիվ համապատասխանում է Սպերից Բաբերդ ճանապարհի երկարությանը:

Սպերից ճորոխ գետի ավազանով քսան փարսախ հյուսիս ճորոխ գետի և Շավշուր վտակի ջրկիցն է: Հավանաբար այս մասում էլ հույները դուրս էին եկել ճորոխ-Հարպասոսի ափը, որի 120 մետր լայնքի և անանցելիության պատճառով էլ նրանք ստիպված էին եղել խալյուբների ճնշման ներքո թեքվել դեպի հարավ-արևմուտք, փնտրելու ծով տանող մեկ այլ ճանապարհ, քանի որ նրանց քաջ հայտնի էր, որ Հարպասոսը վաղ թե ուշ իրենց հասցնելու է ծովի ափը: Խալյուբների երկիրն, այսպիսով, տեղադրվում է Հարպասոսից արևելք և տառիներից հյուսիս ընկած շրջանում, որն անկասկած նույնանում է արևմտյան Գուգարքին կամ Կատարգա-Կղարքքին: Սակայն մեզ որչափ հայտնի է, ոչ մի անտիկ հեղինակ կամ հայ պատմիչ այդ շրջանում երևիցե խալդայներ չի հիշատակում: Ավելին, Քսենոփոնի երկը որոշակի տարբերություն է տեսնում խալյուբների և խալդայների միջև, հայտնելով, որ «կարդոխները և խալյուբները և խալդայները և մակրոնները և կոլխերը և մոսի-նոյկները և կոյտոսները և տիբարենները ինքնավար են»<sup>2</sup>: Բնավ էլ պատահական չէ, որ խալդայները հիշատակվում են խալյուբների և մակրոնների միջև, այդ պարզապես վկայություն է այն բանի, որ սկյութենական ցեղերը հավաքական առումով կոչվել են խալդայներ կամ, դատելով հայկական աղբյուրներից, խալտայներ: Ամենայն հավանականությամբ, այդ անունը հայկական ծագում ունի և կապված է «խաղտ» հասկացության հետ, որ նշանակում է «կոշտ, կոպիտ»: Դրանից են կազմված խաղտալեզու, խաղտալուր, խաղտախուղտ բառերը, որոնք բոլորն էլ նշանակում են «թանձրախոս, կոշտ ու կոպիտ բարբառով խօսող»<sup>3</sup>: Սակայն թանձրախոս կամ կոշտ ու կոպիտ բար-

<sup>1</sup> Անդ., էջ 101-107:

<sup>2</sup> Карта Генерального штаба, Масштаб 1:200000, К-37-34 (Гюмушхане).

<sup>1</sup> Միայն Հ. Մանանդյանը փորձել է Գյումնիասը տեղադրել Գյումրիի տեղում (տե՛ս Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 13-17:

<sup>2</sup> Քսենոփոն, Անաբասիս, էջ 197:

<sup>3</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատոր Բ, Երևան, 1973, էջ 323:

բառով խոսելը դեռ չի նշանակում անհասկանալի և օտար լեզու, ուստի դժվար է համաձայնվել «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» հեղինակների հետ, որոնք «խաղտալեզու» ասելով հասկանում են «Անհասկանալի լեզվով խոսող» մարդ<sup>1</sup>։ Լավագույն դեպքում այդ կարող է համարվել ուշ շրջանի ընկալում։

Ի մի բերելով վերոասացյալը, կարելի է գալ մի եզրակացության, որ խալդայների լեզուն հայերի համար թեկուզ թանձրախոս կամ կոպիտ, այնուամենայնիվ հասկանալի էր։ Եթե «կորձաք», դատելով հայերենի մի շարք բարբառներից, նշանակել է սահմանալին երկրամասի բնակիչ, ապա «խալդայ»՝ թանձրախոս և կոպտախոս մարդ։ Մ.թ.ա. VI դարում «խալդայ» հավաքական անունով հայտնի ցեղերը դեռևս հայկական ինքնագիտակցություն ձեռք չէին բերել և հայագոյացման ոլորտը չէին առնվել։ Սակայն, դատելով «Կյուրոպեդիայի» վիպախառն տվյալներից, VI դարում հայոց երվանդ թագավորի օրոք խալդայներն, աստիճանաբար, մերվում են հայերին, որին մեծապես նպաստում է փոխադարձ ամուսնությունների թուլլավությունը։ Քսենոփոնը, գալով նահանջող 10000 հույների հետ Հայաստան, այդ իրադարձություններից մեկ ու կես դար հետո, նշում է, որ Հայոց թագավորի և խալդայների միջև կնքված համաձայնությունն իր ժամանակներում էլ պահպանել է իր ուժը<sup>2</sup>։

«Անաբասիսը» պահպանել է մի շատ հետաքրքիր տեղեկություն ևս, որը չգիտես ինչո՞ւ վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից։ Ինչպես տեսանք, հույները Փասիսի երկայնությամբ ընթանալով հասան փասիանների երկիրը, իսկ այնուհետև տառխների երկրով մտան խալուբների երկիրը։ Սակայն, երբ Խեղրիսոփոսն ու Քսենոփոնը հարց տվեցին հայ գեղջավազին, թե ի՞նչ երկրում են իրենք գտնվում, վերջինս պատասխանեց, որ «երկիրը Արմենիան է, իսկ հարևան երկիրը խալուբների երկիրն է»<sup>3</sup>։ Այս վկայությունը, որի արժեքը դժվար է գերազնահատել, ցույց է տալիս, որ չնայած իրենց ցեղային որոշ առանձնահատկություններին, թե փասիանները և թե տառխները գյուղապետի համար սոսկ հայեր էին և միայն խալուբներն էին, որ համարվում էին այլազգիներ։

<sup>1</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ.Բ, Երևան, 1972, էջ 473։

<sup>2</sup> Ксенофонт, Киropedia, Издание подготовили В. Г. Борухович и Э. Д. Фролов, Москва, 1977, III, 3, 23-24։ Բյուրի նահանգին անդրադարձել է նաև Դիոդորոս Սիկիլիացին, որը խալուբների փոխարեն հիշատակում է խալդայների անունը, որոնց երկիրը հույները անցնում են յոթ օրում և մուտք գործում սկյութների երկիրը (Դիոդորոս Սիկիլիացի, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրկաշարյանի, Երևան, 1985, էջ 67)։ Կարծում ենք, որ խալուբի փոխարինումը Խալդայով հեղինակի մեկնաբանության փորձն է։ Համենայն դեպս, ճորոխից արևելք ընկած խալուբների տարածքում աղբյուրները երբեք խալդայներ չեն հիշում։

<sup>3</sup> Քսենոփոն, Անաբասիս, էջ 98։

Խալդայները, ինչպես տեսանք, հավաքական հասկացություն էր, որոնց տակ ամենից առաջ հասկացվում էին սկյութեն կոչված ցեղերը, որոնք չի բացառվում, որ իրականում սկյութական ցեղեր էին, որոնք Այսրկովկաս էին մուտք գործել կիմմերական և սկյութական ներխուժումների շրջանում։ Սակայն շատ հնարավոր է, որ սկյութեն անվանումն էլ ընդհանրական էր, ուստի հետաքրքիր կոչված ցեղը<sup>1</sup>, որը ոչ մի դեպքում չի կարող նույնանալ սասպեթների հետ, պարզապես դրանցից մեկն էր և թողել է իր հետքը Սպեր գավառանվան մեջ։

Սկյութեն-խալդայների մի հատվածը, ինչպես վերը ցույց տվեցինք, բնակվել է Ծանախոճոր գետի վերին հոսանքի շրջանում։ Կասկածից վեր է, որ ինչպես մյուս սկյութենները, այնպես էլ սրանք ներառնվեցին հայագոյացման ոլորտը և, քանի որ նրանք, հավանաբար, նույնպես զբաղվում էին մետաղագործությամբ, այսինքն խալուբներ էին, Պլինիոս Ավագը՝ նրանց տարբերելով պոնտական խալուբներից, կոչում է արմենոխալուբներ կամ հայախալուբներ. «Փառնակիայից 100 մղոն հեռավորության վրա՝ հսկայական սարով շրջափակված Տրապիզոնը, որից հետո գալիս է արմենոխալուբներ ցեղը, իսկ 30 մղոն այն կողմ Մեծ Հայքը»<sup>2</sup>։ Վերջիններիս առնչությամբ լատին հեղինակը ևս մեկ հիշատակություն ունի. «Փասիեի և Թրիարիեի տարածքները հասնում են մինչև Պարիհեդրյան լեռները, որից այն կողմ է գտնվում Կողքիսի անապատը. նրա կողքին կերավնացիների ուղղությամբ բնակվում են արմենոխալուբները և մուսքերի տարածքն է՝ մինչև Կյուրոսի վտակ Հիբերոսը. նրանցից ներքև սակասաաններն են, այնուհետև մակերոնները և Աբսարոս գետը»<sup>3</sup>։ Այս դժվարընկալելի հաղորդումը մենք հակված ենք հասկանալու հետևյալ կերպ։ Փասիեն անկասկած Տաշիս-կարն է, Թրիարիեն՝ Թոեդքը, ուստի Պարիհեդրյան լեռները ոչ այլ ինչ են, բայց եթե Թոեդքի լեռները։ Ըստ որում, Պարիհեդրյանը միայն մասամբ պետք է կապել Պարիարեսի հետ։ Արևելյան մասը Պարախաթրաս լեռներն են, որոնք ըստ Ստրաբոնի եզերում էին Հայաստանը հյուսիսից։ Մեկ այլ առնչությամբ պատմիչը դրանց մի հատվածը կոչում է Հայկական լեռներ, որոնք հասնում էին Կովկասից հարավ ձգվող՝ Վիրքը արևելքից գրկող լեռնաճյուղին<sup>4</sup>։ Մեզ համար այնքան էլ իրատակ չէ, թե ինչ է հասկանում հեղինակը Կողքիսի անապատ ասելով, որովհետև դրա տակ կարող են ընկալվել Կողքիսի անմարդաբնակ ճահճացած

<sup>1</sup> Անդ, էջ 94. «Տիրիբազոսն է, որն ունի և իր զորքը և վարձկան խալուբներ ու տառխներ»։ էջ 197. «Փասիանների և հեսպերիտների Տիրիբազոսը»։

<sup>2</sup> Plin., NH, VI, 4, 11-12։

<sup>3</sup> Անդ, VI, 11, 29։

<sup>4</sup> Strabo, XI, 2, 15։ XI, 14, 1։

<sup>7</sup> Բ. Լ. Հարությունյան

վայրերը կամ էլ անմարդաբնակ լեռնային անտառուտ շրջանները, սակայն պարզ է, որ արմենոխալուսները և մոսքերը գտնվում են նրանից հարավ: Վերջիններս բնակվել են ներկայիս Ախալցխայի շրջանում մինչև Կուրի մեջ թափվող մեզ անհայտ Հիբերոս վտակը: Վերջինս, ըստ երևույթին, պետք է աղերս ունենա «վրացի» անվանմանը, հետևաբար պետք է փնտրել մոսքերի և վրացիների սահմանակցության շրջանում և ոչ թե նույնանա Փոցխով գետին, ինչպես փորձ են անում տեղադրել Պլինիոս Ավագի ծանոթագրողները<sup>1</sup>: Մենք հակված ենք կարծելու, որ Հիբերոսը ներկայումս Բորջոմի կոչվող գետակն է, որն այդ հեռավոր ժամանակներում, հավանաբար, սահմանաբաժան գիծն էր մոսքական և քարթական ցեղերի միջև: Ինչ վերաբերում է այս արմենոխալուսներին, ապա սրանք չեն կարող նույնանալ Տրապիզոնի շրջանի արմենոխալուսներին: Եթե այս անվանումը արդյունք չէ Պլինիոսի վրա Քսենոփոնի երկի ազդեցության, ապա հիշյալ արմենոխալուսներն աշխարհագրական տեսակետից նույնանում են խալուսներին, որոնց «Անաբասիս»-ը տեղադրում է տաոխների հարևանությամբ: Թերևս, ավելի շուտ, այդ ազդեցությունը կա և Պլինիոս Ավագը, քանի որ հիշյալ ցեղը գտնվում էր Հայաստանի տարածքում, ի տարբերություն ընդհանրապես այլ խալուսների, սրանց կոչել է արմենոխալուսներ, վերստին ազդվելով Տրապիզոնի շրջակայքում գտնվող արմենոխալուսների գոյության հանգամանքից:

Պլինիոս Ավագը Արմենոխալուսներից ներքև տեղադրում է Սակասաններին, որոնցից հետո հիշատակում է մակրոններին և Աբսարոս գետը: Պլինիոսի երկի ծանոթագրողները գտնում են, որ Սակասանները համապատասխանում են Ստրաբոնի հիշատակած Սակասենե մարզի բնակիչներին<sup>2</sup>: Սակայն աշխարհագրությունից պարզապես անտեղյակ մարդը կարող է թույլ տալ այդպիսի անհարիր նույնացում, որովհետև ոչ մի կերպ հնարավոր չէ Կուրի աջափնյակում գտնվող Շակաշեն-Սակասենեն կապել Աբսարոս գետի շրջակայքի հետ: Մակրոնները, որոնց անտիկ աղբյուրները սովորաբար նույնացնում են Սան-ձաների հետ, Պոնտական լեռներից հյուսիս ապրող ցեղեր են, իսկ Աբսարոսը՝ ձորոխն է<sup>3</sup>: Հետևաբար, սակասաններին պետք է փնտրել Կղարջքից հարավ և մակրոններից արևելք շրջանում, որտեղ «Աշխարհացոյց»-ի տվյալներով գտնվել է Ասեաց փոքր կամ Արսեաց փոքր գավառը<sup>4</sup>: Մեր

կարծիքով, սակասանների անվանումը անմիջականորեն կապվում է նշված գավառանվան հետ: Sacasani-ի մեջ «sac»-ը նշանակում է սկյութ, «as»-ը տվյալ սկյութական ցեղի անունն է, «an»-ը սկյութա-իրանական լեզուներին հատուկ հոգնակիակերտ մասնիկը, որին ավելացված է լատինական «i» հոգնակիակերտը: Այլ խոսքով, Քսենոփոնի տեղեկությունն այն մասին, թե իրենք ձորոխին (Հարպասոս) հասնելուց հետո անցել են սկյութական ցեղերի (սկյութներ) տարածքով, սուրբ ճշմարտություն է: «Աս» սկյութների գոյության հանգամանքը թույլ է տալիս այլ լուսի տակ ընկալել «Սպեր» անվանումը: Ամենայն հավանականությամբ, դատելով Քսենոփոնի երկի «հեսպերիտներ» անվանումից, Սպեր գավառանունը պահածոյացրել է սկյութական մեկ այլ «Աս»-երին ցեղակից «Ասպեր»-ների կամ «Ասպեթ»-ների անունը: Թե ինչ առանձնահատկության պատճառով սրանք՝ ի տարբերություն «Աս»-երի, կոչվել են «Ասպեթներ»<sup>1</sup>, մենք չգիտենք: Համենայն դեպս, այս ցեղը կամ ցեղախումբը կազմել են այն սկյութները, որոնք բնակվել են Գյոմանիս քաղաքի տարածքում: Սկյութների անունից էլ պետք է ծագեր Սկյուդիսես լեռնաշղթայի անունը<sup>2</sup>, որ Պոնտական լեռնահամակարգի ճյուղավորումներից մեկն է:

Քննության լույսով նոր մեկնաբանություն է ստանում նաև Կատարզա-Կաղարջք երկրանունը: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ անունս ունի հնդեվրոպական ծագում, որի մեջ «Կատ»-ը նշանակում է «ներքին, ստորին»: Նշանակում է, որ Կատարզան ստորին է համարվել մի ինչ-որ «Արզ»-ի նկատմամբ: Աշխարհագրական տեղադրությունը հուշում է, որ «Արզա»-ն կամ «Արզ»-ը կարելի է նույնացնել Աջարա կամ Աճարա երկրամասի անվան հետ: Հնդեվրոպական լեզուներին հատուկ օրինաչափությամբ t>l անցման հետևանքով Կատարզան վերածվում է Կալարզի, իսկ հետագայում Կալարջ-Կաղարջի: Մեզ հայտնի չէ, թե Կատարզան և Կատարզենեն եղել են Կատարզայի համապատասխանաբար սեպագիր և հունարեն արտահայտչաձևերը, թե տեղանունն իրականում արտասանվել է Կատարզ: Սակայն այդ առանձնապես կարևոր էլ չէ, քանի որ, եթե անգամ նախնական արտասանությունը Կատարջ չի եղել, ապա, ի նկատի ունենալով հայերեն «արջ» բառի հնդեվրոպական զուգահեռները (գենդ. arsa. ou. ars, լատ. ursus, պարսկ. xirs և այլն), կարելի է ենթադրել, որ այստեղ տեղի է ունեցել «զ»-ի վերածումը «ջ»-ի: Նման մեկնաբանության դեպքում կարելի է գալ այն եզրակացության, որ ցեղի

<sup>1</sup> Известия древних писателей..., ВДИ, 1949, № 2, էջ 298:

<sup>2</sup> Անդ: Strabo, XI, 8, 4:

<sup>3</sup> Г. А. Меликишвили, К истории древней Грузии, էջ 65:

<sup>4</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 35. «Արսեաց-փոքր առ Պարխար լեռամբն, ընդ որ իջանէ Յոհ, գալով ի Սպերայ»: Համառոտ խմբագրության մի շարք ձեռագրեր ունեն «Ասեաց-փոքր» տարբերակով:

<sup>1</sup> Հունարեն πείραք կամ πείραξ, նշանակում է «սահման, կողմ, սահմանաբաժան, վերջ» («Древнереческо-русский словарь», т. II, Москва, 1958, էջ 1275: Սակայն այդ որ չափով կարող է կապվել «ասպեթ» - ների հետ, դժվար է ասել:

<sup>2</sup> Г. А. Меликишвили, К истории древней Грузии, էջ 81:

տոտեմ «արջ»-ը դարձել է տվյալ ցեղի համար էթնոնիմ, ինչպես նաև տեղանուն: Կարելի է ենթադրել նույնպես, որ վերը հիշատակված ցեղի երկու ճյուղերի առաջացման հետևանքով նրանցից մեկը, որ տեղադրությամբ ստորին դիրք էր գրավում, ստացել է «Կատարջ» անվանումը, այսինքն «Ստորին արջի» երկիր: Հասկանալի է, որ մյուսը պետք է պարզապես կոչվեր «Արջ» կամ «Արջի» երկիր, որը հետագայում աղավաղվելով վերածվել է Աջարաի: Թե արդյո՞ք այս անունը սխալ էր ընկալվել հույների կողմից կամ էլ կապված էր կատարզացիների մետաղագործ լինելու իրողության հետ, որոնք, ըստ այդմ էլ, հույներից ստացան «խալուբ» անվանումը, մենք դժվարանում ենք պատասխանել, սակայն ակնհայտ է, որ տարածական առումով դրանք նույնանում են: Հարկ է նշել, որ անկախ այն հանգամանքից, թե այդ տարածքում վրացական ցեղեր գտնվել են թե ոչ, «կատարզ-կալարջ»-ները եղել են հնդեվրոպական ցեղ, իսկ հնչյունական փոփոխությունները, որ տեղ են գտել մինչև մ.թ. II դարը և դրանից հետո, որոշակի հնդեվրոպական բնույթ ունեն:

9. Մելիքիշվիլին սկյութներին համարում է վրացական ցեղ: Նրա կարծիքով, հունական աղբյուրներում հիշատակված հեպտակոմենտները նույնանում են սկյութներին, քանի որ առաջինը ցեղի հունական անվանումն է, որը նշանակում է «յոթ գյուղերի բնակիչներ», իսկ երկրորդը ծագում է մեգրելա-ճանական «շկվիթի» (շկիթի) բառից, որը թարգմանվում է «յոթ»<sup>1</sup>: Թերևս շատ սրամիտ է այս ենթադրությունը, սակայն իրականությանը չի կարող համապատասխանել, որովհետև Ստրաբոնը հավաստում է, որ հեպտակոմենտներին, որոնք աչքի էին ընկնում իրենց առանձնահատուկ վայրենությամբ, հներն անվանել են մոսսինոյկներ նրանց փայտե «մոսսին» կոչվող աշտարակների կապակցությամբ, իսկ այլ տեղեկությունների համաձայն հեպտակոմենտների մի մասը կոչվել է «թիզերներ»<sup>2</sup>, որոնք նույնանում են Հեկատեոսի «թելիթրներին»<sup>3</sup>, որոնք պետք է փնտրել մոսսինոյկների շրջանում: Ամենայն հավանականությամբ, հեպտակոմենտները մոսսինոյկների մի մասն էին, որոնք այդպես էին կոչվել իրենց «յոթ գյուղերի», թե «յոթնահարկ փայտե աշտարակների»<sup>4</sup> համար, դժվար է հաստատապես ասել: Եթե անգամ մի պահ ընդունենք, որ վրացագետ հեղինակի տեսակետը ճիշտ է, ապա շատ տարօրինակ պետք է դիտել այն, որ յոթ գյուղերի բնակիչների անունը տարածվել է ճորոխ գետի և մասամբ Ծանախոձորի վերին հոսանքի բնակիչների վրա: Ընդհանրապես «սկյութեն» ընդհանրական անունն է տարածվել այդ

շրջանի ցեղերի վրա, որը ոչ այլ ինչ է, բայց եթե Skythan = սկյութների անվան հունականացված արտասանությունը:

Մ.թ.ա. VI դարում ճորոխ և Եփրատ գետերի ջրբաժան լեռները բաժանում էին հայերին «խալդայ»-ներից, որոնց մի մասը հաստատվում է այդ լեռների հարավահայաց լանջերին: Այդ է վկայում Խաղտոյառիճ գյուղի գոյությունը Դերջան և Կարին գավառների սահմանակցության վրա: Նման անունը կարող էր ծագել ոչ խալդայական զանգվածային բնակչության պայմաններում, երբ բռնի բերվածների կամ էլ ներթափանցածների անունով կոչվել է բնակավայրը: Խալդայ հավաքական անունով ցեղերը, որոնք, ինչպես փորձեցինք ցույց տալ, հնդեվրոպական էին, մեծ մասամբ հայացան, իսկ Կղարջի շրջանում՝ վրացացան: Դրա հետևանքով Խաղտիք կամ Խալդայների երկիր հասկացությունն աստիճանաբար տարածվեց հայերից հյուսիս-արևմուտք բնակվող մերձսևծովյան ցեղերի վրա, այսինքն Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերի տեղաբնիկների վրա, որոնք զբաղեցնում էին Տրապիզոնից մինչև ճորոխ գետն ընկած տարածքները: Երվանդունիների թագավորության սկզբնական շրջանում Հայոց թագավորության մայրաքաղաքը, ամենայն հավանականությամբ, գտնվում էր Բարձր Հայքի Անի-Կամախում, որովհետև, ինչպես ցույց է տալիս «Կյուրոպեդիան», խալդայները գտնվում էին հայոց թագավորի աթոռանիստից վտանգավոր մերձավորության վրա<sup>1</sup>: Երբ մ.թ.ա. 66 թվին ճորոխի ավազանը հայ-հռոմեական պայմանագրով միացվեց Մեծ Հայքին, անջատվելով Փոքր Հայքի տարածքից, Բագրատունիները ստացան դրա կառավարումը և այդ պատճառով էլ թերևս ստացան «Ասպետ» տիտղոսը, այսինքն «ասերի պետ կամ կառավարիչ»<sup>2</sup>, իսկ երբ Մեծ Հայքը ենթարկվեց ըստ աշխարհների վարչական բաժանման, ճորոխի ավազանը վերածվեց ինքնուրույն աշխարհի «Արսիք» / Ἀρσιῶν անունով, որին կանդրադառնալով Բարձր Հայքի ձևավորման առնչությամբ:

Պատմագիտության մեջ կարծիք է հայտնվել այն մասին, որ խալդայներն, ամենայն հավանականությամբ, նույնանում են Արծկեի (Ադիլքեվազի) սեպագիր արձանագրության մեջ<sup>3</sup>, միայն մեկ անգամ հիշատակված, «Խալիտու» երկրի բնակիչներին<sup>4</sup>: 9. Մելիքիշվիլին հակված է կարծելու, որ երկ-

<sup>1</sup> Անդ:

<sup>2</sup> Известия древних писателей..., ВДИ, 1948, թիվ 3, էջ 319: Strabo, XII, 3, 18:

<sup>3</sup> Անդ, ВДИ, 1947, թիվ 1, էջ 301:

<sup>4</sup> Դիոդորոս Սիկիլացի, էջ 69:

<sup>1</sup> Кеенофонт, Киропедия, III, 2, 1-31:

<sup>2</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 400: Հեղինակը «ասպետ» տերմինը բաժանում է «աս» և «պետ»-ի, որոնցից երկրորդը նշանակում է «պետ» կամ «գլխավոր», սակայն դժվարանում է բացատրել «աս»-ի իմաստը: Այնուհետև նա փորձում է այն կապել «սեպուտ»-ի հետ և վերագրել «ասպետ»-ին տոհմի անդամի իմաստ:

<sup>3</sup> Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, № 278:

<sup>4</sup> И. М. Дьяконов, "Эпиграфика Востока", VI, 1952, էջ 111-112: Նույնի Предыстория армянского народа, էջ 170-171:

րանունը Արարատյան թագավորները փոխ են առել հայերից: Հեղինակը «Խալխտուն» նույնացնում է ասորեստանյան արձանագրությունների «Թաբալ»-ին և տեղադրում այն հայկական շրջաններից արևմուտք<sup>1</sup>: Մենք ևս կիսում ենք Խալխտու-Խալդայ նույնացումը<sup>2</sup>, սակայն խիստ կասկածելի և թեական պետք է դիտել Խալխտուի համարժեքությունը Թաբալին: «Աշխարհացոյց»-ի համաձայն եզերացիք Պոնտոսի ծովը կոչում են Ակամսիս, իսկ խաղտերը՝ Կակամար<sup>3</sup>: Եթե, իհարկե, Կակամար անունը փոխառություն չէ, ապա այն ևս մեկ կարևոր կռվան է հոգուտ խալդայ-խաղտերի հնդեվրոպական ցեղ կամ ցեղախումբ լինելու մասին: «Քարթլիս ցխովրեբայի» կողմից Պոնտոսի ծովը Սպերի ծով անվանելը<sup>4</sup>, մեր կարծիքով, կապվում է ոչ թե Սպեր գավառի անվան, այլ ասպեցոների ցեղանվան հետ: Վերջիններս բնակվում էին վրացական ցեղերի և Ան ծովի միջև: Այս իրողությունը, որ ասպեցոները տարածված էին Եվսեիսյան Պոնտոսի կամ Ան ծովի հարևանությամբ կամ գրեթե հարևանությամբ, վրացիներին ստիպել է ծովը կոչել Սպերի:

Այս խնդրի առնչությամբ, եթե առժամանակ վերանանք Խաղտիքի ու շրջանի վերաբերյալ տեղեկություններից, մնաց ջննարկելու մի հարց ևս: Ստրաբոնը հավաստում է, որ Արտաշես Ա և Ջարեհ թագավորները խալուքներից ու մոսսինոյկներից գրավեցին Կարենիտիսը և Քսերքսենեն (իմա՝ Դերքսենե-Դերջան)<sup>5</sup>: Այս փաստը, առանց փոքրիշատե վերլուծության, տեղ է գտել պատմագիտական գրեթե բոլոր՝ այս հարցերի հետ առնչվող, ուսումնասիրություններում, սակայն պատմաբանները իրենց հարց չեն տվել, թե որքանով էր հնարավոր այդ: Մոսսինոյկները գտնվում էին Տրապիզոնից արևմուտք ընկած շրջանում, Ծանախոձորի վերին հոսանքում, ըստ Քսենոփոնի, բնակվում էին սկյութների մի մասը և մակրոնները և վերջապես մոսսինոյկներից արևմուտք տարածվում էր վերջիններին ենթակա Խալուքների երկիրը: Եթե խոսքը վերաբերում է այս մոսսինոյկներին ու խալուքներին, ապա սրանք ոչ մի կերպ չէին կարող գրավել Կարենիտիս-Կարինը և Քսերքսենե-Դերջանը: Ի վերջո, վերոհիշյալ երկու գավառների գրավումը մտածել է տալիս, որ գրավողները գտնվում էին դրանց հարևանությամբ: Այդ դեպքում թերևս խնդիրն առնչվում է ոչ թե խալուքների, այլ խալդայների

հետ, որոնց հույն աշխարհագրագետը հակված է նույնացնելու խալուքներին: Ավելին, հավանաբար այդ մոտեցմանը նպաստել են Քսենոփոնի երկու հաղորդումներն այն մասին, որ տառիսներից հյուսիս բնակվել են խալուքները և, որ երկաթագործ խալուքները ենթակա են եղել մոսսինոյկներին: Մենք չենք բացառում, որ Ստրաբոնն ինքն է խալդայների անունը փոխարինել խալուքներով, իսկ անուիետև, ելնելով այն իրողությունից, որ խալուքներից արևելք գտնվում են մոսսինոյկները, որոնց ենթակայության տակ են խալուքները, ավելացրել է մոսսինոյկների անունը: Հնարավոր է մեկ այլ բացատրություն ևս: Քսենոփոնյան խալուքների հարևանությամբ բնակվել են մոսքերը, հանգամանք, որը հույն աշխարհագրագետի մոտ կարող էր ծնել խալուք-մոսսինոյկ զուգորդությունը<sup>1</sup>: Ստրաբոնի մյուս տեղեկությունները որոշ պարզեցում են մտցնում մ.թ.ա. I և մ.թ. I դարերի սահմանագլխին առկա ցեղերի տարածման պատկերի մեջ: Հույն աշխարհագրագետը հաղորդում է, որ «Տրապիզոնից և Փառնակիայից վերև բնակվում են տիբարենները, խալդայները և սաները (իմա՝ ճաները - Հ.Բ.), որոնք նախապես մակրոն էին կոչվում և Փոքր Հայքը»<sup>2</sup>, իսկ մեկ այլ տեղեկությամբ «Փառնակիայի ու Տրապիզոնի գավառներից վերև մինչև Փոքր Հայք գտնվում են տիբարենները և Խալդայները: ... Իրենց (Փոքր Հայքին - Հ. Բ.) հնազանդ էին խալդայները և տիբարենները, այնպես որ նրանց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա»<sup>3</sup>: Վերջապես Ստրաբոնը հայտնում է, որ «Տիբարենների և խալդայների վրա մինչև Կողքիս, Փառնակիա և Տրապիզոն (այժմ) իշխում է Պյուրոդորիսը, որ իմաստուն և վարչական կարողությամբ գերազանց մի կին է»<sup>4</sup>: Առաջին վկայությունը մտածել է տալիս, որ խալդայները, որոնք հիշատակության համաձայն գտնվում էին տիբարենների և սանների միջև, նույնանում են մոսսինոյկներին և նրանց ենթակա խալուքներին: Ուստի պետք է ենթադրել, որ մետաղագործությունը լայնորեն տարածվել է մոսսինոյկների շրջանում զբաղմունքային անվանման հետ միասին և քանի որ հեղինակը խալդայը համարժեք է համարում Խալուքին, մոսսինոյկները նրա մոտ ստացել են խալդայ անունը: Համենայն դեպս, այն տարածքը, որ հայտնի է հայկական և բյուզանդական աղբյուրներից Խաղտիք-Խալդիա անունով, սույն վկայության մեջ զբաղված է սանական կամ մակ-

<sup>1</sup> Г. А. Меликишвили, К истории древней Грузии, т. 2 76-77:

<sup>2</sup> Խալխտու-Խալդայ նույնացումը խիստ հիմնավոր է, եթե, իհարկե, «տուս»-ն վերջածանց չէ: Սակայն շատ հնարավոր է, որ «Խալխտու»-ն «Խաղտոյ»-ի կամ «Խալտոյ»-ի սեպագիր գրությունն է:

<sup>3</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Կորնելոսոյ», էջ 35:

<sup>4</sup> «Քարթլիս ցխովրեբայի» կամ «Վրաց պատմության» հին հայերեն թարգմանությունը, էջ 11:

<sup>5</sup> Strabo, XI, 14, 5:

<sup>1</sup> Աման զուգորդությունը կարող է ծագել հեղինակի մոտ, սակայն Կարենիտիսի և Քսերքսենե-Դերքսենեի գրավումը խալուքների և մոսքերի կողմից բացառվում է, որովհետև Արտաշես Ա-ն Ստրաբոնի հավաստմամբ Մոսքերի երկրի տարածքը գրավել էր իբերներից:

<sup>2</sup> Strabo, XI, 3, 18:

<sup>3</sup> Անդ, XII, 3, 28:

<sup>4</sup> Անդ, XII, 3, 29:

րոնական ցեղերով: Երկրորդ հաղորդումը թերևս կրկնում է առաջինին, սակայն չի բացառվում, որ այստեղ միահյուսվել են վաղնջական ժամանակներում հայերի կողմից խալդայներին տիրելու և Ստրաբոնի ժամանակաշրջանի իրողությունները: Սակայն, այսուհանդերձ, պետք է կարծել, որ անգամ վաղ ժամանակների իրողությունները հույն աշխարհագրագետի մոտ բյուրեղացել են իր ժամանակաշրջանի քաղաքական կացության և ժողովրդագրական հենքի վրա: Երրորդ տեղեկությունը՝ արտաքննապետ նման լինելով առաջին երկուսին, խալդայ հասկացությունը տարածում է մինչև Կողքիս ընկած շրջանի վրա, հետևաբար կարող է և նույնանում է հետագայի **Խաղտիք-Խալդային**: Մենք գտնում ենք, որ Ստրաբոնի ժամանակներում **Խալդայ** հայկական անվանումը աստիճանաբար ներթափանցել էր Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերը, տարածվել հույների շրջանում, որը և պատճառ էր դարձել, որ Ստրաբոնը խալուբներին նույնացնի խալդայների հետ:

Մենք նյութի անբավարարության պատճառով ի վիճակի չենք քննության առնելու և վերլուծելու Դարանաղի, Մանանաղի, Եկեղեաց, Դերջան, Մզուր և Կարին գավառանունները, չնայած Ն. Ադոնցի բացատրությունների մի մասը մեզ շատ էլ չի համոզում: Այսուհանդերձ կամենում ենք լեզվաբան մասնագետների ուշադրությանը ներկայացնել մի հետաքրքիր օրինաչափություն: Փոքր Հայքի հինգ զորավարություններից **Օրբալիսենեն** գտնվում էր վերջինիս ծայր հյուսիսային մասում, իսկ **Օրբիսենեն**՝ ծայր հարավային հատվածում: Այդ նույն ձևով Ծոփաց թագավորությունում գտնվող **Ակիլիսենենին**, որն զբաղեցնում էր նրա հյուսիսային շրջանը, համապատասխանում է հարավում տեղադրվող **Ակիսենեն**, որն ամենայն հավանականությամբ Արկա քաղաքի շրջակա տարածքն է: Թողնելով լեզվաբաններին այս խնդրի լուծումը, մենք լուր կամենում ենք նշել, որ այդ իրողությունը կապված էր թերևս **հյուսիս-հարավ** կամ **աջ-ձախ** հակադրության հետ: Ինչ վերաբերում է **Աղին** գավառանվանը, ապա մեր ուսումնասիրությունից բխում է, որ այն, ըստ երևույթին, կապվում է աղահանքերի առկայության հետ և ծագումնաբանորեն չի աղերսվում Դարանաղի կամ Մանանաղի տեղանունների «*ali*» վերջածանցին: Գ. Զահուկյանը, հիմնվելով լեզվական որոշ օրինաչափությունների վրա, փորձել է Աղինը բխեցնել խեթական արձանագրություններում հիշատակվող **Խալիմանա քաղաքի**<sup>1</sup> անունից: Այդ կապակցությամբ նա բերում է **գոչիև-գոչումն**, **լալիև-լալումն**, **մրջիև-մրջիմն** զուգահեռները<sup>2</sup>, որոնք իրոք հավանական են դարձնում **Խալիմանա** ի նույնացումը **Աղինին**: Այնուամենայ-

նիվ, սրանց նմանությունը պատահականություն է, որովհետև Աղինը գտնվել է Դարանաղիի հարևանությամբ, իսկ Խալիմանան, անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին է նրա տեղադրությունը, այդ կողմերում գտնվել չէր կարող: Ս. Երեմյանը տարիներ առաջ այն միտքն է հայտնել, թե Տայք աշխարհի Ոջաղե գավառը համապատասխանում է ուրարտական արձանագրությունների **Kali** երկրին, որն ընդգրկում էր Ազորդ (այժմ՝ Թորթոմ) գետի վերին և միջին հոսանքի շրջանը<sup>3</sup>: Մեզ այդպես էլ չհաջողվեց հայտնաբերել ուրարտական արձանագրությունների **Kali** երկիրը, սակայն, ելնելով խեթական աղբյուրների տվյալներից, կարծում ենք, որ **Խալիմանան**, որ ամենայն հավանականությամբ Քալիմանա էր, նույնանում է Ոջաղե գավառի կենտրոնին: Խալիմանան Ազի երկրի քաղաքներից էր, որը, մեր կարծիքով, իր անվանումը պահպանել է Ազորդ գավառանվան մեջ: Վերջինս թարգմանվում է ոչ այլ կերպ, բայց եթե **Ազի ջուր** կամ **Ազի գետ**, ցույց տալով, որ վերջինս հոսել է Ազի երկրով:

**«Աշխարհացոյց»**-ի քննությունը ցույց է տալիս, որ **Աղինը** որպես գավառ ձևավորվել է Դարանաղիի տարածքից համեմատաբար ուշ շրջանում: Ըստ մեզ, գավառի ձևավորման պատճառ են դարձել աղահանքերը: Աղի արդյունահանությամբ զբաղվողների բնակավայրը, հավանաբար, կոչվել է **Աղի-աասն**, որն օրինաչափորեն վերածվելու էր **Աղեան-ի**, իսկ այնուհետև **Աղեն-ի**: Հասկանալի է, որ վերջին ձևից էլ առաջացել է **Աղին-ը**:

Մեզ մնաց քննարկելու Բարձր Հայքի որպես աշխարհի ձևավորման խնդիրը: Ստրաբոնի «Աշխարհագրություն»-ը Բարձր Հայքի տարածքում գիտի մի քանի վարչական շրջաններ. **Ակիլիսենե-Եկեղիք**, **Քսերքսենե** = **Դերքսենե-Դերջան**, **Կարենիտիս-Կարին** և **Խալիրիտիս-Սպեր**<sup>2</sup>: Հարկ է նշել, որ մեր թվարկության արշալույսին Ակիլիսենե-Եկեղիքը տարածքով շատ ավելի ընդարձակ էր, քան աշխարհացոյցյան Եկեղիքը: Հույն աշխարհագրագետի վկայությամբ **Մեծ Հայքը** Փոքր Հայքից բաժանվում էր Եփրատով, ըստ որում գետի աջ ափին գտնվում էր Փոքր Հայքը, իսկ ձախ ափին՝ Մեծ Հայքին պատկանող Ակիլիսենեն<sup>3</sup>: Հեղինակի մեկ այլ տեղեկությամբ, Ակիլիսենեն գտնվել է Անտիտավրոսի Եփրատի գետային մարզի միջև, մինչև վերջինիս շրջվելը հարավ: Անտիտավրոսի լեռները հասնում են մինչև Եփրատ, այսինքն այս հաղորդումը ևս հավաստում է Ակիլիսենեի մինչև Եփրատ տարածվելը, իսկ ինչ վերաբերում է Եփրատի գետային մարզին, ապա հեղինակը, բոլոր տվյալներից դատելով, նկատի ունի Դերջանի և Կարինի շրջանը, որոնցից առաջինում

<sup>1</sup> В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, Е., 1971, էջ 155:

<sup>2</sup> Գ. Ք. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 239:

<sup>1</sup> Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 76:

<sup>2</sup> Strabo, XI, 4, 8; 12, 3; 14, 2; 14, 5; 14, 9; 14, 12; 14, 16; XII, 3, 28:

<sup>3</sup> Անդ, XI, 12, 3; XII, 3, 28:

Եփրատը կեռման գծելով թեքվում է հարավ: Այս տվյալների վրա հենվելով, Ն. Ադոնցը իրավացիորեն ենթադրել է, որ ստրաբոնյան Ակիլիսենե-Եկեղիքը ընդգրկել է Եկեղեաց, Դարանաղի, Մանանաղի, Աղիւն և Մուզուր գավառների տարածքը<sup>1</sup>: Միակ ճշգրտումը, որ մենք կկամենայինք կատարել, այն է, որ, ամենայն հավանականությամբ, այս ցուցակից պետք է հանել Մանանաղին, որը և բնաշխարհագրական, ինչպես նաև հետագա վարչական բաժանումների տեսանկյունից կապվում էր ոչ թե Ակիլիսենեի, այլ Դերջանի հետ: Մ.թ.ա. II դարի սկզբներին, երբ հայոց թագավոր Արտաշես Ա-ն և Ծոփքի թագավոր Զարեհը միավորում էին իրենց իշխանության ներքո հայկական հողերը, Ակիլիսենեն հիշյալ սահմաններով միացվել է Ծոփքին<sup>2</sup>: Հեթանոսական Հայաստանի Անահիտ աստվածուհու մեծիանը գտնվել է Եկեղիքում և, դատելով այն իրողությունից, որ Ակիլիսենեն հայտնի էր նաև Անահիտական անունով, երկրամասը, եթե ոչ ամբողջությամբ, ապա նշանակալից մասով եղել է մեծիանի սեփականությունը: Ակիլիսենեում Անահիտի պաշտամունքի մասին հիշատակում է Ստրաբոնը<sup>3</sup>, իսկ Պլինիոս Ավագը և Դիոն Կասիոսը երկրամասը կոչում են համապատասխանաբար *Anaitica*<sup>4</sup> և *ή Ἀναίτις χώρα*<sup>5</sup>, որոնք Անահիտական-ի թարգմանությունն են: Ազաթանգեղոսը տեղեկություններ է պահպանել Անահիտի մեծիանի մասին<sup>6</sup>, սակայն՝ հավանաբար կապված քրիստոնեության հաստատման հետ, վերջինիս տիրույթներն անցնում են Եկեղեցուն, որի հետևանքով «Անահիտական երկիր» անվանումը դադարում է կիրառվելուց և ըստ այդմ էլ չի հանդիպում հայ մատենագրության մեջ:

Կարինը և Դերջանը նույնպես մ.թ.ա. II դարի սկզբներին ավելի մեծ տարածք էին ընդգրկում, քան նրանք ունեին ըստ «Աշխարհացոյց»-ի տրվյալների: Առաջինի մեջ պետք է գտնվեր Շատգոմբ-Շաղագոմբը, իսկ երկրորդի մեջ՝ Մանանաղին: Ինչ վերաբերում է Խալիթիտիսին, որը փորձել են սխալմամբ Սյուսպիրիտիս սրբազրել, համապատասխանել է ոչ միայն Սպերի, այլև Ասեաց փորի տարածքին: Պլինիոս Ավագի ժամանակներում այս կացությունը հիմնականում պահպանվում էր: Լատին հեղինակը նշում է, որ

<sup>1</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 55:

<sup>2</sup> Strabo, XI, 14, 12:

<sup>3</sup> Անդ, XI, 14, 16:

<sup>4</sup> Plin., NH, V, 24, 20, (83):

<sup>5</sup> Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասիոս, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Մ. Կրկաշարյանի, Երևան, 1976, էջ 137, 142: Անահիտական երկիրը հիշատակվում է նաև Պլուտարքոսի (Lucullus, XXIV, 2-8) երկում:

<sup>6</sup> Ազաթանգեղոս, § 48, 778, 779, 786 և այլն:

Կարանիտիսը Մեծ Հայքի պրեֆեկտուրաներից է, որտեղից սկիզբ է առնում Եփրատը: Գետը սկիզբ առնելով Ազա լեռից կամ Կապոտես (Կապույտ) լեռան լանջերից, ըստ պատմիչի հոսում էր Կապարովկիա, նրանից անջատելով Դերգենեի (Դերջան) և Անահիտկայի շրջանները<sup>1</sup>: Պլինիոսի տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ Անահիտկան կամ Անահիտականը տարածական առումով լիովին համապատասխանել է Ակիլիսենե-Եկեղիքին: Ըստ այդմ էլ կարելի է ենթադրել, որ հեղինակի հիշած 120 ստրատեգիա-գորավարություններից առնվազն 4-ը գտնվել են Բարձր Հայքի տարածքում:

Տրդատ Ա-ի Մեծ Հայքում գահակալելով հիմք է դրվում Հայոց թագավորության ըստ աշխարհների վարչական բաժանմանը, որի II դարի կետերի պատկերը պահպանել է Պտղոմեոսի երկը, որտեղ մեզ հետաքրքրող տարածաշրջանի մասին ասված է. «Εν δὲ τῷ απολαμβανόμενῳ τμήματι ὑπὸ τὸ εἰρημένον μέχρι τῆς ἀπὸ τοῦ Εὐφρατου ἑκτροπῆς ἀρκκώτεροι μὲν εἰσι χῶροι ἀρχομένοις ἀπὸ δυσμῶν ἢ τε Βασιλισήνη καὶ ἡ Βολβηνη καὶ ἡ Ἀρσησα. ὑπὸ δὲ ταυτας ἢ τε Ἀκιλισσηνη καὶ ἡ Ἀσταυνίτις καὶ ἡ πρὸς αὐτῇ τῇ ἑκτροπῇ τοῦ ποταμοῦ ἢ Σαφηνή» (Նշվածից ներքև՝ մինչև Եփրատի ճյուղը վերցրած հատվածի հյուսիսային մասերում են գտնվում, սկսած արևմուտքից Բասիլիսենեն, և Բոլբենեն, և Արսեսան, իսկ նրանցից ներքև Ակիլիսենեն և Աստունիտիսը և հենց գետի ճյուղավորման մոտ՝ Ծոփքը)<sup>2</sup>: Պտղոմեոսի այս տեղեկության մեջ սարդել է մի կոպիտ սխալ, որը շփոթ է առաջ բերել պատմագիտական ուսումնասիրություններում: Մեծ Հայքի աշխարհ-գորավարությունները հիշատակվում են ոչ թե արևմուտքից արևելք հերթականությամբ, այլ հակառակը, որի հետևանքով Բասիլիսենեն, որ սովորաբար ուսումնասիրողները կապում են Բասեսան գավառանվան հետ, նույնանում է Այրարատին: Նախապես այն եղել է ոչ թե Բասիլիսենե, այլ Բասիլիկենե<sup>3</sup> և համապատասխանել է արքունի «ոստանին», նշանակելով «արքունական» կամ «թագավորական»: Բոլբենեն, որ աշխարհագրական տեղադրության առումով համընկնում է Բոջասին կամ Բոխասին, սրբազրվում է Բոլբենեն և նույնանում Բուդխա անվանմանը<sup>4</sup>: II դ. կետերին վարչական այս շրջանը կոչվել է Բուդխա և ոչ թե Տայք, ինչպես հավաստում է «Աշխարհացոյց»-ը: Բուդխա-Տայքից արևմուտք գտնվել է Արսեսա աշխարհը, որն ինչպես վերը նշեցինք, իր անունն առել է «Աս»-երից կամ «Արս»-երից և զբաղեցրել է ձորոխ գետի մայր ճյուղի ավազանը առանց Ուղթիս վտակի ավա-

<sup>1</sup> Plin., NH, 5, 20 (83):

<sup>2</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 6: Թարգմանությունը Գ. Մուրադյանի:

<sup>3</sup> Այս հարցերին կանդիդատական Այրարատի բաժնում:

<sup>4</sup> Տե՛ս մանրամասն Տայքի քննության մեջ:



զանի: Արսեսա-Արսիքից և Բոլխենե-Բուդխայից ներքև, այսինքն հարավ ընկած շրջանում գտնվել են Ակիլիսենեն, Աստաուհիտիսը<sup>1</sup>, իսկ գետի ճյուղավորման շրջանում, այլ խոսքով Եփրատի և Արածանիի ջրկիցի կողմերում Սոֆենե-Շոփքը<sup>2</sup>: Այս տեղեկությունից հստակորեն պարզվում է, որ II դարի կեսերին Բարձր Հայքի տարածքում գոյություն է ունեցել երկու աշխարհ՝ Ակիլիսենե-Եկեղիքը և Արսեսա-Արսիքը: Ակիլիսենեն, ըստ Պտղոմեոսի, եղել է ավելի ընդարձակ և զբաղեցրել է Բարձր Հայքի գրեթե ամբողջ տարածքը, բացառությամբ Սպերի, որը Արսեսաց փոքրի հետ մեկտեղ կազմել է Արսեսա-Արսիք աշխարհը: Այլ խոսքով, պտղոմեոսյան Ակիլիսենեն զբաղեցրել է Եփրատ գետի ամբողջ վերին հոսանքի ավազանը:

Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանումը III դարի երկրորդ կեսին նշանակալից ցնցումներ ապրեց, սակայն IV դարի սկզբներին այն դեռևս հիմնականում պահպանվում էր: Այդ առնչությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ագաթանգեղոսի ներքոհիշյալ տեղեկությունը, կապված Գրիգոր Լուսավորչի քահանայապետ ձեռնադրման հետ. «Յայնժամ թագաւորն (Տրդատ Գ-ն-Ն. Բ.) վաղվաղակի փոկոթով և երկիւղիւ, և մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գոմարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղտան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բղեաշխն մեծ, երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զօրաւար Հայոց աշխարհին. ... վեշտասաներորդ՝ իշխանն Արծրունեաց»<sup>3</sup>: Ոչ մի տարակուսյալ չկա, որ Գրիգոր Լուսավորչի հետ կեսարիա մեկնած իշխանների մեծագույն մասը աշխարհների կուսակալներն են, այսինքն թագավորի պաշտոնյաները տեղերում: Հիշատակության չորրորդ իշխանը, որ կոչվում է «իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն», հանձին որի գործ ունենք Բագրատունյաց տոհմի ներկայացուցչի հետ, ոչ այլ ոք է, բայց եթե Արսիք-Արսեսայի կուսակալը: Ագաթանգեղոսի մեկ այլ հաղորդումից կարելի է հետևել, որ եթե ոչ անգամ պաշտոնապես, ապա ժողովրդի բերանում Արսիք աշխարհը պահպանել էր Խաղտիք անվանումը: Անդրադառնալով Հայաստանում քրիստոնեության հաստատմանն ու տարածմանը, հեղինակը գրում է. «Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. ի Սատաղացոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասթթաց, մինչև ի դրունս

Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. և յԱմդացոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ատրոց առ Նոր Շիրական երկրաւ, և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքը-Տան իշխանին, մինչև յԱտրպատական ձգտէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»<sup>1</sup>: Իր ողջ կարևորությամբ հանդերձ, այս հատվածը իրարամերձ թարգմանությունների հիմք է տալիս: Այսպես, առաջին ընկալումն այն է, որ «Խաղտեաց աշխարհը» գտնվել է Մեծ Հայքի թագավորության սահմաններից դուրս, քանի որ ասված է «մինչև առ աշխարհաւն Խաղտեաց»: Սակայն դրան հակասում է այն իրողությունը, որ Մեծ Հայքի մաս կազմող Կաղարջքի համար օգտագործված է «մինչև առ Կաղարջօք» արտահայտությունը: Մյուս կողմից, «մինչև առ Մծբին քաղաքաւ» արտահայտությունը կրկին մտածել է տալիս, որ Մծբինը դուրս է գտնվել Մեծ Հայքից, ինչպես և իրականում եղել է: Միանշանակ պատասխան տալ այս հարցին դժվար է: Հավանաբար, լեզվաբանները ուշադրություն կդարձնեն այս հատվածի վրա և կփորձեն նորովի մեկնաբանել «առ» նախդիրի վերոբերյալ օգտագործումը, սակայն մենք այժմ հակված ենք կարծելու, որ այս հիշատակության մեջ Խաղտիքը դիտվել է Մեծ Հայքի աշխարհ, համարժեք Պտղոմեոսի Արսեսա-Արսիքին, քանի որ Մեծ Հայքին պատկանող Մահկերտ-տան համար նույնպես օգտագործված է «մինչև առ տամբն Մահքը-Տան իշխանին» բառակապակցությունը:

Ագաթանգեղոսի երկում կա մի տեղեկություն ևս, որ կարող է Խաղտիքի տեղադրության երկակիության տեղիք տալ: Պատմիչի հաղորդման համաձայն, Գրիգոր Լուսավորիչը, կործանելով Պարանաղյաց գավառի Թորդան գյուղի Բարշամինա աստծու մեհյանը, տարածում է քրիստոնեական վարդապետությունը բնակիչների շրջանում, որի հետևանքով «կերպակերպ նմանութեամբ ղիւացն փախստական լինելով անկանէին ի կողմանս Խաղտեաց»<sup>2</sup>: Տվյալ դեպքում Խաղտիքի տակ կարող է հասկացվել և հայկական Խաղտիքը և Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերի ու ժամանակների Խաղտիք-Խալդիան: Սակայն հիմք ունենալով վերոբերյալ տեղեկությունը, ինչպես նաև հեղինակի երկի ներքին տրամաբանությունը, մենք կարծում ենք, որ երկու դեպքում էլ կիրառությունը մեկն է: Խոսքը վերաբերում է Արսիք-Խաղտիքին:

Ագաթանգեղոսի վկայությունները հստակություն են ձեռք բերում եղիշեի հաղորդումների լույսով: Խոսելով Վասակ Սյունու ծավալած գործունեության մասին Վարդան Մամիկոնյանին մեկուսացնելու ուղղությամբ, նա գրում է. «Սոյնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց.

<sup>1</sup> Տե՛ս մանրամասն Տավրոսբերանի քննության մեջ:

<sup>2</sup> Տե՛ս մանրամասն Շոփքի քննության մեջ:

<sup>3</sup> Ագաթանգեղոս, § 795:

<sup>1</sup> Անդ, § 842:

<sup>2</sup> Ագաթանգեղոս, § 784-785:

յղէր պնդէր, զի ասպնջականութեան ոք արժանի մի արասցէ»<sup>1</sup>: Դժվար չէ տեսնել, որ այս տեղեկության Խաղտիքը չի վերաբերում կայսրությանը և մաս է կազմում Հայկական մարզպանության: Պատմիչը մեկ անգամ ևս հիշում է Խաղտիքը, կապված Ավարայրի ճակատամարտից հետո ապստամբների գործողությունների հետ. «Քանզի բազումք յազգէ ի մեծ նախարարացն էին, և եղբարք և որդիք և դստերք, հանդերձ ամենայն սիրելեօք իւրեանց ի մէջ ամբական վայրացն, ոմանք յանյոյս երկիրն Խաղտեաց, և այլ բազումք ի կողմանս հարաւոյ՝ յանմատոց ամուրսն Տմորեաց, և կէսքն ի թանձրախիտ մայրիսն Արձախոյ, և այլ ոմանք անդէն ի միջոց աշխարհին բռնացան ի վերայ բազում ամրոցացն»<sup>2</sup>: Այս, մեր կարծիքով, արժեքավոր վկայության մեջ Խաղտիքը որոշակիորեն Հայկական մարզպանության երկրամաս է հյուսիսում, որին որպէս հակակշիռ հիշատակվում է հարավային Տմորիք նահանգը և կարծես թե դրանց միջև երկրի կենտրոնական մասը կամ «միջոց աշխարհին»: Սակայն այս Խաղտիքը համարժեք չէ Ագաթանգեղոսի Խաղտիքին և ներկայացնում է միայն Տայքի մաս համարվող Ասեաց կամ Արսեաց փոքր գավառի տարածքը: Խաղտիքի կայսրությանն անցած մասը եղիշեի ժամանակներում Ստորին Հայքի մեջ էր մտնում և, դատելով ժամանակի վարչական բաժանումներից, այլևս Խաղտիք չէր համարվում: Որ եղիշեի երկրամաս Խաղտիքը իրոք մարզպանության մաս է, պարզ երևում է նաև այն իրողությունից, որ Վասակ Սյունին դիմելով կայսրության գործիչներին, չի հիշատակում Խաղտիքի անունը<sup>3</sup>:

Ի տարբերություն նշված հեղինակների, Պատմահոր երկում, հավանաբար կապված իր ժամանակաշրջանի վարչական իրողությունների հետ, Խաղտիք է անվանվում ձան-մակրոնների երկիրը<sup>4</sup>: Մասնավորապես, խոսելով Վանանդի ավազակների մասին, հեղինակը նշում է, որ նրանք «Զի ոչ յերկիրն Խաղտեաց անկան, ի Յոյնս ապախնելով, և ոչ առ թագաւորն Արշակ անցին. այլ զաւազակս ոմանս, որ ի կողմանս Չորրորդ Հայոց էին, ի սահմանս Ասորոց, դիմեցին ապաստան առնել»<sup>5</sup>: Սպերն իր շրջակայքով գտնվել է Արշակ Գ-ի տիրույթներում, Արսեաց փոքր Խոսրով Վերջինի, իսկ Խաղտիքը դիտվում է որպէս հույներին պատկանող երկիր, հետևաբար Մովսէս Խորենացու Խաղտիքը աներկբայորեն Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերն են Տրապիզոնից արևելք ընկած շրջանում: Սրան լիովին համահունչ են Փավստոս

<sup>1</sup> Եղիշե, էջ 94:  
<sup>2</sup> Անդ, էջ 125:  
<sup>3</sup> Անդ, էջ 93:  
<sup>4</sup> Մովսէս Խորենացի, II, Գ, III, ԽԴ:  
<sup>5</sup> Անդ, III, ԽԴ:

Բուզանդի, «Աշխարհացոյց»-ի և Ղազար Փարպեցու տվյալները, որոնք Խաղտիքը տեղադրում են ձաների երկրում<sup>1</sup>:

Խաղտիքի տարածական ընդրկումը առավել ուշ շրջանի աղբյուրներում պայմանավորված է բյուզանդական Խաղտիք վարչական միավորի (սկզբում՝ տուրմա, իսկ այնուհետև՝ բանակաթեմ) հանդես գալով: Վերջինիս մեջ ներառնվում է նաև ձորոխի ավազանը, որի հետևանքով Սպերը և շրջակա տարածքը հիշատակվում են որպէս Խաղտեաց երկիր կամ Խալդիա<sup>2</sup>: Անվանս ձորոխի հովտում հեշտ արմատավորմանը էապես նպաստում է այն հանգամանքը, որ երկրամասը վաղնջական ժամանակներում ևս կրել է Խաղտիք անունը:

Ինչպէս տեսանք, III դարի վերջին և IV դարի սկզբին մենք գործ ունենք դեռևս գոյություն ունեցող Խաղտիք աշխարհի հետ: 387 թ. Մեծ Հայքի բաժանման հետևանքով կայսրության և Սասանյան Պարսկաստանի սահմանաբաժան գիծն անցավ Սպեր և Արսեաց փոքր գավառների սահմանակցությամբ, որի հետևանքով վերջինս վարչականորեն միացվեց Տայքին, իսկ Սպերը մաս կազմեց Արշակ Գ թագավորի տիրույթների: Կոմեսոսության ստեղծումից հետո, որը կատարվեց Արշակ Գ-ի մահից հետո, Արևմտահայկական թագավորության տարածքը ստացավ Ստորին Հայք կամ Armenia Interior անունը, որի մեջ էր նաև Սպեր գավառը: Այս իրողությունը իրավունք է տվել Ս. Երեմյանին են-

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 179. «և ինքն (Մովսէլ Մամիկոնյանը - Չ. Բ.) փախտական լինել յերկիրն Խաղտեաց»: «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացու», էջ 27. «Ի ձանիւս որ են Խաղտիք, յորում գետ Մեզաղու Պոտամիա»: Ղազար Փարպեցի, էջ 74. «առ վայր մի առ լեռամբն որ կոչի Պարխար, մերձ առ սահմանակցութիւնն Խաղտեաց, ... ի գիւղն որ անտանի Որջնիաղ, ի գաւառին Տայոց», էջ 145. «առ վայր մի յամուր տեղիս սահմանացն Խաղտեաց»: Սեբեոս, ԺԸ: Տեղեկությունն անորոշ է, չնայած, ամենայն հավանականությամբ, ունի նշված տեղադրությունը:

<sup>2</sup> Պրոկոպիոս Կեսարացի, էջ 197, 198, 201, 243: Հեղինակը դեռ Տրապիզոնից արևելք ընկած ծովափնյա անտառապատ շրջանը Սաննիկա կամ ձանիք է կոչում: Հետագա բյուզանդական հեղինակների երկերում երկրամասը հիշատակվում է Խալդիա անունով: Թովմա Արծրունի, էջ 130. «ի կողմն Դերջանոյ, և Խաղտաց ձորոյ»: Ասողիկ, էջ 144. «ի Խաղտիս ... գերեաց զբազումս ի Հայոց ... թողու ի Սպեր գաւառի»: «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 35, 481. «ի գաւառիս Խաղտեաց ի դղ (եա) կս, որ կոչի Բաբերդ»: «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, էջ 249. «Ի ձորս Խաղտեաց ի բանակետոս Լորի (1332 թ.)», էջ 346. «ի գաւառս Խախտեաց, ի յանառիկ դղեակս, որ կոչի Բաբերդ (1346 թ.)», էջ 457, 544 և 611: Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. Բ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 553. «Ի միա կողմն հիւսիսոյ է երկիրն Խախտեաց ... եւ է սա քաղցր և համեղ երկիր և Հայոց բնակարան, և ունի բերթ մի ... որ այժմ Բաբերթ ասեն քաղաքին այն: Եւ անցան է գետն ձորոխ ընդ մէջ քաղաքին»: Դավիթ Բաղիշեցի, սխալ ընկալելով Մովսէս Խորենացու մի տեղեկությունը Վաղարշակ թագավորի մասին Խաղտեաց գավառ է համարում Կեսարիան իր շրջակայքով (Անդ, էջ 308):

թաղրելու, որ «**Բարձր Հայք**» անունը գիտե միայն «**Աշխարհացոյց**»-ը, որը այսպես է անվանում 387 թվից հետո Բյուզանդիային անցած «**ներքին Հայք**» (**Armenia Interior**) կոչված տերիտորիան, որը Հուստինիանոս Ա-ի 536 թ. նովեմբրից հետո Փոքր Հայքի և Պոնտոսի առանձին մասերից կազմեց Առաջին Հայք (**Armenia Prima**) պրովինցիան»<sup>1</sup>: Արտաքննապես շատ տրամաբանական է հնչում, սակայն բացատրություն չի ստանում այն հարցը, թե ինչո՞ւ Բարձր Հայքի նկարագրության մեջ տեղ չեն գտել Ստորին Հայքի **Խորձեան** և **Պաղնատուն** գավառները, որոնք ոչ մի կերպ չէին կարող մաս կազմել սատրապական իշխանությունների, էլ չենք ասում, որ դեռ սատրապությունների չէին վերածվել Շահունյաց Ծոփքը, Բալահովիտը և Հաշտյանքը, որոնք որոշակիորեն մտնում էին Արշակ Գ-ի տիրույթների մեջ: Հասկանալի է, որ հիշյալ մեկնաբանությունը քննադատության չի դիմանում:

Բարձր Հայքը «**Աշխարհացոյց**»-ի նշած սահմաններով չէր կարող հանդես գալ նաև հետագա ժամանակներում, մասնավորապես Մավրիկիոս կայսեր վարչական վերակառուցումների շրջանում: Հովհաննես Դրասխանակերտցին, անդրադառնալով Մավրիկիոս կայսեր հիշյալ գործունեությանը, Բարձր Հայքի տարածքում հիշատակում է «*գաշխարին Կարնայ, յորում մայրաքաղաք է Թեոդոսուպոլիս*», որը կայսրը վարչական վերակառուցումների ժամանակ անվանում է «*Մեծ մասն Մեծ Հայոց*»<sup>2</sup>: Համեմատելով այս տեղեկությունը Բարձր Հայքի նկարագրության, ինչպես նաև Գևորգ Կիպրացու տվյալների հետ, գալիս ենք միակ ընդունելի եզրակացությանը, որ «*Մեծ մասն Մեծ Հայոց*»-ը չի նույնանում Բարձր Հայքին, քանի որ Մուզուր գավառը գտնվել է Չորրորդ Հայքի կամ Ծոփքի մեջ<sup>3</sup>: Վերջապես շատ տարօրինակ պետք է լիներ այն իրողությունը, որ կայսրը ստեղծելով Բարձր Հայքը, նրան տվել է ոչ թե Բարձր Հայք, այլ Մեծ մասն Մեծ Հայոց անունը: Բարձր Հայքը հիշատակվում է միայն «**Աշխարհացոյց**»-ում<sup>4</sup> և, դատելով այն հանգամանքից, որ գրեթե կիրառություն չի ստանում հայ իրականության մեջ, մտածել է տալիս, որ այն թերևս օգտագործվել է շատ կարճ ժամանակահատվածում և չի հասցրել արմատներ ձգել բնակչության աշխարհագրական ընկալման մեջ: Չի բացառվում, որ Բարձր Հայք անվանման առաջացման գործում տեղ է գտել օտար ազդեցությունը, ուստի մենք հակված ենք կարծելու, որ Բարձր Հայք

<sup>1</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 44:

<sup>2</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68:

<sup>3</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 29-30: Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 49:

<sup>4</sup> Բարձր Հայքը Բարձր Հայ գրությամբ հիշատակվում է Ստեփաննոս Օրբելյանի «Ողբ»-ում: Տե՛ս Դ. Ռեճիճյան, Ստորագրություն հին Հայաստանեայց, էջ 28. ծան. «Բագոսան և Կարս՝ Ը Բասենին. Կարին քաղաք՝ Բարձր Հային»:

աշխարհի վարչական ձևավորումը համընկնում է Մեծ Հայքում Սասանյան արքայատոհմի ներկայացուցիչների գահակալության ժամանակաշրջանի հետ: Մեզ համար շատ բան մնում է մուֆ Բարձր Հայքի ձևավորման խնդրում, սակայն դատելով մյուս աշխարհների քննությունից, խիստ տրամաբանական է մտնում այն վարկածը, որ աշխարհացոյցյան տեսքով Բարձր Հայքի ձևավորումը թերևս Որմիզդ-Արտաշիր Սասանյանի վարչական գործունեության արդյունք է: Շատ լավ գիտակցելով, որ մեր ներքոբերյալ ենթադրությունը խոցելի է բոլոր տեսանկյուններից նյութի բացակայության պատճառով, մենք հակված ենք կարծելու, որ Բարձր Հայք տեղանվան մեջ «**Բարձր**»-ը պարզապես «բարձր» չի նշանակում, այլ «արքունի երկիր» կամ թերևս «սրբազան երկիր», որը «**Աշխարհացոյց**»-ի հեղինակի կողմից պարսկերենից թարգմանվել է հայերեն և իմաստավորվել որպես «բարձր»:

Հայերի համար երկրամասը մնում էր որպես Եկեղիք, որը սակայն շուտով պետք է կորցնեի իր ամբողջականությունը ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով և պատմական իրադարձությունների մեջ հանդես գար առանձին գավառների տեսքով, որոնցից կենտրոնականը շարունակում էր պահպանել **Եկեղիք-Եկեղեցաք** անունը:

ՊԼՈՒՆ Բ  
ԾՈՓՔ

Ծոփք կամ Ծոփաց կողմն աշխարհը, որ «Աշխարհացոյց»-ում ավելի հաճախ հիշատակվում է Չորրորդ Հայք անունով՝ կապված հետագա խմբագրական փոփոխությունների հետ, անկասկած, հանդիսանում է Մեծ Հայքի թագավորության առավել նշանավոր նահանգներից մեկը: Տնտեսական զարգացման տեսակետից առաջ անցնելով Մեծ Հայքի մյուս աշխարհներից, Ծոփքը, որը հատում էին մի շարք կարևոր առևտրական ուղիներ, ապահովելով վերջինիս համար առանձնահատուկ կացություն, մ.թ.ա. III դարում անջատվեց Մեծ Հայքի թագավորությունից, վերածվելով ինքնուրույն հայկական թագավորության:

Ստեղծվեցին էլ ավելի բարենպաստ պայմաններ տնտեսության և մասնավորապես, քաղաքային կյանքի զարգացման համար: Ծոփաց թագավորության մայրաքաղաքներ Արշամաշատը և (Կ)Արկաթիոկերտը Հայաստանի առավել նշանավոր և վաճառաշահ քաղաքներից էին, որոնք էլի մի քանի դար պահպանեցին իրենց նշանակությունը Մեծ Հայքի թագավորության շրջանակներում: Ի մեծ բարեբախտություն հայագիտության «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը պահպանել է Ծոփաց աշխարհի մանրամասն և հանգամանալից նկարագրությունը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Բ. Աշխարհ Հայոց<sup>1</sup>. Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն, յերի Բարձր Հայոց, Մելիտինե<sup>2</sup> քաղաքաւ սահմանի ըստ մտից, եւ ըստ հարաւոյ՝ Միջագետովք<sup>3</sup>, եւ ըստ ելից Տարօնով: Ունի գաւառս ութ. գԽորձայն՝ յելից հիւսիսոյ, ընդ որ իջանէ Միւս Գայլ գետ առ Կողոբերդովն. գՀաշտէնս, յորմէ բոյսեն աղբիւրք Տիգրիս գետոյ. իսկ ի մտից Խորձայնոյ՝ և Պաղնատուն գաւառ, հանդէպ հոմանուն բերդով. եւ հանդէպ նորա ի հարաւ՝ Բալխտովիտ գաւառ. եւ ի մտից նոցա Ծոփք, եւ Անձիթ գաւառ՝ ի հարաւ, յորում Ծովք<sup>4</sup> եւ Հոռէ բերդ. եւ ի մտից նոցա Դեգիկ գաւառ, յորում բերդք Կռնի եւ Քրիկ եւ Սոկ, որոց հանդէպ

<sup>1</sup> «Հայոց» բառից առաջ Ա. Երեմյանը ավելացնում է «Մեծին» բառը, որը միանգամայն տրամաբանական է («Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 106):

<sup>2</sup> Սկզբնապես, անկասկած, եղել է «Մելիտինե»:

<sup>3</sup> Այս նկարագրության մեջ «Միջագետքը» արտահայտում է III դարի իրողություն, որին կանդարդառանգը քննության ընթացքում:

<sup>4</sup> «Ծովք»-ից հետո Ա. Երեմյանը ավելացնում է «լիճ» բառը, որը միանգամայն հավանական է («Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 107):

ի հարաւ և Գաւրեգ գաւառ, ընդ որս եկեալ Արածանի խառնի յեփրատ ի քաղաքն Լուսաթառիճ, եւ երթալով զմտիւք՝ ելանէ ի սահմանս Փոքր Հայոց, յելից Մելիտինե<sup>1</sup>. եւ ապա խառնի ի նա Կաւկաս<sup>2</sup>, գալով ի մտից կուսէ ի լեռնէն որ կոչի Ջիգոն Կասիթէոն<sup>3</sup>, եւ նախ քան զանգանել նորա յեփրատ՝ խառնի ի նա գետն Կառամիտն, որ գայ ի Տորոս լեռնէ եւ ընկալեալ յեփրատ գնայ ընդ հարաւ, հատանէ զլեռն Տորոս. յորում տեղոջ գտանի ակն բիւրեղ. եւ ունի Չորրորդ Հայք էրես<sup>4</sup> եւ հաւս, եւ ի գազանաց գառիւծ<sup>5</sup>»<sup>6</sup>: Ընտրիվ աշխարհագրական հստակ նկարագրության, որը կարող է լրկ ուսումնասիրողի և, առաջին հերթին, սլատմական աշխարհագրության մասնագետի զարմանքը շարժել իր որոշակիությամբ, պարզ է դառնում, որ Չորրորդ Հայք կամ Ծոփաց կողմն աշխարհը գտնվել է Բարձր Հայքից հարավ, Փոքր Հայքի կենտրոն Մելիտենե (այժմ՝ Մալաթիա) քաղաքից արևելք՝ Եփրատի ձախափնյակում, սահման ունենալով Եփրատ գետը, Միջագետքից հյուսիս և Տարոնից կամ Տուրուբերանից արևմուտք: Այս նկարագրությունը առավել քան բավարար է Ծոփք աշխարհի պատմա-աշխարհագրական քննությունը կատարելու համար, սակայն, վերջինիս շահերից ելնելով, անհրաժեշտ ենք համարում մեջբերել նաև «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության նկարագրությունը, որը խորհելու նյութ է տալիս՝ կապված մասնավորապես տեղանունների հետ. «Երկրորդ՝ Չորրորդ Հայք յերի կայ Բարձր Հայոց: Եւ գաւառք են ի նմա ութ. Խորձեան, Հաշտեանք, Պաղնատուն, Բաղահովիտն, Ծոփք, Անձիթք, Գորիք, Գեդիք: Եւ ունի Չորրորդ Հայք բերդս, եւ գետս եւ լերինս եւ բիւրեղ: Ունի եւ երիս, եւ հաւս, եւ ձկունս. եւ ի գազանաց՝ գառեւծ»<sup>7</sup>:

Արդ, համեմատելով երկու նկարագրությունները և օգտագործելով «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի նյութը, կարելի է հանգել մի շարք եզրակացությունների: Ամենից առաջ հարկ է նշել, որ ընդարձակ խմբագրության մեջ պահպանվել է աշխարհի նախնական Ծոփք անունը, որը միայն հետագայում

<sup>1</sup> Պետք է լինի «Մելիտինե» կամ «Մելիտենե»:

<sup>2</sup> Ա. Երեմյանը «Կաւկաս»-ը սրբագրում է «Կիակկաս» և ավելացնում է «գետ» բառը («Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 107»), սակայն համաձայն Երկրորդ Հայքի աշխարհացոյցյան նկարագրության այն պետք է սրբագրել «Կաւկասա» («Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելոածովք նախնեաց», էջ 25):

<sup>3</sup> Ա. Երեմյանը, հենվելով «Աշխարհացոյց»-ի մեկ այլ տեղեկության վրա, «Ջիգոն Կասիթէոն»-ը ուղղում է «Ջիգոն Բասիլիկոն» («Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», էջ 52, 107):

<sup>4</sup> Կարելի է սրբագրել «երես», չնայած այս ընթերցումը ևս սխալ չէ:

<sup>5</sup> Հին գրությանը կլիներ «գառեւծ»:

<sup>6</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ», էջ 30: Գավառանունները կըննարկվեն առանձին:

<sup>7</sup> Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349: «Երիս»-ը պետք է սղորագրել «երես». ընդարձակի համեմատ ավելացված է «ձկունս» բառը:

կարող էր ստանալ **Չորրորդ Հայք** անվանումը: Ավելին, բնագրի տրամաբանությունից բխում է, որ սկզբնապես **«Չորրորդ Հայք, որ է»** արտահայտությունը նրանում չի եղել և ավելացվել է խմբագրության ժամանակ: Այս առիթով հարկ է ընդգծել, որ Մեծ Հայքի աշխարհների թվարկման բաժնում ընդարձակ խմբագրության մեջ ասված է պարզապես **«Երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայք»<sup>1</sup>**, իսկ համառոտ խմբագրության մեջ հայտնի երկու ձեռագրերում պահպանվել է **«Չորրորդ Հայք, աբիսցն Աղձնիք»<sup>2</sup>** արտահայտությունը: Դժվար չէ տեսնել, որ համառոտ խմբագրության ձեռագրերում սկզբնապես եղել է **«Չորրորդ Հայք, աբիսցն (Մոփք), Աղձնիք...»**, որից հետագայում որոշակի իրողությունների հետ կապված, գրիչների կամ խմբագիրների մի մասը դուրս է թողել **«աբիսցն (Մոփք)»** հատվածը, որի հետևանքով ստացվել է **«Չորրորդ Հայք, Աղձնիք...»**, սակայն մյուս մասը, իմանալով, որ Մորիկ կայսեր վարչական բարենորոգումներով Աղձնիքը մտել էր Մեսոպոտամիայի կամ Չորրորդ Հայքի մեջ և շատ էլ չկողմնորոշվելով վարչական բաժանման հիմնահարցերում, դրանք նույնացրել է, որի հետևանքով բնագրից դուրս է մնացել Մոփքի անունը: Այս ամենը վկայում են, որ Մոփք կամ Մոփաց կողմն անվանումը, չնայած պաշտոնական Չորրորդ Հայքի գոյությանը, շարունակում էր դեռ երկար ժամանակ զուգահեռաբար կիրառվել: Այս առիթով **Լ. Լյուբչմանը** նշել է, թե **«Որ է Մոփաց կողմն»** յաելուածը կը ցուցնէ, որ Մոփք՝ ընդարձակ իմաստով դեռ ժողովրդական անուն էր այս նահանգին՝ Չորրորդ Հայք անուն 536-ին ի ձեռն Յուստինիանոսի մէջտեղ ելլելէն ետքն ալ»<sup>3</sup>: Լարգարծան հայագետը թյուրիմացության մեջ է: Իրականում սկզբնապես, ինչպես առաջիկայում ցույց կտանք, աշխարհը կոչվում էր **Մոփք** կամ **Մոփաց կողմն**, որը ժամանակի ընթացքում դուրս մղվեց ուշ շրջանի պաշտոնական **Չորրորդ Հայք** անվան կողմից, ըստ որում ոչ թե **Հուստինիանոսի**, այլ **Մավրիկիոսի** ստեղծած **Չորրորդ Հայքի** կողմից:

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ», էջ 29:

<sup>2</sup> Ա. Արախամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 348: Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 582 և 5613 ձեռագրերը, որոնցից երկրորդում, ճիշտ է, բացակայում է «Չորրորդ Հայք» անունը, սակայն որը ենթադրվում է հաջորդող **«Աբիսցն Աղձն, որ է Բաղէշ»** արտահայտությունից ելնելով:

<sup>3</sup> Լ. Լյուբչման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 69-70:

<sup>4</sup> Մատենադարանի թիվ 582, 696, 1267, 1459, 1482, 1486, 1518, 1717, 1770, 1864, 1883, 1898, 2019, 2191, 2291, 2370, 2748, 3160, 3502, 3691, 3941, 4284, 5120, 5613, 7993, 9702:

է **Ղ. Ինճիճյանի** երկը<sup>1</sup>, ցույց տանք, թե ինչ պատկեր են ներկայացնում Մոփք աշխարհի գավառանունների տարընթերցումները:

### Տարընթերցումներ

	<b>Ուղիղ ձևը</b>
Խորձեն, Խորձէն, Խորձիայն, Խորձայն, Խորձան, Խորձին, Խորնէն, Խորձին, Խորձանեան	} <b>Խորձեան, Խորձեն<sup>2</sup></b>
Հաշտեանք, Հաշտիայնք, Հաշտենք, Հաշտէնս Հաշտեաք, Հաշտիանք	} <b>Հաշտեանք<sup>3</sup></b>
Պաղնատուն, Պաղնայ տուն, Պաղնատունն, Պաղնատուն, Պաղնտուն, Պղնատունն, Պաղնայ գաւառ, Պաղանական տուն	} <b>Պաղնատուն Պաղնայ տուն</b>
Բալախովիտ, Բաղահովիտն, Բալահովիտ, Բալահավիտք, Բալահովիտք, Բալախոյովիտ, Բաղայ հովայ հովիտն, Բալու բալահովիտք	} <b>Բալահովիտ<sup>4</sup></b>
Մոփք, Մորփք, Մոփաք, Մորք, Մովք, Մոփաթ, Մուխք	} <b>Մոփք<sup>5</sup></b>
Հանձէթ, Անծիտք, Հանձիթ, Անծիթ, Խանձիթք, Անծիտքն, Անձիտքն, Հանծիթ	} <b>Անձիտ, Հանձիթ, Անծիթ, Անձիթ</b>

<sup>1</sup> Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 37-61:

<sup>2</sup> Խորձին տարընթերցումը թերևս արդյունք է Խորձեանը որպես սեռական հոլովաձև ընկալելու:

<sup>3</sup> Մատենադարանի թիվ 5120 ձեռագրում Հաշտեանքից առաջ հիշվում է Տողատափ գավառը (Տե՛ս նաև ձեռ. թիվ 9702): Թիվ 1459-ում այն Տուղոտափ ձևով հիշվում է Պաղնատնից հետո, իսկ թիվ 2291-ում Հաշտեանքն ու Տողատափը նույնացված են:

<sup>4</sup> Մատենադարանի թիվ 2191 ձեռագրում Բալահովիտի վրա նշան է արված և տողատակում էլ ցույց է տրված, որ Բալուն և Բալահովիտը նույնական են: Հետևաբար «Բալուբալահովիտք» ձևը առաջացել է նման նույնացման պատճառով: Թիվ 2191-ում Բալահովիտից հետո հիշվում է Ղաքո? կամ Ղաքա? անունով մի գավառ, որ հետագա ընդմիջարկություն է և այն էլ անհասկանալի: Ըստ որում, դրանից հետո նշված է Բալու անունով ինքնուրույն գավառ: Թիվ 696-ում Բալահովիտին հաջորդում է ընդմիջարկված Բալու գավառը, թիվ 1459-ում Բալահովիտից առաջ ընդմիջարկված են Տուղոտափ, Բալու և Շատախ գավառները: Թիվ 2748-ում Բալահովիտից հետո ընդմիջարկված է Շատախ գավառը: Թե որչափ կարևորություն են ներկայացնում այս ընդմիջարկությունները Հայաստանի պատմական աշխարհագրության համար, մենք չենք քննարկում, իսկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում դրանք գոյություն չեն ունեցել:

<sup>5</sup> Մատենադարանի թիվ 2748 և 9702 ձեռագրերում՝ Մոփք գավառից առաջ և թիվ 1864, 2291, 3691, 3941, 5120 և 7993 ձեռագրերում՝ Մոփք գավառանունից հետո ընդմիջարկված է Շատախ գավառը, որն ունի Շատախ, Շաղախ, Շագախ, Շա-ախ տարընթերցումները:

Գորեք, Գորեկ, Գորեք, Դորեք, Գովգեք, Գովլեք,  
 Գորեգ, Դորեք, Գալեգ, Գորիք  
 Դեգիկ, Գեգիք, Դեգիք, Դիգիգ, Դեգին, Դեգիկ, Գեգիկ, Գեդիկ }

Գալեք

Դեգիք

«Աշխարհացոյց»-ի Ծովքի նկարագրության մեջ նշանակալից նյութ է պահպանվել Փոքր Հայքի վերաբերյալ, որն անշուշտ առանձին քննության առարկա է: Այժմ լույս նշենք, որ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ և համառոտ խմբագրությունների նկարագրության վերջնամասում հանդիպող «*եւ ունի Չորրորդ Հայք...*» արտահայտությունը թերևս ուշ շրջանի ընդմիջարկություն է գրիչների կողմից, քանի որ «Աշխարհացոյց»-ի որոշ ձեռագրերում այն բացակայում է:

Ինչպես վերը նշեցինք, «Աշխարհացոյց»-ը պահպանել է Ծովքի մանրամասն նկարագրությունը, որը՝ այլ սկզբնաղբյուրների համադրությամբ, հնարավորություն է տվել ուսումնասիրողներին մեծ ճշտությամբ տեղորոշելու Ծովքի գավառները: Հենվելով նախորդ հեղինակների տեղագրությունների վրա, օգտագործելով մատենագիտական նյութը, մենք լույս կփորձենք ձգտել գավառների սահմանները:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը Խորձեանը տեղադրում է Մյուս Գայլ գետի ավազանում, Կողբերդի շրջանում: Գավառը հայտնի է Կորյունին «Խորձեանական» անունով<sup>1</sup>, ինչպես նաև Մովսես Խորենացուն, որը հիշատակում է Մեսրոպ Մաշտոցի օգնականների շարքում «Տեր Խորձեանացուն»<sup>2</sup>: Գավառը ծանոթ է Պրոկոպիոս Կեսարացուն *Χορζιανη* և *Χορζάνη*<sup>3</sup>, իսկ Գևորգ Կիպրացուն՝ *Ἰορζιανινῆς* անունով<sup>4</sup>: Խորձեանի տարածությունը, ըստ առաջին հեղինակի, շուրջ երեք օրվա ճանապարհ էր, որի կենտրոնում գտնվում էր Արտալեսոն ամրոցը, որը պարսպապատել էր Հուստինիանոս I-ը և այնտեղ կայազոր թողել դուքսի հրամանատարությամբ: Եվ որ կարևորն է, համաձայն բյուզանդական պատմիչի «*Նա պարսիկների հետ ոչ մի սահմանագիծ չունի՝ լիճ, գետի հոսանք, կամ լեռնանցք: Նրանց սահմաններն այստեղ խառնիխուռն են, այնպես, որ բնակիչները, որոնք կամ հոռմեացիներին, կամ էլ պարսիկներին են հպատակ, մեկը մյուսից որևէ ոտընձգության մասին կասկածելու ոչ մի վախ չունեն*»<sup>5</sup>: Պրոկոպիոս Կեսարացու մեկ այլ տեղեկության համաձայն, գավառը գտնվում էր Հաշտենից գավառի

Կթառիճ (Կիթարիզոն) ամրոցի և Թեոդոսուպոլիս քաղաքի միջև<sup>1</sup>: Արիստակես Լաստիվերտցին գավառի սահմանագլխին հիշատակում է Մորմրեանս գյուղը և նշում Խորձեանի ու Հաշտենի հարևանության փաստը<sup>2</sup>: Ինչպես վկայում է հեղինակը, գավառը միջնադարում նշանավոր էր իր անտառներով, որոնք հիշատակվում են սելջուկ-թուրքերի արշավանքների առնչությամբ. «*...եկեալ հեղաւ յընդարձակ դաշտն Բասենոյ և Կարնոյ..., իսկ ի հարաւ մինչև ի Տարօն և մինչև ի գաւառն Հաշտենից մինչև յանտառս Խորձենոյ*»<sup>3</sup>: Խորձեանի մասին մի հետաքրքիր տեղեկություն էլ պահպանել է Ասողիկը, որի հաղորդմամբ բյուզանդական կայսր Բարսեղ Բ-ն (Վասիլ) «*անցեալ... ընդ Հանձիթ և ընդ Բալու՝ ելանէ ի լեռնն Կոհերայ, — յաւուր Կարդավառի տօսին, — որ ընդ մէջ Հաշտենից, Ծովաց և Խորձենոյ, և անդուստ գայ հասանէ ի գաւառն Արշամունեաց ի քաղաքն Երիգայ*»<sup>4</sup>: Ն. Ադոնցը ցույց է տվել, որ Կոհերը ներկայիս Կարեր կոչվող լեռներն են, որոնք գտնվում են Գինոյ կամ Գինեկ (այժմ՝ Գոյնուկ) գետի աջափնյակում, իսկ գետի ձախ ափին տեղակայված Օղնուտը՝ պատմական Եղանց բերդը կամ Եղնուտը<sup>5</sup>: Հեղինակի ենթադրությամբ, որ մենք լիովին կհսում ենք, Օղնուտը՝ ըստ Ղազար Փարպեցու տվյալների, պետք է համապատասխանի Օղինին, որտեղ գիշերեց սպարապետ Վահան Մամիկոնյանի ջոկատը Կարնից դեպի Հաշտեանք շարժվելիս: Ջարգացնելով իր միտքը, նա Օղնուտից մի քանի կմ ներքև գտնվող Aziran (ըստ Քիպերթի) կամ Azizan (ըստ Լինչի) բնակավայրի անվանումը համարում է Arizan -ի աղավաղում և վերջինս նույնացնում պատմական Երիգային<sup>6</sup>: Ասողիկի հաղորդման մեջ տարակուսանք է առաջացնում այն փաստը, որ Կոհերը համարվում է նաև Ծովքի ու Հաշտեանքի միջև գտնվող լեռ, երբ բոլոր հիմքերը կան այդ բացառելու: Ուստի մնում է ենթադրել, որ հիշյալ տեղեկության մեջ Պաղնատունը դիտվել է որպես Ծովքի բաղկացուցիչ մաս: Ելնելով վերոհիշյալից, պետք է եզրակացնել, որ Կոհեր լեռները կազմել են Խորձեանի հարավ-արևելյան սահմանը, որը գրեթե հասել է Երիգա-Արիզանի շրջակայքը: Գավառի արևելյան սահմանը մասամբ անցել է Գինեկ գետի արևմտյան ջրբաժանով, որից հետո այն հասել է Եղեգի (Լիջե) գետի հովիտը և հասել Պախր և Մեղեդուղի լեռների միահյուսման կետին:

<sup>1</sup> Անդ, էջ 141:

<sup>2</sup> Արիստակես Լաստիվերտցի, էջ 86, 111, 117:

<sup>3</sup> Անդ, էջ 67:

<sup>4</sup> Ատեփանոսի Տարօնեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, էջ 276: Պատմիչը Խորձեանը հիշում է ևս երկու անգամ, կապված Ատեփանոս վարդապետի հրավիրած կրոնական ժողովի և 995թ. ուժեղ երկրաշարժի հետ (էջ 182, 263):

<sup>5</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 15-16:

<sup>6</sup> Անդ, էջ 16:

<sup>1</sup> Կորյուն, Կարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 108. «Տիրայր անուն ի Խորձեանական գաւառնն»:

<sup>2</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, էջ 328:

<sup>3</sup> Պրոկոպիոս Կեսարացի, էջ 141, 194:

<sup>4</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 49:

<sup>5</sup> Պրոկոպիոս Կեսարացի, էջ 194:





Պրոկոպիոս Կեսարացին՝ *Ἀσθιασθηή*, որի մեջ տեղադրում է Կիթարիզոն վայրը<sup>1</sup>, Գևորգ Կիպրացին՝ *κλίμα Ἀσσιακῆς*<sup>2</sup> *Κισαρίζων* -ի մասին տեղեկություն է պահպանել Ասողիկը, որն այն համարում է քաղաք. *«Աշոտ ոմն առաքեալ յարթայէն Պարսից Խոսրովու և հարեալ գՅոյնն՝ էառ ԳԿթոսիճ քաղաք Հաշտենից»*<sup>3</sup>: Բացի Կթառիճից և Ոլորից Հաշտենաքում են գտնվել նաև Գիրեի Հանդիսեանք, Մուշեղայ կամ Մուշեղամարգ գյուղերը և Գլուխ արձանին վայրը<sup>4</sup>:

Հենվելով այս տեղեկությունների վրա, Հաշտենաքի սահմանները, ինչպես ճիշտ որոշում է Ս. Երեմյանը, կունենային ներքոհիշյալ պատկերը: Հյուսիսում սահմանը կազմելու էին Կոհեր լեռները, որն այնուհետև Երիզայից հարավ ընկած շրջանում հատելու էր Գինեկի հովիտը, այնուհետև Արածանին՝ Չյունկերտից արևմուտք ընկած շրջանում, և հասնելու էր Հայկական Տավրոսի լեռնաշղթա կամ հայկական աշխարհագրական տեղանվանացանկով՝ Սիմ-սար լեռներ: Այնուհետև սահմանագիծն անցնելու էր Սիմ-սարով մինչև Սուրբ լույս լեռը և, թեքվելով հարավ, ձգվելու էր Զիբենե (Տիգրիս) և Քաղիթ գետերի ջրբաժանով մինչև Նիրիբու լեռները, որոնց վրա Սափխասի լեռնանցքն էր: Օղակելով Զիբենե գետի վերին հոսանքի շրջանը, սահմանը կրկին դուրս էր գալիս Հայկական Տավրոս և որոշ տարածությունից հետո թեքվում էր հյուսիս և գրեթե ուղիղ գծով շարունակվում մինչև Կոհերի լեռները:

*«Աշխարհացոյց»*-ը Մոփքի հերթական Պաղնատուն գավառը տեղադրում է Խորձանից արևմուտք և Բալահովտից հյուսիս. *«խսկ ի մոից Խորձայնոյ է Պաղնատուն գաառ, հանդէպ հոմանուն բերդով, և հանդէպ նորա ի հարաւ Բալախովտ գաառ»*<sup>5</sup>: Դժվար չէ տեսնել, որ համանուն բերդը՝ Պաղինը, գա-

<sup>1</sup> Մտ, էջ 193: Կթառիճի մասին մանրամասն տե՛ս J.Markwart, *Südarmonien and die Tigrisquellen*, էջ 50<sup>o</sup>-51<sup>o</sup>:

<sup>2</sup> *Georgii Cypril Descriptio orbis Romani*, էջ 49:

<sup>3</sup> Ասողիկ, էջ 86: Ս. Երեմյանը Կթառիճը տեղադրում է ձապաղջրի հյուսիսակողմում:

<sup>4</sup> Լ. Ռճիճյան, *Ստորագրութիւն հին Հայաստանեայց*, 44-45:

<sup>5</sup> *«Աշխարհացոյց Մովսէսի Կորենացոյ», էջ 30: Պաղին բերդը հիշում է Սամվել Անեցի (Հաւաքունը ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893): Ասողիկի «Պատմութիւն»-ը (էջ 144, 177) պահպանել է տեղեկութիւններ Ասաղին և Պաղին անունով ամրոցների մասին, որոնցից առաջինը Հ.Հյուսիսումը իրավագիտութեան համարում է Պաղին անվան աղավաղում (Հին Հայոց տեղոյ անունները, էջ 140): Մյուս՝ Պաղին անունը հեղինակը հիշում է Մոփքում, որը մտածել է տալիս, որ նա իրոք Պաղնատունը համարում է Մոփքի բաղկացուցիչ մաս և այդ պատճառով էլ մեկ այլ կապակցությամբ, որի մասին արդեն նշել ենք, վերջինիս սահմանները հասցնում է մինչև Կոհեր լեռը: Սակայն դրա հետ մեկտեղ, 995 թ. երկրաշարժի մասին խոսելիս Մոփքի հետ մեկտեղ հիշատակում է նաև Պաղնատունը (էջ 263), որը չի համատեղվում նախորդ վկայություններին:*

վառի կենտրոնն էր: Պաղնատունը Կորյունին և Դազար Փարպեցուն հայտնի է Պաղնական տուն անվամբ<sup>1</sup>, որի ճիշտ ձևը ըստ Հ. Հյուսիսումի լինելու էր Պաղնական տուն<sup>2</sup>: Գևորգ Կիպրացին Չորրորդ Հայք եպարքիայում հիշում է *κλίμα Παλαιανῆς* -ը, որն անկասկած Պաղնատունն է: Պաղնատուն կլիմայում էր գտնվում *κάστρον Παλιδῆς* -ը<sup>3</sup>: Պաղինի բերդը մինչև այսօր էլ պահպանվել է: Նրա ավերակների մնացորդները գտնվում են ներկայիս Պաղին գյուղի մոտ Մեծկերտից 29 կմ և Փերի-Բերից 22,5 կմ հեռավորության վրա: Հունտինգտոնի կարծիքով ավերակ բերդը ծագում է սեպագրական շրջանից, որտեղ պահպանվել է Մենուա թագավորի արձանագրությունը<sup>4</sup>:

Ինչպես արդեն նշվեց, Պաղնատունից հարավ գտնվում էր *Բալահովտը*, որն, ըստ Ս.Երեմյանի, նախապես Արշամաշատ քաղաքի տարածքն էր և, հավանաբար, կոչվել է Արշամաշատ: Նման հնարավորությունը չի բացառվում, սակայն զարմանալիորեն՝ հեղինակի կարծիքով, ստացվում է, որ Բալահովտը մինչև 387 թ. պահպանել է Արշամաշատ անունը<sup>5</sup>: Եթե իրոք Արշամաշատը IV դարում շարունակում էր իր գոյությունը որպես մեծ քաղաք, ապա շատ տարօրինակ է, որ նա ոչ մի անգամ չի հիշատակվում հայ պատմիչների երկերում: Ուստի պետք է ենթադրել, որ Արշամաշատի անշքացումը կատարվել է ավելի վաղ ժամանակներում, որի հետևանքով գավառի վարչական կենտրոնը տեղափոխվել էր Բալուխ բերդը, որն էլ ի վերջո իր անունն էր տվել նրան: Հուստինիանոսի 31-րդ նովեբրարիում գավառը նշվում է *Βαλαβιτινῆ* Պրոկոպիոս Կեսարացու մոտ՝ *Βαλαβιτινῆ*, և Գևորգ Կիպրացու *«Նկարագրություն»* մեջ՝ *Βιλαβιτινῆς* գրությամբ<sup>6</sup>: Քիպերթը և Հյուսիսումը ենթադրում են,

Պաղին անունով բերդը և բնակավայրը հանդիպում են նաև Պաղնատուն գավառի տարածքից դուրս, որոնցից մեկը գտնվում է Արկնի-Արղանայից հյուսիս: Հավանաբար, ինչպես ճիշտ նկատում է Հ. Հյուսիսումը (էջ 141-142), նշված Պաղինին են վերաբերվում Մատթեոս Ուռուցեցու տեղեկությունները, քանի որ պատմիչի Պաղինը տեղորոշվում է Թլխում գավառի հարևանությամբ, Արկնիի բերդի մերձավորությամբ (*«Պատմութիւն Մատթեոսի Ուռուցեցոյ», Երուսաղեմ, 1869, էջ 129. «...գաառն Պաղնայ», էջ 166. «ի գաառն որ կոչի Պաղին», «գերեցաւ գաառն Պաղնայ: Եւ անտի յարուցեալ գային որպէս զօձ թիւնաւոր, և հասաներ ի վերայ գաառնի Թլխոյ Արկնոյ»*): Ուռուցեցին հիշատակում է Ետերն *Թլաղապատ* (էջ 130) արտահայտությունը, որի մեջ ուսումնասիրողները փորձում են տեսնել Պաղին ամրոցի անունը՝ *Թեղ-Պաղնայ*: Իրականում այն *Թեղ-Քաղազ*ն է, որը գտնվում է Արկնի-Արղանայից հյուսիս-արևելք՝ Տիգրիս գետի ափին:

<sup>1</sup> Կորյուն, Վարդ Մաշտոցի, էջ 98: Դազար Փարպեցի, էջ 15:

<sup>2</sup> Հ. Հյուսիսում, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 140:

<sup>3</sup> *Georgii Cypril Descriptio orbis Romani*, էջ 48-49:

<sup>4</sup> Հ. Հյուսիսում, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 141:

<sup>5</sup> Ս. Ս. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 40:

<sup>6</sup> Պրոկոպիոս Կեսարացի, էջ 304, 191, 299: *Georgii Cypril Descriptio orbis Romani*, էջ 49:

որ այս շարքում կարելի է ավելացնել նաև Պտղոմեոսի հիշատակած *Balis-biga*-ն, որի տարընթերցումների մեջ հանդիպում են *Βαλιβίγγα*, և *Βαλισβίτα*, ձևերը, որոնք հիշյալ հեղինակների կողմից սրբագրվում են *Baliobita*<sup>1</sup>: Սրբագրությունը առավել քան գայթակղիչ է, եթե ի նկատի ունենանք, որ Պտղոմեոսյան կորորինատներով Բալիսբիգան պետք է գտնվեր Մեծ Հայքի արևմտյան շրջաններում: Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ հիշյալ բնակավայրը հանդիպում է Ալիլիսենե, Աստաունիտիս և Սոֆենե մարզերի նկարագրության բաժնում: Սակայն դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ, որ Բալիսբիգան գավառ չէ, այլ բնակավայր, ուստի այն հազիվ թե կարող էր Բալահովիտ կոչվել: Ուստի Բալիսբիգայի մեջ ոչ թե պետք է տեսնել Բալահովիտ, այլ Բալու բերդ անունը: Այդ պատճառով էլ *Βαλισβίτα* -ն անհրաժեշտ է սրբագրել *Βαλισβί(ρ)τα* կամ *Βαλιοβί(ρ)τα*:

Բալու ամրոցը հիշատակվում է Գևորգ Կիարացու երկրամասում *καστρον Βαΐου λοῦδος* անունով, որը պետք է կարդալ անշուշտ *Βαλοῦδος* կամ *Βάλου*<sup>2</sup>: Հետագա դարերում Բալու անունը հանդիպում է ոչ միայն որպես ամրոցի, այլև գավառի անվանում<sup>3</sup>:

Պաղնատան և Բալահովտի վերաբերյալ նյութը սուղ է նրանց սահմանները մեծ ճշտությամբ որոշելու համար, ուստի կարելի է անել ընդհանուր եզրակացություններ: Հնարավոր է, ինչպես կատարում է Ս. Երեմյանը<sup>4</sup>, որ հիշյալ գավառները արևմուտքում տարածվում էին մինչև Մուզուր գետը: Հյուսիսում Պաղնատունը սահմանակցում էր Խորհեանին նշված գծով և Մուզուր գավառին, որի սահմանագիծը հիշյալ հատվածում անորոշ է: Արևելքից երկու գավառներն էլ սահմանակցում էին Հաշտեանքին Մյուս Գայլ և Գինեկ գետերի ջրբաժան գծով, իսկ Հայկական Տավրոսի լեռները կազմում էին Բալահովտի հարավային սահմանը<sup>5</sup>: Շատ ավելի դժվար է Պաղնատունը Բալահովտից բաժանող սահմանագծի ճշտումը, որը Ս. Երեմյանն անցկացնում է արևմտյան մասում Մյուս Գայլ գետով, իսկ արևելյան հատվածում՝ Արածանիի հյուսիսային ջրբաժանով<sup>6</sup>: Անշուշտ առաջարկվածը հավանական սահման է, սակայն մենք հակված ենք կարծելու, որ գավառն, իրոք, ընդգրկել է միայն Բալուի

հովիտը, հետևաբար Մյուս Գայլ գետի ձախափնյակի ոչ մի մասն էլ չպետք է վերագրել նրան: Թերևս այդ մասին է անուղղակիորեն վկայում Պրոկոպիոս Կեսարացին, որի հաղորդմամբ Ջենոն կայսեր օրոք Իլլոսի և Լեոնտիոսի ապստամբությանը չմասնակցած Բալահովտի սատրապական իշխանությունը թույլ և աննշան էր<sup>1</sup>: Հետևաբար այն՝ ի տարբերություն մյուս սատրապությունների, որոնք դադարեցին ժառանգական լինելուց ապստամբությանը մասնակցելու համար, չէր առանձնանում բնակչությամբ և տարածությամբ:

Մոփաց աշխարհի հաջորդ գավառը, որ հայտնի էր **Մոփք**, **Շահեի Մոփք** և **Շահունյաց Մոփք** անուններով, գտնվում էր Պաղնատնից արևմուտք, Անձիտից հյուսիս<sup>2</sup>: Այն հիշատակվում է խեթական աղբյուրներում *Isua-Isuva-lsua*, իսկ Արարատյան թագավորների արձանագրություններում՝ *Supani* գրությամբ<sup>3</sup>: Հունա-հռոմեական հեղինակների երկերում այն հանդիպում է *Σωφηνή* կամ *Σοφηνή* ձևով, բյուզանդական աղբյուրներում՝ *Σωφηνή* գրությամբ, իսկ ասորական պատմիչները հիշում են *Sofā nāyē* անունով<sup>4</sup>: Հայկական աղբյուրները, հասկանալի պատճառներով, անդրադառնում են Մոփքին միայն գրերի գյուտից հետո, որոնց սակայն մենք կանդրադառնանք Մոփք աշխարհի ձևավորման հարցի ըննության առիթով:

Արդ, որո՞նք էին **Մոփքի** կամ **Շահունյաց Մոփքի** սահմանները: Դատելով Ասողիկի տեղեկություններից, որոնց համաձայն նրա մեջ գտնվում էր Խոզան գյուղաքաղաքը, գավառիս արևելյան սահման կարող էր ծառայել Մուզուր (ըստ Ս. Երեմյանի՝ Գայլ) գետը<sup>5</sup>: Ճիշտ է, Ասողիկի հիշատակության մեջ Մոփքը հանդես է գալիս որպես աշխարհ, որով և առաջարկված սահմանագիծը կարծես թե կասկածի տակ է դրվում, սակայն իրականում «աշխարհ» բառը պատմիչի ստեղծագործությունն է, քանի որ խոսելով նույն իրադարձությունների մասին և բնականաբար աղբյուր ծառայելով Ասողիկի համար, Պատմահայրը հաղորդում է, որ Արիստակեսը, որը ըստ Ասողիկի եկեղեցի էր կառուցել Խոզան գյուղաքաղաքում, սպանվում է Արքեղայոս իշխանի կողմից **Մոփաց գավառում**<sup>6</sup>: Գավառի հարավային սահմանը, չնայած չի ամրապնդ-

<sup>1</sup> Պրոկոպիոս Կեսարացի, էջ 191. «(Ջենոն կայսրը - Հ.Բ.) մի շատ թույլ և աննշան իշխանություն ունեցող սատրապի՝ Բալահովտենե կոչված երկրում թողեց նախկինի պես իշխել»:

<sup>2</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 30. «Եւ ի մտից նոցա (Պաղնատան և Բալահովտի - Հ. Բ.) Մոփք, եւ Անձիք գաւառ ի հարաւ»:

<sup>3</sup> Н.В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, էջ 327: Гр. Капанцян, Хайасакольбель армян, էջ 22-24, 57, 60, 77, 91, 95, 96, 112, 113, 128, 194, 198: Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи, թիվ 39а, 391а, 127 IIзт, 128, A2а:

<sup>4</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 38-42: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 142-151: Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 57:

<sup>5</sup> Ասողիկ, էջ 63. «աշխարհին Մոփաց ի գիւղաքաղաքն Խոզան»:

<sup>6</sup> Մովսես Խորենացի, էջ 243. «ի ձանապարհի ի Մոփաց գաւառին»:

<sup>1</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12,7: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 142:

<sup>2</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 49: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 142:

<sup>3</sup> Ասողիկ, էջ 263, 264:

<sup>4</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, տե՛ս քարտեզը, Գ-3:

<sup>5</sup> Անդ:

<sup>6</sup> Անդ:

վում համապատասխան մատենագրական նյութով, անցնելու էր Արածանի գետով<sup>1</sup>: Մատթեոս Ուռհայեցու մի շատ հետաքրքիր տեղեկության համաձայն, ազգությամբ հայ բյուզանդական կայսր Չմշկիկը «ի գաւառէն Խոզնայ էր, ի տեղոյն որ այժմ կոչի Չմշկածագք»<sup>2</sup>: Դրանից կարելի է եզրակացնել, որ նրա օրոք գավառն արդեն կրում էր նոր՝ Խոզան անունը, և որ Ծոփքի մեջ էր Չմշկածագք բնակավայրը: «Յայսմատուրք»-ը (մարտի 27) տեղեկացնում է, որ Չմշկածագքը (բնագրում՝ Չմշկայծակ) Հերապոլիս քաղաքն էր<sup>3</sup>: Հիշյալ բնակավայրի տեղը հայտնի է, այն պահպանել է իր անվանումը թուրքական աղավաղված Չիմիշկեզեկ արտասանությամբ: Գտնվում էր Թաղարա ջուր կամ Չմշկածագ գետի ափին, որն Արածանիի աջակողմյան վերջին վտակն է: Ի նկատի առնելով, որ Ծոփքից արևմուտք գտնվում էր Դեզիք գավառը, պետք է եզրակացնել, որ գավառի արևմտյան սահմանները անցնում էին Թաղարա ջրի արևմտյան ջրբաժանով, որով Չմշկածագ քաղաքը տարածքորեն մտնում է Ծոփքին<sup>4</sup>: Հյուսիսային սահմանագիծը պետք է կազմեին Մուզուր գետի և Արածանիի Թաղարա ջուր ու Խոզաթ (իմա՝ Լուսաթ) վտակների ջրբաժան լեռները:

Ծոփքի հետ կապված որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Շահեի Ծոփք և Ծոփք Շահուն (ւ)ոց ձևերի քննությունը<sup>5</sup>: Բուզանդը Հուսիկ կաթողիկոսի ձեռնարկության առիթով հիշատակում է «Վարազ Շահունի իշխանն Օոփաց աշխարհին»<sup>6</sup>: Լ. Մարքվարթը ենթադրել է, որ այն պետք է իրականում լիներ «Վարազ իշխանն Շահունի Օոփաց աշխարհին»<sup>7</sup>, որով «Շահունի» հասկացությունը վերաբերվում է ոչ թե Վարազ իշխանին, այլ Ծոփքին: Լ. Հյուբշմանը հակված է կարծելու, որ «Շահունոց»-ը կամ «Շահեայ»-ն պարզապես «Շահունի» տոհմանունն են, որն ըստ երևույթին ոչ թե կապ ունի պարսկերեն Տահ = արքա բառի, այլ սեպագիր արձանագրությունների՝ Մելիտեալիսի երկրի թագավոր Խիլառուադի հոր՝ «Շախու»-ի անվան հետ<sup>8</sup>: Ասորեստանյան թագավորներ Թզլաթպալասար Ա-ի, Սալմանասար Գ-ի, ինչպես նաև խեթական սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Սուլս-

մու-Սուլսնու-Ցուլսմա երկիրը Խուվա կամ Խոուա երկրի հարևանությամբ<sup>1</sup>: Նշված երկրներից Խուվան կամ Խոուան Ծոփքն է, իսկ Սուլսմու-Սուլսնուն, հավանաբար, նրա արևելյան մասը, քանի որ այդ երկրի Վաշթալ քաղաքը<sup>2</sup> կարծես նույնանում է արդի Վասկերտ բնակավայրին<sup>3</sup>: Համաձայն նույն արձանագրության, Սալմանասար Գ-ն Սուլսմու երկիր էր մտել, անցնելով Արածանի գետը, հետևաբար կարելի է որոշակի կապ տեսնել Շահեի Ծոփքի սյրվելյան մասի և Սուլսմու-Սուլսնուի միջև: Լինելով սկզբնապես առանձին ցեղային երկրներ և այնուհետև միավորվելով ընդհանրական Ծոփք անունով, վերջինս՝ ի տարբերություն Մեծ Ծոփքի, աստիճանաբար իր վրա է վերցրել Սուլսմու-Սուլսնուի հնչյունափոխված անվանումը, որը ժողովրդի բերանում թերևս վերափոխափոխման է ենթարկվել: Ուստի ինչ վերաբերում է «Շահե»-ի մեջ «արքա» իմաստը տեսնելուն, ապա շատ հնարավոր է, որ այդ Ծոփքի արքունի տիրույթ լինելու ժողովրդական իմաստավորումն էր: Համենայն դեպս, Շահունյաց Ծոփքի արքունի տիրույթ լինելու մասին անուղղակիորեն վկայում է Պատմահայրը, որի հաղորդմամբ հայոց Արշակ Գ թագավորն իր գանձերը, հանելով Հանի ամրոցից, ուղարկել է Ծոփաց աշխարհ<sup>4</sup>: Հասկանալի է, որ թագավորն իր գանձերը չէր առաքի պահպանության որևէ ժառանգատեր իշխանի տիրույթ, ուստի մնում է ենթադրել, որ Շահունյաց Ծոփքը կառավարվում էր թագավորի կողմից նշանակված գավառակալ իշխանի կողմից, իսկ գանձերի պահպանության վայրն էլ, ամենայն հավանականությամբ, ոչ թե Մեծ Ծոփքի, այլ մյուս Ծոփքի Բնաբեղ ամրոցն էր<sup>5</sup>:

Ծոփաց աշխարհի հերթական Անձիտ գավառը գտնվել է Ծոփքից հարավ, սահման ունենալով անտարակույս, Արածանի գետը: «Աշխարհացոյց»-ն այնտեղ հիշատակում է Ծովք և Հոռե բերդ ամրոցները<sup>6</sup>, որոնցից առաջինը գտնվում էր Ծովք լճի ափին և, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է Գյուլջուկ բնակավայրին, իսկ երկրորդը նույնացվում է Խարբերդի հետ<sup>7</sup>: Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ը դրանց ավելացնում է

<sup>1</sup> Н. В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 174:

<sup>2</sup> АВИИУ, 27, II:

<sup>3</sup> Տեղագրությունը ըստ Լ. Կարազյոզյանի:

<sup>4</sup> Մովսես Խորենացի, էջ 314. «Գի էր հանեալ զգանձսն Արշակայ յամրոցէն Հանույ՝ տանել յաշխարհն Օոփաց»:

<sup>5</sup> Փավստոս Բուզանդ, էջ 206. «և յերկրին Օոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին նովա (Անգեղտան ներքինի իշխան Դրաստամատի -Շ.Բ.):

<sup>6</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 30:

<sup>7</sup> Մ. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 57, 63: Ինչպես ձիշտ նշել են Լ. Հյուբշմանն ու Լ. Մարքվարթը, Ասողկի (էջ 175) հիշած Կարբերդ գավառը Խարբերդի հետ կապ չունի, քանի որ գտնվում էր Լիկանդոնում (Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 153: Südarmerien und die Tigrisquellen, էջ 41): Խարբերդի և Կարբերդի նույնացման սխալը կատարել է Ղ. Ինձիճյանը (Ստորագրությունն հին Հայաստանեայց, էջ 59):

<sup>1</sup> Մ. Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385թթ.), քարտեզ, Գ-3:

<sup>2</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 23:

<sup>3</sup> Ղ. Ինձիճյան, Ստորագրությունն հին Հայաստանեայց, էջ 57. «ի քաղաքէն Յերապոլեայ՝ որ այժմ Չմշկայծակ կոչի»:

<sup>4</sup> Մ. Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385թթ.), քարտեզ, Գ-3

<sup>5</sup> Փավստոս Բուզանդ, էջ 21, 141:

<sup>6</sup> Անդ, էջ 29:

<sup>7</sup> J. Marquart, Ērānšahr, էջ 171:

<sup>8</sup> Г. А. Меликишвили, УКН, 127 II, 158: Լ. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 150:

Ἠλέγερδα, Μαζάρα, Ἄνζιτα և թերևս Σόειτα, Βελκονία ու Ἀρσαμόσσατα բնակավայրերը<sup>1</sup>: Հիշյալ աշխարհագրական վայրերից Անձիտը պահպանվել է մինչև օրս Թիլ-Անձիտ կամ Թիլ-Անգիտ ձևով, որը տեղակայված է Ծովք լճից ավելի քան 10 կմ հյուսիս: Մազարան, դատելով Պեվտինգերյան քարտեզի տվյալներից, նույնանուն է Մեգիրե (Մեգրե) կամ Մամուրեթ ուլ-Ազիզ քաղաքին, որն այսօր կրում է Էյլազըզ անվանումը<sup>2</sup>, իսկ Էլեգերդան, որը փորձեր են արվել տեղորոշելու Մազարաի մերձակայքում, եղողոտի վանքի տեղում և այլուր, ցայսօր հուսալի տեղադրված չէ, եթե, իհարկե, չի նույնանունով Մասունի եղգարթ գյուղին<sup>3</sup>: Եթե հավատանք Պտղոմեոսին, ապա Արշամաշատը նույնպես գտնվել է Անձիտենե նահանգում: Այդ կարող է ունենալ երկու բացատրություն: Կամ Արշամաշատը իր շրջակա տարածքով Ծովք կոչված երկրամասի մեջ չէր մտնում և իրոք մաս էր կազմում Անձիտենեի, կամ էլ, որ շատ ավելի հավանական է, այն Ծովք-Սոֆենեի բաղկացուցիչ մասն էր, սակայն պտղոմեոսյան անկատար կողողինատների պատճառով հայտնվել է Անձիտենեի նկարագրության մեջ: Ուսումնասիրողներն այն սովորաբար տեղադրում են Խարաբա-Նաջարանի ավերակների տեղում<sup>4</sup>: Վերջին Σόειτα, և Βελκονία բնակավայրերը կարող են համապատասխանաբար համընկնել Խարբերդին<sup>5</sup> ու Բելխան գյուղին, սակայն չի բացառվում, որ դրանք մտնում էին Աղձնիքի մեջ: Ուստի, եթե, այնուամենայնիվ, այդ բնակավայրերը գտնվում էին Աղձնիքում, ապա Σόειτα-ն պետք է համապատասխաներ Ամմիանոս Մարկեղինոսի հիշատակած Ziata-ին և Պեվտինգերյան քարտեզի Coissa-ին<sup>6</sup>, իսկ Բելխանիան, մեծ վերապահությամբ, թերևս Թլխամին: Եփրատի վրա գտնվում էր Անձիտից Փոքր Հայք տանող Տոմիսայի (Տոմեիշկի) գետանցը ներկայիս Իզողլու գյուղի մոտ:

<sup>1</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 8:

<sup>2</sup> Հ. Հրաբյան, Հին Հայոց տեղյոյ անունները, էջ 152: Ն. Ադոնցը (Армения в эпоху Юстиниана, էջ 33) հավան է Մազարան նույնացնելու Մատթոն Ուռախեցու հիշատակած Մշարի հետ, որը հանդես է գալիս Փիլարոսու և Մասունի Թոռնիկ իշխանի հակամարտության ժամանակ: Սակայն Ուռախեցու տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Մշարը, հավանաբար, այլ բնակավայր էր և գտնվում էր Եփրատի մերձակայքում, իսկ Մազարան տեղադրված էր Խարբերդի հարևանությամբ (տե՛ս Մատթոն Ուռախեցի, էջ 248-251):

<sup>3</sup> Տեղադրությունը ըստ Հովհ. Կարազյոզյանի:

<sup>4</sup> Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 40:

<sup>5</sup> Թակոտ ալ-Համավիե հաղորդում է, որ Խարբերդը (հեղինակի մոտ՝ Խարտբերդ) կոչվել է Հին Զիար, տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 52, 55, 156:

<sup>6</sup> Ammianus Marcellinus, with an english translation by John C. Rolfe, in three volumes, I, London, 1971, XIX, 6, 1: Tabula Peutingeriana, X4-XII2, տե՛ս K. Müller, Itineraria Romana, Stuttgart, 1916, էջ 635:

Ի մի բերելով քննության արդյունքները, կարելի է հանգել միանշանակ մի եզրակացության, որ գոնե սկզբնապես Անձիտը հյուսիսից եզրափակվել է Արածանի գետով, արևմուտքում և հարավում՝ Եփրատով, իսկ արևելքում՝ Հայկական Տավրոսի լեռնաշղթայով և նրա լեռնաբազուկներից մեկով, որը ձգվել է մինչև Արածանի գետը: Ամենայն հավանականությամբ, Գավրեք գավառը սկզբնապես կազմել է նրա տարածքի մի մասը, ինչպես Դեգիբը՝ Շահունյաց Ծովքի բաղկացուցիչ հատվածը:

Անձիտ գավառը բազմիցս հիշատակվում է հայոց պատմության մեջ: Խեթական աղբյուրներում այն հայտնի է Խինցուտա անունով, սակայն որպես քաղաք, որը գտնվում է Խուվա երկրում<sup>1</sup>: Այս փաստը ցույց է տալիս, որ Ծովքից երկիրը այդ վաղնջական ժամանակներում իր մեջ էր ներառնում նաև Անձիտի տարածքը: Ասորեստանյան սեպագրերում այն հանդիպում է Enzite և Enzatau գրությամբ<sup>2</sup>: Ըստ որում, հիշյալ ցեղային երկիրն իր տեղադրությամբ ամբողջովին համապատասխանում է Անձիտին: Պտղոմեոսը Անձիտը գիտի որպես երկրամաս և որպես քաղաք, որոնցից առաջինը նա կոչում է Ἄνζιτην, իսկ երկրորդը՝ Ἄνζιτα<sup>3</sup>: Բյուզանդական աղբյուրներում այն ունի Ἄνζηνην, κλίμα Ἄνζητινῆς, Χανζίτ գրությունները, ասորական և արաբական աղբյուրներում հայտնի է Hanzit, Anzit, Hinzit անուններով: Հուստինիանոսի կողքցսում գավառը հանդիպում է Anzetena անունով<sup>4</sup>:

Ծովքի վերջին երկու գավառների մասին «Աշխարհացոյց»-ն ասում է, որ «ի մոտից (Ծովք և Անձիտ գավառների) նոցա Դեգիք գաւառ, յորում բերդք Կռնի եւ Քրիկի եւ Սոկ, որոց հանդէպ ի հարաւ է Գաւրեք գաւառ, ընդ որս եկեալ Արածանի խառնի յեփրատ ի քաղաքն Լուսաթառիճ»<sup>5</sup>: Դժվար չէ տեսնել, որ Դեգիքն ու Գավրեքը բաժանվում էին Արածանի գետով և տարածվում էին մինչև Եփրատ գետը: Եվ եթե հենվելով Չմշկածագի տեղադրության վրա, ինչպես վերը ցույց տվեցինք, Դեգիքի և Շահունյաց Ծովքի սահմանը կարող ենք անցկացնել Թաղարա ջուր գետի արևմտյան ջրբաժանով, ապա Գավրեքի և Անձիտի սահմանաբաժան գիծը դժվար է որոշել<sup>6</sup>:

<sup>1</sup> В.Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики), էջ 111, 112, 160:

<sup>2</sup> АВИИУ. 27(II), 28, 29, 30, 31, 33, 34, 42, 45 (Б2): Н.В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 255-256:

<sup>3</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 8:

<sup>4</sup> Հ. Հրաբյան, Հին Հայոց տեղյոյ անունները, էջ 151-152:

<sup>5</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ», էջ 30:

<sup>6</sup> Ս. Երեմյանը այն պայմանականորեն անցկացնում է Մուշար կամ Մշար լեռների շարունակությունը կազմող լեռնաշղթայով, որը մահմեդական բնակչությունը կոչում է ներկայումս Փիրանդալ («Հայաստանը ըստ Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Գ-3):



Այս ամենին պետք է ավելացնել մի հետաքրքիր իրողություն ևս: «Աշխարհացոյց»-ը Ծովքի գավառները թվարկելուց հետո նշում է, որ Արածանին իր մեջ ընդունելուց հետո եփրատը «երթալով զմտիւք՝ ելանէ ի սահմանս Փոքր Հայոց, իւրից Մելիտինէ»<sup>1</sup>: Այս առաջին հայացքից աննշան հանգամանքը վկայում է, որ Գավրեթ և Դեգիթ գավառները ձևավորվել էին դեռևս մինչև Փոքր Հայքի Առաջին և Երկրորդ Հայքերի բաժանվելը, այսինքն մինչև IV դարի 70-80-ական թվականները: «Աշխարհացոյց»-ի հեղինակն այստեղ, տուրք տալով իր օգտագործած արխիվային նյութերին, հիշատակում է Փոքր Հայքը, որը վարչա-քաղաքական առումով V դարում այլևս գոյություն չուներ:

Մենք փորձեցինք ճշգրտել Ծովքի գավառների սահմանները, որոշ բացառություններով ընդունելով Ս. Երեմյանի առաջարկած լուծումները: Այժմ փորձենք ցույց տալ Ծովսաց աշխարհի վարչա-քաղաքական ձևավորման ընթացքը:

Իհնք մտադիո չենք մանրամասն քննության առնել Ծովքի ցեղային շերտանի պատմությունը, որովհետև այն սկզբունքային դեր չի խաղացել Մեծ Հայքի Ծովք աշխարհի տարածքի և սահմանների ձևավորման գործում: Նշենք միայն, որ Իշուվա-Ծովքը զբաղեցնում էր Արածանի գետի ստորին հոսանքի շրջանը և տարածվում էր մինչև Ալշե երկիրը<sup>2</sup>: Վանյան բևեռագիր արձանագրությունների համաձայն Ծուպանի երկիրը տարածվում էր մինչև Խաթի կամ Մելիտիայի թագավորություն<sup>3</sup>, որը գտնվում էր Եփրատի աջ ափին, հետևաբար այն տարածական առումով համընկնում էր Իսուվային: Ասորեստանյան սեպագիր արձանագրությունները Իսուվայի կամ Իշուվայի մեջ են մտցնում Էնգիտե երկիրը և դրանով իսկ մինչև Ալգի երկիրը դիտում որպես Իսուվա-Ծովք<sup>4</sup>: Սալմանասար Գ-ի (859-824 թթ. մ.թ.ա.) Թուլխանայի մենաքարի (մոնոլիտի) և Կալխուփ «Ան քարակոթողի» արձանագրությունները համեմատելիս կարելի է գալ այն եզրակացության, որ Էնգիտեն և Ալգին կարծես թե նույնանում են<sup>5</sup>: Ինչևէ, բերված փաստերը ցույց են տալիս, որ Ծովք անվան տակ այդ հեռավոր ժամանակներում հասկացվում էր ապագա Ծովք աշխարհի տարածքի նշանակալից մասը: Չի բացառվում, որ այն կարող էր իր մեջ ներառնել Արամյան Տիգրիսի վերին հոսանքի մի մասը:

<sup>1</sup> Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 107:

<sup>2</sup> Լ. Արոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 47-51: В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, էջ 107-112:

<sup>3</sup> Г. А. Меликишвили, УКН, 39, 127 (II), 128 (A2): Н. В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 237:

<sup>4</sup> АВИИУ, 10 (III), 17, 27 (III):

<sup>5</sup> Անդ, 27 (II), 28: Н. В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 255-256:

Ծովքի տարածական ընկալման ընդլայնումը, անշուշտ, կապված էր Ծովքի թագավորության առաջացման հետ, որը տեղի ունեցավ մ.թ.ա. III դարի կեսերին: Մեզ հասած կցկտուր տեղեկություններից կարելի է ենթադրել, որ հարավ-արևելքում այն տարածվել է մինչև Քաղիթ գետը, իր մեջ է ներառել մինչև Մասիոս լեռները և նրանցից հարավ ընկած մերձեփրատյան շրջանները, հյուսիս-արևմուտքում՝ Մելիտինեի շրջակայքը և Կոմագենեն<sup>1</sup>: Սակայն, շուտով, Կոմագենեն՝ անջատվելով, դառնում է անկախ պետություն, իսկ շատ չանցած երկու թագավորություններն էլ գրավվում են Մելիկյան պետության կողմից և վերածվում գորավարությունների (ստրատեգիաների):

Մենք ավելի մանրամասն տեղեկություններ ունենք ստրատեգոս Ջարիադրեսի (Ջարեհի) վերականգնած Ծովսաց թագավորության մասին: Ինչպես հավաստում է Ստրաբոնը, «Հայաստանը սկզբում փոքր է եղել և աճել է Ա. - տաքսիասի (իմա՛ Արտաշես - Հ.Բ.) ու Ջարիադրեսի ջանքերով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի ստրատեգներն էին: Այնուհետև, սրա պարտությունից հետո, մեկը թագավորելով Ծովքում, Ակիսենեում, Օդոմանտիսում և այլ երկրների վրա, իսկ մյուսը՝ Արտաքսատայի շուրջը ընկած հողերի վրա, ծավալվեցին հարևան ժողովուրդներից երկրամասեր գրավելով»<sup>2</sup>: Շարունակության մեջ հույն աշխարհագրագետը տեղեկացնում է, որ «կատառներից (գրավվել էին - Հ.Բ.)՝ Ակիսենեն և Անտիտավրոսի շուրջն ընկած հողերը»<sup>3</sup>: Ստրաբոնի մեկ այլ հաղորդմամբ Ակիսենեն Ծովքի մաս է կազմել<sup>4</sup>, իսկ, ելնելով Անտիտավրոսի աշխարհագրական դիրքից, պետք է անվերապահ ենթադրել, որ այն մտել էր ոչ թե Արտաշեսի, այլ Ջարեհի տիրույթների մեջ: Ամասիացի աշխարհագրագետը մեկ այլ կապակցությամբ հայտնում է, որ Ծովքը տարածվել է Անտիտավրոսի և Մասիոս լեռների<sup>5</sup> միջև, հետևաբար այն իրոք ընդգրկել է Հայկական Միջագետք կոչված երկիրը: Եվ, վերջապես, հարավ-արևելքում այն հասել է մինչև Կորդվաց թագավորություն<sup>6</sup>, որն այդ շրջանում գտնվում էր Տիգրիսի երկու ափերին և Տիգրիսի աջափնյակում ուներ Սարեխա քաղաքը (ներկայումս՝ Շերիշ)<sup>7</sup>: Դատելով հայկական աղբյուրների տեղեկություններից, որոնք նփրկերտ գավառը կոչում են Մեծ Ծովք, Ծովսաց թագավորությունն այդ հատվածում տարածվում էր մինչև

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հատ. Ա, Երևան, 1971, էջ 512:

<sup>2</sup> Strabo, XI, 14, 5:

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> Անդ, XI, 14, 12:

<sup>5</sup> Անդ, XI, 14, 2:

<sup>6</sup> Applanus, Mithr., 105:

<sup>7</sup> Strabo, XVI, 1, 24:





րության ոչ թե ամբողջ տարածքը, այլ մի մասը: Մեր եզրակացությունը հենվում է ներքոհիշյալ հանգամանքների վրա: Սկզբնապես հռոմեական զորավարը միտք ուներ Տիգրան Մեծից վերցնել նրա նվաճած տարածքները և վարը միտք ուներ Տիգրան Մեծից վերցնել նրա նվաճած տարածքները և Մոփքը, որն՝ ինչպես ասվեց, ինչ որ ժամանակով տրվեց Տիգրան Կրտսերին: Մակայն այս մտտեցումը, ըստ երևույթին, դժգոհություն էր ծնում Հռոմի դաշնակիցների, մասնավորապես Կապադովկիայի մոտ, որը նշանակալից օգնություն էր ցույց տվել Պոմպեոսի զորքերին: Ուստի Տիգրան Կրտսերի ձեռքակալությունից հետո Պոմպեոսը Կապադովկիային որպես պարգև հանձնեց Մոփքը, որն իրականում գտնվում էր Տիգրան Մեծի վերահսկողության ներքո<sup>1</sup>: Մակայն Պոմպեոսը չէր կամենում իր հարաբերությունները վատացնել հայոց թագավորի հետ, ուստի հայ-պարթևական հողային վեճում հռոմեական կողմը բացահայտ պաշտպանեց Տիգրան Մեծին, նրան հանձնելով ոչ միայն Կորդվաց թագավորությունը, այլ Հյուսիսային Միջագետքի մի մասը: Այլ խոսքով, այդ մի տեսակ փոխհատուցում էր Մոփքի դիմաց: Այսուհանդերձ, եթե ընդունենք, որ Մոփքն ամբողջությամբ անցել է Կապադովկիային, ապա Ստրաբոնի այն հաղորդումը, թե «Միջագետքի մնացյալ մասը ընկնելով Հռոմեացիների իշխանության տակ, Պոմպեոսը նրա մեծագույն և լավագույն մասը Տիգրանին պահեց»<sup>2</sup>, պարզապես իմաստագրկվում է, որովհետև մնացյալի տակ հասկացվում է փաստորեն միայն Մծբին քաղաքն իր շրջակայքով: Միջագետքի մեջ էին մտնում նաև Մոփաց թագավորության տարածքի հարավային և հարավ-արևելյան շրջանները, ուստի հույն աշխարհագրագետը «մեծագույն և լավագույն մաս» ասելով, անկասկած, հասկանում էր ավելի մեծ տարածք: Հետևաբար, մենք սխալված չենք լինի, եթե ընդունենք, որ Մեծ Մոփքի տարածքը, որը հիմնականում Միջագետքի մաս է կազմում, տրվել էր Մեծ Հայքի թագավորությանը: Դատելով աշխարհագրական և լեռնագրական առանձնահատկություններից, կրկին սխալված չենք լինի, եթե ընդունենք, որ Կապադովկիային տրված Մոփքը Մեծ Հայքից սահմանազատվել է Հայկական Տավրոսի լեռներով<sup>3</sup>:

Երևոնի օրոք (54-68 թթ.) Մոփքը կարճ ժամանակով անջատվեց Մեծ Հայքի թագավորությունից և հանձնվեց եմեսայի արքայիկներից մեկին՝ Առհեմոսին<sup>4</sup>: Կարծում ենք, որ Առհեմոսի թագավորությունը ևս ամփոփվում էր Հայկական Տավրոսից հյուսիս ընկած Մոփքում: Այդուհետ Մոփքը որպես Մեծ

<sup>1</sup> Dio Cass., Mithr., 105:

<sup>2</sup> Strabo, XVI, 1, 24:

<sup>3</sup> Արտավազդ Բ-ն Կրասոսի արշավանքից հետո Մոփքը կրկին վերամիավորեց Մեծ Հայքին:

<sup>4</sup> Հ. Յ. Ասատրյան, Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի եւ Հռոմի, էջ 169: Tacitus, Ann., XIII, 7., «regionem Sophenen Sohaemo cum incignibus regibus mandat»:

Հայքի անկապտելի մաս, մնաց Հայոց թագավորության մեջ մինչև 387թ. բաժանումը:

Պարթև Արշակունիները, տիրանալով հայոց գահին, ձեռնամուխ եղան վարչական վերակառուցումների, որոնց պատկերը պահպանվել է Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ: Փաստաթուղթը II դարի է, սակայն բոլոր հիմքերը կան, որ վարչական վերակառուցումները իրականացվել են շատ ավելի վաղ ժամանակներում: Մեր կարծիքով, այդ անմիջականորեն առնչվում է Հայաստանի Արշակունի առաջին գահակալ Տրդատի գործունեության հետ, որի անձը հայկական աղբյուրներում մեզ ներկայանում է նաև Արտաշես անունով: Համաձայն Պտղոմեոսի տեղեկությունների, Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանումը իրագործված է և Ակիլիսենե ու Աստաունիտիս մարզերի հարևանությամբ գտնվում է Մոփքը գետի ճյուղավորման շրջանում. «Նշվածից ներքև՝ (Սողոկենեից և Միսակենեից - Հ. Բ.) մինչև Եփրատի ճյուղը վերցրած հատվածը, հյուսիսային մասերում են գտնվում, արևմուտքից սկսած, Բասիլիսենեն, և Բոլբենեն, և Արսեսան, իսկ նրանցից ներքև՝ Ակիլիսենեն և Աստաունիտիսը և հենց գետի ճյուղավորման մոտ՝ Մոփքը»<sup>1</sup>: Չխորանալով մյուս աշխարհների քննության մեջ, որոնց կանդրադառնանք իրենց տեղում, նշենք, որ Ակիլիսենե-Եկեղիք և Աստաունիտիս-Հաշտեսանք աշխարհներից համապատասխանաբար հարավ և արևմուտք հույն աշխարհագրագետը տեղադրում է Մոփք-Սոֆենե աշխարհը: Առաջին մտահանգումներից, որ կարելի է կատարել, մեկն այն է, որ հիշյալ ժամանակներում Հաշտեսանքը դեռևս Մոփքի մեջ չէր մտնում: Հյուսիսային սահմանագույնը, հավանաբար, անցել է Մնձուր և Պախր լեռնաշղթաներով, սակայն չի բացառվում, որ քաղաքական հանգամանքների բերումով, ինչպես արդեն նշել ենք Բարձր Հայքի բաժնում, Մուզուր-Մնձուր գավառը պատկանել է Ակիլիսենե-Եկեղիքին: Ոչ մի տարակույս, որ արևմուտքում Մոփք-Սոֆենեն տարածվել է մինչև Արածանիի գետաբերանը և Եփրատ գետը: Պտղոմեոսի հիշյալ տեղեկությունները դեռևս պատասխան չեն տալիս այն հարցին, թե ինչպե՞ս են անցել երկրամասի հարավային սահմանները: Ուստի կրկին դիմելով հույն աշխարհագրագետին, մենք իմանում ենք, որ «մնացած՝ դեպի հարավ ընկած հատվածում, Եփրատի և Տիգրիսի ակունքների միջև (գտնվում են) Անգիտենեն և նրանից ներքև Թոսպիտիսը, այնուհետև Կորիափան»<sup>2</sup>: Բերված տեղեկության մեջ շատ կարևոր է այն հանգամանքը, որ Անգիտենե կոչված աշխարհը Սոֆենեից հարավ է, որից էլ ներքև գտնվում է Թոսպիտիսը: Հաշվի առնելով սկզբնաղբյուրների նյութը, կարելի է գալ մի շարք եզրակացությունների: Անգիտենեն սահմանակցել է Սոֆենե-Մոփքին Արածանի գետով, որը հեղինակը կոչում է Եփ-

<sup>1</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 6: Թարգմանությունը Գ. Մուրադյանի:

<sup>2</sup> Անդ, V, 12, 8: Թարգմանությունը Գ. Մուրադյանի:

րատ, և այն տարածվել է մինչև Արևմտյան Վասպուրական, որը նշված դարձրջանում կազմում էր առանձին աշխարհ Թոսպիտիս կամ, որ ավելի ճիշտ է, Տոսպե անունով<sup>1</sup>: Ծովքը նշված սահմաններում ընդգրկել է աշխարհացույցյան Ծովք աշխարհի 8 գավառներից ընդամենը 5-ը՝ Խորձեանը, Պաղ-նատունը, Բալահովիտը, Ծովք Շահունին և Դեգիքը, եթե, իհարկե, վերջինս որպես գավառ չի ձևավորվել ավելի ուշ ժամանակներում: Թե ի՞նչ է իրենից ներկայացրել Անգիտենեն և ի՞նչ տարածք է ընդգրկել, սենք դեռ կանդրադառնանք Աղձնիք աշխարհի կապակցությամբ, իսկ այժմ լոկ նշենք, որ այն իր մեջ ներառել է Մելիտենե-Տիգրանակերտ-Շնգար ճանապարհի Հայաստանով անցնող հատվածը իր շրջակա տարածքով: Հենց այս ճանապարհին էլ վարչական կենսունակություն է հաղորդել այդ խիստ ձգված և տարածքով բավականին մեծ աշխարհին: Անգիտենեն նշված տարածքով համապատասխանել է «Աշխարհացոյց»-ի Աղձնիքին, որին միացված են մի քանի գավառներ: Բնական է ենթադրել, որ այդ աշխարհն ավելի շուտ կկոչվեր ոչ թե Անգիտենե - Անձիտ, այլ Ալզինենե-Աղձնիք: Ամենայն հավանականությամբ, աշխարհն իրոք կոչվել է Աղձնիք, սակայն անվանումների մոտիկությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հունա-հռոմեական աշխարհը Մեծ Հայքին հարավ-արևմուտքից հաղորդակցվում էր անմիջապես Անձիտի վրայով, թերևս պատճառ են դարձել, որ հույները աշխարհի անունը ընկալեն սահմանային Անձիտ գավառի անվամբ: Սակայն չի բացառվում մեկ այլ հնարավորություն ևս: Աշխարհն իրոք պարող էր կոչվել Անգիտենե - Անձիտ և, երբ քաղաքական իրադարձությունների բերումով Անձիտ գավառը անջատվեց Անգիտենե կոչված աշխարհից, վերջինս ստացավ Աղձնիք անունը, որը և պահպանել է «Աշխարհացոյց»-ը:

Շատ հնարավոր է, որ վարչական վերակառուցումների դիմած Տրդատ Ա-ն Անձիտն անջատել է Ծովքից, քաղաքական շարժառիթներից ելնելով<sup>2</sup>, սակայն միաժամանակ պարզ է, որ այն բնաշխարհագրական և տնտեսական ամբողջություն է կազմում Ծովքի հետ, ուստի վաղ թե ուշ արջունիքը այն պետք է վարչականորեն կցեր Ծովքին: Սկզբնաղբյուրների քննությունը ենթադրել է տալիս, որ մեզ հետաքրքրող վարչա-քաղաքական փոփոխությունը կատարվեց, ամենայն հավանականությամբ, III դարում: Հնարավոր է, որ այն հայ թագավորների վարչական բարեփոխումների արդյունք էր, սակայն, մեր կար-

<sup>1</sup> Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, թիվ 3, էջ 118-119:

<sup>2</sup> Հռոմի կողմից Ծովքը Մեծ Հայքից անջատելու փորձերը և թերևս դրա հետևանքով այնտեղ տեղ գտած անջատողականության որոշ դրսևորումները պատճառ դարձան Ծովքի վարչական անդամահատման համար:

ծիքով, առավել հավանականն այն է, որ Արտավազդի խնամակալության շրջանում Մեծ Հայքի թագավորությունը ստիպված է լինում հայտնվելու Պարսկաստանի ազդեցության ոլորտում<sup>1</sup>: Տրդատ Բ-ի արտաքին ակտիվ քաղաքականության հետևանքն այն եղավ, որ Հայոց թագավորությունը ստիպված էր պարսիկներին զիջել աշխարհացույցյան Աղձնիք աշխարհի տարածքը հարակից շրջաններով: Անձիտ գավառը, որ մինչ այդ մտնում էր Անգիտենե - Աղձնիքի մեջ, մնաց Հայոց թագավորությանը և հայոց արջունիքի կողմից միացվեց Ծովք աշխարհին, իսկ Սասանյանները իրենց վերահսկողության տակ վերցրին Մելիտենեից եկող ու Անձիտով Աղձնիք մտնող կարևոր մայրուղին, որն այնուհետև մուտք էր գործում Ասորեստան:

Անձիտը, չնայած իր նշանակալից տարածքին, չէր կարող վերածվել առանձին աշխարհի, ուստի աշխարհագրական դիրքի տրամաբանությամբ և, մասնավորապես, լեռնագրության պարտադրած պայմաններով այն պետք է կցվեր ու կցվեց Ծովք աշխարհին: Անձիտի և այդ հեռավոր ժամանակներում նրա մաս կազմող Գավրեք գավառի Ծովքին միացումով, վերջինիս գավառների թիվը հասավ յոթի: Մենք դեռ այս հարցին մանրամասն կանդրադառնանք Աղձնիքի առնչությամբ, սակայն այժմ լոկ նշենք, որ հայկական կողմը, ստիպված լինելով տարածքային կորուստներ կրել, աշխատում էր բանակցությունների ընթացքում համառորեն պարսիկներից զիջումներ ստանալ լեռնանցքների հարցում: Հայոց արջունիքը Հայկական Տավրոսի լեռնանցքների շրջանում մերձակա արևահայաց լանջերը փորձում էր և, ինչպես կարելի է եզրակացնել «Աշխարհացոյց»-ի քննությունից, կարողացավ պահել իր վերահսկողության ներքո: Ծովքի խնդրում այս իրողությունը բացահայտվում է Հաշտեանք գավառի օրինակով, որը «Աշխարհացոյց»-ը հատկացնում է Ծովքին: Գավառը տարածվում էր Հայկական Տավրոսի և հյուսիսային և հարավային լանջերին, ընդգրկելով Զիբենե գետի վերին և Գինեկ գետի միջին ու ստորին հոսանքի շրջանը: Բնաշխարհագրական ու տնտեսական տեսակետից Զիբենե գետի վերին հոսանքի վերաբերելը Հաշտեանքին բնավ էլ պատճառաբանված չէ, ուստի նման կացությունը պետք է բացատրել քաղաքական պատմության ելևէջներով ու իրադարձություններով, տվյալ դեպքում կապված պարսկական տարածքային ձեռքբերումների հետ:

Պողոմեոսի Աստաունիտիսը, որի մասին մանրամասն կխոսվի Տավրուբերանի բաժնում, համապատասխանել է Տավրուբերան կամ Տուրուբերան աշխարհին՝ գոմարած Հաշտեանք գավառի տարածքը: Աղձնիքի կորստից հետո Հաշտեանք գավառի միացումը Ծովքին դարձավ վարչական անհրաժեշտու-

<sup>1</sup> Ա. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, տե՛ս ՊԲՀ, 1975, թիվ 3, էջ 152-154:

թյուն, պայմանավորված կառավարման հեշտացման խնդիրներով: **Հաշտե-անքը՝** ի տարբերություն այլ գավառների, սկզբնաղբյուրներում հաճախ հանդիպում է, ինչպես վերը նշել ենք, «**Հաշտենից կողմանք**» անունով, սակայն այդ հասկացությունը, ըստ մեծի մասին, ոչ թե վերաբերում է Հաշտեանք գավառին, այլ Աստաունիտիս-Հաշտեանք աշխարհին:

Արտավազդի, որին արևմտյան աղբյուրները թագավոր են կոչում, խնամակալության շրջանը երկար չտևեց: Վալերիանոս կայսեր գերումից և հռոմեական զորքի խայտառակ ջախջախումից հետո, երբ շրջակա թագավորությունները մեկը մյուսի ետևից շնորհավորում էին Շապուհ Ա պարսից արքայի մեծ հաղթանակը, Արտավազդը (հավանաբար՝ Արտավազդ Մանդակունին) իր անհանգստությունը հայտնեց գալիք իրադարձությունների առիթով, որի ժամանակ Պարսկաստանին զինական օժանդակություն ցույց տված Մեծ Հայքի թագավորությունը կարող էր պատերազմի թատերաբեմի վերածվել: Սասանյաններն, անկասկած, վաղուց ծրագրեր էին մտմտում Մեծ Հայքը Սասանյան արքայատոհմի երկրորդ թագավորության վերածելու ուղղությամբ և լոկ հարմար առիթ էին սպասում: Առիթը դարձավ Արտավազդի պատասխան նամակը, որին ի շարունակություն հետևեց պարսից թագաժառանգ Ռոմիզդ-Արտաշիռի գլխավորությամբ պարսից զորքերի ներխուժումը Հայաստան, որը ռազմակալվեց, իսկ Ռոմիզդ-Արտաշիռը բազմեց հայոց գահին «**Հայաստանի մեծ թագավոր**» տիտղոսով, սկիզբ դնելով Սասանյանների հարևանության ներկայացուցիչների գահակալությանը Հայաստանում: Այս ամենի հետևանքով Աղձնիքի տարածքը կրկին միացվեց Մեծ Հայքին, սակայն վարչական նախկին վիճակը այլևս չվերականգնվեց: Անձիտը շարունակեց մնալ Ծոփքի կազմում:

Հետագա քաղաքական իրադարձությունները տարածքային առումով Ծոփքին չանդրադարձան: 287թ. Տրդատ Գ-ն հաստատվեց իր նախնիների գահին, 293-ին Ներսեհից ստացավ վերջինիս վերահսկողության տակ գտնվող Մեծ Հայքի արևելյան մասը, զիջելով պարսիկներին իր հերթին Աղձնիքի տարածքը<sup>1</sup>: Հնարավոր է, որ մենք սխալվում ենք, սակայն հակված ենք կարծելու, որ Տրդատ Գ-ն 293 թ. հետո մինչև 295 թվականը ընկած շրջանում անցկացրեց աշխարհագիր, որի նյութերը մասամբ պահպանվել են «**Աշխարհացոյց**»-ում: Այնտեղ, Ծոփքի նկարագրության բաժնում ասվում է. «**Ծոփաց կողմն, յերի Բարձր Հայոց, Մելիտինե քաղաքաւ սահմանի ըստ մտից, եւ ըստ**

<sup>1</sup> Petrus Patricius, Fragm. 14 (Dindorfi Historici graeci minores, I, էջ 443): Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչա-քաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին, տե՛ս «Բանբեր երևանի համալսարանի», 1982, թիվ 2, էջ 82-83:

*հարառոյ՝ Միջագետտուք, եւ ըստ ելից Տարօնով*», իսկ այնուհետև նշում է, որ «**Արածանի խառնի յեփրատ ի քաղաքն Լուսաթառիճ եւ երթալով զմտիւք՝ ելանէ ի սահմանս Փոքր Հայոց, յելից Մելիտինե**»: Տեսականորեն այս կացությունը կարող է վերաբերել և Արտավազդի խնամակալության ժամանակաշրջանին և Տրդատի իշխանության տարիներին: Եթե, իհարկե, նկարագրության սկզբում Մելիտենեի՝ առանց Փոքր Հայքի, հիշատակությունը պատահական չէ կամ էլ գրիչի սխալի արտահայտություն, ապա այն պետք է վերաբերի III դարի կեսերին, երբ Մեծ Հայքից խլված էր Աղձնիքը, իսկ քանի որ այն վարչականորեն պետք է միացված լիներ պարսից Միջագետքին, ապա Ծոփքը հարավում իրոք սահմանակցում էր Միջագետքին: Սակայն, հնարավոր է, որ Փոքր Հայքի հիշատակության բացակայությունը պատահական է, որի դեպքում այն համահնչյուն է դառնում նկարագրության երկրորդ մասին, որտեղ Մելիտենեն հիշատակվում է որպես Փոքր Հայքի քաղաք: Նշված կացությունն իրոք վերաբերում է Տրդատ Գ-ի իշխանության 293-ից հետո ընկած առաջին տարիներին, երբ Աղձնիքի տարածքը նա զիջել էր Ներսեհ պարսից թագավորին: Հարկ է ավելացնել նաև, որ Մելիտենեն Փոքր Հայքի մեջ մտավ ու վերածվեց նրա կենտրոնի Դիոկլետիանոս կայսեր օրոք, երբ Կապադովկիայից անջատվեցին հայկական երկրամասերը և ստեղծվեց Փոքր Հայք պրովինցիան<sup>2</sup>: Այս կացությունը պահպանվեց մինչև Մծբինի 298 թ. 40-ամյա հաշտությունը, երբ ջախջախիչ պարտություն կրած Ներսեհը Անգեղոտունը, Մեծ Ծոփքը, Արձն-Աղձնիքը, Կորդուքը և Ծավդեքը ստիպված եղավ զիջել Հռոմին, որն էլ շատ չանցած դրանք զիջեց Մեծ Հայքի թագավորությանը<sup>3</sup>:

Ավատատիրական հարաբերությունների հաղթանակը Հայաստանում արմատապես փոխեց պետության վարչա-քաղաքական բաժանման սկզբունքները: Սակայն դատելով Ագաթանգեղոսի տվյալներից, չնայած երկրում տեղ գտած որոշակի փոփոխություններին ու շեղումներին, Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական-բաժանումը III դարի վերջին նշանակալից չափով, եթե չասենք ամբողջովին, պահպանվում էր: Պատահական չէ, որ հեղինակը թվարկելով Մեծ Հայքի մեծամեծներին, նրանցից 9-ին համարում է աշխարհների իշխաններ: Դրանք շարքում հիշատակվում է նաև Ծոփք աշխարհի իշխանը<sup>3</sup>: Սակայն Փավստոս Բուզանդի «Պատմութիւն»-ն ընդամենը մի քանի

<sup>1</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 86: տե՛ս նաև Ammianus Marcellinus, XIX, 8, 12: «Mellitnam Minoris Armeniae oppidum»; XX, 11, 4: «a Cappadocia per Mellitnam, Minoris Armeniae oppidum»:

<sup>2</sup> Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչա-քաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին, էջ 79-83:

<sup>3</sup> «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», § 795. «Եօթներորդ՝ իշխանս Ծոփաց աշխարհին»:

տասնամյակ անց Ծոփքում արձանագրում է **Շահունյաց Ծոփքի, Անձիտի և Հաշտեանքի** իշխանությունները<sup>1</sup>, որոնք գտնվում էին ժառանգատիրական իշխանության վերածման ճանապարհին, սակայն դեռևս համարվում էին արքունի տիրույթ: Անձիտը, ինչպես կարելի է կռահել Փավստոսի տվյալներից, որպես ձեռնական իշխանության երկիր տրվում էր հազարապետության գործակալությունը վարող Գնունիների իշխանական ընտանիքին<sup>2</sup>: Շահունյաց Ծոփքում հայոց Արշակ Գ թագավորը մտադիր էր պահել իր արքունիքի գանձերը<sup>3</sup>, որը վկայում է վերջինիս արքունի տիրույթ լինելու մասին, և, վերջապես, Հաշտեանքը արքունի սեպուխների տրված թագավորական կալվածք էր<sup>4</sup>, որը կառավարում էին, սովորաբար, **Կամինական** տոհմի իշխանները: Սոցիալական այսպիսի կացության մեջ գտնվող իշխանությունները շուտով փորձանք դարձան պետության համար, որովհետև հարևան երկրները և տվյալ դեպքում, մասնավորապես, Հռոմեական կայսրությունը գայթակղում էր վերջիններիս ժառանգատեր իշխանության վերածման խոստումներով: Դրանով պետք է բացատրել հայոց Արշակ Բ թագավորի դեմ ապստամբություն բարձրացրած հայ իշխանների մի մասի գործելակերպը: Այդ ժամանակ էր, որ պատմիչի հաղորդմամբ *«եթող զարքայն Հայոց և զնաց Սաղամուտ տերն Անձտեայ և ընդ նմա իշխանն Մեծի Ծոփաց և զնացին առ թագաւորն Յունաց»*<sup>5</sup>: Այս քաղաքականության արդյունքն էր Մեծ Հայքի հարավ-արևմուտքում ինքնավար կամ սատրապական իշխանությունների ձևավորումը: Դրանք վեցն էին կամ հինգը<sup>6</sup>, որոնցից չորսը գտնվում էին Ծոփքի տարածքում՝ **Անձիտ, Ծոփք (Շահունի), Բալահովիտ և Հաշտեանք**: Հարկ է նշել, որ դրանց ձևավորումը միաժամանակ տեղի չունեցավ: Սատրապությունների առաջին խումբը հանդես եկավ ոչ թե 298 թվից, երբ իբր հիշյալ երկրներն անցան Հռոմին, այլ Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո: Այդ թվականին հիշատակվում է *Gaddanae satrapae Sophanenaе*-ն<sup>7</sup>, սակայն պետք է

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 29. «ԳՎաղարշ, որ էր իշխան Անձտայ. և ընդ նմա... զՎարազ Շահունի իշխանն Ծոփաց աշխարհին, և զԳնիթ իշխան Հաշտեանից գառառին ի Կամինական տոհմեն»:

<sup>2</sup> Անդ, էջ 29, 66:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, էջ 314:

<sup>4</sup> Անդ, էջ 118, 137, 193, 282-283:

<sup>5</sup> Փավստոս Բուզանդ, էջ 160:

<sup>6</sup> Հուստինիանոս կայսեր Ջետա զորավարին ուղղված հրովարտական սատրապությունների կամ ազգությունների թիվը 6-ն է, իսկ 31-րդ նովելայում<sup>5</sup>, որտեղ բացակայում է Ինգելենե-Անգեղտուն անունը (Տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, էջ 299-304): Պրոկոպիոս Կեսարացին նույնպես դրանք քանակը համարում է 5 (էջ 190):

<sup>7</sup> Կ. Գուսեբյան, Հռոմեական Հայաստան եւ հռոմեական սատրապությունները Դ-Ջ դարերուն, Վիեննա, 1914, էջ 49:

ենթադրել, որ նույն ժամանակում սատրապության վերածվեցին նաև Անգեղտունն ու Անձիտը: Շահունյաց Ծոփքը այդ ժամանակ դեռևս Արշակ Գ-ի տիրույթներում էր, ուստի դժվար չէ ենթադրել, որ դրանից արևելք գտնվող Բալահովիտն ու Հաշտեանքը շարունակում էին դեռևս գտնվել Արևմտա-հայկական թագավորության մեջ: Ծոփքի տարածքում սատրապությունների երկրորդ խումբը ձևավորվեց, մեր կարծիքով, միայն 408 թվականից հետո, երբ Խոսրով Վերջինի կողմից վերամիավորված Մեծ Հայքի թագավորությունը կրկին մասնատվեց երկու մասի, երբ բյուզանդացիները Վուսմապուհ հայոց թագավորից ետ պահանջեցին 387 թ. պայմանագրով իրենց անցած հատվածը: Վերադարձնելով այդ հողերը, բյուզանդական արքունիքը սատրապության կացություն շնորհեց նաև **Սոֆենե-Շահունյաց Ծոփքին, Բալաբիտենե-Բալահովիտն և Աստիանենե-Հաշտեանքին**: Կայսրությունը հիշյալ իշխանություններում զորք չէր պահում և նրանց վրա էր դրել սահմանների պաշտպանության գործը: Սատրապները՝ ձևանաչելով Բյուզանդիայի գերագույն իշխանությունը, վայելում էին ներքին լիակատար անկախություն և կառավարվում տեղական օրենքներով<sup>1</sup>:

Վարչա-քաղաքական այս կացությունը Ծոփքում պահպանվեց մինչև Հուստինիանոս կայսեր վերափոխությունները, սակայն Ջետոն կայսեր դեմ 488թ. բռնկված ապստամբությանը մասնակցելու համար սատրապությունները, մնալով որպես իշխանություններ, բացառությամբ Բալահովիտի, զրկվեցին ժառանգատիրական իրավունքներից<sup>2</sup>: 528 թ. Հուստինիանոսը Ջետա զորավարին նշանակեց Հայաստանի, Պողեմոնյան Պոնտոսի և ազգությունների (սատրապությունների) զորքերի մագիստրոս, որով վերջ տրվեց սատրապությունների զինվորական ինքնուրույնությանը<sup>3</sup>: Մագիստրոսի ենթակայության տակ գտնվող դքսերից մեկի զորակայանը հաստատված էր Ծոփքի Հաշտեանք գավառի Կիթարիզոն կամ Կթառիճ ամրոցում<sup>4</sup>: 536 թ. իր 31-րդ նովելայով կայսրը սատրապական իշխանություններից կազմեց Չորրորդ Հայք պրովինցիան, որի մեջ մտան **Անձիտը, Ծոփքը, Մեծ Ծոփքը, Հաշտեանքը և Բալահովիտը**<sup>5</sup>: Դատելով այս տեղեկությունից, ինչպես նաև աշխարհագրական դիրքից, Անգեղտունը միացվել էր Սոֆանենե-Մեծ Ծոփքին: Չորրորդ Հայքը դասվեց **օրդինար** (սովորական) պրովինցիաների շարքը<sup>6</sup>:

<sup>1</sup> Անդ, էջ 51-56:

<sup>2</sup> Պրոկոպիոս Կեսարացի, էջ 191:

<sup>3</sup> Անդ, էջ 299: Տե՛ս «Հուստինիանոս կայսրը Ջետային՝ Հայաստանի, Պողեմոնյան Պոնտոսի և ազգությունների փառավորյալ զորավարին» փաստաթուղթը: Ջորավարի պաշտոնական տիտղոսն էր *Magister militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes*:

<sup>4</sup> Անդ, էջ 194:

<sup>5</sup> Անդ, էջ 304: Տե՛ս Հուստինիանոս կայսեր 31-րդ նովելան:

<sup>6</sup> Անդ, էջ 304-305:

591թ. Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի միջև, որից հետո Մավրիկիոս կայսրը վարչական վերաձևման ենթարկեց Բյուզանդական Հայաստանի տարածքը: Հուստինիանոսյան Չորրորդ Հայքի մի մասից, որին միավորվեցին **Ներքին Հայաստանի (Armenia Interior) Մուզուր, Պաղնատուն և Խորձեան** գավառները, կազմվեց **Մյուս Չորրորդ Հայք** պրովինցիան կամ եկեղեցական-դավանաբանական առումով **Եպարքիան**, իսկ **Անգեղտուն և Մեծ Ծոփք** գավառները 591թ. Բյուզանդիային անցած Արգանենե երկրամասի հետ միասին միացվեցին **Մեսոպոտամիա** կամ **Միջագետք** պրովինցիային<sup>1</sup>, որը նույնպես Չորրորդ Հայք երկրորդ անվանումը ստացավ<sup>2</sup>: Ծոփքի տարածքում ձևավորված Չորրորդ Հայքը միայն մեկ տարբերությամբ լիովին համընկնում է «Աշխարհացոյց»-ի Ծոփաց աշխարհին, որը և ուսումնասիրողներին մտածել է տվել, թե այն էլ ընկած է աշխարհացոյցյան **Ծոփք-Չորրորդ Հայքի** նկարագրության հիմքում<sup>3</sup>: Եթե այդ համապատասխանում է իրականությանը, ապա «Աշխարհացոյց»-ը կարող էր հանդես գալ միայն Մավրիկիոսի վարչական վերափոխություններից հետո: Նման վիճակը ոչ միայն չի համապատասխանում «Աշխարհացոյց»-ի ներքին տրամաբանությանը, քանի որ նման դեպքում հայկական փաստաթղթում պետք է տեղ գտնեին նաև **Խորագույն Հայք, Մեծ Հայք** և այլ անվանումներ, այլև ծնում է տեղին մի շարք հարցեր, թե ինչո՞ւ Մավրիկիոսի Չորրորդ Հայքը և աշխարհացոյցյան **Ծոփք-Չորրորդ Հայքը** տարածքով և գավառական բաժանմամբ լրիվ չեն համընկնում, թե ինչո՞ւ **Ծոփքի Խորձեան, Հաշտեանք, Պաղնատուն, Բալահովիտ, Ծոփք, Անձիտ, Դեգիք և Գավրեք** գավառների դիմաց այն ունի 9 գավառ՝ **Սոֆենե, Անգիտենե, Դիգեսինե, Գարինե, Բիլաբենինե, Պալինե, Օրգիանենե, Աստիանիկե և Մուզուրոն**, թե ինչո՞ւ **Մուզուր-Մուզուրոնը** «Աշխարհացոյց»-ում հայտնվել է Բարձր Հայքի նկարագրության մեջ և այլն: Ի տարբերություն ձանաչված հայագետների, մեր բացատրությունը միանգամայն այլ հիմքեր ունի: Նմանությունն, իրոք, պատահական չէ, սակայն ոչ թե Մավրիկիոսի վարչական վերափոխություններն են ընկած «Աշխարհացոյց»-ի հիմքում, այլ Մեծ Հայքի հին վարչական բաժանումները: Բյուզանդական իշխանությունները, լավագույն դեպքում պարզապես վերակենդանացնում էին հին հայկական վարչական միավորները և ընդհանրապես վարչական բաժանման համակարգը, շատ դեպքերում փո-

խելով դրանց անվանումները: Հայաստանի լեռնային մակերևույթը, անկախ թե ինչ պետություն գոյություն ունի նրա տարածքում, պարտադրում է վարչական բաժանման որոշակի համակարգ, որի հիմքում ընկած են բնաշխարհագրական և տնտեսական ամբողջական տարածք կազմելու սկզբունքները: Հարկ է նշել, որ այդ տեսակետից Մեծ Հայքի Ծոփք աշխարհը մի թերություն ունի: Հիշյալ սկզբունքներից ելնելով, վերջինիս կազմում պետք է գտնվեր նաև Մուզուրը, որն ավելի շատ կապված է նրա, քան թե Բարձր Հայքի հետ և գտնվում է Մուզուր լեռների ոչ թե հյուսիսային, այլ հարավային ծոփահայաց լանջերին: Նման վիճակը, որ «Աշխարհացոյց»-ում էլի բազմաթիվ դրսևորումներ ունի, ծնունդ է առել երկրի բնականոն սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հետևանքով, որն իր «ճշգրտումներն» է մտցրել նախնական վարչական բաժանման մեջ: Այդ բանը չէր կարող չնկատել Մավրիկիոսը, որը հիմք ընդունելով իրեն հասած վարչական բաժանման տեղեկությունները, անհրաժեշտության դեպքում դրա մեջ որոշ փոփոխություններ էր մտցնում: Սակայն «Աշխարհացոյց»-ի Ծոփքի և Մավրիկիոսի Չորրորդ Հայքի գրեթե լիակատար նմանությունը անհետևանք չանցավ: «Աշխարհացոյց»-ի խմբագիրները փորձեցին հավասարության նշան դնել Չորրորդ Հայքի և Ծոփքի միջև<sup>1</sup>, որի հետևանքով պաշտոնական տարածում ստացած վարչական անունը աստիճանաբար դուրս մղեց հայկական փաստաթղթից Ծոփք անունը: Այդ մասնավորապես վառ ձևով դրսևորվեց «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերում, որտեղ որպես կանոն հանդիպում է Չորրորդ Հայք անվանումը<sup>2</sup>: Ահա այսպիսին է մեզ պատկերանում Ծոփք աշխարհի վարչական ձևավորման պատմությունը, համաձայն մեր ուսումնասիրությունների:

<sup>1</sup> Georgii Cyprii Descriptio orbis Romani, էջ 46-49: Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68:

<sup>2</sup> Անդ, էջ 46. "Επαρχία Μεσοποταμίας ἀνω ἤτοι Ἰ. Ἀρμενίας. "Ἄμδα μνηρόπολις":

<sup>3</sup> Լ. Զրուբանյան, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 205: Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 234-235: У.С. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 24:

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացուր», էջ 30. «Բ. Աշխարհ. Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն»: Այդ մասին վերը նշվել է:

<sup>2</sup> Տե՛ս Մատենադարանի «Աշխարհացոյց»-ի ձեռագրերը:

## ԳՆՈՒՄ Գ

## ԱՂՁՆԻՔ

Հայաստանի պատմության մեջ փոքրաթիվ են այն աշխարհները, որոնք մայրաքաղաք են պարգևել երկրին: Եթե Տիգրանակերտի ցայսօր քաղաքացիությունն ստացած տեղադրությունը, որ կատարել են գերմանացի գիտնականներ Լեհման Հաուպտը և Վալդեման Բելքը, ճիշտ է, ապա այդ փոքրաթիվների մեջ իր որոշակի տեղն ունի Մեծ Հայքի Աղձնիք աշխարհը: Եթե անգամ կասկածի տակ դրվի ճանաչում ստացած տեղադրությունը, ապա պարզ է մի իրողություն, որ Տիգրանակերտը գտնվել է Աղձնիք-Արզանենոս: «Աշխարհացոյց»-ի տվյալներով այն հարավից եզերվում էր Արևմտյան Տիգրիսով, նահանգի հարավային հատվածը իրենից ներկայացնում էր արգասաբեր դաշտերի ու բլրաշարքերի շրջան, իսկ հյուսիսայինը՝ բարձրաբերձ անտառապատ լեռների ու ալպյան մարգագետինների երկրամաս: Հայոց Տիգրան Մեծ արքայի սրատես աչքը նկատեց Աղձնիքի կարևոր, գրեթե կենտրոնական դիրքը նոր ստեղծված ընդարձակածավալ պետության մեջ և նվաճված երկրները բուն երկրին ամուր կապելու նպատակով կառուցեց իր նոր մայրաքաղաքը Մեծ Հայքի թագավորության ամենահարավային այս նահանգում: Եթե Տիգրան Մեծի տերությունը հարատևեր, ապա Տիգրանակերտին վիճակված կլիներ փառաշուք ապագա, սակայն արտաքին հարվածների ներքո այն փլուզվեց և պատմությունը այլ կերպ տնօրինեց Տիգրանակերտի ճակատագիրը: Կարճ ժամանակում վերածվելով մի քանի հարյուր հազար բնակիչ ունեցող քաղաքի, Տիգրան Մեծի մայրաքաղաքը նույն արագությամբ էլ մարդաթափ եղավ, վերածվելով փոքր բնակավայրի, որը պատմիչները շատ հաճախ գյուղ են կոչում: Ծնունդ առնելով որպես հիմնականում օտարազգի բնակչություն ունեցող քաղաք և հայ-հռոմեական պատերազմների հետևանքով կորցնելով եկամուտ բնակիչներին, Տիգրանակերտը հետագայում կրկին բարձրացավ հայ բնակչության կողմից քաղաքը շենացնելու շնորհիվ և վերածվեց Մեծ Հայքի կարևորագույն քաղաքի: Հայոց հինավուրց մայրաքաղաքը մահացու հարված ստացավ Դ դարում, երբ պարսից Շապուհ Բ արքան, ինչպես վկայում է Փավստոս Բուզանդը, բռնագաղթեցրեց քաղաքի 40000 երդ բնակչությանը<sup>1</sup>: Թերևս չափազանցություն է պատմիչի կողմից քաղաքում շուրջ 200000 բնա-

կիչ տեսնելը, սակայն անտարակույս է, որ Տիգրանակերտը Դ դարում մարդաշատ քաղաք էր: Հետաքրքիր է մի իրողություն ևս: Պատմիչը, հիշատակելով Մեծ Հայքի մյուս քաղաքների բնակչությանը բռնագաղթեցնելու մասին, որպես կանոն հիշատակում է եկամուտ հրեաներին և կամ, որ նույնն է, հրեադավան այլազգիներին: Տիգրանակերտի առնչությամբ Փավստոսը նմանօրինակ տեղեկություններ չի հաղորդում, որը, մեր կարծիքով, վկայում է քաղաքի, ըստ էության, զուտ հայկական բնակչության մասին: Աղձնյաց լեռնային գավառների՝ Սանասունքի կամ Սասունի և Խուլթի բնակիչները կարևոր դեր են խաղացել հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ և հարստացրել հայ մշակույթը «Սասունցի Դավիթ» դյուցազներգությամբ:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը Աղձնիք աշխարհի վերաբերյալ պահպանել է ներքոհիշյալ նկարագրությունը. «Գ. Աշխարհ Աղձնիք յեկից կայ Միջագետաց, եւ հիւսիսեաւ առ Դիղաթով. ունի գաւառս տասն. զԿիռոս<sup>1</sup>, զԱղձն, ընդ որոց մէջն իջանէ գետն Քաղիթ, զոր Շիրմա<sup>2</sup> կոչեն Տաճիկք, այսինքն՝ արիւնարբու. յետ որոյ Քաղ գաւառ, եւ ի լերինն ունի զԿեթիկ, զՏաթիկ, զԱզնուաց ձոր, զԵրիտթս, [զԳզեղիս]<sup>3</sup>, զՍալաձոր, զՍանասուն. ունի երկաթ քաջ, եւ գլթոր եւ ի հաւուց՝ դեհուկ»<sup>4</sup>:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը առանձնապես նոր նյութ չի տալիս, սակայն, քննության շահեկանությունից ելնելով, բերում ենք նաև վերջինիս նկարագրությունը. «Երրորդ Աղձնիս առ Տիգրիս գետով կայ. եւ գաւառս ունի տասն. զԱրզն, զԿիրկերտ, զՔեղ, զԿեթիկ, զՏաթիկ, Սազու, Վանաց ձոր, զԿերիտթս, զԳզեղ, զՍալնոյ ձոր, զՍանասուն: Ունի նալթ եւ երկաթ առաւել եւ գլթոր, եւ հաւ՝ զդեզհուկ»<sup>5</sup>: Չանդրադառնալով գավառանուններին, որոնք ստորև մանրամասն կքննարկվեն, նշենք, որ ի տարբերություն ընդարձակ խմբագրության, Աղձն գավառը, որը հիշատակվում է Արզն գրությամբ, հայտնվել է գավառացանկի սկզբնամասում, խիստ աղավաղվել է «Ազնուաց ձոր» գավառի անունը, աշխարհի հարստությունների մեջ ավելացվել է նավթը՝ ճշտված ձևով տրված է «Դեզհուկ» թռչունի անունը:

<sup>1</sup> Անուն «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ հանդիպում է Կիրկերտ գրությամբ:

<sup>2</sup> Ս. Երեմյանը «Շիրմա»-ն սրբագրում է «Շիրիթմա», հենվելով Միջագետք աշխարհի նկարագրության վրա (Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 89):

<sup>3</sup> Գավառանունը պահպանել է միայն «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը:

<sup>4</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելոածովք նախնեաց», էջ 30-31:

<sup>5</sup> Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 348-349: Տե՛ս նաև Կ.Պ. Սարգսյան, Արմյանսկայա Գեոգրաֆիա VII Երկրի, էջ 18: Այս իրատարակության մեջ ճիշտ է տրված «Ազնուաց ձոր» գավառի անունը (Ազնուաց ձոր), իսկ «Սանասուն»-ի անունը հիշված է «զՍանասուն» ձևով:

<sup>1</sup> Փավստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, էջ 142:

Հիշյալ նկարագրությունների համեմատությունը կարծես վկայում է «Աշխարհացոյց»-ի VII դարի փաստաթուղթ լինելու մասին, քանի որ ըստ ընդարձակ խմբագրության արաբները կամ տաճիկները Քաղիթթ գետը կոչում էին Շիթմա կամ Շիթթմա: Սակայն իրականում սկզբնապես «գոր Շիթմա կոչեն Տաճիկք, աթինքն՝ արիւնարթու» արտահայտությունը բնագրում չի եղել և ավելացվել է հետագա խմբագրողների կողմից, երբ արաբները արշավում էին կամ էլ արդեն նվաճել էին Հայաստանը: Բնավ էլ պատահական չէ, որ համառոտ խմբագրությունը ոչինչ չի հայտնում այդ մասին:

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի համադրությունը <sup>1</sup> մեզ է տալիս աշխարհի գավառանունների հետևյալ պատկերը.

Տարընթերցումներ		Ուղիղ ձևը
Արզըն, Արզն, Ազըն, Արզուն, Արզանն, Արդն, Արդնի, Արզին, Արդուն	}	Արզն, Արձն, Աղձն (ընդ.խմբ.) <sup>2</sup>
Լընփոերտ, Լփրկերտ, Անփառներտ, Լփըրկետ, Լափրկերտ, Լփոետ		Լփրկերտ, Լփոետ (ընդ. խմբ.) <sup>3</sup>
Քիլ, Քեղ, Քիղ, Քեղ, Բքեղ, Քաղ	}	Քեղ, Քիլ, Քիղ Քաղ (ընդ.խմբ.) <sup>4</sup>
Կեղթիկ, Կեթիկ, Գեթիք, Կեթեկ, Քիթիկ, Դեղդիկ, Կեթիկ, Կեթեկ, Դեշտիկ		Կեթիկ <sup>5</sup>

<sup>1</sup> Մատենադարանի թիվ 582, 696, 1267, 1459, 1482, 1486, 1518, 1717, 1770, 1864, 1883, 1898, 2019, 2191, 2291, 2370, 2748, 3160, 3502, 3691, 3941, 4284, 5120, 5613, 7993, 9702:

<sup>2</sup> Մատենադարանի թիվ 5613 ձեռագրում Արզունից առաջ հիշվում են Աղերտ, Շերանք գավառանունները, որոնք անկասկած ուշ շրջանի ընդմիջարկություն են: Թիվ 1717-ում Արզունը տրված է Արզուն աղավաղված գրությամբ, որտեղ «զ»-ն և «ղ»-ն շփոթված են, իսկ դրանից առաջ գրված են Աղերտ և Շերվանք գավառանունները:

<sup>3</sup> Մատենադարանի թիվ 5613 ձեռագրում Լփրկերտից առաջ գրված է Քիլ, թիվ 2291-ում Լփրկերտը նույնացված է տողատակում Մուֆարդինին, թիվ 9702-ում Լփրկերտից հետո փակագծերում տրված է Մուֆարդին անունը: Անշուշտ այն ուշ շրջանի ընդմիջարկություն է, սակայն հավաստում է Լփոետ-Լփրկերտի և Մուֆարդինի նույնությունը:

<sup>4</sup> Մատենադարանի թիվ 5613 ձեռագրում Քիլը հիշվում է երկու անգամ Լփրկերտից առաջ և Լփրկերտին հաջորդող Մանասունից հետո, ըստ որում երկրորդ անգամ նույնացվում է Բոլնաթոյի հետ (Քիլ որ է Բոլնաթո): Նույն ձևով է նաև թիվ 1717-ում. «զՔիլ որ է փ Բոլնաթո»:

<sup>5</sup> Թիվ 5613 ձեռագրում հիշվում է «Դեղդիկ որ է Տեղզնի» ձևով, իսկ թիվ 1717-ում՝ «զԴեշտիկ որ է Տեղզնի»:

Տատիկ, Տասիկ

} Տատիկ <sup>1</sup>

Սազու Վանաց ձոր, Ազնուաձոր, Ազնուաց ձոր, Ազնուաձոր, Սալնուանոս, Սանաաց ձոր, Սազոյ վանաց ձոր, Ազնուաձորն, Սազնավազ ձոր, Ազնուաձոր

} Ազնուաց ձոր <sup>2</sup>

Խերիեթս, Երիեթ, Խերխեթս, Խերիեթ, Սերխեթս, Սերխեթըս, Խերիեթ, Խերիեթս, [ը]զ[խ]երիեթս

} Խերխեթք, Սերխեթք <sup>3</sup>

Գզեղ, Գզեղ, Գեղել, Գեղ, Գեզեղ, Գզեխ, Գեխ, Գըզեղ

} Գզեղ? Գզեղխ <sup>4</sup>

Սալնո ձոր, Սանոյ ձոր, Սալնոյ ձոր, Սասնոյ ձոր, Սալուաձոր, Սալնաձոր, Սանոաձոր, Ալնուաձոր, Ալուաձոր, Սանո ձոր, Սանոաձորն

} Սալնոյ ձոր <sup>5</sup>  
Սալնոաձոր

Սասուն, Սանասուն, Սասունս, Սասունք

} Սանասունք <sup>6</sup>  
Սասունք

Աղձնիքի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է պահպանել Միջագետք աշխարհի նկարագրությունը. «Եւ Տիգրիս երթալով ընդ հարաւ՝ պատահէ լերինն, եւ ի հարաւոյ ի դառնալ յարեւելս կոյս՝ բաժանել ի Միջագետաց, թողու զհիւսիսեաւ զԱղձնիս Հայոց, որ է Արձն, յորում քաղաք Կուտեմճան, որ է Քըղմար, եւ Քիշ եւ Շուկառաք. եւ ամենայն քամ ի լերանց Հայոց ի Դկլաթ»

<sup>1</sup> Թիվ 5613 և 1717 ձեռագրերում Տատիկը «Տատտիկ» և «Ատատիկ» գրությամբ հիշվում է Գզեղից հետո:

<sup>2</sup> Թիվ 5613-ում Ազնուաց ձորը տրվում է «Սազոյ վանաց ձոր» ձևով և նույնացվում է «Քընսուր»-ին:

<sup>3</sup> Թիվ 5613 և 1717 ձեռագրերում Խերխեթքը Սալնոյ ձորից հետո է և նույնացված «Կալալ հուսկն» գավառին:

<sup>4</sup> Չնայած «Աշխարհացոյց»-ի ձեռագրերը գավառանունը հիշատակում են Գզեղ կամ Գզեխ գրությամբ, գավառի անվանման ճիշտ ձևը պետք է լինի Գզեղխ:

<sup>5</sup> Մատենադարանի թիվ 5613 և 1717 ձեռագրերում գավառի մասին ասված է. «զՍալնոյ ձոր որ է Դեշ»: Ըստ որում գավառանունը դրված է Խերխեթքից առաջ:

<sup>6</sup> Մատենադարանի թիվ 2370 և 4284 ձեռագրերում Սասունը հիշվում է Սերխեթքից առաջ, թիվ 5613-ում և 1717-ում՝ Լփրկերտից հետո:



իջանէ. նախ Քաղիթթ, որ բղխէ ի լերանց Սալնայ եւ Սանասնոյ. եւ իջեալ կտրէ յիրերաց գւհրկերտ եւ Քղիմար, որով բաժանեցան Հոռոմք եւ Պարսիկք, եւ կոչի այժմ Շիթիթմա, որ է արիւնարբու»<sup>1</sup>: Այս տվյալները հնարավորութիւն են տալիս կատարելու մի քանի կարևոր եզրակացություններ: Ամենից առաջ հստակ է, որ «Աշխարհացոյց»-ի այս հատվածը արտացոլում է Մեծ Հայքի առաջին՝ 387թ. բաժանումից հետո ստեղծված քաղաքական կացությունը: Աղձնիքը դիտվում է որպես Միջագետքից հյուսիս տեղակայված հայկական երկրամաս, որի հարավային սահմանը Տիգրիս գետն է: «Որ է Արձն» արտահայտությունը, ամենայն հավանականությամբ, բնագիր է մուծվել ավելի ուշ, երբ անհրաժեշտություն է զգացվել այլևս գոյություն չունեցող վարչական միավորը տեղագրել վերջինիս արևելյան իշխանանիստ գավառով, որը մտել էր Սասանյան Պարսկաստանի տիրույթների մեջ: Բնավ էլ պատահական չէ, որ հիշատակված Կոտեմնան կամ Քղիմար, Քիշ և Շուկառաբա քաղաքները գտնվել են հիշյալ Արձն գավառում: Համաձայն «Աշխարհացոյց»-ի, հռոմեացիների և պարսիկների միջև սահմանային գետ հանդիսացած Քաղիթթ իրարից բաժանել է Նփրկերտ և Քղիմար քաղաքները, այլ խոսքով, Նփրկերտը, ինչպես ցույց է տալիս Աղձնիքի բուն նկարագրությունը, վերաբերում է Նփռետ կամ Նփրկերտ գավառին, իսկ Քղիմարը՝ Արձնին: Քաղիթթ գետին վերաբերող «եւ կոչի այժմ Շիթիթմա, որ է արիւնարբու» արտահայտությունը, անտարակույս, նախասկզբնական բնագրին չի վերաբերում և արաբական տիրապետության կամ թերևս արաբական արշավանքների շրջանի ընդմիջարկություն է: Խնդիրն այն է, որ «Քաղիթթ... որով բաժանեցան Հոռոմք և Պարսիկք» տեղեկությունը, ծայրահեղ դեպքում, կարող էր հանդես գալ մինչև 591 թ. Հայաստանի երկրորդ բաժանումը, իսկ ընդմիջարկողը պարզ գրում է, որ իր օրերում են տաճիկները այն կոչում Շիթիթմա կամ արյունարբու: Հետևաբար վերջինս կարող է ծնունդ առնել կամ արաբական արշավանքների կամ էլ արաբական տիրապետության հաստատման շրջանում:

Աղձնիք աշխարհի գավառների տեղադրությունը, ըստ մեծի մասին, հայտնի է, սակայն պետք է խոստովանել, որ լեռնային մի քանի գավառների տեղադրությունը մինչև այսօր էլ վիճաբանությունների տեղիք է տալիս: Դ Խնճիճյանը իր աշխատությունների մեջ ուղղակի կամ անուղղակի անդրադառնում է Արձն, Սանասունք, Խույք, Տարիկ, Խերխեթ (իմա՝ Սղերդ), Սալնոձոր (իմա՝ Բաղեշի ձոր) գավառների տեղադրությանը<sup>2</sup>:

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ», էջ 37-38:

<sup>2</sup> Դ Խնճիճյան, Ատորագրութիւն Հին Հայաստանեայց, էջ 67-74: Դ Խնճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, Ասիա, հատոր Ա, (Նոր Հայաստան), էջ 180, 222, 231 և այլն:

Ավելի ուշ Դ Ալիշանը իր «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատության մեջ փորձել է որոշակի կամ թեականորեն տեղադրել Աղձնիքի բոլոր գավառները, ըստ որի Արձնը կամ Արզնը համապատասխանել է Խարզանին, Նփրկերտը՝ Մուփարդինին, Քեղը՝ Խարզանին և Խզուփն, Խերխեթք-Մերխեթքը՝ Սղերդին, Գզեղսը՝ Խիզանին, Սալնաձորը՝ Բաղեշին, Սանասունը՝ Սասունին, իսկ Տափկը, Ազնուաձորը և Կեթիկը՝ թեականորեն համապատասխանաբար Դատվանին, Սուսանին և Դիարբեքիին<sup>1</sup>: Հետաքրքիր տեղադրություններ կան Հ. Հյուբշմանի և Ս. Երեմյանի աշխատություններում<sup>2</sup>, որոնց կանդադառնանք անմիջականորեն գավառների տեղադրության հետ կապված: Մեր քննության արդյունքները որոշ դեպքերում էապես տարբերվում են նախորդ ուսումնասիրողների տեսակետներից, ուստի հարցիս քննությունը ստիպված ենք կատարել քաղաքական պատմության ընդհանուր հենքի վրա:

Մի կողմ թողնելով Աղձնիք աշխարհի ձևավորման խնդիրը, որին կանդադառնանք շարադրանքի վերջում, նշենք, որ ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով Գ դարի վերջին Աղձնիք աշխարհը որպես վարչա-քաղաքական միավոր դադարել է գոյություն ունենալուց, ծնունդ տալով ինքնուրույն մի քանի վարչական միավորների: Վարչական այս նոր իրողությունը մեր առջև ծառանում է՝ կապված պարսկա-հռոմեական մըրցակցության հերթական փուլի հետ:

297 թվին Մեծ Հայքի Բասեն գավառում հռոմեա-հայկական զորքերը Գալերիոս Մաքսիմիանոսի գլխավորությամբ ծանր պարտության մատնեցին պարսկական բանակին: Դաշնակից զորքերը կողոպտեցին պարսից բանակատեղին, գերեցին բազմաթիվ պարսից մեծամեծերի և պարսից արքայից արքաներսեհի կանանցը՝ տիկնանց տիկնոջ հետ միասին: Այդ ծանր պարտությունից հետո պարսից արքան հաշտության խնդրանքով դիմեց Դիոկղետիանոս կայսերը և խիստ ծանր պայմաններով 298 թվին կնքեց Մծբնի 40-ամյա խաղաղության պայմանագիրը<sup>3</sup>: Վերոհիշյալ վավերաթղթի մասին համեմատաբար ամբողջական տեղեկությունները պահպանվել են VI դարի բյուզանդական պատմագիր Պետրոս Պատրիկիոսի պատմական երկի՝ մեզ հասած սակավաթիվ հատվածներից մեկում, որտեղ ասված է. «Արդ՝ դեսպանության առա-

<sup>1</sup> Դ Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23:

<sup>2</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 159-179: Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 31, 33, 47, 51, 73, 79, 85, 89:

<sup>3</sup> Aurell Victoris, Liber de Caesaribus, rec. F. Pichlmayr, Lipsiae, 1911, XXXIX, 33-37. Eutropii Breviarium historiae Romanae, rec. Fr. Rühl, Lipsiae, 1897, IX, 24-25: Ruffi Festi (Sexti), Breviarium rerum gestarum populi Romani, ed. Förster, 1874, XIV, 25. Petrus Patricius, Fragm. 14 (Dindorfi Historici graeci minores, I, էջ 443). Փաստորոշի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, էջ 54-58: Կ. Գյուտերբոգ, Հռովմեական Հայաստան և Հռովմեական սատրապութիւնները Դ-Ջ դարերուն, թարգմ. Մ. Նորշոանի, Կիեւնա, 1914, էջ 7-8:

ջադրած գլխավոր կետերը հետևյալներն էին. արևելյան երկրամասում հռոմեացիներին են պատկանելու Անգեղտունը, Ծոփքը և Աղձնիքը (իմա՝ Արձնը - Շ.Բ.) Կորդուքի և Ծավդեքի հետ միասին. Հայաստանի սահմանը լինելու է Զինթա ամրոցը, որ գտնվում է Մարաստանի սահմանում. Կիրքի թագավորը իր թագավորական նշանները պետք է ստանա հռոմեացիներից<sup>1</sup>: Հռուփոս Փետտոսի տեղեկությունները Մծբնի պայմանագրի մասին խիստ ընդհանուր են և անորոշ. «Եւ նրանք (պարսիկները - Շ.Բ.) վերադարձրին Միջագետքը հինգ Անդրտիգրիսյան նահանգների հետ միասին: Խաղաղություն կնքվեց և ի նպաստ կայսրության հարատևեց մինչև մեր օրերը»<sup>2</sup>: Դժվար չէ սույն տեղեկություններից եզրակացնել, որ Մեծ Հայքի թագավորությունը, ընկնելով հանդերձ Հռոմի քաղաքական ազդեցության ներքո, de jure ճանաչվեց անկախ պետություն, վերականգնվեց նրա տարածքային ամբողջականությունը, իսկ Ատրպատական-Մարաստանի կողմից հայկական թագավորության սահմանը ընդարձակվեց մինչև Զինթա ամրոցը պարսկական տիրույթների հաշվին: Միաժամանակ Հռոմեական կայսրությանն անցան Մեծ Հայքի թագավորության անկապտելի մաս հանդիսացող անդրտիգրիսյան հինգ վերոհիշյալ երկրները և Միջագետքը<sup>3</sup>:

Սույն տեղեկությունները, որ անշուշտ համապատասխանում են պատմական իրականությանը, առաջին հայացքից կարծես թե հակասում են հայկական սկզբնաղբյուրների հաղորդած վկայություններին, քանի որ Անգեղտունը, Ծոփքը, Աղձնիքը (իմա՝ Արձնը), Կորդուքը և Ծավդեքը ողջ IV դարի ընթացքում հանդես են գալիս Արշակունյաց Հայաստանի կազմում, որպես նրա բաղկացուցիչ մասեր: Պատահական չէ, որ ընդունելով հանդերձ անդրտիգրիսյան հինգ երկրամասերի անցումը Հռոմեական կայսրությանը, Շ. Մանանդյանը գրել է. «Անդրտիգրիսյան վերոհիշյալ երկրները՝ Ծոփքը, Անգեղ տունը, Աղձնիքը, Մոկքը, Կորդուքը, Ծավդեքը և Ռեիմենան<sup>4</sup>, որ հռոմեական աղբյուրներում անվանվում են նաև սատրապություններ, թեև կախում ունեին Հռոմից, սակայն իրավական իրենց դրությամբ փաստորեն կիսանկախ դաշնակից

<sup>1</sup> *Patrus Patricius, Fragm. 14:* ..... Ἰγγλιϋνίϋν μετὰ Σοφηνῆς καὶ Ἀρζανηνῆν μετὰ Καρδοουϋνῶν καὶ Ζαβδακηνῆς...

<sup>2</sup> *Rufus Festus, Breviarium, XXV:*

<sup>3</sup> Ուշադրության արժանի հանգամանք է անշուշտ այն, որ Պետրոս Պատրիկիոսը պայմանների մեջ չի հիշատակում Միջագետքի՝ Հռոմեական կայսրության անցումը: Ելնելով Հռուփոս Փետտոսի տեղեկությունից կարելի է ենթադրել, որ Միջագետքն իրոք անցել է կայսրությանը, սակայն որպես նախկինում Հռոմին պատկանած տարածք այն հատուկ քննարկման առարկա չի դարձել հռոմեացիների և պարսիկների բանակցությունների ժամանակ անվերապահորեն վերադարձվել է կայսրությանը, ուստի և տեղ չի գտել Պետրոս Պատրիկիոսի նկարագրության մեջ:

<sup>4</sup> Շ. Մանանդյանը, ինչպես և նրանից էլ առաջ Կ. Գյուլբերգը (տե՛ս Կ. Գյուլբերգ, Հռովմեական Հայաստան և Հռովմեական սատրապությունները Դ-Ջ դարերուն (էջ 7-8) և Ն. Արոնց (տե՛ս Н. Адомц, Армения в эпоху Юстиниана, էջ 43) կարծում էին, որ Մոկքը և Ռեիմենան (Ռեիմենա) տարածքային իմաստով մտել են վերոհիշյալ հինգ երկրամասերի մեջ:

երկրներ էին, որոնց մեջ շարունակում էին իշխել նախարարական հին տոհմերը: Ուշագրավ է նաև, որ սույն այս երկրները, ինչպես երևում է հայկական աղբյուրների վկայություններից, լինելով քաղաքականապես գրեթե անկախ իշխանություններ, 298 թվից հետո և, իբրև նախարարություններ ու բղջխություններ, սերտ կապված էին մնում Մեծ Հայաստանի հետ, և, ըստ երեկույթին, որոշ չափով գտնվում էին նաև Հայ Արշակունիների գերիշխանության տակ<sup>1</sup>: Անվանի հայագետի նման հայեցակետը, ըստ էության, փորձ էր հաշտեցնելու հուևա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունները: Սակայն, ընդունելով հիշյալ տեսակետի ճշմարտացիությունը, ստիպված կլինենք եզրակացնել, որ վերոհիշյալ նահանգները ունեցել են երկակի status, որի գոյությունը հազիվ թե կարելի լինի ապացուցել այլ նմանօրինակ դեպքերով: Հայտնի է, որ քաղաքական այդպիսի կացություն ստեղծվել էր ուշ միջնադարյան էլզասում, որի մի քանի շրջաններ հանդիսանալով ֆրանսիական թագավորության տիրույթ, շարունակում էին համարվել de jure Գերմանական ազգի Հռոմեական Սրբազան կայսրության տարածք: Մեր ուսումնասիրություններն այդ ուղղությամբ ցույց են տալիս, որ Հայաստանում այդ դարաշրջանում համանման իրավական կացության գոյություն չի ունեցել: Հռոմեական կայսրությունը, տեր դառնալով այս կամ այն երկրամասին, հետևողականորեն աշխատում էր այնտեղ կիրառել իր երկաթյա քաղաքականությունը և այն արմատապես կապել կայսրությանը:

Ս. Երեմյանը, քննության առնելով հայկական և օտար սկզբնաղբյուրները, հանգում է մի ուշագրավ եզրակացության, ըստ որի վերոհիշյալ անդրտիգրիսյան հինգ երկրները ոչ թե միացվել են կայսրությանը, այլ ռազմակալվել նրա կողմից ռազմաստրատեգիական նկատառումներով<sup>2</sup>: Սակայն այդ եզրակացությունն էլ, ցավոք, հակասում է սկզբնաղբյուրների տեղեկություններին:

Մեծ կարծիքով, այս հարցը միանգամայն նոր լուսաբանություն կստանա, եթե դիմենք Ավրելիոս Վիկտորի տեղեկություններին. «Վերջապես նա (Գալերիոս Մաքսիմիանոսը - Շ.Բ.) այնտեղ (Հայաստանում - Շ.Բ.) իրեն հնազանդեցրեց ներսեի թագավորին, նաև միաժամանակ նրա զավակներին, կանանց և թագավորական արքունիքը: Հաղթությունն այնքան մեծ էր, որ եթե Վաղերիանոսը (իմա՝ Դիոկղետիանոս) <sup>3</sup>, որի հրամանով առեն ինչ կատարվում էր, մի ինչ-որ անհայտ պատճառով չհակառակվեր, հռոմեական իշխանությունը կհաստատվեր նոր նահանգում»<sup>4</sup>: Ըստ երևույթին, պատմական

<sup>1</sup> Շ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Կ.Բ. մասն Ա, եր., 1957, էջ 111-112:

<sup>2</sup> Ս. Երեմյան, Հայաստանը I-IV դդ., տե՛ս «Հայկական ՍՍՏ առլաս», Երևան-Մոսկվա, 1961, քարտեզ թիվ 104:

<sup>3</sup> Դիոկղետիանոս կայսեր լրիվ անունն էր *Gaius Aurelius Valerius Diocletianus*:

<sup>4</sup> *Aurelius Victor, Liber de Caesaribus, XXXIX:*

իրողությունն այն է, որ Հռոմը, պարսիկներից ստանալով անդրտիգրիսյան հինգ երկրամասերը, մեզ անհայտ շարժառիթներից դրդված, վերջիններս գիշում է Մեծ Հայքի թագավորությանը: Ենթադրել, թե Ավրելիոս Վիկտորի տեղեկությունը վերաբերում է Մեծ Հայքին և հեղինակն իր դժգոհությունն է արտահայտում այն հռոմեական պրովինցիա չվերածելու կապակցությամբ, հիմք չունի, որովհետև պատերազմական գործողությունների ժամանակ հայերը հանդես էին գալիս որպես հռոմեացիների դաշնակիցներ, ուստի Հռոմին ձեռննտու էր իր ազդեցության ոլորտում գտնվող Մեծ Հայքի թագավորության գոյությունը, որն ապահովում էր կայսրության հյուսիս-արևելյան սահմանների անվտանգությունը և անջրպետի դեր էր կատարում Հյուսիսային Կովկասի լեռնականների արշավանքների ժամանակ և, վերջապես, հազիվ թե հեղինակը նահանգ կոչեր Մեծ Հայքի ընդարձակ թագավորությունը: Անկասկած է, ինչպես կարելի է եզրակացնել Ավրելիոս Վիկտորի հաղորդումից, որ քաղաքական այդ ակտը կատարվել է Դիոկղետիանոս կայսեր կողմից Մծբինի խաղաղության պայմանագրի կնքումից շատ չանցած: Համենայն դեպս, Ագաթանգեղոսի տեղեկությունների համաձայն քրիստոնեության մուտքի ժամանակ հիշյալ երկրամասերը մտնում էին Մեծ Հայքի թագավորության մեջ. «*Են այսպես ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ձգտեր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և ակետարանութեանն. ի Սասաղացոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կաղարջօջ, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. և յմնդացոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորոց առ Լոր Շիրական երկրաւ, և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքը-Տան իշխանին, մինչև յԱրտաշատական ձգտեր տարածանէր զակետարանութիւնն իւր*»<sup>1</sup>: Քրիստոնեության տարածման սահմաններն,

<sup>1</sup> Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, էջ 414: Ժամանակին մենք ենթադրել էինք, որ հիշյալ երկրամասերի Մեծ Հայքին հանձնելու օգտին է խոսում թերևս Ֆարկին-Տիգրանակերտի պարսի հուևարեն արձանագրությունը, որը հայտնաբերվել է 1899թ. Լեհման-Հաուսթի կողմից (C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Berlin, 1910, էջ 411-419): Լեհման-Հաուսթի արձանագրությունը վերագրում է Պապ թագավորին (368-374), իսկ Հ. Մարքվարթն ու Հ. Մանանդյանը մերժում են այդ տեսակետը և ցույց տալիս, որ այն գրվել է, ամենայն հավանականությամբ, դեռևս հեթանոս Տրդատ Գ-ի կողմից 298թ. Մծբին պայմանագրի կնքումից հետո (J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 124, 134-135, 158, 175, 184: Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., Հ.Բ. մասն Ա, էջ 121-122): Այդ տեսակետին է նաև Գ. Սարգսյանը (Г.Х. Саркисян, Тигранакерт, Москва, 1960, էջ 83-86): Մենք հավկած ենք կարծելու, որ այս խնդրում առավել հիմնավոր է Ա. Մարտիրոսյանի կարծիքը, ըստ որի արձանագրությունը գրվել է 287թ. պարսկա-հռոմեական համաձայնությունից հետո, երբ Տրդատ Գ-ն հաստատվեց Մեծ Հայքի թագավորությունում, ունենալով Դիոկղետիանոս կայսեր և Վահրամ Բ պարսից արքայի փոխադարձ համաձայնությունը (Ա. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, թիվ 3, էջ 160-169):

անշուշտ, համընկնում էին հայկական թագավորության պետական և քաղաքական ազդեցության սահմաններին, ուստի, ինչպես դժվար չէ եզրակացնել վերոբերյալ հաղորդումից, Մեծ Հայքի թագավորության սահմանները հարավ-արևմտյան սահմանագլխին անցնում էին Ամիդի մատուցներով՝ հասնելով մինչև Մծբին, այլ խոսքով՝ տարածվելով նաև Տիգրիսի աջափնյակում: Անդրտիգրիսյան երկրամասերի Մեծ Հայքին վերաբերելու և պատկանելու օգտին են խոսում, ինչպես կոտեսենք ստորև, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու տեղեկությունները նույնպես:

Անդրտիգրիսյան երկրամասերը Մեծ Հայքի թագավորությանը հանձնելուց հետո, շատ հնարավոր է, որ Հռոմը շարունակեր այնտեղ պահպանել իր ռազմական ներկայությունը: Սակայն անհավանական չէ կարծել, որ շատ չանցած՝ երկարատև խաղաղության պայմաններում հռոմեական կայազորները մեծ մասամբ փոխարինվեցին հայկականով կամ էլ ամբողջությամբ ետ քաշվեցին հռոմեական տիրույթները: Ամիանոս Մարկելիոսի հաղորդումն այն մասին, որ 360 թվականին Ծավղեքում գտնվում էին հռոմեական զորամասեր<sup>1</sup>, արտացոլում է ուշ ժամանակաշրջանի կացություն:

Մծբինի հաշտությունը, մեր կարծիքով, անուղղակի տեղեկություններ է պահպանել Մեծ Հայքի թագավորության III դարի վերջի քաղաքական անցուդարձերի և հիշյալ հինգ երկրամասերի վարչա-քաղաքական կացության վերաբերյալ, որոնք սկզբնաղբյուրներից մեզ հայտնի չեն և մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայագիտության համար: Պետրոս Պատրիկիոսի տեղեկություններից պարզվում է, որ Հռոմը Մծբնի պայմանագրով Անդրտիգրիսյան երկրամասերը, որոնք Մեծ Հայքի մարզերն էին, ստացավ ոչ թե հայերից՝ ցույց տրված ռազմական և քաղաքական աջակցության համար, այլ պարսիկներից՝ որպես հաղթանակի արդյունք: Միակ հնարավոր բացատրությունն այն է, որ 298 թվին հիշյալ երկրամասերը Հռոմի և Պարսկաստանի կողմից de jure Մեծ Հայքի մաս չէին ճանաչվում և անմիջականորեն մտնում էին պարսկական տիրույթների մեջ: Ե՛րբ կարող էին դրանք վերածվել պարսկական տիրույթների: Ելնելով «Աշխարհացոյց»-ի անուղղակի տվյալներից, կարելի է ենթադրել, որ Խոսրով թագավորի եղեռական սպանությունից հետո, երբ երկիրը կառավարում էր Տրդատ Գ-ի խնամակալ Արտավազդը (հավանաբար՝ Արտավազդ Մանդակունին)<sup>2</sup>, Պարսկաստանի քաղաքական ազդեցության ոլորտում հայտնված Մեծ Հայքի թագավորությունը ստիպված

<sup>1</sup> Ammianus Marcellinus, with an english translation by John C. Rolfe, in three volumes, II, London, Cambridge, Massachusetts, 1972, XX, 7:

<sup>2</sup> Ագաթանգեղոս, էջ 22-24: Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, էջ 72. «... փախուցեալ (Տրդատ Գ-ին -Հ.Բ.) ի հայրապալս մարդախողովո իօրեղարքն իւրոց.»: Ա.Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 149-154:

է եղել երկրի հարավ, հարավ-արևմտյան շրջաններում տարածքներ զիջել Սասանյան Պարսկաստանին: Վերջինիս քաղաքականությունը դժվար չէ հասկանալ: Պարսկաստանը ոչ միայն ձգտում էր իր ձեռքը վերցնել Աղձնիքով անցնող մայրուղին, այլև ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող անդրտիգրիսյան երկրամասը, որով գալիք պատերազմում նա լուրջ առավելություն էր ստանում Հռոմեական կայսրության նկատմամբ ռազմական տեսակետից: Սակայն 287 թ. հռոմեա-պարսկական համաձայնությամբ Մեծ Հայքում հաստատվում է Տրդատ Գ-ն, ինչպես հավաստում է այսպես կոչված Տիգրանակերտի արձանագրությունը<sup>1</sup>, և Աղձնիքը մտնում է հայոց գահակալի տիրույթների մեջ, հետևաբար III դարի կեսերի իրադարձություններն անմիջականորեն չեն առնչվում մինչմծբինյան ժամանակաշրջանի քաղաքական կացության հետ: Աղձնիքի կրկին անցումը Պարսկաստանին, ամենայն հավանականությամբ, տեղի ունեցավ 293 թվին, երբ Ներսեհը՝ պատրաստվելով տիրել պարսկական գահին, իր թիկունքը ամրապնդելու նպատակով Տրդատ Գ-ին հանձնեց իր ենթակայության տակ գտնվող Մեծ Հայքի արևելյան շրջանները<sup>2</sup> և ռազմավարական նպատակներով իրեն պահեց Աղձնիքը Կորդուբի և Ծավդեքի հետ միասին: Այս կացությունը ճանաչվեց նաև հռոմեացիների կողմից, որովհետև Հայաստանի, կամ որ ավելի ճիշտ է, Մեծ Հայքի տարածքային ամբողջականությունը վերականգնելիս և անգամ նրա սահմանները Մարաստանի կողմից ընդարձակելիս, նրանք Անգեղտունը, Ծոփքը, Աղձնիքը, Կորդուբը և Ծավդեքը Մեծ Հայքի մասեր չէին դիտում: Հռոմին քաջ հայտնի էր դրանց հայկական տարածք լինելը, սակայն նրան գայթակղում էր հիշյալ երկրամասերի ռազմագիտական դիրքը:

Այժմ փորձենք տեղադրել հիշյալ անդրտիգրիսյան երկրամասերը, պարզել նրանցից յուրաքանչյուրի տարածքը և իրավական կացությունը: Պետրոս Պատրիկիոսի տեղեկության մեջ անդրտիգրիսյան երկրամասերը հիշատակվում են, ըստ մեզ, աշխարհագրական հաջորդականությամբ՝ արևմուտքից արևելք. Անգեղտուն ( *Ἰγγλιν* ) Ծոփք ( *Σοφηνή* ), Աղձնիք ( *ἱմά Ἀρᾶν* ) - ( *Ἀρζαηνί* ), Կորդուբ ( *Καρδοουή* ) և Ծավդեք ( *Ζαβδικηνί* ): Որպես գավառներ կամ աշխարհներ այս երկրամասերը մեծ ճշտությամբ տեղադրվել են Հ. Մարքվարթի, Հ. Հյուբշմանի, Ն. Արոնցի և Ա. Երեմյանի կողմից<sup>3</sup>, ուստի

մենք կփորձենք որոշել նրանց տարածքային ընդգրկումը տվյալ ժամանակաշրջանում և կապը աշխարհացույցյան բաժանումների հետ:

Անգեղտուն գավառը ուսումնասիրողների կողմից տեղադրվում է ներկայիս Էգիլ (հնում՝ Անգղ) բնակավայրի շրջանում՝ Տիգրիս գետի վերին հոսանքում, Անձիտ և Նփռետ գավառների միջև: Սակայն հազիվ թե կարելի է կարծել, որ այդ փոքր տարածքը իր մարդկային համեստ հնարավորություններով ի վիճակի էր մարտադաշտ դուրս բերելու 3400 զինվոր<sup>4</sup>, ուստի, մեր կարծիքով, Անգեղտան կուսակալությունը 298 թվականին պետք է ընդգրկեր անհամեմատ մեծ շրջան: III դարի վերջին և IV դարի սկզբին այն իր մեջ պետք է ներառեր մինչև Եփրատ գետն ընկած տարածքները, այլ խոսքով, բուն Անգեղտուն գավառի բաղկացուցիչ մաս պետք է կազմեր Աբառնե-Վաղարշակուպոլսի շրջակայքը, որն Ամիանոս Մարկեղիհոսը Ամիդի տեղադրության առիթով, տեղորոշում է **Գիմաթենե** կամ **Գումաթենե** կոչվող գավառում<sup>5</sup>: Ակադ. Ս. Երեմյանը գտնում է, որ Գիմաթենեն եղել է առանձին գավառ, որը որպես «ձեռական իշխանության» կալվածք Հայ Արշակունիները ստացել են Հռոմից<sup>6</sup>: «Աշխարհացույց»-ի մեր քննությունը մեզ բերել է այն համոզման, որ **Գիմաթենեն Անգեղտուն** գավառն է, որ բազմիցս հիշվում է հայ և օտարազգի հեղինակների երկերում<sup>7</sup>: Սակայն, որքան էլ տարօրինակ լինի, գավառանունը տեղ չի գտել Մեծ Հայքի աշխարհացույցյան նկարագրության մեջ<sup>8</sup>, որի հետևանքով Հ. Հյուբշմանը և մի քանի ուսումնասիրողներ Անգեղտունը վերագրել են Ծոփաց աշխարհին, իսկ Ա. Երեմյանը՝ Աղձնիքին, մուծելով գավառանունը հիշյալ աշխարհների գավառների շարքը<sup>9</sup>: Այսուհանդերձ, ինքնաբերաբար Անգեղտունը «Աշխարհացույց»-ի բնագրի մեջ մղտ-

<sup>1</sup> H. Адоиц, նշվ. աշխ., էջ 251-252 («Ջորանամակի» բնագիրը):

<sup>2</sup> Ammianus Marcellinus, XVIII, 9,2:

<sup>3</sup> Ա.Տ. Երեմյան, Արշակունիների թագավորությունը 298-387 թթ. (քարտեզ), տե՛ս «Հայկական Սովետական հանրագիտարան», հ.2, էջ 112:

<sup>4</sup> Ագաթանգեղոս, էջ 414, 460: Փավստոս Բուզանդ, էջ 140, 141, 142, 212: Մովսիս Խորենացի Պատմութիւն Հայոց, էջ 70-71, 114: Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարսուտ, էջ 77, 81, 82, 84-86, 93, 107, 126, 134, 136, 138: Պապարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, էջ 63 և այլք: Օտար աղբյուրների մասին մանրամասն տե՛ս H. Адоиц, նշվ. աշխ., էջ 28-45: Տե՛ս նաև «Ասորական աղբյուրներ», Ա. Թարգանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ.Գ. Մելքոնյանի, Եր., 1976, էջ 142, 289, 321, 363 և «Բյուզանդական աղբյուրներ», Ա («Պոլոկպիոս Կեսարացի»), էջ 15, 209:

<sup>5</sup> «Աշխարհացույց Մովսեսի Խորենացու», էջ 30-31: К. П. Патканов, Армянская география VII века, էջ 18:

<sup>6</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 156-157, Ա. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 35:

<sup>1</sup> Ստորև ցույց կտրվի, որ Տիգրանակերտի տեղադրությունը Ֆարկինում, ճիշտ չէ:

<sup>2</sup> В. Г. Луконин, Древний и раннесредневековый Иран, Москва, 1987, էջ 163-169:

<sup>3</sup> J. Marquart, *Ērānšahr* էջ 18, 25, 158, 165-178: Նույնի *Südarmerien and die Tigrisquellen*, էջ 35-39, 87-88, 115, 121-123 և այլն: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 69-78, 83-89, 137-184, 198-209: H. Адоиц, Армения в эпоху Юстиниана, էջ 28-45, 211-234: Ա. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 33-35, 45, 57, 60, 73:

ցընելը, մեր կարծիքով, ոչնչով հիմնավորված չէ: «Աշխարհացոյց»-ը Ծովքում կամ այսպես կոչված Չորրորդ Հայքում գիտի 8, իսկ Աղձնիքում 10 գավառ, ուստի Անգեղտուն գավառի մոտ՝ մեկի կամ մյուսի մեջ անհրաժեշտաբար պետք է առաջ բերի բնագրի երկրորդ սրբագրումը, այսինքն Ծովքի գավառների թիվը պետք է դարձնել 9-ը կամ Աղձնիքին՝ 11: Ա. Երեմյանը գնացել է հենց այդ ուղիով: Նա «Աշխարհացոյց»-ի ընդարձակ բնագրի հիման վրա նախնական բնագրի վերականգնման փորձ կատարելիս Աղձնիք աշխարհին վերագրել է 11 գավառ և գավառանունների շարքը մոտեցել Անգեղտունը: Հնարավոր է, որ «Աշխարհացոյց»-ի բնական բնագիրը կազմելիս հայտնաբերվեն այնպիսի ձեռագրեր, որտեղ Աղձնիքը ներկայացված լինի 11 գավառով, սակայն ցայսօր հրապարակի վրա եղած բոլոր հրատարակություններում էլ և մեզ հայտնի ձեռագրերում Աղձնիքը հանդես է գալիս 10, իսկ Ծովքը 8 գավառներով: Հետևաբար բնագրային այսպիսի սրբագրումներ կատարելու համար լուրջ կովաններ չկան: Գավառանունը «Աշխարհացոյց»-ի բնագրի մեջ մոտեցնելու գայթակղության ամենալուրջ աղբյուրն, անշուշտ, Փավստոս Բուզանդի հիշատակությունն է պարսիկների IV դարի 60-ական թթ. կեսերին Մեծ Հայք կատարած արշավանքի մասին. «*եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքայն Հայոց հանդերձ իրովք զօրօքն զԱտրպատական սահմանօքն, զի անդ սպասէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՄերուժանն՝ ընդ այլ կաթել ասպատակ յաշխարհն Հայոց առնէին: Զի ընդ Աղձնիս և ընդ Ծովս Մեծ, ընդ Անգեղ տունն և ընդ գաւառն Անձտայ, ընդ Ծովս Շահունց, ընդ Սզուր գաւառն, և ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն ասպատակել հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրև զօրս բազումս»<sup>1</sup>: Բնական է, որ Անգեղտան այս և մյուս հիշատակություններն ունենալով ձեռքի տակ, նկատի առնելով գավառի մեծ կարևորությունը, ուսումնասիրողները պետք է փորձեին «Աշխարհացոյց»-յան հակասությունը լուծել նմանօրինակ սրբագրումների միջոցով, չնայած, կրկնում ենք, բնագիրը դրա համար ոչ թե անհրաժեշտ, այլ ընդհանրապես կովաններ չի տալիս:*

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհի մի շարք տեղանուններ, անգամ XX դարում, հայկական բարբառներում պահպանել էին իրենց առավել նախնական ձևերը, քան նրանք, որոնք ավանդված են հայկական ամենավաղ սկզբնաղբյուրներում: Այսպես, շատ ավելի հին է Խարպուղը, քան Խարբերդը կամ Հորբերդը: Ուստի, ելնելով Անգեղ բերդի ասորական Aggel (բնակիչները՝ Aggelāyē) արտասանությունից<sup>2</sup>, կարելի է ենթադրել, որ ներկայումս

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 141-142:

<sup>2</sup> Յոզվա Ատիլիո (Սյունակոյց), ժամանակագրություն, տե՛ս «Ատրական աղբյուրներ, Ա, էջ 184: Ռ. ԱՃՈՒԿ, նշվ. աշխ., էջ 41: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 157:

պահպանված Ագի կամ Եգի ձևը նախնական է Անգղի նկատմամբ: Հ. Հյուբշմանը հակված է կարծելու, որ ներկայիս Եգի ձևը գալիս է ասորերենից<sup>1</sup>: Գր. Ղափանցյանը գտնում է, որ Ang(e)l-ը եղել է սկզբում հասարակ անուն, «բերդ, ամրոց» իմաստով և հնչել է, ինչպես ասորերենում, agēl կամ egil ձևով: Նրա կարծիքով, ակվադական ekal բառը, որ հավանորեն հնչել է ekhal և նշանակել է «բերդ, ամրոց», համապատասխանում է agel-egil-ին, իսկ այդ աքքադա-ասորական ekal-egil-ը ծագում է շումերական egal-ից, որ նախապես նշանակել է «պալատ»: Գր. Ղափանցյանը նշում է նաև, որ Ē. GAL բառացի նշանակում է «մեծ տուն», սակայն վանյան արձանագրություններում շումերական Ē. GAL գաղափարագիրն ունի միայն բերդի կամ ամրոցի նշանակություն<sup>2</sup>: Եթե Անգլ տեղանունն իրոք ծագում է շումերական Ē. GAL-ից, ապա այն կարող էր փոխանցվել հայերին սեմական աշխարհի միջոցով: Սակայն ինչպե՛ս է agel կամ aggel ձևից առաջացել Անգղը: Կարծում ենք, որ այդ կարող է ունենալ երկու բացատրություն: Հնարավոր է, որ հունարենի պես հայերենը ևս ունեցել է լեզվական օրինաչափություն gg-երը արտասանելու ոց (օրինակ Ἰγγηλιονί = Ingelena, Ἄγγλων = Anglon, Ἄγγιτις = Angita, ἄγγελος = angelos և այլն), որի հետևանքով իրարից անկախ թե հունարենում և թե հայերենում Aggel-ը արտասանվել է Angel: Aggel-ը կարող էր նաև հելլենիզմի դարաշրջանում հունարենի գրչական հիմքի վրա ձեռք բերել Angel արտասանությունը և ընդհանրական դառնալ հայերի համար: Այսուհանդերձ, մենք ավելի հակված ենք կարծելու, որ հայերենը ունեցել է հունարենի հիշյալ լեզվական օրինաչափությունը, և Aggel-ը օրինաչափորեն վերածվել է «Անգղ»-ի: Համենայն դեպս, միայն այդ ճանապարհով կարելի է բացատրել բազմաթիվ «Անգղ»-ների և «Անգղ»-ով կազմված տեղանունների առկայությունը Մեծ Հայքի ամբողջ տարածքում, որոնցից մի քանիսը հազիվ թե գոյություն ունենային հելլենիզմի դարաշրջանում:

Հիշյալ բնությունից հետո իրավացիորեն հարց է ծագում. Անգեղտունը ինչ-ինչ պատճառներով չի հիշատակվում «Աշխարհացոյց»-ում, թե՛ համապատասխանում է ինչ որ մի գավառի: Անդրադառնալով Քաղ կամ Քեղ գավառի տեղադրությանը՝ Ա. Երեմյանը այն տեղորոշում է այժմյան Մալիգիր գյուղի շրջակայքում, գտնելով, որ Քաղը ասորա-բաբելական արձանագրություններում կոչվում է Gal<sup>3</sup>: Կապելով Քաղ կամ Քեղ գավառի անունը Gal-ի

<sup>1</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 157:

<sup>2</sup> Гр. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, Ереван, 1940, էջ 82-84:

<sup>3</sup> Ա. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 89, 107: Տե՛ս նաև քարտեզը (Գ-4):

հետ, կամա թե ակամա տրամաբանական այն միտքն է ծագում, որ այն շու-  
մերական **É. GAL**, արքայական **ekal** կամ **ekhal** և ասորական **aggēl** կամ  
**aggēl**-ի արտահայտությունն է: Հետևաբար հայոց պատմության մեջ բազ-  
միցս հիշատակվող և քաղաքական իրադարձություններում կարևոր դեր խա-  
ղացած Անգեղտուն գավառը բնավ էլ չի մոռացված աշխարհացույցյան նկա-  
րագրության մեջ, այլ արտահայտված է վերջինիս ձեռագրերում «**Քաղ**»,  
«**Քեղ**», «**Քիղ**» կամ «**Քիլ**» գրությամբ<sup>1</sup>: Ավելին. «**Աշխարհացոյց**»-ի նկարա-  
գրությունը բնավ էլ իրավունք չի տալիս հիշյալ գավառը տեղադրելու Նփռետ  
և Արձն գավառների միջև, քանի որ համաձայն բոլոր մեզ հայտնի աղբյուր-  
ների նրանց սահմանաբաժան գիծը, որ 387թ. Մեծ Հայքի բաժանումից հետո  
վերածվեց պարսկա-հռոմեական սահմանի, Քաղիթ զետն էր և որ նրանց  
միջև այլ գավառ չկար, իսկ «**Քաղ**»-ը կամ «**Քեղ**»-ը պարզապես նրանցից  
հետո հիշվող գավառ է, որը չի գտնվել Արձնիթի լեռնային մասում: «**Աշխար-  
հացոյց**»-ի հեղինակը, հավանաբար, օգտվել է ասորերեն լեզվով պահպան-  
ված արխիվային նյութերից, որոնցում՝ ձայնավորների չզրկելու պատճառով,  
գավառանունը արտահայտվելու էր «**Գլ**» կամ «**Քլ**» գրությամբ, հանգամանք,  
որ հետագայում ձեռագրերում ծնելու էր վերջինիս տարբերակների առատու-  
թյուն, որը պայմանավորված էր բացակայող ձայնավորը լրացնելու խմբա-  
գիրների միտումով: Այլ խոսքով, եթե հեղինակը իմացել է **Անգեղտուն** և  
«**Քլ**»-ի կամ «**Գլ**»-ի նույնության մասին, սակայն հարազատ է մնացել բնագ-  
րին, ապա ավելի ուշ խմբագիրները այլևս չէին գիտակցում դրանց համար-  
ժեքությունը և կամայականորեն ավելացնելով բացակայող ձայնավորը, ծնել  
են «**Քաղ**», «**Քեղ**», «**Քիլ**» և «**Քիղ**» ձևերը:

Եթե մեր եզրակացությունը՝ **Անգեղտուն** գավառի **Քաղ** գավառի հետ նույ-  
նացման վերաբերյալ, ճիշտ է, ապա անհրաժեշտաբար ծագում է նաև **Գիմա-  
թենե** գավառի համարժեքությունը **Անգեղտանը**: Գտնվելով Ամիդի և Նրա շր-  
ջակայքի գերազանցապես ասորական միջավայրում՝ Ամիանոս Մարկեղիմոսը  
պետք է ծանոթ լիներ հայկական Անգեղտուն գավառանվան ասորական ար-  
տասանությանը, որն ունենալու էր թերևս **Agelatun** կամ **Agilatun** ձևը: Եթե

<sup>1</sup> «**Աշխարհացոյց**»-ի ձեռագրերն ուսումնասիրելիս պարզվեց, որ «**Քիղ**» գրությամբ գավառա-  
ունը հանդիպում է երևանի մատենադարանի թիվ 1770 (89ա), թիվ 2370 (256բ) և թիվ 4284  
(37ա) ձեռագրերում, իսկ «**Քիլ**» տարբերակում թիվ 5613 (292բ) ձեռագրում: Վենետիկի  
Մխիթարյանների մատենադարանի «**Աշխարհացոյց**»-ի 2 ձեռագրերում ևս գավառանունը հան-  
դիպում է «**Քիղ**» տարբերակով (Ն. Մեհիճյան, Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, էջ 67):  
**Քիլ** և **Անգեղի** նույնացման օգտին է խոսում Յակոտի կողմից հիշատակված Տիգրիսի վտակ-  
ներից մեկի՝ **Նահր-ալ-Քիլաթի** անունը: Համաձայն բնագրի այն **Անգեղի ջուրն** է, ուստի **Քիլաթը**  
ոչ այլ ինչ է, բայց եթե «**Անգեղի ջուր**» անվան պարսկական թարգմանությունը (Տե՛ս Արաբական  
աղբյուրներն Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 63):

ի նկատի ունենանք, որ տեղանվան բառակցքի **A**-ն կարճ ձայնավոր է, ապա  
այն հույների կողմից կարող էր ընկալվել որպես **Gilatun** և լատինականաց-  
վելով՝ ստանալ **Gilathene** ձևը: Հետագայում, կարծում ենք «**լ**»-ն գրիչների  
կողմից վերածվել է «**μ**»-ի և հանդես է եկել Ամիանոս Մարկեղիմոսի «**Պատ-  
մության**» մեջ հիշվող **Գիմաթենեն**: Կարծում ենք, որ **Գիմաթենեի** նույնացու-  
մը **Անգեղտան** հետ առավել քան հավանական է աշխարհագրական դիրքի  
և հայոց արքունիքի կողմից **Անգեղտան** ներքինի իշխանությանը հատկացվող  
դերի տեսանկյունից: Այն, ըստ էության, վերահսկում էր **Մեծ Հայքի** թագա-  
վորության ողջ հարավ-արևմտյան մասին:

Եթե վերն ասվածի լույսով փորձենք որոշել **Անգեղտան** սահմանները,  
ապա այն մեզ կներկայանա ներքոբերյալ տարածքով: Հյուսիսում այն պետք  
է սահմանակցեր **Անձիտ**, **Բալահովիտ** և **Հաշտեանք** գավառներին Հայկական  
**Տավրոսի** և մասամբ **Նիրիբու** լեռներով, արևմուտքում պետք է տարածվեր  
մինչև Եփրատ գետը, վերահսկելով վերջինիս մի քանի կարևոր գետանցները,  
հարավում նրա սահմանը, հավանաբար, անցնելու էր **Սևերեկի** (հնում՝ **Սևա-  
վերակ**) հարավակողմով<sup>1</sup> կամ էլ նրանից հյուսիս ընկած ջրբաժան գծով, իսկ  
արևելքում՝ **Ամիդ** քաղաքի մատույցներով՝ սահմանակցելով **Նփռետին** կամ  
**Մեծ Մոփսին**:

**Մծբինի** պայմանագրում հիշատակված հաջորդ երկրամասը՝ **Տօփոնի** -ն  
կամ **Տօփոնի** -ն նույնացվել է **Մեծ Հայքի Մոփս** նահանգի կամ էլ **Շահունյաց**  
**Մոփս** գավառի հետ: Միանգամայն հասկանալի է, որ 298 թվին այն չէր կա-  
րող համապատասխանել **Մոփս** կամ **Մոփսաց** կողմն աշխարհին, ուստի ու-  
սումնասիրողները **Տօփոնի** -ն, ըստ մեծի մասին, համարժեք են համարել **Շա-  
հունյաց** կամ **Շահունի Մոփսին** և ենթադրել, որ վերոհիշյալ պայմանագրով  
ներկայիս **Չմշկածագի** և **Խոզաթի** շրջանը անցել է կայսրությանը<sup>2</sup>: Քննու-  
թյան անելով **Տօփոնի** և **Տօփոնի** աշխարհագրական անվանումները՝ **Ն.**  
**Արնցը** ցույց է տալիս, որ հունահռոմեական հայեցակետից առաջինը առավել  
ինն ձևն է և հանդիպում է **Ստրաբոնի**, **Պլինիոսի**, **Շուպեի** **Փլավիոսի**, **Պլու-  
տարքոսի**, **Ապիանոսի**, **Դիոդորոս Սիկիլիացու**, **Պտղոմեոսի** և այլոց աշխա-  
տություններում: **Տօփոնի** ձևը առաջին անգամ հանդիպում է, ինչպես

<sup>1</sup> Տե՛ս **H.Kiepert**, *Atlas antiquas*, elfte Auflage, Tab. IV.

<sup>2</sup> **J. Marquart**, *Eränsäher...* էջ 171. «Es scheint daher, dass Gross Cop'k' in jenem  
Friedenstraktat unter Ingelene begriffen ist. Denn unter **Տօփոնի** kann hier nur das  
westliche, am Euphrat an das um mittelbare Reichsgebiet grenzende Cop'k' verstan-  
den werden, das von nun an fortwährend zur römischen Klientel gehört hat»: **Ս.Տ.**  
**Երևան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 57: 298թ. Մեծ Մոփսը **Անգեղտան** մեջ  
է մտնում նաև **Հյուսիսային**, որը **Տօփոնի** -ն նույնացնում է **Շահի Մոփսին** (նշվ. աշխ., էջ  
145):

կարելի է եզրակացնել Ստեփանոս Բյուզանդացու տեղեկություններից <sup>1</sup>, Ո դարի հեղինակ Արրիանոսի մոտ, որն, ամենայն հավանականությամբ, տարբերություն չէր տեսնում այս երկու ձևերի միջև <sup>2</sup>: Ն. Ադոնցի կարծիքով, Դիոն Կասիոսը ևս, որի աշխատությունում պահպանվել է Սոֆանենե ձևը, հազիվ թե այն օգտագործել է ի հակակշիռ Սոֆենեի: Վերոհիշյալ հեղինակների պատկերացմամբ նրանք համարժեք էին և վերաբերվում էին նույն երկրին՝ առանց տարածքային տարբերակվան <sup>3</sup>: Խորանալով հարցի էության մեջ, վաստակաշատ հեղինակը միանգամայն հիմնավոր ցույց է տալիս, որ թե մեկ և թե մյուս ձևերը ծագում են supraո հիմնավորց ձևից, որը հայերենում վերածվել է Մոփքի, իսկ ասորերենում՝ Sofanaje-ի, այսինքն գրեթե պահպանել է նախնական սեպագրական տեսքը: Շարունակելով իր միտքը զարգացնել, նա գտնում է, որ հույները՝ ծանոթանալով Մոփքին հյուսիս-արևմուտքից, երկիրը կոչեցին Σωφηνή, ազդվելով հայկական անվանումից, իսկ Ո դարում՝ Տրայանոսի օրոք, հաստատվելով Միջագետքում և այն վերածելով հռոմեական պրովինցիայի, հռոմեացիները շփվեցին այդ երկրամասի հետ նաև հարավից և ընկալեցին նրա անվանման նաև ասորական Sofanaje ձևը, որը հունարենում և լատիներենում վերածվել է Σοφανηνή Sophanena-ի: Երբ Մոփքը բաժանվեց երկու մասի, վերջիններս հայերի մոտ՝ պահպանելով Մոփք ձևը, համաձայն Փավստոս Բուզանդի խիստ արժեքավոր վկայությունների, ստացան **Շահունի Մոփք**, **Միա Մոփք**, կամ պարզապես **Մոփք** և **Մեծ Մոփք** անվանումները <sup>4</sup>:

Հունա-հռոմեական հեղինակները վերջիններս տարանջատելու և զանազանելու համար *Σωφηνή* ձևը սկսեցին կիրառել միայն Շահունի Մոփքի, իսկ *Σοφανηνή*-ն Մեծ Մոփքի համար: Հ. Հյուբշմանի և Ն. Ադոնցի կարծիքով, հունա-հռոմեական աշխարհը կարող էր ընկալել այդ վարչական կացությունը

<sup>1</sup> Steph. Byz., "Σωφηνή, χωρα τῶν πρὸς Ἀρμενίαν, ἐκ Στράβων ἐν ἑνδεκατῇ, παρά δ, Ἀρριανῶ Σωφανηνή τετρασπυλάβωσ, οἱ κατοικοῦντες Σωφηνοί": **Մեքերումը տե՛ս Խ. ԱճՈՒՄ**, նշվ. աշխ., էջ 39:

<sup>2</sup> Խ. ԱճՈՒՄ, նշվ. աշխ., էջ 39-40:

<sup>3</sup> Անդ, էջ 40:

<sup>4</sup> Փավստոս Բուզանդ, էջ 6. «Մոփաց գառառ», էջ 21. «զիշխանն Մոփաց Շահեի Լորսեի», էջ 72. «զնոյն իշխանն միսոյ Մոփաց», էջ 114. «Տարօն, Բզնունիք, Մոփք...», էջ 141. «ընդ Մոփս Շահունց», էջ 21. «զիշխանն Մեծի Մոփաց զՄար», էջ 29. «Ջարեի իշխանն, նահապետն Մեծի Մոփաց, ... զՎարազ Շահունի իշխանն Մոփաց աշխարհին», էջ 32. «ի Բնաբեղ բերդէն արքունի՝ Մեծ Մոփաց գառառին», էջ 42. «գառառն Աղձնեաց և Մեծաց Մոփաց», էջ 72. «զԴանիէլ մեծ իշխանն Մոփաց», էջ 141. «ընդ Մոփս Մեծ», էջ 142. «ի Մոփս Մեծ», էջ 160. «Սահամուտ տերն Անձտեայ և ընդ նմա իշխանն Մեծի Մոփաց», էջ 206. «Երկրին Մոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին», էջ 212. «ի Մոփս Մեծ», էջ 221. «ի Մեծ Մոփս», էջ 221. «երկրն Մոփաց», էջ 222. «ի գառառն Մոփաց»:

սույ 298 թվից հետո, երբ Տիգրիսի վերին հոսանքի շրջանն ընկավ կայսրության գերիշխանության ներքո <sup>1</sup>: Սակայն Մծբնի հաշտությունը կնքելիս, հռոմեացիները, ըստ մեզ, դեռևս լուրջ զանազանություն չէին դնում **Մեծ** և **Շահունի Մոփքերի** միջև: Ուստի բնավ էլ պարտադիր չէ ենթադրել, որ *Ἰγγληνῆ*-ից հետո հիշատակված *Σοφηνή*-ն անվերապահորեն **Շահունի Մոփքն** է: Ավելին, Փավստոս Բուզանդը, որ քաջատեղյակ էր երկու Մոփքերի գոյությանը, երբեմն **Մեծ Մոփքը** կոչում է պարզապես **Մոփք** <sup>2</sup>: Մեծ և Մյուս Մոփքի հարցը մեր առջև ծառանում է կապված նաև Բնաբեղ ամրոցի տեղադրության հետ: Անդրադառնալով վերջինիս, Փավստոս Բուզանդը գրում է. «*Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաստարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Մոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովառ*» <sup>3</sup>: Սակայն Բուզանդի մեկ այլ տեղեկության համաձայն, Բնաբեղը գտնվել է Մեծ Մոփքում. «*Ջոր (կիսամահ Հուսիկ կաթողիկոսին - Հ.Բ.) բարձեալ պաշտօնէիցն դրան եկեղեցւոյն ի Բնաբեղ բերդէն արքունի՝ Մեծ Մոփաց գաւառին եկին բերին ի գաւառն Դարանաղեաց ի գելն Թորդան*» <sup>4</sup>: Բնաբեղ անունով բերդ *Καστρον Βαναβήλων* գոյությամբ, հիշատակում է նաև Գևորգ Կիարացին, սակայն նրա մոտ բացակայում է բերդի քիչ թե շատ ստույգ տեղադրությունը <sup>5</sup>: Միակ քիչ թե շատ բանական եզրակացությունն այն է, որ հիշյալ ամրոցը, ամենայն հավանականությամբ, գտնվել է Տիգրիս գետից հարավ ընկած շրջանում՝ Մարդե բերդի և Աբառնեի մերձակայքում: Ուսումնասիրողները **Բնաբեղը** նույնացրել են այժմյան **Բենաբիլ** գյուղին <sup>6</sup>, որը գտնվում է Մարդին կամ Մերդին քաղաքից մի քանի կմ հյուսիս-արևելք: Հ. Միքայել Վ. Հովհաննիսյանը, հենվելով Ղ. Ալիշանի մի քարտեզի վրա, Բնաբեղը տեղադրում է Չնքուշի մոտակայքում եփրատի մի օժանդակի վրա <sup>7</sup>: Փաստորեն հեղինակը բացառում է Բուզանդի հիշատակած Բնաբեղի նույնա-

<sup>1</sup> Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 145: Խ. ԱճՈՒՄ, նշվ. աշխ., էջ 40-41:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 221. «ի Մեծ Մոփս» և նույն երկրամասը «զերկիրն Մոփաց», «երկրին Մոփաց», և էջ 222. «ի գառառն Մոփաց»:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդ, էջ 206:

<sup>4</sup> Անդ, էջ 32:

<sup>5</sup> G. Geizer. Georgii Cyprii Descriptio orbis Romani, էջ 47:

<sup>6</sup> Անդ, էջ 161-162: Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 145: Խ. ԱճՈՒՄ, նշվ. աշխ., էջ 31: Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 45 (տե՛ս նաև աշխատության քարտեզը): Հ. Մանեգյան, Քննական տեսություն..., հ.Բ., մասն Ա, էջ 304:

<sup>7</sup> Հ. Միքայել Վ. Հովհաննիսյանի Մխիթարյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ - Ս. Ղազար, 1970, էջ 104: Վերջերս նույն տեսակետն է պաշտպանել նաև ակադ. Ս. Երեմյանը:



ցումը Βαναβήλων բերդի հետ, սակայն ոչ մի հիմնավոր փաստարկ չի բերում իր տեղադրությունն ապացուցելու համար: Այսուհանդերձ դժվար չէ տեսնել, որ նման մտահանգման համար հիմք է ծառայել Գևորգ Կիպրացու տեղեկությունը, ըստ որի Աբառնե (բնագրում սխալմամբ՝ Աբարմե - Հ.Բ.), Մինոբիաս և Ինգիետոն բերդերի մոտ գտնվել է καστρον Βαναβήλων -ը<sup>1</sup>:

Մեր կարծիքով, փավստոսյան Բնաբեդի տեղադրության հարցում հնարավոր է երկու բացատրություն: Շատ կարելի է, որ Փավստոս Բուզանդը Բնաբեդը երկու անգամ էլ հիշատակելիս նկատի է ունեցել ոչ թե Մեծ Մոփքը, այլ Մոփք Շահունիքը, սակայն սխալմամբ այն մի դեպքում վերագրել է Մեծ Մոփքին: Որովհետև հազիվ թե կարելի է ենթադրել, որ հայոց արքունիքը իր գանձերը պահելու համար կընտրեր սահմանից ընդամենը մի քանի կմ հեռավորության վրա գտնվող որևէ բերդ-ամրոց: Սակայն, ըստ մեզ, ամենահավանական բացատրությունն այն է, որ Փավստոսի վկայությունները վերաբերում են Բնաբեդ անունը կրող երկու առանձին ամրոցների, որոնցից մեկը նույնական է καστρον Βαναβήλων-ին և գտնվել է Մեծ Մոփքում՝ ներկայիս Բենաբիլի տեղում, իսկ մյուսը՝ Շահունյաց Մոփքում՝ հանդիսանալով արքունական գանձատուն: Կարծում ենք, որ մեր այս եզրակացությունը ամրապնդվում է Պատմահոր հետևյալ արժեքավոր վկայությամբ. «Սուրենայ Խոռոխուսունոյ և Վահանայ Առաւելոյնի և Աշխարհայ Դիմաքսնի գտեալ ժամ պատեհ, զի էր հանեալ զգանձսն Արշակայ յամրոցն Հանսոյ՝ տանել յաշխարհն Մոփսց, զոր յափշտակեալ, և կամեցեալ անցանել առ Խոսրով՝ ոչ ժամանեցին»<sup>2</sup>: 388 թ. Արևմտահայկական թագավորության արքա Արշակ Գ-ն, արքունի գանձերը հանելով Անի ամրոցից, փորձում է ուղարկել Մոփսց աշխարհ, սակայն հիշյալ երեք նախարարները դրանք հափշտակում են և փախցնելով Արևելահայկական թագավորություն, հանձնում Խոսրով Դ արքային: 387 թ. հետո Մեծ Մոփքը որպես ինքնավար սատրապական իշխանություն գտնվում էր Հռոմի կազմում<sup>3</sup>, ուստի մտում է ենթադրել, որ Խորենացու հիշատակած Մոփսց աշխարհը Արածանիից հյուսիս ընկած տարածքում էր և թերևս համապատասխանում էր Շահունյաց Մոփքին<sup>4</sup>: Եվ, իրոք, Շահունյաց Մոփքի տարածքը, որ համընկնում է Դերսիմի լեռնային շրջանին, բնության կողմից օժտված է անառիկ դիրքով և թերևս ամենահարմար վայրն

<sup>1</sup> Georgii Cyprilii Descriptio orbis Romani, էջ 47:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, էջ 314:

<sup>3</sup> Н. Адонц, նշվ. աշխ., էջ 41:

<sup>4</sup> Մեծ Հայքի պողոտեայան նկարագրության մեջ Տափռնի ստրատեգիան տեղադրվում է Արածանիից հյուսիս՝ ընդգրկելով Շահունյաց Մոփքի տարածքը: See Claudii Ptolemaei Geographia, էջ 941-942:

է Մեծ Հայքի արևմտյան շրջանում՝ գանձեր պահելու համար: Բնաբեդը Չընքուշում տեղադրելը նույնքան հիմնադրուկ է, որքան արքունի գանձատունը Մեծ Մոփքի Բնաբեդ-Βαναβήλων ամրոցում տեսնելը, որովհետև Չընքուշը նույնպես գտնվում էր Մեծ Հայքի թագավորության սահմանագլխին և բնականաբար ենթակա էր հարձակման և ավարառման վտանգին: Եվ վերջապես տարօրինակ է, որ Բնաբեդը Չընքուշի շրջանում տեղադրողները, զարմանալիորեն, այդ տարածքը չեն էլ փորձում ցույց տալ Մեծ Հայքի շրջանակներում և ոչ էլ վերագրում են Մոփքին: Հայաստանի պատմական աշխարհագրության համար, անշուշտ, կարևոր նշանակություն ունի Մոփքի Բնաբեդի տեղադրությունը, սակայն առայժմ՝ անհրաժեշտ նյութերի բացակայության պատճառով, դժվար է այն որոշակի տեղորոշել: Տեղադրության ամեն մի փորձ դատապարտված է մնալու ենթադրություն, ուստի Բնաբեդի վերջնական տեղորոշումը թողնում ենք ապագային:

Վերը կատարված քննությունը ցույց է տալիս, որ սկզբնաղբյուրներում Մեծ Մոփքը հիշատակվում է նաև Մոփք անունով, իսկ Շահունյաց Մոփքը և Մոփք աշխարհը ընդհանրապես երբեք չեն օգտագործվել Մեծ Մոփք անունով: Եթե հայերը կարող էին երբեմն Մեծ Մոփքը անվանել պարզապես Մոփք՝ հիանալի գիտակցելով նրանց ոչ համարժեք լինելը, ապա առավել ևս հռոմեացիները կարող էին III դարի վերջին Մեծ Մոփքը կոչել Տափռնի: Անտարակույս է, որ Մծբնի պայմանագիրը կնքելիս կողմերը օգտվում էին աշխարհագրական քարտեզից, ուստի անդրտիգրիսյան երկրամասերի աշխարհագրական հերթականությամբ հիշատակությունը, մեր կարծիքով, անուղղակիորեն վկայում է Տափռնի-ի համարժեքությունը Մեծ Մոփքին, ուստի Շահունի Մոփքը առուծախի առարկա չէր դարձել հռոմեա-պարսկական բանակցությունների ժամանակ: Հունահռոմեական աղբյուրները Տափռնի-ի և Տափռնի-ի միջև տարբերությունը որոշակիորեն վավերացնում են առաջին անգամ 451 թ. Քաղկեդոնի եկեղեցական ժողովի արձանագրություններում<sup>1</sup>: Երկու երկրամասերի առանձին վարչաքաղաքական միավոր լինելը ցցուն արտահայտված է Հուստինիանոսի հրովարտակներում<sup>2</sup>: Տափռնի-ն որպես Մեծ Մոփքի համարժեք առաջին անգամ հիշատակվում է 387 թվին կայսերական հրովարտակում, որն ուղարկվել է «Gaddanae Satrapae Sophanena»-ին, այսինքն Մեծ Մոփքի սատրապին: Ն. Արոնցի կարծիքով, սատրապի ասորական անունը գալիս է վկայելու այն մասին, որ Sophanena -ն Մեծ Մոփքն է, որտեղ ուժեղ էր ասորական ազգացեղային և մշակութային ազդեցությունը<sup>3</sup>: Ամփոփելով վերոհիշյալը, մենք բացարձակապես չենք

<sup>1</sup> Н. Адонц, նշվ. աշխ., էջ 39:

<sup>2</sup> «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», պրակ 5, եր., 1967, էջ 299, 304:

<sup>3</sup> Н. Адонц, նշվ. աշխ., էջ 41:

սխալվի, եթե ընդունենք, որ 298 թ. Մծբնի պայմանագրի Տօփոնի -ն Մեծ Մոփքն էր:

Արդ տեսնենք, թե տարածական ինչ ընդգրկում ուներ այն: Արևմուտքում, ինչպես ցույց տվեց Դյոնիսիոսի սահմանների քննությունը, Տօփոնի-ն սահմանակցում էր Անգեղտանը և ծավալվում մինչև Ամիր քաղաքը՝ բնական սահմանաբաժան ունենալով Տիգրիս գետը: Հյուսիսում, դատելով «Աշխարհացոց»-ի տվյալներից, այն հասնում էր մինչև Հաշտեանք և սահմանն անցնում էր Նիրիբու կամ Ներիբ լեռներով, այսինքն աշխարհացույցյան Տիգրիսի աղբերակունքի հարավային ջրբաժան գծով<sup>1</sup>: Արևելքում և հարավ-արևելքում Քաղիրթ գետը բնական պատվար էր հանդիսանում Սոֆենե-Մեծ Մոփքի և Արձնի միջև<sup>2</sup>, որոնցից վերջինը հայկական աղբյուրներում հաճախ հանդիպում է Արձնիք անունով, որի մասին ստորև դեռևս հանգամանալից կխոսվի: Ելնելով սկզբնաղբյուրների տվյալներից, սահմանը հյուսիս-արևելքում անցել է ոչ թե Քաղիրթ գետով, ինչպես կարելի էր ենթադրել, այլ վերջինիս արևմտյան վտակների ջրբաժանով: Այս հարցը պահանջում է ճշգրիտ և հանգամանալից քննություն:

Մեծ Հայքի 387թ. բաժանումից հետո, ինչպես վկայում է «Աշխարհացոց»-ը, պարսկական մասում մնաց Քղիմար բերդաքաղաքը կամ Կուտեմաանը, իսկ հռոմեական հատվածում՝ Նիրկերտը<sup>3</sup>: Քղիմարը մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն նույնացվում է սեպագիր արձանագրությունների URU/KUR Kul(İ)imeri-Kulmera-Qulmeri-ին և բյուզանդական աղբյուրների Χλωμαρῶν -ին, որը Ս. Երեմյանը տեղադրում է ներկայիս Մա-

լիգիր գյուղի մերձակայքում<sup>4</sup>: Անկախ տեղադրության վերջնական կամ հավանական բնույթից, անկասկած է, որ Քղիմարը գտնվել է Քաղիրթի ձախ ափին<sup>5</sup> և V-VII դարերում պարսից սահմանային պաշտպանական համակարգի կարևոր ամրություններից էր: Հ. Գեյցերի կարծիքով, Քղիմար-Χλωμαρῶν -ի հետ պետք է նույնանա նաև Գևորգ Կիպրացու հիշատակած κάστρον Φλωριανῶν -ը<sup>6</sup>: Դատելով Թեոփիլակտեսի τὸ φρούριον τὸ Χλωμαρῶν և Կեդրենոսի (1,693) τὸ Χλόμαρον φρούριον -արմատահայտություններից, կարելի է ենթադրել, որ Գևորգ Կիպրացու մոտ ինչ-ինչ պատճառներով ընկել է Χλωμαρῶν-ը, իսկ φρούριον -ը վերածվել է Φλωριανῶν -ի<sup>7</sup>: Համաձայն Հովհան Եփեսացու «Եկեղեցական պատմության» Քղիմար ամրոցի մերձակայքում, որը նա կոչում է Կլիմար, գտնվում էր Պոմ ամրոցը. «Նա (Մավրիկիոս կայսրը -Հ.Բ.) պաշարեց ամրոցներն ու դրանցից Պոմ անունով մի (ամրոց) նվաճեց, որի մեջ էլ տեղավորվեց հռոմ գործը: Կլիմար անունով մի այլ ամրոց, որտեղ պարսիկները դիմադրություն ցույց տվեցին, նրանցից փրկագին վերցրեց ու (ազատ) թողեց: Այնտեղ նրանք իրար դիմաց էին գտնվում, բայց (հետո) խաղաղության դաշինք կրեցեցին և առանց վախի առևտուր էին անում»<sup>8</sup>: Դժվար չէ տեսնել, որ Պոմ ամրոցը գտնվել է պարսիկներին պատկանող տարածքում և պարզապես նվաճվել է Մավրիկիոսի կողմից: Վերջինս, որ անտարակույս նույնանում է սեպագիր արձանագրությունների Սր(ρ)սոս-ին կամ Ρսոս-ին<sup>9</sup> և բյուզանդական աղբյուրների Ἀφουρων -ին<sup>7</sup>, մինչև այսօր էլ պահպանվել է Ֆում անունով, որը գտնվում է Լիջե կամ Իլիջե կոչվող գյուղաքաղաքի մոտ, մի քանի կմ նրանից դեպի արևելք<sup>8</sup>: Պարսկական տիրույթներում էր գտնվում

<sup>1</sup> Н. В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 117-118: Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոց»-ի, էջ 89:

<sup>2</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 10:

<sup>3</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 47, 167: Տե՛ս նաև Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 161:

<sup>4</sup> φρούριον „նշանակում է պահակավանդ, ամրություն, կայազոր: Տե՛ս Древнегреческо-русский словарь, составитель И. Х. Дворецкий, том II, Москва, 1958, էջ 1749:

<sup>5</sup> «Ատրական աղբյուրներ», Ա, էջ 458: Տե՛ս նաև АВИИУ, 29, ծան. 1:

<sup>6</sup> АВИИУ, 29; 67 (թ, ж), 68 (а, 1): Տե՛ս նաև Н. В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 208-209:

<sup>7</sup> Theophyl. Simocatta, I, 12, II, 8-9; III, 15: Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 47: Պոմ կամ Աֆումոն ամրոցը Քաղիրթ գետի ձախափնյակում է տեղադրել Հ. Գեյցերը, մոտավորապես Ներջիկի շրջանում (տե՛ս Georgii Cypril Descriptio... -ի քարտեզը), սակայն ծանոթագրության մեջ (էջ 167) ընդունում է Գ. Հոֆմանի տեղադրությունը՝ համաձայն Moltke-Kiepert-ի քարտեզի: Ս. Ադոնցը Աֆումի տեղադրությունը Ֆումի տեղում համարում է վերջնական (Армения в эпоху Юстиниана, էջ 9):

<sup>8</sup> Карта Генерального штаба, масштаб 1:200000, пл. 10-37-17, изд. 1982 г.

<sup>1</sup> «Աշխարհացոց Մովսեսի Խորենացու», էջ 30. «զՀաշտենս, յորմէ բոխեն աղբուր Տիգրիս գետոյ»:

<sup>2</sup> Անդ, էջ 30. «զԼիտետ, զԱրձն, ընդ որոց իջանէ գետն Քաղիրթ, գոր Շիթմա կոչեն Տաճիկա այսինքն արևնարբու», էջ 37-38. «ևայն Քաղիրթ, որ բոխէ ի լեռանց Աալնայ եւ Սանասնոյ, և իջեալ կորէ իրերաց զԼիրկերտ և զՔղիմար, որով բաժանեցան Հռոմք եւ Պարսիկա, եւ կոչի այժմ Շիթիթմա, որ է արևնարբու»: Պարսկալիտ Կեսարացի, էջ 19. «Կելերը (բյուզանդական գրավար - Հ. Բ.) իր գորարանակով անցավ Լիմֆիոս գետը և հարձակվեց Արզանենեի վրա», էջ 59. «ևա Լիմֆիոս գետի ափին է, որը սահմանագիծն է հռոմեացիների և պարսիկների երկրների միջև», էջ 115. «Այս Պետրոսը ծագումով Արզանենեից էր, որը հնոց պարսիկներին էր ենթակա և գտնվում էր Լիմֆիոս գետից այն կողմ», էջ 192. «... որովհետև այստեղ հռոմեացիների և պարսիկների սահմանը Լիմֆիոս գետն է: Գետի մյուս ափին է գտնվում Արզանենե (իսկ՝ Արզանենե -Հ.Բ.) երկիրը, որ դեռ վաղուց հպատակ էր պարսիկներին»: Բնագիրը տե՛ս Procopii Caesarensis Opera omnia, recognovit Jacobus Haury, Lipsiae, 1905-1913: Theophylactus Simocatta, Historia, ed. De Boor, Lipsiae, 1887, I, XII, I, III, IV, 2: Տե՛ս նաև Феофилакт Симокатта, История, Москва, 1957, էջ 41-74: Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 46-47:

<sup>3</sup> «Աշխարհացոց Մովսեսի Խորենացու», էջ 37:

նաև խիստ անառիկ Ակբա կամ Ակբաս ամրոցը, որն այնքան մոտ էր Ափոմին, որ երկու ամրոցների բնակիչները ջահերով իրար լուր էին հաղորդում<sup>1</sup>: Թեոփիլակտես Սիմոկատան հայտնում է, որ Ակբասը գտնվում էր Նիմֆիոս գետի մոտ, իսկ Հովհան Եփեսացին վկայում է, որ այն Տիգրիս գետի ափին էր, սահմանի վրա, Նփրկերտ-Մայփերկատի դիմաց գտնվող մի բարձր լեռան վրա<sup>2</sup>: Առաջնորդվելով հիշյալ տեղեկություններով, բնականաբար չի կարելի համաձայնվել Ակբասի Ս. Երեմյանի առաջարկած տեղագրության հետ, համաձայն որի վերջինս գտնվել է Քաղիրթ կամ Բաթմանա ջուր գետի և նրա Տալվորիկ ու Սասնա ջուր վտակների ջրկիցի միջագետքում, ներկայումս Հավար կոչվող լեռնակի վրա, որն ունի 777 մ բարձրություն<sup>3</sup>:

Այդօրինակ տեղորոշման հետևանքով Ափոմը, որի տեղագրությունը կասկածներ չի հարուցում, և Ակբասը հայտնվում են իրարից շուրջ 60կմ հեռավորության վրա: Հասկանալի է, որ նման տարածությունների դեպքում, երբ տեղանքը անզամ ոչ թե լեռնային է, այլ հարթավայրային, ոչ մի խոսք չի կարող լինել անզամ ջահերով հաղորդակցության մասին: Հետևաբար Ակբաս ամրոցը պետք է փնտրել անհամեմատ հյուսիս-արևմուտք, Ֆոմի մերձակայքում, Նիմֆիոս գետի ձախ ափին: Անշուշտ ոչ միայն դժվար է, այլև պարզապես անհնարին առանց տեղազննության տեղորոշել Ակբաս ամրոցը, սակայն ելնելով տեղանքի և մակերևույթի առանձնահատկություններից, կարելի է առաջարկել մի հավանական տեղագրություն: Ներկայիս Սարոմ, որը հինավուրց Նիմֆիոսի վերին հոսանքի շրջանն է, և Թեփե (Դլիջե) գետակների ջրկիցից մի քանի կմ հյուսիս-արևելք բարձրանում է Լիս կոչվող լեռնակը 1118 մետր բարձրությամբ: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ այն տեսանելի է Տոմից, ուստի, եթե նրա վրա պահպանվել են ամրոցի մնացորդներ, ապա այն պատմական Ակբասն է<sup>4</sup>:

Պարսկական ամրություններին դիմակայում էին հռոմեական կամ բյուզանդական տիրապետության տակ գտնվող **Մարտիրոպոլիս-Նփրկերտ** և **Աթթալիս** ու **Ֆիս** (Φεισῶν) ամրոցները և վերջինիս մերձակայքում գտնվող անմատչելի լեռնանցքները: Այդ մասին հետաքրքիր տեղեկություններ է պահպանել Պրոկոպիոս Կեսարացու «Կառուցումների մասին» աշխատությունը. «Մարտիրոպոլիսի արևմուտք գտնվում է Ֆեյսոն անունով վայրը, նույնպես

*Սոֆանենե կոչվող Հայքում, Մարտիրոպոլիսից մեկ օրվա ճանապարհից մի քիչ պակաս հեռավորության վրա: Այս վայրից այն կողմ, մոտ ութ մղոն հեռավորության վրա բարձրաբերձ և բուլորովին անանցանելի լեռներն իրար միանալով կազմում են երկու՝ իրար շատ մոտ գտնվող լեռնանցքներ, որոնց սովորաբար կոչում են Կլեյսուրներ: Պարսարմենիայից Սոֆանենե գնացողների համար, որտեղից էլ նրանք գնան՝ պարսկական սահմաններից, թե Կիթարիզոն ամրոցի վրայով, պետք է անցնեն միայն այդ երկու լեռնանցքներից: Տեղացիք (լեռնանցքներից) մեկն անվանում են Դլիթիսոս, իսկ մյուսը՝ Սաֆխաս: Թշնամիներին այս ճանապարհից զրկելու համար, այս վայրերը կարոտ էին առավել ապահովության և հոգատարության: Ընդհակառակը, անցյալում մարդիկ անպաշտպան էին թողել դրանք: Հուստինիանոս կայսրը և Ֆեյսոնում, և լեռնանցքներում նշանավոր և անառիկ ամրություններ կառուցեց, կայազոր հաստատեց և այսպիսով երկիրը բարբարոսների համար միանգամայն անմատչելի դարձրեց»<sup>1</sup>: Հենիի և Հազրուի շրջանում, Մայաֆարկինից ոչ մեծ հեռավորության վրա ներկայումս կա մի գյուղ Ֆիս կամ Ֆիշ անունով<sup>2</sup>: 1861 թ. Դիարբեքի անգլիական հյուպատոս Ջ. Թեյլորը, այցելելով Ֆիս, վերջինիս հյուսիսային կողմում արձանագրեց մի մեծ վեհաշուք ամրոցի մնացորդները, որոնք փռված էին շուրջ մեկ մղոն պարագծով: Դիրքը, անառիկությունը և անունը աներկբայելիորեն վկայում էին հիշյալ Ֆիսի և պատմական Ֆեյսոնի նույնությունը: Նման տեսակետը նոր և ուժեղ կռվան է ձեռք բերում ի դեմս լեռնանցքների, որոնցից առաջինը, իրոք, գտնվում է Ֆիսից շուրջ 8 մղոն հեռավորության վրա: Քննարկելով սույն խնդիրը, Ն. Արոնցը հիմնավորապես ցույց է տալիս, որ Պրոկոպիոսի հիշատակած Դլիթիսոսը հայկական աղբյուրների Օլորի լեռնանցքն է, որը ասորական սկզբնաղբյուրներում հանդես է գալիս Halōras, իսկ արաբականում՝ Halūris անուններով<sup>3</sup>: Ջարգացնելով իր տեսակետը, հեղինակը գտնում է, որ Թեոփիլակտես Սիմոկատայի հիշատակությունն այն մասին, որ Փիլիպիկոս զորավարի կողմից վերանորոգվել են Ֆաթախոն և Ալալեյսոս ամրոցները<sup>4</sup>, վերջիններս համապատասխանում են լեռնանցքների պաշտպանության համար Հուստինիանոսի կառուցած բերդերին<sup>5</sup>: Շատ հնարավոր է, որ նշանավոր հայագետի տեսակետը համապատասխանում է իրականությանը, սակայն կան նաև այն կաս-*

<sup>1</sup> Theophyl. Simocatta, I, 12:

<sup>2</sup> «Ասորական աղբյուրներ», Ա, էջ 459:

<sup>3</sup> Ս. Տ. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), քարտեզ, 9-4: Карта Генерального штаба, пл. 10-37-17:

<sup>4</sup> Հ. Հյուբշմանը չի բացառում, որ Ափոմը տարբեր է Փոմից, իսկ Ափոմը, Ակբան և Քղիմարը գտնվել են Բաթմանա ջրի միջին հոսանքի շրջանում (Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 163):

<sup>1</sup> Պրոկոպիոս Կեսարացի, տե՛ս «Բյուզանդական աղբյուրներ», Ա, էջ 193:

<sup>2</sup> Ռուսական տասվերստանոց քարտեզ, պլանշետ թիվ 82: Карта Генерального штаба, пл. 10-37-17: Տե՛ս նաև Nouvelle carte générale des provinces asiatiques de l'empire Ottoman par Henri Kiepert, 1884:

<sup>3</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 11:

<sup>4</sup> Theophyl. Simocatta, II, 9., το μὲν προσαγορεύεται Θαδαχῶν. το δ' ἕτερον Ἀλαλεισός...

<sup>5</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 11:

կածի տակ դնող հանգամանքներ: Այսպես, դատելով Սիմոկատայի տվյալներից, բյուզանդական զորավար Փրիլպպիկոսը ամրոցները վերանորոգել էր Աֆոնոսից դեպի Ամիո ուղերթի ժամանակ, հետևաբար շատ կասկածելի է, որ նա բարձրանար լեռնանցքները և ապա միայն շարժվեր Ամիո: **Ֆաթախոնը** կամ ավելի ճիշտ **Քաթախոնը** ոչ այլ ինչ է, բայց եթե **Աթթախ** ամրոցը, որն իրոք կարող էր հայտնվել զորավարի ճանապարհին դեպի Ամիո շարժվելիս: Ինչ վերաբերում է Ալալեյոս կամ Ալալեյս ամրոցին, ապա կամ թե ակամա ստիպված ենք այն տեղադրել Աթթախից դեպի հարավ ընկած շրջանում: Վերջնական տեղադրություն առաջարկել չենք կարող, սակայն կամենում ենք ընդգծել մի իրողություն ևս: Ամրոցները վերանորոգվել էին Իզալա լեռան շրջակայքը պաշտպանելու համար, ուստի կամ պետք է ընդունել լեռնանցքների շրջանում ևս մեկ Իզալա լեռան գոյությունը, որի հնարավորությունը չի ընձեռում ոչ Սիմոկատայի հաղորդումը և ոչ էլ որևէ մեկ այլ աղբյուր կամ էլ հաշտվել այն մտքի հետ, որ հիշատակության Իզալան Մասիոս լեռների հանրահռչակ Իզալան է, որի պաշտպանությունը ապահովող Ալալեյս ամրոցը չէր կարող գտնվել Հայկական Տավրոսի լեռներում, այլ պետք է տեղակայվեր Իզալայից ոչ մեծ հեռավորության վրա՝ Տիգրիսի ձախափնյակում և կամ անգամ աջափնյակում: Ինչ վերաբերում է **Սաֆխաս** կամ **Սափխաս** լեռնանցքին, ապա Ա. Երեմյանը այն տեղադրել է Օլորի լեռնանցքից մի փոքր հյուսիս<sup>1</sup>: Նման տեղադրությունը, մեր կարծիքով, անընդունելի է մի շարք պատճառներով: Նախ, լեռնանցքներից մեկը պետք է գտնվեր Ֆեյսոնից 8 մղոն հեռավորության վրա, հետևաբար Օլորի լեռնանցքը այդ պայմանին չի բավարարում և առավել ևս չի բավարարի դրանից հյուսիս գտնվող որևէ այլ լեռնանցք: Դատելով Պրոկոպիոս Կեսարացու վկայությունից, լեռնանցքներին նմանօրինակ անվանումներ էին տվել տեղացիք, որոնց տեսանկյունից մտնելու դեպքում, պետք է ընդունել, որ առաջինը կհիշատակվեր Օլորի լեռնանցքը: **Սաֆխաս Կղեսուրը**, մեր կարծիքով, պետք է տեղադրել Նիրիբու լեռներում, այն վայրում, որը կտրում է դեպի Օլոր գնացող ճանապարհը: Դրա օգտին են խոսում ոչ միայն նշված լեռնանցքի հեռավորությունը Ֆեյսոնից, այլև Նիրիբու լեռների անունը: Նիրիբու-Նիրիբա ակկադերեն բառացի նշանակում է լեռնանցք<sup>2</sup>, հետևաբար հենց լեռնանցքի առկայությունն է Նիրիբու անունը հաղորդել լեռներին:

Կատարված քննությանը վերջակետ դնելով, նշենք, որ Գևորգ Կիպրացու Մետապոտամիա կամ Չորրորդ Հայք (Արմենիաս) կոչված թեմում, որի կենտրոնն էր Ամիոնը, գտնվում էր հիշյալ պրովինցիայի նկատմամբ վարչական

<sup>1</sup> U. S. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.) քարտեզ, 9-4:

<sup>2</sup> Н. В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 153:

որոշ ինքնավարություն ունեցող Արզանենն երկիրը (Κλίματος Ἀρζανηνίς) Դատելով վերը բերված տվյալներից, վերջինիս սահմանը պրովինցիայի մնացած հատվածի հետ անցնում էր նույն գծով, ինչ պարսկա-բյուզանդական սահմանը մինչև 591 թ. Հայաստանի երկրորդ բաժանումը: Ուստի պատահական չէ, որ Գևորգ Կիպրացու հաղորդումները հար և հարազատ են նախորդ հեղինակների տվյալներին: Այսպես, Արզանենն կլիմայի մեջ հեղինակը հիշատակում է Աֆոնոն, Արիբաքոն, Ֆլորիանոն և մի քանի այլ ամրոցներ, իսկ Մետապոտամիա պրովինցիայի մնացած հատվածում Աթթախ բերդը<sup>3</sup>: Առաջինները, ինչպես արդեն տեսանք, մինչև 591 թ. իրոք գտնվում էին պարսկական տիրապետության ներքո, քանի որ Աֆոնոնը Ֆոան է, Ֆլորիանոնը՝ Քղիմարը, Արիբաքոնը՝ ներկայիս Հարբախի<sup>4</sup> գյուղը, իսկ Աթթախը գտնվում էր հռոմեական հատվածում: Արդ, եթե անցկացնենք Սոֆենե-Մեծ Ծոփքի հյուսիս-արևելյան սահմանը, ապա այն Նիրիբու լեռներից թեքվել է հարավ, անցել Ֆոանի արևմտակողմով, Իլիջա կամ Թեփե և Դոնիգա գետակների ջրբաժան գծով, հարավում թողնելով Ֆիսը և Աթթախը, հասել է ներկայումս Քերվաս կոչվող գետակը և այնուհետև ընթացել Թեփե գետակով մինչև Բաթմանա ջուր կամ Քաղիրթ:

Մեզ մնաց քննարկելու Մեծ Ծոփքի հարավային սահմանի խնդիրը: Ըստ «Աշխարհացոյց»-ի այն խիստ հստակ է և անցնում է Տիգրիս գետով<sup>5</sup>: Սակայն դատելով Ստրաբոնի և Փավստոս Բուզանդի տեղեկություններից, Մեծ Ծոփքը պետք է գրավեր ոչ միայն Տիգրիսի ձախափնյակը, այլև աջափնյակի մի հատվածը: Ծոփաց թագավորության ժամանակներում Ծոփքի հարավային սահմանները հասնում էին մինչև Մասիոս լեռները<sup>6</sup>, իսկ համաձայն Փավստոսի Մեծ Ծոփքի մեջ էր գտնվում Տիգրիսի աջափնյակում գտնվող Բնաբեղ ամրոցը<sup>5</sup>, հետևաբար, ի տարբերություն ընդունված կարծիքի, որ Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության սահմանները IV դարում պետության հարավ-արևմտյան շրջանում անցնում էին ամբողջապես Տիգրիս գետով, իրականությանը չի համապատասխանում: Թե ինչպե՞ս էին անցնում Մեծ Ծոփքի սահմանները Տիգրիսի աջափնյակում IV դարում, առանձին քննության հարց է: Պարզ է միայն, որ դրանք հասնում էին մինչև Մասիոս լեռները և Ծավդեքը արևմուտքից եզերող լեռնաբազուկները: Մասիոսի լեռների ջրբաժանի շրջանում էր գտնվում նրա հարավային սահմանները պահպանող Բնաբեղ ամրոցը:

<sup>1</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 46-48:

<sup>2</sup> Карта Генерального штаба, пл. 10-37-17:

<sup>3</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Կորենացու», էջ 30:

<sup>4</sup> Strabo, XI, 14, 2:

<sup>5</sup> Փավստոս Բուզանդ, էջ 32:

Մեծ Ծոփքը, հակառակ սպասվածին, «Աշխարհացոյց»-ում հանդես է գալիս նրա կենտրոնական բնակավայրի՝ Նփռեստ կամ Նփրկերտ քաղաքի անուկով: Բնականաբար, հարց է ծագում, թե ե՞րբ և ի՞նչ պայմաններում այն կարող էր հանդես գալ որպես վարչական միավորի անվանում: Հայկական և բյուզանդական աղբյուրների հաղորդումներն իրավունք են տալիս եզրակացնելու, որ IV-VI դարերում կամ անգամ VII դարի առաջին կեսին Նփրկերտ գավառանվան կիրառումը պարզապես հնարավոր չէր: Հայկական վարչա-քաղաքական բաժանման համակարգին այնքան ներդաշնակ էր Մեծ Ծոփք անվանումը, որ այն մշտապես օգտագործվում է Փավստոս Բուզանդի կողմից<sup>1</sup>: 387 թ. կայսերական հրովարտակում երկրամասը հիշատակվում է Սոֆանենե անունով, որ պարզապես նույնական է Մեծ Ծոփքին<sup>2</sup>: Գավառը Մեծ Ծոփք, այսինքն Սոֆանենե է կոչում Պրոկոպիոս Կեսարացին<sup>3</sup>, իսկ ասորի հեղինակներ Յոզվա Սյունակյացը (Ստիլիտ) և Հովհան Եփեսացին անվանում են Ծոփք, հասկանալով դրա տակ Մեծ Ծոփքը<sup>4</sup>:

Հասկանալի է, որ նման կացության պայմաններում օրակարգի հարց է դառնում մյուս խնդիրը, թե երբևի՜ն Նփրկերտ անունը այնքան կիրառական դարձավ, որ վերածվեց գավառանվան: Նփռեստի կամ Նփրկերտի ամենահին հիշատակությունը հայկական աղբյուրներում վերաբերում է «Աշխարհացոյց»-ին: Այնուհետև քաղաքը բավականաչափ հաճախ հիշատակվում է զարգացած ավատատիրության շրջանի հեղինակների երկերում: Հովհաննես Դրասխանակերտցին անդրադառնում է քաղաքանվանը՝ կապված Մավրիկիոս կայսեր վերակառուցումների հետ. «Չորրորդն կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք է Մարտիրոսացալոյս, այսինքն Նփրկերտ»<sup>5</sup>: Հայոց կաթողիկոս պատմիչի երկում քաղաքը հիշատակվում է ևս երկու անգամ, սակայն միայն Մարտիրոսալոյս անունով<sup>6</sup>: Քաղաքանունը ավելի հաճախ հանդիպում է Ասողիկի «Պատմութիւն տիեզերական»-ի մեջ և որպես սոսկ Նփրկերտ և որպես Մարտիրոսալոյս անվան համարժեք<sup>7</sup>: Այնուհետև Նփրկերտ անվան հիշատակությունները կրում են հազվագյուտ բնույթ, ինչպես օրինակ Ստ. Օրբելյանի

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ. էջ 6, 21, 32, 42, 72, 114, 141, 160, 206, 212, 221 և 232:

<sup>2</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 41:

<sup>3</sup> «Բյուզանդական աղբյուրներ», Ա, էջ 59, 191-193, 299, 304:

<sup>4</sup> «Ասորական աղբյուրներ», Ա, էջ 142, 184, 409, 435, 452, 458:

<sup>5</sup> «Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց», էջ 68:

<sup>6</sup> Անդ, էջ 18. «Ի Ծոփաց մինչև ցաղաքն Մարտիրոսաց», էջ 48. «Ի Մարտիրոսաց քաղաքին»:

<sup>7</sup> «Ատեփանոսի Տարսնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», էջ 192. «Եւլաթայ և Նփրկերտոյ ամիրայն Բատն», էջ 193. «մերձ առ քաղաք նորա ի Մարտիրոսաց պոլիս որ է Նփրկերտ, ի տեղին որ Փշիաշն կոչի», էջ 195. «քաղաքս իրեսանց՝ գԼփրկերտ, գԼմիթ, գԼգրուն և գալլ ամենայն», էջ 247. «Բատն Ապահունեաց և Նփրկերտոյ ամիրայն», էջ 267, 268, 276:

երկում<sup>1</sup>, քանի որ քաղաքանունը դուրս է մղվում արաբական Maī yāfāriqin ձևի հայկական Մուհարկին, Մուֆարդին և Մուփարկին տարբերակներով<sup>2</sup>:

Նփռեստին կամ Նփրկերտին, անշուշտ, համապատասխանում է ասորական Maifarqet, Maiparqet կամ Maiperqat անունը, որն, ինչպես վկայում են ասորական հեղինակները, օգտագործվել է նաև որպես երկրանուն<sup>3</sup>: Համաձայն Մայփերկատի կամ Նփրկերտի եպիսկոպոս Մարութայի վարքի Թեոդոս Բ (408-450) կայսեր և պարսից Հազկերտ Բ արքայի (438-457) իշխանության շրջանում հիշյալ Մարութան կայսրից խնդրում է Ծոփաց քաղաքը ամրացնել և այնտեղ եկեղեցի շինել, որտեղ այնուհետև նա հավաքում է քրիստոնյա սրբերի մասունքները: Այդ իսկ պատճառով Նփրկերտը ստանում է Մարտիրոսաց քաղաք կամ Մարտիրոսալոյս անունը, որը պահպանվեց երկար ժամանակ<sup>4</sup>: Արդ, եթե Մեծ Ծոփք գավառանունը փոխարինվեր կենտրոնական քաղաքի անունով, ապա ենթադրելի է, որ այն կարող էր ստանալ, գոնե մինչև արաբական տիրապետության շրջանը, Մարտիրոսալոյս անունը և ոչ թե Նփրկերտ, քանի որ V-VII դարերում Մեծ Ծոփքը մշտապես գտնվել է բյուզանդական տիրապետության ներքո: Անդրադառնալով այս խնդրին, Հ. Հյուբշմանն այն կարծիքն է հայտնել, որ Մեծ Ծոփք գավառանվան կիրառությունը դադարել է Հայաստանի 591 թ. բաժանումից հետո, երբ Արզանենե-Աղձնիքը միացվեց բյուզանդական տիրույթներին և մաս կազմեց Միջագետք կամ Մեսոպոտամիա պրովինցիայի: Հանրահռչակ հայագետը հակված է մտածելու, որ հենց այս իրողությունն է արձանագրել «Աշխարհացոյց»-ը<sup>5</sup>: Մեր ուսումնասիրությունները մերժում են նման եզրակացությունը: Նփռեստ կամ Նփրկերտ անվանումը կարող էր դառնալ գավառանուն, ինչպես կարելի է դատել հենց «Աշխարհացոյց»-ից, մինչև IV դարը: Նախ հարկ ենք համարում նշել, որ համաձայն Թեոփանես Խոստովանողի քաղաքը Մարտիրոսալոյս էր կոչվում VII դարում և VIII դարի սկզբին<sup>6</sup>, հետևաբար հազիվ թե բյուզանդական իշխանության առկայությամբ գավառը կոչվեր Նփրկերտ, երբ կենտրոնը պաշտոնապես կոչվում էր Մարտիրոսալոյս: Ճիշտ է, Ջաքարիա Միտիլենացին (Հռետոր) VI դ. հիշատակում է Մայփերկատ քաղաքը, սակայն նրա ժա-

<sup>1</sup> Ատեփանես Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 404. «քաղաքին Մարտիրոսաց որ Նփրկերտ կոչի»:

<sup>2</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 164:

<sup>3</sup> Անդ, էջ 164:

<sup>4</sup> Անդ, էջ 164-165:

<sup>5</sup> Անդ, էջ 165:

<sup>6</sup> Թեոփանես Խոստովանող, տե՛ս «Բյուզանդական աղբյուրներ», Դ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 26, 94:

մանակակից Հովհան Եփեսացու վկայությամբ Մայփերկատը Ծոփքի (իմա՝ Մեծ Ծոփք) մեջ էր գտնվում<sup>1</sup>: Ուշադրությունից չպետք է վրիպի մի հանգամանք ևս: Ջաբարիա Հռետորի «ժամանակագրության» հունարեն բնագիրը մեզ չի հասել և երկը պահպանվել է մի ասորի անհայտ հեղինակի աշխատության մեջ: Ասորի հեղինակ է նաև Հովհան Եփեսացին, ուստի հիշյալ անձինք Մայփերկատ (Նփրկերտ) քաղաքանունը հաղորդում են ոչ թե ելնելով պաշտոնական կացությունից, այլ տուրք տալով ասորական ավանդույթին:

**«Աշխարհացոյց»**-ի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ Աղձնիքի կենտրոնական կամ կուսակալանիստ գավառը ոչ թե Արձնն էր, այլ Նփռետը կամ Նփրկերտը, որովհետև աշխարհի նկարագրությունը սկսվում է նրանից<sup>2</sup>: Անշուշտ, իրավացիորեն հարց կծագի, թե ինչո՞ւ այդ սկզբունքը չի գործում մյուս աշխարհների նկատմամբ: Խնդիրն այն է, որ մյուսների դեպքում աշխարհի նկարագրությունը սկսվում է ոչ թե կենտրոնից, այլ այս կամ այն ծայրամասից և շարունակվում է աշխարհագրական դասավորության հերթականությամբ: Այն, որ սկզբնապես Նփրկերտը պետք է լիներ երկրամասի գերագահ գավառ, բացատրվում է այն պարզ իրողությամբ, որ հազիվ թե աշխարհի կուսակալի աթոռանիստը գտնվեր արդեն բոլորշխության վերածված Արձն-Աղձնում: Թագավորի ոստիկանը իշխանանիստ կունենար մեկ այլ գավառ, որի վրա չէր տարածվում բոլորշխի իշխանությունը, իսկ այդպիսին կարող է լինել կենտրոնական դիրք զբաղեցնող Նփրկերտը կամ Մեծ Ծոփքը: III դ. քաղաքական թոհ ու բոհի շրջանում, երբ Մեծ Հայքի թագավորությունը ռազմակալումների ենթարկվեց Սասանյանների կողմից, երբ Աղձնիք աշխարհի տարածքը ժամանակավորապես միացվեց պարսկական տիրույթներին, Նփռետը կամ Նփրկերտը վերածվեց պարսից կուսակալի կենտրոնի, որի հետևանքով պարսից վարչությունը պաշտոնապես գավառը վերանվանեց Նփրկերտ: Իսկ, երբ Սասանյանները Հայաստանում աշխարհագրեր անցկացրեցին որպես Մեծ Հայքի թագավորներ, ապա այն տեղ գտավ Մեծ Հայքի գավառացանկում և հետագայում որպես արխիվային նյութ օգտագործվեց **«Աշխարհացոյց»**-ի հեղինակի կողմից: Հետագայում, երբ պայմանները փոխվել էին և Արձն անունը կարծես պարտավորեցնում էր նկարագրությունը սկսել վերջինիս անվանումից, **«Աշխարհացոյց»**-ի համառոտ խմբագրության խմբագիրների կողմից կատարվել է հիշյալ երկու գավառանունների փոխատեղություն, որի հետևանքով առաջին պլանի վրա է հայտնվել Արձնը<sup>3</sup>: Ահա այս ձևով է պատկերանում մեզ Նփռետ կամ Նփրկերտ անունը կրող վարչական միավորի հան-

դես գալը: Պարսիկներին երկրից վռնդելուց հետո, բնական է, որ արքունիքը վերականգնեց գավառի Մեծ Ծոփք անվանումը, որն ամեն հարմար առիթով օգտագործում է Փավստոս Բուզանդը:

Հայագիտության մեջ տարբեր տեսակետներ են արտահայտվել Նփրկերտ անվան ծագման վերաբերյալ: Հ. Մարքվարթը և Հ. Հյուբշմանը, ինչպես նաև շատ այլ հեղինակներ գտնում են, որ անտարակույս է Նփրկերտ և ասորական Maifarqet կամ Maiferqat անունների նույնությունը: Սակայն գերմանացի գիտնականների համար այնքան էլ հստակ չէ, թե **Նփր**-ը աղերս ունի հունական Νικηφόριος -ին, թե ծագում է պարսկական nēfarr-ից (պահլ. nēwak-farr), որ թարգմանվում է Ἐναφούριος այսինքն «Բարեբախտ»<sup>4</sup>: Այսուհանդերձ նրանք չեն մերժել մեկ այլ բացատրության հնարավորությունը: Բ. Պիտտրովսկին հակված է **Նփր**-ը բխեցնելու Վանյան արձանագրությունների **Նփխրիա**-ից և ասորեստանյան ու խեթական սեպագիր արձանագրությունների **Նփխրիա**-ից<sup>5</sup>: Վերջին տեսակետը, դատելով Նփխրիայի աշխարհագրական դիրքից, մեծ հավանականություն ունի, չնայած ըստ էության նրա իմաստը մեզ համար մնում է գաղտնիք:

Յողնելով այս հարցի վերջնական քննությունը լեզվաբաններին և, մասնավորապես, ասորագետ մասնագետներին, մենք փորձենք պարզել մեկ այլ հարց: Նույնական է արդյո՞ք Նփրկերտը Տիգրան Մեծի կառուցած Տիգրանակերտ մայրաքաղաքին: Հայագիտության մեջ վաղուց արդեն արմատացած է գերմանացի հետազոտողներ Լեհման-Հաուպտի և Վալդեման Բելքի այն տեսակետը, որ **Տիգրանակերտը** գտնվել է Տիգրիս գետի հյուսիսակողմում, այսինքն ձախափնյակում և տեղորոշվում է **Նփրկերտ** կամ **Ցարկին** կոչվող քաղաքի տեղում<sup>6</sup>: Եթե հիշյալ հեղինակները նման եզրակացության հասել են տեղանքի սեփական հետազոտության հետևանքով, ապա նույն մտքին է հանգել գերմանացի զորավար Ֆելդմարշալ Մոլթկեն, առաջնորդվելով ռազմավարական նկատառումներով<sup>7</sup>: Հակոբ Մանանդյանը փորձել է առավել ևս հիմնավորել նման տեղադրությունը, հենվելով Պեվտինգերյան քարտեզի ուսումնասիրության վրա: Այսպես, հռոմեական աշխարհաքարտեզի Cymiza

<sup>1</sup> «Ասորական աղբյուրներ», Ա, էջ 301-303, 435, 452, 458, 459:

<sup>2</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Իրրեւացոյց», էջ 30:

<sup>3</sup> К. П. Патканов, Армянская география VII века, էջ 18: Տե՛ս **«Աշխարհացոյց»**-ի համառոտ խմբագրության ձեռագրերը:

<sup>1</sup> J. Marquart, *Ērānšahr*, էջ 161-162: Հ. Հյուբշման, Հին Հայքը տեղյոյ անունները, էջ 165:

<sup>2</sup> Б. Б. Пиотровский, К вопросу о происхождении армянского народа, «Известия» АН Арм. ССР (обществ. науки), 1945, № 6, էջ 12-13: Լույսի Օ происхождении армянского народа, Ереван, 1946, էջ 9, 20, 27: В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, էջ 106-107: И. М. Дьяконов, АВИИУ, № 40: Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, № 156 (DI + DII):

<sup>3</sup> С. F. Lehmann - Haupt, Armenien Einst und Jetzt, Reisen und Forschungen von C.F. Lehmann-Haupt, Erster Band, Berlin, 1910, էջ 381-429, 501-523:

<sup>4</sup> Н. Moltke, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839, Berlin, 1876, էջ 287:

կայարանի անունը նա սրբագրում է Cyldiza, հիմք ընդունելով M և ΛΔ տառերի շփոթման հնարավորությունը, և վերջինս նույնացնում ներկայիս Կիլիզի (տասվերստանոց քարտեզում Кильдиз) բնակավայրին, որը գտնվում է Ֆարկինից մոտավորապես նույն հեռավորության վրա, ինչ Cymiza-ն Տիգրանակերտից<sup>1</sup>: Թվում է, թե ավելի հաջող տեղադրություն Տիգրանակերտի համար, պարզապես հնարավոր չէ, սակայն այնուամենայնիվ առաջարկվել են նաև այլ տեղորոշումներ, որոնք արմատապես տարբերակվում են վերոհիշյալից: Այսպես, Ջախաուն գտնում էր, որ Տիգրանակերտը գտնվել է Մասիոս լեռների հարավահայաց լանջերին և նույնանում է Թել-Էրմենի վայրին, Մարդինի մերձակայքում<sup>2</sup>: Գերմանական դպրոցական պատմական ատլասում երկար ժամանակ Տիգրանակերտը տեղադրվում էր Արզնի (Խարզան) ավերակների շրջանում, որն առաջ էր քաշել գերմանացի հայտնի քարտեզագետ Հ. Քիպերթը<sup>3</sup>: Այս հարցի առնչությամբ գիտական աշխույժ բանավեճեր են ծավալվել մասնավորապես գերմանական պարբերականներում, փորձեր են արվել իմաստավորելու սկզբնաղբյուրների հակասական տեղեկությունները: Հ. Քիպերթը Տակիտոսի վկայությունն այն մասին, որ Տիգրանակերտի հեռավորությունը Մծբինից կազմել է 37 մղոն, սրբագրում էր, առաջարկելով septem et triginta-ն կարդալ centum et triginta, այսինքն հարյուր և երեսուն, որը նրան իրավունք էր տալիս Տիգրանակերտը տեղադրել Արզանի տեղում<sup>4</sup>: Դրան հակառակ Թ. Մոմզենը, հենվելով Ստրաբոնի և Տակիտոսի վկայությունների վրա, Տիգրանակերտը տեղորոշել է Մասիոս լեռան ու Տիգրիս գետի հարավակողմում և Մծբին քաղաքից հյուսիս ընկած շրջանում<sup>5</sup>: Տիգրանակերտի տեղադրությանը անդրադարձել են Կ. Էքհարդտը, Հենդերսոնը, Հ. Հյուբշմանը և ուրիշներ, սակայն ինչպես արձանագրում է «The Oxford Dictionary of Byzantium» հանրագիտարանը, այն մինչև այսօր էլ վիճարկելի է<sup>6</sup>: Տիգրանակերտի տեղադրությամբ զբաղված բոլոր հեղինակներն էլ կար-

կառուն դեմքեր են եղել պատմագիտության կամ քարտեզագիտության ու աշխարհագրության մեջ, ուստի կարծիքների բազմազանությունը ոչ այնքան վկայում է սոսկ նրանց սխալվելու, որքան հարցի հակասականության և սկզբնաղբյուրների իրարամերժության մասին: Աղձնիք աշխարհի ընտելության հետ կապված, մենք ևս ստիպված եղանք ուսումնասիրելու Տիգրանակերտի տեղադրության խնդիրը, որովհետև պատմա-աշխարհագրական շատ հարցադրումներ անմիջականորեն կապվում են քաղաքի ճշգրիտ տեղադրության հետ: Մեր ընտելությունը ոչ միայն կասկածի տակ է առնում Տիգրանակերտի նույնացումը Ֆարկին-Սիլվանին, այլև որոշակիորեն ցույց է տալիս, որ Նփրկերտ-Ֆարկին-Սիլվանը և Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը եղել են տարբեր, իրարից մի քանի տասնյակ կմ հեռավորության վրա գտնվող քաղաքներ: Դիմենք սկզբնաղբյուրներին:

Տիգրանակերտի վերաբերյալ ամենահին տեղեկությունները պահպանվել են Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ: Սակայն որքան էլ տարօրինակ լինի, բոլոր տեղեկություններն էլ իրար չեն համապատասխանում: Այսպես, անդրադառնալով Տավրոս լեռներին, նա գրում է. «Այսպես են կոչվում Տավրոսի հյուսիսային լեռները (իմա՝ Պարաքոթորաս). իսկ հարավայինը, Եփրատից այն կողմ, Կապադոկիայից և Կոմմագենից արևելք է տարածվում, սկզբնական մասում կոչվում է Տավրոս, որ բաժանում է Ծոփքը և մնացյալ Հայաստանը Միջագետքից. ոմանք էլ կոչում են Գորդյան լեռներ: Սրանց մեջ է նաև Մասիոս լեռը, որ գտնվում է Մծբինի և Տիգրանակերտի վերևը: Այստեղից ավելի բարձրանալով՝ կոչվում է Նպատ, այստեղ, լեռան հարավային կողմերում գտնվում են Տիգրիսի ակունքները»<sup>1</sup>: Մծբինի տեղադրությունը քաջ հայտնի է, ուստի, ելնելով այս հաղորդումից, պետք է այն տեղադրել Մծբինի մերձակայքում, Մասիոս լեռան հարավային կամ ծայրահեղ դեպքում հյուսիսային լանջերին: Իհարկե, պետք է խոստովանել, որ քիչ թե շատ ջրառատ գետերի բացակայությունը հյուսիսային լանջերին, առավել հավանական է դարձնում առաջին ենթադրությունը:

Նույն աշխարհագրագետի մյուս հաղորդման համաձայն Տիգրան Մեծը «Այս բոլորով հզորացած, Իբերիայի մոտ կառուցեց մի քաղաք՝ այս տեղի և Եփրատի կամուրջի միջև, որ կոչեց Տիգրանակերտ, և ավերելով 12 հունական քաղաքներ, նրանց բնակիչներին այնտեղ հավաքեց: Ընդհատվեց Լուկուլլոսի հարձակմամբ, որ հաղթեց Միհրդատին, Տիգրանակերտի վերաբնակիչներին իրենց տեղերն արձակեց, կիսավարտ քաղաքը հարձակմամբ կործանեց և մի փոքր գյուղ թողեց և նրան՝ Տիգրանին՝ Ասորիքից ու Փիլոսիկեից վտարեց»<sup>2</sup>:

<sup>1</sup> Strabo, XI, 12, 4:

<sup>2</sup> Անդ, XI, 14, 15:

12 Բ. Հ. Հարությունյան

<sup>1</sup> Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 90-92:

<sup>2</sup> E. Sachau, Ueber die Lage von Tigranokerta, AAWB, 1880, էջ 1 և շարունակ.:

<sup>3</sup> F. W. Putzgers, Historischer Schul-Atlas, Große Ausgabe, 53 Auflage, Bielefeld und Leipzig, 1926, էջ 37: H. Klepört, Über die Lage der armenischen Hauptstadt Tigranokerta, տե՛ս Monatsberichte der Berl. Akademie der Wissenschaften, 1873, էջ 117 և շարունակ.:

<sup>4</sup> "MdBAW," 1873, էջ 117 և շարունակ. Արզանում Տիգրանակերտը տեղորոշում է նաև Թ. Մինկլերը, տե՛ս T. Sinclair, The Site of Tigranacerta. II տե՛ս "Revue des Études Arméniennes", Paris, 1996-1997, tome 26, էջ 51-117:

<sup>5</sup> Die Lage von Tigranokerta, տե՛ս "Hermes", IX, 1875, էջ 193, ծան. 2.:

<sup>6</sup> K. Eckhardt, Die armenische Feldzüge des Lukullus, տե՛ս «Klio», IX, 1909: Site of Tigranocerta, տե՛ս Journal of Philology, հատ. 28, 1903, էջ 99: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 413-416: «The Oxford Dictionary of Byzantium», prepared at Dumbarton Oaks, Alexander P. Kazhdan, editor of chief, Alice-Mary Talbot..., Volume 2, New York, Oxford, 1991, էջ 1309:



Ուսումնասիրողներին թյուրիմացության մեջ է գցել վկայության Իբերիա անվանումը, որովհետև հեռավոր Վիրքի հիշատակությունը ոչ մի կերպ չի աղերսվում հիշյալ տարածաշրջանի հետ: Ուստի բնավ էլ պատահական չէ, որ Ստրաբոնի երկի թարգմանիչը՝ Գ. Ստրատանովսկին այն համարել է աղավաղում, գտնելով, որ այդ շրջանում Իբերիա անունով քաղաք չի եղել<sup>1</sup>: Ստրաբոնի «Աշխարհագրության» թարգմանիչը՝ Հորեյս Լեոնարդ Ջոնսը կիսում է այդ տեսակետը, քանի որ հիշատակվող անունը չի կարող նույնացվել Իբերիա երկրի հետ մեծ հեռավորության պատճառով, իսկ քննարկվող տարածաշրջանում այդ անունով քաղաք չի եղել: Այդ իսկ պատճառով Կրամերը, ելնելով նախորդ վկայությունից, քաղաքանունը սրբագրել է Նիսիբիս, իսկ Կ. Մյուլլերը՝ Խառան (Carrhae), որ թարգմանչի տեսակետով առավել ճշմարտանման է<sup>2</sup>: Լ. Աճառյանի թարգմանության մեջ քաղաքիս անունը՝ Ὀλιβερία է, որը, կարծում ենք, նույնպես սրբագրություն է, սկզբնաղբյուրի հակասությունը հաշտեցնելու մի հերթական փորձ<sup>3</sup>: Սրբագրությունների տարափը կամ բացատրության բացակայությունը լոկ վկայում են այն մասին, որ ուսումնասիրողներն իրենց կաշկանդել են նախորդ հիշատակությամբ և չեն կարող պատկերացնել, որ Տիգրան Մեծը ի վերջո կարող էր մի հերթական Տիգրանակերտ ևս կառուցել: Համենայն դեպս, Ջեվգմայի գետանցի շրջանում գտնվող Տիգրանակերտը, մեր խորին համոզմամբ, չի կարող նույնանալ Մծբինի շրջակայքում գտնվող Տիգրանակերտին, որովհետև Իբերիա անունը բնավ էլ, ամենադուրս չափով, չի կապվում հեռավոր Իբերիա-Վիրքի հետ և ոչ այլ ինչ է, բայց եթե Պտղոմեոսի հիշատակած Կյուրեստիկեի շրջանի Βέροια քաղաքը<sup>4</sup>, որը, հավանաբար, արտագրությունների հետևանքով Ստրաբոնի երկում վերածվել է Ἰβερία-ի: Որ այն իրոք կարող էր վերածվել **Բերիա-ի** կամ **Իբերիա-ի**, պարզորոշ հաստատում են Պեվտինգերյան քարտեզի և Անանուն Ռավենացու տվյալները, որտեղ քաղաքանունը համապատասխանաբար հանդես է գալիս Βerya և Beria գրությամբ<sup>5</sup>: Արդ, եթե մեր տեսակետը **Իբերիա-Բերիա** նույնացման մասին ճիշտ է, ապա Ստրաբոնի երկորդ հիշատակության Տիգրանակերտը՝ պետք է փնտրել ոչ թե Մծբինի հարևանությամբ, այլ

Ջեվգմայի գետանցի և Բերիա կամ Հալեպ քաղաքի միջև ընկած շրջանում: Հետևաբար, չնայած Ստրաբոնի հավաստիացմանը, թե խոսքը վերաբերում է Տիգրան Մեծի մայրաքաղաք Տիգրանակերտին, իրականում գործ ունենք հայոց նշանավոր արքայի անունը կրող մեկ այլ քաղաքի հետ: Հնարավոր է, որ նա պարզապես վերակառուցել է մի ինչ-որ հին քաղաք և վերանվանել իր անունով, իսկ հետագայում՝ Տիգրան Մեծի պարտությունից և նվաճված հողերի կորստից հետո, նոր անունը պարզապես մոռացվել է: Սակայն չի բացառվում, որ կառուցվել է նոր քաղաք, որն ավերվել է հռոմեացիների կողմից, որոնք աշխատում էին հայ նվաճող գահակալի կատարած գործերը կորստյան մատնել և մոռացության տալ: Թե որտե՞ղ է գտնվել, մասնավորապես, այդ քաղաքը, առանձին ուսումնասիրության խնդիր է, սակայն մեզ համար կասկածից դուրս է, որ Ստրաբոնի այս հիշատակության մեջ Տիգրանակերտը ոչ թե Տիգրանակերտ մայրաքաղաքն է, այլ մեկ այլ քաղաք: Պատահական չէ, որ հույն աշխարհագրագետի տեղեկությամբ Լուկոլլոսը Տիգրանակերտը ավերելուց հետո Տիգրանին դուրս մղեց Ասորիքից և Փյունիկեից, այսինքն, կարծես թե անուղղակիորեն, քաղաքանունը կապվում է Ասորիքի հետ:

Տիգրանակերտի մասին Ստրաբոնն ունի ևս երկու հաղորդում, որոնցից առաջինի համաձայն «Տիգրանը՝ հայոց թագավորը, շատ նեղեց Մաժակը իր բազմադիմի արշավանքների միջոցին դեպի Կապադովկիա. բոլորը տեղահանվելով փոխադրվեցին Միջագետք, և Տիգրանակերտը մեծ մասամբ նրանցով շենացավ. ապա Տիգրանակերտի առումից հետո, որոնք որ կարող էին ետ վերադարձան»<sup>1</sup>: Իսկ ըստ երկրորդի «[Միջագետքի] լեռնային մասը բավական բարեբեր է. եփրատի և [Ջեվգմայի] մոտակայքը (թե Կոմմագենի արդի կամրջի [Ջևգմայի] և թե Թափսակոսի հին կամրջի [Ջևգմայի]) բնակվում են Միգդոնացիք (այսպես են կոչել սրանց մակեդոնացիք). այդտեղ են Մծբին, (որ կոչվել է նաև Միգդոնիո Աստիոք, գտնվում է Մասիոս լեռան ստորոտը), Տիգրանակերտ, Կարբեսի շրջակայքը (իմա՝ Խառանի երկիր - Լ.Բ.), Նիկեփորի երկիրը, Քորդիրազա և Սիննակա, ուր կորավ Կրասոսը՝ Պարթևաց զորավար Սուրենի թակարդի մեջ բռնվելով»<sup>2</sup>: Ի՞նչ եզրակացությունների կարելի է հանգել սրանց լույսով: Ասենք, որ համաձայն երկրորդ տեղեկության, որը հար և նման է հույն աշխարհագրագետի ամենաառաջին հաղորդմանը, Տիգրանակերտը գտնվել է Մծբինի, Խառանի, Նիկեփորիոսի երկրի, Քորդիրազայի և Սիննակայի հարևանությամբ, կամ որ ավելի ճիշտ է, մերձակայքում, այսինքն տեղորոշվում է Մասիոս լեռների հարավային լանջերին: Համենայն դեպս, Նիկեփորիոսի երկրի և Խառանի երկրամասի հիշատակությունը բացա-

<sup>1</sup> Страбон, География, в 17 книгах, էջ 824:

<sup>2</sup> The Geography of Strabo, V, London, 1909, էջ 338-339:

<sup>3</sup> Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Լ. Աճառյան, էջ 67, 117:

<sup>4</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 14, 10:

<sup>5</sup> Լ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները, տե՛ս Tabula Peutingeriana, Segm. X4 -XII 2 (արտատպված Կ. Միլլերի Itineraria Romana -ից, էջ 635), էջ 271: Տե՛ս նաև K. Miller, Itineraria Romana, Römische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana, Stuttgart, 1916, էջ 635: Claudii Ptolemaei Geographia, vol. Primi, pars secunda, էջ 970, ծանոթագրությունները:

<sup>1</sup> Strabo, XII, 2, 9:

<sup>2</sup> Արդ, XVI, 1, 23:

ռոմ է այլընտրանքի հնարավորությունը: Կարծես թե այս տեղեկությանն է առնչվում նաև նախավերջին հաղորդումը, ըստ որի Տիգրանակերտը գտնվել է Միջագետքում, սակայն, կարծում ենք, այն ունի միանգամայն տարբեր մեկնաբանություն: Այդ հիշատակության մեջ Միջագետքն ընդհանուր բնույթ ունի և Տիգրանակերտը չի կարող որոշակիացվել մի որևէ կետում: Իսկ որ Տիգրանակերտ մայրաքաղաքը, որի տեղադրությունը մենք դեռ կորոշենք, կարող էր համարվել Միջագետքի քաղաք, պարզ երևում է ուշ շրջանի հեղինակների երկերից, մասնավորապես Գևորգ Կիպրացու երկասիրությունից, որտեղ Արզանենե-Աղձնիքը վարչականորեն միացված է Բյուզանդական Միջագետք պրովինցիային<sup>1</sup>:

Ելնելով վերը կատարված քննությունից, մենք ենթադրում ենք, որ Ստրաբոնի նշված տեղեկություններում տվյալներ են հաղորդվում երկու տարբեր քաղաքների մասին, որոնցից մեկը գտնվում էր բուն հայկական հողերում և երկրի մայրաքաղաքն էր, իսկ մյուսը Մծբինի մոտակայքում էր՝ Մասիոս լեռան հարավային փեշերին: Վերջինս պետք է նույնանա Թել-Էրմեն վայրին, Մարդինի մոտակայքում, որտեղ Զախաուն փորձում էր տեղադրել մայրաքաղաք Տիգրանակերտը: Այդ տեսակետից, կարծում ենք, նոր բացատրություն է ստանում Տակիտոսի տեղեկությունն այն մասին, որ Տիգրանակերտը գտնվել է Մծբինից 37 հռոմեական մղոն հեռավորության վրա<sup>2</sup>: Այդ տարածությունը կազմում է շուրջ 55 կմ, այսինքն ճիշտ այնքան, որքան կազմում է Մծբինից մինչև Թել-Էրմեն վայրը: Հետևաբար, ինչ-որ մի աղբյուրից իմանալով Մասիոս լեռների Տիգրանակերտի և Մծբինի միջև ընկած հեռավորությունը, Կոստանելիոս Տակիտոսը այն սխալմամբ վերագրել է մայրաքաղաք Տիգրանակերտին, առավել ևս խորացնելով աղբյուրներում տեղ գտած շփոթը: Հետևաբար ոչ մի անհրաժեշտություն չկա Septem et triginta -ն սրբագրելու centum et triginta կամ էլ դրանք հաշվարկել պարսկական հրասխներով կամ փարսիսներով:

Տիգրանակերտ անունով երկու քաղաքի հանդես գալը չպետք է զարմանք պատճառի, որովհետև աղբյուրներից հայտնի է, որ Տիգրան Մեծը հիմնել էր ևս մի քանի քաղաքներ, որոնք կրում են նրա անունը: Համաձայն Սեբեոսի

տեղեկությունների Տիգրանակերտ անունով ավան կար Արցախի և Ուտիքի սահմանակցության վրա, ներկայիս Թագրնակերտ կամ Թառնագյուտ կոչվող վայրում և Տիգրանակերտ քաղաք Գարդմանում, որ, ըստ հեղինակի մյուս Տիգրանակերտն է<sup>1</sup>: Կղավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրությունը» տեղեկություններ է պահպանել Τίγρωναόμα կամ Τίγρωναόνα բնակավայրի մասին, որը հավանաբար սրբագրելի է Τίγρωναόνα-ի, այսինքն Տիգրանավանի: Սակայն վերջինս, դատելով պտղոմեոսյան կորոզինատներից, չի նույնանում Սեբեոսի հիշատակած Տիգրանավանին և ոչ էլ Պատմահոր երկի Տիգրանակերտ ավանին, որը գտնվել է Նախճավանի մերձակայքում<sup>2</sup>:

Արդ, այս հարցերը լուսաբանելուց հետո անցնենք մայրաքաղաք Տիգրանակերտի տեղադրությանը: Ապպիանոսի մի շատ հետաքրքիր հաղորդումից պարզվում է, որ Տիգրան Բ-ն պատանդությունից ազատվելով և երկիր վերադառնալով, իր գլուխը արքայական թագով պսակեց այն վայրում, որտեղ նա հետագայում հիմնեց իր Տիգրանակերտ մայրաքաղաքը<sup>3</sup>: Այս առաջին հայացքից աննշան տեղեկությունը, ինչպես կհամոզվենք, կարևոր նշանակություն ունի քաղաքի տեղորոշման համար: Խնդիրն այն է, որ 95 թ., երբ Տիգրան Բ-ն վերադառնում էր Հայրենիք, Ծոփաց թագավորությունը դեռևս Մեծ Հայքին միացված չէր, հետևաբար Տիգրան Մեծի թագավորությունը հնարավոր էր միայն Մեծ Հայքի թագավորության տարածքում: Ուստի, եթե մենք պարզենք, թե մինչև ուր էին տարածվում Ծոփաց թագավորության սահմանները հարավ-արևելքում, նշանակալից չափով կփոքրացնենք այն հավանական տարածքը, որտեղ պետք է փնտրել Տիգրանակերտ մայրաքաղաքը: Ստրաբոնի մի արժեքավոր տեղեկության համաձայն Ծոփաց թագավորությունը տարածվել է մինչև Մասիոս լեռները հարավ-արևելքում և Անտիտավրոս՝ հյուսիս-արևմուտքում. «Հիշյալ Տավրոսի հետևը, որ սկիզբ է առնում Կոմմագենի և Մեկտինեի մյուս կողմից, որ եփրատն է ձևացնում. կա Մասիոս լեռը, որ հարավից գտնվում է Միզդոնիայի վերևը, Միջագետքում, ուր է Մծբինը: Հյուսիսային կողմից գտնվում է Ծոփքը՝ Մասիոսի և Անտիտավրոսի միջև»<sup>4</sup>: Ինչպես տեսնում ենք, Մեծ Ծոփք անվանումը Հայկական Տավրոսից հարավ ընկած շրջանում, Մասիոս լեռների հյուսիսակողմում բացատրվում է հիշյալ տարածքի Ծոփաց թագավորությանը պատկանելու հանգամանքով, հետևա-

<sup>1</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 46-48:

<sup>2</sup> C. Tacitus, Historiae, Annales. 1-4, Cambridge, Mass. -London, 1956, տե՛ս Annales, XV, 5. «Casperius centurio in eam legationem defectus upud oppidum Nisibin, septem et triginta millibus passuum a Tigranocerta distantem, adit regem et mandata ferociter edidit»: Տե՛ս նաև Կ. Տակիտոս, Քաղեք և թարգմանեց Պ. Ստոնիկյան, Երևան, 1941, էջ 99. «Այդ առաքելության մեջ ընտրված էր ցենտուրիոն Կասպերիոսը, որը Տիգրանակերտից երեսուն ու յոթ հազար ոտնաչափ հեռավորության վրա գտնվող Նիսիբին (Մծբին) քաղաքի մոտ տեսնում է թագավորին ու խորխտաբար հայտարարում է հանձնարարությունը»:

<sup>1</sup> Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, էջ 125: Մովսես Կաղանկատացի, Պատմութիւն Աղոանից աշխարհի, Երևան, 1983, էջ 300. «Տկաակերտ»:

<sup>2</sup> C. Ptolemaei Geographia, V, 12, 10: Մովսես Խորենացի, էջ 82-83:

<sup>3</sup> Appiani Alexandrini Historia Romana, Bibl. Teubner., vol. II, Lipsiae, 1879, Mithr., 87:

<sup>4</sup> Strabo, XI, 14, 2:

բար Մեծ Ծոփք գավառի կամ երկրամասի արևելյան սահմանն էլ պետք է համընկներ Ծոփաց թագավորության սահմանագծին: Չխորանալով հարցի ելևէջների մեջ, նշենք, որ Մասիոս լեռներով ձգվող սահմանը պետք է հասներ մինչև Մծբինի արևմտակողմը, այսինքն մինչև Արվաստան, այնուհետև շրջվեր հյուսիս և Մասիոս լեռների բազուկներից մեկով, արևմուտքում թողնելով Մարդեբերդը, Բնաբեղ-Բենաբիլը և Ծաուրը, հատեր Տիգրիս գետը մոտավորապես Քաղիրթ (Բաթմանա ջուր) գետի և նրա ջրկիցոմ<sup>1</sup>: Որից հետո սահմանագիծն ընթանալու էր Քաղիրթով և նրա հյուսիս-արևմտյան վտակների ջրբաժաններով, ինչպես վերը ցույց տվեցինք: Հասկանալի է, որ նման հարցադրումներից հետո կասկածի տակ է դրվում Նիկեդրոս-Տիգրանակերտ նույնացումը, քանի որ ոչ մի թագավոր չէր կարող թագադրվել հարևան թագավորության տարածքում<sup>2</sup>: Ուստի անցնենք մյուս սկզբնաղբյուրների տեղեկություններին և տեսնենք, թե դրանք որքանով են հաստատում կամ մերժում Տիգրանակերտի տեղորոշումը Ֆարկին կամ Սիլվան քաղաքի տեղում:

Տիգրանակերտի տեղադրության համար կարևոր աղբյուր են հունա-հռոմեական հեղինակների այն գործերը, որտեղ նկարագրվում է Տիգրանակերտի մ.թ.ա. 69թ. հոկտեմբերի 6-ի ձակատամարտը: Հռոմեական զորավար Լուկուլլոսն իր արշավանքը, ամենայն հավանականությամբ, ձեռնարկեց Մելիտենեի վրայով: Անցնելով Տոմիսայի կամ Թմիսի գետանցով (ներկայումս՝ Իզոլու գյուղ), նա շարժվեց Ծոփքի միջով և, արագացնելով իր երթն ու գետանցելով Տիգրիսը, ներխուժեց Հայաստան, այսինքն Մեծ Հայքի թագավորության տարածքը մ.թ.ա. 95թ. կացությամբ<sup>3</sup>: Արդ, եթե պարզենք, թե Տիգրիսի որ հատվածում էին սահմանակցում Մեծ Հայքի և Ծոփքի թագավորությունները, զգալիորեն կմոտենանք հարցի լուծմանը: Պատմագիտական գրականության մեջ վաղուց արդեն սուրբ ճշմարտությունների շարքն է անցել այն իրողությունը, որ Ծոփքի և Աղձնիքի վրայով անցել է պարսից նշանավոր

«Արքայական ճանապարհը», որի երթուղին Հ. Մանանդյանը և ուրիշներ համապատասխանեցնում են՝ Պելոսինգերյան քարտեզի Melitene-ad Tigrem ուղեգծին<sup>1</sup>: Մի կողմ թողնելով «Արքայական ճանապարհի» երթուղու խնդիրը, որն առանձին ուսումնասիրության կարիք ունի, նշենք, որ մենք ևս կիսում ենք հարգարժան հայագետի տեսակետը, որ Լուկուլլոսի արշավանքը ընթացել է Melitene-ad Tigrem գծով: Սակայն այս խնդիրը, որ կարող էր բանալի ծառայել հարցիս քննության համար, ըստ էության, դուրս է մնացել հեղինակի ուշադրությունից: Ուսումնասիրելով Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհը և անվերապահորեն ընդունելով Տիգրանակերտ-Ֆարկին նույնությունը, նա չի էլ փորձել վերլուծել Մելիտենե-Տիգրանակերտ ճանապարհի երթուղին, որը կարող էր հաստատել կամ մերժել Տիգրանակերտի տեղադրությունը Ֆարկինի տեղում:

Հ. Մանանդյանը նույնպես ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ Տիգրիսը եղել է Ծոփքի և Մեծ Հայքի սահմանային գետ: Սակայն հիմք ընդունելով այդ իրողությունը, նա՝ ի հակադրություն Հ. Մարքվարթի և Հ. Հյուբշմանի, որոնք Տիգրիսի ձախափնյա շրջան Աղձնիքը կամ, ավելի ճիշտ, նրա արևմտյան մասը մտցնում են Ծոփքի մեջ, գտնում է, որ Աղձնիքը չի մտել Ծոփաց թագավորության մեջ: Ըստ որում, այդ թեզը հիմնավորում է Ապպիանոսի վերը բերված այն տեղեկությամբ, թե Տիգրանակերտը հիմնվեց այն վայրում, որտեղ նա առաջին անգամ թագադրվեց<sup>2</sup>:

Համաձայն սկզբնաղբյուրների Տիգրանակերտի ձակատամարտը տեղի ունեցավ Նիկեփորիոն գետի մոտ, որից շուրջ 750 մետր հեռավորության վրա գտնվել է մի ոչ բարձր բլրակ: Պլուտարքոսի ասելով պաշարված տիգրանակերտցիները տեսել և հռոմեացիներին ցույց էին տվել Տիգրանի ռազմադաշտի տեղը, ուր նա հայտնվել էր մեծ բանակով մայրաքաղաքի պաշարումը վերացնելու համար: Վ. Բելքի ենթադրությամբ, որ ընդունելի է համարվել ուսումնասիրողների մեծ մասի կողմից, Տիգրանակերտի ձակատամարտը տեղի է ունեցել Բաթմանա ջուր գետի և նրա վտակ Ֆարկինի ջրկիցի մոտակայքում<sup>3</sup>: Մարքվարթի կարծիքով, Լուկուլլոսի հաղթանակից հետո, Ֆարկին գետակը ստացել է Նիկեփորիոն կամ Նիկեփորիոս, այսինքն «Հաղթաբեր» անունը<sup>4</sup>:

<sup>1</sup> Յ. Տ. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.). քարտեզ, Դ-3, Դ-4: Հին Կեփասի շրջանը չէր կարող մտնել Ծոփաց թագավորության մեջ, որովհետև Կորդվաց թագավորության երեք նշանավոր քաղաքներից մեկը՝ Մարեփոսն, գտնվում էր նրանից արևմուտք: Հետևաբար բնաշխարհագրական տեսակետից Ծաուրի շրջանին հարող այդ տարածքը ավելի շուտ քաղաքականապես պատկանում էր Կորդուքին:

<sup>2</sup> Հասկանալի է, որ Տրդատ Ա-ի թագադրությունը Հռոմում չի կարող համեմատության նյութ դառնալ, քանի որ պայմանավորված էր միջպետական համաձայնագրով: Ինչ վերաբերում է Տիգրան Բ-ին, ապա հնարավոր էր նրա թագադրությունը Պարթևքում, որտեղ նա պատանդ էր, բայց ոչ երբեք Ծոփաց թագավորությունում, որը նա մեկ տարի անց միացրեց Մեծ Հայքի թագավորությանը:

<sup>3</sup> Appianus, Mithr., 84: Plutarchi Vitae parallelae, Lucullus, 24,8:

<sup>1</sup> Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդ և Հռոմը, Երևան, 1940, էջ 97: Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Эривань, 1930, էջ 14-15:

<sup>2</sup> Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդ և Հռոմը, էջ 98:

<sup>3</sup> Zeitschrift für Ethnologie, 1899, էջ 272 և շարունակությունը:

<sup>4</sup> J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 132:

Պլուտարքոսի վկայությամբ, Մեհրուժանի Լուկուլլոսից կրած պարտությունից հետո Տիգրանը, «թողնելով իր հիմնադրած Տիգրանակերտ փոխարիքը՝ նահանջեց դեպի Տավրոս», իսկ Լուկուլլոսը նրա ետևից ուղարկեց Մուրենա զորավարին, որը «բայլ առ քայլ հետապնդելով Տիգրանին, ընտրեց մի հարմար պահ, երբ նա անցնում էր անհարթ ու նեղլիկ կիրճով, որի ամբողջ երկարությամբ ձգվել էր նրա բանակը, գրոհեց նրա վրա: Ինքը՝ Տիգրանը, թողնելով իր ամբողջ գումակը, փախավ. շատ հայեր սպանվեցին, բայց ավելի շատերը գերվեցին»<sup>1</sup>: Դրանից հետո Լուկուլլոսը «դուրս գալով բանակատեղիից շարժվեց Տիգրանակերտի վրա և ճամբար դնելով այդ քաղաքի պարիսպների մոտ՝ սկսեց պաշարումը»<sup>2</sup>: Այնուհետև հույն պատմիչը հաղորդում է, որ «երբ Տիգրանը, անցնելով Տավրոսը, երևաց իր զորամասերով ու տեսավ Տիգրանակերտի մոտ տեղավորված հռոմեական բանակը՝ պաշարված բարբարոսները նրա հայտնվելը դիմավորեցին ծափահարություններով ու խլացուցիչ ձիչերով. նրանք պարիսպներից հռոմեացիներին սպառնալիքով ցույց էին տալիս մոտեցող հայերին»<sup>3</sup>: Լուկուլլոսը Մուրենային 6000-ոց զորքով թողնում է քաղաքը պաշարելու, իսկ ինքը մնացած զորքով շարժվում է Տիգրանի դեմ: «Երբ նա ճամբար խփեց գետի ափի շուրջը տարածված ընդարձակ դաշտում, նրա բանակը Տիգրանին թվաց աննշան ու չնչին: ... Հաջորդ օրվա լուսաբացին Լուկուլլոսն ամբողջովին զինավառ՝ իր ռազմիկներին դուրս բերեց բանակատեղիից: Հակառակորդի զորքը կանգնած էր գետից դեպի արևելք, ընդ որում, գետն այստեղ ոլորան էր կազմում դեպի արևմուտք և հենց այդ ուղղությամբ էլ գտնվում էր գետանցի ամենահարմար վայրը, և ահա, երբ Լուկուլլոսը շտապով այն կողմ տարավ իր բանակը՝ Տիգրանին թվաց, թե նա նահանջում է: ... Լուկուլլոսը շրջեց իր բանակը. երևաց առաջին արժվակիր դրոշմ և կոհորտները գետանցի համար սկսեցին դասավորվել ըստ հարյուրակների: ... Նրա (Տիգրանի - Հ.Բ.) մեծաթիվ զորքը խուճապահար սկսեց դասավորվել մարտակարգով: Ինքը՝ թագավորը, ընդունեց բանակի կենտրոնի հրամանատարությունը, ձախ թևը վստահեց ադիաբենական, իսկ աջը, որի առաջին շարքերում գտնվում էր զրահավոր հեծելազորի մեծ մասը՝ մարական թագավորին»<sup>4</sup>: Լուկուլլոսի զորքերն անցնում են գետը, գրավում մոտակա հարթ ու լայն գազաթ ունեցող բլուրը, որի վրա գտնվում էր Տիգրանի գրահավոր այրուձին, և հարվածում հայկական զորքին թիկունքից ու հաղթանակ

<sup>1</sup> Plut., Lucullus, XXV:

<sup>2</sup> Անդ, XXVI:

<sup>3</sup> Անդ, XXVII:

<sup>4</sup> Անդ, XXVII:

տանում<sup>1</sup>: Եթե մի պահ մոռանանք հույն հեղինակի հռոմեասիրությունը և Լուկուլլոսի չափեր չճանաչող գովքը, մեր կարծիքով, իրադարձությունները ներկայացված են ճիշտ հերթականությամբ և տեղանքի մատուցմամբ, որոնք ոչ թե հաստատում են Տիգրանակերտի՝ գերմանացի գիտնականների տեղադրությունը, այլ մերժում են այն:

Ամենից առաջ ճակատամարտը եղավ մի գետի ափին, որը Տակիտոսը կոչում է **Նիկեփորիում**. «Տիգրանը (Տիգրան Զ-ն - Հ.Բ.) ամրացել էր Տիգրանակերտ քաղաքում, որն ուժեղ էր թե պաշտպանների շատությամբ և թե պարիսպների մեծությամբ: Ընդ սմին ոչ արհամարհելի լայնություն ունեցող Նիկեփորիում գետը շրջապատում էր պարիսպների մի մասը, իսկ այնտեղ, որտեղ գետով չէր պաշտպանված, անց էր կացված հսկա մի խրամ: Ներսում հռոմեական զինվորներ կային, և առաջուց նախատեսված էր մթերքների հավաքումը»<sup>2</sup>: Եթե իրոք Նիկեփորիոսը Բաթմանա ջուրն է, ապա Տիգրանակերտը պետք է գտնվեր վերջինիս ափին և ոչ թե Ֆարկին գետակի, իսկ եթե Ֆարկին գետակն է, ապա շատ կասկածելի լուծման առաջ է կանգնում հարցը: Վ. Բելքի նշած Տիգրանակերտի ճակատամարտի վայրից Ֆարկին-Սիլվանը գտնվել է 25 կմ հեռավորության վրա, որը բավականին բարդություն է ստեղծում Պլուտարքոսի այն տեղեկության համար, թե Տիգրանակերտի պաշտպանները տեսել էին Տիգրանի զորքերի գալը: Ուստի պետք է ենթադրել, որ հայկական բանակը դիրքեր էր գրավել քաղաքից ոչ հեռու: Ֆարկին գետակը, որ թափվում է Բաթմանա ջրի մեջ, ամբողջ ժամանակ հոսում է դեպի արևելք, իսկ Պլուտարքոսի հաղորդմամբ գետը հոսում էր դեպի արևմուտք: Եվ եթե այս ամենին գումարենք այն իրողությունը, որ Բաթմանա ջրից արևմուտք տարածվում էր Ծոփքը, ապա Քաղիթթ գետի տարբերակը կորցնում է իր ողջ հավանականությունը: Պատահական չէ, որ Պոմպեոսը՝ Տիգրան Կրտսերին դարձնելով Ծոփքի թագավոր, նրան տվեց նաև Կորդվաց թագավորության տարածքը<sup>3</sup>, այսինքն Ծոփաց և Կորդվաց թագավորությունները սահմանակից երկրներ էին: Այլապես հազիվ թե կարելի է մտածել, որ Տիգրան Կրտսերի տիրույթները ավատատիրական կալվածների նման ցրված էին Հայաստանի տարբեր մասերում:

<sup>1</sup> Անդ, XXVIII: Ապպիանոսի, Մեմնոնի և Փրոնտինոսի տեղեկությունները մեզ հետաքրքրող հարցի տեսակետից նոր նյութ չեն տալիս: Մանրամասնություններ տե՛ս K.Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, «Klio», X, 1, էջ 100-110:

<sup>2</sup> Tacitus, Ann., XV, 4:

<sup>3</sup> Appianus, Mithr., 105. «Պոմպեոսը ներեց նրան (Տիգրան Բ-ին - Հ.Բ.) կատարված դեպքերի համար, հաշտեցրեց որդու հետ և որոշեց, որ որդին իշխի (Տիգրան Կրտսերը - Հ.Բ.) Ծոփքի և Կորդուքի վրա, որոնք այժմ կազմում են փոքրագույն Հայաստանը, իսկ հայրը՝ մյուս Հայաստանի վրա, և որ տղան պետք է լինի ժառանգորդը»:

Վերը կատարված քննության ժամանակ մենք հիմնավորապես ցույց տվեցինք, որ գոնե III դարի վերջին և հետագայում Մեծ Ծոփքը և Աղձնիքը տարբեր վարչական շրջաններ էին և սահմանակցում էին Քաղիրթ գետով: Հետևաբար Նփրկերտ-Տիգրանակերտ նույնացումը եպպես հակասում է Փավստոս Բուզանդի տեղեկություններին: Պատմիչի հաղորդմամբ, Շապուհ Բ թագավորի զորքերը «առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Աղձնեաց յիշխանութեան բոեշխին. քառասուն հազար երդ, զայն նոյն հետայն ի գերութիւն խաղացուցին, և ինքեանք ի Ծոփս Մեծ արշաւեցին»<sup>1</sup>: Որ իրոք Աղձնիքը Մեծ Ծոփքից անջատ միավոր է, Բուզանդը մեկ անգամ ևս հավաստում է կապված սուրբ Եպիփանի գործունեության հետ. «(Եպիփանը - Լ.Բ.) եւ յետ մահուանն մեծի քահանայապետին Ներսիսի եկն բնակեցաւ նա ի Մեծ Ծոփս յանապատին, որ կոչի անուն տեղոյն Մամբրէ, ի վերայ գետոյն՝ որ անուանեալ կոչի Մամուշեղ: Եւ էր բնակեալ ի քարանձաւն և հանապազորդեալ էր ընդ զազանս անապատի, և ժողովէին առ նա արջք և ինձք: Եւ էր սա հանապազորդեալ յանապատին, և առնէր սա մեծամեծ նշանս և սքանչելիս. և դարձուցանէր զբազում մոլորեալս ի հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն. և ընոյր զերկիրն Ծոփաց վանիւք. և դնէր վարժեար ընդ ամենայն երկիրն Ծոփաց, և զինէր սուրբն Եպիփան լոյս երկրին Ծոփաց և լուսաւորէր զնոսա մեծապէս:

Անցանէր և յերկիրն Աղձնեաց, լուսաւորէր և զնոսա. և ընոյր զերկիրն Աղձնեաց վաներով. և շինէր վկայանոց մի յաւանին ի քաղաքին Տիգրանակերտի, և յօր յիշատակի սրբոցն ի փրկութիւն ինքն և ի բարեխօսութիւն աշխարհի, և առնէր ինքն նշանս, և դառնայր յիւր վանսն: Եւ էր մօտ ի գետն Մամուշեղ աղբեր մի...»<sup>2</sup>: Եվ եթե մեր զարգացած միջնադարի և հետագայի հեղինակները հաճախ Տիգրանակերտը շփոթում են Ամիդ քաղաքի հետ, որի մասին ստորև կասվի, ապա Փավստոս Բուզանդը հստակորեն տարբերում է այդ երկու քաղաքները<sup>3</sup>: Ավելին, Փավստոսի տեղեկությունները համահընչուն են Եվտրոպիոսի հաղորդմանը. «Լուկուլլոսը հետապնդելով փախչող թշնամուն՝ ներխուժեց հայերի թագավոր Տիգրանի տարածքները: Գրավեց հայկական թագավորության Արգիանե նահանգի հռչակավոր Տիգրանակերտ քաղաքը»<sup>4</sup>: Անշուշտ, քննարկելու խնդիր է, թե Եվտրոպիոսը ի՞նչ է հասկա-

ցել Աղձնիք ասելով՝ Փավստոսյան Աղձնիքը, թե՛ աշխարհացուցյան Աղձնիքը: Ամեն մարդ իր ժամանակի ծնունդն է ու արդյունքը: IV դարի հեղինակ Եվտրոպիոսը հազիվ թե կարողանար Աղձնիք անունը քաղել շատ հին աղբյուրներից, որովհետև, ըստ էության, դրանք Աղձնիք անունն անգամ չեն հիշատակում: Հետևաբար, շատ ավելի տրամաբանական է ենթադրել, որ մինչև 369 թ. հասցրած իր պատմության մեջ հեղինակը օգտագործել է Աղձնիքը տարածական այն ընկալումով, ինչպիսին այն իրականության մեջ գոյություն ուներ: Ուստի Եվտրոպիոսի Արգիանե-Աղձնիքը պետք է գտնվեր Քաղիրթից արևելք, Մեծ Ծոփք գավառի արևելակողմում: Անուղղակի ձևով այդ հաստատում է նաև Պատմահայրը, որի վկայության համաձայն Տիգրանակերտ քաղաքը գտնվում էր Սյունյաց Անդոք (Անտիոք) իշխանի վերակացության ներքո. «Իսկ Շապուհ զայ հասանէ ի Տիգրանակերտ մեր քաղաք: Կան ընդդէմ նորա արք քաղաքին հանդերձ գոմարտակ զնդաւ. քանզի Անտիոք նահապետ Միւնեաց, որ էր աներ Արշակայ և վերակացու քաղաքին, հրամայեաց աղխել ընդդէմ Շապուհ»<sup>1</sup>: Իսկ Փավստոսի «Պատմութիւն Հայոց»-ից հայտնի է, որ հայոց Խոսրով Գ Կոտակ թագավորը, կոտորելով ապստամբություն բարձրացրած Աղձնյաց բոեշխի ընտանիքը և մահապատժի ենթարկելով Բակուր բոեշխին, Աղձնիքի բոեշխության իրավունքը հանձնեց Վաղինակ Սյունի իշխանին<sup>2</sup>, որի ժառանգներից էր Անդոք Սյունին: Պատմիչի մեկ այլ հաղորդմամբ, ինչպես վերը տեսանք, Տիգրանակերտը գտնվել է Աղձնյաց բոեշխի իշխանության ներքո:

Տիգրանակերտի տեղադրությունը, մեր կարծիքով, վերջնականապես ճշտվում է Պողոմենոսի «Աշխարհագրության», Կաստորիոսի կամ Պեվտինգերյան քարտեզի և Անանուն Ռավենացու աշխատության նյութերի շնորհիվ: Պողոմենոսի երկում Տիգրանակերտ քաղաքի անունը հիշատակվում է Կորդոք, Կո[ր]տայա կամ Կորճայք և Մարդոի կամ Մարդպետական աշխարհների նկարագրության բաժնում<sup>3</sup>: Ուստի Լ. Մանանդյանը եզրակացրել է, թե Պողոմենոսը քաղաքը տեղադրել է Կորդոքում<sup>4</sup>: Իրականում, որչափ մեզ հուշում են մեր ուսումնասիրության արդյունքները, բնակավայրերի բաշխումը ըստ աշխարհների խիստ կամայական է, իսկ դրանց ցուցակներն ավելի հին են, քան Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման նկարագրությունը: Հետևաբար, նրա հարևանությամբ հիշատակվող Cholimma = Քղիմար, Theibalane = Պեվտինգերյան քարտեզի Thalbasaris կայանների կամ

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 142:

<sup>2</sup> Անդ, էջ 221:

<sup>3</sup> Անդ, էջ 26. «բայց ոսկերք նորա (Հակոբ Մծբնա եպիսկոպոսի - Լ.Բ.) շնորհեցան քաղաքին ամդացուց...»: Լ. Հրաբեկյան, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 414:

<sup>4</sup> Eutropii Breviarium ab urbe condita cum versionibus Graecis Pauli Landolfique additamentis, ed. Droysen, Berolini, 1879, VI, 9, 1:

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 287:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 21:

<sup>3</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 9-10:

<sup>4</sup> Լ. Մանանդյան, Տիգրան երկրորդ և Հռոմը, էջ 64:

բնակավայրերի առկայությունը<sup>1</sup> մեկ անգամ ևս հուշում է, որ Պտղոմեոսի նշածը Աղձնիքի Տիգրանակերտ մայրաքաղաքն է:

Ավելի հետաքրքիր են Պեվտինգերյան քարտեզի տվյալները, որոնք Հ Մանանդյանը, ցավոք, քննել է միայն Artaxata-Tigranocerta մայրուղին ուսումնասիրելիս<sup>2</sup>: Անկախ այն հանգամանքից, թե որքանով են ճիշտ և ընդունելի հեղինակի հետազոտության արդյունքները, նշենք, որ քննությունը կատարված է ոչ լիարժեք, որովհետև մեծանուն հայագետը չի էլ փորձել ճշտել Մելիտինե-Տիգրանակերտ և Տիգրանակերտ-Շնգար ճանապարհների երթուղիները: Եթե հեղինակի եզրակացությունները ճիշտ են, ապա դրանք պետք է համահնչյուն լինեն հիշյալ ճանապարհների տվյալներին, որովհետև դրանց միասնական և համակողմանի քննարկումը կարող է օգնել Տիգրանակերտի տեղադրության որոշակիացմանը:

Համաձայն Կաստորիոսի կամ Պեվտինգերյան քարտեզի Մելիտենե-Տիգրանակերտ ճանապարհն ուներ ներքոբերյալ կայարանները.

Melentenis VIII (Geogr. Rav.<sup>3</sup> II, p. 95,2, Melitine)

ad aras VIII

Thirtonia VIII (Rav. II, 16, p. 94, 17c. 13, p. 81,4 (Thertonia))

Mazara XVI (նույն կերպ Rav. և Ptol. մոտ)

Colchis XIII (Rav. II, 13, p. 81,2 Cholcis, Ptol. Κολχίς)

Coruilu XIII (Rav. Corbilon)

Arsinia XIII (Rav. Arsinia, II, 4, p. 49,15. 50,12, Arsanía)

Coissa XVI

.....XXVII

ad Tigrem XIII

Nararra XIV? (Rav. Nabarra)

Colchana XV

Tigranocarten 4:

Ճանապարհի կայարաններից քաջ հայտնի է միայն Մելիտենե-Մալաթիայի տեղադրությունը, սակայն փոքրիշատե քննությունը բացահայտում է արտագրողների սխալներն ու աղավաղումները և կայարանները գրեթե ամբողջությամբ տեղադրվում են: Դեռևս ժամանակին Հ. Քիպերթը ցույց է տվել, որ

<sup>1</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 10:

<sup>2</sup> Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 85-114:

<sup>3</sup> Անանուն Ռավենացու գործը մենք նայել ենք Գերմանիայում 1986թ., սակայն, ցավոք, այս հարցերին ուշադրություն չենք դարձրել: Երևանում գիրքը մեզ գտնել չհաջողվեց, ուստի մատենագրական տվյալները վերցրել ենք Հ. Քիպերթի կամ Հ. Մարքվարթի աշխատություններից:

<sup>4</sup> K. Miller, Itineraria Romana, էջ 635, տե՛ս Tabula Peutingeriana, Segm. X4-XII2:

Պեվտինգերյան քարտեզի Mazara-ն համապատասխանում է Մեզերեին<sup>1</sup>, որը օսմանյան կառավարության կողմից վերանվանվեց Մամուրեթ-ուլ-Ազիզ: Հեղինակը Արսինիան նույնացնում է Արղանա-Մադենին և գտնում է, որ կայարանին հաջորդած անանուն կայարանը, որը պատկերված է զույգ աշտարակներով, պետք է որ մեծ քաղաք նշանակեր<sup>2</sup>: Քիպերթը նշել է, որ Ռավենացու մոտ (II 4, p. 50, 8) Colcana-Colphiana (Պեվտ. քարտեզ՝ Colchana), Sipte (Պեվտ. քարտեզ՝ Sitae), Adipte, Nabarra (Պեվտ. քարտեզ՝ Nararra) կայարանների շարքում ad Tigrem-ի և Sardebar-ի մոտակայքում Etagigarta կայարանն է, որը Պեվտինգերյան քարտեզը պետք է փոխանի և որը համապատասխանելու է անանուն կայարանին: Ըստ որում նշանավոր քարտեզագետը գտնում է, որ Etagigarta-ն նույնական է Ծոփքի թագավորության մայրաքաղաք Καρκαθιόκερτα-ին<sup>3</sup>: Դրոյզենն այս քաղաքի անունը գտել է Ստեփանոս Բյուզանդացու գրառումներում Ἀρχασικέρτα գրությամբ, որն ըստ Հ. Մարքվարթի նույնական է Պտղոմեոսի Ἀρταχιγάρτα-ին (75°20' L. 38°45' Br.), որն էլ գտնվել է Կողքիսի /Κολχίς/ մերձակայքում (75°31' L. 39° Br.): Շարունակելով իր միտքը զարգացնել, գերմանացի հայագետը գալիս է այն եզրակացության, որ անանուն կայարանը Կարկաթիոկերտն է կամ Անգղը, որտեղ Փավստոսի վկայությամբ թաղված էին հայոց Արշակունի (իմա՝ Ծոփքի) թագավորները, իսկ ad Tigrem կայարանը համապատասխանում է, ինչպես արդեն ենթադրել էր Հ. Քիպերթը, Ամիդին<sup>4</sup>: Մարքվարթը անդրադարձել է նաև Nararra կամ Nabarra կայարանի տեղադրությանը: Հակադրվելով Հ. Քիպերթին, որը փորձում էր հիշյալ կայարանը նույնացնել Պտղոմեոսի Հյուսիսային Միջագետքի Σαράρρα-ին, նա այն տեղադրում է Նփրկերտ քաղաքի հարևանությամբ, Cahja լեռների մերձակայքում: Ըստ այդմ էլ, քանի որ հեղինակի կարծիքով Ամբար գետը կոչվել է Nahar harrā արամեացիների կողմից, այդ շրջանում էլ պետք է փնտրել հիշյալ կայարանը<sup>5</sup>:

Հարկ է խոստովանել, որ այնքան մեծ է գերմանացի հայագետի հմայքը, որ ուսումնասիրողը հաճախ վախենում է կասկածի տակ առնել նրա եզրակացությունները, քանի որ դրանք փաստարկվում են բազմալեզու և բազմաբնույթ աղբյուրներով: Սակայն այս խնդրում մենք կփորձենք որոշ ճշգրտումներ կատարել: Ամենից առաջ մենք գտնում ենք, որ Nararra կամ Nabarra

<sup>1</sup> H. Klepertz, Ueber die Lage der armenischen Hauptstadt Tigranokerta, էջ 178:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 34-38:

<sup>5</sup> Անդ, էջ 266-269:

կայարանը ոչ թե գտնվել է Լփրկերտի հարևանությամբ, այլ, ամենայն հավանականությամբ համապատասխանել է վերջինին: Արդեն Ռավենացու Nabarra ընթերցումը հուշում է, որ Nararra-ն կարելի է սրբագրել: Ելնելով Պեվտինգերյան քարտեզի տառատեսակներից, դժվար չէ կռահել Nararra-ի սկզբնական Nafarra գրությունը, որը ծագումնաբանորեն կապվում է Nabarra-ի հետ: Իսկ Նաֆառան կամ Նաֆարան ոչ այլ ինչ է, բայց եթե «Լփր»-ը կամ «Լփռ»-ը, որի վրա հետագայում ավելացել է «կերտ» վերջավորությունը:

Nararra-Լփրկերտ նույնացումից հետո հետաքրքիր բացատրություն է ստանում Colchana կայարանի անունը: Հաշվի առնելով, որ լատինական ձեռագրերում նշանակալից թիվ են կազմում  $c > o$  կամ  $o > c$ ,  $n > r$  շփոթները, մենք հակված ենք կարծելու, որ Colchana -ն պետք է սրբագրել Colomara և նույնացնել հայկական աղբյուրների Քղիմարին: Նման հարցադրման հետևանքով Տիգրանակերտի տեղադրությունը Լփրկերտի կամ անգամ Բաթմանա ջրի ափին բացառվում է, քանի որ Քղիմարը, ինչպես վերը համոզվեցինք, գտնվում էր Քաղիթթից կամ Բաթմանա ջուր գետից արևելք, իսկ Տիգրանակերտն էլ դրանից արևելք: Այս տեղորոշումները ստիպում են նոր հայացքով նայել ad Tigrem և անանուն կայարանների տեղադրությանը: Առաջինը այս ամենի հետևանքով այնքան է հեռանում, ըստ գերմանացի գիտնականների տեղորոշման, որ գետանցը ենթադրելի է ոչ թե Ամիդի տեղում, այլ նրանից արևելք ընկած շրջանում, իսկ անանուն կայարանը, որ պատկերված է երկու աշտարակներով կարող է և անպայման նույնանում է Ամիդ քաղաքի հետ: Ավելին, չունենալով ձեռքի տակ Ռավենացու գործը, մենք զրկված ենք ավելի խոր քննություն կատարելու հնարավորությունից, քանի որ բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Պեվտինգերյան քարտեզում ad Tigrem-անանուն կայարան ընկած հատվածում հավանաբար բացակայում է մի ինչ որ կայարանի անունը: Որ մեր տեղադրությունը մեծ հավանականություն ունի, պարզ է դառնում Մելիտենե-Տիգրանակերտ ճանապարհի մյուս կայարանների տեղորոշումից: Այսպես, Ամիդից շուրջ 24 կմ հեռավորության վրա պետք է գտնվի Coissa-ն, որը, մեր կարծիքով Ամիանոս Մարկեդինոսի հիշած Ziata ամրոցն է: Վերջինս գտնվել է Ամիդի մերձակայքում և արձանագրվում է Շապուհի դեպի Ամիդ կատարած արշավանքի առնչությամբ<sup>1</sup>: Հաջորդ կայարանը` Arcinia-ն, որ իրոք պետք է Arcinia կարդալ, տեղորոշվում է արդեն ոչ թե Արդանա-Մադենի, այլ Արկնիի կամ Արդանայի տեղում: Իսկ Արդանա-Մադենի

<sup>1</sup> Ammianus Marcellinus, XIX, 6.1. «Հետևյալ օրը լուսաբացին, քերդի (Ամիդի) բարձունքից մենք տեսանք անթիվ ժողովուրդ, որը Ջիատա ամրոցի առանց հետո քարշ էր տրվում թշնամու բանակատեղը. այս տեղը խիստ ընդարձակ էր ու ամրացված և ուներ տաաը ստադիոն երկարությամբ շրջապատ և հենց այդտեղ էին փախցնում բերում խառնամբոխ բազմությունը»:

տեղում կամ նրա անմիջական հարևանությամբ տեղակայվում է Coruili կայարանը: Հնարավոր է, որ մենք սխալվում ենք, սակայն հաշվի առնելով Պեվտինգերյան քարտեզով դրանց համընկնումը, մենք հակված ենք կարծելու, որ Coruili-ն ոչ այլ ինչ է, բայց եթե պղնձահանքի իմաստավորումը: Ռավենացու երկում հանդիպող Corbilon անվանումը հուշում է, որ Կորուիլուի մեջ կորել է «b» կամ «p» տառը, ուստի Coruili-ն մենք համարում ենք C[y]prius-ի (=պղնձային) աղավաղում: Կողքիս, որը մենք դեռևս չենք կարող նմանեցնել որևէ արդի բնակավայրի հետ, համաձայն Պեվտինգերյան քարտեզի գտնվում էր Ծովք լճի հյուսիսային ափի շրջանում, իսկ հաջորդը Քիպերթի և Մարքվարթի կողմից արդեն տեղադրված Մազարան է, որն իրոք բոլոր պարագծերով համապատասխանում է Մեզերեին կամ Մամուրեթ ուլ- Ազիզին:

Ռավենացու մոտ հանդիպող Etagigarta-ն (համաձայն A. Pinder և Parthey հրատարակության` Exagigarta<sup>1</sup>) ենթադրել է տալիս, որ Մելիտենե-Տիգրանակերտ ճանապարհի մի հատվածում այն երկփեղկվել է և մայրուղու մի ճյուղը Coissa-Ziata -ից բարձրացել է Անգղ-Արկաթիկերտ և այնուհետև միացել հիմնական ճանապարհին Արկնի -Arsinia կայարանում<sup>2</sup>:

Ճանապարհի Mazara-Melentenis հատվածը մենք չենք քննարկում մի քանի պատճառով: Ամենից առաջ այն քիչ է առնչվում հարցիս հետ և վերջապես Mazara-Melentenis հատվածում ճանապարհը կարող էր անցնել ոչ միայն Իզոդուի գետանցով, այլև Քեֆերդիզի ծանծաղուտով: Առաջինի դեպքում քարտեզի կայարանների հեռավորությունները չեն համապատասխանում մինչև Մալաթիա (Հին) ընկած տարածությանը, իսկ մյուս դեպքում ենթադրելի է, որ Մելիտենե-Շամոշատ (Samosata) ճանապարհի առնվազն երկու կայարան պետք է կրկնվեին Մազարա-Մելիտինե հատվածում, սակայն ինչ ինչ պատճառներով դուրս են մնացել: Խնդիրը կարոտ է լուրջ և արմատական ուսումնասիրության, որի ժամանակ պետք է լայնորեն օգտագործել արաբական սկզբնաղբյուրների նյութը:

Պեվտինգերյան քարտեզի ad Tigrem կայարանը, ինչպես տեսանք, չի կարող նույնանալ Ամիդի գետանցին, ուստի, որչափ որ մեզ թույլ են տալիս մեր հետազոտության արդյունքները, այն պետք է գտնվեր Քաղիթթի և Տիգրիսի ջրկիցի շրջանում: Եվ սկզբնաղբյուրների տեղեկությունն այն մասին, որ Լուկուլլոսը, Տիգրիսն անցնելով, մտել էր Հայաստան կամ Մեծ Հայքի թա-

<sup>1</sup> J. Markwart, Südarmanien und die Tigrisquellen, էջ 33, ծանոթ. 2:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 141. «(պարսից զորքերը արշավում են) ընդ Աղձնիս և ընդ Ծոփս Մեծ, ընդ Անգղ տունն և ընդ գառառն Անձտայ ընդ Ծոփս Ծահունոյ...»: Արշավանքի երթուղին հավաստում է նման ճանապարհի գոյությունը:



գավորություն, կարող է վերաբերվել գետի այս հատվածին: Հիշյալ սահմանային կացությունը համահնչյուն է և՛ հայկական և՛ հունա-հռոմեական և՛ բյուզանդական ու ասորական աղբյուրների հաղորդումներին:

Տիգրանակերտի տեղադրության համար կարևոր նշանակություն ունի Tigranocerta-Artaxata ճանապարհի հարավային հատվածը: Վերը նշեցինք, որ Հ. Մանանդյանը դրա քննությամբ հանգել էր այն վերջնական և առարկություն չընդունող եզրակացությանը, որ Տիգրանակերտը գտնվում է Եփրատ-Տարկինի տեղում: Տեսնենք, թե այդ տեսակետը որքանով է փաստարկված և ճանապարհի երթուղին որքանով է հիմնավորված: Բնավ չժխտելով Ներջիկ-Մուշի վրայով անցնող ճանապարհի կարևորությունը, մենք ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք այն փաստի վրա, որ հիշյալ ճանապարհով գրեթե, եթե չասենք ամենևին, արշավանքներ չեն եղել: Իսկ Չորա պահակ կամ Բաղեշի լեռնանցքը (Ռահվա) բազմիցս հիշատակվում է օտարերկրյա արշավանքների ժամանակ: Իրավացիորեն հարց է ծագում, որ եթե հայոց «Արբունի պողոտան» անցնում էր Ներջիկ-Մուշ գծով և, անկասկած, պետք է բարեկարգ մայրուղի լիներ, ինչն էլ թշնամին այն չի օգտագործում իր արշավանքների ժամանակ: Արդեն բավական ժամանակ է, ինչ մենք հակված էինք կարծելու, որ «Արբունի պողոտան» անցել է Չորա պահակ լեռնանցքով: Այդ տեսակետին էին մեզ մղել Փավստոս Բուզանդի տեղեկություններն այն մասին, որ «ամենայն նախարարութիւն Աղձնեաց, և զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքային Հայոց Արշակայ, և չոգան կացին առաջի արքային պարսկաց Շապիոյ. և պարիսպ ածեին ի Հայոց կուս:՝ որ Չորայն կոչեն, դրունս դնէին, և զատուցին զհլրեանց աշխարհն ի Հայոց»<sup>1</sup>: Հասկանալի է, որ հայոց թագավորի դեմ ապստամբություն բարձրացրած Աղձնեաց բղեշխը ձգտելու էր փակել իր իշխանություն տանող ամենախոցելի հատվածները, որպիսին կարող էին լինել լեռնանցքներն ու նրանցով անցնող ճանապարհները: Սակայն սպասվածին հակառակ նա ամբողջություններ է ստեղծում ոչ թե այն հատվածում, որով ուսումնասիրողները անցկացնում են «Արբունի պողոտան», այլ Չորա պահակը, այսինքն Բաղեշի անցքը: «Արբունի պողոտան», որ կապում էր Մեծ Հայքի թագավորության երկու նշանավոր մայրաքաղաքները, անշուշտ, գտնվելու էր հայոց թագավորների մշտական ուշադրության կենտրոնում, հետևաբար ենթադրել, թե IV դարում այն կարող էր շարքից դուրս եկած լինել, ոչ մի հավանականություն չունի: Եթե Ղևոնդ պատմիչի վկայությամբ, այն բանուկ էր VIII դարի 70-ական թվականներին<sup>2</sup>,

ապա կասկածից վեր է, որ հայոց թագավորության անկումից հետո ճանապարհն անընդմեջ պահվել է բարեկարգ վիճակում սկզբում ինքնավար Հայաստանի իշխանությունների, իսկ այնուհետև օտար նվաճողների կողմից: Հետևաբար տրամաբանորեն սխալված չենք լինի, եթե a priori ընդունենք, որ հայոց գլխավոր մայրուղին անցել է Չորա պահակ լեռնանցքով: Առավել ևս, եթե Տիգրանակերտի ֆարկինյան տեղադրությունը մերժվում է և առաջ է քաշվում Քաղիթ գետից դեպի արևելք ընկած տեղորոշում: Համաձայն մեր քննության, Պեվտինգերյան քարտեզի Artaxata-Tigranocarten ճանապարհի երթուղին ոչ միայն չի հերքում այդ տրամաբանական եզրակացությունը, այլև որոշակիորեն հաստատում է այն:

Քննել նշված ճանապարհին իր ամբողջության մեջ, մենք մտադիր չենք, քանի որ նրա երթուղու մեծ մասը Հ. Մանանդյանի կողմից հաջողությամբ ուսումնասիրվել է և ճշգրտվել: Ուստի մենք մեր ուշադրությունը կբեռենք միայն ճանապարհի հարավային հատվածին, ավելի որոշակի Patansana (Ռավեննացու մոտ՝ Patransana)-Tigranocarten գծամասին, որտեղ գտնվում էին Patansana (Patransana), Dyzanas (Ռավեննացու մոտ՝ Dyzanas), Cymiza (Ռավեննացու մոտ՝ Cimiza), Zanserio (Ռավեննացու մոտ՝ Zancerio) և Tigranocarten կայարանները<sup>1</sup>:

Նշված անուններից ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում Cymiza կամ Cimiza կայարանի վրա, որը գտնվում էր Տիգրանակերտից 50 հռոմեական մղոն կամ 74 կմ հեռավորության վրա: Հ. Մանանդյանը Cimiza-ն սրբագրել է Kildiza և նույնացրել Ներջիկի մոտակայքում գտնվող Կիլիզի բնակավայրին: Հեղինակի կարծիքով, տեղի է ունեցել M և ΛΔ տառերի շփոթ, որի հետևանքով Cildiza-ն վերածվել է Cimiza-ի<sup>2</sup>: Սկզբունքորեն նման սրբագրությունը հնարավոր է և ընդունելի: Սակայն մենք համաձայն չենք հեղինակի մեկնաբանության և տեղադրության հետ: Խնդիրն այն է, որ ներկայիս Բիթլիս-Բաղեշից 75 կմ հեռավորություն է մինչև այն վայրը, որտեղ մեր ենթադրությամբ գտնվել է Տիգրանակերտը: Հետևաբար այդ կայարանը կարող էր կրել Բաղեշ կամ որևէ այլ անուն, որը կապվում էր քաղաքի կամ նրա մերձակայքի հետ: Հնարավոր է ենթադրել, որ կայարանի անունը սկզբնապես եղել է ΒΙΔΛΙΖΑ, որը լատիներենի վերածելիս «B»-ն շփոթվել է «K»-ի հետ, ΛΔ-ն՝ «M»-ի և արդյունքում ստացվել է Cimiza անվանումը: Եթե արտագրությունների հետևանքով իրոք այդպիսի թյուրիմացություն է առաջացել, ապա մենք գործ ունենք Բաղաղեշ (Բաղեշ) կամ Բիթլիս քաղաքի անվան հետ, որտեղ «թ»-ն գրական լեզվի ազդեցությամբ դեռ չի վերածվել «ղ»-ի: Սակայն իր ամբողջ հավանականությամբ հանդերձ, խոստովանում

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 159:

<sup>2</sup> «Պատմութիւն Առնոնեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 147-148. «... ելանել յառաջին պողոտայն արքունի ընդ գառան Ապահունիս: Հասանէին ի գառան Բագրևանդ ի գիւղն Արձնի»:

<sup>1</sup> K. Miller, Itineraria Romana, էջ 745-748: Տե՛ս նաև Պեվտինգերյան քարտեզը:

<sup>2</sup> Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 90:

ենք, որ այն որոշակիորեն կրոմ է բռնագրոսիկության կնիքը: Հնարավոր է գրչական մեկ այլ շփոթ ևս, երբ դեռևս հունարեն բնագրում տեղի է ունեցել «μ» և «ρ» տառերի շփոթմունք: Այսինքն Cimiza-ի փոխարեն եղել է Ciriza<sup>1</sup>, որը կարող է համապատասխանել հայերեն «կիրձ» բառին: Այսինքն կայարաններից մեկը Բաղեշի կիրձի հետ կապված ստացել է «կիրձ» ընդհանրական անունը: Սակայն մենք գերադասությունը տալիս ենք երրորդ հավանական բացատրությանը: Հայտնի է, որ Բաղեշի թաղերից մեկը կոչվում էր Գոմս, քաղաքից մի քանի կմ հյուսիս-արևմուտք գտնվում էր Գոմս կամ Գոմս գյուղը, որը հարևան մահմեդական բնակիչների կողմից կոչվում էր Կյումյա: Կարծում ենք, որ ճիշտ է կայարանի ոչ թե Cimiza, այլ Cymiza ընթերցվածը, որն անմիջականորեն ծագում է հայկական Գոմսից: Հետևաբար կայարանի անվանման սրբագրման ոչ մի անհրաժեշտություն չկա: Անտարակույս է, որ Բաղեշի Գոմս թաղը ժամանակին եղել է առանձին բնակավայր, որտեղ էլ ըստ երևույթին գտնվում էր Cymiza կայարանը:

Ս. Երեմյանը, անդրադառնալով Dizanas կամ Dyzanas կայարանի տեղադրությանը, որը գտնվում էր Cymiza-ից 22 մղոն (33 կմ) հեռավորության վրա, գտնում է, որ «D»-ն առաջացել է «P»-ի աղավաղումից, ուստի այն պետք է սրբագրել Pizanas և նույնացնել Փսանք կամ Փոսանք տեղանվանը<sup>2</sup>: Սրբագրությունը մենք սիրով ընդունում ենք, սակայն տեղադրությունը ոչ: Խնդիրն այն է, որ Բաղեշից շուրջ 33 կմ հեռավորության վրա գտնվում է Չուխուր-Նորշեն գյուղը, որի առաջին բաղադրիչը ունի հայերեն «Փոս» իմաստը: Կարծում ենք, որ գյուղանվան մեջ պահպանվել է Dizanas կամ Dyzanas (իմա՝ Pizanas կամ Pyzanas) կայարանի անվանումը, որն ավելի ուշ թուրքախոս բնակչության կողմից թարգմանվել է «Չուխուր» բառով: Անմիջապես գյուղի տեղում կամ մերձակայքում պետք է գտնվեր հիշյալ կայարանը:

Հ. Մանանդյանի նման մենք ևս դժվարանում ենք որոշել Zanserio կայարանի սկզբնական հայկական անվանումը<sup>3</sup>: Միաժամանակ գտնում ենք, որ մեծանուն պատմաբանի կողմից Zanserio-ն Չոնոգարտ սրբազրեք և Չյունկերտի հետ կապելը<sup>4</sup> ոչնչով փաստարկված չէ և ոչ էլ հավանական: Կարելի է միայն նշել, որ այն հավանաբար գտնվել է ներկայիս Բայկան գյուղի մոտակայքում՝ Բաղեշից 30 կմ (20 մղոն) հարավ-արևմուտք ընկած շրջանում:

<sup>1</sup> Նման հավանականության մասին մեզ հուշեց սեպագրագետ Հովհաննես Կարազյոզյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

<sup>2</sup> Ս. Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385թթ.), քարտեզ, 9-4: С. Т. Ерещан, Тарон в древности и в средние века, քարտեզ:

<sup>3</sup> Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 91-92:

<sup>4</sup> Անդ, էջ 114:

Մեզ մնաց լուսաբանելու Patransana կամ Patansana կայարանի անունը և տեղադրությունը: Համաձայն Պեվտինգերյան քարտեզի այն գտնվել է Dyzanas-Pyzanas-ից շուրջ 40 կմ հեռավորության վրա: Չուխուր-Նորշեն գյուղից 40 կմ (27 մղոն) դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է Խասգեղը կամ Խասքյոյը: Սովորաբար Խաս էին կոչվում հարկերից ազատ կալվածները, ուստի մենք կարծում ենք, որ այն սկզբնապես կոչվել է Ազատառիձ և նշանակել է ըստ երևույթին «ազատների գյուղ» որը մասամբ թարգմանվել է լատիներենով: «Ազատ»-ը վերածվել է Patric-ի ու կայարանի անվանումը դարձել է Patricarisana և այնուհետև Patrarisana: Գրչական հիմքի վրա «r» և «i» տառերը ձուլվելով փոխարկվել են «ո»-ի և ի հայտ է եկել Patransana աղավաղված գրությունը: Ինչ վերաբերում է Խասքյոյ կամ Խասգեղ անվանմանը, ապա պետք է ենթադրել, որ Խասքյոյը պարզապես Ազատառիձի թարգմանությունն է, որտեղ սոցիալական կացության հետ կապված «Ազատ»-ը դարձել է «Խաս», իսկ «առիձ»-ը՝ «քյոյ»: Ինչ վերաբերում է Խասգեղին կամ Խասգյուղին, ապա այն Խասքյոյի հայացման արդյունք է:

Մեր քննությունը հաստատում է, որ «Արքունի պողոտան», այսինքն Արտաշատը Տիգրանակերտին կապող մայրուղին անցել է Չորա պահակ լեռնանցքով և Բաղեշի կիրձով: Այս հատվածում մեր առաջարկած երթուղին համընկնում է Կ. Միլլերի տեսակետին: Կարծում ենք, որ բնավ էլ պատահական չէ, որ գերմանացի պատմաբանը ևս Cymiza -ն տեղադրում է Բիթլիսից հարավ գտնվող ավերակների տեղում, Zanserio -ն՝ Ռիջլեկում, իսկ Տիգրանակերտը՝ Արզանում<sup>1</sup>: Նա իրավացի է նաև այն հարցում, որ ճանապարհը Բաղեշից հետո ընթացել է Տարոնի դաշտով<sup>2</sup>: Ամենայն հավանականությամբ, միևնույն տրամաբանությամբ է շարժվել և առաջնորդվել իր ժամանակին Հ. Քիպերթը, որն, ինչպես նշել ենք, նույնպես Տիգրանակերտը նույնացրել է Արզանի ավերակներին:

Արդ, ո՞րն է մեր տեղադրությունը: Անշուշտ, շատ դժվար է առանց տեղանքի քննության հեռու գնացող եզրակացություններ անել, սակայն Պեվտինգերյան քարտեզի և մյուս սկզբնաղբյուրների նյութերը մտածել են տալիս, որ Արզանը այդպիսի դեր չէր կարող կատարել: Նախ հարկ է նշել, որ Տիգրանակերտը գտնվում էր Նիկեփորիոն կոչվող գետի ափին և նրա պարիսպները պաշտպանված էին բավականին հորդառատ ջրերով, իսկ Արզանը գետափին չէ: Դատելով պատմական տվյալներից, Տիգրանակերտը գտնվել է գետի աջ ափին, իսկ Արզանը գտնվում է Խարզան գետի ձախափնյակում: Վերջապես ոչ պակաս կարևոր է, որ IV դարից հետո ոչ մի աղբյուր ոչ մի ձևով Տիգրանակերտի անունը չի կապում Արզանի հետ, չնայած՝ ինչպես ստորև

<sup>1</sup> K. Miller, Itineraria Romana, էջ 745-748:

<sup>2</sup> Անդ:

կտեսնենք, զարգացած միջնադարի և հետագա հայ հեղինակները ամեն մի պատեհ թե անպատեհ առիթով քաղաքը նույնացրել են Ամիդի հետ: Տիգրանակերտի կործանումը պարսից Շապուհ Բ թագավորի զորքերի կողմից այնքան զարհուրելի է եղել, որ այն այլևս չի վերականգնվել ու վերաբնակեցվել, ծածկվել է հողով և անհայտացել: Այլապես, եթե Արգն-Արզանը կամ Նփրկերտը համապատասխանում են Տիգրանակերտին, շատ տարօրինակ է, որ մի քանի տասնամյակների ընթացքում, որոնք ենթադրենք, թե հաջորդել են Շապուհ Բ-ի կողմից քաղաքի կործանմանը, կարողացել են շրջակա բնակչության հիշողությունից ջնջել հայոց հինավուրց մայրաքաղաքի անունը: Համենայն դեպս, դրան նախորդած քաղաքի ավերածություններից հետո, երբ կյանքը վերականգնվում էր, բնակչությունը վերահաստատվում, քաղաքը շարունակում էր պահպանել իր անվանումը: Այլ խոսքով, քաղաքի անունը կարող էր բնակչության կենդանի հիշողությունից ջնջվել ամբողջությամբ միայն այն դեպքում, եթե կյանքն այնտեղ այլևս չի շարունակվել:

Ելնելով վերոհիշյալից, մենք գտնում ենք, որ Խարզան գետը պատմական Նիկեփորիոսն է, որի աջ ափին էլ գտնվել է Տիգրանակերտ քաղաքը<sup>1</sup>: Հնագետները պետք է այն փնտրեն Խարզան գետի աջ ափին բարձրացող և ներկայումս Կալե (= բերդ) կոչվող լեռնակի շրջակայքում, որտեղ գետի հոսանքը աստիճանաբար թեքվում է արևմուտք և բաժանվում բազմաթիվ բազուկների, դառնալով անցանելի: Այդտեղից Տիգրանակերտի բնակիչները կարող էին տեսնել հայկական բանակի մոտեցումը և ճամբար խփելը, այդտեղից Լուկուլլոսի զորքերը գետով շարժվեցին արևմուտք և այն անցնելով հարձակվեցին հայկական բանակի վրա: Այս վայրից մինչև Cymiza-Բաղեշ և Nafarra-Նփրկերտ ընկած հեռավորությունները համապատասխանում են Պելտինգերյան քարտեզի տվյալներին: Կարելի էր, անշուշտ, քննարկել նաև Տիգրանակերտ-Շնգար ճանապարհը, որովհետև մենք իրազեկ ենք վերջինիս ճշգրիտ տեղադրությանը: Սակայն տեսական իմաստով այն մեծ փոփոխությունների անհրաժեշտություն չի կարող ծնել, իսկ գործնական իմաստով՝ ողջվար է կենսագործել մեծամասշտաբ քարտեզների բացակայության պատճառով: Նոր քարտեզները, թեկուզ և մեծ մասշտաբի, անվանափոխությունների հետևանքով առանձին արժեք չեն ներկայացնում, իսկ XIX դարի և XX դարի սկզբի քարտեզները կարելի է գտնել Եվրոպայի լավագույն քարտեզագրական հավաքածուներում: Այնուամենայնիվ կարող ենք նշել, որ հիշյալ ճանապարհի Thalbasaris կայարանը պետք է գտնվեր Բիշերիկի դաշտում, տալով իր

<sup>1</sup> Հետաքրքիր ձևով է վարվել Codex Kultur-Atlas-ի հեղինակ Ֆր. Ֆրիցը, որը Տիգրանակերտը քարտեզի վրա տեղադրել է երկու անգամ, Մայաֆարկինի և Արզանից դեպի արևմուտք, Խարզան գետի աջափնյակում գտնվող Դիրսան գյուղի տեղում: Տե՛ս Codex Kultur-Atlas, Türkei, Teil 9, Fr. Fritz, Codex-Verlag 776/Gundholzen.

անունը վերջինիս: Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ հիշատակված Theibalane-ն<sup>1</sup>, հավանաբար, համապատասխանում է այդ կայարանին, եթե իհարկե անկախ բնակավայր չէ<sup>2</sup>: Թալբասարիսից մինչև Տիգրանակերտ Պելտինգերյան քարտեզը ցույց է տալիս 15 մղոն կամ շուրջ 23 կմ: Տիգրանակերտի մեր առաջարկած տեղադրության վայրից հարավ-արևելք նույն հեռավորության վրա գտնվում է Բաստրիկ գյուղը: Թալբասարիս անվանումը ենթադրել է տալիս, որ կայարանը գտնվել է մի բլրի կամ լեռնակի վրա և գյուղի անունով կոչվել է Թելբասարիս (Թել կամ Թիլ = բլուր + Բասարիս (Բաստրիկ)): Չնայած մենք այսօր չենք քննարկում նշված ճանապարհին ամբողջությամբ, սակայն վերոհիշյալ փաստն անգամ գալիս է հաստատելու մեր տեղադրությունը:

Մեր քննությունն ավարտուն չէր լինի, եթե չանդրադառնայինք մի հարցի և: Եթե գտնվեր մի որևէ փաստաթուղթ, որը պարունակեր Տիգրանակերտ և Նփրկերտ քաղաքների անունները, կարծում ենք, նոր տեղադրության նկատմամբ բոլոր կասկածները ի չիք կղաճնային: Ըստ իս, երկու քաղաքների անունները պահպանվել են Պտղոմեոսի երկում, նախանձելի հարևանությամբ: Հույն աշխարհագրագետի մոտ Tigranocerta-ի տեղադրության կոորդինատներն են 76°45' և 39°40': Նրանից առաջ հիշատակվում է Pherendis-ը /Φερεις - δει/ 74°41' և 39°20' կոորդինատներով և Cholimma-ն (Քոլիմարը)՝ մի քանի անուն ընդմիջումով 77°45' և 40°40' կոորդինատներով: Բնականաբար, շատ էլ մեծ ուշադրություն դարձնել կոորդինատներին չի կարելի, քանի որ դրանք մեծ մասամբ դուրս են բերված ճանապարհային ուղեցույցների (Itineraria) հեռավորություններից: Սակայն պարզ է մի իրողություն, որ միևնույն ճանապարհի վրա ընկած բնակավայրերը, թեկուզ և սխալ կոորդինատներով, տրվում են ըստ աշխարհագրական հերթականության: Հետևաբար, եթե անդրադառնանք բերված անուններին, տեսնում ենք, որ դրանցից դեպի առավել արևմուտք ընկածը Pherendis-ն էր (74°40')<sup>3</sup>, դրանից արևելք՝ Tigranocerta-ն (76°45') և Cholimma-ն (77°45')<sup>4</sup>: Մենք արդեն պարզեցինք, որ Քոլիմարը գտնվել է Տիգրանակերտից արևմուտք, այնպես որ վերջինիս կոորդինատը պարզապես սխալ է: Պտղոմեոսի «Աշխարհագրության» մի քանի ձեռագրերում նրա արևելյան երկայնության կոորդինատը ոչ թե 05° I. "8" է (77°45') այլ 05° I. "8" (76°45'), որով եթե չհաշվենք հյու-

<sup>1</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 10:

<sup>2</sup> Ս. Ս. Երեմյանը այն նույնացնում է Բաղեշի հետ, («Ասիայի երկրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի, եր., 1982):

<sup>3</sup> Առդ:

<sup>4</sup> Երանուշ Թասուևի, Ամիդ (Տիգրանակերտ (Ֆարդին) շիրոթը հայ պատմագրության մեջ, Պեյրուք, 1968:





Աղձնիքի գավառներ փնտրել դրանից արևելք ընկած շրջանում, տրամաբանական չէ: Միաժամանակ դժվար չէ տեսնել, որ Կեթիկը առանձնապես մեծ տարածք չի ընդգրկել, Հայոց պատմության մեջ առանձնակի դեր չի խաղացել, ուստի և աղբյուրներում չի հիշատակվել<sup>1</sup>:

Հիշյալ գավառների աշխարհագրական հերթականությունը ցույց է տալիս, որ դրանք թվարկվել են հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ, Տատիկ կամ Գյուզել-դերե (Ազնվաց ձոր) գետի հոսանքին հակառակ դասավորությամբ: Բնականաբար հարց է ծագում, թե մյուս գավառները թվարկելիս հեղինակը հետևել է իր այդ սկզբունքին, թե ոչ: Աղձնյաց աշխարհի հաջորդ երեք գավառներն են **Երխեթքը, Գզեղխը և Սալնաձորը**: Ուշագրություն է գրավում այն իրողությունը, որ թվարկածների մեջ Սալնաձորը գտնվել է աշխարհի հյուսիսային սահմանագլխին, Հայկական Տավրոսի հարավային լանջերին: Գավառն իր անունը ստացել է Սալնաձոր գյուղից, որն այսօր էլ գոյություն ունի աղավաղված Սալանսոր արտասանությամբ: Վերջինիս սահմանները հյուսիսում, արևելքում և արևմուտքում անցնում են Սալնաձոր գետակի ջրբաժաններով՝ իսկ հարավում՝ երկու լեռնաբազուկներով, որոնք Շեն գյուղի մոտ աքցանի մեջ են առնում գետակը, հիշյալ գյուղը թողնելով Սալնաձորից դուրս: Բնական է, որ եթե հիշված սկզբունքը գործում է, ապա Գզեղխը պետք է փնտրել նրանից հարավ-արևմուտք ընկած հատվածում: Եվ իրոք, Խույթ կամ Խուլթ գետակի ափին, Սալնաձորից ուղիղ գծով շուրջ 7 կմ հարավ-արևմուտք գտնվում է Գզեղ գյուղը, որ այսօր էլ գոյություն ունի: Գավառը, դատելով լեռնագրությունից զբաղեցրել է Քաշախ գետակի ավազանն ամբողջությամբ և, ամենայն հավանականությամբ, երկանգոտի գետակի հովիտը: Սահմաններն ամբողջությամբ անցել են լեռնագոտիների ջրբաժաններով, որոնք հյուսիսում և հարավում հատվել են Խույթ և Սալնաձոր գետակների նեղ կիրճերով: Հարավ-արևմտյան մասում գտնվել է Փորակ լեռը, որը մինչև այսօր պահպանել է հայկական անվանումը: Գզեղ գյուղի առկայությունը հիշյալ տարածքում և «Աշխարհացոյց»-ի ներքին օրինաչափություններն այլևս բացառում են գավառի տեղադրությունը Բաղեշի ձորում<sup>2</sup>: Նշված երկու գավառների տեղադրությունը մեզ հուշում է երրորդ՝ **Երխեթք** գավառը

<sup>1</sup> Տոմաշևիկը և նրան հետևող Վ. Կարդանյանը փորձում են Թովմա Արծրունու մոտ հիշատակվող Գեթացիներին համարել Կեթիկի բնակիչներ, որն, ինչպես նշում է Լ. Հյուբշմանը, ճիշտ չէ (Թովմա Արծրունի և Անանուն, էջ 366. «... գորս իւրոյ նահանգին և Միջագետաց և Գեթացիսն»: Լ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 169: Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 368, ծանոթ. 460): Վ. Կարդանյանը հանձնի Գեթացիների տեսնում է Կեթիկի իբրև թե մահմեդական բնակիչներին:

<sup>2</sup> Ս. Երեմյանը Բաղեշի ձորում տեղադրում է Գզեղխը, որը վկայող որևէ փաստաթուղթ մեզ հայտնի չէ: Սխալ է նաև Գզեղխի կապելը Գյուզել-դերե անվան հետ:

փնտրելու Գզեղխի հարևանությամբ: «Աշխարհացոյց»-ի ձեռագրերից երկուսում<sup>1</sup> ուշ շրջանում կատարվել են մի քանի ընդմիջարկություններ, որոնցից մեկի համաձայն «Կեթիսեթս որ է գաւառ Կալախիակն»: Արևելյան Աղձնիքի շրջանում հայտնի են ներկայումս երկու բնակավայր, որոնք կոչվում են Կալ-հոկ: Դրանցից հարավայինը գտնվում է Ջոխ-Արզանից մի քանի կմ հյուսիս-արևելք, իսկ երկրորդը՝ Գզեխ գյուղից մի փոքր հյուսիս-արևմուտք Խույթ գետի ափին<sup>2</sup>: Անտարակույս է, որ Երխեթքը կարող է նույնանալ ոչ թե Ջոխ-Արզանի մոտ գտնվող Կալիոկին, այլ Գզեղխի հարևանությամբ տեղադրվածին: Այս գավառը կամ, ավելի ճիշտ, գավառակը, որ մեծ տարածք չուներ, զբաղեցնում էր Շենիկ գետակի հովիտը և հասնում Կալիոկը Գզեղխից բաժանող լեռնազագաթին<sup>3</sup>: Վերջին Սասուն կամ Սանասունք գավառի տեղադրությունն այլևս խնդիրներ չի հարուցում, որովհետև պետք է զբաղեցնել Մեծ Ծոփք, Արձն ու Երխեթք գավառների և Հայկական Տավրոսի կամ Սիմ լեռների միջև ընկած տարածքը, բացառությամբ Ասպակունյաց ձոր և Խույթ գավառների ձորահովիտների, որոնց դեռ մենք կանդրադառանաք: Սանասունքի արևմտյան և հյուսիս-արևմտյան սահմանը անցել է այն գծով, ինչ մեզ ներկայացնում են բյուզանդական աղբյուրները և, մասնավորապես, Գևորգ Կիարացու աշխատությունը, որը նկարագրում է Արձն-Արզաններ կլիման (երկիրը):

Պարզելով, ըստ էության, Աղձնիքի բոլոր գավառների տեղադրությունը, մենք կարող ենք կրկին անդրադառնալ Արձնի սահմաններին: Արևելքում այն պետք է Ջերմ գետից թեքվել հյուսիս և ընթանար ջրբաժան գծով մինչև Կեթիկ գավառը: Այնուհետև, շարժվելով Կեթիկի հարավակողմով դեպի արևմուտք, սահմանը հասնելու էր Բաղեշ և Տատիկ գետերի ջրբաժանը և ընթանալու էր դրանով մինչև Բաղեշի հարավակողմը: Այստեղից սահմանագիծը թեքվելու էր արևմուտք, Տավրուբերանի մեջ թողնելով Բաղեշը և, շարժվելով Սալնաձոր ու Գզեղի գավառների հարավակողմով, Սասունի լեռնաշղթայով և ներկայումս Դուրանիշ (1474 մ), Դվրիքիրա (1261 մ.), Լանգալ (1361 մ.) և Գալբիրիա (1203 մ.) կոչվող լեռներով այն դուրս էր գալու Մեծ Ծոփքի և Արձնի սահմանագիծ հանդիսացող Քաղիրթ գետը:

Համաձայն մեր տեղադրության, որն, ինչպես տեսանք, բխում էր Աղձնիքի նկարագրության տրամաբանությունից, Բաղեշի ձորահովիտը պետք է մտներ

<sup>1</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. թիվ 1717 և 5613:

<sup>2</sup> Карта Генерального штаба, Масштаб 1:200000, нп. 10-37-18. Кельхюк и Кельхок:

<sup>3</sup> Հասկանալի է, որ ձեռագրական հիշյալ նյութը բացառում է Երխեթքի տեղադրությունը Երևանի շրջանում: Հիմնավորված չէ նաև Վ. Բելի կողմից Երխեթքի նույնացումը Աղբերին և Ղ. Խնդիկյանի ու Քիպերթի կողմից Ջըրջեթան և Սըրբեթան անվան հետ կապելը: Տե՛ս Լ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 170-171:

Արձնի մեջ: Այդ բնավ էլ պատահական չէր, քանի որ «Արքունի պողոտա»-ի Բաղեշով անցնելը առանձնակի կարևորություն էր հաղորդում հիշյալ ՉՈՐ-ջանին: Բոլեշխությունն իր անմիջական ենթակայության տակ էր պահում ճանապարհի իր տարածքով անցնող հատվածն ամբողջությամբ և, անշուշտ, տրամադիր չէր թույլատրել մայրուղու վրա, թեկուզ և իրեն ենթակա, որևէ իշխանության հանդես գալը: Նույն ձևով, Հայ Արշակունիներն աշխատում էին վերջ տալ բոլեշխական իշխանությանը և «Արքունի պողոտան» ամբողջությամբ վերցնել իրենց վերահսկողության ներքո: Դրա վառ արտահայտությունը Խոսրով Գ Կոտակի օրոք պաստամբություն բարձրացրած Աղձնյաց բոլեշխի ընտանիքի սրի քաշելն էր և բոլեշխությունը արքունիքին նվիրված Վաղինակ Սյունուն հանձնելը<sup>1</sup>: Այդ իմաստով Բաղեշի ձորահովտում Գզեղի կամ Սալնոձորի տեղադրությունը, ինչպես կատարում է Ղ Ինճիճյանը, տրամաբանական չէ և ոչ հավանական<sup>2</sup>: Կա մի հանգամանք ևս, թե ինչո՞ւ լեռնային գավառները, բացառությամբ Սանասունքի, շատ փոքր տարածքներ են ընդգրկում: Խնդիրն այն է, որ դրանք, ամենայն հավանականությամբ, սկզբնապես՝ գոյություն չեն ունեցել և ի հայտ են եկել ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով: Դատելով Աղձնիք աշխարհի նկարագրությունից, լեռնային գավառներից առաջին երեքը՝ Կեթիկը, Տատիկը և Ազնվաց ձորը, ձևավորվել են Արձնի տարածքում, իսկ երկուսն էլ, Գզեղից և Սալնաձորը՝ Սանասունքի: Ամենայն հավանականությամբ, նոր ձևավորված գավառների բնակչությունը ապրում էր ցեղային կազմակերպության պայմաններում և ցեղերի առաջնորդները աստիճանաբար ավատականանալով վերածվում էին նախարարների, որոնք ոչ թե ենթարկվում էին հայոց արքունիքին և մտնում նրա «Գահնամակ»-ի մեջ, այլ բոլեշխին, որով իսկ Հայաստանում ևս գործում էր ավատատիրության սուրբ սկզբունքը՝ «Իմ վասալի վասալը իմ վասալը չէ»: Ըստ էության, բոլեշխական հաստատության ամենակարեվոր, թերևս, առանձնահատկությունը սեփական ավատատիրական սանդղակ ունենալն էր: Իհարկե, արքունիքին ենթակա նախարարները նույնպես ունեին իրենց վասալները, սակայն ի տարբերություն բոլեշխների, որոնց վասալների մեջ կային ժառանգատեր իշխաններ, նախարարների վասալները կապված էին վերջիններիս հետ պայմանական հողատիրության սկզբունքներով<sup>3</sup>:

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 21:

<sup>2</sup> Ղ Ինճիճյան, Նոր Հայաստան, էջ 175:

<sup>3</sup> Այս երևույթը հայկական ավատատիրության ուսումնասիրողների կողմից բնավ ուշադրության չի արժանացել և մենք մտադիր ենք առաջիկայում հանդես գալ այդ հարցի շուրջ առանձին հոդվածով:

Եթե մեր տեսակետը լեռնային գավառների կազմավորման մասին ճիշտ է, ապա Աղձնիքը սկզբնապես ունեցել է ընդամենը չորս գավառ. Լիբրկերտ կամ Մեծ Ծոփք, Արձն, Քեղ կամ Անգեղտուն և Սանասունք: Այս իրողությունը սերտորեն առնչվում է Պլինիոս Ավագի կողմից Հայաստանում հիշատակված 120 prefectura-ներին կամ զորավարություններին, որոնց թիվը հետագայում աճել էր մի քանի տասնյակով՝ Մեծ Հայքի թագավորության ավատակա-նացման խորացմանը զուգահեռ:

Մեզ մնաց քննարկելու մի հարց ևս: Ե՞րբ և ինչպե՞ս է ձևավորվել Աղձնիք աշխարհը և արդյո՞ք այն անմիջական արդյունք էր Հայաստանի 591 թ. երկրորդ բաժանման և Մավրիկիոսի վարչա-քաղաքական ձեռնարկումների:

Աղձնիք անունն ունի հին ծագում: Խեթական աղբյուրներում այն հայտնի է Ալցի և Ալշե, ասորեստանյանում՝ Ալզի և արարատյան կամ վանյան բևեռագրերում՝ Ալզի և Ալզինի անուններով<sup>1</sup>: Համաձայն Սուպիլուլիումի տարեգրության, որն արձանագրված է ակկադերեն, խեթական թագավորը մտել է Խոսվա երկիրը, իսկ այնուհետև Ալսե: Հետագա դեպքերից պարզվում է, որ նա հիշյալ երկրում գրավում է Կուսմարի և Սուտա ամրոցներն ու հարձակվում է Միտաննիի թագավորության մայրաքաղաք Վասուկանի (Վաշշուգանե) վրա<sup>2</sup>: Ինչպես ճիշտ նկատել է Վ. Խաչատրյանը, ստացվում է, որ Ալսե երկիրը գտնվել է Միտաննիի և Խուվալայի միջև, ըստ որում Կուսմարին նույնանում է «Աշխարհացոյց»-ի հիշատակած Կուստեմուանի հետ<sup>3</sup>: Ն. Հարությունյանը հակված է Կուսմարին տեղադրել Հանիի մոտ գտնվող Կուսմարի տեղում<sup>4</sup>: Ըստ ասորեստանյան արձանագրությունների, Ալզին սահմանակից է կամ մերձակա Կադմուխի, Պուշշի, Մոամի, Մադանի, Նիխանի, Ալայա, Թեբուրզի, Պուրուլումզի երկրներին<sup>5</sup>: Ըստ որում, համաձայն այդ տեղեկությունների, Ալզին կարելի է տեղադրել աշխարհացոյցյան Աղձնիքի արևմուտյան և արևելյան շրջաններում, անգամ Ծոփքի հարավային տարածքներում: Մենուայի Ազնավութեփեի արձանագրությունը Ալզի երկրի մեջ է համարում Կուսուան քաղաքը, որը համապատասխանում է Թովմա Արծրունու հիշատակած Կոտոմին: Վերջինս մինչև այսօր էլ պահպանվել է Վանա լճից հարավ-արևմուտք ընկած շրջանում Կոտոմ անունով: Պատմիչի վկայությամբ այն

<sup>1</sup> Н. В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 18-19:

<sup>2</sup> В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, էջ 114-115: E. F. Wiedner, Politische Dokumente aus Kleinasien, Bd. I, I, Leipzig, 1923, էջ 17-28:

<sup>3</sup> Անդ, էջ 217:

<sup>4</sup> Н. В. Арутюнян, Биайнили (Урарту), Ереван, 1970, էջ 15, ծանոթ. 16:

<sup>5</sup> АВМУ, 1, 3, 4-7, 10, 11, 12, 21, 28, 40, 50:



մտնում էր Աղձնիք աշխարհի մեջ<sup>1</sup>։ Ի մի բերելով նշված տեղեկությունները մասնագիտական գրականության մեջ ենթադրվել է, որ Ալզին համապատասխանում է Մեծ Հայքի Աղձնիքին, տեղադրվում է Տիգրիսի վերին հոսանքի և շրջակա տարածքներում, տարածվելով մինչև Կոտոմ քաղաքը<sup>2</sup>։ Որոշ արձանագրություններ կարծես թե նույնացնում են Ալզին Էնգիտեի հետ, որը մտածել է տալիս, թե դրանք երկու ազգակից ցեղային երկրներ էին<sup>3</sup>։

Պարզելով, որ վաղնջական ժամանակներում Ալզի ցեղի անունը տարածված էր գրեթե ամբողջ աշխարհացոյցյան Աղձնիք աշխարհի տարածքի վրա, փորձենք ցույց տալ վերջինիս ձևավորման ընթացքը։ Աղձնիքի տարածքը, դատելով սկզբնաղբյուրների անուղղակի ցուցումներից, մտել է Երվանդունիների թագավորության մեջ, սակայն մ.թ.ա. III դարում Ծոփք-Կոմագենեի թագավորության հանդես գալով, նրա արևմտյան շրջանները մինչև Քաղիթ թեղ անցնում են Արշամաշատ-Արկաթիոկերտի տիրակալներին, որի հետագետը անցնում են Արշամաշատ-Արկաթիոկերտի տիրակալներին, որի հետևանքով Ծոփք անունը աստիճանաբար տարածվում է այդ երկրամասի վրա։ Տիգրան Մեծի կողմից Ծոփքի թագավորությունը Մեծ Հայքին վերամիավորելուց հետո, այն, հավանաբար, բաժանվում է երկու մասի, որի հետևանքով արևմտյան Աղձնիքը շրջակա երկրամասերի հետ միասին ստանում է Մեծ Ծոփք անունը։ Վերջինիս տարածական ընդգրկման նեղացմանը որպես արդյունք Մեծ Ծոփքը ի վերջո սահմանափակվեց Անգեղտուն և Նփրկերտ գավառների, իսկ ավելի ուշ միայն Նփրկերտ գավառի տարածքով։

Աղձնիքը որպես աշխարհի ձևավորվեց Մեծ Հայքում հաստատված Արշակունյաց արքայատոհմի առաջին ներկայացուցիչներից մեկի, թերևս հենց Տրդատ Ա-ի կողմից։ Սակայն աշխարհի մասին աղբյուրները տեղեկություններ են պահպանել միայն II դարից։ Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ը Մեծ Հայքի հարավ-արևմտյան շրջանում հիշատակում է Անգիտենե /'Ανζιτινή/ երկիրը, որից դեպի արևելք գտնվում էր Տոսպիտիսը<sup>4</sup>։ Վերջինս տարածվում

էր Եփրատ գետի ափերից մինչև Տոսպիտիս կամ Արևմտյան Վասպուրական, հարավում սահման ունենալով, ըստ մեծի մասին, Տիգրիս գետը, իսկ հյուսիսում՝ ինչ որ մասով Արածանին և Հայկական Տավրոսի լեռնաշղթան։ Նշված տարածքով Անգիտենեն իր մեջ ներառնելու էր Գավրեք, Անձիտ, Անգեղտուն (Քաղ), Նփրկերտ, Արձն, Կեթիկ, Տատիկ, Ազնվաց ձոր, Երխեթք, Գզեղիս, Սալնաձոր, Սանասունք գավառները և Մոկք աշխարհն իր 9 գավառներով։ Այս խիստ երկարածաված և մեծ տարածություն զբաղեցնող աշխարհի վարչական կենսունակության աղբյուրը Մելիտենե-Տիգրանակերտ-Արտաշատ և Տիգրանակերտ-Շնգար առևտրական ճանապարհներն էին։

Բնական էր ենթադրել, որ այս աշխարհը կկոչվեր Աղձնիք և ոչ թե Անձիտ-Անգիտենե, ինչպես հավաստում է Պտղոմեոսի երկը։ Ինչպես արդեն նշել ենք Ծոփքի բաժնում, չի բացառվում, որ աշխարհն իրոք կոչվել է Աղձնիք, սակայն հունա-հռոմեական աշխարհը՝ շփվելով այդ երկրամասի հետ արևմուտքից, որտեղ տեղակայված էր Անձիտը, շփթել է Անգիտենե և Ալզինենե անունները և առաջինի անունով ընկալել ամբողջ աշխարհը։ Այսուհանդերձ, ինչպես վերև ասվել է, աշխարհը կարող էր կոչվել Անգիտենե և միայն Անձիտի անջատումից հետո վերակոչվել Աղձնիք, որը և տեղ է գտել «Աշխարհացոյց»-ի նկարագրության մեջ։

Անձիտ գավառի հայտնվելը Անգիտենեում թերևս պայմանավորված էր Հռոմի կողմից Ծոփքը Մեծ Հայքից անջատելու և առանձին թագավորության վերածելու քաղաքականությանը դիմագրավելու նպատակով։ Այլ խոսքով, Ծոփքի քաղաքական-վարչական միասնությունն անգամ Մեծ Հայքի շրջանակներում արձունիքի կողմից համարվում էր վտանգավոր։ Սակայն մյուս նակներում արձունիքի կողմից համարված Գավրեքի միացումը Ծոփքին վարչական անհրաժեշտություն էր, պայմանավորված լեռնային մակերևույթի առանձնահատկություններով և տնտեսական ամփոփ շրջան կազմելու վիճակով։ Անձիտի անջատումն Անգիտենեից կատարվեց հավանաբար III դարում, թերևս հայկական պետականության շրջանակներում։ Սակայն շատ հնարավոր է, որ այն արդյունք էր III դարի հայ-պարսկական քաղաքական փոխհարաբերությունների։ Խոսքով Բ-ի եղբրական սպանությունից հետո Մեծ Հայքի թագավորությունը կառավարում էր Տրդատ Գ-ի խնամակալ Արտավազը (հավանաբար՝ Արտավազը Մանդակունին)<sup>1</sup>, որին՝ հռոմեական աղբյուրների վրա հենվելով, Ա. Երեմյանը համարում է Արտավազը Ե-Արշակունի<sup>2</sup>։ Հայոց թագավորությունն ստիպված էր ընդունել Պարսկաստանի քաղաքա-

<sup>1</sup> «Anatolia», V, 1960, էջ 116, 122-123: Քովան Արձունի, էջ 460. «Ել տեսեալ (Գազիկ Արձունի թագավորը - Հ. Բ.) մերձ ի որունս Ասորեստանի ամրոց մի յիշխանատանս Աղձնեաց ի գետն Կոտոմ կոչեցեալ, լինելով սեփականաբար Ջուրարիկն կոչեցեալ ազգի՝ սպառ սպռա կորուսեալ ջնջէ գազգն և գշինուածս ամրոցին ի հիմանց տապալեալ՝ գբարիսն նորա բարձեալ թեթկ ի վերայ մկանաց ծովուն, ընծայելով ի նիւթ շինութեան սրբոյն եկեղեցոյն (Աղթամաթի - Հ.Բ.)»։ Օ.Օ. Карагезян, Город Кутуме урартских источников, տե՛ս ՊԲՀ, 1974, թիվ 3, էջ 191-192: Л. М. Головлева, Царство Алзи во второй половине II тысячелетия до н. э., «Древний Восток», Ереван, 1978, էջ 71-87:

<sup>2</sup> Н. В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 18-19:

<sup>3</sup> Անդ, էջ 256: Հ. Հյուբշմանը գտնում է, որ Ալզին նույնական չէ Իւզի, Իւզիտի երկրին, սակայն հարևան էին և Անձիտը տարածվում էր մինչև Ջիթեն գետը (Հին Հայոց տեղայն անուններ, էջ 74):

<sup>4</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 8. «'Ανζιτινή και η ἰπ αὐτῆν Θωσπίτις»:

<sup>1</sup> Ա. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Ասասյանները, տե՛ս «Պատմա-քառասիրական հանդես», 1975, թիվ 3, էջ 149-155:

<sup>2</sup> «Հայ ժողովրդի պատմություն», ՀԱՍՀ ԳԱ հրատ., հատոր Բ, էջ 46-47:

կան ազդեցությունը և, ինչպես կարելի է դատել «Աշխարհացոյց»-ի տվյալներից, հողեր զիջել Սասանյաններին թագավորության հարավ-արևմտյան և հարավային շրջաններում<sup>1</sup>, որոնք Պարսկաստանի ռազմավարական ծրագրերում կարևոր տեղ էին զբաղեցնում իրենց առանձնահատուկ դիրքի և նրանցով անցնող մայրուղիների պատճառով:

Հարկադրված լինելով Սասանյաններին զիջել Մեծ Հայքի հարավ-արևմտյան շրջաններում մի քանի երկրամասեր, որոնք այդ շրջանում դեռևս վարչական միասնություն էին կազմում, հայոց արքունիքը, ինչպես հուշում են «Աշխարհացոյց»-ի անուղղակի տվյալները, համառ պայքար է մղել և կարողացել է իր ձեռքում պահել Հայկական Տավրոսի կարևոր ռազմագիտական կետերը, մասնավորապես լեռնանցքները՝ իրենց հարակից լեռնաշղթայից հարավ ընկած տարածքներով: Մենք արդեն անդրադարձել ենք Հաշտեանքի հարավային և հյուսիսային շրջաններն իրար հետ կապող Ոլորի և Սափխասի լեռնանցքներին, այժմ դրանց քվելացները Սասունի և նրան հարակից տարածքների լեռնանցքները: Սասունը Տարոսին և նրա կենտրոն Մուշ քաղաքին կապող մի քանի ճանապարհներ անցնում էին Խոզմ սարի, Ծակքարի, Ծիծեռնավանքի և Կոփի լեռնանցքներով, որոնցից հարավ տարածվում էր Ասպակունյաց ձոր գավառը, գտնվելով Տավրոսբերանի կամ Տուրուբերանի ենթակայության ներքո: Դրանցից դեպի արևելք, Խաչառաջ լեռների շրջանում, որոնք մտնում են Հայկական Տավրոսի համակարգի մեջ, գտնվում է Խաչի լեռնանցքը, որից հարավ տարածվում է Խույթ գավառը, գտնվելով նույնպես Տավրոսբերանի ենթակայության տակ: Ավելի արևելք, Տիգրանակերտ-Արտաշատ մայրուղին անցնում էր Չորա պահակ լեռնանցքով, որից հարավ տեղակայված Բաղեշ քաղաքն ու շրջակա ձորահովիտը մտնում էին Տավրոսբերանի Բզնունիք գավառի մեջ: Հիշյալ գավառներն ու տարածքները, անտարակույս, մնացին Հայոց թագավորությանը, իսկ դրանցից հարավ ընկած հողերը ժամանակավորապես անցան Պարսկաստանին: 298 թ. Մծբնի պայմանագրով Հռոմին անցած հայկական երկրամասերի մեջ չի հիշատակվում Մոկքը, որը բավական անակնկալ քաղաքական ասպարեզ է մուտք գործում IV դարի 60-ական թվականներին: Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ը դեռևս ծանոթ չէ Մոկքին, որը պարզորոշ վկայում է վերջինիս վարչականորեն դեռևս ձևավորված չլինելու մասին<sup>2</sup>: Մոկքն առաջին անգամ հիշատակվում է Ամիանոս Մարկելիոսի կողմից, կապված 363թ. «ամոթալի» հաշտությամբ Հռոմից Պարսկաստանին անցած երկրամասերի թվարկման հետ: Շապուհ Բ-ն ստացավ Արզանեն, Մոքսոնեն, Ջաբդիկեն, Ռեհիմեն և Կորդուեն երկր-

<sup>1</sup> «Աշխարհացոյց»-ի տվյալներով Մեծ Հայքի մեջ չէին Օավոքը և Նիխորական, Դասն ու Մափկերտ-տուն գավառները:

<sup>2</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 8-10:

ները<sup>1</sup>, որոնցից Մոքսոնեն և Կորդուեն երկրները լատին պատմիչի վկայությամբ ռազմական թատերաբեմ էին դարձել հռոմեա-պարսկական պատերազմների ժամանակ<sup>2</sup>: Մոքսոնեն-Մոկքը, ինչպես տեսանք, չկար II դարում և կա IV դարում, ուստի նրա հանդես գալը ևս արդյունք է Արտավազդի խնամակալության ժամանակաշրջանի, երբ ռազմավարական նկատառումներով հայոց արքունիքը կարողանում է Աղձնիքի արևելյան շրջանները պահել իր գերակայության ներքո:

Իրավացիորեն կարելի է հարց տալ, թե ինչո՞ւ վարչական այս իրողությունները մենք կապում ենք պարսկական տարածքային ձեռքբերումների հետ: Պատասխանը միանշանակ մեկն է: Ոչ մի կառավարություն այն հեռավոր ժամանակներում վարչական բաժանումներ իրականացնելիս չէր անցկացնի սահմանները աշխարհագրական տեսակետից այդպիսի անտրամաբանական ձևով: Լեռնային մակերևույթը պարզապես պարտադրում է, որ սահմանն անցկացվի ջրբաժան լեռներով, հետևաբար և Ասպակունյաց ձորը, և Խույթը, և Բաղեշն իր շրջակայքով վարչականորեն պետք է հարեին Հայկական Տավրոսից հարավ ընկած միավորներին և ոչ թե գտնվեին Տավրոսբերանի մեջ: Սակայն երկրի քաղաքական պատմությունն իր որոշակի փոփոխություններն է մտցրել վարչական բաժանման համակարգի մեջ և վարչական իրականություն դարձրել նշված անբնական թվացող սահմանը: Այլ խոսքով, Մեծ Հայքի աշխարհների սահմանները ոչ միայն այս տարածաշրջանում, այլև մնացած հատվածներում պատահական և, առավել ևս կամայական չեն և ինչ որ պատմական ժամանակահատվածում, եթե ոչ ամբողջությամբ, ապա հիմնականում եղել են վարչա-քաղաքական իրողություն<sup>3</sup>:

Եթե Ասպակունյաց ձոր կամ Խույթ գավառները տարածքի առումով շատ մեծ չէին և բնականաբար միացվեցին Հայկական Տավրոսից հյուսիս գտնվող Տավրոսբերանին, ապա Աղձնիքի արևելյան շրջանների ձևատարազիրն այլ լուծում գտավ: Ազնվաց ձոր, Տատիկ և Կեթիկ գավառներից արևելք ընկած հողերը բավական ընդարձակ էին Տոսպիտիս-Տոսպին լուկ կցելու համար և միաժամանակ աշխարհագրական տեսակետից կազմում էին ոչ շատ մեծ, սակայն բնաշխարհագրական և տնտեսական առումով մի ամփոփ շրջան: Դրան պետք է ավելացնել նաև այն հանգամանքը, որ հիշյալ տարածքի մեծ մասը

<sup>1</sup> Ammianus Marcellinus, XXV, 7,5: Տե՛ս նաև Аммиан Марцеллин, История, перевод с латинского проф. Ю.А. Кулаковского, Вып. II, Киев, 1907, XXV, 7,5:

<sup>2</sup> Ammianus Marcellinus, XXIII, 3,6:

<sup>3</sup> Ավելի ուշ ժամանակներում վարչական սահմանների «անկանոնությունները» Հայաստանում որոշակի քաղաքական գունավորում ունեին: Թուրքական կառավարությունը, ահաբեկված Հայկական հարցի բարձրացումից, սահմաններն անցկացնում էր այնպես, որ հայկական տարրը վարչական միավորներում մեծ տոկոս չկազմի:

պատկանում էր Մոկացի նախարարական ընտանիքին: Ուստի միանգամայն հասկանալի շարժառիթներով այդ տարածքից կազմավորվեց Մոկք աշխարհը: Կարելի է անշուշտ ենթադրել, որ Մոկքը կարող էր ձևավորվել Արևմտյան Վասպուրականի տարածքից, սակայն պատմական իրադարձությունների ընթացքն այդ չի հաստատում: Էլ չենք խոսում այն մասին, որ նման հարցադրումը գրեթե հավանականություն չունի ոչ բնաշխարհագրական, ոչ էլ քաղաքական կամ վարչական պատմության հայեցակետից:

Մոկքի ստեղծումով փաստորեն ձևավորվեց նաև Աղձնիք աշխարհը «Աշխարհացոյց»-ի նշած սահմաններում: Այն ոչ թե աշխարհագրական երկի հեղինակի մտահայեցողության արգասիք էր, այլ վարչական իրողություն: Սակայն այն որպես լիարժեք աշխարհի հանդես եկավ մի որոշ ժամանակ անց: Վալերիանոս կայսեր գերումից հետո Մեծ Հայքի կառավարիչ Արտավազդն իր անհանգստությունը հայտնեց Շապուհ Ա-ին կատարվածի առիթով, նշելով, որ պարսից արքային օգնական զորք ուղարկող երկրները տուժում են նրանց բախումների ժամանակ<sup>1</sup>: Դրա հետևանքը եղավ այն, որ պարսից զորքերը ռազմակալեցին Մեծ Հայքը, որտեղ գահ բարձրացրեցին Որմիզդ-Արտաշիրին (261-272), իսկ Արտավազդը մանկահասակ Տրդատին փախցրեց Հռոմ<sup>2</sup>: Որմիզդ-Արտաշիրին հայկական գահին բազմեցնելով, Սասանյանները, հավանաբար պարթև Արշակունիների օրինակով, կամենում էին Մեծ Հայքը դարձնել իրենց արքայատոհմի երկրորդ պետություն: Ստեղծված պայմաններում անիմաստ էր դառնում Աղձնիքի անջատումը Հայկական թագավորությունից, ուստի այն վերադարձվում է և վերածվում Մեծ Հայքի աշխարհի նոր ձևավորված սահմաններով: Քաղաքական նմանօրինակ կացություն էլ ստեղծվում է III դարի վերջերին, սակայն Աղձնիքի ձևավորումը չի կարող վերաբերել նշված ժամանակաշրջանին, քանի որ III դարի վերջին աշխարհացոյցյան սահմաններով Աղձնիք այլևս գոյություն չունի: Այն ավատատիրության զարգացման հետևանքով վեր էր ածվել մի քանի երկրամասերի; որոնք դարձել էին ինքնուրույն վարչական միավորներ՝ **Անգեղոտուն, Մեծ Ծոփք և Աղձնիք** կամ, որ ավելի ճիշտ է, **Արզնարգյուն**:

Որմիզդ-Արտաշիրի առաջին ձեռնարկումներից մեկը եղավ հայ ավագանու հետ սերտ կապեր հաստատելն ու աշխարհագիր անցկացնելը<sup>3</sup>: Ամենայն հավանականությամբ, նրա անցկացրած աշխարհագրի նյութերն էլ դրվել են

<sup>1</sup> *Scriptores Historiae Augustae*, XXII, III, 1-3: Վերցված է Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատությունից (հատոր Բ, մասն Ա, էջ 97-98):

<sup>2</sup> Ա. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 151-157: Մովսես Խորենացի, II, 29, էջ 215. «... և Արտաազդ Մանդակունի, որոյ ամեալ զՏրդատ որդի խոսրովո՛ւ ի դուռն կայսեր հասուցանէր»:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, II, 21:

«Աշխարհացոյց»-ի Մեծ Հայքի նկարագրության հիմքում, քանի որ տվյալ կացությունը բոլորովին նման չէ II դարում առկա իրերի դրությանը և առավել ևս ոչնչով չի հիշեցնում IV դարի վարչա-քաղաքական պատկերը: Սա առավել տրամաբանական բացատրությունն է, որովհետև որևէ այլ մեկնաբանություն պատասխան չի տալիս այն հարցին, թե ինչու Մեծ Հայքի աշխարհացոյցյան նկարագրության մեջ տեղ չի հատկացվել **Ծավդեքին** կամ **Կորձալքից հարավ ընկած գավառներին**, ինչպես նաև հայոց թագավորների **Ատրպատականում** ունեցած ձեռնական իշխանության երկրին:

Մեծ Հայքում Սասանյան հարստության ներկայացուցիչների իշխանության տարիներին աստիճանաբար տեղի ունեցավ ըստ աշխարհների վարչական բաժանման համակարգի որոշ քայքայում: Այսուհանդերձ նրա որոշակի կմախքը պահպանել է Ազաթանգեղոսի երկը<sup>1</sup>: III դարի երկրորդ կեսին տեղի ունեցավ Աղձնիքի վարչական տրոհումը, որի շարժառիթները մեզ համար այնքան էլ հստակ չեն: Ըստ երևույթին, երկրամասը սկզբում կառավարվում էր արքունի ոստիկանի կամ վերակացուի կողմից, որի ենթակայության տակ էին Աղձնյաց բոլեշխությունը, Անգեղտան ներքինի կուսակալությունը և Մեծ Ծոփքը: Սակայն հայոց Սասանյան գահակալները, հավանաբար նպատակահարմար են գտնում այդ իշխանությունները դնել իրենց անմիջական ենթակայության ներքո, օժտելով դրանք սահմանային իշխանությունների որոշակի արտոնություններով: Հիշյալ երկրամասերը Կորդուքի և Ծավդեքի հետ մեկտեղ այնպիսի վարչա-քաղաքական կացություն ձեռք բերեցին, որ հռոմեացիները դրանք անգամ զատում էին հարևան երկրամասերից, կոչելով «Անդրտիգրիսյան մարզեր» կամ «Անդրտիգրիսյան ազգություններ»<sup>2</sup>:

287 թվին Վահրամ Բ-ի և Դիոկլետիանոս կայսեր փոխադարձ համաձայնությամբ Տրդատ Գ-ն հաստատվեց հայոց գահին, իսկ այնտեղ թագավորող Լերսեհ Սասանյանը (276-293), որ Վահրամ Բ-ի կատաղի մրցակիցն էր պարսից գահի համար պայքարում, քաշվեց Հայաստանի արևելյան շրջանները, որտեղ շարունակեց թագավորել «Հայաստանի մեծ թագավոր», զուցե նաև «արքայից արքա» տիտղոսով<sup>3</sup>: Տրդատի ենթակայության տակ անցավ Աղձնիքը, որտեղ պահպանվել է նրա թողած այսպես կոչված Տիգրանակերտի արձանագրությունը<sup>4</sup>: Առաջին անգամ դրա մասին հիշում է պորտուգալացի

<sup>1</sup> Ազաթանգեղոս, § 795:

<sup>2</sup> *Ammianus Marcellinus*, XXV, 7,9. «regiones Transtigridas»; XVIII, 8,1. «...gentes Transtigridas»:

<sup>3</sup> Ա. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 155-169: В. Г. Луконин, Древний и раннесредневековый Иран, Москва, 1987, էջ 164:

<sup>4</sup> Տիգրանակերտի տեղագրության ճշտումից հետո, բնականաբար, Ֆարկիսի հունարեն արձանագրությունը չի կարող կոչվել Տիգրանակերտի:

ճանապարհորդ Անտոնիո Տենրեյրոն (1560թ.)<sup>1</sup>, այնուհետև ռուս ճանապարհորդ Ե. Չիրիկովը<sup>2</sup> և անգլիացի Բ. Թեյլորը<sup>3</sup>: Արձանագրությունը պատճենել է գերմանացի հետազոտող Կ.Ֆ. Լեհման-Հաուպթը և հրատարակել իր «Հայաստանը հնում և ներկայումս» աշխատության մեջ: Վերջինիս վերծանման վրա աշխատել են այնպիսի ճանաչված վիմագրագետներ, ինչպիսիք էին Ֆ. Հիլլեր ֆոն Գերտրինգենը, Թ. Նյուլդեկեն, Ու. Վիլլամովից-Մյուլլենդորֆը, Վ. Դիտտենբերգերը և ուրիշներ<sup>4</sup>, սակայն այն այսօր էլ սպասում է իր հերթական վերծանողին:

Լեհման-Հաուպթը արձանագրությունը վերագրել է հայոց Պապ թագավորին, իսկ գրության ժամանակը համարել 372թ., գտնելով, որ այն արտացոլել է թագավորի կողմից ապստամբ երկրամասերը իրեն ենթարկելու քաղաքականությունը<sup>5</sup>: Նման թվագրումը հակված է ընդունելու նաև Կ. Տրևերը<sup>6</sup>: Ինչպես ճիշտ նշում են Լ. Մարքվարթը և նրան համակարծիք Լ. Մանանդյանն ու Գ. Սարգսյանը, արձանագրությունը գրվել է հայ հեթանոս թագավորի կողմից, իսկ Պապ արքան իր հեթանոսական բոլոր հակամներով հանդերձ, այնուամենայնիվ, քրիստոնյա միապետ էր<sup>7</sup>: Նրանց կարծիքով, արձանագրությունը կարող էր գրվել քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելուն նախորդած տարիներին, Մծբնի 298թ. հաշտության պայմանագրի կնքումից շատ չանցած: Միանգամայն այլ է Ս. Երեմյանի տեսակետը, ըստ որի այն գրվել է իբրև թե 293 թվին, երբ Տիգրանակերտը հանձնվել է պարսից Ներսես թագավորի կողմից Տրդատ Գ-ին<sup>8</sup>: Սակայն արձանագրության թվագրման խնդրում առավել հիմնավոր տեսակետ է առաջ քաշել Ա.Ա. Մարտիրոսյանը, որի համաձայն այն գրվել է 287թ. Տրդատի Հայաստանում հաստատվելուց շատ չանցած<sup>9</sup>: Արձանագրության հանդես գալը 293 թվին բացառվում է, քանի որ Մծբնի հաշտության բանակցություններում Աղձնիքը

դիտվում էր Պարսկաստանի տարածք, հետևաբար Ներսեհը 293-ին ոչ թե տված, այլ վերցրած պետք է լիներ Աղձնիքը: Ինչ վերաբերում է արձանագրության 298 թվից հետո, բայց ոչ 301-ից ուշ, գրվելուն, ապա այդ ևս հավանականություն չունի, քանի որ հաղթանակած Հռոմը, որը զենքի ուժով տիրացել էր Աղձնիքին և Պարսկաստանի կողմից ռազմակալված հայկական մյուս տարածքներին, դրանք Մեծ Հայքին հանձնելու համար բնավ պարսից արքայից արքայի համաձայնության կարիք չուներ:

Արձանագրության մեջ Տրդատ Գ թագավորը, որի անունը չի պահպանվել, հարգալից և երախտագիտությամբ է խոստում հռոմեացիների և պարսից թագավորի մասին, կոչելով վերջինիս երեք անգամ «θεοῦ βασιλέως τῶν βασιλέων» այսինքն «աստված արքայից արքա»<sup>10</sup>: Արձանագրության կրցկրտուր տեղեկություններից պարզվում է, որ նա փաստաթղթեր ու նամակներ է ստացել հռոմեացիներից ու պարսից թագավորից, խոսվում է ինչ-որ հաշտության կամ խաղաղության մասին: Թագավորը դիմելով քաղաքացիներին, գրում է, որ նրանք ինչ-որ մի ուժի հետ միացած ապստամբել են «αυεζη ή πολιτεια ὁμων κοί επολέμει...» (Չեր համայնքը ապստամբեց և պայքար սկսեց [ինչ-որ ուժի] հետ...)», ուստի քանի որ թողնված ամրոցը չի կարելի անպաշտպան թողնել, նա այն հանձնել է իր զորքին (այսինքն կայազոր է հաստատել - Հ.Բ.), որպեսզի ոչ մի դեպքում կամայականություն տեղ չգտնի կամ պետության որևէ մի մասը չապստամբի և պատերազմ չսկսի իր դեմ<sup>11</sup>: Արձանագրության վերջում ասված է՝ «և որպեսզի ամենքը ինձ լավ ճանաչեն, մենք հրամայեցինք, որ այս գրությունը զետեղվի դարպասի մոտ՝ և ինչպես որ փաստաթղթի մեջ է հայտնված՝ հենց այնպես էլ փորագրված է ու ամրացված: Մենք կարգադրել ենք նույնպես, որ գրությունը փորագրվի ու կցվի ամեն մի դարպասի մոտ նաև մյուս քաղաքների, որոնք իշխանությունը մենք ստանձնել ենք հաճությամբ և օգնությամբ աստվածների»<sup>12</sup>: Մենք մատուցեցինք արձանագրության քիչ թե շատ ընկալելի բովանդակությունը, հիմնավորելու համար այն իրողությունը, որ ոչ 293թ. և ոչ էլ 298-301-ի միջոցին այն հանդես գալ չէր կարող: Ավելին, բոլոր անուղղակի տեղեկությունները

<sup>1</sup> К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении (III в. до н.э. -IV в. н.э.), М.-Л., 1958, էջ 288:

<sup>2</sup> Е. И. Чириков, Путевой журнал (1849-1852), տե՛ս Зап. Кавказского отд. Русского геогр. общ., кн. IX, СПб., 1875, էջ XLIII:

<sup>3</sup> В. Taylor, Travels in Kurdistan, տե՛ս Journal of Roy. Geogr. Soc., 1805, էջ 24:

<sup>4</sup> К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, էջ 283-285:

<sup>5</sup> С. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Bd. 1, էջ 411-419:

<sup>6</sup> К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, էջ 286:

<sup>7</sup> J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 158, 175, 184: Լ. Մանանդյան, Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ հատ., Ա մաս, տե՛ս Երկեր, հատ. Բ., Երևան, 1978, էջ 125-126: Գ. Խ. Տարգիսյան, Կարագոթի, Մ., 1960, էջ 84:

<sup>8</sup> «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՄՀ ԳԱ հրատ., հատ.Բ, էջ 64:

<sup>9</sup> Ա.Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 163-165:

<sup>1</sup> Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 81-82:

<sup>2</sup> Անդ, էջ 82:

<sup>3</sup> Անդ: Թարգմանությունը Լ. Մանանդյանի: Արձանագրության մեջ խոսվում է Նեկրան /Νέκραν/ քաղաքի մասին, որը Լ. Մարքվարթի ենթադրությամբ գտնվել է Ալեքստանի շրջանում, Մալաթիայից դեպի հարավ-արևմուտք (Südarmenien und die Tigrisquellen, էջ 158, 175, 182): Ա. Երեմյանն այն տեղադրում է ներկայիս Խարաբա-Խաջարանի տեղում, գտնելով, որ այն Արշամաշտ քաղաքի նախնական անունը պետք է լինի («Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՄՀ ԳԱ հրատ., Բ, էջ 36): Տրամագծորեն հակադիր տեսակետները լույս վառում են հարցի բարդության մասին, ուստի բնավ չհավանելով վերջնական ճշմարտության, կարծում ենք, որ այն թերևս կիրկերտի անվանումն է:

հավաստում են, որ 293 թվին Մեծ Հայքը գրկվել է Աղձնիքի և մի քանի հարակից շրջանների տարածքից:

293 թվին Ներսեհին ի վերջո հաջողվեց տիրանալ արյաց գահին, ձեռք բերելով պարսից ազնվականության մեծ մասի աջակցությունը: Նա շատ լավ էր հասկանում, որ ի դեմս թշնամական տրամադրված Հռոմի և հայոց Տրդատ Գ թագավորի պարսից ընդդիմությունը ձեռք կբերի դաշնակիցների, ուստի գահի համար մղվող պայքարում իր թիկունքն ամրապնդելու և ապահովելու նպատակով Ներսեհը Տրդատ Գ-ին է վերադարձնում Մեծ Հայքի իր ենթակայության տակ գտնվող արևելյան մասը<sup>1</sup> և կնքում պայմանագիր, որով հայոց արքունիքը և, ամենայն հավանականությամբ, Հռոմը ճանաչում են Աղձնիքի, Կորդուքի և Ծավղեքի անցումը Պարսկաստանին: Այդ ամենի հետևանքով հայ-պարսկական հարաբերությունները, ընդհանուր առմամբ, կարգավորվում են և Ներսեհի թողած Պայկուլիի արձանագրության մեջ նրան շնորհավորողների մեջ հիշատակվում է հայոց Տրդատ Գ թագավորը<sup>2</sup>:

Զիջումները հռոմեացիներին և Տրդատ Գ-ին Ներսեհի կողմից զուտ ժամանակ շահելու միջոց էին, ուստի գահին ամրապնդվելուց հետո նա ձեռնամուկ եղավ Մեծ Հայքի նվաճմանը: Սկզբում հաջողությունն ուղեկցում էր նրան: Նա 296 թ. ներխուժեց հռոմեական Միջագետք և Մեծ Հայքի արևմտյան շրջանները: Ամիանոս Մարկեղիսոսի հաղորդմամբ, նրան հաջողվեց ռազմակալել Հայոց թագավորությունը<sup>3</sup>: Խառանի և Կալլինիկոսի մոտ կայացած առաջին լուրջ ճակատամարտը, որին մասնակցել է Տրդատ Գ-ն հայկական հեծելազորով, ավարտվեց պարսկական բանակի մեծ հաղթանակով, սակայն, ինչպես արդեն քննել ենք, 297 թ. Բասենի Ոսխա գյուղի ճակատամարտում պարսից բանակը խայտառակ պարտություն կրեց և Ներսեհը 298 թ. կնքեց Մծքնի նվաստացուցիչ 40-ամյա հաշտությունը: Աղձնիքի մասեր կազմող Անգեղտունը, Մեծ Ծոփքը և Արձն-Աղձնիքը անցան Հռոմին, սակայն շատ չանցած վերադարձվեցին Հայաստանին:

Աղձնիքի հետագա ճակատագրի մասին տեղեկություններ են հաղորդում ոչ միայն օտար, այլև հայկական աղբյուրները: Այսպես, ինչպես տեղեկացնում է Ագաթանգեղոսի երկը, III դարի վերջին և IV դարի արշալույսին Աղձնիքը ներկայացնում էին երկու վարչական շրջաններ՝ **Անգեղտան և Երթինի իշխանությունը և Աղձնեաց բոլեշխությունը**<sup>4</sup>: Ելնելով այս փաստից, անշուշտ, կա-

րելի է եզրակացնել, որ Մեծ Ծոփքը վարչականորեն պատկանում էր Անգեղտանը, սակայն չի բացառվում, որ Մեծ Ծոփքի իշխանությունը տեղ չի գտել Ագաթանգեղոսի ցուցակում իր պակաս կարևորության պատճառով, քանի որ նրա վարչական ձևավորումը III դարի երկրորդ կեսին պատմական իրողություն էր: Այդ առումով հազիվ թե կարելի է համաձայնվել Վ.Բելքի այն մտքի հետ, որ Մեծ Ծոփքը մինչև 363 թ. վարչականորեն մտել է Աղձնիքի մեջ<sup>1</sup>, իսկ Ջախաուն պարզապես սխալվում է, ենթադրելով, թե Աղձնիքն ամբողջությամբ Ծոփքի մի մասն է կազմել<sup>2</sup>: Իրականությունն այն է, որ Աղձնիք աշխարհի արևմտյան մասը՝ Ծոփաց թագավորության մաս կազմելու հետ կապված, ստացել է Մեծ Ծոփք անվանումը: Աղձնիքում ստեղծված վարչական կացությունը մինչև IV դարի 60-ական թվականները մնաց անփոփոխ: Երբ պարսիկները 364 թ. արշավեցին Հայաստան, նրանք անցան **«ընդ Աղձնիս և ընդ Ծոփս Մեծ, ընդ Անգեղտունն»**<sup>3</sup>:

Աղձնեաց բոլեշխությունը, ինչպես հավաստում է Պատմահայրը, սկսվում էր Տիգրիս գետից, ներառնելով Արձնն ու նրա շրջակա գավառները, Տավրոս լեռը և լեռնանցքները. **«Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ հաստատէ (Վաղարշակը - Շ.Բ.) բոլեաշխ մեծ և կուսակալ յարևմտից հարաւոյ, յեզերս սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, գաւառս պարզկելով զԱրձն և որ շուրջ զնովաւ, և զլեռն Տաւրոս, որ և Սիմ, և զԿղեսուրն ամենայն»**<sup>4</sup>: Դժվար չէ տեսնել, որ Աղձնիքի բոլոր գավառները, բացառությամբ Քեղ-Անգեղտան և Լփրկերտ-Մեծ Ծոփքի, մտել են բոլեշխության մեջ: Ըստ որում, Աղձնիքի բոլեշխության մեջ մտնող մանր լեռնային գավառներն իրենցից ներկայացրել են բոլեշխին ենթակա ժառանգատեր նախարարությունների տիրույթներ:

387 թ. Մեծ Հայքի բաժանումից հետո Անգեղտունն ու Մեծ Ծոփքը անցան Հռոմեական կայսրությանը, իսկ Աղձնեաց բոլեշխությունը Պարսկաստանին: Այդ կապակցությամբ **«Աշխարհացոյց»**-ը նշում է. **«Նախ Քաղիթթ, որ բոխէ ի լերանց Սալխայ և Սանասնոյ, եւ իջեալ կտրէ յիրերաց զԼփրկերտ եւ զՔղիմար, որով բաժանեցան Հռոմք եւ Պարսիկք»**<sup>5</sup>: Պարսից արքունիքը, ինչպես մյուս դեպքում, այնպես էլ Աղձնեաց բոլեշխությունը Արևելա-հայկական թագավո-

<sup>1</sup> «Beiträge zur alten Geographie und Geschichte Vorderasiens», 2, էջ 55:

<sup>2</sup> Շ. Զրբջման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 75:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդ, էջ 141: Տե՛ս նաև էջ 142. «աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Աղձնեաց, յիշխանութեան բոլեշխին ... և ինքեանք ի Ծոփս Մեծ արշաւեցին... Եւ գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ գամուր բերդան, որ է յԱնկեղ տանն գաւառին», էջ 211-212, 221:

<sup>4</sup> Մովսէս Խորենացի, էջ 116:

<sup>5</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացուր», էջ 37:

<sup>1</sup> Ա. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 149-171: «Հայ ժող. պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., Բ, էջ 64-65:

<sup>2</sup> В. Г. Луконин, Древний и раннесредневековый Иран, էջ 169:

<sup>3</sup> Ammianus Marcellinus, XXIII, 5, 11:

<sup>4</sup> Ագաթանգեղոս, § 795. «զումարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն առաջին՝ իշխանն Անգեղտան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց»:

րութունից անջատելիս, վերջինիս մեջ է թողնում բոլորի ենթակայության տակ գտնվող նախարարական հողերը: Այնպես, որ Տավրոսի լեռնային շրջանները Սանատունքի հետ միասին Խոսրով Դ հայոց թագավորի տիրույթների մեջ էին մտնում:

591 թ. Հայաստանը ենթարկվեց վերաբաժանման, որի հետևանքով Աղձնեաց շրջանը միացվեց Բյուզանդական կայսրությանը: Գևորգ Կիպրացու տեղեկությամբ, այն առանձին կլիմա կազմեց Մեսոպոտամիա կամ Միջագետք պրովինցիայի կազմում<sup>1</sup>: Մավրիկիոս կայսրը, որ նպատակ ուներ հայկական հողերը օրգանապես կապել Բյուզանդական կայսրությանը, Արգանենե-Աղձնիքի (բոլորի տարածքը) մեջ մտցրեց կրկին Հայկական Տավրոսի հարվային լանջերին ընկած գավառները, ըստ որում նաև Խուլթն ու Սանատունքը և, ամենայն հավանականությամբ, Ասպակունյաց ձորը: Այդ մասին Գևորգ Կիպրացին գրում է. «Այստեղ ավարտվում է Միջագետքը և գալիս է Տավրոս լեռը և Բալաբեյսոն լեռնանցքը, իսկ հյուսիսային մասում սկսվում է Մեծ Հայքը: Տավրոս լեռան վրա՝ նրա լանջերին ավելի մոտ բնակվում են երկու ժողովուրդ, որոնցից մեկը կոչվում է խոթայիտներ (խութեցիներ), իսկ մյուսը՝ սանատունիտներ (սանատուններ): Եվ կա մի բարձր սար, որ կոչվում է Մարութեն: Նրա մոտ ջուրը բերել էր Նոյի տապանը, և նա դիպել էր սարի գագաթին և դա հայտնի է այդ մասերում բոլորին մինչև օրս էլ»<sup>2</sup>: Չնայած այս վկայության մեջ հանվան է հիշատակվում Ասպակունյաց ձորը, դժվար չէ տեսնել, որ այն որպես Սանատունքի մաս իրոք միացվել է Արգանենե կլիմային: Աղձնիքից հյուսիս տարածվող Մեծ-Հայքը, ոչ թե Մեծ Հայք աշխարհն էր, այլ Մավրիկիոսի ստեղծած պրովինցիա Մեծ Հայքը<sup>3</sup>:

Բերված տեղեկությունների լույսով իրավացիորեն հարց է ծագում, թե ինչպես են ուսումնասիրողները աշխարհների ծագումը կապում Մավրիկիոսի վարչական վերափոխությունների հետ: Արձն-Աղձնիքի՝ կայսրությանը միացվելով, վարչականորեն ոչ մի Աղձնիք աշխարհ չկազմավորվեց: Աշխարհացույցյան Աղձնիքի արևմտյան մասերը՝ Անգեղտունն ու Մեծ Ծոփքը սովորական հիմունքներով, իսկ արևելյան հատվածը՝ Աղձնյաց բոլորիտության տարածքը վարչական որոշ ինքնավարությամբ միացվեցին Մեսոպոտամիա կամ Միջագետք պրովինցիային:

Մենք ուշադրությունից մի պահ դուրս թողեցինք Աղձնիքի արևմտյան գավառները: Վարչական ինչ ուղի անցան դրանք մինչև 591 թ.: Հայտնի է, որ 387 թ. Մեծ Ծոփքը Հռոմեական կայսրության կողմից վերածվեց սատրապա-

կան իշխանության, որի գլուխ կանգնած էր Գադգանեն: Թերևս կարճ ժամանակով սատրապության է վերածվում նաև Անգեղտուն-Ինգելենեն<sup>4</sup>: 488 թ. Ջենոն կայսեր դեմ բռնկված ապստամբությանը մասնակցելու համար երկու սատրապությունն էլ զրկվեցին ժառանգատիրական իրավունքներից<sup>5</sup>, 536 թ. Հուստինիանոս կայսեր 31-րդ նովելլայով մտցվեցին Չորրորդ Հայք պրովինցիայի մեջ և վերջապես 591 թվից հետո միացվեցին Մեսոպոտամիային: Ըստ որում, դատելով Պրոկոպիոս Կեսարացու և Հուստինիանոսի նովելլաների տեղեկություններից, Անգեղտան սատրապությունը գոյություն ուներ կայսեր իշխանության առաջին տարիներին, սակայն ինչ-ինչ պատճառներով 536 թ. միացվեց Մեծ Ծոփք-Սոֆանենին<sup>6</sup>:

Մեզ անհրաժեշտ է պատասխանել մի հարցի ևս, թե ինչո՞ւ հայկական աղբյուրների Աղձնիքին օտար աղբյուրներում համապատասխանում են Ἀρζανηνη. Arzanena, Arzianena, Arzōn կամ Arzān անվանումները: Պատճառն այն է, ինչպես ժամանակին ճիշտ նկատել է Լ. Հյուբշմանը, որ հիշյալ ձևերը ծագումնաբանորեն պետք է կապել ոչ թե Աղձնիքի, այլ Արձնի հետ<sup>4</sup>: Վերջինս օտարների կողմից վերցվել է սեռական հոլովով (Արձն > Արձան) և հարմարեցվել փոխառող լեզվի բառակազմական օրինաչափություններին: Այլ խոսքով, բոլորիտության կենտրոնական գավառի անունով օտար հեղինակները կոչում են մեզ հետաքրքրող վարչական միավորը: Ինչ վերաբերում է Աղձնիք և Աղձնյաց բոլորիտություն հասկացություններին, ապա պետք է ենթադրել, որ Աղձնիքի բոլորիտները սկզբնապես եղել են Աղձնիքի կուսակալներ կամ ոստիկաններ: Ժամանակի ընթացքում աշխարհի տարածքի արևելյան շրջանները դարձել են նրանց ժառանգական սեփականությունը, իսկ իրենք էլ ստացել են բոլորիտի տիրույթ: Զրկվելով կուսակալության պաշտունից, որը՝ ելնելով որոշ փաստերից, թերևս անցավ Անգեղտան ներքինի իշխաններին, որոնց արքունիքն ավելի էր վստահում, բոլորիտների ենթակայության տակ գտնվող տիրույթներն ամփոփվեցին Արձնի և շրջակա գավառների տարածքում, ավանդույթի ուժով պահպանելով Աղձնյաց բոլորիտություն անունը:

Ասորական աղբյուրները V-VI դարերում հիշատակում են Արզոնի ոստան (Ostan dā-Arzōn) և Ոստան երկրի Արզոն (Arzōn dā-baita dā-Ostān) վարչական հասկացությունները<sup>5</sup>, որոնց մասին հայ հեղինակները լռում են: Լ. Հյուբշմանին հայտնի չէ, թե Արզոնի ոստանի տակ ինչ են հասկանում

<sup>1</sup> Պրոկոպիոս Կեսարացի, էջ 299:

<sup>2</sup> Անդ, էջ 191:

<sup>3</sup> Անդ, էջ 190, 304:

<sup>4</sup> Լ. Հյուբշման, Հին Հայոց տեղայնությունները, էջ 75-76:

<sup>5</sup> Անդ, էջ 77-78: J. Marquart, *Ērānšahr*, էջ 24, 169:

<sup>1</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 46-48:

<sup>2</sup> Անդ, էջ 48: Թարգմանությունը Գ. Մուրադյանի:

<sup>3</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68:

աղբյուրները, իսկ Ն. Մարքվարթը փորձում է այն ընկալել որպես աթոռանիստ գավառ<sup>1</sup>: Մեր կարծիքով, այն պարզապես Աղձնյաց բրեշխության բուն աթոռանիստ գավառն է՝ Արձնը: 387թ. բացառությամբ Արձնի, բրեշխության մյուս տարածքները մնացին Արևելա-հայկական թագավորության կազմում, որի հետևանքով Աղձնյաց եպիսկոպոսը, որն ընկավ ասորական եկեղեցու ազդեցության ոլորտը, իր ենթակայության տակ ուներ միայն ոստան գավառ Արձնը: Բրեշխության տարածքում այն նույնքան ոստան էր, որքան Այրարատը Մեծ Հայքի թագավորության մեջ: Եվ որպեսզի շփոթեին Ոստան գավառի եպիսկոպոսներին մնացած մասի հոգևոր առաջնորդների հետ, ծնվեց Արզունի ոստան գաղափարը: Մավրիկիոս կայսրը 591թ. Արզանենեի մեջ մտցրեց բրեշխության ամբողջ տարածքը: Այս վիճակը պահպանվեց նաև արաբական տիրապետության առաջին շրջանում, սակայն ավելի ուշ արաբները Աղձնիքի լեռնային շրջանները միացրեցին Արմինիա ոստիկանությանը, որոնք IX դարում մտան Հայ Բագրատունիների թագավորության մեջ:

<sup>1</sup> Ն. Շյուբան, Հին Հայոց տեղայն անունները, էջ 78: J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 120:

## ԳԼՈՒԽ Դ

### ՏԱՎՐՈՒԲԵՐԱՆ (ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ)

Տավրուբերան կամ Տուրուբերան աշխարհը, որ իրավամբ հայ ժողովրդի ձևավորման կարևոր կենտրոններից մեկն է, հանդիսանում է Մեծ Հայքի այն երջանիկ երկրամասերից մեկը, որի աշխարհագրական մանրամասն նկարագրությունը «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության շնորհիվ հասել է մեզ: Այնտեղ ասված է. «Դ աշխարհ՝ Տարուբերան, յելից Չորրորդ Հայոց, ունի գաւառս վեշտասան. զԿոթք, զԱսպականունեաց ձոր, զՏարօն, յորում գայ գետն Մեղ եւ անկանի յեփրատ. որ ըստ հիւսիսոյ՝ Աշմունիք<sup>1</sup> առ Սրմանց լերամբ, որ կոչի Կատար երկրի. յորմէ յոյժ բղխեն աղբիւրք. որոց ըստ հիւսիսի՝ Մարդաղի՝ առ Մեղեղուխ լերամբ<sup>2</sup>, մինչեւ ցնոյն Այծպտկունս որ բաժանէ ընդ Կարին եւ ընդ նա. յորում գտանի սալակ եւ ձիղկ եւ նաթ սեւ եւ սպիտակ. յորոյ յելից բխէ Մուրց գետ, գնալով ընդ հիւսիսի՝ իջանէ ի Բասեն գաւառ եւ խառնի յերասխ, եւ գետացուցանէ զնա: Յելից Մարդաղոյ է Գաստովոր<sup>3</sup> գաւառ. եւ նորա յելից Տուարածատափ. նորա յելից Դաւառ. եւ ի հարաւոյ նոցա Հարք եւ Վաժնունիք<sup>4</sup>, մինչեւ ցԱրածանի, որ իջանէ յԱպահունեաց. որոց ի հարաւոյ՝ Սարակ ի Բզնունեաց գաւառի<sup>5</sup>. ի նեխ Մասեաց սկսանելով՝ պատէ զարեւմտեայ եզր հոմանուն ծովուն, մինչեւ ցբերդն Բաղէշ, եւ անդր եւս ի հարաւ կոյս ցԵրեվարդ<sup>6</sup> գաւառի սահման: Եւ Բզնունիք ունի յիւր հոմանուն ծովէն կղզիս երեք. զԱրձկէոյն, զԾիպանիս եւ զՏոքեանն. որոյ ըստ հարաւոյ ի մէջ լերինն Տորոսի եւ ծովու՝ գաւառ Երեվարք, յորում լիճ ինչ՝ որ կոչի Եղիգի, յուխից<sup>7</sup>. զի ի վարելն յակօսն ջուր ըմպէ եզն, եւ սերմանեալն քառասուն աւրն հասանէ, եւ բերէ ընդ միոյ՝ յիսուն: Եւ ծովն Բզնունեաց յեր-

<sup>1</sup> Չեռագրերում ավելի հաճախ հանդիպում է Արշամունիք ընթերցումը, որը համընկնում է այլ աղբյուրների տեղեկություններին:

<sup>2</sup> Ճիշտ գրությունը՝ «առ Մեղեղուղխ լերամբ» (U.S. երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 107):

<sup>3</sup> Դատելով մյուս ձեռագրերից, ճիշտ անվանաձևը Դաստաւորք է:

<sup>4</sup> Չեռագրերի մեծ մասում գավառանունը Վարաժնունիք է:

<sup>5</sup> Թերևս այստեղ պետք է հաջորդել «որ» շաղկապը:

<sup>6</sup> Դատելով գավառի երկրորդ հիշատակությունից և «Աշխարհացոյց»-ի մյուս ձեռագրերից, գավառանվան ճիշտ գրությունը Երեվարք է:

<sup>7</sup> U. S. երեմյանը սրբագրում է «յուխից» (նշվ. աշխ., էջ 108):



կայնն հարիւր մղոն է, եւ լայնն վաթսուն: Որոյ ըստ հիւսիսոյ Աղիտովիտ <sup>1</sup> գաւառ, եւ զմտիւք նորա Ապահունիք. ընդ որոյ մէջն անցան Արածանի յեզրն Բզնունեաց: Գտանի պստակ, եւ կաստաննոն որ է մաշկամիրգ, եւ մտղր անոյշ քան զամենայն երկրի եւ երկաթ: Ասեն թէ նհանգ <sup>2</sup> կայ յԱրածանի, որպէս յեփրատ, զոր հաւաստի <sup>3</sup> գիտեմք, կենդանի քարքաշամ զուգեալ, զարիւնն ծծեալ եւ թողեալ, զոր ոմանք ասեն թէ գազան է եւ չէ դել, այլ գազան զոր Յոհան վասն դստերն Հերոդիադայ ասէ թէ քան զնհանգսն ծովայինս արիւնարբու էր <sup>4</sup>:

Ավելորդ չենք համարում մեջբերել նաև «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության տեղեկությունները. «Տուրուբերան յերի կայ Չորրորդ Հայոց. գաւառք են ի նմա վեշտասան. Խոյք, Ասպակունիք, Տարօն, Աշմունիք, Մարդաղի, Դասնաւորք, Տուարածատափ, Դալառ, Հարք, Վարածնունիք, Բզնունիք, Երեւարք, Աղիովիտ, Ապահունիք, Կոր, Խորխոռունիք: Ունի և ծով զԲզնունեացն յերկայն հարիւր մղոն, և ի լայն վաթսուն: Ունի և գազպէն և մեղր և մաշկամիրգ, և սպիտակ նաւթ, և երկաթ» <sup>5</sup>: Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 582 ձեռագիրը, որ հրատարակել է պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը, ունի որոշ տարբերություններ: Աշմունիքին համապատասխանում է Արշամունիք, Դասնաւորքին՝ Դաստարաւորք, Տուարածատափին՝ Մուրածատափ, Կորին՝ Կորի, Խորխոռունիքին՝ Խորխորունիք տարընթերցումները, իսկ «Ունի և գազպէն և մեղր և մաշկամիրգ, և սպիտակ նաւթ, և երկաթ» արտահայտությանը՝ «Ունի եւ գազպէն, եւ մեղր եւ մաշկամիրգ եւ պիստակ, եւ երկաթ, եւ նավթ» նախադասությունը <sup>6</sup>:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերը տալիս են գավառանունների տարընթերցումների մի նշանակալից քանակ, որի համեմատական քննությունը հնարավորություն է տալիս պարզել գավառանունների ճիշտ ձևերը: Դրան ավելացնելով Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրական տվյալները, որ քաղում ենք Ղ. Ինճիճյանի երկից, ստանում ենք ներքոհիշյալ պատկերը:

<sup>1</sup> Դեռք է լինի «Աղիովիտ»:

<sup>2</sup> Նհանգի վերաբերյալ տեղեկությունը Ս. Երեմյանը համարում է ուշ ընդմիջարկություն (նշվ. աշխ., էջ 108): Նրա կարծիքով, այդ առաջացել է Միջագետքում գոյություն ունեցող համանուն Արածանի գետի հետ շփոթելու հետևանքով:

<sup>3</sup> Ս. Երեմյանը «հաւաստի» բառից հետո բնագրի մեջ մուծում է «ոչ» բառը (նշվ. աշխ., էջ 108):

<sup>4</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ յանելոածովք նախնեաց», էջ 31-32:

<sup>5</sup> К. П. Патканов, Армянская география VII века, էջ 18:

<sup>6</sup> Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349: Տե՛ս նաև Մատենադարանի թիվ 582 ձեռագիրը:

Խոյք, Խուլք	} Խոյք
Ասպակունիք, Առպակասունիք, Սապակունիք, Ասպակունիկք, Ասպակունիք, Առավասունիք, Ասպատունիք, Ասպկտունիք, Ասպականունեաց ձոր <sup>1</sup>	} Ասպակունիք, Ասպակունեաց ձոր
Տարուն, Տարան, Տարօն <sup>2</sup>	} Տարուն
Արշամունիք, Աշմունիք, Արշմունիք	} Արշամունիք
Մարդաղի, Մարդտ աղի, Մարդագի, Մարդոյ աղի, Մարդալի	} Մարդաղի
Դաստարաւորք, Դասնաւորք, Դաստանորք, Դաստանաւորք, Դաստընաւորք <sup>3</sup> , Դասնասորք, Դաստարուորք, Դաստնաւորք, Դաունաւորք, Դաստանսորք, Դասանաւորք, Գաստովոր	} Դասնաւորք, Դաս[տա]նաւորք, Դաստարաւորք
Տուարածատա, Տուարետափ, Տուարծատափ, Մուրծատափ, Ուարծատափ, Մուրծայ տայփք, Տուարծափափ, Տուրարետափ, Տուարերատափ, Տուարածատափ, Տուարածոյ տափ <sup>4</sup>	} Տուարածատափ
Դալառ, Սալառ, Գդաւ, Գովառ, Դդաւ	} Դալառ
Հարք, Հառք, Հայք, Հաք	} Հարք

<sup>1</sup> Մատենադարանի թիվ 1717 և 5613 ձեռագրերում Ասպակունիքը նույնացվել է Բոնաշենին և Շատախին:

<sup>2</sup> Մատենադարանի թիվ 1459 ձեռագրում գավառանունը բացակայում է:

<sup>3</sup> Մատենադարանի թիվ 1717 և 1518 ձեռագրերում Դասնավորք գավառից առաջ գրիչները ավելացրել են Մանանաղի գավառի անունը: Մարդաղիից հետո և Դասնավորքից առաջ Մատենադարանի թիվ 5120 ձեռագրում ավելացված են Համրպետք, Մանծեր, թիվ 2291-ում Հարքի կողքին լուսանցքում՝ Համրպետք, թիվ 1459-ում Համրպետքը հայտնվել է Դալառից հետո Մեծկերտի հետ մեկտեղ, իսկ Աղիովիտից հետո գրված է անծանոթ Անծկետ անունը, որը թերևս Մանծկերտի աղավաղումն է:

<sup>4</sup> Գավառը հիշում է Դազար Փարպեցին Տուարծատափ անունով, տեղադրելով Բագրևանդի և Բասենի սահմանակցությամբ («Դազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ թուրք առ Վահան Մալիկունեան», էջ 57:

Վարաժնունիք, Վարաժնունիք, Վարաժնունիք, Վարժունիք, Վարժունիք, Վաժնունիք	}	Վարաժնունիք
Բզնունիք, Բժնունիք <sup>1</sup>		Բզնունիք
Երևարկ, Երևարք, Երիվարք, Երիվար, Երիվարգ, Երեվարդ, Երեվարք	}	Երեվարք
Աղիովտի, Աղիովիտ, Աղոյովիտ, Աղաանլիս Աղիովգի, Աղի ուլտի (ովտի) <sup>2</sup>		Աղիովիտ
Այպահունիք, Ապահունիք, Ապահանիտ, Այիունիք, Ապահունիք, Աիունիք <sup>3</sup>	}	Ապահունիք
Կորի, Կոր, Կորդ, Տկորի <sup>4</sup>		Կորի
Խորխոռունիք, Խորխորունիք, Խոռխոռունիք, Խորխորունիս, Խորխունիք, Խորխոռունիք, Խուռխուռունիք <sup>5</sup>	}	Խորխոռունիք

Տավրուբերան կամ Տուրուբերան աշխարհի գավառների տեղադրությունը, ըստ մեծի մասին, հայտնի է ոչ միայն աղբյուրագիտական հարուստ նյութերի, այլև հայագետների կատարած քրտնաջան և բեղուն ուսումնասիրությունների շնորհիվ: Փորձենք այժմ տալ դրանց տեղադրությունը ըստ նկարագրության հերթականության և կատարել որոշ ճշգրտումներ:

Աշխարհի առաջին Խուլթո գավառը գտնվել է Բաղեշ քաղաքից արևմուտք, Արգան գետի վերին հոսանքի շրջանում, որն այդ վաղնջական ժամանակներում անշուշտ կրելու էր նույնպես Խուլթո անունը<sup>6</sup>: Հիմնականում հայկական բնակչություն ունեցող Խուլթո գավառակում XIX դարի վերջին և XX դարի սկզբին նշանավոր սրբատեղի էր սուրբ Աղբրիկը, որից վերև տարածվում էր մի լայնատարած սարահարթ<sup>7</sup>: Խուլթո բնակիչների մասին հիշատակություն

<sup>1</sup> Մատենադարանի թիվ 1482, 1518 և 1770 ձեռագրերում գավառանունը բացակայում է:

<sup>2</sup> Մատենադարանի թիվ 1482, 1518 և 1770 ձեռագրերը չեն պահպանել գավառանունը:

<sup>3</sup> Մատենադարանի թիվ 1482, 1518 և 1770 ձեռագրերը չեն պահպանել գավառանունը:

<sup>4</sup> Մատենադարանի թիվ 1482, 1518, 1770 և 3941 ձեռագրերում գավառանունը բացակայում է:

<sup>5</sup> Մատենադարանի թիվ 1482 և 1518 ձեռագրերում գավառանունը բացակայում է: Բոլոր գավառանունների համար տե՛ս նաև Ղ. Խնձիճյան, Ստորագրութիւնս հին Հայաստանայց, էջ 88-89:

<sup>6</sup> Տե՛ս Ա. Տ. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.) քարտեզ, Գ-4:

<sup>7</sup> «Սասուն», աշխարհագրական քարտեզով, կազմեց Ա. Քալանթար, արտատպված «Մշակ» լրագրից, Թիֆլիս, 1895, էջ 11:

ունի Գևորգ Կիպրացին Χορθαίται-Խուլթացիք անունով<sup>1</sup>: Թովմա Արծրունին հիշատակում է Խոյթ լեռը, որի բնակիչները «յաղագս խրթնի եւ անհետազօտելի խօսիցն եւ բարուցն կոչին Խուլթ, յորոց անուն եւ լեռնն Խոյթ անուանի» և բնակվում էին «ի լերինն, որ բաժանէ ընդ Աղձնիս և ընդ Տարօն»<sup>2</sup>: Խուլթը, խութեցիներին կամ լեռը հիշատակում են նաև Կիրակոս Գանձակեցին, Ասողիկը, Յակոբ ալ-Համադին և Բալաձորին<sup>3</sup>:

Ն. Հյուբշմանը գտնում է, որ «Աշխարհացոյց»-ը, իրավամբ, Մոտիկանի կամ Մոտկանի հյուսիսակողմում գտնվող Խուլթ գավառն ու նրան սահմանակից Տարոնը վերագրում է Տուրուբերան նահանգին, քանի որ Խուլթն ու Տարոնը Տավրոս լեռով բաժանվում են Սասունից և Սալնաձորից և որ Խուլթն ու Տարոնը Տավրոսի հյուսիսային կողմում են, իսկ Սասունը և Սալնաձորը՝ հարավային: Սակայն, մյուս կողմից, նա ստիպված է արձանագրել, որ Գևորգ Կիպրացու տեղեկությունները հակասում են հիշյալ եզրակացությանը, քանի որ դրանց համաձայն Աղձնիքում են գտնվել Տավրոսը, κλεισοῦρα Βαλκείων-ը, Սասունը և Խուլթը<sup>4</sup>: Փորձելով լուծել այս հակասությունը, գերմանացի հայագետը հայտարարում է, որ վերոհիշյալ տեղեկությունները վերաբերում են ոչ թե վարչական աշխարհագրական բաժանմանը, այլ ազգագրական ծանոթություն են տալիս Տավրոսի այն հատվածի վերաբերյալ, որը Աղձնիքին կից էր և ուր բնակվում են իրար ազգակից երկու ժողովուրդ՝ խութեցիները և Սանասնեայք<sup>5</sup>: Սակայն հակառակ հարգարժան հայագետի ունեցած աշխարհագրական պատկերացումների, Խոյթը բնավ էլ չի գտնվում Տավրոսի հյուսիսային կողմում, չնայած պետք է խոստովանել, որ Խուլթ գավառակի հարավային սահմանագլխով ձգվող լեռնաբազուկը որոշ չափով ավելի բարձր է, քան վերջինիս հյուսիսով անցնող Հայկական Տավրոսի հիմնական լեռնաձյուղը, ուստի Խուլթի պատկանելիությունը Տավրուբերանին

<sup>1</sup> Georgii Cyprii Descriptio orbis Romani, էջ 48: Հովհան Մամիկոնյանի երկի մի շարք ձեռագրերում հիշատակվում է «Մուշեղ, գտրն Մշոյ և Խութայ, Տարօնոյ իշխանն և Սասնոյ», որտեղ «Խութայ»-ը, կարծում ենք, հետագա ընդմիջարկություն է (Պատմութիւն Տարօնոյ, Երեւան, 1941, էջ 158):

<sup>2</sup> «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունեայ», Կոստանդնուպոլիս, 1852, էջ 132, 135:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 78. «բնակիչք լերինն Խոյթայ, որ Սասունքն անուանին»: Տարընթերցումներն են «Խոթայ, Խութայ, Խորայ»: «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տեղեկական», էջ 107. «Խութացիք»: Ն. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 188, 189. Xuiθ - և "al-Xuiθiya"

<sup>4</sup> Ն. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 177-178:

<sup>5</sup> Անդ, էջ 178: Տե՛ս նաև J. Markwart, Südarmerien und die Tigrisquellen, էջ 49\*, 55\*, 84, 86, 127, 202, 220, 223-230, 286, 297, 336:

բնաշխարհագրական տեսակետից, ըստ մեզ, պատճառաբանված չէ: Մակերևույթի առումով այն ավելի շատ վերաբերելու է Աղձնիքին, իսկ նրա վերաբերելը Տավրոսբերանին, ինչպես ցույց տվեցինք Աղձնիքի բաժնում, հանդիսանում է որոշակի պատմա-վարչական իրողության արտահայտություն:

Տավրոսբերանի հաջորդ գավառը հայտնի է Ասպակունիք կամ Ասպակունյաց ձոր անունով: Ն. Արոնցի կարծիքով, Ասպակունիքը սկզբնապես մտել է Տարոնի մեջ և հանդիսացել է Ասպականի իշխանական ընտանիքի տիրույթ: Սակայն Ասպակունյաց իշխանների վերաբերյալ սկզբնաղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել, իսկ «Աշխարհացոյց»-ում Ասպակունիքը սոսկ աշխարհագրական հասկացություն է, Խույթին սահմանակից լեռնահովիտներից մեկի վերնագավառը<sup>1</sup>: Այդ ճիշտ հայեցակետը հիմք ընդունելով, միանգամայն տրամաբանական և համոզիչ տեղադրություն է առաջարկել Ասպակունիքի համար Ս. Երեմյանը, որի կարծիքով այն գտնվել է Քաղիթթ (Բաթմանա ջուր, Բաթման-սու) գետի Շատախ վտակի ձորահովտում, որի վրայով Սիմսարի լեռնանցքով անցնում էր Աղձնիքը Տուրոսբերանի հետ կապող ճանապարհներից մեկը: Տեղադրության համար հիմք է ծառայել Ասպականք (Ասպականք) գյուղը, որը գտնվում է Տալվորիկի ձորում<sup>2</sup>: Հարկ ենք համարում կրկին ընդգծել, որ Ասպակունիքը ևս գտնվում էր Հայկական Տավրոսի հարավային փեշերին, ուստի աշխարհագրական տեսակետից նրա պատկանելիությունը Տավրոսբերանին պայմանավորված էր քաղաքական պատմության իրադարձություններով: Հ. Հյուբշմանը Ասպակունիքը նույնպես համարում է նախնաբար տոհմի անուն, որն ածանցվել է Ասպակ-ից կամ Ասպ-ից: Ըստ հեղինակի գավառանվան առաջին մասը՝ Ասպը ձի է նշանակում, իսկ Ասպական՝ որսորդ<sup>3</sup>: Ինչ վերաբերում է այն խնդրին, Ասպակունիքը եղել է, թե՛ չի եղել նախարարական իշխանություն, պատասխանը միանշանակ մեկն է. եղել է: Սակայն շատ տարօրինակ է, որ հիշյալ նախարարությունը, գտնվելով Մամիկոնյանների, Վահուկների, Աղկունիների հարևանությամբ, այլևս ոչ մի անգամ չի հիշատակվում հայոց պատմության մեջ: Կարծում ենք, այդ ունի իր բացատրությունը: Որպես նախարարություն այն պետք է սկզբնապես մաս կազմեր Աղձնյաց բղեշխության: Այդ իսկ պատճառով, այն հիշյալ շրջանում չէր կարող և չի մտել հայոց թագավորների «Գահնամակ»-ի մեջ: Այն բանից հետո, երբ Աղձնիքի մեծ մասը ռազմակալվեց պարսիկների կողմից և միացվեց Սասանյան տիրույթներին, Ասպակունիքը մնաց Հայոց թագավորության մեջ և մաս կազմեց Տավրոսբերան աշխարհի: Այդ պահից սկսած նախկին

<sup>1</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 311-312:

<sup>2</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 38:

<sup>3</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 307:

բղեշխապատակ նախարարությունը անմիջական ենթակայության տակ ընկավ հայոց արքունիքից, ուստի տրամաբանական էր տեսնել այն ուշ շրջանի «Գահնամակ»-ներից մեկում: Համեմատելով Սահակյան (Խոսրով Վերջինի - Հ.Բ.) «Գահնամակ»-ի և «Ջորանամակ»-ի տվյալները<sup>1</sup>, մենք գալիս ենք այն համոզման, որ նշված իշխանությունը, այնուամենայնիվ, արտացոլված է արքունի գահերի մեջ: «Գահնամակ»-ի «Վարասպակեանն» իշխանական ընտանիքը, մեր կարծիքով, պետք է նույնանա Ասպակունիքին<sup>2</sup>: Ըստ երևույթին, սկզբնապես այն հնչել է Վարազասպակեանն և, աստիճանաբար հնչյունափոխվելով, դարձել Վարասպակեանն: Անունս, հավանաբար, նշանակել է վարազի որսորդների իշխանություն: Գավառանունը չի պահպանել իշխանության անվան սկզբնական մասը, որի հետևանքով այն դարձել է Ասպակեան կամ Ասպակունիք: Իշխանության անվանումը Վարազարտիկեան աղավաղված գրությամբ պահպանվել է նաև «Ջորանամակ»-ում<sup>3</sup>: Այն պարզապես եղել է Վարազպակեան:

Տավրոսբերանի կենտրոնական և կուսակալանիստ գավառը Տարոնն էր, որն անգամ իր անունն է տվել աշխարհին: «Աշխարհացոյց»-ը ընդարձակ խմբագրության մեջ Մեծ Հայքի նկարագրության սկզբում նշում է. «չորրորդ [սըշխարհ]՝ Տալլրուսբերան, որ է Տարոն»<sup>4</sup>: Թերևս այդ բանի օգտին է խոսում նաև Տակիտոսի հիշատակած regio Tauranum-ը<sup>5</sup>: Ն. Արոնցը իրավացիորեն գտնում է. որ Tauranum-ը ծագումնաբանական կապ ունի Taurus լեռան (սեմ. t-v-r) անվան հետ, որից սերում է նաև Տարոսբերան-Տալոյ-բերանը կամ առավել հին Տուրոսբերանը<sup>6</sup>: Չի կարելի չհամաձայնվել Ն.Արոնցի այն մտքի հետ և, որ Tauranum-ը Tauranum սրբագրելը պատճառաբանված չէ, չնայած ունենք Մատչել > Մատչել անցումը<sup>7</sup>:

Տարոնը պատմական սկզբնաղբյուրներում հիշատակվում է բազմիցս: Եթե հավատանք Պատմահորը, ապա նա Օլիմպիոդորոսի երկից վերցրել է ներքո-

<sup>1</sup> «Գահնամակ» և «Ջորանամակ», տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 249-252:

<sup>2</sup> Անդ, էջ 250: Ասպակունյաց ձորը կամ Ազրազընունեաց գավառը կոչվել է նաև Գոզովիտ կամ Կոզովիտ (Ղ Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 297, 299):

<sup>3</sup> Անդ, էջ 252:

<sup>4</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 29: Ն. Արոնցը հակված է կարծելու, որ «о широкой известности его свидетельствует и то, что даже в Георг. Таруберан определяется им (Армения в эпоху Юстиниана, էջ 309):

<sup>5</sup> Tacitus, Ann., XIV, 24. «in regionem Tauranum»:

<sup>6</sup> Դրան կանդրադառնանք աշխարհի ձևավորման հարցի առնչությամբ:

<sup>7</sup> Н.Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 308-309: Սրբագրությունը կատարել են de Lagarde (Ges. Abh. 46, ծան. 6) և Հ. Հյուբշմանը (Հին Հայոց տեղայն անունները, էջ 189):

15 Բ. Հ. Հարությունյան

հիշյալ գրույցը. «Պատմեցից ձեզ, ասէ և զորոյս անգիրս յաւանդութենէ ի մեզ հասեալ, զորս և բազումք ի գեղջկաց զրուցեն մինչև ցայժմ: Մատեն լեալ զՔսիսութեայ և զորդւոց նորա, որ այժմ ոչ ուրեք երևի, յորոմ, ասեն, կարգ լեալ բանից այսպիսի: Յետ նաւելոյն Քսիսութեայ ի Հայս և դիպելոյ ցամաքի, գնայ, ասէ, մի յորդւոց նորա կոչեցեալն Սեմ ընդ արևմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն և դիպեալ դաշտի միոմ փոքու առ երկայնանստի միով լեռամբ, գետոյ ընդ մէջ նորա անցանելով, ի կողմանս Ասորեստանի, դադարէ առ գետովն երկուսնեայ աւուրս, և անուանէ յանուն իւր զլեառն Սիմ, և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ, ուստի եկն: Իսկ ի կրտսերագունից որդւոցն նորա Տարբան անուն երեսուն ուստերօք և հնգետասան դստերօք և նոցին արամբք մեկնեալ ի հօրէն՝ բնակէ անդէն ի նոյն գետեզեր, յորոյ անուն և զգաւառն անուանէ Տարան, և զանուն տեղոյն ուր բնակեցան՝ կոչէ Տրօնս. զի անդ զառաջինն սկիզբն եղև բաժանելոյ որդւոց նորա ի նմանէ»<sup>1</sup>: Օլիմպիոդորոսի այս հիշատակությունը խորը վերլուծության կարիք ունի, որը սակայն նյութի պակասի պատճառով մեծ դժվարություն է ներկայացնում: Նշենք միայն, որ հիշատակության վրա պարզորոշ նկատվում է Պատմահոր հզոր ուղեղի ազդեցությունը: Համենայն դեպս, «Տրօնք» բնակավայրի անվան մեկնությունը հազիվ թե Օլիմպիոդորոսի գրչին պատկանի:

Տարոնը պատմիչների գործերում այնքան հաճախ է ուշադրության արժանանում, որ դրանց բոլորին անդրադառնալը անիմաստ է: Նշենք, որ Ագաթանգեղոսը այն կոչում է «երկիր Տարօնոյ»<sup>2</sup>, Փավստոս Բուզանդը՝ «երկիր Տարօնոյ», «երկիր Տարօնու», «գաւառն Տարօնոյ», «Տարօն գաւառ», «նահանգն Տարօն գաւառի» և «Տարօն»<sup>3</sup>, Կորյունը՝ «Տարօնական գաւառ», «նահանգ Տարօնոյ» և «Տարօն»<sup>4</sup>, Եղիշեն՝ «Տարօն»<sup>5</sup>, Պատմահայրը՝ «Տարան», «գաւառն Տարանոյ», «Կողմանք Տարօնոյ» և «գաւառն Տարօն»<sup>6</sup>, Ղազար Փարպեցին՝ «Տարուն» և «գաւառն Տարօնոյ»<sup>7</sup>, Հովհան Մամիկոնյանը՝ «Տարան», «երկիրն Տարանոյ»<sup>8</sup>, Սեբեոսը՝ «Տարոն» և «աշխարհն

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 25-26: Ջրուցի Քսիսութեայն «Աստվածաշնչի» նոյն է:  
<sup>2</sup> «Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց», § 809:  
<sup>3</sup> «Փավստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց», էջ 7, 36, 42, 44, 48, 113, 114 և այլն:  
<sup>4</sup> Կորյուն, Պատմութիւն վարոց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիս, 1913, էջ 9, 20, 38:  
<sup>5</sup> «Եղիշէի վասն վարդանայ եւ Հայոց պատերազմին», էջ 27:  
<sup>6</sup> Մովսես Խորենացի, էջ 26, 118, 122, 212, 228 և այլն:  
<sup>7</sup> «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան», էջ 13, 15, 38, 44:  
<sup>8</sup> Հովհան Մամիկոնյան, էջ 33, 46, 53, 58, 59, 79 և այլն:

Տարանոյ»<sup>1</sup>, Ղևոնդ պատմիչը՝ «Կողմն Տարօնոյ»<sup>2</sup>, Հովհաննես Դրասխանակերտցին՝ «աշխարհն Տարօնոյ», «Տարօն գաւառ», «Կողմանք Տարօնոյ» և «Տարօն»<sup>3</sup>, Պրոկոպիոս Կեսարացին՝ Τάρωννα/τά ἐπὶ Ταρῶνων χωρία<sup>4</sup>, Կոստանդին Ծիրանածինը՝ Ταρῶν, իսկ բնակիչներին՝ Ταρωνίτης<sup>5</sup> և արաբ հեղինակներ Բալաձորին ու Յակուտ ալ-Համադին՝ Tarūn<sup>6</sup>:

Հայկական և արաբական աղբյուրներում տեղ է գտել ոչ միայն Տարոնը, այլև նրա մեջ գտնվող բազմաթիվ բնակավայրեր, ամրոցներ, եկեղեցիներ, բնաշխարհագրական կետեր, որոնք բարեխղճությամբ հավաքել են Ղ. Ինճիճյանը և Ղ. Ալիշանը<sup>7</sup>: Նշենք դրանցից մի քանի նշանավորները. Աշտիշատ (կարևոր հեթանոսական և քրիստոնեական սրբատեղի, ուշ շրջանում կոչվում էր Սահակ Պարթևի մատուռ), Գլակա վանք կամ Սուրբ Կարապետի վանք (մահմեդական բնակչությունը կոչում էր Չանկըը թիլիսա, այսինքն Ջանգակավոր եկեղեցի), Ղազարու վանք կամ Սուրբ Առաքելյալք (Առաքելոց վանք), Հացեկ կամ Հացեկաց գյուղ, որտեղ ծնվել էր Մեսրոպ Մաշտոցը (մինչև 1915թ. հայերը կոչում էին Հացիկ, քրդերը՝ Խասիկ), Կոռառ, Մեղդի, Խորնի մեծ բնակավայրեր, Ողական ամրոց, որն սկզբում պատկանում էր Սլկունիներին, իսկ այնուհետև Մամիկոնյաններին (ուշ շրջանում՝ Աղկան), Աձ (Օձ) քաղաք, Մուշ քաղաք, Տրօնք, Աստղնկան բերդ (Ասղնբերդ), Մառնիկ, Մահու աշտարակ, Հացեաց դրախտ, Հոռեանք, Վիշապ քաղաք (Տիրակատար քաղաք), Մծուրք քաղաք (Սանատրուկ արքայի աթոռանիստը) և այլն:

Տարոնում տիրույթներ ունեին արքունիքը, կաթողիկոսարանը, Մամիկոնյանները, Վահուհները, Սլկունիները և Պալունիները: Սակայն, ամենայն հավանականությամբ, Տարոնի մեծ մասը պատկանում էր Մամիկոնյաններին՝ մինչև 428 թ., ձեռնական իշխանության իրավունքով, իսկ դրանից հետո որպես ժառանգական սեփականություն: Պալունիներին պատկանող հողերը, ինչպես հավաստում է Հովհան Մամիկոնյանը, ավելի ուշ ձևավորվեցին որպես ինքնուրույն գավառ<sup>8</sup>: Պալունիների Տարոնում հաստատված ճյուղը

<sup>1</sup> «Պատմութիւն Սեբեոսի», էջ 112, 132, 138:  
<sup>2</sup> «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», էջ 111:  
<sup>3</sup> «Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց» էջ 42, 53, 74, 117, 119-121, 173, 174 և այլն:  
<sup>4</sup> Պրոկոպիոս Կեսարացի, տե՛ս «Բյուզանդական աղբյուրներ», Ա, էջ 145:  
<sup>5</sup> Կոստանդին Ծիրանածին, տե՛ս «Բյուզանդական աղբյուրներ», Բ, էջ 4-7, 9, 123, 124, 151:  
<sup>6</sup> Ղ. Ինճիճյան, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 189:  
<sup>7</sup> Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 92-113: Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1855, էջ 44-46:  
<sup>8</sup> Հովհան Մամիկոնյան, էջ 79. «Եւ եկեալ յերկիրն Պալունեաց յասանն Գիսիանէ, ի քաղաքազեղն Կոռառ»: Ա.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 76:

մինչև Հայ Արշակունիների թագավորության անկումը կոչվում էր Չյունական և ըստ Մովսես Խորենացու հավաստիացման ձյուն էր մատակարարում արքունի պալատին ամառվա տապ ամիսներին<sup>1</sup>: Պալունիների իշխանության կենտրոնն էր Չյունկերտը կամ Պորպետը, որն այժմ հայտնի է Խարաբա-Քորբաս անունով<sup>2</sup>:

Տարոնի միջով հոսում է Արածանի գետը, որը նշված հատվածում ավելի շատ հայտնի է եփրատ անունով: Գավառի գրեթե ամբողջ երկարությամբ ձգվում է Արածանիի վտակ Մեղ գետը, որն ուշ ժամանակներում հայտնի էր Մեղրագետ անունով: Անտարակույս է, որ հիշյալ վտակն իրոք սկզբնապես կոչվել է Մեղ (=սև), որի թարգմանությունն է մահմեդական բնակչության կողմից գետին տրված Կարասու (=Սև ջուր) անունը: Ինչ վերաբերում է Մեղրագետին, ապա այն ուշ շրջանի ժողովրդական իմաստավորման արդյունք է<sup>3</sup>:

Ամփոփելով Տարոնի վերաբերյալ մեր գիտելիքները, կարելի է մեծ ճշտությամբ անցկացնել վերջինիս սահմանները: Հարավում գավառի համար սահմանաբաժան էին կազմում Հայկական Տավրոսի լեռները, արևելքում՝ Վանա լիճը շրջափակող Բզնունյաց լեռները Նեբրովթ լեռնազազաթով, հյուսիսում՝ Նազիկ լճից մինչև Քարթե լեռը ձգվող լեռնաբազուկները, իսկ արևմուտքում՝ Քարթե լեռնազազաթից և Տավրոս լեռներից սկիզբ առնող երկու լեռնաբազուկներ<sup>4</sup>:

Արշամունիք գավառի վերաբերյալ մեր տեղեկություններն անհամեմատ աղքատ են: Հայտնի է, որ նրա մեջ էին գտնվում Ծախնուտ և Երեզ բնակավայրերը<sup>5</sup> և այն սահմանակից էր Տարոն և Հաշտեանք գավառներին<sup>6</sup>: Արշամունիքի մեջ պետք է գտնվի նաև Օղին գյուղը, որ կոչվում էր նաև Շտեայ<sup>7</sup>: Ելնելով բերված տվյալներից և «Աշխարհացոյց»-ի այն հաղորդումից, որ Արշամունիքը տարածվել է մինչև Սերմանց լեռը (Աշմունիք՝ առ

Արմանց լեռամբ), գավառի սահմանները կարելի է անցկացնել ներքոհիշյալ գծով. հարավում՝ մեր կողմից արդեն քննված Տարոնի սահմանով, արևմուտքում՝ Գինեկ գետի և Մյուս Գայլի ջրբաժան լեռներով, հյուսիսում՝ Արմանց լեռով և նրանից արևմուտք ու հարավ-արևելք ձգվող լեռնաձյուղերով, արևմուտքում՝ Հարթը և Վարդոն իրարից բաժանող լեռնաբազուկներով:

Արշամունիքն իր աշխարհագրական դիրքով հազիվ թե մաս կազմեր Տարոնի, ուստի Հ. Հյուբշմանի այն միտքը, թե իբր Փավստոս Բուզանդը այն համարում է Տարոնի մաս<sup>1</sup>, պարզապես ճիշտ չէ: Պատմիչը այն համարում է Տարոն գավառի մաս. «Արշամունեաց տեղեացն ի նահանգէն Տարոն գաւառէն»<sup>2</sup>: Այսինքն, խոսքը չի վերաբերում նեղ իմաստով Տարոնին, այլ աշխարհ Տարոնին: Գավառի ծագումը մենք կապում ենք Տիգրան Մեծի գործունեության հետ: Գրավելով Ծոփաց թագավորությունը և միացնելով Մեծ Հայքի թագավորությանը, նա, ըստ երևոյթին, Ծոփքի արքայատոհմի ներկայացուցիչներին տեղափոխել է Մեծ Հայքի կողմերը և կալվածքներ տվել, որոնք կամ նրա օրոք կամ ավելի ուշ վերածվել են ինքնուրույն գավառի, որը Արշամունյաց արքայատոհմի անունով կոչվել է Արշամունիք: Ավելի ուշ Արշամունիքը հիշատակվում է որպես Մանդակունյաց իշխանական ընտանիքի տիրույթ: Գուշակությունը չի կարող գիտական ուսումնասիրության համար հիմք ծառայել, սակայն նյութերի բացակայությունը երբեմն ստիպում է նման քայլի դիմել: Գավառանվան պահպանումը և Մանդակունյաց նախարարական ընտանիքի այնտեղ հաստատվելը թերևս կարող են ունենալ ներքոբերյալ բացատրությունը: Հռոմի կողմից Ծոփաց թագավորության պարբերաբար վերականգնման փորձերը անհանգստացրել են արքունիքին, որը և պարզապես բնաջինջ է արել Արշամունիքներին, իսկ գավառը հանձնել է Մանդակունյաց նախարարական ընտանիքին:

Տոկոբերանի հաջորդ գավառը հայտնի է Մարդաղի անունով: Այն հիշատակվում է Եղիշեի, Ասողիկի երկերում<sup>3</sup> և եկեղեցական ժողովների արձանագրություններում<sup>4</sup>: Ուշ շրջանում հայտնի էր Սևուկ բերդակ անունով<sup>5</sup>: «Աշխարհացոյց»-ը Մարդաղին տեղադրում է Մեղեղուղի լեռների հարևանությամբ մինչև Այծալունք, որը բաժանում է այն Կարինից: Գավառի արևելյան կողմով հոսում էր Մուրց գետը, որը Բասենում խառնվում էր Երասխին և դարձնում այն հորդառատ գետ: Մեզ համար անհասկանալի պատճառներով

<sup>1</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 192:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 123:

<sup>3</sup> Եղիշե, էջ 28: Ասողիկ, էջ 192:

<sup>4</sup> Լ. Խճիճյան, Ատորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 114:

<sup>5</sup> Ասողիկ, էջ 192. «Սևուկ բերդակ, որ է Մարդաղի»:

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 111. «ԳՉիւնականսո՞ղ՝ ամարանոցաց պահակս և ձիւնակիրս...»:

<sup>2</sup> Հովհան Մամիկոնյան, էջ 287. «Ի Չիւնկերտ Տարաւոյ ի Պորպ քաղաքի»: Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 18:

<sup>3</sup> Մեղ գետը չի կարելի շփոթել Մեղտեայ գետի հետ (Հովհան Մամիկոնյան, էջ 185): Այն չէր կարող սկզբնապես կոչվել «Մեղր», ինչպես ենթադրում է Հ.Հյուբշմանը (Հին Հայոց տեղայն անունները, էջ 186):

<sup>4</sup> Ս. Երեմյանը Մեղ գետի վերին հոսանքի շրջանը համարում է Խույթի մաս և անգամ դրա մեջ է մտցնում Բաղաղեշը (Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Գ-4, 5): Իրականում Բաղաղեշի շրջանը մտել է Բզնունիքի մեջ, իսկ Մեղ գետի վերին հոսանքի շրջանը՝ Տարոնի:

<sup>5</sup> Ասողիկ, էջ 81, 276: Ղազար Փարպեցի, էջ 149, 150:

<sup>6</sup> Փավստոս Բուզանդ, էջ 123: Ղազար Փարպեցի, էջ 149:

<sup>7</sup> Ղազար Փարպեցի, էջ 150:

որոշ ուսումնասիրողներ փորձում են Մուրցը նույնացնել Բասենի գետին<sup>1</sup>, որը բացարձակապես հակասում է «Աշխարհացոյց»-ի տվյալներին: Խնդիրն այն է, որ ըստ «Աշխարհացոյց»-ի Մարդադի յ յեւրոս քիւտ Մուրց գետ, գնալով ընդ հիւսիսի՝ իջանէ ի Բասեն գաւառ, եւ խառնի յերասխ, եւ գետացուցանէ զնա»<sup>2</sup>, իսկ «զԲագսեն, ընդ որ անցանէ Երասխ՝ գետացեալ ի Մուրցամօր գետոյ, որ բաժանէ զԳաբեղեանս ի հարաւ եւ զԱբեղեանս եւ զՀաւունիս ի հիւսիսի»<sup>3</sup>: Որ իրոք Երասխի սկիզբը վաղ միջնադարում համարվում էր Բասենի գետը, երևում է «Աշխարհացոյց»-ի մեկ այլ տեղեկությունից, ըստ որի Բարձր Հայքը «ի չորս կողմ աշխարհի ջուր արձակէ. զի բոլիւ չորս գետս օրօրէս զեփրան՝ յարեւմուտս, եւ զԵրասխ՝ յարեւելս, զԳայլ ի հարաւ, զԱկամսիս որ է Վոհ ի հիւսիս»<sup>4</sup>: Այս իրողությունը ժամանակին նկատել է Ղ Ալիշանը և ցույց տվել, որ հնում Բյուրակնի գետը (Բինգյուլ-սու) Երասխի սկիզբը չէր համարվում, այլ նրա Մուրց վտակն էր<sup>5</sup>: Հետաքրքիր է, որ Պլինիոս Ավագի տվյալները Երասխի վերաբերյալ միանգամայն համահնչյուն են «Աշխարհացոյց»-ի տեղեկություններին: Այսպես, ըստ լատին բնագետի «Արաքսը ծնվում է միննույն լեռներում և Եփրատը՝ 600 քայլ միջանկյալ հեռավորությամբ, և աճելով Մուլ[ր]սիս գետակով, ինքը թափվում է ըստ մի քանի աղբյուրների (կարծիքի), Կյուրոսի մեջ, որը նրան տանում է Կասպից ծով»<sup>6</sup>: Այստեղ ևս Արաքսը Բասենի գետն է, իսկ Մուլ[ր]սիսը՝ Բյուրակնը, ուստի պարզապես զարմանալի է, որ ըստ Ա.Ս. Երեմյանի «Արաքսի ակունքներից ոչ հեռու գտնվող Մուրց գետը համարվում էր Արաքսի սկիզբը, իսկ Մուրց գետի ակունքների ջրբաժան Ծիրանյաց լեռների (այժմ Փայլանթյուրջան-դաղ) արևմտյան փեշերին գտնվում էին Եփրատի ակունքները»<sup>7</sup>:

Մարդադի գավառի սահմանները մեծ հավանականությամբ որոշված են Ա. Երեմյանի կողմից: Հարավում դրանք անցել են Աբրամանց լեռնագագաթից արևմուտք ձգվող լեռնաբազուկով, արևմուտքում՝ Մանանաղի և Մուրց գետերի ջրբաժան Մեղեղուղի լեռներով, հյուսիսում՝ Այծպտկունք լեռից դեպի Մուրց գետը երկարող լեռնաճյուղով, իսկ արևելքում՝ Մուրց գետով և Աբրամանց լեռնագագաթից դեպի հյուսիս-արևելք ձգվող լեռնաբազուկով<sup>8</sup>:

<sup>1</sup> Հ. Շուբան, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 185. «այժմ Բասին, որուն անուամբը Մուրց գետը այսօր թրջ. Բասին-սու (Լինչի թով՝ Egricai) կը կոչուի»: Ա.Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 71. «Մուրցամար կամ Մուրց գետ - Գ-4, այժմ Հասան-Ղալա-սու»:

<sup>2</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու թ», էջ 31:

<sup>3</sup> Անդ, էջ 33-34:

<sup>4</sup> Անդ, էջ 29-30:

<sup>5</sup> Ղ Ալիշան, Այրարատ, էջ 3, 4, 7, 25:

<sup>6</sup> Քլոն., NH, VI, 10:

<sup>7</sup> «Հայ ժողովրդի պատմություն», ՀԱՍՀ ԳԱ հրատ., հատոր Ա, էջ 838:

<sup>8</sup> Ա.Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Գ-4: Н. Адонц, նշվ. աշխ., էջ 314:

Տավրոսերանի Դասնավորք գավառը հազվագյուտ է հիշատակվում հայոց պատմության մեջ: Դրա մասին գիտեն Հովհաննես Դրասխանակերտցին<sup>1</sup> և Ասողիկը<sup>2</sup>: Տեղեկություններն այթան սուղ են, որ դժվար է հստակ սահմաններ անցկացնել, ուստի այն պետք է տեղադրել Մուրց (Բյուրակն) գետից արևելք, մինչև նրա արևելյան ջրբաժանը:

Դասնավորքից արևելք, ինչպես հավաստում է «Աշխարհացոյց»-ը, գտնվում էր Տվարածատափ գավառը: Համաձայն Ղազար Փարպեցու, այն սահմանակցում էր Բագրևանդին<sup>3</sup>, իսկ ըստ Լաստիվերտցու տվյալների Տվարածատափից ոչ հեռու գտնվում էր Ավնիկ ամրոցը<sup>4</sup>: Հիմնվելով նշված տեղեկությունների վրա, Ղ Ալիշանը Տվարածատափը տեղադրում է Գյոքսուի և Կարայազի շրջանում<sup>5</sup>, Ն. Ադոնցը՝ Եփրատի ավազանում, Կարայազի տեղում<sup>6</sup>, իսկ Ա. Երեմյանը՝ Ղարայազի (իմա՝ Կարայազի) դաշտում՝ Գյոքսու գետակով<sup>7</sup>: Նման տեղորոշումը առաջին հայացքից, կարծես թե, լիովին բավարարում է մեզ հայտնի բոլոր փաստերին, սակայն այդ դեպքում գավառը անջրպետվում է Բագրևանդից Դալառ գավառով, հանգամանք, որ խիստ էական է: Ուստի մենք գտնում ենք, որ Տվարածատափը պետք է տեղադրվի ոչ թե Գյոքսուի հովտում, այլ Էլմալի-դերեի, այսինքն Կարայազի հյուսիսային հատվածում, որն անմիջապես սահմանակցում է Բագրևանդին: Ըստ այդմ էլ Կարայազի հարավ-արևելյան հատվածը Գյոքսուի հովտով և շրջակա տարածքով պետք է նույնանա Դալառ գավառին: Անշուշտ, այն բացարձակ իմաստով Տվարածատափից արևելք չէ, ինչպես հավաստում է «Աշխարհացոյց»-ը, սակայն այն ժամանակների ընկալմամբ, երբ աշխարհագրական տեսակետից Հայաստանի արևելքը պատկերվում էր դեպի հյուսիս նշանակալից շեղումով, Գյոքսուի հովիտը կարող էր և Էլմալի-դերեի նկատմամբ արևելք դիտվել:

Տավրոսերանի նշանավոր գավառներից էր Հարքը, որը Հայկի և Բելի պատմության համաձայն եղել է Հայկ նահապետի բնակության առաջին վայ-

<sup>1</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 105. «Տրդատ ի Դասնաորից»:

<sup>2</sup> Ասողիկ, էջ 105. «Տեր Տրդատ ի Դասնաանից ամս Գ»: Կասկած չկա, որ այս Տեր Տրդատը նույնական է Դրասխանակերտցու Տրդատին, ուստի «Դասնավանից»-ը կարելի է սրբագրել «Դասնաորից», եթե, իհարկե, «Դասնաանից»-ը լուր բնակավայրի անվանում չէ:

<sup>3</sup> Ղազար Փարպեցի, էջ 57. «Եւ եկեալ հասանէին ի գիւղ մի որոյ անունն էր Արամանայ, ի նահանգին Բագրասանդայ, մերձակայ սահմանակից Բասենոյ և Տուարծատափու»:

<sup>4</sup> «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ», էջ 89. «(Տուրդիլ սուլթանը) խաղայ իջանէ ի Տուարածոյ Տափ, և անտի իջանէ յընդարձակ դաշտն Բասենոյ առ անառ ամրոցան որ կոչի Անիկ»:

<sup>5</sup> Ղ Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, § 35:

<sup>6</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 314:

<sup>7</sup> Ա. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 86:

որ<sup>1</sup>: *Ն. Հյուբըմանը չի ընդունում Պատմահոր այն մեկնությունը, որ Հարք իբրև թե նշանակում է «թե հարք (հայեր - Հ.Բ.) են աստէն բնակեալք», քանի որ Հարքի սեռականը ոչ թե «Հարք» է, այլ «Հարքայ», իսկ հայցականը՝ «զՀարք» և ոչ թե «զՀարս»<sup>2</sup>: Գավառի մասին հիշատակություն ունեն հայկական աղբյուրներից զատ նաև Կոստանդին Ծիրանածինը /*Χάρκω* և արաբական աղբյուրները (*al-Hark*)<sup>3</sup>: Հարքի արևելյան սահմանագլխին գտնվում էր *Մանավազակերտ, Մանազկերտ կամ Մանծկերտ* (ներկայումս՝ Մելազգիրը) քաղաքը, որը երբեմն վերագրվում էր Ապահունիք գավառին<sup>4</sup>: Գավառի նշանավոր բնակավայրերից էին *Հայկաշենը*, որն ըստ ավանդության կառուցել էր Հայկ նահապետը, *Դոնեվանքը, Եղեգականը, Հերեանը, Մանկանգոմը, Տողատափը* և այլն<sup>5</sup>: Դատելով Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ից, Հարքը թերևս կոչվել է նաև «Կողմանք եփրատական գետոյն», որի Աղբիանոս եպիսկոպոսին Փավստոս Բուզանդը կոչում է *Մանազկերտի եպիսկոպոս*<sup>6</sup>:*

Անտարակույս է, որ սկզբնապես Հարքը ընդգրկել է Տարոնից հյուսիս-արևելք ընկած ընդարձակ լեռնադաշտը, որը տարածվում էր Արածանի կամ Եփրատ գետի երկու ափերին: Դրա օգտին են վկայում գետի ձախափնյակում գտնվող *Հայկաշեն* և *Եղեգական, Տողատափ* և *Մանկանգոմ* բնակավայրերը: Այլ խոսքով, այն համապատասխանել է ուշ ժամանակների *Բուլանուկ* կամ *Բուլանդղ* վիճակին: Սակայն «Աշխարհացոյց»-ը մեզ մատուցում է միանգամայն այլ կացություն: Պարզվում է, որ Հարքը տարածվել է մինչև *Արածանի* գետը, այսինքն վերջինիս ձախափնյակը աշխարհացոյցյան Հարքի

մեջ չի մտել. «ի հարաւոյ նոցա (*Տվարածատափի և Դալառի - Հ.Բ.*) Հարք եւ Վաժնունիք (*իմա՛ Վարածնունիք - Հ.Բ.*) մինչեւ ցԱրածանի, որ իջանէ յԱպահունաց»<sup>1</sup>: Այս իրողությունը «Աշխարհացոյց»-ը մեկ անգամ ևս հավաստում է՝ կապված Ապահունիքի տեղադրության հետ. «Աղիովիտ գաւառ եւ զմտիւք նորա Ապահունիք, ընդ որոյ մէջն անցանէ Արածանի յեզրն Բզնունեաց»<sup>2</sup>: Դժվար չէ տեսնել, որ Ապահունիքի միջով անցնող Արածանին այնուհետև հոսել է Բզնունիքի եզրով կամ սահմանով, այսինքն Արածանին հանդիսացել է Հարքի և Բզնունիքի սահմանաբաժան գիծը: Եզրակացությունը միանշանակ է: «Աշխարհացոյց»-ը արտացոլում է որոշակի վարչա-քաղաքական կացություն, երբ Հարքի տարածքի հարավային կեսը Բզնունյաց գավառի մաս է կազմել: Կարծում ենք, որ այս իրողությունը արտացոլված է նաև Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում: Պատմահայրը գրում է. «իսկ նորա (*Արամանեակի - Հ.Բ.*) թողեալ զերկուս յեղբարց իւրոց, զԽոռ և զՄանաւազ, ամենայն աղիսիւն իւրեանց ի կոչեցեալն Հարք, և զորդի Մանաւազայ զԲազ, յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք, իսկ որդի նորա Բազ՝ արևմտից հիւսիսոյ զեզր ծովուն աղտոյ, և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբ»<sup>3</sup>: Այս հաղորդման մեջ հետաքրքիր է այն իրողությունը, որ Խոռը և Մանավազը իրենց ամբողջ աղիսով թողնվում են Հարքում, այսինքն Մանավազը ստացել է գավառի մի մասը և ոչ թե ամբողջությամբ: Մտածելու տեղիք են տալիս մյուս մանրամասները: Շարունակությունից այն պատկերն է ստացվում, որ Մանավազը ժառանգում է Հարքը, նրա որդի Բազը՝ Վանալճի հյուսիս-արևմտյան շրջանը, իսկ Խոռի տոհմը բազմանում հյուսիսային կողմերում, որից սերում է «մեծ նախարարութիւնն ազգին Խոռխոռունեաց, արք քաջք և անուանիք, որպէս և որք առ մեօք են այժմ երևելիք»<sup>4</sup>: «Աշխարհացոյց»-ը Հարք է անվանում Արածանիից հյուսիս ընկած տարածքը, սակայն ինչպես ժամանակին ճիշտ նկատել է Ն. Ադոնցը, Հարքին սահմանակից Ապահունիք, Խորխոռունիք, Բզնունիք գավառները սկզբնապես մտել են Հարքի մեջ և հետագայում ձևավորվել են որպես առանձին գավառներ նախարարական առանձին տիրույթների հիման վրա<sup>5</sup>: Ըստ որում, այդ մասին հավաստում է նաև Պատմահոր մեկ այլ հաղորդումը, ըստ որի «և զնախարարութիւնն Ապահունեաց և զՄանաւազեանն և զԲզնունականն ի նոյն գաւակացն Հայկայ. ի բնակչացն գտեալ զպերճագոյսսն՝ տեարս կարգէ, յա-

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 31:

<sup>2</sup> Անդ: Այս իրողությունը նկատել է Ն.Ադոնցը (Армения в эпоху Юстиниана, էջ 313):

<sup>3</sup> Մովսես Խորենացի, էջ 38:

<sup>4</sup> Անդ:

<sup>5</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 312:

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 33. «Եւ ինքն (Հայկը - Հ. Բ.) խաղայ, ասէ, այլով աղիսին ընդ արևմուտս հիւսիսոյ. գայ բնակէ բարձրաանդակ դաշտի միոմ, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թե հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ: Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշեն»:

<sup>2</sup> Ն. Հյուբըման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 369: Ասողիկ, էջ 81. «ի գաւառն Հարքայք, էջ 103. «Սա (Հովհան Օձնեցին - Հ. Բ.) արար ժողով ի Մանազկերտ քաղաք ի սահմանագլխսն Հարքայք», էջ 192. «զՀարք», էջ 277. «ի գաւառն Հարք ի Մանազկերտ քաղաք»: Հովհան Մամիկոնեան, էջ 78. «Ընդ Հարք», էջ 141. «ի կողմանս Հարքայք», էջ 142. «ի Հարք և իշխանն Հարքայք», էջ 286. «ի Հարք», Թովմա Արծրունի, էջ 42. «ի գաւառն Հարքայք»:

<sup>3</sup> Կոստանդին Ծիրանածին, էջ 11-12: Ն. Հյուբըման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 193:

<sup>4</sup> Փավստոս Բուզանդ, էջ 9-10, 226, 263: Ասողիկ, էջ 73, 103, 183, 192, 266, 270, 277: Մատթեոս Ուտիայեցի, էջ 141, 145, 232, 239, 542: Եղիշե, էջ 27: Դազար Փարպեցի, էջ 44: Հովհան Մամիկոնեան, էջ 117. «Մանածկերտ»:

<sup>5</sup> Դ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 120: С.Т. Еремьян, Тарон в древности и в средние века, оформил Г. Н. Горцакаляна, Масштаб 1:200000:

<sup>6</sup> Ագաթանգեղոս, § 845: Փավստոս Բուզանդ, էջ 9-10:



նուն շինից և գաւառաց կոչելով»<sup>1</sup>: Ճիշտ է, այս տեղեկության մեջ բացակայում է Խորխոռունիների անունը, սակայն այդ բացատրվում է այն իրողությամբ, որ պետական պաշտոն զբաղեցնող Խորխոռունիները մինչ այդ հիշատակվել են արքունի գործակալությունների հետ կապված<sup>2</sup>:

Այս տեղեկությունների լույսով պարզ է դառնում, որ Խորխոռունիները տիրույթներ են ունեցել Արածանիից հյուսիս ընկած շրջանում, որը լիովին համահնչյուն է Պատմահոր այն տեղեկությանը, թե Խոռի տոհմը բազմանում է հյուսիսային կողմերում: Նույնքան հասկանալի է դառնում, որ Մանավազյանները տիրույթներ են ունեցել Արածանիի ձախափնյակում, որոնց մեջ էր նրանց աթոռանիստ Մանավազակերտը: Ոչ պակաս բացատրելի է այն հանգամանքը, որ Մանավազակերտ-Մանազկերտը գտնվել է Հարքի և Ապահունիքի սահմանագլխին: Խնդիրն այն է, որ մինչև Ապահունիների և Բզնունիների հանդես գալը, Հարք գավառը (լայն առումով) կառավարվել է Մանավազյանների կողմից, որի ժամանակ Մանավազակերտը գրեթե կենտրոնական դիրք էր գրավում այնտեղ: Սոսկ Ապահունիքի և Բզնունիքի անջատումը պատճառ դարձավ, որ աթոռանիստը հայտնվի իշխանության ծայրամասում:

Մանավազյանների ռազմական հզորությունը կտրելու նպատակով, ամենայն հավանականությամբ, արքունիքը նրանց տիրույթները սահմանափակել է Հարքի (նեղ առումով) հարավային հատվածով, իսկ նրանց կրտսեր ճյուղերից հիմք դրել Բզնունյաց և Ապահունյաց իշխանական ընտանիքներին: Արքունիքի քաղաքականությունը պարզ կլինի, եթե ի նկատի ունենանք, որ Մանավազյանների ռազմական ուժը այդ վաղնջական ժամանակներում կազմելու էր առնվազն 5000 մարտիկ (ավելի ուշ ժամանակներում Մանավազյանների (1000 մարտիկ), Ապահունիների (1000 մարտիկ) և Բզնունիների (3000 մարտիկ) հավաքական զորուժը)<sup>3</sup>, այսինքն ավելի շատ, քան ի վիճակի էին մարտադաշտ դուրս բերելու Աղձնյաց և Գուգարաց բոլորները<sup>4</sup>:

Հիշյալ երկրամասի վարչա-քաղաքական զարգացումը մենք պատկերացնում ենք հետևյալ կերպ: Միասնական Հարքի հյուսիս-արևմտյան մասում առանձնանում են Խորխոռունիները, իսկ մնացած հատվածում իշխում են Մանավազյանները: Այդ իսկ պատճառով հայկական ավանդական պատմությունը Խոռին և Մանավազին համարում է եղբայրներ: Ավելի ուշ Մանավազ-

յանների կրտսեր ճյուղը, անջատվելով, սկիզբ է դնում Բզնունիների հզոր նախարարությանը և այդ պատճառով էլ նույն ավանդական պատմությունը Բազին համարում է Մանավազի որդի: Ինչ վերաբերում է Ապահունիներին, ապա աղբյուրների տեղեկությունները բավարար նյութ չեն տալիս որոշելու, թե նրանք որպես իշխանական ընտանիք ձևավորվեցին Խորխոռունիների ու Մանավազյանների հետ մեկտեղ, թե Բզնունիների հետ միաժամանակ: Համենայն դեպս, ավելի հավանական է երկրորդ վարկածը:

Հարքի հարևանությամբ դեպի արևմուտք գտնվում էր Վարաժնունիքը, որի վերաբերյալ մեզ գրեթե տեղեկություններ չեն հասել: Ղ Ալիշանը գավառս տեղադրում է Խամուրի, Լիզի և Բուլանուխի շրջանում<sup>1</sup>, որն, անշուշտ, պարզապես ճիշտ չէ: Ընդունելի է Ս. Երեմյանի տեղադրությունը, ըստ որի Վարաժնունիքը ընդգրկել է Խնունիս (Խնուս) գետի հովիտը<sup>2</sup>: Հ.Հյուբշմանը և Ս. Ղազարյանը Բալաձորիի հիշատակած Յախունիս-ը փորձել են նույնացնել Վարաժնունիքին, չնայած իրենք էլ նկատել են, որ այդ երկրամասը Արձեշի կողմերում պետք է գտնվեր<sup>3</sup>: Ն. Ադոնցը, ելնելով Բաջունայս անունից, հակված է այն նույնացնելու ավելի շուտ Բզնունիքի հետ, սակայն, քաջ գիտակցելով, որ երկրամասերի ցանկում Բաջունայսի հետ Խլաթի հիշատակությունը այդ համադրումը դարձնում է անհնարին, հեղինակն ի վերջո Բաջունայսը նույնացնում է Ապահունիքին<sup>4</sup>: Այդ տեսակետը կիսում է նաև Հ. Մարքվարթը<sup>5</sup>:

Տավրոսերանի առավել նշանավոր գավառների թվին է պատկանում Բզնունիքը, որն, ինչպես պարզեցինք վերը, տարածվում էր մինչև Արածանի գետը: Արևելքում այն ծավալվում էր մինչև Նեխ-Մասիք լեռը, հարավ-արևմուտքում՝ Բաղեշ ամրոցը, արևմուտքում՝ Սարակն լեռը և Արածանի գետը, իսկ արևելքից և հյուսիս-արևելքից եզերվում էր Վանա լճով: Գավառը հիշատակում են Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Պատմահայրը, Թովմա Արծրունին և ուրիշներ<sup>6</sup>: Գավառի որպես սահմանային կետ հիշված Նեխ-Մասիքը Սիփան լեռն է, որի անունն աղերս ունի Ծիպան կղզու անվանման հետ, իսկ Մասիքին տրված «Նեխ» հավելումն այն Մասիսից տար-

<sup>1</sup> Ղ Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23, § 35:

<sup>2</sup> Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82: Ավելի վաղ նման տեղադրություն առաջարկել է Ն.Ադոնցը (Армения в эпоху Юстиниана, էջ 314):

<sup>3</sup> M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, էջ 21, 74: Հ.Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 193:

<sup>4</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 314:

<sup>5</sup> J. Markwart, Südarmenien und Tigrisquellen, էջ 106-107:

<sup>6</sup> Փավստոս Բուզանդ, էջ 19, 114: Եղիշեն, էջ 28: Ղազար Փարպեցի, էջ 23, 44, 106: Մովսես Կորենացի, էջ 38, 116, 193, 258, 349: Թովմա Արծրունի, էջ 108, 186. «գաւառն Բզնունական»:

<sup>1</sup> Մովսես Կորենացի, էջ 115-116:

<sup>2</sup> Անդ, էջ 110. «Եւ թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի գաւակացն Խոռայ Հայկազնոյ, արս ընտիրս և քաջս, նիգակաւորս և տաւերաւորս և գլուխ նահապետութեան նոցա զՄաղխազ ոմն այր բարի և սրտեայ: Բայց անուն ազգին զնախնականս պահէ»:

<sup>3</sup> «Ջորանամակ», տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 251:

<sup>4</sup> Անդ:

բերելու համար է<sup>1</sup>: Որ Նեխ-Մասիքը իրոք Սիփան լեռն է, պարզ երևում է «Յայսմաւորք»-ի մի հետաքրքիր տեղեկությունից. «անտի եկեալ հասին ի գաւառն Բզնունեաց յոտն Մասեաց՝ ի Վանս Արծկոյ որ կոչի Երաշխաւոր»<sup>2</sup>:

Գավառի նշանավոր վայրերից էին Արծկեն<sup>3</sup>, Խլաթը (արաբական տիրապետության ժամանակներից)<sup>4</sup> և, անշուշտ, Բաղաղեշը կամ Բաղեշը: Վերջինըս ներկայիս Բիթլիս քաղաքն է: Ներկա անվանումը, չնայած առաջին հայացքից թուրքական և արաբական տիրապետության կնիքն է իր վրա կրում, իրականում ավելի հին է, քան Բաղաղեշ ձևը: Պարզապես գրական լեզվում Բայթալես հին անվանումը վերածվել է Բաղաղեշի, իսկ քաղաքի բնակիչների կենդանի լեզվում այդ հնչյունափոխությունը չի կատարվել և Բայթալեսը վերածվել է սկզբում Բաթլիսի կամ Բաղլիսի, իսկ ավելի ուշ Բիթլիսի: Սերետի երկը պահպանել է Բաղաղեշի անունը Բաղեշ ձևով<sup>5</sup>, որը բնավ չի պատճառաբանվում Գևորգ Կիպրացու տեղեկությունների հենքի վրա<sup>6</sup>: Եթե վերջինս Բաղեշի լեռնանցքը գիտեր κλεισοῦρα Βαλαλεισων անունով, ապա, ամենայն հավանականությամբ, Սերետը Բաղեշի ամրոցը պետք է կոչեր Բաղաղեշ<sup>7</sup>:

«Աշխարհացոյց»-ի տեղեկությունը Բաղեշի տարածքային պատկանելության հարցում այնքան էլ հստակ չէ<sup>8</sup>: Այն կարելի է ընկալել Բզնունիքի ամրոց, սակայն նույն հաջողությամբ կարելի է պնդել, որ այն պարզապես գտնվել է Բզնունիքի սահմանագլխին, սակայն Աղձնիքի տարածքում: Այդ անորոշ կացությունը որոշակիանում է Վարդանի «Աշխարհացոյց»-ի տվյալների շնորհիվ: Նա գրում է. «Բզնունիք Արծկէ է եւ Խլաթ եւ Բաղէշ մինչ ի Խիզան, ուստի է սուրբ Խաչն և Գամաղիե: Այս միջոցս ամենայն Բզնունիք ասի»<sup>9</sup>: Ը. Լյուբզմանի կարծիքով Վարդանի կողմից Բաղեշի Բզնունիքին ընծայելը հին ժամանակների համար նշանակություն չունի<sup>10</sup>, սակայն, մեր կար-

ծիքով, այն արտահայտում է իրերի իսկական վիճակը: Ճիշտ է, Բաղեշի բնակիչները իրենց քաղաքը համարում էին Սալլոնդորի մեջ<sup>1</sup>, սակայն եղած փաստերը աներկբայելի են դարձնում վաղ միջնադարում նրա պատկանելիությունը Բզնունիքին: Չի բացառվում, որ Մավրիկիոս կայսեր վարչական վերափոխությունների ժամանակ այն կարճ ժամանակով միացվեց Արզանեն-Աղձնիքին, սակայն շատ չանցած վարչական նախկին կացությունը վերականգնվեց<sup>2</sup>:

Վանա լճի կղզիներից երեքը՝ Արծկեի, Ծիպանի և Տոքեան, ըստ «Աշխարհացոյց»-ի գտնվում էին Բզնունյաց գավառում: Ներկայումս դրանք լճի ջրերի բարձրանալու հետևանքով վաղուց ջրասույզ են եղել: Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ, երբ սելջուկյան սուլթան Տուրքիլը XI դարի կեսերին հարձակվեց Հայաստանի վրա, Արծկե քաղաքը գտնվում էր կղզու և մայր ցամաքի վրա. «(Տուրքիլը) երթեալ՝ հանդիպի քաղաքի միոջ, որ կոչի Արծկէ, որ է ի մէջ ծովուն Բզնունեաց, և ունի մօտ յինքն բերդ ամուր և անառիկ և քաղաքացիքն յայս ապաստան եղեալ ի ծովն և յամրոցն, յանհոգս կային»<sup>3</sup>: Շատ հնարավոր է, որ այդ շրջանում դեռևս իրենց գոյությունը պահպանել էին նաև Ծիպանի և Տոքեան կղզիները:

Բզնունյաց գավառի հարավ-արևելյան սահմանագլխին գտնվում էր Երիվարք գավառը, որը, բոլոր տվյալները կան ենթադրելու, վաղնջական ժամանակներում Բզնունյաց մաս է կազմել: «Աշխարհացոյց»-ից գատ այն հիշատակվում է միայն Թովմա Արծրունու երկում. «(Գագիկ Արծրունին - Զ.Բ.) եւ առեալ զկապուտ երկրին՝ դարձեալ գայ ի գաւառն անուանեալն Երիւարկ, առնու և անդ գբերդն Պաղայ, և զՓարիուաց, գայ և ի ձորն Առուանից, առնու և գայն ևս ամրոցն և տիրէ գաւառացն»<sup>4</sup>: Ելնելով այս և «Աշխարհացոյց»-ի այն տվյալից, ըստ որի գավառը գտնվել է Տավրոս լեռների և Բզնունյաց ծովի միջև<sup>5</sup>, ուսումնասիրողները գավառը տեղադրել են Աղձնիքի Կոտոմից հյուսիս, Վանա լճի հարավ-արևմտյան ափին, Կարճկանի շրջանում<sup>6</sup>: Երիվարք գավառի եղիգի փոքրիկ լիճը գտնվել է Գյուլլի և Կենդրանց գյուղերի միջև ընկած դաշտում, որտեղ զարնանը մի քանի ամսով ձնհալքի ջրերից լիճ էր

<sup>1</sup> Ը. Լյուբզման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 187:

<sup>2</sup> Անդ, էջ 187:

<sup>3</sup> Պազար Փարպեցին այն հիշում է «Արծկէ», բյուզանդական աղբյուրները՝ Ἀρτζακέ և Ἀλτζίκε ձևով (Ը. Լյուբզման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 194):

<sup>4</sup> Ը. Լյուբզման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 194. «Այս գաւառին մէջն էր Խլաթ Պատմ. Ս. Լափսիմ. 300. Խճիճ. ԸԸ 121, արաբ. XII āt Bai āduri, 176, 193 եւս, յս. Χλιὰτ, Χαλιὰτ Կոստ. Պորփիր. de adm. imp. 191-196. Χλιὰτ Mich. Attal. Hist. 131, 132 եւս»:

<sup>5</sup> Սերետ, էջ 165. «բերդն Բաղիշոյ»: Որ այնուամենայնիվ Սերետի երկում ամրոցի անունը եղել է Բաղաղեշ, հաստատում է ձեռագրերից մեկի «Բաղաղիշոյ» տարբերությունը (Անդ, էջ 165):

<sup>6</sup> Ը. Լյուբզման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 187:

<sup>7</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 48:

<sup>8</sup> Ը. Լյուբզման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 187-188:

<sup>9</sup> «Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի», էջ 20:

<sup>10</sup> Ը. Լյուբզման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 188:

<sup>1</sup> Ղ. Խճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 123-124:

<sup>2</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 48:

<sup>3</sup> Արիստակես Լաստիվերտցի, էջ 94:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 434:

<sup>5</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ», էջ 31:

<sup>6</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 51: Ղ Ալիշանը զարմանալիորեն գավառը տեղադրում է Գյուլգել-դերեում (Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23 (§ 35)):

գոյանում, որը տեղ տեղ 10 ոտնաչափ խորություն էր ունենում: Հետո ջուրը ստորգետնյա ուղիներով լցվում էր լիճը, իսկ գյուղացիները, մշակելով այդ հողերը, արտակարգ բերք էին ստանում<sup>1</sup>: Հիշյալ չորացող լճից ոչ հեռու գտնվում էր պատմական Պաղը, որ ներկայումս կոչվում է Պախ կամ Բախ (Bakh)<sup>2</sup>: Փարիզաց բերդի տեղադրությունն առայժմ պարզված չէ:

Տավրուբերանի ծայր հյուսիս-արևելյան գավառը Աղիովիտն էր, որի տարածքի մեծ մասը Աբերանի և Հաշտեանք գավառների հետ մեկտեղ հանձնըված էր Արշակունյաց արքայատոհմի սեպուհներին<sup>3</sup>: Գավառում էր գտնվում արքունի քաղաք Ջարիշատը, որտեղ թաղվեց Արշակ Բ թագավորի կողմից սպանված Գնել Արշակունին և որը ավերվեց ու գերեվարվեց Շապուհ Բ թագավորի զորքերի կողմից IV դարի 60-ական թվականներին: Թովմա Մեծոբեցու օրոք Ջարիշատը գյուղաքաղաք էր, որը հեղինակի հավաստմամբ գրտնըվում էր Քաջբերունյաց գավառում<sup>4</sup>: Պատմիչները Աղիովիտում հիշատակում են Արճեշ գյուղը կամ քաղաքը<sup>5</sup>, որի ավերակները այսօր լճի հայելու բարձ-

<sup>1</sup> W. Belck, Beiträge zur alten Geographie, 2, 81: Линч X. Ф.Б., Армения, т. II, Тифлис, 1910, էջ 179:

<sup>2</sup> Cuinet V., La Turquie d'Asie, 2, Paris, 1892, էջ 634-635: Карта Генерального штаба, масштаб 1:200000, 10-38-13:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, էջ 137. «Հայոց թագաւորէ Արտաազդ որդի Տիգրանայ: Աս ժառանգեցուցանէ զեղբայրս իւր և զբոսս ի գաաաա Աղոյ ովտի և Աբերանոյ, թողլով ի նոսա զմասն արքունի որ ի շէնսն այնց գաաաաց, հանդերձ առանձին մտից և ռոճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատռականագոյն և առաւել թագաւորազն քան զայն Արշակունիս. միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի», էջ 191. «Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաազդ որդի նորա և հալածէ յԱյրարատոյ գամենայն եղբայրս իւր ի գաաաա Աղիովտայ և Աբերանոյ, զի մի բնակեցցեն յԱյրարատ ի կալուածս արքայի, բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա»: էջ 193. «Եւ եկեալ առ նա (Արտաշեսի որդի Տիրանը - Հ. Բ.) կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից՝ ասեն. «Ընդարձակե՛ա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ»: Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաաաա Աղիովտի և Աբերանոյ: Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան, այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հասասար տրոհել յինքեանս: Ջոր բաժանեալ ըստ մարդաթուի, զտառ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաաաա Աղիովտի և Աբերանոյ»: էջ 282-283. «Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ որդոյն նորա, զոր փոխանորդ թագաւորի պահէին, և այլոց Արշակունեաց բնակել ի գաաաա Հաշտենից և Աղիովտի և Աբերանոյ, հանդերձ ռոճկօք և մտիւք յարքունուտառ»:

<sup>4</sup> Անդ, էջ 284. «յարքունական քաղաքին Ջարիշատի»: Փավտոս Բուզանդ, էջ 172:

<sup>5</sup> Ասողիկ, էջ 41, 102: Թովմա Արծրունի, էջ 478. «զԱրճեշ քաղաք Գնունեաց գաաաաին»: Մեթոս, էջ 65, 125: Արճեշը բյուզանդացիները կոչում էին 'Αρξες իսկ արաբները՝ Arjis (տե՛ս Հ. Զարբաշան, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 195):

րացման հետևանքով ջրասույզ են եղել<sup>1</sup>, երիկավը, Խառաբաստայ գյուղը, Խառաբաստայ կամ Սուխարայ վանքը, Կերմանից գյուղը, Մեծօրայ կամ Մեծօփա ուխտը, Ասպիսնակ (Ասպսակ) կամ Վարախանից գյուղը, Ասպիսընկայ վանքը և այլն<sup>2</sup>:

Բերված տվյալները ոչ մի կասկած չեն թողնում, որ Աղիովիտը գտնվել է Աղի գետի հովտում, տարածվելով մինչև Նեխ-Մասիք լեռը և Աղի լեռնանցքը՝ արևմուտքում, Ծաղկանց լեռները՝ հյուսիսում, Առեստ գետի արևմտյան ջրբաժանը՝ արևելքում և Վանա լիճը՝ հարավում: Սակայն Ղ. Ալիշանը զարմանալիորեն գավառը տեղադրել է Բաղնոցի և Սարըսուփ շրջանում<sup>3</sup>: Ս. Երեմյանը գավառը ճիշտ է տեղադրում, սակայն ձեռքի տակ չունենալով «Աշխարհացոյց»-ի բոլոր ձեռագրերի տարընթերցումները, նա հիշյալ գավառը բաժանում է երկու մասի, որի արևմտյան հատվածը որպես Աղիովիտ գավառ հատկացնում է Տավրուբերանին, իսկ արևելյան հատվածը որպես Աղիովիտ գավառ՝ Վասպուրականին: Նրա կարծիքով, ըստ երևույթին սկզբում գոյություն է ունեցել մեկ Աղիովիտ գավառ, որը հետագայում վաճառաշահ Ջարիշատ քաղաքի բարձրանալու հետևանքով, որն ստացել էր «արքունի քաղաքի» իրավունք, բաժանվում է երկու մասի, որոնցից արևմտյանը դառնում է Ջարիշատի քաղաքային տարածք<sup>4</sup>: Վասպուրականը Աղիովիտ անունով գավառ չի ունեցել<sup>5</sup>, հետևաբար անկախ՝ ներքին բաժանվածությունից, Աղիովիտը ամբողջությամբ պատկանում էր Տավրուբերանին: Այդ իրողությունը պարզորոշ երևում է նաև այն փաստից, որ Հայաստանի 591թ. երկրորդ բաժանման ժամանակ պարսկա-բյուզանդական սահմանագիծը անցնում էր ոչ թե իրականության մեջ գոյություն չունեցող երկու Աղիովիտների միջով, այլ Առեստի անմիջական հարևանությամբ<sup>6</sup>, որով կարծես թե Վասպուրականի մի հատվածը ևս անցնում էր Բյուզանդիային: Իրապես վերջինս Վասպուրականում տարածքային ձեռքբերումներ չունեց, պարզապես Աղիովիտ գավառն ամբողջությամբ անցել էր կայսրությանը:

<sup>1</sup> Cuinet V., La Turquie d'Asie, 2, էջ 710: XIX դարի կեսերին քաղաքի որոշ մնացորդներ դեռ նշմարվում էին Մատնավանք (Մատղավանք ?) գյուղի մոտ: Տե՛ս նաև Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 49:

<sup>2</sup> Ղ. Արճիճյան, Առորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 123-128: Թովմա Արծրունի, էջ 3, 82. «զբերդն երիկաւ Հաղացովտի»: Երիկավը ոչ թե Վասպուրականում էր, այլ Տուրուբերանում:

<sup>3</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23 (§ 35):

<sup>4</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 33:

<sup>5</sup> Բ. Հ. Զարբաշանյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, թիվ 3, էջ 112-113:

<sup>6</sup> Մեթոս, էջ 76. «...մինչև ցեզր ծովուն Բզնունեաց և ցլեաստաան», էջ 84: Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68. «... ի լեանէն որ կոչի Ընճաքիսար մինչև ցլեաստն ասան և ցՀաջինս»:

Այսօր ընդունված է Աղիովիտ գավառը կամ ավելի ճիշտ Վասպուրականին վերագրվող հատվածը ամբողջությամբ համարել արքունի սեպուհների սեփականություն<sup>1</sup>։ Երկու Աղիովիտների առանձին գոյությունը բացառելուց հետո հասկանալի է դառնում, որ հիշյալ գավառը հողատիրության իմաստով բավականին խայտաբղետ կառուցվածք է ունեցել։ Ամենից առաջ Աղիովիտ նշանակալից, գուցե և մեծ մասը կազմել են արքունի սեպուհների կալվածները, սակայն ակնհայտ է, որ դրանց մեջ չի մտել «արքունի քաղաք Ջարիշատը» իր հարակից տարածքներով։ Վերջինս, անտարակույս արքունիքի անմիջական ենթակայության տակ գտնվող տիրույթ էր, ուստի միանգամայն անհասկանալի է, երբ որոշ ուսումնասիրողներ Ջարիշատը ցույց են տալիս Գնունիների տիրույթներում<sup>2</sup>։ Քննության առնելով Պատմահոր տեղեկությունները, Ն. Ադոնցը եկել է այն եզրակացության, որ Գնունիներն սկզբում տիրույթներ են ունեցել Շահապիվանի շրջանում, որոնք հետագայում անցել են Արշակունիներին<sup>3</sup>։ Հասկանալի է, որ Թովմա Արծրունու հաղորդումն այն մասին, թե է «զԱրձէշ քաղաք Գնունեաց գաւառին»<sup>4</sup>, ուսումնասիրողներին բերել է այն մտքին, որ արքունիքը Շահապիվանի և ընդհանրապես Ծաղկոտն գավառի դիմաց Գնունիներին է հանձնել Աղիովիտը կամ նրա մի մասը։ Ժամանակին մենք ևս կիսել ենք այդ տեսակետը, սակայն սկզբնաղբյուրների համադրությունն ու վերլուծությունը, կարծում ենք, նոր լույս է սփռում հիշյալ հարցի վրա։ Այսպես, Մովսես Խորենացին հաղորդում է, որ, երբ Արշակ Բ թագավորը Կոգովիտ գավառում մեծ որս է կազմակերպում և տոնախմբություն սարքում, Տիրիթ և Վարդան իշխանները արքայի միտքը պղտորում են, ասելով, «Գնեյլոյ բազում երէս քան զայն ունել ընդ նոյն աւուրս յիւրում լերիին, որ Շահապիվանն անուանի, որ ի մայրենի հաւոյ իւրոյ Գնեյլոյ Գնունւոյ հասեալ էր ցնա»<sup>5</sup>։ Առաջին հայացքից դրան խիստ հակասող տեղեկություն է պարունակում Փավստոս Բուզանդի երկը։ Պատմիչը, անդրադառնալով նույն իրադարձություններին և Արշակ Բ արքայի ու Գնել Արշակունու փոխհարաբերություններին, հայտնում է, որ Շահապիվանը Հայ Արշակունիների արքունի մշտական զորակայանն էր. «Եւ էր բանակ թագաւորին (Արշակ Բ-ի - Ղ.Բ.) ի Շահապիվանի ի բուն բանակի տեղսն Արշակունեացն ի ներքոյ Սիւնեացն և ի վերայ ասպարիսացն»<sup>6</sup>։ Երկուսից մեկը, կամ սխալվում է

<sup>1</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 33:

<sup>2</sup> Ս. Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), քարտեզ, Գ-5:

<sup>3</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 304:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 478:

<sup>5</sup> Մովսես Խորենացի, էջ 283-284:

<sup>6</sup> Փավստոս Բուզանդ, էջ 117:

պատմիչներից մեկը կամ էլ հիշյալ փաստերը պետք է նոր մեկնաբանություն ստանան։ Մեր կարծիքով, պատմիչների մոտ սխալ չկա։ Երբ խոսքը վերաբերում է արքունի բանակի բուն զորակայանին, ապա այն այդպիսի հռչակ կարող էր ձեռք բերել երկարատև գոյության դեպքում, ուստի Փավստոսի հաղորդման ճշմարտացիությունը կասկածներ չի կարող հարուցել։ Ինչ վերաբերում է Մովսես Խորենացու հաղորդմանը, ապա պետք է ուշադրություն դարձնել այն իրողության վրա, որ Գնել Արշակունին որս է կատարել ոչ թե Շահապիվանում, այլ Շահապիվան կոչվող լեռան վրա, որը հավանաբար Ծաղկանց լեռների նշանավոր լեռնագագաթներից մեկն էր։ Այսօր Ծաղկանց լեռներում Աղիովիտ սահմանակցության վրա կա երեք լեռնագագաթ՝ Ալադաղ, Խոնդջար և Ամդաղ։ Առաջինը, չնայած փորձեր են արվել նույնացնելու Ծաղկեռ լեռանը<sup>1</sup>, իրականում Աղի լեռն է<sup>2</sup>, երկրորդը, մեր կարծիքով, ոչ այլ ինչ է, բայց եթե Շահապիվանի լեռը և, վերջապես, վերջինը Ծաղկեռ լեռն է, եթե, իհարկե, այն նույնական չէ Շահապիվանի լեռնագագաթին։ Եթե մեր ենթադրությունը համապատասխանում է պատմական ճշմարտությանը, ապա Շահապիվանի լեռան հարավային լանջերը պետք է պատկանեին Գնունիներին, որտեղ և գտնվում էին Գնել Արշակունու որսատեղերը։ Այլ խոսքով, ոչ մի տարածքային փոխանակություն էլ տեղի չէր ունեցել և ի սկզբանե Գնունիները իշխում էին Աղիովիտի մի մասին։ Հիմնվելով այն փաստերի վրա, որ Ջարիշատը արքունի քաղաք էր և Գնունիները որսատեղեր ունեին Շահապիվանի լեռան շրջանում, մենք գալիս ենք այն եզրակացության, որ Գնունիների տիրույթները գտնվելու էին հյուսիս-արևմտյան հատվածում, իսկ Թովմա Արծրունու տեղեկությունը Արձեշ քաղաքի նրանց պատկանելու վերաբերյալ՝ ուշ ժամանակների կացության արդյունք է, երբ Արձեշն, իրոք, հայտնվել էր հիշյալ նախարարական ընտանիքի տիրույթներում։ Աղիովիտը, ավելի՛ ուշ ժամանակներում, ավելի շատ հայտնի էր Արձիշո գավառ կամ Քաջքերունիք անուններով<sup>3</sup>։

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Տավրուբերան աշխարհի նկարագրությունն ավարտվում է Ապահունիք գավառով, որի տեղադրությունը երբեք կասկածներ չի հարուցել։ Փավստոս Բուզանդի մի տեղեկության համաձայն, հայոց Տիրան թագավորի որսատեղիներից մեկը գտնվում էր

<sup>1</sup> Ք. Խ. Հակոբյան, Առ. Ս. Մելիք-Քախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. Բ, Երևան, 1988, էջ 838:

<sup>2</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 33:

<sup>3</sup> «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», էջ 18. «Աղիովիտ եւ Քաջքերունի Արձեշ է, ուր կան սուրբ ուխտոցն Արծուաբեր եւ Մեծոփ ... եւ Ուզնկայրն, ուր կայ սուրբ Եշանն ամենազօր»։ Տե՛ս նաև էջ 37:

«յերկրին Ապահունեաց, յոտինն մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որսացուք, տեղոյն՝ որում անուն կոչի քաղաք Աղիորսք<sup>1</sup>»: Թովմա Արծրունին պարզորոշ հավաստում է, որ գավառը գտնվել է Խլաթից հյուսիս<sup>2</sup> և որ ուշ պարզորոշ հավաստում է, որ գավառը գտնվել է Խլաթից հյուսիս<sup>2</sup> և որ ուշ ժամանակներում նրա մեջ է եղել Մանազկերտ քաղաքը<sup>3</sup>: Մեկ այլ տեղեկությամբ Ապահունիքը համարվում է Բզունայաց ծովին մերձակա գավառ. «(Հայոց Սմբատ Ա թագավորը - Շ.Բ.) գնացեալ ընդ եզր ծովուն Բզունեաց, ընդ կողմն Ապահունեաց՝ և բանակեցաւ յափն գետոյն, որ իջանէ յԱղձնեաց խոյնոմացն»<sup>4</sup>: Այս տվյալներին ավելանում է «Աշխարհացոյց»-ի շատ հետաքրքիր այն տեղեկությունը, որ Արածանին հոսում էր Ապահունիքի միջով<sup>5</sup> և ոչ թե արևմտյան սահմանագլխով<sup>6</sup>: Ամփոփելով բերված նյութը, դժվար չէ որոշել Ապահունիքի սահմանները: Հարավում դրանք անցել են Նեխ-Մասիքից արևմուտք ձգվող լեռնաճյուղով, արևմուտքում՝ Արածանիից արևմուտք գտնվող ջրբաժան ոչ բարձր լեռներով, հյուսիսում՝ Ծաղկանց լեռների հյուսիս-արևմուտք երկարող լեռնաբազուկով, իսկ արևելքում՝ Աղի լեռնանցքով ու Աղի և Բաղնոց (այժմ՝ Բաղիշան) գետերի ջրբաժանով: Գավառը պատմության մեջ հիշվում է բազմիցս: Ասողիկը հավաստում է, որ X դարում Ապահունիքը պատկանում էր արաբ ամիրաներին, որոնց կենտրոնը Մանազկերտ քաղաքն էր<sup>7</sup>: Բյուզանդական հեղինակները այն գիտեն՝ Ἀπαχουνη, իսկ արաբականները՝ Βαխουαίս գրությամբ<sup>8</sup>: Հայկական վաղ միջնադարի աղբյուրներում հիշատակվում է, ըստ մեծի մասին, Ապահունեաց նախարարական ընտանիքը:

Ապահունիքի կարևոր բնակավայրերից էին ամենից առաջ Մանազկերտ քաղաքը (ուշ շրջանում), Դալարիս կամ Ածուղ (Արծուղ, Արձկաղ) գյուղը, որտեղ կուրացվեց հայոց Տիրան թագավորը<sup>9</sup>, Խարձտոնք գյուղը, Ծմբո գյուղը, Խոսունք և Թոնդրակը<sup>10</sup>:

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 51: Մատենադարանի աշխատակից Գևորգ Տեր-Վարդանյանն իրավացիորեն սրբագրում է այս հատվածի վերջնամասը: Ելնելով այն ճիշտ մտքից, որ որսատեղում հազիվ թե քաղաք գտնվեր, նա ենթադրում է, որ այն եղել է ոչ թե «Քաղաք Աղիորսք», այլ «Քաղաքի որսք»:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 200: «Բուխայ եկն եմուտ ի Խլաթ քաղաք, ճանապարհ արարեալ ընդ կողմն Ապահունեաց»:

<sup>3</sup> Անդ, էջ 348:

<sup>4</sup> Անդ, էջ 366:

<sup>5</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 31:

<sup>6</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, 9-5:

<sup>7</sup> Ասողիկ, էջ 183: Տե՛ս նաև էջ 45, 69, 73, 87, 115, 192, 199, 247, 248, 266, 269-271:

<sup>8</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 196:

<sup>9</sup> Փավստոս Բուզանդ, էջ 52-53:

<sup>10</sup> Ղ. Խճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 129-130:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերը պահպանել են ևս երկու գավառի անուն՝ Կոր կամ Կորի և Խորխոռունիք: Կորի գավառը «Աշխարհացոյց»-ից զատ հիշատակում է նաև Կոստանդին Ծիրանածինը Հարքի և Ապահունիքի հարևանությամբ. «Բայց Մանցիկիերտ ամրոցը, Ապախունի երկիրը, Կորին և Խարկան ևս գտնվում էին իշխանաց իշխանի (իմա՝ Սմբատ Ա - Շ.Բ.) գերիշխանության և տիրապետության ներքո»<sup>1</sup>: Հավանաբար նույն գավառին է վերաբերում Թովմա Մեծոփեցու հիշատակած «Կորոյ ձորը», որը Ղ. Խճիճյանը հակված է տեղադրելու Արձեշի կողմերում<sup>2</sup>: Ղ. Ալիշանը Կորին տեղադրում է Լիզի շրջանում, սակայն ինքն էլ վստահ չէ այդ տեղորոշմանը<sup>3</sup>: Հ. Հյուբշմանը ենթադրում է, որ թերևս գավառանունը պահպանել է Բուլանուխի գետը կամ Քյոր-սուն<sup>4</sup>: Այս տեղադրությունը հետագայում պաշտպանել են Ն. Ադունցը<sup>5</sup> և Ս. Երեմյանը<sup>6</sup>: Վերջինիս կարծիքով, Կորի գավառը ընդգրկել է «Կորոյ ձոր» գետի հովիտը Խաչի (ներկայումս՝ Խաչուլ) լճի ավազանով հանդերձ: Այս տեղադրությունը, որ շատ հիմնավոր է, հակասության մեջ է մտնում Բզունիքի տեղորոշման հետ, որովհետև ստացվում է, որ Կորին պարզապես տարածքային առումով Բզունիքի մի մասն է: Այս իրողությունը, որ ստորև քննության կառնենք, «Աշխարհացոյց»-ի ամենահետաքրքիր առանձնահատկություններից մեկն է:

Խորխոռունիքը որպես գավառ «Աշխարհացոյց»-ից բացի որևէ մեկ այլ սկզբնաղբյուրում չի հիշատակվում: Բոլոր հեղինակներն այն գիտեն որպես նախարարական ընտանիք<sup>7</sup>: Ղ. Ալիշանը այն տեղադրում է Բուլանուխում<sup>8</sup>, Հ. Հյուբշմանը՝ Կորիի և Ապահունիքի միջև<sup>9</sup>, Ն. Ադունցը՝ Բուլանուխում, Բզունիքի և Կորի միջև, Նազիկ լճի շրջակայքում<sup>10</sup>, իսկ Ս. Երեմյանը՝ Բրգ-

<sup>1</sup> Կոստանդին Ծիրանածին, էջ 11. «μετά τῆς χάρας τοῦ Ἀπαχουαίης καὶ τοῦ Χαρκὰ καὶ τοῦ Κορί»:

<sup>2</sup> Ղ. Խճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 524:

<sup>3</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23 (§ 35):

<sup>4</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 197:

<sup>5</sup> Մ. Ադունց, Армения в эпоху Юстиниана, էջ 313:

<sup>6</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 313:

<sup>7</sup> Փավստոս Բուզանդ, էջ 29, 104: Եղիշե, էջ 43, 74, 99, 116, 119, 150: Դազար Փարպեցի, էջ 47, 64, 65, 67, 72: Մովսես Խորենացի, էջ 38, 110, 267, 312, 314: Սեբեոս, էջ 133, 143, 165 և այլն:

<sup>8</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23 (§ 35):

<sup>9</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայն անունները, էջ 197:

<sup>10</sup> Մ. Ադունց, Армения в эпоху Юстиниана, էջ 313: Հեղինակը և՛ Կորիի, և՛ Խորխոռունիքի տեղադրությունը համարում է գուշակություն, քանի որ «Աշխարհացոյց»-ը նրանց տեղադրության վերաբերյալ ցուցումներ չի պահպանել:

նունիքից հյուսիս և Արծկեից արևելք ընկած շրջանում, ենթադրելով, թե «Աշխարհացոյց»-ի հետագա խմբագիրներն են ավելացրել, իմանալով, որ Խորխոռունիների տոհմական գավառն է եղել նույն Բզնունիքը»<sup>1</sup>: Մեր քննության լույսով այս տեղադրությունը, անշուշտ, ընդունելի չէ: Ինչպես ստորև կտեսնենք, Խորխոռունիք գավառ որպես այդպիսին չի եղել և խմբագիրների ստեղծագործության արգասիքն է, իսկ Խորխոռունիների տիրույթները գտնվել են Հարթում՝ Արածանի գետի աջափնյակում: Խորխոռունիները որպես ձեռակա իշխանության երկիր, հավանաբար, արքունիքից ստանում էին Հեր և Զարավանդ գավառների շրջանը:

Տավրուբերանի նկարագրությունը, չնայած Մեծ Հայքի մի շարք աշխարհների նկատմամբ իր մանրակրկիտությանը, ունի մի շարք հակասություններ, որոնք ոչ միայն վկայում են նրա ոչ անաղարտ լինելու և խմբագրման ենթարկվելու մասին, այլև, մեր կարծիքով, հնարավորություն են տալիս վերականգնելու նրա նախնական վիճակը: Համաձայն «Աշխարհացոյց»-ի ընդարձակ և համառոտ խմբագրությունների Տավրուբերանն ունեցել է 16 գավառ, սակայն, եթե համառոտում իրոք թվարկվում են 16 գավառանունն էլ, ապա ընդարձակ խմբագրության մեջ, ինչպես արդեն նշեցինք, հականե հանվանե հիշատակվում են և նկարագրվում միայն 14-ը, ըստ որում, առաջին երկու գավառները՝ Խոյթը և Ասպակունյաց ձորը, պարզապես թվարկվում են: Համառոտ խմբագրության Կորի և Խորխոռունիք գավառանունները ընդհանրապես բացակայում են ընդարձակ խմբագրության մեջ, իսկ նշված գավառների տարածքները, քանի որ նախորդ գավառների տեղադրությունից հետո ազատ տեղ չի մնում, հայտնվում են Հարթի և Բզնունիքի մեջ: Ուստի, եթե ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ երկու խմբագրություններն էլ Տավրուբերանին վերագրում են 16 գավառ, ապա առաջին տպավորությունն այն է, որ վերոհիշյալ գավառանունները ընդարձակ խմբագրության մեջ բացակայում են գրիչների անփութության կամ ձեռագրի վնասվածության պատճառով: Սակայն, ինչպես արդեն վերը նշվեց, Տավրուբերանին 16 գավառ վերագրելու կողմնակիցներից մեկը՝ Ս. Երեմյանը լուրջ կասկածներ ունի, որ Տավրուբերանի նկարագրության մեջ Խորխոռունիք գավառի անունը ավելացվել է «Աշխարհացոյց»-ի խմբագիրների կողմից: Այդուհանդերձ այնքան մեծ է եղել գավառների թվաքանակի հմայքը, որ նա, այնուամենայնիվ, փորձել է բնագիրը հարմարեցնել գավառաքանակին, կատարելով ընդարձակ խմբագրության մեջ սրբագրումներ և մուծելով Կորի ու Խորխոռունիք գավառանունները: «Որոյ ըստ հիւսիսոյ Աղիովիտ գաւառ, եւ զմտիւք նորա Ապահունիք. ընդ որոյ

մէջն անցանէ Արածանի [եւ ի հարաւոյ նորա՝ Կորի]: [եւ] յեզրն [ծովին] Բզնունեաց [է Խորխոռունիք գաւառ]»<sup>1</sup>: Վերը կատարված քննությունը և մասնավորապես Կորիի և Խորխոռունիքի տեղադրությունը, մեր կարծիքով, այս սրբագրությունը դարձնում են անհնարին, քանի որ ոչ մի հեղինակ իր նկարագրած գավառների տարածքում չէր փորձի տեղադրել մեկ այլ գավառ: Եվ վերջապես, եթե հիշյալ գավառներն իրոք տեղ գտած լինեին ընդարձակ խմբագրության նկարագրության մեջ, ապա ենթադրելի է դրանց հիշատակությունը ոչ թե նկարագրության վերջում, այլ միջևամասում, որտեղ Հարթի նկարագրությանը պետք է հաջորդեր թերևս «որ է Խորխոռունիք» արտահայտությունը և այնուհետև Կորիի հիշատակությունն ու դիրքի պարզաբանումը: Իհարկե, հեղինակն իր բնագրային մուծումներն այս տեսքով կարող է հիմնավորված համարել, հենվելով համառոտ խմբագրության մեջ գավառների թվարկման հերթականության վրա, որտեղ Կորին և Խորխոռունիքը ամենավերջին գավառներն են<sup>2</sup>: Սակայն, երբ Տավրուբերանի առաջին 14 գավառների տեղադրությունից հետո այլևս հիշյալ աշխարհում ազատ տարածք չի մնում, մնում է ենթադրել, որ Կորին և Խորխոռունիքը համառոտ խմբագրության մեջ ավելացվել են հետագայում: Ինչ վերաբերում է գավառների թվաքանակին, ապա ընդարձակի մեջ 16 թիվը պետք է համառոտ խմբագրության ազդեցություն համարել: Ավելի ուշ շրջանում գրիչներից մեկը՝ ծանոթ լինելով համառոտ խմբագրության մեջ հանդիպող 16 գավառանուններին, գավառաքանակը վերջինիս նմանությամբ դարձրել է 16 առանց փոփոխություններ ու մուծումներ կատարելու:

Եվ, այնուամենայնիվ, քանի՞ գավառ է ունեցել Տավրուբերանը: Մենք բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ հիշյալ աշխարհի գավառաքանակն անգամ 14 չէր: Ընդարձակ բնագրի թռուցիկ ծանոթությունն անգամ ցույց է տալիս, որ բացառությամբ Խույթի և Ասպակունյաց ձորի, մնացած բոլոր գավառների տեղադիրքը ճշտվում է կամ հարևան վարչական միավորի համեմատությամբ կամ էլ աշխարհի կողմերը կամ աշխարհագրական այս կամ այն կետը (լեռ, լեռնաշղթա, գետ, լիճ) հիմք ընդունելով: Այս իրողությունը իրավունք է տալիս ենթադրելու, որ Խույթն ու Ասպակունյաց կամ Ասպակունյաց ձորը նույնպես ավելի ուշ շրջանի մուծում են, կատարված սակայն «Աշխարհացոյց»-ի հեղինակի կողմից:

Աղձնիքի քննության ժամանակ մենք ցույց տվեցինք, որ III դարում, երբ պարսիկները ժամանակավոր տիրացան Հայկական Տավրոսից հարավ ընկած

<sup>1</sup> Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 108:

<sup>2</sup> Ա.Պ. Արբահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349: К.П. Патканов, Армянская география VII века, էջ 18:

<sup>1</sup> Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 55:

շրջաններին, հայոց արքունիքը բանակցությունների ընթացքում կարողացավ իր վերահսկողության տակ պահել Հայկական Տավրոսի լեռնանցքներն ու հարավահայաց լանջերի նրանց մերձակա տարածքները: Այդ պատճառով էլ բնաշխարհագրական տեսակետից Աղձնիքին հարող և Տավրոսի հարավային փեշերին գտնվող հիշյալ երկու գավառները հայտնվեցին Տավրուբերանի մեջ, կապված ոչ թե վարչական բաժանման անհրաժեշտության, այլ քաղաքական որոշակի կացության հետ: Դժվար է ասել, թե Ասպակունյաց ձորը կամ Խույթը մինչև Տավրուբերանին անցնելը եղել են առանձին գավառներ, թե Սանասունքի մաս են կազմել: Սակայն առավել հավանական է, որ արդեն III դարում դրանք առանձին վարչական միավորներ էին, որոնցից առաջինը մինչև Տավրուբերանի մեջ մտնելը Աղձնյաց բոեշխությանը ենթակա նախարարություն էր, իսկ երկրորդը՝ տոհմա-ցեղային կյանքով ապրող իշխանություն:

Տավրուբերանի մյուս գավառների կապակցությամբ կարելի է ենթադրել, որ դրանց մի մասը սկզբնապես գոյություն չի ունեցել և ձևավորվել է ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով: Անտարակույս է, որ վաղնջական ժամանակներում Բզնունիքի մաս պիտի կազմեր Երևարքը, որի հետագա հանդես գալը սկզբնաղբյուրների բացակայության պատճառով դժվար է բացատրել: Չի բացառվում, որ այն կարող էր Աղձնիքի մաս կազմել, երբ դեռ վերջինիս մեջ էր Մոկքը, և III դ. իրադարձությունների հետևանքով, անջատվելով Աղձնիքից, վերածվել էր առանձին գավառի: Բնական է, որ այս բացատրության դեպքում բացառվում է հիշյալ գավառի վերաբերելը Բզնունիքին:

Ելնելով այն հանգամանքից, որ Մարդաղի և Դասնավորք գավառների տարածքը կազմում է բնաշխարհագրական ամբողջություն, հնարավոր է, որ Դասնավորքը ուշ է հանդես եկել, առանձնանալով Մարդաղիից: Սակայն չի բացառվում մեկ այլ հնարավորություն ևս, որ Դասնավորքը Դալառի հետ մեկտեղ սկզբում մաս է կազմել Տվարածատափ գավառի: Ի մի բերելով բերված նյութերը և կատարված ենթադրությունները, կարելի է եզրակացնել, որ Տավրուբերանի գավառների սկզբնական քանակը, երբ Հարքն արդեն տրոհվել էր մի քանի գավառների, հավանաբար 9-ից չէր անցնում, որոնք էլ համապատասխանում էին Պլինիոս Ավագի հիշատակած զորավարություններին: «Աշխարհացոյց»-ը V դարում արձանագրել է արդեն 14 գավառ, որից Խույթը և Ասպակունյաց ձորը նախապես պետք է պատկանեին Աղձնիքին, իսկ համառոտ խմբագրության մեջ մատուցվում է 16 գավառ, որոնցից վերջին երկուսից Կորին հանդես էր եկել V դարից հետո և գոյություն ուներ X դարում, իսկ Խորխոռունիքը, դատելով մատենագիտական նյութից, այդպես էլ ինքնուրույն գավառի չվերածվեց:

Մեզ մնաց քննարկելու Տավրուբերան կամ Տուրուբերան աշխարհի վարչաքաղաքական ձևավորման խնդիրը: Դեռ ժամանակին Ղ. Խնձիճյանը կարծում էր, որ Տավրուբերան անունը պետք է ստուգաբանել «Տարոնոյ բերան» կամ «Տորոսի բերան», իսկ Տուրուբերանը՝ «Դուռնուբերան»: Այսինքն աշխարհն ստացել է իր անունը Տավրոս լեռների լեռնանցքներից (բերաններից)<sup>1</sup>: Հ. Հյուբշմանը, դրան հակառակ, Տուրուբերան անվան ծագումն ու իմաստը մթին է համարում, մասնավորեցնելով, որ աշխարհանվան երկրորդ մասը կարող է հայերեն «բերան» բառը լինել<sup>2</sup>: Ս. Երեմյանը նույնպես հակված է Տավրուբերան անվանումը բխեցնելու Տավրոյ բերան լեռնանցքի անունից<sup>3</sup>, սակայն Թ. Հակոբյանի համար այն շարունակում է մուլթ մնալ<sup>4</sup>: Մեր կարծիքով, Տավրուբերան և Տուրուբերան անվանումները նույնական են, որոնցից երկրորդը պարզապես ավելի հին է: Առավել հին Տուրուբերան ձևից<sup>5</sup> հնչյունափոխության հետևանքով հանդես է գալիս Տուրուբերանը, որի առաջին «ու»-ն հնչյունական օրինաչափությունների համաձայն վերածվում է «աա»-ի, ծնունդ տալով Տասարուբերան կամ ավելի ճիշտ, Տավրուբերան աշխարհագրական անվանը:

Երբ է ծագել Տավրուբերան կամ Տուրուբերան վարչական անունը: Հ. Հյուբշմանը գտնում էր, որ «Աշխարհացոյց»-ից առաջ այդ անունով նահանգ չի եղել և աշխարհանունն էլ մինչև Ղ. Խնձիճյանը չի օգտագործվել<sup>6</sup>: Գերմանացի հայագետի կարծիքով հետնագույն Տուրուբերան նահանգը զարգացել է այն երկրից, որ VII դարում հայտնի էր «Աեպիական գնդի երկիր» անունով<sup>7</sup>: Տավրուբերանի առաջացումը 591թ. Հայաստանի երկրորդ բաժանման հետ են կապում նաև Ն. Արոնցը, Ս. Երեմյանը, Թ. Հակոբյանը և ուրիշներ<sup>8</sup>:

Տավրուբերանի ծագման մեր մեկնաբանությունը եապես տարբերվում է հարգարժան հայագետների առաջ քաշած տեսակետից: Դիմենք աղբյուրներին: Դեռևս V դարում եղիշեն հիշատակում է Տուրուբերանի եպիսկոպոս Զասուկին: Այդ անունը պատմիչի երկի տարբեր ձեռագրերում տարբեր տարըն-

<sup>1</sup> Ղ. Խնձիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 88:

<sup>2</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 82:

<sup>3</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 85:

<sup>4</sup> Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 160:

<sup>5</sup> Տուար = Արշառ բնիկ հայերեն բառ է, որ ըստ Հ. Աճառյանի ծագում է Հնիս. dīparo - «արջառ» բառից («Հայերեն արմատական բառարան», հ. Դ, Երևան, 1979, էջ 424):

<sup>6</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 80:

<sup>7</sup> Անդ, էջ 81-82:

<sup>8</sup> Н. Адомц, Армения в эпоху Юстиниана, էջ 231: Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 85: Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 159:

թերցումներ ունի՝ **Տորութեանոյ, Տուրութեանոյ, Տարութեանոյ, Տուրութեանոյ, Տրութեանոյ, Տուրութիւնոնոյ, Տարութեանոյ, Տուրութեանոյ**, որոնք իրավունք են տալիս, ինչպէս կատարել է Ե. Տեր-Մինասյանը, ճիշտ ընթերցում համարել **«Տուրութեանոյ»**-ը<sup>1</sup> կամ էլ **«Տարութեան - Տարութեան»**-ը: Նույն անձնավորության մասին խոսելիս Ղազար Փարպեցին գրում է. «տէր **Քասուն՝ Տարբերունոյ** եպիսկոպոս»<sup>2</sup>, որը Ղ Ինճիճյանի կարծիքով ճիշտ ձևն է<sup>3</sup>: Մխիթարյան հեղինակն իր տեսակետը հիմնավորում է այն փաստով, որ Տարբերունիի հարևանությամբ հիշատակվում է Մարդաստանի եպիսկոպոս Երեմիան, սակայն այդ կովանը շատ թույլ է, որովհետև Բզնունյաց եպիսկոպոսի հարևանությամբ հիշվում է Տայքի եպիսկոպոսը, Մարդադիհիսի հարևանությամբ՝ Սյունյացը, Մոկացի հարևանությամբ՝ Վանանդինը և այլն<sup>4</sup>: Ն. Արոնցը Տուրութեանի կամ Տարբերունիի եպիսկոպոս է համարում Խորխոռունյաց եպիսկոպոսին, պատճառաբանելով Խորխոռունյաց տոհմի արքունիքում ունեցած բարձր դերով<sup>5</sup>: Մեր հետազոտությունները այս խնդրում մեզ բերել են այն համոզման, որ եղիշեն Տուրութեանի եպիսկոպոս է համարել Տավրոսի լեռնանցքների շրջանի հոգևոր առաջնորդին, այսինքն Սանասունքի և հարակից գավառների եպիսկոպոսին<sup>6</sup>: Այս տեսանկյունից ոչ թե եղիշեի **Տուրութեանը** պետք է ուղղել **Տարբերունի**, այլ Ղազար Փարպեցու **Տարբերունիին՝ Տարբերանի** կամ **Տարութեանի**: Պատահական չէ, որ Տարբերունիին Փարպեցու մոտ սեռական հոլովով ոչ թե **«Տարբերունայ»** է, այլ **«Տարբերունոյ»**, որն անուղղակիորեն հավաստում է մեր կարծիքի ճշտությունը: Տարբերունիի կապակցությամբ հարցը բարդանում է, երբ դիմում ենք Վարդան Վարդապետի տվյալներին: Վերջինիս վկայությամբ **«Առբերան եւ Տարբերունի Բերկրի է, ուր կայ սուրբ ուխտն Տէր Յուսկայ որդւոյն»**<sup>7</sup>: Ստացվում է, որ Տարբերունին կամ Առբերանիի մի մասն է կամ էլ նրան հարևան մի գավառ: Տարբերունի անունով աշխարհագրական տեղանք հիշատակում է նաև Առաքել Դավրիժեցին, ըստ որի հայոց կաթողիկոսը **«ի գաւառէն Տարբերունոյ մինչ ի քաղաքն յստան խաչալամով էր եկեալ»**<sup>8</sup>: Առաջնորդվելով կաթո-

<sup>1</sup> Եղիշե, էջ 28. «Քասու եպիսկոպոս Տուրութեանոյ»:

<sup>2</sup> Ղազար Փարպեցի, էջ 44:

<sup>3</sup> Ղ Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 193:

<sup>4</sup> Եղիշե, էջ 28:

<sup>5</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 331-332:

<sup>6</sup> Б. А. Арутюнян, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, տե՛ս «Кавказ и Византия», вып. I, Ереван, 1979, էջ 23:

<sup>7</sup> «Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի», էջ 18, 38:

<sup>8</sup> Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, աշխատությամբ Լ.Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 334:

ղիկոսի անցած երթուղով՝ Բագավան-Հին Բայազետ-Արգիլան-Տարբերունի-Վան (Տոսպ) - Ոստան, Հ. Հյուբշմանը ցույց է տալիս, որ հիշյալ Տարբերունին իրոք պետք է փնտրել Բերկրիի մերձակայքում, այսինքն այն նույնական է Վարդանի **«Աշխարհացոյց»**-ի Տարբերունիին: Ավելին, այն կարծես համընկնում է Առբերանիին: Ուստի և նա հարում է Ղ Ինճիճյանի տեսակետին, թե Քասուն Տարբերունի գավառի եպիսկոպոսն էր<sup>1</sup>: Վարդանի և Առաքել Դավրիժեցու տեղեկությունները պարզաբանում են երկու հարց: Առաջին, թե ընդունենք էլ, որ եղիշեի Տուրութեանը Տարբերունի է և նույնական Բերկրիի շրջանին, ապա այն ստիպված ենք տեղադրել Վասպուրականում, որը քիչ հավանական է: Եվ վերջապես, Տավրութեան - Տուրութեանը և Տարբերունին տարբեր աշխարհագրական հասկացություններ են, որոնցից երկրորդը կամ զբաղեցրել է Առբերանիի մի մասը կամ էլ գտնվել է վերջինիս հետ սերտ հարևանության մեջ՝ տեղակայվելով Բերկրիի մերձակայքում: Թե որոշակիորեն որտե՛ղ է գտնվել Տարբերունին, որի ազդեցությամբ գրիչները աղավաղել են Տավրութեան կամ Տուրութեան անունը եղիշեի և Ղազար Փարպեցու ձեռագրերում, առանձին ուսումնասիրության հարց է: Սակայն որպես նախնական ենթադրություն, պետք է մտածել, որ սկզբնապես գավառանունը ոչ թե եղել է Տարբերունի, այլ Տարբերանի, որը «ունի»-ով վերջացող այլ տեղանունների ազդեցությամբ ենթարկվել է «ունի»-ացման: Դրա օգտին է խոսում այն հանգամանքը, որ Վարդանի և Առաքել Դավրիժեցու Տարբերունին չունի Տարբերունիք ձևը, որն ավելի տրամաբանական կլիներ: Եթե անունս սկզբնապես Տարբերանի է եղել, ապա հասկանալի է դառնում «ք» մասնիկի բացակայությունը: Առբերանի գավառն իր անունն ստացել էր, ամենայն հավանականությամբ, Առեստ կամ Բերկրի գետի (ներկայումս՝ Բենդիմահի) գետաբերանից, որտեղ գտնվում էին արքունի ձկնորսարանները<sup>2</sup>: Այսինքն գավառը տարածվում էր գետաբերանի շրջանում: Տարբերանի անվանումը պետք է նշանակեր **«գետաբերանից հեռու գտնվող»**<sup>3</sup>, հետևաբար, հիմք ընդունելով Վարդանի **«Աշխարհացոյց»**-ի ցուցումն այն մասին, որ **«Առբերան եւ Տարբերունի Բերկրի է»**, Տարբերանին պետք է տեղադրել Առեստ գետի վերին հոսանքի շրջանում՝ աշխարհացույցյան Գառնի կամ Դառնի գավառի տեղում: Այլ խոսքով, թե Առբերանին գտնվում է անմիջապես Առեստի գետաբերանի շրջանում, ապա Տարբերանին տեղակայվում է դրանից հեռու: Վարդան Վարդապետի ժամանակներում Առեստի ողջ ավազանը Բզնունյաց ծովի հյուսիս-

<sup>1</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 78-80:

<sup>2</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», էջ 32: Փավստոս Բագանդ, էջ 19. «Եւ աւին ծովուն Բզնունեաց, յԱռեստն աանի, ի ձկնատեսանսն արքունի ի վերայ գետակին»:

<sup>3</sup> Հ. Լեւոնյան, Հայերեն արմատական բառարան, Դ հատ., էջ 381-382:



արևելյան ափագծով արդեն կոչվում էր Բերկրի, որը և ստիպել է հեղինակին Առբերանին և Տարբերանին համարելու Բերկրի գավառի մասեր:

Մենք պարզեցինք, որ **Տուրուբերան** կամ **Տավրուբերան** անունը գոյություն ուներ դեռևս մինչև «Աշխարհացոյց»-ի հանդես գալը և կարող ենք ասել, որ այն հետագայում, մինչև նոր և նորագույն ժամանակները, այլևս չի օգտագործվել: Հարց է ծագում, թե ինչու՞ 591 թ. հետո հանդես եկած տեղանունը, եթե այդ ճիշտ է, այլևս ոչ մի կիրառություն չի գտնում սկզբնաղբյուրներում: Պատասխանը մեկն է: 591 թ. հետո **Տավրուբերանի** տարածքը պաշտոնապես կոչվում էր ոչ թե **Տավրուբերան**, այլ **Մեծ Հայք**<sup>1</sup>, հետևաբար Տավրուբերանի ծագումը պետք է փնտրել ավելի վաղ ժամանակներում, ինչպես հավաստում է եղիշեի երկը:

Կղզվդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրությունը» արձանագրել է, որ «Նըշվածից ներքև՝ մինչև Եփրատի ճյուղը վերցրած հատվածի հյուսիսային մասերում են գտնվում սկսած արևմուտքից<sup>2</sup>, գավառներ Բասիլիսենեն, և Բուբենեն և Արսեսան, իսկ նրանցից ներքև՝ Ալիլիսենեն և Աստաունիտիսը և հենց գետի ճյուղավորման մոտ՝ Սոֆենեն»<sup>3</sup>: Մենք Բարձր Հայքի առնչությամբ ցույց տվեցինք, որ Արսեսան նույնանում է Արսիքին և II դարում կազմել է առանձին աշխարհ, իսկ Ալիլիսենեն համարժեք է Եկեղիքին լայն առումով և ընդգրկել է Բարձր Հայքի տարածքի մեծ մասը: Ուսումնասիրողներն առանց բացառության Աստաունիտիսը նույնացնում են Հաշտյանքին և բնականաբար տեղադրում Ճապաղջրի շրջանում: Սակայն իրականում այդ երջանիկ մոլորություն է, որովհետև Պտղոմեոսի՝ Αστουσιένε-ը իրականության մեջ առանձին աշխարհ է, որը տարածքային առումով գրեթե համընկնում է Տավրուբերանին կամ Տուրուբերանին: Գուցե և առաջին հայացքից անընդունելի այս դրույթը զարմանալիորեն իր հաստատումն է գտնում հայկական աղբյուրներում: Եթե Փավստոս Բուզանդի տեղեկությունները վերաբերում են Հաշտեանք գավառին<sup>4</sup>, ապա Պատմահոր վկայություններից մի քանիսը անտարակույս առնչվում են Հաշտենից աշխարհին: Մասնավորապես, անդրադառնալով Արշավիր Կամսարականի որդի Սպանդարատի ճակատագրին, որի բոլոր ազգականներին կոտորեց հայոց Արշակ Բ թագավորը, Մովսես Խորենացին գրում է. «Եւ ոչ ոք ի նոցանէ ապրեցաւ, բայց Սպանդարատ որդի Արշա-

րի. քանզի ունէր կին Արշակունի, որ և բնակեցաւ ի նորին ժառանգութեան ի կողմանս Տարօնոյ և Հաշտենից, իբր տրտունջ զհօրեղբօրէն իւրմէ եղեալ զՆերսեհէ. որոյ աղագաւ և ոչ ի կոտորման նոցա դիպեցաւ: Այլ լուեալ զթօթըն՝ հանդերձ որդուվքն Շաւարշաւ և Գազաւոնիւ և բոլոր ընտանեօքն գնայ փախստական ի Յոնիս»<sup>1</sup>: Այս հաղորդման մեջ Հաշտեանքը և Տարօնը հանդես են գալիս որպէս մեկ միասնական վարչական շրջան, որի ինչ որ մի հատվածում՝ ապագա Հաշտեանք գավառում, բնակվում էին, Արշակունյաց տոհմի սեպուհները: Կարծում ենք, որ աշխարհի բովանդակությունն ունեն Թովմա Արծրունու երկում երկու անգամ հիշատակված Հաշտենից կողմերը: Արծրունյաց պատմիչի ասելով Վաչեի որդի Սահակը Արտաշես թագավորից ստանում է Աղբակ գավառը, և ամուսնանում Փոքր Աղբակի տիրոջ Ջալլամար իշխանուհու դուստր Անուշի հետ: Այնուհետև նա իր որդի Աշոտին է թողնում իր տոհմական առաջին տիրույթը լեռնակողմերում, որպեսզի «շինել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի գաւազ տանն Արծրունեաց: Եւ երթեալ Աշոտ ոչ խորհրդական իմացուածովք մտանէ ի լեռանն. և յելուզակք ոմանք ի կողմանց Հաշտենից ամրանային ի լերինն. պատահեն միմեանց և մեռանի անդ անզգուշաբար ի յաւակնայեղ դիմացուածոյն»<sup>2</sup>: Դժվար չէ տեսնել, որ վաղնջական ժամանակներում, անկախ այն հանգամանքից, թե որ Արտաշեսի<sup>3</sup> օրոք են կատարվել այս իրադարձությունները, Արծրունիները տիրույթներ ունեին Աղձնիքում, որի հարևանությամբ գտնվել են Հաշտենից կողմերը: Պատմիչի մյուս տեղեկությամբ պարսից զորավար «Հագարաուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն»<sup>4</sup>: Այս հաղորդման մեջ հետաքրքիրն այն է, որ եթե Հաշտեանքը գավառ է, ապա պարսից զորավարը ոչ մի կերպ չէր կարող գործ ունենալ Ծոփա գավառի հետ, իսկ եթե Ծոփքը աշխարհ է, ապա Հաշտեանքը պետք է նրա մեջ մտներ: Ուստի, ամենայն հավանականությամբ, Թովմա Արծրունին երկուսի մեջ էլ աշխարհի գաղափար է դրել: Անշուշտ կարելի է վիճել, թե որքանով են մեր եզրակացությունները Հաշտեանքի աշխարհ լինելու վերաբերյալ ճիշտ, սակայն այդ վիճարկումը ակնմաստ է դառնում Հովհան Մամիկոնյանի տեղեկությունների լույսով: Տարօնի պատմիչը Հաշտեանքը հիշում է բազմիցս, սակայն առանձնահատուկ

<sup>1</sup> Georgii Cyprii Descriptio orbis Romani, էջ 48:

<sup>2</sup> Հույն աշխարհագրագետի երկում բացահայտ թյուրիմացություն կա: Նշված երկրները հիշատակվում են ոչ թե արևմուտքից, այլ արևելքից սկսած: Ասենք, որ նման սկզբունքը հասկանալի է մյուս երկրամասերի աշխարհագրական հերթականությունից:

<sup>3</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 6: Թարգմանությունը Գ. Մուրադյանի:

<sup>4</sup> Փավստոս Բուզանդ, էջ 21, 29:

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 295: Տե՛ս նաև էջ 137. «որ ի կողմանս Հաշտենից», էջ 193. «Իբրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից»:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 90:

<sup>3</sup> Ըստ երևույթին դեպքերը վերաբերում են Արտաշես-Տրդատ Ա-ի ժամանակաշրջանին:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 134:

կարևորություն ունի ներքոհիշյալ վկայությունը: Կեսարիայի հայրապետը նամակ է ուղարկում Գրիգոր Լուսավորչին և «*հրեա դարձան պատգամաւորքն առ սուրբ Գրիգորին, ոչ գտին զնոսա ի Տարան, այլ անցեալ զնացին ընդ կողմանս Հաշտենից, յԱյրարատեան գաւառ ի Վաղարշապատ քաղաք»*<sup>1</sup>: Ուշագրավ է պատմիչի տեղեկությունն այն մասին, որ պատգամավորները Այրարատ են գնացել **Հաշտենքի կողմերի** վրայով, որովհետև Տարոնից Այրարատ գնացողը ոչ մի կերպ չէր հայտնվի **Հաշտենք գավառում** առանց անօգուտ մի մեծ շրջան կատարելու: Ուստի գավառները մինչև Այրարատ համարվել են **Հաշտենից կողմեր**: Դժվար է այս փաստը գերազնահատել, սակայն պատմիչի բազմաթիվ հիշատակությունների մեջ սա միակն է, որ վկայում է **Հաշտենք** կամ **Հաշտենից կողմեր** աշխարհի գոյության մասին:

Իսկ ի՞նչ է նշանակում **Հաշտենք** և ինչպե՞ս է այդ անունը հայտնվել աշխարհի վրա: Առաջին տպավորությունն այն է, որ աշխարհն իր անունը ստացել է հեթանոսական զոհաբերությունների համար, քանի որ Ագաթանգեղոսը Տարոնի երկրի Վահեվանյան մեհյանը կոչում է «*յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ»*<sup>2</sup>: Սակայն Հաշտենքը արդեն V դարում գրվում էր «*հ*»-ով և ոչ թե «*յ*»-ով, ուստի աշխարհանունը զոհաբերության հետ կապելը պետք է մերժել: Ոչ պակաս արժեքավոր է Ագաթանգեղոսի մեկ այլ տեղեկությունը, ըստ որի Վահեվանյան մեհյանը եղել է «*ութերորդ պաշտոն հռչակաւոր, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի»*<sup>3</sup>: Մենք չգիտենք, թե հին Հայաստանում «*ութ*»-ը համարվել է սուրբ թիվ թե՛ ոչ, սակայն հակված ենք կարծելու, որ **Հաշտենք** անունը անմիջական աղերս ունի «ութերորդ հռչակավոր սրբատեղիի» հետ, այսինքն նշանակել է «*ութերորդ մեհյանի երկիր*»: Անունս, հավանաբար, ծագում է պահլավական «*հաշտ*» բառից, որ թարգմանվում է «*ութ*»: Նման մեկնաբանությունը ցույց է տալիս, որ աշխարհի անունը պարթևական ծագում ունեցող հայ Արշակունի թագավորներից մեկի արգասիքն է, ամենայն հավանականությամբ, Տրդատ Ա-ի վարչական վերափոխությունների քաղաքականության արդյունքը:

Երրորդ դարի ընթացքում Մեծ Հայքի թագավորությունը ենթարկվեց Սասանյանների պետության մի շարք արշավանքներին, կարճ ժամանակով ռազմակալվեց և անգամ տարածքային կորուստներ ունեցավ, որոնք վերադարձվեցին միայն Մծբինի 298 թ. հաշտության պայմանագրի կնքումից հետո հռոմեացիների կողմից: Աղձնիքի կորուստը և Հայկական Տավրոսի լեռնանցքնե-

<sup>1</sup> Հովհան Մամիկոնյան, էջ 46:

<sup>2</sup> Ագաթանգեղոս, էջ 422, § 809:

<sup>3</sup> Անդ:

րի ու հարակից տարածքների Մեծ Հայքի կազմում մնալը առաջ բերեցին վարչական նշանակալից տեղաշարժեր: **Հաշտենից կողմերը** հայտնվեցին անմիջապես սահմանազլխին, որը մեծացրեց նրանց ռազմավարական նշանակությունը: Լեռնանցքներն իրենց ամրացված շրջատարածքով պատճառ դարձան, որ **Հաշտենից կողմերը** ստանան **Տավրոսբերան** կամ **Տուրոսբերան** անունը: Ըստ երևույթին, ելնելով երկրի պաշտպանության խնդիրներից, Հաշտյանքի մի հատվածը միացվեց Ծոփքին, որով վերջնականապես ձևավորվեց աշխարհացույցյան Ծոփք աշխարհը: Մեր հետագա մտքերը նույնպես լիակատար ճշմարտության հավակնություն չունեն, սակայն դեպքերի ընթացքը պատկերացնում ենք ներքոհիշյալ ձևով: Մամիկոնյանների տոհմի բարձրացումով Հաշտենից կողմերում իշխող կուսակալները, որոնք պատկանում էին Կամիհական տոհմին, աստիճանաբար մղվեցին հետին պլան: Շատ հնարավոր է, որ այդ արքունիքի խորապես մտածված քաղաքականության անմիջական հետևանքն էր: Կամիհական տոհմի իշխանները, որոնք՝ դատելով աղբյուրներից, կոչվում էին նաև Հաշտենից իշխաններ<sup>1</sup>, նշանակվեցին արքունի սեպուհների տիրույթների կառավարիչ, որը և պատճառ դարձավ, որ դրանք աստիճանաբար ձևավորվեն որպես **Հաշտենից գավառ**:

298թ. Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան սահմանները վերականգնվեցին<sup>2</sup>, սակայն պատմական զարգացման հետևանքով ձևավորված ներքին վարչական բաժանումները դեռ մի որոշ ժամանակ պահպանվեցին:

Մամիկոնյանների որպես սպարապետների ընտանիքի օրավուր բարձրացումը աստիճանաբար դուրս մղեց դեռևս ոչ այնքան արմատավորված Տավրոսբերան անվանումը, որը փոխարինվեց **Տարոնի երկիր** կամ **Տարոնի կողմն** անուններով, կապված այն հանգամանքի հետ, որ սպարապետների տիրույթները գտնվում էին Տարոն գավառում: Դրա արձագանքն է Փավստոս Բուզանդի հաղորդումն այն մասին, որ Արշամունիքը Տարոն գավառի նահանգումն էր<sup>3</sup>: Պատմիչը ևս մի քանի անգամ օգտագործում է «**Տարոնյ երկիր**» արտահայտությունը<sup>4</sup>, որը ոչ թե գավառի, այլ աշխարհի ընկալում ունի: «**Աշխարհացոյց**»-ում ևս Տավրոսբերանին համարժեք է համարվում Տարոնը. «*Տարոն*

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 21. «զիշխանն Հաշտենից գ՛րատ», էջ 29. «զԳնիթ իշխան Հաշտենից գաւառին ի Կամիհական տոհմէն», էջ 17. «Վարազ Կամիհական»: Մովսէս Խորենացի, էջ 260. «զԳագ իշխանն Հաշտենից»:

<sup>2</sup> Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչաքաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, թիվ 2, էջ 79-93:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդ, էջ 123. «Մրջինիկ, յԱրշամունեայց տեղեացն ի նահանգն Տարոն գաւառն»: «Գաւառէն»-ը պետք է լիներ «գաւառին», որը «նահանգն» բառի աղբյուրային փոփոխվել է և դրվել բացառական հոլովով:

<sup>4</sup> Անդ, էջ 7, 42, 191:

բերան որ է Տարոն»<sup>1</sup>, իսկ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի մեջ հանդիպում է «զկողմամբ Տարօնոյ»<sup>2</sup> վարչական հասկացությունը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Տարօնոյ աշխարհի համարժեք: Ժողովրդի մեջ, հավանաբար, դեռ պահպանվում էր Հաշտենից կողմանք անունը, որը պահպանվել է, ինչպես արդեն նշվեց, հայկական մի շարք աղբյուրներում:

387 թ. Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև: Մինչ այդ ավատատիրական հարաբերությունների զարգացումը ծանր հարված էր հասցրել Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանմանը և «Տարօնոյ երկիր» հասկացությունը շատ դեպքերում օգտագործվում էր գավառի իմաստով: Լեռնային Աղձնիքը՝ անջատվելով Աղձնայաց բրեշխությունից, միացվեց Արևելահայկական թագավորությանը, սակայն դժվար է ասել որպես վարչական առանձին շրջան թե ինչոր վարչական միավորի բաղկացուցիչ մաս: Շատ հնարավոր է, որ այն հայտնվեց Մամիկոնյանների ազդեցության ոլորտում: Լեռնային Աղձնիքը Տավրոսի լեռնանցքների շրջանով էլ ներկայացնում է Տուրուբերանի եպիսկոպոսությունը եղիշեի երկում:

591 թ. Հայաստանի երկրորդ բաժանումից հետո Մորիկ (Մավրիկիոս) կայսրը տիրացավ Տավրուբերան աշխարհի ամբողջ տարածքին: Կայսրության շահերը պահանջում էին նոր նվաճված երկրամասերը վարչականորեն ամուրկապել պետությանը, ուստի Մորիկը վերականգնեց նախկին աշխարհները, այքի առաջ ունենալով հին հայկական վարչական բաժանման համակարգը: Տավրուբերանը նրա կողմից վերանվանվեց Մեծ Հայք<sup>3</sup> և նրա կողմից հանվեցին Հայկական Տավրոսից հարավ գտնվող գավառները, որոնք միացվեցին Մետապոտամիա կամ Միջագետք պրովինցիայի մաս կազմող Արզանենայի կլիմային (երկրին): Համենայն դեպս, Արզանենա-Աղձնիքի մեջ մտավ ոչ միայն լեռնային Աղձնիքը, այլև Տավրուբերանի ենթակայության տակ գտնվող Ասպակունյաց ձորն ու Խուլթը<sup>4</sup>: Մորիկ (Մավրիկոս) կայսեր վարչական վերափոխությունները երկար կյանք չունեցան: Քաղաքական ասպարեզում հայտնվեցին արաբները, որոնց նվաճումները Առաջավոր Ասիայի երկրներում և Հայաստանում մասնավորապես հիմնովին փոփոխեցին վարչական բաժանումների տեղական համակարգը: Ըստ աշխարհների վարչական բաժանումը գործնականում վերացավ, պահպանվելով ժողովրդի հիշողության, պատմիչների երկասիրությունների և «Աշխարհացոյց»-ի մեջ, վերածվելով անփոփոխ դասական վարչական բաժանման համակարգի:

<sup>1</sup> Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու, էջ 29:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, էջ 228: Տե՛ս նաև էջ 295. «Ի կողման Տարօնոյ և Հաշտենից»:

<sup>3</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 48: Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68:

<sup>4</sup> Georgii Cypril Descriptio orbis Romani, էջ 48:

## ԳՐՈՒՄ Ե Մ Ո Կ Զ

Մոկքը հանդիսացել է Մեծ Հայքի ամենափոքր աշխարհը, որի տարածքը, որ «Աշխարհացոյց»-ի տվյալների համաձայն վարչականորեն բաժանվում էր 9 գավառների, զիջում էր զգալի չափով Մեծ Հայքի առավել մեծ գավառների տարածքին<sup>1</sup>: «Աշխարհացոյց»-ի ընկալությունը համոզիչ ցույց է տալիս, որ ի տարբերություն Մեծ Հայքի մյուս աշխարհների, Մոկքի վարչական ձևավորումը տեղի ունեցավ անհամեմատ ուշ, ամենայն հավանականությամբ, III դարի կեսերին: Մոկքը չի հիշատակվում Կղավդիոս Պտղոմեոսի՝ Մեծ Հայքի նկարագրության մեջ, որն, անտարակույս, խոսում է նրա որպես աշխարհի դեռևս չձևավորվելու մասին մ.թ. II դարի կեսերին<sup>2</sup>: Համաձայն VI դարի բյուզանդական պատմագիր Պետրոս Պատրիկիոսի հաղորդած տեղեկությունների, Հռոմը Մծբնի 298թ. քառասնամյա հաշտության պայմանագրով Պարսկաստանից՝ ի թիվս այլ երկրամասերի, ստացավ 5 նահանգներ՝ Անգեղտունը, Ծոփքը, Աղձնիքը, Կորդուքը և Ծավդեքը<sup>3</sup>, որոնք՝ հանդիսանալով հայկական երկրամասեր, մինչ այդ միացվել էին Սասանյան Պարսկաստանին և բանակցությունների ժամանակ դիտվում էին պարսկական տարածքներ: Ինչպես նշել ենք Աղձնիքի առնչությամբ, դատելով Մծբնի պայմանագրի բովանդակությունից, իրավա-քաղաքական այդ վիճակը ճանաչվել է ոչ միայն Մեծ Հայքի պարսից ազդեցության ոլորտում գտնվող արքունիքի, այլև հռոմեացիների կողմից, որովհետև 297 թվականի հայ-հռոմեական զորքերի պարսից դեմ տարած հաղթանակից հետո, երբ վերականգնվեցին հայկական թագավորության սահմանները, Մծբնի բանակցություններում նրանք վերոհիշյալ երկրամասերը Մեծ Հայքի թագավորության մասեր չեն դիտում<sup>4</sup>: Մծբնի հաշտության պայմանագրի կնքումից շատ չանցած, Հռոմը անդրտիգրիսյան<sup>5</sup> այդ 5

<sup>1</sup> Ա.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 116-120:

<sup>2</sup> Claudii Ptolemaei Geographia, էջ 931-951:

<sup>3</sup> Petrus Patricius, Fragm. 14 (Dindorf, Historici graeci minoris, I, էջ 443):

<sup>4</sup> Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչա-քաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, թիվ 2, էջ 82-83:

<sup>5</sup> Անվանումը ճիշտ է մասամբ, որովհետև Ծավդեքը գտնվում էր Տիգրիսի աջ ափին:

երկրամասերը հանձնեց Մեծ Հայքի թագավորությանը<sup>1</sup>, որոնց պատկանելի-  
ությունը Հայաստանին հարցականի տակ դրվեց միայն 65 տարի անց 363  
թվականի «ամոթալի հաշտությամբ», որը կնքվեց Հռոմի և Պարսկաստանի  
միջև Հուլիանոս կայսեր դեպի Տիգրան կատարած անհաջող արշավանքից  
հետո: Հաղթանակած պարսից արքա Շապուհ Բ-ն հաշտությամբ ստացավ  
**Աղձնիքը, Մոկքը, Ծավդեքը, Ռեհիմենեն և Կորդուքը**<sup>2</sup>: Ամիանոս Մարկելի-  
նոսի «Պատմություն»-ը գործն այնպես է մատուցում, որ 298 և 363 թվա-  
կաններին խոսքը գնացել է միևնույն երկրամասերի մասին<sup>3</sup>: Սակայն, ինչ-  
պես իրավացիորեն նշում է Ն. Ադոնցը, Սասանյան Պարսկաստանը 363 թվին  
վերադարձրել էր 298 թ. կորցրած 5 երկրամասերից միայն 3-ը՝ Աղձնիքը,  
Կորդուքը և Ծավդեքը: Նշանավոր հայագետի կարծիքով, **Անգեղոտունը** և  
**Ծոփքը** մնացել էին հռոմեացիներին<sup>4</sup>: Դժվար է հաստատապես ասել, թե վեր-  
ջին երկու նահանգները անցել էին Հռոմին, թե՛ ոչ, քանի որ ոչ միայն Ամիա-  
նոսի երկը, այլև մյուս սկզբնաղբյուրները ոչինչ չեն հայտնում այդ մասին:  
Սակայն մի բան պարզ է, որ նրանց փոխարեն Հռոմը պարսիկներին զիջեց  
հայկական երկու այլ երկրամասեր՝ **Մոկքը** և **Ռեհիմենեն**: Կ. Գյուտերբրոքը, Հ.  
Հյուբշմանը, Ն. Ադոնցը և Հ. Մանանդյանը այն կարծիքն են հայտնել, որ 298  
թվին հռոմեացիները ստացել էին ոչ թե 5, այլ 7 երկրամասեր, որոնցից սոսկ  
5-ն էին 363 թվին վերադարձրել պարսիկներին<sup>5</sup>: Ըստ որում, Ն. Ադոնցի  
եզրակացությամբ **Մոկքը** հանդիսացել է **Աղձնիքի**, իսկ **Ռեհիմենեն**՝ **Ծավդեքի**  
բաղկացուցիչ մասը, ուստի 298 թվին նրանք զիջվել էին պարսիկների կողմից  
**Աղձնիք** աշխարհի և **Ծավդեքի** կազմում<sup>6</sup>: Մի կողմ թողնելով **Ռեհիմենենի**  
հարցը, որ անմիջականորեն չի առնչվում Մոկքի հետ, և նկատի ունենալով  
«Աշխարհացոյց»-ի տվյալները, մենք մեծավաստակ հայագետի եզրակացու-  
թյունը ընդունում ենք կիսով չափ: Ամենայն հավանականությամբ, **Մոկքը**  
հանդիսացել է Աղձնիքի մաս, սակայն 298 թվականի Մծբնի պամանագրով  
այն չի անցել Հռոմին: Մեր կարծիքով, այդ եզրակացության օգտին վկայում

է «Աշխարհացոյց»-ի «հինգերորդ՝ Մոգք որ առ Ասորեստանեալ»<sup>1</sup> արտահայ-  
տությունը: Պատմական աշխարհագրության մասնագետների և, մասնավորա-  
պես ակադ. Ս. Ս. Երեմյանի կողմից հիմնականում ճշտված են Մոկաց աշ-  
խարհի սահմանները, որոնք մեծ առարկություններ չեն հարուցում: Համա-  
ձայն այդ տեղադրության Մոկքը զբաղեցնում էր Ջերմ (ներկայումս՝ Բոհ-  
տան-սու) գետի ավազանի միջին մասը և գտնվում էր Մեծ Հայքի հարավային  
սահմանագլխից շուրջ 70-80կմ հյուսիս<sup>2</sup>: Բնականաբար, նման տեղադրու-  
թյունը անհարիր է դարձնում «Աշխարհացոյց»-ի վերոհիշյալ տեղեկությունը,  
ըստ որի Մոկքը սահմանակից է եղել Ասորեստանին: Հետևաբար, պետք է  
ենթադրել, որ Մոկքի վերաբերյալ աշխարհացույցյան տեղեկությունը ար-  
դյունք է որոշակի քաղաքական կացության, երբ մինչև Մոկք ընկած տարածքը  
նվաճվել էր կամ ռազմակալվել հայոց թագավորությունից հարավային հարև-  
անի՝ Պարսկաստանի կողմից և միակցվել Ասորեստանի վարչական շրջանին:  
Ե՛րբ կարող էր այդ վիճակը ստեղծվել: IV դարի քաղաքական կացությունը,  
որ մեզ քաջ հայտնի է սկզբնաղբյուրներից, բացառում է դրա հնարավորու-  
թյունը հիշյալ շրջանում: Եղիշեի պատմությունը, որ արժեքավոր տեղեկու-  
թյուններ է պահպանել V դարի վարչա-քաղաքական կացության վերաբերյալ  
և արձանագրում է երբեմնի Մեծ Հայքի թագավորության տարածքի հարա-  
վում մի շարք վարչական շրջաններ՝ **Կորդուքը, Ծավդեքը և Արգնարգյունը**<sup>3</sup>,  
որոնք չէին մտնում Ասորեստանի վարչական շրջանի մեջ, նույնպես անհնա-  
րին է դարձնում այդ վիճակը V դարին վերագրելը: Իսկ այդպիսի կացություն  
գոյություն է ունեցել III դարում, ինչպես ցույց է տալիս Մծբնի պայմանագրի  
և Տրդատ Գ-ի գահակալության քննությունը:

Խոսքով Բ թագավորի եղերական սպանությունից հետո Մեծ Հայքը հայտ-  
նվեց մանկահասակ Տրդատի (ապագա Տրդատ Գ-ն) խնամակալ Արտա-  
վազդի (իմա՝ Արտավազդ Մանդակունի) կառավարչության ներքո<sup>4</sup>: Սասան-  
յանների ռազմական հաջողությունները և ընդհակառակը Հռոմի թուլացումը  
ստիպեցին Մեծ Հայքի թագավորությանը ընդունելու Պարսկաստանի քաղա-  
քական ազդեցությունը: Պարսից արքունիքը, ձգտելով պետության քաղաքա-  
կան սահմանները հասցնել մինչև Հայկական Տավրոսի ջրբաժան գիծը և տի-  
րանալ **Մելիտենե-Տիգրանակերտ-Շնգար** մայրուղուն, ստիպում է Մեծ Հայքի

<sup>1</sup> Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչա-  
քաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին, էջ 80-81:

<sup>2</sup> Ammianus Marcellinus, XXV, 7, 9: Տե՛ս նաև Аммиан Марцеллин, История, пере-  
вод с латинского проф. Ю. А. Кулаковского, вып. II, Киев, 1907, XXV, 7, 9:

<sup>3</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 43:

<sup>4</sup> Անդ, էջ 43:

<sup>5</sup> Կ. Գյուտերբրոք, Հռոմեական Հայաստան և Հռոմեական սատրապուսիկներ Դ-Ջ դարերում,  
թարգմ. Մ. Նորշումանի, Վիեննա, 1914, էջ 7-8: Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ  
30-31: Н. Адонц, նշվ. աշխ., էջ 43: Հ. Մանանդյան, Բնական տեսություն հայ ժողովրդի  
պատմության, հատ. Բ., մաս Ա, Երևան, 1957, էջ 111, 177:

<sup>6</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 43:

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յավելումածովք նախնեաց», էջ 29:

<sup>2</sup> Ս. Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), քարտեզ, մասշտաբ  
1:1250000, Գ-5, Դ-5:

<sup>3</sup> «Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», էջ 10:

<sup>4</sup> «Մովսեսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», II, 2Ջ: Ա. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և  
առաջին Սասանյանները, տե՛ս ՊԲՆ, 1975, թիվ 3, էջ 171:

իշխանություններին իրեն զիջել **Անգեղոսունը, Ծոփքը** (իմա՝ **Մեծ Ծոփքը**), **Աղձնիքը, Կորդուքը** և **Ծավդեքը**: Կորցնելով իր հարավային, կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող երկրամասերը, Մեծ Հայքի թագավորությունն էլ, չնայած Պարսկաստանի բուռն ճնշմանը, փորձել է իր համար ապահովել քիչ թե շատ հուսալի սահմաններ հարավում, իր ձեռքը վերցնելով կարևոր լեռնանցքների վերահսկողությունը: Մեծ Հայքի վարչական բաժանումը, որի համաձայն Հայկական Տավրոսի հարավային լանջերին գտնվող մի շարք գավառներ ու ձորահովիտներ վաղնջականորեն մտնում էին Հայկական Տավրոսից հյուսիս գտնվող աշխարհների մեջ, ցույց է տալիս, որ հայոց արքունիքը բանակցությունների ժամանակ կարողացել է իր վերահսկողության ներքո պահել կարևոր լեռնանցքներից հարավ ընկած գավառներն ու գավառակները: Աղձնիք աշխարհը, որ II դարում, իսկ շատ հնարավոր է, նաև III դարի առաջին կեսին տարածվում էր մինչև Տոսպք աշխարհի կամ Արևմտյան Վասուրականի հարավ-արևմտյան սահմանագլուխը, ամբողջությամբ Պարսկաստանին միացնելու դեպքում խիստ կթուլանար Մեծ Հայքի թագավորության սահմանը Վանա լճի շրջանում, ուստի հայոց արքունիքը աշխատել է և կարողացել իր վերահսկողության ներքո պահել նրա արևելյան հատվածը, որը և այդ քաղաքական անցքի հետևանքով ձևավորվել է որպես առանձին աշխարհ: Իհարկե, տեսականորեն կարելի է ենթադրել, որ Մոկքը կարող էր հանդիսանալ նաև Տոսպք-Վասպուրականի մաս, սակայն այդ դեպքում նրա որպես աշխարհի ձևավորումը հնարավոր կլինի 363 թվականից հետո, հանգամանք, որը հակասում է սկզբնաղբյուրների տեղեկություններին, որովհետև Ամիանոս Մարկեդոնոսի վկայությունները խոսում են նրա 363 թվականից առաջ որպես վարչական առանձին միավորի ձևավորված լինելու մասին<sup>1</sup>: 261 թվին Սասանյան Պարսկաստանին հաջողվեց հայոց գահին բարձրացնել թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրին (261-272), որի հետևանքով կորցված երկրամասերը, բացառությամբ Ծավդեքի վերադարձվեցին Հայոց թագավորությանը, սակայն վարչական նախկին վիճակը չվերականգնվեց և Մոկքը գոյատևեց որպես ինքնուրույն աշխարհ: Ստեղծված կացությունը արտացոլվեց Որմիզդ-Արտաշիրի աշխարհագրում, որի նյութերն օգտագործվել են «Աշխարհացոյց»-ի հեղինակի կողմից: 287թ. հռոմեա-պարսկական համաձայնությամբ Տրդատ Գ-ն հաստատվեց հայոց գահին և, չնայած երկրի արևելյան շրջանները գտնվում էին Ներսեհի փաստական իշխանության ներքո, Մոկքը, ամենայն հավանականությամբ, գտնվել է նրա տիրույթների մեջ: 293 թ. Տրդատ Գ-ն, ստանալով Ներսեհից Մեծ Հայքի արևելյան շրջանները, ստիպված եղավ կրկին Պարսկաստանին զիջել **Աղձնիքը, Կորդուքն** ու **Ծավդեքը**,

<sup>1</sup> Ammianus Marcellinus, XXIII, 2, 5:

որոնք, ինչպես արդեն նշեցինք, 298թ. Մծբնի պայմանագրով անցան Հռոմին, իսկ շատ չանցած վերջինիս կողմից վերադարձվեցին Հայոց թագավորությանը:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Մոկքի մասին ասված է. «Ե. Աշխարհի Մոկք. յելից կան Աղձնեաց. ի լերինն Տորոս<sup>1</sup>: Ունի գաւառս ինն. զԻշայր, (զմիւս Իշայր)<sup>2</sup>, զԻշուց գաւառն, զԱռվենից ձոր. զՎիջաց<sup>3</sup>, զԱռանձնական Մոկաց գաւառն, յորում գետն Որբ, զԱրքայից գաւառ, զԱրգովտեաց ուլիտ<sup>4</sup>. Ջերմաձոր, յորում գետն Մերմ<sup>5</sup>: Ունի ի մրգաց զարշատ եւ մանրագոր. եւ ի գազանաց՝ ինձ գեղեցկախայտ»<sup>6</sup>: «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը եապես չի տարբերվում ընդարձակից, բայց և այնպես մենք ավելորդ չենք համարում մեջբերել այն. «Հինգերորդ՝ Մոկք յելից կայրվ Աղձնեաց. յամուրս Տաւրոս լերինն: Գաւառս ունի ինն. զԻշայր, զԻշայր միւս<sup>7</sup> և զԻշուց<sup>8</sup> գաւառ, զԱռուենից ձոր, զՄիջա, զԱռանձնակ Մոկս, զԱրքայից գաւառ, զԱգաստեայ ուլիտ<sup>9</sup>, զՋերմաձոր: Եւ ունի ի մրգաց արշակ<sup>10</sup> եւ մանրագոր եւ ի գազանաց՝ ինձ<sup>11</sup> գեղեցկախայտուց, եւ<sup>12</sup> հաւուց՝ կաքաւս»<sup>13</sup>: Կարծում ենք, որ հաշվի առնելով «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի տվյալները, մենք կարող ենք վերականգնել Մոկքի նկարագրությունը հետևյալ տեսքով. «Ե. Աշխարհի Մոկք. յելից կան Աղձնեաց, ի լերինն Տաւրոս: Ունի գաւառս ինն. զԻշայր, զՄիւս Իշայր, զԻշուց գաւառն, զԱռուենից ձոր, զՄիջա,

<sup>1</sup> Անտարակույս «Տորոս» գրությունը գրիչը սխալմամբ արտագրել է «Տորոս»:

<sup>2</sup> «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը, ինչպես նաև աշխարհի գավառների թվաքանակը Ա. Սուքրյանին իրավունք են տվել ավելացնելու «զՄիւս Իշայր» գավառանունը:

<sup>3</sup> Ամենայն հավանականությամբ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը պահպանել է «Միջա» ձիշտ գրությունը, քանի որ Մոկքի տարածքում մինչև այսօր պահպանվել է Միջա գյուղը:

<sup>4</sup> Հանդիպում է նաև Արգաստուլիտ, Ագաստեայ ուլիտ, Ջարդարեաց ուլիտ և այլ ձևերով, որոնցից թերևս առավելությունը պետք է տալ «Արգաստուլիտ» գրությանը:

<sup>5</sup> Անկասկած գետի անունը Ջերմ է և այն պահպանվել է գավառանվան մեջ: Ջերմ գետը հիշատակվում է Պլինիոսի (Zerbis), բյուզանդական հեղինակների /Ζιρμας/, արաբ պատմագիրների երկերում (wadi az-Zorm): Տե՛ս Ա.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 78:

<sup>6</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացուր», էջ 32:

<sup>7</sup> Հանդիպում է նաև «զՄիւս Իշայր» ձևով:

<sup>8</sup> Հանդիպում է նաև «Իշուց գաւառ» գրությամբ:

<sup>9</sup> Ըստ երևույթին ձիշտ ձևը եղել է «Արգաստեայ ուլիտ»:

<sup>10</sup> Մրգի անունը հիշատակվում է նաև «Իրշակ» և «գահրշակ» գրությամբ:

<sup>11</sup> Բացակայում է «զ» նախդիրը:

<sup>12</sup> Բացակայում է «ի» նախդիրը:

<sup>13</sup> Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349:

զԱռանձնական Մոկաց գաւառն, յորում գետն Որբ, զԱրքայից գաւառ, զԱրգաստեաց ուխտ, զԶերմաձոր, յորում գետն Զերմ: Ունի ի մրգաց զահրշակ եւ մանրագոր. եւ ի գազանաց զինձ գեղեցկախայտ և ի հաւուց՝ զկաքաւս: «Աշխարհացոյց»-ի լավագույն գիտակներից մեկը՝ ակադ. Ս. Երեմյանը Մոկքի նկարագրության մեջ կատարել է սրբագրություն, «զԱռանձնական Մոկաց գաւառն, յորում գետն Որբ, զԱրքայից գաւառ» արտահայտությունը վերածելով «զԱռանձնական Մոկաց գաւառն, [որ է] Արքայից գաւառ. յորում գետն Որբ», որի հետևանքով Մոկքի գավառների թիվը կրճատվել է մեկով: Հեղինակն իր սրբագրությունը փորձում է հիմնավորել նրանով, որ իբր այս գավառը «արքունական» է եղել դեռևս IX-VIII դդ. մ.թ.ա., երբ այն Խուբուլչկիա փոքրիկ թագավորության կենտրոնն էր<sup>1</sup>: Հազիվ թե հիմնավոր կարելի է համարել այս տեսակետը, որովհետև Խուբուլչկիայի պես փոքրիկ թագավորությունները Հայկական լեռնաշխարհում նշանակալից թիվ էին կազմում, սակայն նմանառեն գավառների ծագման պատճառ չեն դարձել: Այսուհանդերձ, քանի որ վերոհիշյալ սրբագրության հետևանքով հակասություն է առաջացել բնագրի «Ունի գաւառս ինն» արտահայտության և թվարկված գավառների քանակի միջև, Ս. Տ. Երեմյանը բնագրում կատարել է երկրորդ փոփոխությունը՝ «Ունի գաւառս ինն» արտահայտությունը վերածելով «Ունի գաւառս ութ»-ի<sup>2</sup>: Հպանցիկ քննությունն անգամ ցույց է տալիս, որ երկու սրբագրությունն էլ ոչնչով պատճառաբանված և հիմնավորված չեն: Հարկ սրբագրությունն էլ ոչնչով պատճառաբանված և հիմնավորված չեն: Հարկ է նշել, որ Մոկաց Առանձնական գավառը Արքայից գավառին նույնացնելուն խանգարում է այն հանգամանքը որ բնագրում այդ գավառանունները իրարից բաժանվում են «յորում գետն Որբ» արտահայտությամբ: Այնուհետև, մեր կարծիքով, Արքայից գավառի անունն անգամ խոսում է նրա արքունական տիրույթ լինելու օգտին, այն դեպքում, երբ Մոկաց Առանձնական գավառը կամ Առանձնակ Մոկքը հանդիսացել է Մոկաց իշխանության կենտրոնական կամ իշխանանիստ գավառը, հետևաբար նրանց նույնացումը խոցելի է, կամ, որ ավելի ճիշտ է, անհնարին է նաև այլ տեսանկյուններից: Եվ վերջապես ոչ մի իրավունք չունենք առանց ձեռագրային պատշաճ հիմնավորման գավառների քանակը 9-ից իջեցնելու 8-ի, քանի որ «Աշխարհացոյց»-ի ոչ մի ձեռագիր այդպիսի տեղեկություն չի պահպանել:

Փորձենք այժմ տեղադրել Մոկաց աշխարհի գավառները, որ բավականին դժվարություն է ներկայացնում: Հստակ տեղադրություն ունեն նրանցից 3-ը կամ լավագույն դեպքում 4-ը: Մոկք Առանձնակ գավառը գտնվել է Որբ կամ Մոկս գետի հովտում (այժմ՝ Մոկս-սու կամ Մուկուս-սու), որտեղ մինչև այժմ

<sup>1</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 71:

<sup>2</sup> Անդ, էջ 108:

էլ գոյություն ունի Մոկաց նախարարության կենտրոն Մոկս (այժմ՝ Մուկուս) գավառը<sup>3</sup>: Ղ. Ինճիճյանը Առուանից ձոր գավառը տեղադրում էր Մոկսից հարավ-արևմուտք 6 ժամ հեռավորության վրա գտնվող ձորահովտում, որը կոչվում է Առվանից ձոր Առվանց գյուղի անունով<sup>4</sup>: Այդ պատճառով, նա Թովմա Արծրունու «...դարձեալ գայ (Գագիկ Արծրունին) ի գաւառն անուանեալն երիւարկ, առնու եւ անդ զբերդն Պաղայ եւ զՓարիուաց. գայ եւ ի ձորն Առուանից, առնու եւ զայն եւս ամբոցն, եւ տիրէ գաւառացն»<sup>5</sup> տեղեկությունը համարում է վրիպակ<sup>6</sup>: Այս տեսակետը հետագայում պաշտպանել են Ղ. Ալիշանը<sup>7</sup>, Հ. Հյուբշմանը<sup>8</sup> և Լեոն<sup>9</sup>: Մի որոշ ժամանակ այդ տեսակետը պաշտպանել է նաև Ս. Տ. Երեմյանը, որի հետևանքով գավառը նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատության քարտեզում տեղադրվել է նույն շրջանում<sup>10</sup>: Սակայն, երբ արդեն քարտեզը հրատարակված էր, նա ճշտել է գավառի տեղադրությունը, որի համաձայն Առուանից ձորը գտնվել է Մոկքի ծայր հյուսիս-արևմուտքում՝ Երևաքը և Ռշտունիք գավառների միջև, Օրասուդարասի կոչվող ձորահովտում<sup>9</sup>: Այս տեսակետը, որ մենք անվերապահորեն ընդունում ենք, հաստատվում է ոչ միայն Մոկքի գավառների թվարկման աշխարհագրական հաջորդականությամբ, այլև մատենագիտական տվյալներով: Բացի վերը բերված վկայությունից, դրա օգտին է խոսում նաև Թովմա Արծրունու մեկ այլ հաղորդումը. «...փութանակի եկն եհաս ժիրաք ի գաւառն Ռշտունեաց եւ զգօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. եւ անդ գտեալ զբնակիչսն Ռշտունեաց, թափառականս անկեալ յանողորմ եւ ի մարդախողող շանցն գիշակերաց»<sup>10</sup>: Բնական է, որ Առուանից կամ Առու-

<sup>1</sup> Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Առաջին, Ասիա, հատոր Ա, Նոր Հայաստան, էջ 160-162: Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23, 54: Լեոն, Հայոց պատմություն, առաջին հատոր (Հին պատմություն), տե՛ս Լեոն, Երկերի ժողովածու, հատոր Ա, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1966, էջ 154: Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 71:

<sup>2</sup> Ղ. Ինճիճյան, Նոր Հայաստան, էջ 162:

<sup>3</sup> «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետ Արծրունեաց», էջ 314-315:

<sup>4</sup> Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 134:

<sup>5</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23:

<sup>6</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 307:

<sup>7</sup> Լեոն, Հայոց պատմություն, հատ. Ա, էջ 154:

<sup>8</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ: Հեղինակը սխալվում է, երբ Առվանից ձորի տեղադրությունը Առվանից գյուղի շրջանում վերագրում է Հ. Հյուբշմանին: Իրականում Հ. Հյուբշմանը նշում է, որ ինքն էլ հետևել է Ղ. Ինճիճյանի տեղադրությանը:

<sup>9</sup> Անդ, էջ 37-38:

<sup>10</sup> Թովմա Արծրունի, էջ 142:

նից ձորը պետք է գտնվեր Ռշտունիքի և Երևաքի հարևանությամբ, իսկ այդ հնարավոր է միայն **Օրանս-դարասի** կոչվող ձորահովտում, որը պահպանել է գավառի հին անունը: Մեր կարծիքով, Առուանց գյուղը, որը պետք է հանդիսանար գավառի կենտրոնը, ժամանակի ընթացքում, ամենայն հավանականությամբ, տեղական բարբառի ազդեցությամբ, սկսել է արտասանվել **Ավրանց (Աբրանց կամ Առանց)**, որն էլ ավելի ուշ վերածվել է **Օրանցի, Օռանցի կամ Ուրանցի**<sup>1</sup>, իսկ դրանից հետո էլ քրդական ազդեցության ներքո **Օրանիսի կամ Օրանսի**, որից էլ առաջացել է ձորահովտի ուշ շրջանի **Օրանս-դարասի** (նախահեղափոխական շրջանի ռուսական քարտեզներում և արդի մեծ մասշտաբի ռազմական քարտեզներում՝ Оранс-дараси կամ Оранис-дараси) անվանումը:

Մեծ ճշտությամբ տեղադրվում է նաև **Ջերմաձոր** գավառը, չնայած արտահայտված իրարամերժ կարծիքներին: Ղ Ալիշանը կարծում էր, որ այն համապատասխանում է Շատախին<sup>2</sup>: Լ. Հյուբշմանը, հենվելով Հարթմանի և Հոֆմանի աշխատությունների, ինչպես նաև Վյունշի աշխարհագրոյցի վրա, ենթադրել է այն Ջերմ (այժմ Բոհտան-սու) գետի հովտում, սկսյալ Շատախից մի փոքր արևմուտք: Ջերմաձորի տեղադրության համար կարևոր հենակետ է ծառայում այնտեղ հիշատակվող **Ջռայլ կամ Ջռել բերդի** դիրքը, որի ավերակները մինչև այսօր էլ պահպանվել են **Ջռել-կալասի** անունով<sup>3</sup>: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ **Ջռայլ կամ Ջռել բերդը** կլիմայական տեսակետից հանդիսացել է սահմանաբաժան Արևելյան Տիգրիսի բարեխառն և ջերմ բնակլիմայական պայմաններ ունեցող հատվածների միջև, որի հետևանքով ամրոցից արևմուտք սկսվում է ձոխ բուսականության գոտին, Լ. Հյուբշմանը **Ջերմաձորը** տեղադրել է **Ջռել ամրոցից** արևմուտք ընկած հատվածում<sup>4</sup>: Ակադ. Ս.Ս. Երեմյանը ավելի է նյութականացրել նրա սահմանները՝ սկսելով այն **Ջռայլ բերդի** շրջանից և հասցնելով մինչև **Ջերմ** և **Կեծան** գետերի ջրկիցը<sup>5</sup>: Նման տեսակետը պայմանավորված է այն հանգամանքով, որ նա Աղձնիքի Երխեթք և Կեթիկ գավառները փորձել է տեղադրել Կեծան (ներկայումս՝ սխալմամբ Մուկուս-չայ) գետի ավազանում: Այդ տեղադրությունները աշխարհագրական տեսակետից հավանական չեն, ուստի հիշյալ գավառների ենթադրյալ տարածքը, ինչպես կհամոզվենք ստորև, պետք է մտներ Մուկի մեջ, որի հետևանքով **Ջերմաձորի** արևմտյան սահմանները պետք է

ենթադրել Կեծանի և **Ջերմի** ջրկիցից շուրջ 20 կմ արևմուտք: Հարկ է նշել նաև, որ անհավանական է հեղինակի կողմից գավառի հյուսիսային սահմանը **Ջերմ** և **Մուկ** գետերի ջրկիցից հետո **Ջերմ** գետով անցկացնելը<sup>1</sup>: Անկասկած է, որ գավառը պետք է զբաղեցներ **Ջերմ** գետի<sup>2</sup> ավազանի և հյուսիսային, և հարավային հատվածները: **Ջերմաձոր** գավառն աղբյուրներում հիշատակվում է հաճախակի և այդ տեղեկությունները լույս իրար լրացնում են և հաստատում Լ. Հյուբշմանի և Ս.Ս. Երեմյանի տեղադրությունը: Այսպես, խոսելով Վարդան Մամիկոնյանի Մուկում գտնվելու մասին, Թովմա Արծրունին հայտնում է, որ նա «խոյս տուեալ գնաց գկողմամբքն Մուկաց, ի խոխոմս Տորոսական լերինն, ի Լեսուրս Ջերմաձորոյ, եւ բնակէ յամրոցին, որ այժմ Ջողայլ վասն անխեղեղ ամրութեանն գեղջկաբանեն»<sup>3</sup>: Մեկ այլ կապակցությամբ նա գրում է, որ Վարդան Մամիկոնյանը «... էր ամրացեալ ի Տորոսականն Ջռայլ»<sup>4</sup>: Անշուշտ, **Ջռայլ ամրոցի** և **Ջերմաձորի** կապակցությամբ հիշատակված Տորոսական լեռները սերտ աղբյուր ունեն «Աշխարհացոյց»-ի հետ: Թովմա Արծրունու մեկ այլ. «եւ տուեալ Գագկայ Վասպուրական իշխանի զբերդն Ագարակայ, եւ զգաւառն Ճախուկ, առնու զբերդն Ջռէլ, եւ զգաւառն կոչեցեալ Ջերմաձոր, որ է մասն երկրին Մուկաց, զի իցէ նորայն սմա մերձաւոր, եւ սորայն նմա յարակից»<sup>5</sup> և Մեսրոպ Երեցի «... ճեպով ընթացեալ (Մուշեղ Մամիկոնյան սպարապետը - Լ.Բ.) ընդ գաւառն Ջերմաձորոյ, առ ոսոս ամրոցացն Տմորից և բերդին Ալկոյ»<sup>6</sup> տեղեկությունները էապես հաստատում են **Ջերմաձորի** տեղադրությունը: Ղ. Ինճիճյանի կարծիքով, **Ջերմաձոր** գավառը **Դճերմադզու** գրությամբ հանդիպում է Կոստանդին Ծիրանածնի մոտ<sup>7</sup>: Իրականում Կոստանդին Ծիրանածինը հիշատակում է **Ջերմացու** բերդի մասին, որին տիրում էր կայսիկ Աբու-Սալիմը՝ Ապոսելմիսը. «Ապոսետայի և Ապո-

<sup>1</sup> Ս.Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 38:

<sup>2</sup> Ղ Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23, 54:

<sup>3</sup> Ռուսական 10-վերստանոց քարտեզ, III-82:

<sup>4</sup> Լ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 199:

<sup>5</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 78:

<sup>1</sup> Մնդ, տե՛ս քարտեզը: Տե՛ս նաև Ս. Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), քարտեզ, 9, Դ-3:

<sup>2</sup> Ջերմ գետը, որից իր անունն է ստացել **Ջերմաձոր** գավառը, հիշատակվում է «Աշխարհացոյց»-ում, բյուզանդական և արաբական սկզբնաղբյուրներում: Այսպես՝ «Աշխարհացոյց»-ում նրա անունը պահպանվել է Մերմ սխալ գրությամբ, Ագաթիսի մոտ այն կոչվում է Ζίρουκ (Agathias, 4, 29: Տե՛ս նաև Լ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 199), Յակոբ-ալ Համվին այն կոչում է Վադի ար-Ռազմ ى وادى الرذم կամ Վադի ազ-Ջարմ (Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 69:

<sup>3</sup> Թովմա Արծրունի, էջ 81-82:

<sup>4</sup> Մնդ, էջ 85:

<sup>5</sup> Մնդ, էջ 314: Առաջել Դավիթեցու մոտ **Ջռելը** սխալմամբ հիշվում է **Ջռել** ձևով («Դատմութիւն Առաջել վարդապետի Դարիժեցոյթ», Վաղարշապատ, 1896, էջ 418):

<sup>6</sup> Ղ Ալիշան, Հայաստանում, էջ 136:

<sup>7</sup> Ղ Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 135:

լեսֆուստի երրորդ եղբայրը՝ Ապուսելմիսը տիրում էր Յերմացու ամրոցին և նրա շրջակայքին. նա ևս հպատակություն հայտնեց հռոմեացիների կայսեր և, ինչպես իր եղբայր Ապոսևատան և իր երկրորդ եղբայր Ապուլեսֆուստը, հարկ էր վճարում»<sup>1</sup>: Ավելի ուշ Ղ. Ինճիճյանի կարծիքը պաշտպանել է Ե. Հոնիգմանը<sup>2</sup>, սակայն Հ. Մարքվարթը, Մ. Կանարը և Ա. Տեր-Ղևոնդյանը իրավացիորեն ցույց են տվել, որ **Τξερματζοῦ** Յերմացուն պետք է նույնացնել ոչ թե Ջերմաձորի, այլ Սերմանցի հետ, որը Հարթի հյուսիս-արևմուտքում էր գտնվում<sup>3</sup>, քանի որ Ջերմաձորը երբեք չի գտնվել կայսիկների իշխանության ներքո, իսկ Կոստանդին Ծիրանածին հիշատակած պատմական իրադարձություններն էլ ծավալվում են Հարթում և նրան շրջակա գավառներում:

Ինչպես ճիշտ տեղադրում է Ս. Երեմյանը, Մոկաց Միջա գավառը գտնվել է Մոկաց Առանձնակ գավառից հարավ-արևմուտք, Մամռոտանք կոչված շրջանում, որտեղ մինչև այսօր էլ պահպանվել է Միջա գյուղը<sup>4</sup>:

Մյուս գավառների տեղադրությունը անորոշ է և ամեն մի ենթադրություն այդպես էլ չի հավակնի վերջնական լինելու, մինչև որ ի հայտ չգան մատենագրական և տեղագրական նոր նյութեր: Ղ. Ինճիճյանը, սկզբնաղբյուրների պակաս զգալով, այդպես էլ չի փորձել տեղադրել մյուս գավառները: Ղևոնդ Ալիշանը Իշաթ, Մյուս Իշաթ և Իշոց գավառները տեղադրել է Ջրըզան, Սպարկերտ և Կարկառ գավառների տեղում, Արթայից գավառը և Արգաստովիտը Մոկքի և Շատախի միջև<sup>5</sup>: Հ. Հյուբշմանը փորձել է բացահայտել Մոկքի նկարագրության աշխարհագրական օրինաչափությունները և եկել այն եզրակացության, որ նկարագրությունը կատարվել է արևմուտքից դեպի արևելք, քանի որ իրար հաջորդում են Առուենից ձոր, Առանձնակ Մոկք և Ջերմաձոր

գավառները և որ Ջերմաձորը Մոկաց ամենաարևելյան գավառն էր<sup>1</sup>: Մոկքի բոլոր գավառները տեղադրելու փորձ մինչև այսօր կատարել է միայն Ս. Տ. Երեմյանը, որի կարծիքով Իշաթ գավառը համապատասխանել է Մոկսի և Խիզանի միջև գտնվող Շնիձոր գավառակին, որտեղ միջին դարերում հայտնի էր Սուրբ Կանանց վանքը կամ Սուրբ Խաչ վանքը Կեցան գետի ձախ ափին<sup>2</sup>, Մյուս Իշաթ գավառը՝ Խիզանին և ընդգրկել Կեցան գավառակի մեծ մասը<sup>3</sup>, Իշոց գավառը՝ Սպարկերտ գավառակին<sup>4</sup>, Արգաստովիտը՝ Արևելյան Տիգրիսի ձախափնյա վտակ ներկայումս Կերկանդիլ-սու կոչվող գետակի ձորահովտին<sup>5</sup>, իսկ Արթայից գավառը, ինչպես վերը նշեցինք, նույնացվել է Մոկք Առանձնակին:

Մեր կարծիքով, Մոկքի գավառների նկարագրությունը կատարվել է հարավից հյուսիս և արևելք: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Առուենից կամ Առուանից ձորը զբաղեցնում էր Մոկաց աշխարհի ծայր հյուսիս-արևմուտքը, պետք է ենթադրել, որ Իշաթ, Մյուս Իշաթ և Իշոց գավառները գտնվում էին Կեցան գետի հովտում: Բնավ էլ վերջնական տեղադրության հավակնություն չունենալով, մենք կարծում ենք, որ Իշայրի հավանական տեղադրությունը հնարավոր է Կեցան գետի աջափնյա վտակ, ներկայումս Հավկիս-չայ կոչվող, գետակի հովտում և Կեցան գետի նրան հանդիպակաց ձախափնյա հատվածում: Եթե այս տեղադրությունը մոտ է իրականին, ապա Մյուս Իշաթը պետք է փնտրել նրանից հյուսիս՝ մինչև Առուենից ձոր ընկած հատվածում, Խիզանի շրջանում: Ինչ վերաբերում է Իշոց գավառին, ապա աշխարհագրական տեսակետից նրա միակ տեղադրությունը հնարավոր է Կեցան գետի ձախափնյակում, Աղաքսի (հնում՝ Եղեգիս) և Սպարկերտի տարածքում: Հիշյալ գավառների թվարկումից հետո նկարագրությունը կրկին սկսվում է հարավում և շարունակվում է դեպի հյուսիս ուղղությամբ: Միջա գավառին, որի տեղը հայտնի է, հաջորդում է նրանից հյուսիս-արևելք գտնվող Մոկք Առանձնակ գավառը Որբ կամ Մոկս գետի ձորահովտում: Կարծում ենք, որ Մոկաց Առանձնակ գավառով ավարտվում է հիշյալ աշխարհի գավառների երկրորդ շարքի թվարկումը, ուստի մնացած գավառները պետք է նույն սկզբունքով տեղադրվեն Մոկքի հարավային մասում: Եթե այդ օրինաչափությունը համապատասխանում է իրականությանը, ապա Արթայից գավառը պետք է փնտրել ոչ թե Մոկքի և Շատախի միջև, ինչպես կարծում է Ղ.

<sup>1</sup> Կոստանդին Ծիրանածին, տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, Բ, էջ 11 (քննադրում **Τξερματζοῦ**)

<sup>2</sup> Honigmann E., Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935, էջ 147, 197:

<sup>3</sup> J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 305: M. Canard, Les Hamdanides et l'Arménie, տե՛ս Annales de l'Inst. d'études Orient. Alger., 1948, VII, 91, էջ 81: Ա. Տեր-Ղևոնդյան, Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 144:

<sup>4</sup> Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 70-71: Տե՛ս նաև Копия турецкой карты Анатолии, изданной в масштабе 1:210000 в 1330 году Гиджры, т. е. в 1911-1912 годах, Издано в военно-топографическом отделе штаба Кавказского военного округа в 1915 году, V-16 Ван:

<sup>5</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23:

<sup>1</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղայնությունները, էջ 200-201:

<sup>2</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 54:

<sup>3</sup> Անդ, էջ 70:

<sup>4</sup> Անդ, էջ 54:

<sup>5</sup> Անդ, էջ 39:



Ալիշանը, այլ Արլ. Տիգրիսի կամ Ջերմի ավազանում՝ Ջերմաձոր գավառից արևմուտք ընկած հատվածում: Հավանաբար, հեռավոր անցյալում նա մաս է կազմել Ջերմաձոր գավառի, սակայն արքունական տիրույթ լինելու հանգամանքը պատճառ է դարձել, որ նա անջատվի վերջինից և վերածվի ինքնուրույն գավառի: Անշուշտ չի բացառվում, որ արքունական կարող էր լինել նաև Ջերմաձոր գավառը: Այդ դեպքում Արքայից գավառի անջատումը, ամենայն հավանականությամբ III դարում, որոշակի ռազմա-ստրատեգիական նպատակներ է հետապնդել: Աշխարհագրական տեսակետից միանգամայն ընդունելի է Ս. Տ. Երեմյանի կողմից կատարված Արգաստովտի տեղադրությունը, հետևաբար ստացվում է, որ հարավային շարքում արևմուտքից արևելք և հյուսիս հաջորդականությամբ հիշատակվում են Արքայից գավառը, Արգաստովտը և Ջերմաձորը:

Մոկքը խիստ լեռնային, անտառապատ աշխարհ է, որտեղ անգամ XX դարի սկզբին բնակչությունը շարունակում էր ապրել ինքնամփոփ կյանքով, որտեղ բեռները մեծ մասամբ տեղափոխում էին ոչ թե գրաստներով, այլ իրենք՝ բնակիչները: Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ Մոկքը «...խորափիտ և դժուարածայր և ամուր»<sup>1</sup> աշխարհ էր, որի լեռները ծործորաշատ էին<sup>2</sup>: Ապարանից Խաչի ձառում Մոկքը բնութագրվում է որպես «լեռնահողով և կարծրախարիսյա գաւառ...»<sup>3</sup>: Խոսելով Մոկքի մասին, Թովմա Արծրունին նշում է, որ «...լերինս բարձրաբերձս եւ փայլարս անտառախիտս ունի երկիրն Մոկաց»<sup>4</sup>:

Մոկքի վարչա-քաղաքական պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն մտել է Մեծ Հայքի երվանդունյաց և Արտաշեսյան թագավորությունների մեջ<sup>5</sup>: Այն մնաց Մեծ Հայքի թագավորության մեջ, ինչպես վերը ցույց տվեցինք, III դարում Հայոց թագավորության՝ հոգուտ Պարսկաստանի տարածքային կորուստներից հետո ևս: Ըստ որում, նրա վարչական ձևավորումը III դարում արդեն կատարվել էր: 363 թվականի «ամոթալի հաշտությամբ» հռոմեացիներն այն զիջեցին Սասանյան Պարսկաստանին, սակայն Պապ թագավորի գահակալության շրջանում հայոց բանակի մի շարք փայլուն հաղթանակները պարսիկների նկատմամբ ի չիք դարձրին հռոմեապարսկական հաշտության քաղաքական արդյունքները: Մեծ Հայքի թագավոր-

ության բաժանումից (387 թ.) և անկումից (428 թ.) հետո Մոկքը սկզբում անցավ Արևելահայկական թագավորությանը, որտեղ թագավորում էր Խոսրով Դ-ն, իսկ ավելի ուշ մաս կազմեց Հայկական կամ Արմնի մարզպանության:

Մոկաց նախարարության հանդես գալը Մովսես Խորենացին կապում է Հայոց Վաղարշակ թագավորի գործունեության հետ. «Իսկ զմոկացին ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ուներ ընդ իւրեաւ սրիկայս բազումս՝ նախարարութիւն հաստատէ»<sup>1</sup>: Ստ. Մալխասյանը, ինչպես ճիշտ ցույց է տվել Լ. Գ. Մելքոնյանը<sup>2</sup>, սխալ հասկանալով Մովսես Խորենացու հիշյալ հաղորդումը, սույն հատվածը թարգմանել է. «Իսկ Մոկսում գտնելով նույն գավառից մի մարդ, որ ձեռքի տակ ուներ բազմաթիվ ավազակներ, հաստատում է նախարարություն»<sup>3</sup>: Սակայն ուշադրության արժանի է այն փաստը, որ նա այնքան էլ վստահ չի եղել իր թարգմանության ճշտությանը, ուստի գրել է. «Սրիկա բառը բառարանները բացատրում են իբրև «սուր կրող, ավազակ, գող- ավազակ, դատարկապորտ»: Այդպես էլ թարգմանում են. -էմին՝ «ДОЛЬШОЕ ЧУСЛО РАБОЙНИКОВ», Ստեփանե՝ «շատ սրիկաներ»: Մենք էլ պահպանեցինք այս բառը, թեպետ և կասկածում ենք ճշտության վրա»<sup>4</sup>: Ստ. Մալխասյանի կասկածը բնավ էլ անհիմն չի եղել և Լ. Գ. Մելքոնյանը, հենվելով ասորերենի բառամթերքի վրա, ցույց է տվել, որ սրիկա - srikā նշանակում է «մերկ, դատարկ, պարզ, հուլանի, աղքատ», այսինքն «անզեն», հետևաբար Պատմահոր տեղեկությունը պետք է թարգմանել ներքեհիշյալ ձևով. «Մոկքում գտնելով նույն գավառից մի մարդ, որ ձեռքի տակ ուներ բազմաթիվ մերկեր (անզեններ), նշանակում է նախարար»<sup>5</sup>: Հարկ է նշել, որ վաղուց ի վեր արմատացել է այն սխալ կարծիքը, որ Մոկաց աշխարհն ամբողջությամբ պատկանել է Մոկացի նախարարությանը<sup>6</sup>: Սակայն ուշադիր քննությունը բացառում է ամբողջությամբ այդ տեսակետը, որովհետև Արքայից գավառն, անկասկած, չէր կարող պատկանել Մոկաց ժառանգատեր իշխաններին, իսկ Առուենից կամ

<sup>1</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 292:

<sup>2</sup> Անդ, էջ 270. «... ի ծործորս ամուր լերանցն Մոկաց»:

<sup>3</sup> Ղ. Խճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 133:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 314:

<sup>5</sup> Լ. Զուբանյանը գտնում է, որ թե Մոկքը Արտաշես Ա-ի օրոք չի մտել Մեծ Հայքի մեջ, սպա միացվել է Տիգրան Մեծի օրոք (տե՛ս Հին Հայոց տեղոյ անունները, էջ 84):

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 116:

<sup>2</sup> Լ. Գ. Մելքոնյան, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, էջ 142-143:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ավադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 140:

<sup>4</sup> Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1940, ծանոթ. 132, էջ 287:

<sup>5</sup> Լ. Գ. Մելքոնյան, Ադիաբենի թագավորությունը և Հայաստանը, էջ 143:

<sup>6</sup> Н. АДОМЦ, Армения в эпоху Юстиниана, էջ 299: Տե՛ս նաև Թ. Հակոբյան, Դիտողություններ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ի մասին, Երևանի համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր 43, Աշխարհագրական գիտ. սերիա, պրակ 1, Երևան, 1954, էջ 132: Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 71, Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 245 և այլն:

Առուանից ձորը, ամենայն հավանականությամբ, պատկանել է Առավանյան նախարարությանը: Այլ խոսքով, տարածքային ընդգրկմամբ նրանք նույնական չէին: Եթե անգամ ընդունենք էլ, որ հետագայում Մոկքն ամբողջությամբ հայտնվեց Մոկպց իշխանների ձեռքում, ստիպված ենք արձանագրելու, որ սկզբնապես Մոկքի որոշ մասերը հանդիսանում էին արքունական կամ այլ նախարարության տիրույթներ: Պատահական չէ, որ Ռշտունյաց և Մոկպցի նախարարական ընտանիքները մարտադաշտ կարող էին դուրս բերել 1000-ական զինվոր, այն դեպքում, երբ Մոկք աշխարհի տարածքը մի քանի անգամ գերազանցում էր Ռշտունիքին: Եթե անգամ ընդունենք, որ Մոկքը շատ ավելի նոսր էր բնակեցված, քան Ռշտունիքը, այնուամենայնիվ նրա մեծ տարածքը ոչ միայն փոխհատուցում էր այդ պակասը, այլև հնարավորություն ընձեռում անհամեմատ ավելի մեծ ռազմաքնկատ դուրս բերելու: Ուստի այդ հանգամանքից ելնելով էլ Մոկքը ամբողջությամբ չէր կարող պատկանել Մոկպցի նախարարությանը: Արդեն III վերջին և IV դարի սկզբին Մոկքի իշխանները հանդիսանում էին Մեծ Հայքի թագավորության առավել նշանավոր նախարարներից մեկը: Ագաթանգեղոսը Հռոմ մեկնած Տրդատ Գ Արշակունու թիկնախմբում ի թիվս Անգեղ-տան, Բագրատունյաց, Սյունյաց, Ռըշտունյաց և այլ իշխանների, Աղձնյաց և Գուգարաց բյուզնդների հիշատակում է նաև Մոկպց իշխանին<sup>1</sup>: Մոկպց իշխանը հիշատակվում է նաև քահանայապետ օծվելու նպատակով Կապադոկիայի Կեսարիա քաղաքը մեկնած Գրիգոր Լուսավորչի ուղեկիցների թվում<sup>2</sup>:

Մեծ Հայքի թագավորության 387թ. բաժանումից հետո, երբ հայկական մի շարք երկրամասեր պարսից արքունիքն անջատեց Մեծ Հայքի արևելյան մասից, վերածելով առանձին վարչական միավորների կամ կցելով հարևան վարչական շրջաններին, ասորական եկեղեցին, օգտվելով Սասանյանների որոշակի օժանդակությունից, աստիճանաբար իր ազդեցությունը տարածեց հարավային Հայաստանում, այսպես կոչված Անդրտիգրիսյան երկրամասերում: Թե որքան ուժեղ էր եկեղեցական այդ ներխուժումը, կարելի է եզրակացնել այն փաստից, որ ասորական եկեղեցուն հաջողվեց թեմ ստեղծել անգամ ամիջականորեն Արևելա-հայկական թագավորության մեջ վարչականորեն մտնող Մոկքում: Անշուշտ, ասորական եկեղեցու հաստատվելը Մոկքում չէր բացառում հայոց եկեղեցու թեմի գոյությունը, սակայն հայոց թագավորության մեջ վարչականորեն չմտնող երկրամասերում հայոց եկեղեցին ստիպված էր համառ պայքարից հետո տեղի տալ պետական օժանդակություն վայելող

ասորական եկեղեցուն: Հնարավոր է, որ Մոկքում ասորական եկեղեցու թեմի ստեղծումը զուտ պատմական իրադարձությունների քմահաճ ընթացքի արդյունք էր, 363 թվականի «ամոթալի հաշտության» անմիջական արգասիք, սակայն փաստը մնում է փաստ, որ Մոկքում հայոց եկեղեցու եպիսկոպոսության կողքին գոյություն ուներ նաև ասորականը:

IV դարում և V դարի սկզբներին Սասանյան արքունիքն աշխատում էր ասորական եկեղեցին օգտագործել քաղաքական նկատառումներով, որպես հռմեական, իսկ ավելի ուշ բյուզանդական եկեղեցու հակակշիռ: Կամենալով գրեթե ինքնահոսի թողնված ասորական եկեղեցու գործունեությունը կանոնավորել, ինչպես նաև ուժեղացնել Տիգրանի եպիսկոպոսության կամ կաթողիկոսության դիրքերն, ու այն ներառել պարսից արքունիքի վերահսկողության ներքո, պարսից Հազկերտ Ա արքան թույլ տվեց իսահակ կաթողիկոսին, որ նա ժողովի հրավիրի բոլոր թեմերի եպիսկոպոսներին<sup>3</sup>: 410 թվականի հունվարի 6-ին ասորական եկեղեցու 40 եպիսկոպոսներ հավաքվում են Տիգրանում, սակայն ինչ-ինչ պատճառներով ժողովը գումարվում է միայն փետրվարի 1-ին<sup>4</sup>: Ժողովի արձանագրությունից պարզվում է, որ Տիգրանի կամ Արևելքի կաթողիկոսությունը բաժանվում էր 6 թեմի, ըստ որում թեմական բաժանումը չնչին բացառությամբ համապատասխանում էր Պարսկաստանի վարչա-քաղաքական բաժանմանը<sup>5</sup>: Ասորական եկեղեցու Մծբնի թեմը բաղկացած էր 5 եպիսկոպոսություններից, որոնք էին՝ Արզնը, Կարդուն, Բեյթ Զարդեն, Բեյթ-Ռախիման և Բեյթ Մոկսան<sup>6</sup>, այսինքն Աղձնիքը, Կորդուքը, Ծավդեքը, Ռեհիմենեն և Մոկքը: 410 թ. Սյունիոդոսի տակ ստորագրել է Բեյթ-Մոկսայի եպիսկոպոս Դանիելը (Βεῖθ Μοκσάϋε):

Մոկքը կամ նրա իշխանական տունը հիշատակվում են բազմիցս V դարի ազատագրական պատերազմների ժամանակ<sup>7</sup>: Մինչև Հայաստանի 591 թվականի բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Մոկքը մաս էր կազմում Հայկական մարզպանության Տանուտիրական գնդի վարչական շրջանին: Բաժանումից հետո հայկական հողերի մեծ մասն անցավ Բյուզանդիային, իսկ Սասանյաններին ենթակա Հայկական մարզպանությունը, որ նույնական էր Սեպիական կամ Վասպուրական գնդի երկրին, իր մեջ ներառ-

<sup>1</sup> J. B. Chabot, Synodicon Orientalum, Paris, 1902, էջ 256:

<sup>2</sup> Հ. Գ. Մելքոնյան, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, էջ 219:

<sup>3</sup> E. Honigmann et A. Maricq, Recherches sur les Res Gestae Divi Saporis, 1952, էջ 45: Տե՛ս նաև Հ. Գ. Մելքոնյան, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, էջ 219:

<sup>4</sup> J. B. Chabot, Synodicon Orientalum, էջ 272:

<sup>5</sup> «Եղիշէի Վասն Կարդանայ եւ Հայոց պատերազմին», էջ 28, 43, 116: Դազար Փարպեցի, էջ 44, 45, 47, 52, 72, 126, 127:

<sup>1</sup> «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», էջ 460:

<sup>2</sup> Անդ, էջ 414:

նում էր լոկ Վասպուրականը, Մոկքը, Պարսկահայքի և Կորճայքի որոշ հատվածներ և Դվին քաղաքն իր շրջակայքով<sup>1</sup>: Աստիճանաբար Վասպուրական աշխարհի գաղափարը մեռնում էր, իր տեղը զիջելով Վասպուրական-Հայկական մարզպանության գաղափարին<sup>2</sup>, որի հետևանքով արաբական աղբյուրներում արդեն Մոկքը համարվում է Վասպուրականի մաս:

Անդրադառնալով Մոկք տեղանվանը, գերմանացի հայագետ Հ. Հյուբընմանը գրել է. «Թե Մոկք նաեւ երկրին բնակիչները կցուցընէ՞ր (հմմտ. Հայք = «Հայաստան» եւ «Հայեր»), կարելի չէ հաստատել. նմանապէս այս անուան Մոկ եզակին ալ գործածուած չի գտնուիր: Ասկէ ածանցուած մոկացի բառը կը գործածէ Խոր. 80: Կը սպասուէր որ այս անուան յունարէն-լատ. ձեւն ըլլար \*Mokene, Mocena կամ հայ Մոկս հայցականը հիմ բռնուելով \*Moxena (հմմտ. ասոր. (Bē) Moksāyē), որ Corduena անուան ազդեցութեամբ կրնար Moxuena ալ եղած ըլլալ: Ասոր տեղ մեր դիմացը կ'եւէ Moxoena ձեւը (x-է ետքը o-ով մը), որուն ծագումը մթին է»<sup>3</sup>. Այս հարցերը, որ խիստ հետաքրքիր են լեզվաբանական տեսակետից, սպասում են իրենց հետազոտողին և դուրս են մնում մեր պատմա-տարածական, տեղագրական քննության շրջանակներից, ուստի և նրանց ուսումնասիրությանը չենք անդրադառնում:

## ԳՆՈՒՄ Զ

### Կ Ո Ր Ճ Ա Յ Զ

Մեծ Հայքի ծայր հարավային աշխարհի՝ Կորճայքի մասին մեր տեղեկությունները կցկտուր են, իսկ որոշ դեպքերում անգամ հակասական: Այդ լեռնային, դժվարամատչելի, ճանապարհներից գրեթե զուրկ երկրամասում զարգացումը դանդաղ էր ընթանում և միակ քաղաքը, որ հիշատակվում է թե՛ անտիկ շրջանում և թե՛ վաղ միջնադարում, Կորդվաց թագավորության մայրաքաղաք Փինիկն է: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Կորճայք աշխարհի ձևավորման պատմությունը, որ սերտորեն աղերսվում է Մեծ Հայքի թագավորության վարչա-քաղաքական իրադարձությունների պատմությանը:

Համաձայն «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության, Կորճայքը Մեծ Հայքի վեցերորդ աշխարհն էր և ուներ 11 գավառ. «Զ. Կորճէք<sup>1</sup> յեւլից կան Մոկաց: Ունի գաւառս մետասան<sup>2</sup>. զԿորդուս<sup>3</sup>, յորում Թման՝ առ Ասորեստանեաւ. զԿորդիս<sup>4</sup> Վերի, զԿորդի Միջի, զԿորդիս Ներքի, զԱյտ-

<sup>1</sup> Տարընթերցումներն են «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում՝ Կորճայք, Կորճէք, Կորճէք և Կորճ:

<sup>2</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող «Աշխարհացոյց»-ի մի խումբ ձեռագրերում (թիվ 1482, 1518 և 1770) աշխարհի գավառների քանակը 9 է:

<sup>3</sup> Տարընթերցումներն են Կորդուս, Կորդոս, Կորդուն, Կորդոս, Կորդիս: Գավառանունը թիվ 1482, 1518 և 1770 ձեռագրերում հիշատակվում է Կորդիսից հետո, որը վկայում է «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի հիշյալ խմբի մեջ գավառանման սկզբնական բացակայության և հետագայում սխալ վերականգնման մասին: Գավառանունը բացակայում է «Աշխարհացոյց»-ի թիվ 582, 1717, 3941, 5613 ձեռագրերում: Վենետիկյան ձեռագրերից մեկն ունի Կորդուս ընթերցումը:

<sup>4</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերին հայտնի է մեկ միասնական Կորդիք գավառ: Ա. Աբրահամյանը «Աշխարհացոյց»-ը հրատարակելիս (թիվ 582 ձեռ.) բնագրի մեջ մուծել է Կորդիս Վերի, Կորդիս Միջին և Կորդիս Ներքին գավառները, վերագրելով բնագրի Կորդիսին Կորդուքի բովանդակությունը, որ ձիշտ չէ (Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349): Զ Պատկանյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության տեքստում հիշյալ գավառանունները առկա են, որը կարող է վկայել կամ համառոտ խմբագրության ձեռագրերից մեկում նրանց գոյության, կամ էլ Վենետիկի Մխիթարյանների կողմից ընդարձակ խմբագրության հարողման համաձայն կատարած սրբագրության մասին: Գավառանվան տարընթերցումներն են՝ Կորդիս, Կորդիս, Կորդրիս, Կարդիթ, Կորդիս: Թիվ 5613 ձեռագրի ուշ շրջանում կատարած ընդմիջարկության համաձայն Կորդիքը նույնական է Պոնտանքին («որ է Պաւտանք»): Թիվ 3941 ձեռագրում գավառանունը բացակայում է:

<sup>1</sup> Б. А. Арутюнян, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, տե՛ս «Кавказ и Византия», вып. I, էջ 19-35:

<sup>2</sup> Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, թիվ 3, էջ 137:

<sup>3</sup> Հ. Հարությունյան. Հին Հայոց տեղույն անունները, էջ 83-84:

ւանս<sup>1</sup>, զԱյգառս<sup>2</sup>, զՈրոզանս<sup>3</sup>, զՈրիսանս<sup>4</sup>, զՍարապոնիս<sup>5</sup>, զՃահուկ<sup>6</sup>, զՓոքր Աղբակք<sup>7</sup>: Ունի զառիկ, եւ ի պտղոց շահդանակ, այսինքն գանգար փշոյ սերմն<sup>8</sup>: Ի տարբերություն ընդարձակի, որ Թմանն է համարում Ասորեստանին սահմանակից, «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը ընդգծում է, որ Կորճայքը գտնվել է Մոկբից արևելք՝ Ասորեստանի սահմանակցությամբ. «Կորճայք յելից կա Մոկաց առ Ասորեստանիս»<sup>9</sup>:

Կորճայքի տարածքը, ուշ շրջանում գտնվելով քրդական վայրենաբարոց ցեղերի և ասորական կիսանկախ աշիրեթների իշխանության ներքո, ոչ միայն գրեթե մատչելի չէր եվրոպացի ճանապարհորդներին ու գիտնականներին, այլև անգամ թուրքական իշխանություններին, որոնց գերակայությունն այս երկրամասում անվանական էր: Ուստի միանգամայն բնական են մինչև 1915 թ. կազմված քարտեզների այն ձեռնակ հատվածները Կորճայքի տարածքն ընդգրկող մասերում, որոնք պայմանավորված էին տեղանքի վերաբերյալ նյութերի բացակայությամբ: Չունենալով ձեռքի տակ մեծ մասշտաբի մանրամասն քարտեզներ, անշուշտ դժվար է տեղադրել Կորճայքի գավառները, որոնց մի մասը հիշատակվում է միայն «Աշխարհացոյց»-ում: Երկրամասի գավառների այն խումբը, որի վերաբերյալ սկզբնաղբյուրները պահպանել են փոքրիշատե ամբողջական տեղեկություններ, առավել կամ պակաս ճշտությամբ տեղադրվել է հայագետների կողմից: Ուստի մնում է բացահայտել

<sup>1</sup> Տարընթերցումներն են՝ Արոուանս, Աորուանս, Աբաանս, Արիիսախ: Թիվ 2370 և 4284 ձեռագրերում հանդիպում են Աբավանս և Աորուանս անունները մեկտեղ, իսկ թիվ 1717 և 5613 ձեռագրերում գավառը նույնացված է Ջուլամերկին («որ է Ջուլամերկ իր թեմովն»): Ղ Ինճիճյանը Աբավանքը տարբերել է Աբովանքից և դասել ինքնուրույն գավառների շարքը (Ղ Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 138): Իրականում կատարվել է սխալ գրիչի կողմից, «տ»-ն գրվել է «ա»:

<sup>2</sup> Տարընթերցումներն են՝ Այգառք, Այ, Աղ, Ազ: Համառոտ խմբագրության ձեռագրերը, գրեթե որպես կանոն, չեն հիշատակում գավառանունը: Վերը բերված երեք աղճատված տարընթերցումները տեղ են գտել Մատենադարանի թիվ 1482, 1518, 1770, 1898, 2370 և 4284 ձեռագրերում: Ղ Ինճիճյանի գավառանունը հայտնի է միայն Այ ձևով:

<sup>3</sup> Տարընթերցումներն են՝ Մոթղանս, Մոթողանս, Մոթղանս, Մոթոզանս, Մոթոանս, Մոթոզանս և Մոթոզանս:

<sup>4</sup> Տարընթերցումներն են՝ Որսիրանս, Պսիրանս, Որսիրան, Որսիրոն: Ճիշտը Որսիրանքն է, որը պահպանել է նաև Արծրունյաց պատմիչը (տե՛ս «Պատմութիւն Տանն Արծրունեաց, էջ 160»):

<sup>5</sup> Տարընթերցումներն են՝ Կարատունիս, Կարատունիս, Կարատունիս, Կարատունիս, Կարատունիս, Կարատունիս, Սարապոնիք, Կարթունիս և Կարատունիս: Դժվար է ասել, թե ինչից ելնելով Ղ Ինճիճյանը գավառանվան ճիշտ գրությունը համարում է Կարապոնիքը (նշվ. աշխ., էջ 138):

<sup>6</sup> Տարընթերցումներն են՝ Ճահուկ, Ճահուկն, Ճահակ, Մահուկն, Մախուկն (վերջին երկու գրելաձևերը հանդիպում են Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 1482, 1518 և 1770 ձեռագրերում, որոնցից հետո ավելացված է Ելի գավառանունը):

<sup>7</sup> Տարընթերցումներն են՝ Փոքր Աղբակ, Փոքր Աղբագ, Փոքր Աղբակ և Փոքր Աղբակք:

<sup>8</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Կորնելոսյ յանուածովք նախնեաց», էջ 32:

<sup>9</sup> К. П. Патканов, Армянская География VII века, էջ 18: Ա. Գ. Արրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349:

Կորճայքի աշխարհացոյցյան նկարագրության օրինաչափությունները և տեղորոշված գավառների օգնությամբ մոտավորապես տեղադրել մնացածները:

Կորճայքի առաջին և առավել հանրահայտ գավառը Կորդուքն էր, որի անունը այլևայլ իրադարձությունների առնչությամբ բազմիցս հիշատակվում է հայկական սկզբնաղբյուրներում և քաջ հայտնի է օտար հեղինակներին: Գավառանունն առաջացել է Կորդու կամ Կարդու ցեղանվանումից, որի առաջին հիշատակությունը վերաբերում է մ.թ.ա. V դարի վերջին: Հունական տասնազարանոց զորաբանակը, որ Պարսկաստան էր եկել Փոքր Ասիայի սատրապ Կյուրոս Կրտսերի խնդրանքով՝ օգնելու վերջինիս տիրանալու աքեմենյան գահին, Կունակասայի անհաջող ճակատամարտից և Կյուրոս Կրտսերի սպանությունից հետո վերադառնում է հայրենիք, յոթ օրվա ընթացքում հաղթահարելով և կռվով անցնելով կարդուխների /Καρδοῦχοι/ լեռնային անառիկ երկիրը<sup>1</sup>: Համաձայն Քսենոփոնի Հայաստանի և կարդուխների երկրի սահմանը Կենտրիտես գետն էր<sup>2</sup>, որը ուսումնասիրողների կողմից միանշանակ նույնացվում է Արևելյան Տիգրիս (այժմ՝ Բոհտան-սու) կամ Ջերմ գետին<sup>3</sup>: Չնայած այն իրողությանը, որ կարդուխները Քսենոփոնի վկայությամբ թըշնամական հարաբերությունների մեջ էին հայերի հետ և ասպատակում էին նրանց երկրամասերը, նրանք, ամենայն հավանականությամբ, հնդեվրոպական, ըստ երևույթին, հայատիպ ցեղ էին: Անկասկած է, որ հույները ցեղանվանը ծանոթացան կամ կարդուխներից անմիջականորեն կամ էլ նրանց հարավային հարևաններից: Համենայն դեպս, եթե ցեղանունը վերցնեին հայերից, այն կարդուխ չէր հնչի: Հայերեն Կորդուք և կարդուխ ձևերի համեմատական քննությունը ցույց է տալիս, որ **o** > **ա** հնչյունափոխությունը, որ հատուկ է հնդեվրոպական լեզուներին և այդ թվում հայերենին, սովյալ դեպքում հայերենում տեղի չի ունեցել: Այլ խոսքով, հնագույն շրջանում ցեղանունը եղել է Կորդու, որը և փոխառվել է հայերի կողմից: Սակայն սեմական լեզուներում երկրանունը հանդիպում է Qardū (եբր., ասոր.), Qardō (ասոր. նեստ.) և Qardā (Բալաձորի) ձևերով<sup>4</sup>, որ խոսում է այն մասին, որ կարդուխներն ու մինչև մ.թ.ա. V դարը տեղի է ունեցել **o** > **ա** հնչյունափոխությունը, իրողություն, որի հետևանքով էլ կարդուխների հարավային հարևանները, ինչպես նաև հարավից հյուսիս շարժվող հունական զորաբանակը նրանց կոչել են կարդուխ: Ջարդու, Կարդուխ և Կորդուք անվանաձևերի հա-

<sup>1</sup> Քսենոփոն, Անաբասիս, էջ 82-89:  
<sup>2</sup> Անդ, էջ 88-89:  
<sup>3</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 199: Jos. Markwart, Südarmanien und die Tigrisquellen, էջ 229 և այլք:  
<sup>4</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 202:

մեմատական քննությունը մեզ բերում է մի նոր եզրակացության ևս: Այսպես, չնայած հույն հեղինակը ցեղանունը հիշատակում է *Καρδο γοι* գրությամբ, այսուհանդերձ ցեղը կոչվել է ոչ թե կարդուս, այլ կարդու: Հին հունարենում «X»-ն արտասանվում էր «ք», հետևաբար հույները ցեղանունը ընկալել են կարդուք հնչյամով: Վերջինիս «ք»-ն, ինչպես դժվար չէ համոզվել *Քարդու, Քարդո* և *Քարդա* ձևերից, պարզապես հոգնակիակերտ մասնիկ է, լիովին համարժեք հին հայերենի հոգնակիակերտին: Հույները չեն ընկալել այն նշված իմաստով, ուստի և իրենց հերթին ավելացրել են հունարենի հոգնակիակերտ -οί-ն (Հմմտ. *Տայք = Ταοχοί*): Կարծում ենք, որ վերոբերյալից տրամաբանորեն բխում է այն եզրակացությունը, որ չնայած հայերի և կարդուսների թշնամական հարաբերություններին, վերջիններս նույնպես հայկական ցեղ էին:

Կորդուքի տարածքում, հավանաբար, դեռևս Աքեմենյան տիրապետության շրջանում ձևավորվում է մի իշխանություն, որը չէր ճանաչում կամ էլ անվանապես էր ընդունում պարսից տիրապետությունը<sup>1</sup>: Հավանաբար մ.թ.ա. 190 թվականի Մազեստիայի ճակատամարտից հետո, երբ Առաջավոր Ասիան քաղաքական փոթորիկ էր ապրում, ձևավորվում է Կորդվաց թագավորությունը: Ստրաբոնի վկայությամբ կորդուների կամ կարդուսների երկրում էին գտնվում Սարիսա *Ἰσάρεισα*, Սատալկա *Ἰσάταλκοί* և Փինակա *Πίνακα* քաղաքները, որոնցից վերջինը երեք միջնաբերդ ուներ և, չնայած անառիկությանը, գրավվում է հայոց Տիգրան Մեծ (95-55 թ. մ.թ.ա.) թագավորի կողմից<sup>2</sup>: Ուսումնասիրողների կարծիքով Սարիսան նույնանում է Կադմուսի կամ Կատմուսի երկրի Շերիշե կամ Շերեշե քաղաքին, որի անունը պահպանել է Հիսն-Քեյֆից շուրջ 20 կմ հարավ-արևմուտք գտնվող Շարիշ կամ Շերիշ գյուղը<sup>3</sup>: Պատշաճը մատուցելով սկզբնաղբյուրների վկայություններին, հարկ ենք համարում նշել, որ Շերեշեի տեղադրությունը Շարիշի տեղում որոշ բարդություն է ներկայացնում: Ըստ ասորեստանյան սեպագիր արձանագրության, Շերեշեն գտնվում էր Տիգրիսի ձախ ափին, իսկ ներկայիս Շարիշը տեղադրվում է գետի աջ ափին: Ենթադրել, թե արձանագրությունը ի նկատի ունի Տիգրիսի աջափնյա վտակներից մեկը, թերևս Նամեն, հիմնավոր չէ, որովհետև դրանք բոլորն էլ սակավաջուր են կամ էլ մշտական հոսք չունեն, ուստի և չէին կարող շփոթվել Տիգրիսի հետ: Այդ իսկ պատճառով, հակված

<sup>1</sup> Քենեֆոն, *Մնաբասիս*, էջ 81. «Ասում էին, որ սրանք (կարդուսները) ապրում են լեռներում և ռազմատնչ են ու չեն հպատակվում արքային (պարսից — Լ.Բ.):»

<sup>2</sup> Strabo, XVI, 1,24:

<sup>3</sup> Կիլոդաբու Ադոնց, *Հայաստանի պատմություն*, էջ 55: Н.В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 244: Տե՛ս Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 82 պլանշետը:

ենք կարծելու, որ ներկայիս Շարիշը իրականում համընկնում է անտիկ շըրջանի *Σαρεισά* քաղաքին, իսկ եթե, այնուամենայնիվ, Շարիշն ու Շերեշեն աղերս ունեն, ապա հավանական է ենթադրել, որ տեղանունը Տիգրիսի ձախափնյակից աջափնյակ է տեղափոխվել բնակչության տեղաշարժի հետ կապված<sup>4</sup>: Սարիսա-Շարիշի նույնացումը, ըստ մեզ, իր հաստատումն է գտնում Պլուտարքոսի մի անուղղակի վկայության մեջ և ցույց է տալիս, որ Կորդվաց թագավորությունն ուներ անհամեմատ ավելի մեծ տարածք, քան Մեծ Հայքի Կորդուք գավառը: Մինչև Տիգրան Մեծի գահակալությունը Կորդվաց թագավորությունը, ամենայն հավանականությամբ, գտնվում էր Պարթևական թագավորության քաղաքական ազդեցության ոլորտում: Սակայն պարթևների պարտությունից հետո՝ ի թիվս այլ փոքրիկ թագավորությունների, Կորդվաց թագավորությունն էլ ստիպված եղավ ճանաչել Հայոց թագավորի գերագույն իշխանությունը: Կորդվաց Ջարբիենոս թագավորը դեռ մինչև հռոմեական զորքերի արշավանքը, փորձում է բանակցությունների մեջ մտնել հռոմեական զորավար Լուկուլլոսի դեսպանորդ Ապսիոսի հետ և դավաճանության համար հատուցում է իր կյանքով: Մ.թ.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին, պարտության մատնելով հայոց զորքերին Տիգրանակերտի ճակատամարտում, Լուկուլլոսը շարժվում է Կորդուք, կազմակերպում Ջարբիենոսի թսղման արարողությունը և ձմեռում այնտեղ: Պլուտարքոսի վկայությամբ, Կորդուքում հայոց թագավորը կուտակել էր 3 միլիոն մեդիմն ցորեն<sup>2</sup>, որը հնարավորություն է տալիս հռոմեացիներին լիառատ անցկացնել 69/68 թվականի ձմեռը: 68 թ. Լուկուլլոսը թողնում է Կորդուքը, որտեղ սկսվել էր հացահատիկների հունձը, և շարժվում դեպի Մշո դաշտ, որտեղ՝ Պլուտարքոսի և Դիոն Կասիոսի հաղորդմամբ, հացաբույսերի ցանքսերը դեռ կանաչ էին<sup>3</sup>: Կորդուք գավառի լեռնային պայմաններում հացաբույսերը հասունանում են գրեթե նույն ժամանակում և անգամ ավելի ուշ, քան Մշո դաշտում: Ուստի անտիկ հեղինակն, անկասկած, ի նկատի ունի թագավորության արևմտյան մասը, որը ջերմ կլիմա ունեցող տափարակ երկիր էր: Հենց սա էլ այն անուղղակի փաստարկն է, որը խոսում է Սարիսա-Շարիշ նույնացման օգտին:

Ս. Երեմյանի կարծիքով, Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ հանդիպող Սատալկան Մովսես Խորենացու հիշատակած Ալկի ամրոցն է և առաջացել է հայերեն Շատ-Ալկի ձևից<sup>4</sup>: Ցավոք, շատ գայթակղիչ այդ նույնացումից

<sup>1</sup> Տե՛ս И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник Древней истории», 1951, թիվ 2, 10. I, 62. I, 89. II, 16: Н.В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 244:

<sup>2</sup> Плутарх, Лукулл, գլ. 29:

<sup>3</sup> Плутарх, Лукулл, գլ. 31, Կասիոս Դիոն, գլ. 36, գլ. 42:

<sup>4</sup> Ս.Տ. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, էջ 32:

ստիպված ենք հրաժարվել, որովհետև **Սատալկան** և **Ալկին** անվերապահորեն տարբեր բնակավայրեր են: Հեղինակն իրավացի է, երբ **Սատալկան** համարում է հայերեն **Շատ-Ալկիի** հունական տառադարձումը, սակայն այն հանգամանքը, որ **Շատ-Ալկի** նշանակում է **Ստորին կամ Ներքին Ալկի**, վկայում է, որ նրանք նույնանալ չեն կարող: Այսօր, երբ տեղանունների հին շերտը հիշյալ երկրամասում հիմնականում անդառնալիորեն կորած է, դժվար է ճշգրտել կորուցած **Սատալկան**, սակայն, ելնելով տեղանունների ստեղծման որոշակի օրինաչափություններից, կարելի է տեսականորեն ենթադրել, որ այն գտնվել է Խաբուր գետի հովտում, **Ալկիից** հարավ կամ հարավ-արևմուտք ընկած շրջանում: Առաջին դատողությունը, որ կարելի է անել, թերևս ներկայիս **Բեյթ-ուլ-Շաբաբ** բնակավայրի հավանական նույնացումն է **Սատալկային**: Սակայն այն նույնպես անընդունելի է, քանի որ **Սատալկան** գտնվել է Կորդվաց թագավորության մեջ, իսկ ներկայիս **Ալկին**, **Բեյթ-ուլ-Շաբաբը** ընկած են, եթե հավաստի է Պատմահոր հաղորդումը, պատմական **Տմորիքի** տարածքում: Վերջինս, ինչպես հայտնի է Ստրաբոնի «Աշխարհագրություն»-ից և Մովսես Խորենացու պատմությունից, որի մասին դեռ կխոսվի, Մեծ Հայքի թագավորության մեջ է մտել դեռևս Արտաշես Ա (189-160 թթ. մ. թ. ա.) թագավորի օրոք, իսկ **Սատալկան** Կորդվաց թագավորության հետ մեկտեղ գրավել է Տիգրան Մեծը (95-55 թթ. մ. թ. ա.): Ուստի **Սատալկան** պետք է փնտրել Խաբուրի հովտում, սակայն **Տմորիքից** դուրս ընկած հատվածում: Դատելով բնաշխարհագրական մի շարք հանգամանքներից, չի բացառվում ներկայիս **Զախոյի** նույնացումը **Սատալկային**: Սակայն այս հարցը, որ դուրս է մեր ուսումնասիրության հստակ շրջանակներից և կարոտ լուրջ քննության, մենք համակողմանի լուսաբանության ենթարկել այստեղ մտադիր չենք: Ինչ վերաբերում է Կորդվաց թագավորության մայրաքաղաք **Փինակային**, ապա վերջինիս տեղագրությունը հայտնի է: **Ներկայիս Ֆինիկ կամ Փինիկ** բնակավայրը պահպանել է և նրա անունը և տեղագրությունը:

**Աշխարհացույցյան Կորդուք** գավառը, բնականաբար, երբևէ չի ընդգրկել Կորդվաց թագավորության ողջ տարածքը: Այն տարածվել է Տիգրիս գետի ձախ ափին, Ջերմ գետով սահմանակցել է Աղձնիքին, Կորդվաց լեռներով՝ Մոկքին, Արևելյան Խաբուրով կամ, որ ավելի հավանական է, նրանից հարավ տարածվող լեռներով՝ Ասորեստանին, իսկ արևելքում հասել է մինչև Արևելյան Խաբուրի Խազիլ և **Բեյթ-ուլ-Շաբաբ** վտակների ջրբաժան գիծը<sup>1</sup>: Այս առումով հարկ է նշել, որ Ս. Երեմյանը, անհասկանալի պատճառներով հակադրվելով «Աշխարհացույց»-ի «**Կորդուս, յորում Թման**» տեղեկությանը, փորձել է **Թմանը** տեղորոշել **Կորդիք Ներքին** գավառի տարածքում<sup>2</sup>: Հավանա-

<sup>1</sup> Ս.Տ. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), քարտեզ, Դ-4, Դ-5:

<sup>2</sup> Անդ:

բար, նման եզրակացության նրան մղել է Ստրաբոնի հաղորդումն այն մասին, որ Արտաշես Ա-ն ասորիներից գրավել է **Ταρωνίτις**-ը<sup>1</sup>: Վերջինս **Հ. Քիփերթը** (Կիպերտ) նույնացրել է Տարոնին<sup>2</sup>, սակայն Տոմաշևիկի, Մարքվարթի և նրանց հետևողների կարծիքով այն պետք է սրբագրել ոչ թե **Ταρωνίτις**, այլ **Ταρωριτις** և նույնացնել **Տմորիքին**<sup>3</sup>: Անդրադառնալով հիշյալ սրբագրությանը, Ս. Երեմյանը գրել է, որ դրա կարիքը չկա, քանի որ **Ταρωνίτις**-ը Ստրաբոնի մոտ պահպանվել է անաղարտորեն, նշանակելով **Թման** գյուղն իր շրջակայքով<sup>4</sup>: **Գ.** Մարգսյանը, համաձայնելով **Տոմաշևիկի**, **Մարքվարթի** և նրանց հետևող **Հ. Մանանդյանի** տեսակետին, իրավացիորեն նշում է, որ Տարոնը՝ Երվանդունիների թագավորության մշտական մասը կազմելով, ոչ մի կերպ չէր կարող համապատասխանել Ստրաբոնի հիշատակած **Տամոնիտիսին**: Ուստի միանգամայն տրամաբանական է **Տմորիքի** նույնացումը **Տամոնիտիսին**, առավել ևս, որ **Տմորիքը** հիշատակվում է Պատմահոր կողմից Արտաշես Ա-ի գործունեության առնչությամբ: Այսուհանդերձ, հարգարժան ուսումնասիրողն ինչ-որ չափով տուրք է տալիս Ս. Երեմյանի տեսակետին, գտնելով, որ գործն ըստ էության չի փոխվում, քանի որ **Թմանը** գտնվում էր **Կորդուքում**, որի մի մասն էր կազմում **Տմորիքը**<sup>5</sup>: Իրականության մեջ **Տամորիտիս** = **Թմանուն** նույնացումը պարզապես հակասում է սկզբնաղբյուրների հաղորդումներին: Եթե իրոք Արտաշես Ա-ն Մեծ Հայքին էր միացրել **Թմանն** իր շրջակայքով, ապա ստացվում է, որ հայկական տիրույթները սեպի պես խրվել էին Կորդվաց թագավորության և Ասորեստանի միջև, որն այն ժամանակների համար, համենայն դեպս, հավանականություն գրեթե չունի: Մյուս կողմից, Փավստոս Բուզանդի և այլ հեղինակների տեղեկությունները պարզորոշ հավաստում են, որ գոնե III-V դարերում **Տմորիքը** **Կորդուքի** մաս չի կազմել, այն դեպքում, երբ «**Աշխարհացույց**»-ը **Թմանը** համարում է **Կորդուքի** բաղկացուցիչ հատվածը: Պատմահայր Խորենացին հիշյալ դեպքերի առնչությամբ հիշատակում է **Տմորիքը** և ոչ թե **Թմանը** և վերջապես շուրջ մեկ դար առաջ Մեծ Հայքին միացված **Տամոնիտիսը** հայոց արքունիքի կողմից հազիվ թե կրկին միացվեր **Կորդուքին**, որը քաղաքական տեսակետից ոչնչով արդարացված չէր ու անիմաստ քայլ էր:

<sup>1</sup> Strabo, XI, 14, 5:

<sup>2</sup> «Monatsberichte der Königl. Akademie der Wissenschaften zu Berlin», 1873, էջ 173:

<sup>3</sup> Վ. Տոմաշևիկ, Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները, Վիեննա, 1896, էջ 11-12: J. Marquart, Eränšahr, էջ 170, ծան. 2:

<sup>4</sup> Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 53, 60, 68, 86 և այլն:

<sup>5</sup> «Հայ ժողովրդի պատմություն», ՀՄՄՀ ԳԱ հրատ., հ.Ա, էջ 547:

Թմանը Թմնիս հայկականացված գրությամբ հանդիպում է «Հռիփսիմեանց պատմութեան» մեջ<sup>1</sup> և նշանակում է «*ուր ոգիք ելին ի տապանէն*»<sup>2</sup>: Համաձայն Ղ Ինճիճյանի տեղեկության, ուշ ժամանակներում այն կոչվում էր **Գարեեի Թմանին**, այսինքն **Գեօղ ութից**, երբեմն նաև **Զորդա**: Այս ավանում, որը գտնվում էր Ջուղի լեռան հարավային փեշերին Ջեզիրե-իբն-Օմարից յոթ ժամյա հեռավորության վրա, հինավուրց ավանդության համաձայն, Նոյան տապանից իջել են Նոյը և նրա հետ այնտեղ գտնվողները, ընդամենը ութ հոգի, որի պատճառով գյուղն ստացել է **Գեօղ ութից** անվանումը<sup>3</sup>: Մեր օրերում **Թմանը** (ասոր. *ṭā mā nōn*, հուն. *κόμη Θαμανών*, արաբ. *ṭamānūn* (**Թմանին**) *Beith-ṭmānīn*) կոչվող քրդաբնակ գյուղն է, որը քրդերը, կոչում են **Heštane**: Վերջին անվանումը պայմանավորված է արաբական ազդեցությամբ, քանի որ քրդերը հաստատվելով այս շրջանում արաբական տիրապետության հաստատումից հետո, թարգմանել են ոչ թե ասորական *ṭā mā nōn*-ը, այլ արաբական *ṭamānūn*-ը (թարգմանվում է ութսուն), որի հետևանքով բնակավայրը ստացել է **Heštane** (= ութսուն) անվանումը<sup>4</sup>:

Կորձայքի հաջորդ երեք գավառները կրում են **Կորդիք Վերին**, **Կորդիք Միջին** և **Կորդիք Ներքին** անունները, որը ցույց է տալիս, որ հեռավոր ինչ-ինչ ժամանակներում հիշյալ գավառների ամբողջությունը կրել է միասնական **Կորդիք** անունը: Հետագայում երկրամասի վարչական բաժանումների փոփոխությունների հետևանքով այն բաժանվել է երեք առանձին գավառների: «**Աշխարհացոյց**»-ի նկարագրության աշխարհագրական հերթականությունն, անկամված, վկայում է հօգուտ հիշյալ գավառների Արևելյան Խաբուր գետի Բեյթ-ուլ-Շաբաբ վտակի ավազանում տեղադրելու մասին: Մովսես Խորենացին, անդրադառնալով Արտաշես Ա-ի դայակ Սմբատ Բագրատունու գործունեությանը, հաղորդում է, որ վերջինս «**Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդիք, ի վիկի նստուցեալ զբազմութիւն գերւոյն, քանզի էր ի ծերութեան կին արարեալ յասորեստանեացյց հուպ այն կողմանս, զոր յոյժ սիրեաց, վասն այնորիկ և զնորին կողմամբ բնակեցաւ**»<sup>5</sup>: Մինչև այսօր էլ Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի վերին ավազանում պահպանվել է **Էք** անունով

մի գյուղ, որը ուսումնասիրողները նույնացնում են Պատմահոր հիշատակած **Ալկիին**: Տեղադրությունը, եթե վիճաբանություններ չի հարուցում, ապա խիստ վիճահարույց է **Կորդիք-Կորդիքի** և **Տմորիքի** նույնացման խնդիրը: Փավստոս Բուզանդի հաղորդմամբ, հայոց Արշակ Բ թագավորի դեմ ապստամբած երկրամասերի մեջ էին «*և ամուր գաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդեաց. ապա տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից*»<sup>1</sup>: Հեղինակը կրկին հիշատակում է **Կորդիքը**, կապված Մուշեղ Մամիկոնյան սպարապետի՝ ապստամբած երկրամասերի դեմ ձեռնարկած պատժիչ արշավանքի հետ. «*Հարկանէր Մուշեղ սպարապետն և զայս գաւառս ապստամբեալս յարքայէն Հայոց, զԿորդուս և զԿորդիս և զՏմորիս. առնոյր գերէր և աւերէր, դնէր հարկ մնացորդացն, և առնոյր պանդանդս*»<sup>2</sup>: Դժվար չէ տեսնել, որ պատմիչը քաջ պատկերացնում է հիշյալ երեք երկրամասերի տեղադրությունը, հիշատակելով մի դեպքում արևելքից արևմուտք, իսկ երկրորդ անգամ արևմուտքից արևելք հերթականությամբ: Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ պատմիչը հստակ իրարից զանազանում է **Կորդիքն** ու **Տմորիքը**, որոնք Պատմահայրը հակված է նույնացնելու: Որ այդ գոնե IV-V դարերում իրողություն էր, հավաստում է նաև եղիշեն, որը Տմորիքն ու Կորդիքը հիշատակում է որպես առանձին անառիկ երկրամասեր. «*Սոյնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին (Վասակ Սյունին - Հ. Բ.), ի Տմորիս և ի Կորդիսն, յԱրցախ...*»<sup>3</sup>: Վարդանանց պատմիչի մեկ այլ վկայությամբ, Ավարայրի ճակատամարտում անհաջողություն կրելուց հետո ապստամբների մի մասը գալիս է «*ի կողմանս հարաւոյ՝ յանմատոյց ամուրսն Տմորեաց, և կէսքն ի թանձրախիտ մայրիսն Արձախոյ*»<sup>4</sup>: Ավելին, ինչպես պարզվում է հետագա դեպքերից, «*որք էին յամուրս Տմորեաց, իբրև լուան զայս ամենայն չարիս, զոր գործեցին զօրքն արքունի, ... քաջութեամբ ելեալ յարձակեցան օգնականութեամբ ամրականացն, և հասեալ ի մօտաւոր աշխարհն Պարսկաց, յանխնայ կտորելով՝ նախճիրս արեան գործէին...*»<sup>5</sup>: Հետաքրքիր տեղեկություններ է պահպանել **Տմորիքի** մասին Թովմա Արծրունին: Մեզ անհայտ աղբյուրներից օգտվելով, Վասպուրականի պատմիչը հայտնում է, որ իբր Մարաց Աժդահակ թագավորը նվերներ է ուղարկում Անշանի թագավոր Կյուրոսին և խոստանում նրան Սենեքերիմյանների տերության քառորդ մասը. «*զկողմամբքն Նինուէի և զՏմորիս ամ-*

<sup>1</sup> «Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց», էջ 159:

<sup>2</sup> Անդ, էջ 209:

<sup>3</sup> «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», էջ 99:

<sup>4</sup> Անդ, էջ 125:

<sup>5</sup> Անդ, էջ 126:

<sup>1</sup> «Ճառ պատմութեան քանից ի սուրբն Հռիփսիմէ և յնկերան», տե՛ս «Արթոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւնը», Վենետիկ, 1865, էջ 301:

<sup>2</sup> Հ. Հրաբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 202:

<sup>3</sup> Ղ Ինճիճյան, Նոր Հայաստան, էջ 351:

<sup>4</sup> G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischen Märtyrer, Leipzig, 1880, էջ 174: M. Hartmann, Bohtan, տե՛ս «Mittheilungen der Vord.-Asiat. Gesellschaft», 1896, I, 53, 84, 1897, 2, 93, 128: Sachau, Reise durch Syrien und Mesopotamien, էջ 376: Հ. Հրաբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 203:

<sup>5</sup> «Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», էջ 183:

րոցան որ ի նմա»<sup>1</sup>: Հեղինակի մեկ այլ հաղորդման համաձայն, Լյուդիայի Կրեսոս թագավորին ձերբակալելուց հետո, հայոց Տրգրան երվանդյան արքայի զորավարներ Քսերքսեսն ու Նրա որդի Արշեզը, որոնք հայկական հյուսիսային և հարավային զորաբանակներով օգնության էին գնացել պարսից Կյուրոս թագավորին, վերջինից իրենց ծառայության դիմաց ստանում են «**ԳՏմորիս ամրոցան և զգետափնեայսն Նինուէի**»<sup>2</sup>: Արծրունյաց պատմիչի մեկ այլ տեղեկությամբ, Վարդանանց պատերազմի նշանավոր դեմքերից մեկը՝ Մերշապուհ (= Ներշապուհ) Արծրունին «**ի Տմորեացն ամրանայր բերդի**»<sup>3</sup>: Ըստ երևույթին, Թովմա Արծրունին ևս իրարից տարբերակում է **Տմորիքն** ու **Կորդիքը**, քանի որ՝ խոսելով Գագիկ Արծրունու եղբայր Գուրգենին բաժին ընկած տիրույթների մասին, նշում է, որ «**Գուրգէն (տիրեաց - Շ.Բ.) զկողմանս արևելից, յելից Աղբազոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուսս Կորդաց,**»<sup>4</sup> և ուր և ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ»<sup>5</sup>: Նախքան մատուցված նյութի ամփոփումն ու մեկնաբանումը նպատակահարմար ենք գտնում մեջ բերել նաև Սեբեոսի ներքոհիշյալ տեղեկությունը **Կողրեաց ազգի** մասին. «**Կային յաշխարհին (Վրկանայ-Շ.Բ.) յայնմիկ ազգն գերեալք ի Հայաստան երկրէ, և նստուցեալ առ ստորոտով անապատին մեծի, որ ի Թուրքաստանի և ի Դելիաստան կողմանէ. զլեզու իւրեանց մոռացան և դպրութիւն նուազեալք և կարգ քահանայութեանն պակասեալք: Կային անդ և ազգ Կողրեացն, որք գերեցան մերովքն արամբք: Կային անդ և յիշխանութենէն Յունաց և յԱսորոց կողմանէ ոչ սակաւք:**

էին ազգ Կողրեացն անհաւատք, բայց ի վերայ քրիստոնէիցն ծագէր լոյս մեծ. հաստատէին ի հաւատս և ուսանէին դպրութիւն և լեզու, և հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երեց ոմն ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Աբել»<sup>6</sup>:

Ի մի բերելով բերված հաղորդումների տեղեկությունները, կարելի է կատարել մի քանի եզրակացություններ: Հակառակ Պատմահոր, մյուս սկզբնաղբյուրների մեծ մասը **Տմորիքը** և **Կորդիքը** համարում է առանձին երկրամասեր: Փավստոս Բուզանդի տեղեկություններից դժվար չէ եզրահանգել, որ աշխարհագրական տեսակետից **Կորդուքից** արևելք գտնվել է **Կորդիքը** Բեյթ-ու-Շաբաբ գետակի հովտում, իսկ դրանից էլ արևելք **Տմորիքը**՝ Մեծ Զաբ գետի

<sup>1</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 62:

<sup>2</sup> Անդ, էջ 66:

<sup>3</sup> Անդ, էջ 130:

<sup>4</sup> «Կորդաց»-ը պետք է սրբագրել «Կորդեաց»:

<sup>5</sup> Թովմա Արծրունի և Անանուն, էջ 360:

<sup>6</sup> «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», ի ձեռն Ատ. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 61:

միջին ավազանի շրջանում: Եղիշեն հստակ վկայում է, որ և **Կորդիքը** և **Տմորիքը** մաս էին կազմում Հայկական մարզպանության, հակառակ այն ուսումնասիրողների, որոնք ենթադրում են, թե արդեն 387 թվից **Կորձայքն** ամբողջությամբ հանվել է Հայքի կազմից: Պատահական չէ, որ պատմիչի մեկ այլ հաղորդումից պարզվում է, որ ապստամբները Տմորիքից հարձակվել են մոտակա պարսկական երկրամասի վրա: Որքան էլ անհավատալի թվա, Թովմա Արծրունու հաղորդումն այն մասին, որ Քսերքսեսն ու Արշեզը Կյուրոսից ստացան **Տմորիքը** ամրոցով և Նինվեի գետափնայքը, վերաբերում է Արտաշես Ա-ի կողմից Տմորիքը գրավելուն: Շատ հնարավոր է, որ Քսերքսեսը ոչ այլ ոք է, բայց եթե հայոց Արտաշես Ա-ը, որն իրոք գրավել է Տմորիքը, սակայն հետագա հեղինակները, փորձելով բացատրել Տմորիքի Մեծ Հայքին միացման հանգամանքները, այն կապել են Կյուրոսի և Տրգրան երվանդյանի ժամանակների հետ: Հետաքրքիր է այն իրողությունը, որ Արծրունյաց Մերշապուհ կամ Ներշապուհ Արծրունին Ավարայրի ճակատամարտից հետո ամրանում է Տմորիքի ամրոցներից մեկում, իսկ ըստ Եղիշեի Տմորիքը անմատուց ամրոցներ ուներ: Թովմա Արծրունու մի շատ հետաքրքիր հաղորդումից պարզվում է, որ Վաչե Արծրունու որդի Սահակը Արտաշես Ա-ից ստանում է Աղբակ գավառը և այնուհետև ամուսնանալով Փոքր Աղբակի և Նրա Զլմար ու Սրինգ ամրոցների տիրուհի՝ Աշդահակի սերնդից Զայլամարի դստեր հետ, տիրանում է նաև Փոքր Աղբակին<sup>1</sup>: Անկախ, թե ինչ հանգամանքներում է Փոքր Աղբակը անցել Արծրունիներին, պարզ է անտարակույս մի իրողություն, որ այդ կատարվել է շատ վաղ ժամանակներում: Ավելին, բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Արտաշես Ա-ի օրոք Փոքր Աղբակը դեռևս վարչականորեն չէր ձևավորվել և պարզապես հանդիսանում էր միասնական Աղբակի մի մասը: Ուստի պատահական չէ, որ Արծրունյաց պատմիչը հավաստում է, որ Սահակը ստացավ Արտաշեսից ոչ թե Մեծ Աղբակը, այլ Աղբակը: Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման հետևանքով Աղբակը բաժանվեց երկու մասի, որոնք հայտնվելով երկու տարբեր աշխարհներում՝ Վասպուրականում և Կորձայքում, ստացան ըստ իրենց մեծության համապատասխանաբար **Մեծ Աղբակ** և **Փոքր Աղբակ** անունները: Հետևաբար, եթե Սահակը տիրացել էր Աղբակին ամուսնա-խնամիական կապերի, թե այլ հանգամանքների շնորհիվ, ապա հենց սկզբից իր տիրույթների մեջ ունեցել էր Փոքր Աղբակի տարածքը: Թովմա Արծրունու կողմից Սահակին Փոքր Աղբակի անցումը պատկերող տեղե-

<sup>1</sup> Թովմա Արծրունի և Անանուն, էջ 90. «Բայց կին ոմն յազգէն Աշդահակայ բնակէ յամուրսն Զլմար և ի Սրինգ, ի գաւառին ի Փոքր Աղբազ, և յանուն կնոջն Զայլամար, որ և զամուրսն յիւր [անուն] անուանէ, և ուներ կինն գանձ բազում, և նորա դուստր մի Անուշ անուն, առնու զնա Ասահակ կնութեան հրամանաւ Արտաշեսի, և կնքեալ աշխարհին հաստատէ Սահակայ ի սեպիական ժառանգութիւն»:



կուրթունը, մեր համոզմամբ, իր վրա կրել է ուշ ժամանակների ազդեցությունը, երբ Փոքր Աղբակը դարձել էր առանձին վարչական միավոր: Ելնելով վերն ասվածից, դժվար չէ տեսնել, որ Տմորիքի ամրոցներից մեկում ամրացած Մեր-շապուհ Արծրունին, ըստ էության, ամրացել էր իրեն պատկանող Փոքր Աղբակի անառիկ ամրոցներից որևէ մեկում:

Այսօր, աղբյուրագիտական կցկտուր նյութի առկայության պայմաններում, դժվար է ասել, թե ի՞նչ տարածք էր ընդգրկում Տմորիքը Արտաշես Ա-ի ժամանակներում, սակայն հստակ է է, որ IV-V դարերում այն զբաղեցնում էր Մեծ Զաք գետի միջին ավազանի մի մասը: Բնականաբար, մի շարք հարցեր են ծառանում մեր առաջ, թե ի՞նչն է ստիպել Պատմահորը հավասարության նշան դնելու **Կորդիքի** ու **Տմորիքի** միջև, ինչո՞ւ է Խորենացին հայտարարում, թե **Տմորիքը** իր ժամանակներում **Կորդիք** է կոչվում, երբ ուշ շրջանի հեղինակներին քաջ հայտնի է անունս, և համապատասխանում է այդ արդյո՞ք պատմական իրականությանը:

Խնդիրն այն է, որ մինչև այսօր էլ **Ջուլամերկից** դեպի արևմուտք, Մեծ Զաք գետի Լևին վտակի ավազանում գոյություն ունի մի բնակավայր, որը կրում է **Ալկիկ** կամ **Ալկիք** անունը<sup>1</sup>: Տեսականորեն հնարավոր է, որ Խորենացու տեղեկությունը վերաբերել է ոչ թե Բեյթ-ու-Շաբաբի հովտում գտնվող Ալկիին, այլ վերոհիշյալ Ալկիկին, սակայն հետագայում Պատմահայրը սխալմամբ մ.թ. ա. II դարի իրադարձությունները կապել է **Կորդեաց Ալկիի**<sup>2</sup> հետ և, քանի որ **Տմորիքի** հետ էին առնչվում գործողությունները, հակասությունը լուծելու համար նա փորձել է նույնացնել **Կորդիքն** ու **Տմորիքը**: Այս եզրակացությունը, որ արտաքննապես մեծ հավանականություն ունի, այնուամենայնիվ, չի համոզում, որովհետև հազիվ թե Մովսես Խորենացին, որ այնքան լավ գիտեր Հայաստանի աշխարհագրությունը, այդօրինակ սխալ թույլ տար: Ուստի մեզ առավել տրամաբանական է թվում, որ **Կորդիքը** սկզբնապես եղել է **Տմորիքի**

<sup>1</sup> Карта Генерального штаба, Масштаб 1:200000, J-38-20:

<sup>2</sup> Ա. Երեմյանի կարծիքով, Ալկի ամրոցը ասուրական արձանագրությունների «**Էլակուշ**»-ն է (Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 32), սակայն մեկ այլ առիթով նա այն նույնացնում է Էլովաթին - URU Eluhat (Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՄՀ ԳԱ հրատ., հատոր Ա, էջ 280): Մասնագիտական գրականության մեջ Էլովաթը նույնացվում է halsi Eluha-ին, որը Կաշիյարի լեռների շրջանում էր և Ալկիի հետ նույնանալ չէր կարող (Н.В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 255): Ավելի հավանական է, որ Ալկիին համապատասխանում է ասորեստանյան արձանագրությունների Էլակուշը (Elasu[š.....]): Տե՛ս АВИИУ, 19: **Վարդանի** «Աշխարհացոյց»-ի որոշ ձեռագրերում Ալկին հիշատակվում է **Ալկե քար** անունով. «Տմորիս եւ Ալկե քար Բոհտան է» («Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի», էջ 19): Ըստ երևույթին Ալկե քարի տակ հասկացվել է ոչ միայն ամրոցը, այլև վարչական նախկին միավոր **Կորդիքը**: Ալկին ծանոթ է նաև Յակոբոս իբն Համավիին որպես ամուր բերդ ազ-Ջավազանի մարզում) «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 23):

մի հատվածը և Տմորիքի առնչությամբ հիշվող **Ալկին** իրոք **Կորդեաց** մեջ էր: Սակայն Խորենացու օրերում վարչական կացությունը արմատապես փոխվել էր, ուստի հեղինակը՝ հիշատակելով Սմբատ Բագրատունու Տմորիքի Ալկի ամրոցում հաստատվելու իրողությունը, միաժամանակ նշում է, որ այն տարածքը, որտեղ գտնվում էր Ալկին, իր օրերում կոչվում էր **Կորդիք**: Համենայն դեպս, առկա փաստագրական նյութը այլ եզրակացության հնարավորություն չի ընձեռում:

Հ. Հյուբշմանը ենթադրում է, որ VI դարում **Տմորիքը** միացվել է **Կորդիքին** և այնուհետև կրել վերջին անվանումը: Դրանով էլ նա փորձում է բացատրել «**Աշխարհացոյց**»-ում Տմորիք անվան բացակայությունը<sup>1</sup>: Սակայն դրա հետ մեկտեղ նա արձանագրում է, որ X դարի հեղինակ Թովմա Արծրունին, որին քաջ ծանոթ էին Հայաստանի հարավային երկրամասերը, հիշատակում է Տմորիքը, սակայն չի հիշում **Կորդիքը**: Հարգարժան հայագետի մոտեցումները, ինչպես ավելի ուշ ցույց կտրվի, ելնում են սխալ հայեցակետերից, քանի որ աշխարհացոյցյան վարչական բաժանումները ոչ թե VI, այլ III դարի արգասիք են և, որ կարևորն է, Թովմա Արծրունին իրականում հիշատակում է նաև **Կորդիքը**, որը գերմանացի հայագետը ջանում է **Կորդուք** սրբագրել<sup>2</sup>: **Կորդուքը**, դժբախտաբար, երբեք չի մտել Արծրունիների տիրույթների մեջ, առավել ևս ամբողջությամբ, հետևաբար «**Կորդաց**»-ը կարող է ընկալվել միայն որպես «**Կորդեաց**»: Հետևաբար X դարի սկզբներին **Կորդիքը** կրկին հայկական երկիր էր, որի մինչև արևմտյան սահմանները ընկած տարածքը պատկանում էր Գուրգեն Արծրունուն:

Տմորիքը ծանոթ է ոչ միայն հայկական և հունական, այլև ասորական աղբյուրներին, որտեղ այն հանդիպում է Դմօրօթ գրությամբ<sup>3</sup>: Պարսից Կա-

<sup>1</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղույ անունները, էջ 207:

<sup>2</sup> Անդ, էջ 207: **Կորդիքի** առնչությամբ, կարծում ենք, հարկ է անդրադառնալ Սեբեոսի հիշատակած **Կորդեաց ազգին** (բնագրում՝ **Կորդեաց ազգն**): Պատմիչի տեղեկությունից պարզվում է, որ Կրկանից աշխարհի բռնազաղթեցվածների մեջ կային հայեր, որոնք մոռացել էին իրենց լեզուն և թերացել քահանայական կարգի մեջ, **կորդեացիք**, որոնք, եթե կարելի է «որք գերեցան մերովքն արամբք» արտահայտությունը սրբագրել «որք գերեցան ընդ մերովքն արամբք», թերևս գաղթեցվել էին հայերի հետ միասին, ինչպես նաև հույներ կամ, որ ավելի ճիշտ է, հռոմեներ և ասորիներ: «**Կորդեացիների ազգը**», հավանաբար, նույնպես հայեր էին, սակայն հեթանոս կամ հեթանոսացած: Նրանց մեջ տարածում են դպրություն ու լեզու և հաստատում քահանայական կարգ: Հարց է ծագում, իսկ ի՞նչ լեզու և դպրություն տարածեցին նրանց շրջանում: Բնագրի տրամաբանությունից ելնելով, կարելի է բխեցնել, որ տարածվեց հայ դպրութիւն և լեզու, ինչը անուղղակիորեն ցույց է տալիս, որ նրանք բռնազաղթեցվել էին Հայքի Կորդիքից կամ Կորդիքից, և, եթե անգամ հայեր էլ չէին, ապա հայկական ցեղ էին և նրանց համար խորթ ու անհասկանալի չէր հայերենը:

<sup>3</sup> Անդ, էջ 208:

վատ արքան 506 թվին մարտնչեց տմորացիների դեմ<sup>1</sup>, որոնց տակ, հավանաբար, հասկացվելու են ասորական այն գաղթականության սերունդները, որոնց Ալկի բերեց Սմբատ Բագրատունին: Ուսումնասիրողները հակված են հայկական **Տմորիքը** նույնանունը սեպագիր արձանագրությունների **Տումորուին** (Tumuru) <sup>2</sup>: Լեզվա-հնչյունաբանական առումով դրանց համարժեքությունը, ըստ էության, տարակույսներ չի ծնում: Թերևս միակ կասկածելի իրողությունն այն է, որ **Տմորիքը** գրվում է «ր»-ով, իսկ Tumuru -ն «ռ»-ով: Սակայն տեղադրական առումով **Տումորու** բնակավայրը գտնվել է Նիբուր (Ջուդի լեռ) սարի փեշերին, իսկ հայկական **Տմորիքը**՝ անհամեմատ ավելի արևելք: Չի բացառվում, որ անունս արևելք է տեղաշարժվել Սմբատ Բագրատունու տարած գաղթականության հետ մեկտեղ:

Ամփոփելով քննության արդյունքները, կարելի է վստահորեն ասել, որ **Կորդիքը** կամ **Կորդիքը** զբաղեցրել է Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի ավազանը, որի վերնամասում գտնվել է **Կորդիք Վերինը**, ընդգրկելով **Ալկի** ամրոցն ու նրա շրջակա տարածքը, հյուսիսից դեպի հարավ աշխարհագրական հաջորդականությամբ տեղորոշվում են **Կորդիք Միջինը** և **Կորդիք Ներքինը**, որոնցից վերջինը տարածվում էր մինչև Ասորեստանի սահմանը<sup>3</sup>:

Կորձայքի հաջորդ **Արտուանք** կամ **Ատրուանք** գավառի տեղադրությունը, որչափ մեզ հայտնի է, փորձել է ճշտել Ս. Երեմյանը, որի կարծիքով գավառանունը սկզբնապես եղել է **Ա[յր]տրուանք**, որը սեպագիր արձանագրությունների **Ուրուատրին** է և Ստրաբոնի Ἐρετριεῖς -ը: Ըստ հեղինակի, գավառը գտնվել է Մեծ Ջաբ գետի միջին հոսանքում, Տիարիի շրջանում<sup>4</sup>: Թերևս շատ զայթակղիչ է գավառիս անունը Ուրուատրիի հետ կապելը, սակայն, մեր կարծիքով, **Արտուանս**, **Ատրուանս**, **Արսանս**, **Ասուանդ** և **Արտիախ** տարընթերցումներից և ոչ մեկը դրա հնարավորությունը չի տալիս, չնայած աշխարհագրական տեսակետից երկուսն էլ մոտավորապես նույն շրջանում են ընկած: Դրան գումարվում է նաև այն իրողությունը, որ **Ուրուատրին** նշանակալից տարածք ունեցող երկիր էր, որի անունը հազիվ թե փոխանցվեր մի գավառի, որն իր աննշանության ու անկարևորության պատճառով լրկ մեկ անգամ է հիշատակվում հայոց պատմության մեջ և այն էլ լրկ **«Աշխարհացոյց»**-ում: Կա

<sup>1</sup> Յոշուա Ատիլյո (Մյունկյաց), տե՛ս «Ասորական աղբյուրներ», Ա, էջ 164:

<sup>2</sup> АБИИУ, թիվ 57, 58, 61: Տե՛ս նաև M. Hartmann, Bohtan, eine topographisch-historische Studie, տե՛ս Mittheilungen der Vorderasiatischen Gesellschaft, I, 1896, II, 1897:

<sup>3</sup> Ս.Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 60-61: Երեմյանի տեղադրությունը, բացառությամբ Թմանը Կորդիք ներքինում տեղորոշման, միանգամայն ընդունելի է:

<sup>4</sup> Ս.Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 35: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. Ա, էջ 280:

արդյո՞ք կապ ստրաբոնյան Ἐρετριεῖς -ի և **Արտուանք-Ատրուանքի** միջև, դժվար է ասել: Համենայն դեպս, դատելով մի շարք իրողություններից, **Արտուանք-Ատրուանքի** տեղադրության հավանական շրջանը չի մտել Կորդկաց թագավորության մեջ, իսկ Ստրաբոնի տեղեկության համաձայն Էրեստիեցիները հաստատվել էին **Գորդյունեն-Կորդուքում**<sup>1</sup>: Հնարավոր է մտածել հակառակը, որ **Էրեստիեա** անունը հիշեցնող **Ատրուանքը**<sup>2</sup> մտածել է տվել հույն աշխարհագրագետին **Էրեստիեացի** գաղթականության Կորդուքում հաստատվելու մասին:

Ելակետ ունենալով **«Աշխարհացոյց»**-ի ձեռագրերի առավել հին և լավագույն օրինակները, կարելի է ասել, որ գավառանվան հնարավոր արտասանություններն են **Արտուանքը** և **Ատրուանքը**: Չնայած երկրորդ տարընթերցումը պահպանել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 1898 ձեռագիրը (XIII դար), մենք գերապատվությունը տալիս ենք **Արտուանքին** և գտնում, որ **Ատրուանքը** գրիչի կողմից անունս իմաստավորելու փորձի արդյունք է, քանի որ «ր»-ի մոտմումով անվանումը աղերս էր ձեռք բերում պարսկերեն **ատր** (=կրակ) բառի հետ: **Արտուանքին** առավելություն տալը, մենք կարծում ենք, կարելի է հիմնավորել նաև հաջորդող **Այգառք** գավառանվամբ: Պատահական չպետք է համարել այն իրողությունը, որ երկու գավառների անուններն էլ սկսվում են «այ»-ով<sup>3</sup>:

Երևանի մատենադարանի թիվ 1717 և 5613 ձեռագրերում ուշ շրջանի գրիչի կողմից՝ **«Աշխարհացոյց»**-ի Կորձայքի հատվածում, կատարվել է **«Այտուանս որ է Ճուլամերկ իւր թեմովն»** ընդմիջարկությունը: Նման բացատրությունը, անկասկած, ճիշտ չէ, քանի որ հիշյալ տարածքի կենտրոնական հատվածը զբաղեցնում էր, Թովմա Արծրունու վկայությամբ, Փոքր Աղբակը<sup>4</sup>: Սակայն այս մեկնաբանության մեջ բանականն այն է, որ անհայտ մեկնիչը, մեզ անհայտ նյութերից ու փաստերից ելնելով, տեղորոշել է գավառը Ճուլամերկի կողմերում, որը ուշ միջնադարում նշանակալից մեծության քրդական հյուլքումեթություն էր: Ելնելով Կորձայքի աշխարհացոյցյան նկարագրության տրամաբանությունից, պետք է ճիշտ համարել Ս. Երեմյանի **Արտուանքի** տեղադրությունը<sup>5</sup>, սակայն, ըստ մեզ, **Արտուանքը** զբաղեցրել է ոչ միայն Մեծ Ջաբ

<sup>1</sup> Strabo, XVI, 1, 25:

<sup>2</sup> Կամ որևէ այլ համահունչ անուն (Հ.Բ.):

<sup>3</sup> Այսօրվա դրությամբ մենք պատրաստ չենք որևէ բացատրություն տալու երկու գավառանունների համար ընդհանուր «Այ» թաղկացուցիչ մասին, որը թերևս վարչական միավորի կամ աշխարհագրական ինչ-ինչ հասկացության գաղափար ուներ - Հ.Բ.:

<sup>4</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 90:

<sup>5</sup> Ս.Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), քարտեզ, Դ-5:

գետի աջափնյա, այլև ձախափնյա շրջանը, այսինքն Վերին և Ներքին Տիարիների, Թխումի և հարակից ամփոփ շրջանը<sup>1</sup>:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը Այտուանքից հետո հիշատակում է Այգառք գավառը, որը Ա.Երեմյանի անորոշ տեղադրությամբ գտնվել է Ջուլամերկից հարավ<sup>2</sup>: Համառոտ խմբագրության ձեռագրերը, որպես կանոն, չեն պահպանել այդ գավառանունը, իսկ մի քանի օրինակներում պահպանվել է վերջինիս առաջնային «Այ»-հատվածը, որն աներկբա հավաստում է նրա՝ սկզբնապես համառոտ խմբագրության մեջ գտնվելու օգտին: Որ «Այ»-ը, իրոք, Այգառքի սկզբնամասն է և հանդես է գալիս որպես գավառանուն, երևում է «զ» նախդիրից, որն այն բաժանում է նախորդող Ատրուանքից և հետորդող Մոթողանքից<sup>3</sup>: Մենք հակված ենք կարծելու, որ «Աշխարհացոյց»-ի որոշ ձեռագրեր էլ պահպանել են, իհարկե աղավաղված վիճակում, գավառանվան երկրորդ մասը: Մատենադարանի թիվ 1482 և 1770 ձեռագրերում Ատրուանքը պահպանվել է աղավաղյալ «Ասուանդ» գրությամբ, իսկ Մոթողանքը՝ Աղմոթուևս, Աղմոթուևս տարընթերցումներով: Ամենայն հավանականությամբ, «Ասուանդ»-ի «դ»-ն է, որը սկզբնապես եղել է «զ», շփոթ, որ սովորական է հայկական ձեռագրերին, իսկ «ադ»-ը ծագել է «առ»-ի սխալ ընկալումից: Այլ խոսքով, եթե ձեռագրերի առաջին խումբը պահպանել էր «Այ»-ը, ապա երկրորդ խումբը՝ «գառ»-ը: Թե ինչպես է գավառանունն այսպես կիսվել և պահպանվել երկու խումբ ձեռագրերում, դժվարանում ենք բացատրել, սակայն կասկածից վեր է, որ այն սկզբում եղել է համառոտ խմբագրության ձեռագրերում:

Քարտեզը, ինչպես հայտնի է, անորոշություն չի սիրում: Ինչքան էլ տեղադրությունը անհստակ ու ենթադրական լինի, այն կատարվում է որոշակի տարածքում: Այդպես էլ Ա.Երեմյանը Այգառքը տեղադրել է ներկայումս Խան կոչվող գետակի ավազանում, որը Մեծ Զաքի ձախափնյա վտակներից է<sup>4</sup>: Մենք վերը արդեն նշել ենք, որ հիշյալ տարածքը, հավանաբար, գտնվել է Այտուանքի մեջ, հետևաբար Այգառքի հավանական տարածքը պետք է զբաղեցներ Շամդինան գետակի Քարսան գյուղի մոտակայքից սկիզբ առնող աջ օժանդակի հովիտը: Տեղադրությունն, անշուշտ, անխոցելի չէ և նոր նյութերը կարող են ճշգրտումներ մտցնել, սակայն այդ առկա հնարավորությունների պայմաններում առավել հավանականն է: Գ. Բաղայանի սրամիտ կռահմամբ, Այգառք անունը պահպանվել է ներկայիս Հաքյարի անվանման մեջ:

Կորճայքի Մոթողանք գավառանունը տարընթերցումների մեծ զանազանություն չի տալիս: Մոթղանս, Մոթողանս, Մորթողանս, Մոթղունս<sup>1</sup>, Մողղանս, Մողթանս, Մոգողանս, Մոթողանս<sup>2</sup> և Ռթողանս ձևերը վկայում են հօգուտ նախնական Մոթողանս-Մոթողանքի: Երիտասարդ ուսումնասիրող Գ. Բաղայանը, Վանի վիլայեթի տեղանվանացանկերը կազմելիս, Գյավառի կազայում արձանագրել է Մատուլանիս կամ Մաթուլանիս անունով մի գյուղ, որ այժմ հայտնի է Արմուծոս անունով<sup>3</sup>: Անունս թերևս ծագում է Մոթողանքից, սակայն տեղանքի իմաստով ընկած է Որսիքանքում, ուստի Մոթողանքի տեղորոշման համար հիմք ծառայել չի կարող: Սակայն գյուղը, ամենայն հավանականությամբ, հիմնադրել են Մոթողանքից հեռացած բնակիչները: Աշխարհագրական հերթականության իմաստով միանգամայն տրամաբանական և ընդունելի է Ա. Երեմյանի կողմից գավառի տեղադրությունը Օրամարի շրջակայքում<sup>4</sup>:

Պատմությունը, տեղեկությունների առումով, առավել բարեհաճ է գտնվել Որսիքանք գավառի նկատմամբ: Թովմա Արծրունու հաղորդմամբ, Վասպուրականի իշխան Աշոտի եղբայր Գուրգենը, հետապնդվելով արաբական զորքերից, անցնում է «ի գաւառն Որսիքանից... և բանակեալ կային ի լերինն որ ի վերայ գեղջն Թուայ, ի հովիտս նորայ, որ կոչի Արեան լիճ. զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի, եւ անդ լինէին ժողովեալ ամենայն բազմութիւն աշխարհակոյտ ամբոխից գաղթականաց գաւառացն կողմացն Աղբակոյ, Զարեհվանի եւ Ալեոյ եւ ի լեռնակողմացն Աղզոյ և Ռոնն Առնոյ, մի կողմն ի Զողայ լեռնէն եւ անդր»<sup>5</sup>: Հայերի փորձերը, բանակցությունների միջոցով լեզու գտնել արաբ զորավար Բուղայի հետ, ոչնչի չեն հանգեցնում: Ավելին, այդ ընթացքում Գուրգեն Արծրունու զորամասը հետապնդող արաբական զորքերը «... եկին հասին ի սահմանս երկրին ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք: Եւ բնակեցան յեզր գետոյն Զաւ կոչեցեալ»<sup>6</sup>: Արաբական զորապետերի մեջ էին Յուսիփը (Յուսուփը) Տփղիս քաղաքից, Այլիի (Ելոյ) տեր Ապուհեշմը և պարսից ամիրա Համդուն: Հայկական՝ ընդամենը 900 հոգուց բաղկացած զորամասը ստիպված եղավ ընդունել անհավասար

<sup>1</sup> Մոթղունս գրությունը արդյունք է նտորգրում հաճախակի հանդիպող ա > ու շփոթի:  
<sup>2</sup> Մոթղանս տարընթերցումը արգասիք է սովորական «զ» > «զ» շփոթի:  
<sup>3</sup> Հեղինակը գյուղացանկերը դեռ չի հրատարակել: Ընտրակալություն ենք հայտնում մեզ սիլաբիարաբար տրամադրելու համար:  
<sup>4</sup> Ա.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 71:  
<sup>5</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 224-226:  
<sup>6</sup> Անդ, էջ 226:

<sup>1</sup> Տե՛ս Ռուսական տասվերստանոց քարտեզը, պլանշետ № 100:  
<sup>2</sup> Ա.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 35:  
<sup>3</sup> Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռ. թիվ 1898 և 4284:  
<sup>4</sup> Ա.Տ. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), քարտեզ, Դ-5: Карта Генерального штаба, масштаб 1:200000, J-38-20, J-38-26:

մարտը, որի ընթացքում 15000-ոց արաբական զորքը՝ չղիմանալով հայերի անմնացորդ խիզախությանը, խայտառակ պարտություն կրեց, մարտադաշտում թողնելով 1800 սպանված: Հակառակորդի ջախջախված զորամասերին հայերը փախուստի մատնեցին ու հալածեցին, «*հասանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն էլոյ, եւ էր որ ի կողմն Ատրպատականի և պարսից*»<sup>1</sup>: Հ. Մարքվարթը, հենվելով այս տեղեկության, ինչպես նաև Վալդեման Բելքի տեղաքննական հետազոտության արդյունքների վրա, որի ընթացքում նա հայտնաբերել էր Արյան լիճը<sup>2</sup>, Ռոսիրանքը տեղադրում է Նեհիլ գետի ավազանում, որտեղ գտնվում է Գյավառի դաշտը<sup>3</sup>: Դժվար չէ տեսնել, որ այս տեղադրությունը պարզապես անխոցելի է, քանի որ Ռոսիրանքը հյուսիսում դուրս էր գալիս Մեծ Զաք կամ Զավ գետի ափը, արևմուտքում հասնում էր Զողայ լեռը և արևելքում սահմանակցում էր Այլի կամ Էլի գավառին<sup>4</sup>:

Հովհաննես Դրասխանակերտցին, խոսելով նահատակ Ատոմի մասին, նշում է, որ նա «*ճանաչիւր ի գաւառէն Աղբակայ յՌոսիրանս գեղջէ*»<sup>5</sup>: Առաջին տպավորությունն այն է, որ այս գյուղը առնչություն չունի Ռոսիրանք գավառի հետ, քանի որ գտնվում է Աղբակ գավառում: Սակայն իրականության մեջ Ռոսիրանքը հենց այն գյուղն է, որն իր անունն է տվել գավառին, իսկ այն հանգամանքը, որ գյուղս հիշվում է Աղբակում, մեր կարծիքով, արտահայտում է հին վարչական իրողություն, երբ Մեծ Աղբակ, Փոքր Աղբակ, Ակե և Ռոսիրանք գավառների տարածքը կազմում էր միասնական Աղբակ գավառը: Պատահական չէ, որ Ռոսիրանք գյուղը հիշվում է ոչ թե Մեծ Աղբակում կամ Փոքր Աղբակում, այլ պարզապես Աղբակում: Ռոսիրանքի անջատումը բուն Աղբակից, հավանաբար, տեղի է ունեցել Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման ձևավորման շրջանում, երբ Աղբակի հարավային հատվածը հայտնվեց Կորճալքի մեջ: Այլ խնդիր է, թե Ռոսիրանքը այդ ժամանակ վարչականորեն ձևավորվել էր, թե՞ ոչ: Համենայն դեպս, մենք հակված ենք կարծելու, որ սկզբնապես ձևավորվեց Փոքր Աղբակը, իսկ Ակեն և Ռոսիրանքը՝ ավելի ուշ:

<sup>1</sup> Անդ, էջ 232:

<sup>2</sup> Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1961, թիվ 1, էջ 189: Վալդեման Բելքը Գյավառի կազմի Դիզա գյուղի մոտ հայտնաբերել էր Արյան լիճը, որ մեր օրերում ճահճուտի է վերածված:

<sup>3</sup> Անդ, էջ 189-190:

<sup>4</sup> Տե՛ս Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը:

<sup>5</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 123: Տե՛ս նաև Ստեփանոսի Տարսեղեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, էջ 108. «... էր (Ատոմը - Հ.Բ.) յԱղբակ գաւառէ յՌոսիրան գեղջէ»:

Թովմա Արծրունին, X դարի սկզբների դեպքերի առնչությամբ, հիշատակում է Ռոսիրանքը, երբ Աշոտ իշխանն իր եղբայրներով հանդերձ, խույս տալով Ափշինից, ամրանում է «*ի ձորն Ռոսիրանից*»<sup>1</sup>: Հ. Հյուբշմանը, ազդվելով Հովհաննես Դրասխանակերտցու և Ասողիկի տվյալներից, որոնք Ռոսիրանք գյուղը վերագրում են Աղբակին, ենթադրել է, որ Աղբակի տակ պետք է հասկանալ Մեծ Աղբակը, հետևաբար Ռոսիրանից ձորը, նրա կարծիքով, պետք է գտնվեր Մեծ Աղբակում<sup>2</sup>: Իրականում, ինչպես ճիշտ ցույց է տվել Մարքվարթը, Ռոսիրանից ձորը նույն Ռոսիրանք գավառն է<sup>3</sup>:

Հ. Մարքվարթը, անդրադառնալով Գյավառ անվանը, ենթադրել է, որ այն ծագում է հայերեն Գաառ կամ, որ ավելի ճիշտ է, Կաառն բառից<sup>4</sup>: Հեղինակի կարծիքով, իբև Խորդադբեհի մոտ հանդիպող دسکيا و -ը, որը Մարբի և Մահի-պահակի հետ մեկտեղ հիշատակվում է Աղբեջանի գավառների շարքում, հազիվ թե այլ բան նշանակի, քան Dašt-i G(K)javar (Գյավառի դաշտավայր)<sup>5</sup>: Նա միանգամայն հիմնավոր ձևով ցույց է տալիս, որ Թովմա Արծրունու հիշատակած Զողա լեռը Գյավառի արևմուտքում գտնվող Թուրա Տելուն է<sup>6</sup>:

Հայկական տարրը, որ զարգացած միջնադարում զանգվածորեն զբաղեցնում էր Փոքր Աղբակի և Ռոսիրանքի շրջանները, աստիճանաբար թուլանում է հարավից հյուսիս շարժվող քրդական ցեղերի ներխուժումների հետևանքով: Այստեղ հաստատվում են քրդական ճնշումից հեռացող ասորիներ, սակայն անգամ XX դարի սկզբներին այստեղ նշանակալից թվով հայեր էին բնակվում, որոնք, Բաղդադի հավաստմամբ, կազմում էին Զերբելի և Դիզայի քրիստոնյա բնակչությունը, սակայն Մար Շիմոնի վկայությամբ (ասորի նեստորականների պատրիարքը), կապված էին նեստորականների հետ և բոլոր ծեսերի ժամանակ նրանց սպասարկում էին նեստորական հոգևորականները<sup>7</sup>: Հ. Մարքվարթի կարծիքով, դրա օգտին են խոսում Haijis, Mādes, Kočanes, Terkones, Hāros, Kotrānes և այլ տեղանունները<sup>8</sup>:

<sup>1</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 424:

<sup>2</sup> Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 205:

<sup>3</sup> Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 187-189:

<sup>4</sup> Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 190:

<sup>5</sup> Անդ, էջ 190-191: Kitāb al-masālik wal mamalik (Liber viarum et regnorum) auctore Abū Kāsim Obaid-Allah ibn Abdallah ibn Khordadbeh, ed. M. I. de Goeje, Lugd. Batav., 1889, p. 120,3:

<sup>6</sup> Անդ:

<sup>7</sup> Badger, The Nestorians, I, 398, ծանոթ., վերցված է Հ. Մարկվարտի նշվ. աշխ., էջ 191:

<sup>8</sup> Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 191:

Կորճայքի գավառների շարքում Ռոսիրանքին հաջորդում է **Կարթունիքը**: Մենք լիովին կիսում ենք Ս. Երեմյանի տեղադրությունը, որի համաձայն գավառը գտնվել է Շամդինանում, իսկ գավառանունը պահպանել է **Կատունա** կամ **Կատունի** գյուղը<sup>1</sup>: Միակ դիտողությունը թերևս այն է, որ Կարթունիքը ավելի մեծ տարածք է ընդգրկել, ծավալվելով ավելի հարավ, քան քարտեզի վրա ցույց է տալիս հեղինակը<sup>2</sup>:

**Կարթունիքով** ավարտվում է Կորճայքի գավառների հարավային շարքը և սկսվում է ընդամենը երկու գավառանունից բաղկացած հյուսիսային շարքը: Առաջինը **Ճահուկ** գավառն է, որի մասին տեղեկություններ է պահպանել Արծրունյաց պատմիչի երկը: Խոսելով Պարսկահայքից Վասպուրականյան տիրույթները ներխուժած մահմեդական խուժանի ասպատակությունների մասին, Թովմա Արծրունին նշում է, որ նրանք «վարեն ի գերութիւն աւարառութեամբ զԼեկ և զԱղզի և զԿրերեացն և ի Ճահուկ գաւառէ»<sup>3</sup>: Լեկը և Աղզին, անշուշտ, բնակավայրեր են Անձևացյաց գավառում<sup>4</sup>, Կրերեացը, մեր կարծիքով, նույնպես բնակավայր է, որը գտնվել է Կրերեաց լեռնանցքի<sup>5</sup> մերձակայքում, որն Անձևացիքը հարավից կապում էր Կորճայք աշխարհին: Համաձայն վերը բերված վկայության, Ճահուկը պետք է գտնվեր հիշատակված բնակավայրերի մերձավորությամբ և Կրերեաց լեռնանցքի սահմանակցությամբ: Այս եզրակացությունը առավել հիմնավորվում է Անանուն Արծրունու մի քանի հաղորդ-

մամբ, որոնց համաձայն Ագարակի բերդը գտնվել է Ճահուկ գավառում<sup>1</sup>: Հ. Մարքվարթը ցույց է տվել, որ Ջուլամերկից ոչ հեռու գտնվող **Ագարակ-դաղ** լեռները պահպանել են **Ագարակ** բերդանունը<sup>2</sup>, հետևաբար դրանց շրջանում էլ գտնվել է Ճահուկը: Իսկ քանի որ հիշյալ լեռները գտնվում են Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի (հնում՝ Խաբուր գետի վերին հոսանքը) ակունքների շրջանում<sup>3</sup>, այսինքն Անձևացիքի հարևանությամբ, ապա Ճահուկի տեղորոշումը Կրերեաց լեռնանցքի սահմանակցությամբ մեկ անգամ ևս հաստատվում է: Ավելին, Բեյթ-ուլ-Շաբաբի վերին հոսանքի շրջանը՝ Ալկի ամրոցից հյուսիս, որը կազմում է բնաշխարհագրական ամփոփ երկրամաս, մտել է ոչ թե **Կորդիքի**, այլ **Ճահուկ** գավառի մեջ:

Թովմա Արծրունին Վասպուրականի իշխաններին պատկանող անառիկ բերդերի շարքն է դասում՝ ի թիվս Ջլմարի և Սրինգի, նաև **Ճահուկը**<sup>4</sup>: Ս. Երեմյանը փորձել է համարժեքության նշան դնել Ագարակ և Ճահուկ բերդերի միջև<sup>5</sup>, սակայն ավելի հավանական է Ղ. Ինձիճյանի տեսակետը, որը **Ճահուկը** դիտում է **Ագարակից** տարբեր ամրոց<sup>6</sup>: Մենք, ելնելով Ագարակ-դաղ լեռների տեղադիրքից, հակված ենք կարծելու, որ **Ագարակ** ամրոցը գտնվում էր գավառի ծայրամասում, ուստի ենթադրելի է, որ գավառին իր անունը փոխանցած **Ճահուկ ամրոցը** գտնվել է վերջինիս կենտրոնական հատվածում, որով ապահովվել է նրա վարչական կենտրոն դառնալը: Մեզ, դժբախտաբար, ծանոթ չէ Կորճայքի բերդերի մեծ մասի տեղադրությունը, ինչպես նաև նահանգի բերդերի ու ամրոցների հնագիտական քարտեզը, հետևաբար Ճահուկի տեղադրության ամեն մի փորձ խիստ մտային է ու թեական: Այնուամենայնիվ, մենք ստիպված ենք կասկածի տակ առնելու Ագարակ բերդի Ս. Երեմյանի տեղադրությունը, որի համաձայն վերջինս ընկած էր Լևին գետակի ձախսափնյակում<sup>7</sup>: Ինչպես վերը նշվեց, **Ագարակը** պետք է փնտրել Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի ավազանում: Ինչ վերաբերում է **Ճահուկին**, ապա այն մենք հակված

<sup>1</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 408. «(Պերենիկը - Հ.Բ.) տալով (Գագիկին - Հ.Բ.) նմա զբերդն Ագարակայ և զգառան Ճահուկ»: էջ 418. «տալով նմա զբերդն Ագարակայ հանդերձ ձախսուկն կոչեցեալ գաւառառ»: էջ 432. «եւ տուեալ Գագկայ Վասպուրական իշխանի զբերդն Ագարակայ և զգառան ձախսուկ՝ առնու զբերդն Ջուլ և զգաւառն կոչեցեալ Ջերմաձոր, որ է մասն երկրին Մոկաց»:

<sup>2</sup> Հ. Մարքվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 193:

<sup>3</sup> Տե՛ս Ռուսական տասվերստանոց քարտեզը, պլանշետ թիվ 10Ր:

<sup>4</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 212: Տե՛ս նաև էջ 350:

<sup>5</sup> Ս.Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 31, 64:

<sup>6</sup> Ղ. Ինձիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 148:

<sup>7</sup> Ս.Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), քարտեզ, Դ-5: Ս.Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 31:

<sup>1</sup> Ս.Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 58:

<sup>2</sup> Ս.Ս. Երեմյան, Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.), քարտեզ, Դ-6:

<sup>3</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 400:

<sup>4</sup> Տե՛ս Ռուսական տասվերստանոց քարտեզը, պլանշետ թիվ 100: Копия Турецкой карты Анатолии, масштаб 1:210000, IV-17: Карта Генерального штаба, масштаб 1:200000, J-38-14: Աղզի անունը պահպանել է Ալսսի գյուղը, որը քարտեզներում հայտնի է նաև **Հասսեթ** և **Ալսին** անուններով: Լեկի տեղադրությունը մեզ հայտնի չէ, իսկ **Կրերեացը**, հավանաբար, լեռնանցքից հյուսիս գտնվող **Քալսեթան** ավերակ գյուղին է նույնանում: **Կրերեացի** լեռնանցքից հարավ գտնվելը հավանական չէ, որովհետև պատմիչը այն չի դասում Ճահուկ գավառին:

<sup>5</sup> **Կրերեաց** լեռնանցքը, ըստ Ս. Երեմյանի, Կալումերիկ-դաղ լեռան (2250- պետք է լինի 3250) արևմտյան փեշերին է գտնվում: Լման մոտեցումը թերևս պայմանավորված է ռուսական տասվերստանոց քարտեզի նյութերով, որոնց համաձայն լեռնանցքը գտնվել է **Кала-ириок** (իմա՝ Կալումերիկ) լեռան արևմտակողմում: Իրականում, **Կրերեաց** լեռնանցքը պետք է լինի ներկայումս Զիլիսիչակ կոչվող լեռնանցքը (3056 մ.) Լևին գետակի ակունքների շրջանում: Հեղինակի կարծիքով, **Կրերեացը** գավառ է, որը համապատասխանում է սուտրական արձանագրությունների **Kirruri** երկրին և տեղադրվում է Լևին-սու գետի հովտում (Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 61): Գտնվել է, թե՛ ոչ **Kirruri**-ն Լևինի հովտում, մենք մտադիր չենք քննարկել, սակայն որչափ կարելի է դատել սեպագիր արձանագրությունների տեղեկություններից (**АВННУ**, 23 (I, 54, 56, 58), 24, 25, 27 (II, 63), այն պետք է փնտրել ավելի հարավ ընկած տարածքներում, իսկ **Կիրուրի** և **Կրերեացի** նմանությունը, չի բացառվում, որ սոսն պատահական է: Վերջապես չպետք է մոռանալ, ինչպես նշում է Հ. Կարապոլյանը, որ **Կիրուրի**ն գրվում է երկու «ր»-ով, իսկ **Կրերեացը**՝ մեկ:



των του Τίγριδος ποταμου πηγων η τε Βαγραυανδηνη και υπ' αυτην η Γορδουνη, ης ανατολικωτερα η Κοταια και υπ' αυτην Μαρδοι, («*Տիրիս գետի աղունքից դեպի արևելք [գտնվում են] և Բագրավանդենն և նրանից ներքև՝ Գորդյուենն, որից ավելի արևելք՝ Կոտայան և նրանից ներքև մարդերը*») <sup>1</sup>: Ինչպես դժվար չէ տեսնել, հիշյալ ժամանակներում Կորդուք-Գորդյուենն առանձին գորավարություն էր կամ աշխարհ, որից ավելի արևելք տարածվում էր Կոտայան: Ն. Արոնցի կարծիքով, Կոտայան ոչ այլ ինչ է, բայց եթե Կոտայքը, որի մասին հայկական աղբյուրներից առաջինը հիշատակում է Սեբեոսի երկը <sup>2</sup>: Հարգարժան հայագետի նմանօրինակ ենթադրության հիմքը, կարծում ենք, Կոտայայի հարևանությամբ Բագրավանդենի հիշատակությունն է, որն, անկասկած, հայկական սկզբնաղբյուրների Բագրավանդեն: Հասկանալի է, որ Բագրավանդենի հիշատակությունը պիտի հեղինակին մղեր Կոտայայի և Կոտայքի նույնացմանը: Իրականության մեջ նմանությունը պատահական է և երևութական, էլ չենք խոսում այն մասին, որ դրանց իրական նույնության դեպքում հայերենում սպասելի էր ոչ թե Կոտայք, այլ Կովտայք գրությունը, քանի որ Կωταία-ն գրվում է «ω»-ով:

Այս հաղորդման մեջ, իրականում, խորթ զավակ է Բագրավանդենն, որը ոչ մի դեպքում չէր կարող տեղադրվել Կորդուքի հարևանությամբ: Շույն աշխարհագրագետի այս արտաքննապես կոպիտ սխալն ունի իր հստակ բացատրությունը, որը փայլուն ձևով տվել է Հ. Մարքվարթը <sup>3</sup>: Հայտնի է, որ Հայաստանում Նպատ անունով լեռներ հանդիպում են Բագրևանդում՝ Չիրավի դաշտի հարևանությամբ, և հարավային Հայաստանում: Դժբախտաբար, եթե հույն հեղինակները քաջ գիտեին երկրորդի մասին, ապա չնչին բացառությամբ անտեղյակ էին առաջինի գոյությանը: Հարավային Նպատի կամ Նպատական լեռների մասին Ստրաբոնը հայտնում է, որ դրանք ձգվում էին Գորդյուենի երկարությամբ. «κατὰ τὴν Γορδουνην ὁ Νιφάτης», <sup>4</sup> իսկ Պլուտարքոսի տեղեկությամբ Նպատի և Գորդյուենյան լեռների միջև ընկած ամբողջ դաշտը Գավգամելայի ձակատամարտից առաջ լուսավորված է եղել բարբարոսների խարույկներից <sup>5</sup>: Ինչպես դժվար չէ տեսնել, Պտղոմեոսն, անկասկած, իմացել է, որ Նպատ լեռը գտնվել է Բագրևանդում կամ նրա հարևանությամբ <sup>1</sup>, սակայն, ցավոք, տեղյակ է եղել միայն հարավային Հայաստանի Նպատ-Նիֆատես լեռների գոյությանը, ուստի՝ չունենալով ձեռքի տակ բավարար նյութեր, հանգել է սխալ եզրակացության և Բագրևանդը տեղադրել է Նպատին սահմանակից Կորդուքի հարևանությամբ: Բնական է, որ այս ճիշտ մեկնաբանությունից հետո պարզապես անիմաստ է Կոտայայի նույնացումը Կոտայքին, որը աշխարհագրական դիրքի առումով ավելի շատ կարող է համապատասխանել Կորճայքին: Եթե ի նկատի ունենանք, որ Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ հանդիպող տեղանունների նշանակալից մասը մեզ է հասել գրչական լուրջ աղավաղումներով, ապա չի բացառվում, որ Կωταία-ն նույնպես տեղանվան անսղարտ գրությունը չէ: Կωταία-ն Կωթ|ταία սրբագրելու դեպքում, վերջինս կարող է և նույնանում է հայկական Կորճայքին, քանի որ «ճ»-ն հունարենը կարող էր արտահայտել «տ»-ով, իսկ վերջին «ա»-ն, լինելով հոգնակիակերտ, փոխարինում է հայկական «ք» հոգնակիակերտին: Սակայն սրան խանգարում է այն իրողությունը, որ հույն աշխարհագրագետի հաղորդմամբ, Կոտայայից ներքև գտնվում էր Μαρδοι ստրամուկ Մարդպետականին և զբաղեցնում էր Վասպուրական աշխարհի արևելյան կեսը <sup>2</sup>: Μαρδοι-ի Կωταία-ի հարևանությամբ հիշատակվելը մտածել է տալիս, որ վերջինիս տակ հույն աշխարհագրագետը հասկացել է Պարսկահայքի տարածքում գտնվող Կորճայքը, որը II դարում փաստորեն եղել է նույն անունը կրող երկրորդ աշխարհ-գորավարությունը <sup>3</sup>: Թե ինչու՞ Կωταία-ն իրոք պետք է համընկնի Փավստոս Բուզանդի հիշատակած Կորճայքին (Կորճեք), մենք դեռ կանդադառնանք Պարսկահայքի առնչությամբ, նշենք միայն, որ Պտղոմեոսը տեղեկություններ է պահպանել ևս մեկ Կորճայքի մասին, որը նույնանում է «Աշխարհագրոյց»-յան Կորճայքի կենտրոնական և արևելյան շրջաններին: Նա գրում է. «Εν δὲ τῷ λοιπῷ καὶ μεσημβρινώτερω τμήματι μεταξὺ μὲν Εὐφράτου καὶ τῶν Τίγριδος πηγῶν ἢ τε Ἀνζιτηνῆ καὶ ἢ ὑπ' αὐτῆν Θωσπίτις εἶτα ἡ Κορταία. («*Մնացած՝ դեպի հարավ ընկած հատվածում, եփրատի և Տիրիսի աղունքների միջև [գտնվում են] Անզիտենն և նրանից ներքև Թոսպիտիսը, այնուհետև և Կորիաիան*»)»: Κορταία-ն ձե-

1 Փավստոս Բուզանդ, էջ 192. «είου η̄ լեռան̄ η̄ Նպատ մերձ η̄ գետն եփրատ», որտեղ տեղի էր ունեցել Չիրավի ձակատամարտը «ի Բագատան յասանին Բագրևանդ գառառին»:  
 2 Բ. Հ. Հարությունյան, «Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհագրոյց»-ի, տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, թիվ 3, էջ 218-234:  
 3 Մանրամասն տե՛ս Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհը ըստ «Աշխարհագրոյց»-ի, «Պատմա-բանասիրական հանդես», 1989, թիվ 2, էջ 30-32:  
 4 Claudii Ptolemaei Geographia, V, 12, 8 (Թարգմանությունը Գ. Մուրադյանի):

<sup>1</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 9 (Թարգմանությունը Գ. Մուրադյանի):

<sup>2</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 302:

<sup>3</sup> Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1961, թիվ 2, էջ 213: Տե՛ս նաև նույնի Südarmanien und die Tigrisquellen, էջ 13, 79 և այլն:

<sup>4</sup> Strabo, XI, 14, 2:

<sup>5</sup> Plut., Alexandrus, 31. «τὸ μὲν πεδιον τὸ μεταξὺ τοῦ Νιφάτου καὶ τῶν ὄρων τῶν Γορδουνηνῶν. Տե՛ս նաև Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 213:

նագրերում հանդիպում է նաև Κορίαινα Coriana Coreana Corioa, Κορινία տարընթերցումներով<sup>1</sup>:

Κορίαια -ն հանգիստ կարելի է սրբագրել Κορταία, որով վերջինիս աղերսը հայկական Կորճայքին դառնում է ակնհայտ: Եթե նախնական է Κορίαια գրությունը, ապա անշուշտ այն նույնանալու է աշխարհացույցյան Կորճայքին<sup>2</sup>, իսկ եթե նախնական է Κορίαννα-ն, ապա տեսականորեն չի բացառվում նրա համընկնումը Պարսկահայքին կամ, որ ավելի ճիշտ է, Փավստոս Բուզանդի Կորճայքին: Սակայն ելակետ ունենալով այն հանգամանքը, որ Կոտայքն գտնվել է Մարդպետականի հարևանությամբ, Κορίαννα-ի նախնական ձև լինելն ու Պարսկահայքին համընկնելը դառնում է լոկ տեսական դրույթ և ցույց է տալիս, որ ի դեմս Κορίαια - Κορταία -ի մենք գործ ունենք տարածքային առումով ոչ լիարժեք աշխարհացույցյան Կորճայք աշխարհի հետ:

Քննությունից պարզ դարձավ, որ աշխարհացույցյան Կորճայք աշխարհի տարածքում II դարի կեսերին կային երկու զորավարություն-աշխարհ՝ Գորդյունեն-Կորդուքը և Կորտայա-Կորճայքը: Հասկանալի է, որ պտղոմեոսյան Գորդյունենի տարածքը չէր սահմանափակվում Կորդուք գավառով, այլապես նրա որպես առանձին աշխարհ-զորավարության գոյությունը կդառնար անիմաստ, ինչպես այդ տեղի ունեցավ ավելի ուշ: Բացարձակապես առանց հնարավոր սխալ թույլ տալու, կարելի է ենթադրել, որ նրա մեջ բացի Կորդուք գավառից մտնում էր նաև նախկին Կորդվաց թագավորության այն հատվածը, որ տարածվում էր Տիգրիսի աջափնյակում և V դարի հայկական աղբյուրներին ծանոթ է Ծավդեք անունով: Թե ինչպիսի՞ գավառաբաժանման է ենթարկված եղել Գորդյունեն-Կորդուքը, նյութի բացակայության պատճառով մենք ասել չենք կարող, սակայն կասկածից վեր է, որ գավառների քանակը գոնե երեքից պակաս չէր:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Գորդյունեն զորավարություն-աշխարհը տարածքային առումով պարզապես համապատասխանել է երբեմնի Կորդվաց թագավորությանը կամ էլ նրա տարածքի հիմնական մասին, ուստի Տիգրան Մեծի կողմից վերջինիս Մեծ Հայքի թագավորությանը միացնելը ապագա զորավարության հիմքը դրեց: Մինչև Լուկուլլոսի հռոմեական բանակի արշավանքը Հայաստան Կորդուքը պահպանում էր իր թագավորության իրավունքը հայոց արքայից արքայի գերակայության ներքո, սակայն հռոմեական ներխուժումից ոգևորվելով Կորդվաց Զարբինոս թագավորը Տիգրան Մեծին դավաճանեց և մահապատժի ենթարկվեց, որը Կորդվաց թագավորությունը վերացնելու համար հիանալի առիթ դարձավ: Տիգրան Մեծի և Գնեսու

<sup>1</sup> Անդ, V, 12, 8-ի ծանոթագրությունները:

<sup>2</sup> Անշուշտ առանց Կորդուքի - Հ.Բ.:

Պոմպեոսի միջև կնքված Արտաշատի մ.թ.ա. 66 թ. հաշտության պայմաններով Կորդուքը մնաց Հայոց թագավորության մեջ, սակայն Ծոփքի հետ միասին հանձնվեց Տիգրան Կրտսերի կառավարմանը: Սակայն վերջինիս՝ Պոմպեոսի կողմից շնորհագրկամից և Հռոմ ուղարկելուց հետո Տիգրան Մեծը Կորդուքը վերածեց պետության սովորական մարզի: Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման ժամանակ, որը կատարվեց Տրդատ Ա թագավորի օրոք, Կորդվաց երկրամասը վերածվեց առանձին աշխարհ-զորավարության: Այդ կացությունն էլ հենց արձանագրել է Պտղոմեոսի «Աշխարհագրությունը»:

Մեծ Հայքի աշխարհների ձևավորումը տեղի ունեցավ I դարի երկրորդ կեսից ոչ շուտ, քանի որ Պլինիոս Ավագի վկայությամբ, Մեծ Հայքը դարի առաջին կեսում բաղկացած էր 120 զորավարություն-պրեֆեկտուրաներից<sup>1</sup>: Լատին հեղինակը չնայած ապրել է մինչև 79 թիվը, նրա երկը արտացոլում է Մեծ Հայքի 40-50-ական թվականների կացությունը, երբ Հռոմում իշխում էր Կլավդիոս կայսրը (41-54): Միաժամանակ Հովսեփոս Փլավիոսի երկը հավաստում է, որ պարթևական թագավոր Արտավանը Ադիաբենեի թագավոր Իգատեսին՝ ի հաշիվ Հայաստանի տիրույթների, «պարզևեց նրան ընդարձակ բերրի մի երկիր, այն վերցնելով հայոց թագավորից: Այդ երկիրը կոչվում է Նիսիբիս և այնտեղ նախկինում մակեդոնացիները կառուցել էին Անտիոք քաղաքը, որը կոչեցին նաև Եպիմիգդոնիա<sup>2</sup>: Ի տարբերություն այլ ուսումնասիրողների, որոնք անցել են այս փաստի կողքով, Ս. Երեմյանը ենթադրել է, որ 37 թվականի հռոմեա-պարթևական պայմանագրով Մեծ Հայքի Տիգրիս գետից հարավ ընկած երկրամասերը, որ պարթևա-հռոմեա-վրացական կռիվների ժամանակ Արտավան Գ-ն գրավել էր Հայաստանից, անցնում են Պարթևական պետությանը, որի թագավորն, ի նշան երախտագիտության, դրանք հանձնում է Ադիաբենեի թագավոր Իգատեսին: Հեղինակի կարծիքով, նշված երկրամասերն էին Հայկական Միջագետքը Ամիդ քաղաքով, Միգդոնիա-Արվաստան նահանգը՝ Մծքին քաղաքով, ընդամին նաև նրան կից Ծավդեքը (Zabdice-nae - Տուր Աբդին գավառը), որոնց ընդհանուր տարածությունն էր շուրջ 18000կմ<sup>2</sup><sup>3</sup>: Ս. Երեմյանը հակված է այդ տարածքային փոփոխություններն արտացոլող նյութեր տեսնել Պլինիոս Ավագի մեզ չհասած «Պատմության» մեջ, որի որոշ հատվածները պահպանել է «Բնական պատմություն»-ը: Չնա-

<sup>1</sup> Plin., NH, VI, 10. 27:

<sup>2</sup> Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասիոս, տե՛ս Հին հունական աղբյուրներ, Ա, էջ 85: Ստրաբոնը հիշյալ Անտիոքը կոչում է Անտիոք Միգդոնիայում (Strabo, XVI, 1, 23):

<sup>3</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, ՀՍՄՀ ԳԱ իրատ., էջ 719: Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 40, 71, 86 և 118:



յած ուսումնասիրողը չի մատնանշում այդ հատվածները, մենք ենթադրում ենք, որ նա ի նկատի ունի հռոմեացի բնագետի տեղեկությունն այն մասին, որ Մեծ Հայքը «*Եփրատ գետով, ինչպես վերն սասցինք, բաժանվում է Կապադովկիայից, և այնտեղ, որտեղ եփրատը թեքվում է, բաժանվում է Միջագետքից ոչ սակաս հայտնի Տիգրիս գետով:...* Այսպիսով նա իր սահմանները տարածում է ընդհուպ մինչև Ադիաբենեն»<sup>1</sup>: Ստացվում է, որ իրոք Տիգրիսից հարավ ընկած հողերը Հայաստանի մեջ չեն, որը սկզբունքորեն հակասում է Պտղոմեոսի տվյալներին: Սակայն այս, առաջին հայացքից, անխոցելի տրվյալները բնավ էլ չեն ապացուցում Ս. Երեմյանի այն միտքը, որ Մեծ Հայքի և Ադիաբենեի սահմանը գոնե հարավ-արևմուտքում անցել է Տիգրիս գետով: Որ Մեծ Հայքը 37թ. տարածքային կորուստներ ունեցել է, կասկածներ չի հարուցում և մենք էլ հերքելու մտադրություն չունենք, սակայն դրանք ավելի փոքր էին, քան ենթադրում է հեղինակը: Նախ, Հովսեփոս Փլավիոսի հաղորդումից բնավ չի բխում, որ Ծավդեքը մտել է Նիսիբիսի մեջ, իսկ Պլինիոս Ավագի տվյալներից չի հետևում, որ հայ-ադիաբենյան սահմանը անցել է Տիգրիս գետով: Ավելին, եթե Ս. Երեմյանը ուշադրություն դարձներ Պլինիոս Ավագի հաղորդման շարունակությանը, ապա կտեսներ, որ հայ-ադիաբենյան սահմանագիծն անցել է լեռներով. «*Այսպիսով նա (Մեծ Հայքը - Շ. Բ.) իր սահմանները տարածում է ընդհուպ մինչև Ադիաբենեն: Այս կողմից (Ադիաբենեի կողմից - Շ. Բ.) շրջափակված լինելով իր դիմաց հառնող լեռներով, նա լայնությամբ տարածվում է ձախից (այսինքն աջում թողնելով Ադիաբենեն - Շ. Բ.) Արաբսի վրայով մինչև Կյուրոս (Կուր - Շ. Բ.) գետը»<sup>2</sup>: Այլ խոսքով, Տիգրիսը սահման է հանդիսացել Մեծ Հայքի և Միջագետքի միջև այն մասում, որտեղ եփրատը թեքվում է դեպի արևմուտք: Եղած տեղեկությունների լույսով բնավ էլ չի երևում, որ Ծավդեքը մաս է կազմել Միգդոնիա-Արվաստանի: Այն 37թ. հետո էլ շարունակել է մնալ Մեծ Հայքի կազմում՝ մաս կազմելով Կորդուբ-Գորդյուսենե աշխարհ-գորավարության: Ինչպես ստորև կտեսնենք, այս հանգամանքը, հավանաբար, դարձել էր միջազգային իրավունքի խնդիր, որի արդյունքը եղավ 298թ. Մծբինի 40-ամյա հաշտությունից հետո Ծավդեքի Մեծ Հայքին միացնելը: Սակայն, այնուամենայնիվ, բացի բերված տեղեկություններից, Ս. Երեմյանին թյուրիմացության մեջ է գցել մի հանգամանք ևս: Հեղինակը, սովորաբար, չի բացահայտում իր հետազոտության խոհանոցը, սակայն դժվար չէ կռահել, որ «Աշխարհացոյց»-ով շնչող պատմաբանին հենց այդ աղբյուրն է անուղղակիորեն ստիպել հանգելու նման եզրակացության, քանի որ վերջինիս համաձայն Մեծ Հայքի սահմանը նշված հատվածում անցել է Տիգրիս գետով, իսկ Ծավդեքը չի մտել հայոց թագավորության մեջ:*

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, ՀՄՄՀ 9Ա հրատ., էջ 719-720: Քլոն., ՆԻ, VI, 9, 25:

<sup>2</sup> Քլոն., ՆԻ, VI, 9, 25: (Թարգմանությունը Գ. Մուրադյանի):

Նման կրվանը, բարեբախտաբար, թե դժբախտաբար, հիմնավոր չէ, որովհետև Պլինիոս Ավագի և Կլավդիոս Պտղոմեոսի տվյալները նախորդում են այն վարչա-քաղաքական կացությանը, որը ձևավորվել էր Հայաստանում ըստ «Աշխարհացոյց»-ի:

37թ. տարածքային փոփոխություններին անդրադարձել է նաև Պատմա-հայրը, որի ասելով հայոց Սանատրուկ թագավորի մահվանից հետո «*թիկունս առնելով Երուանդայ զՀռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպիանու և Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս: Եւ յայնմիտէ բարձաւ իշխանութիւնն Հայոց ի Միջագետաց»<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացին հիշյալ իրադարձությունները կապում է Սանատրուկ և Երվանդ թագավորների ժամանակների հետ, սակայն Վեսպասիանոսի և Տիտոսի անունները, կարծես թե, հուշում են, որ նա, ամենայն հավանականությամբ, նկատի ունի 37 թվականի պայմանագրով կատարված փոփոխությունները: Այսուհանդերձ, բերված տեղեկության մեջ կա մի հետաքրքիր իրողություն, որը ենթադրել է տալիս, թե Պատմահայրը իրականության մեջ իրար է միահյուսել երկու տարբեր ժամանակաշրջանների տարածքային կորուստները: Խնդիրն այն է, որ ըստ Մովսես Խորենացու հռոմեացիներին է անցնում Եդեսիա քաղաքն<sup>2</sup> իր շրջակայքով, որը 37 թվականի պայմանագրի կնքումից առաջ էլ Մեծ Հայքի մեջ չէր մտնում: Այն Մեծ Հայքի մաս չէր անգամ մ.թ.ա. 66 թ. հայ-հռոմեական հաշտության կնքումից հետո, երբ Մեծ Հայքը նշանակալից հողեր պահպանեց Հյուսիսային Միջագետքում:*

Եդեսիան, դատելով Պարսից «արքայական ճանապարհի» երթուղու մեր քննության արդյունքներից<sup>3</sup>, ինչ-ինչ ժամանակներում մտել է Հայ Երվանդունիների թագավորության մեջ: Այսինքն, այնքան էլ անիմաստ չէ Պատմահոր տեղեկությունն այն մասին, որ Եդեսիա քաղաքն իր շրջակայքով պատկանել է Հայաստանին: Չխորանալով հարցի ելության մեջ, որն ինքնըստինքյան առանձին ուսումնասիրության նյութ է, մենք սոսկ կամենում ենք նշել, որ, հավանաբար, Սանատրուկ-Երվանդի ժամանակներում Հայաստանը կորցրել է Միջագետքի իրեն պատկանող հատվածը կամ մի մասը, որը հետագայում Մովսես Խորենացու կողմից միահյուսվել է 37 թ. իրադարձությունների և տա-

<sup>1</sup> Մովսես Խորենացի, II, ԼԸ, էջ 164:

<sup>2</sup> Անդ, էջ 164. «Իսկ գործակալացն Հռովմայեցոց մեծապես հանդերձեալ զքաղաքն Եդեսիայ՝ ի նմա հաստատեն զտունս գանձուց հարկացն ժողովելոց ի Հայոց, ի Միջագետաց և յԱսորեստանեայց»:

<sup>3</sup> Համաձայն մեր ուսումնասիրությունների, հիշյալ ճանապարհի Հայաստանով անցնող հատվածը չի սկսվել Մեխտենեի մերձակայքից և ավարտվել Ասորեստան մուտք գործելով, ինչպես այսօր ընդունված է հայագիտության մեջ: Այն սկսվել է Ջևզմայի գետանցի շրջանում, անցել Եդեսիայով և, այնուհետև հատելով Տիգրիսը՝ մուտք գործել Ասորեստան:

րածքային կորուստների փաստի հետ: Դրան մեծապես նպաստել է նաև այն հանգամանքը, որ Արտաշես Ա և Տրդատ Ա շփոթը, որը պայմանավորված էր վերջինիս կողմից հայկական Արտաշես անունը ընդունելու հետ, թյուրիմացության մեջ է գցել անգամ հանձարեղ Պատմահորը:

Կորդուքը թե՛ որպես աշխարհ և թե՛ որպես գավառ հայկական աղբյուրներում հայտնի է Կորդուք գրությամբ: Ազաթանգեղոսի երկրամ հանդիպող «Կորդուքացիք» ձևը, ինչպես նաև «Կորդուքաց աշխարհին»-ը որոշակիորեն ծագում են հունական աղբյուրից<sup>1</sup>, որի համար որպես համեմատություն կարող է ծառայել հունարեն Ազաթանգեղոսի Κορδοσιτών χώρα -ն<sup>2</sup>: Կորդուքից ծագում է «Կորդուքացիք»-ը<sup>3</sup>, որը Խորենացու երկրամ արտահայտում է Կորդուքացիների իշխանական ընտանիքը: Եբրայեցիներն և ասորական աղբյուրները Կորդուքը, ինչպես նշել ենք, գիտեն Qardū, Qardō գրությամբ, արաբները՝ Qardā արտասանությամբ: Ստրաբոնի երկի ազդեցությամբ նահանգը հունական աղբյուրների մի մասում ձեռք է բերում Κορδοσηνί գրությունը, քանի որ, ըստ հույն աշխարհագրագետի, Կորդուքը բնակեցրել էր Տրիպտոլոմեսի (Տրիպտոլեմայոսի) որդի Գորդիոսը<sup>4</sup>: Նրան հետևելով, Պլուտարքոսը Կորդուքի բնակիչներին կոչում է Κορδοισοί, Պտղոմեոսը Կորդուքն անվանում է Κορδοσηνή: Մակայն Հովսեփոս Փլավիոսը՝ համաձայն Բերոսոսի, երկրի բնակիչներին կոչում է Κορδοισοί, Դիոն Կասիոսը լեռներն անվանում է τὸ Κορδωνον ὄρος Սալուստիոսը և Պլինիոս Ավագը՝ Cordueni, Ամիանոս Մարկեդինոսը՝ Corduena, Եվտրոպիոսը՝ Cardueni և այլն<sup>5</sup>:

Մի փոքր այլ ճանապարհով ընթացավ Կորտաթա-Կորճաթի ձևավորումը: Արտաշեսյանների օրոք գոյություն ունեցող միասնական Աղբակ գավառը, որն, ինչպես արդեն նշվել է, իր մեջ էր ներառում Մեծ Աղբակ, Փոքր Աղբակ, Ալե և Որսիրանք գավառների տարածքը, առանձին վարչական միավոր էր: Արտաշես Ա-ի իշխանության տարիներին Մեծ Հայքին միացվեց Տմորիքը, որն, ըստ Ստրաբոնի, մինչ այդ պատկանում էր ասորիներին, այլ խոսքով՝ Մելեկյան պետությանը, սակայն՝ դատելով մի շարք հանգամանքներից, այն ևս, հավանաբար, նախապես Կորդվաց թագավորության մեջ էր մտնում: Մեծ

Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման հետևանքով սահմանաբաժան գիծն անցավ Աղբակի վրայով, որի հետևանքով Վասպուրականի մեջ (ավելի ճիշտ է Տոսպի մեջ) հայտնված բաժինն ստացավ Մեծ Աղբակ, իսկ Կորտաթա-Կորճաթի բաժնեմասը՝ Փոքր Աղբակ անունը: Այս աշխարհի մեջ մտավ վերը հիշված Տմորիքը, որի մեջ էին մտնում Կորդիքը և նրանից արևելք ընկած մի քանի գավառներ: Նոր ձևավորված աշխարհն ստացավ Կորճաթ անունը՝ թերևս կապված ծայր սահմանային երկրամաս լինելու հետ: Հայերենի բարբառներում «կորճ» նշանակում է ընկույզի կամ ձվի և այլնի ջարդված կեղև, խեճեճ<sup>1</sup>: Վանի բարբառում այն նշանակում է նաև հացի բոքոնի լավ եփված արտաքնաշերտ, կեղև, կճեպ և այլն<sup>2</sup>, որը մեզ, թերևս, իրավունք է տալիս Կորճաթ աշխարհանունը ծագումնաբանորեն կապել հիշյալ «կորճ» բառի հետ: «Կորճը» ոչ միայն արտաքին շերտ է, այլև մի տեսակ զրահ տվյալ առարկայի, ընկույզի կամ ձվի համար, որը պաշտպանում է վերջինիս պարունակությունը: Այդ իրողությունը ելակետ ունենալով, կարելի է ենթադրել, որ Կորճաթ պարզապես նշանակել է եզրային կամ սահմանային անառիկ կամ ամրացված երկրամաս: «Կորճ» բառի մյուս իմաստային օգտագործումը որպես «ծուռ, թիւր, անհարթ», կարծում ենք, ծագում է առաջինից: Այն առանձին չի գործածվել, այլ հանդիպում է հետևյալ բառակապակցությունների մեջ. «Կորճաթ»- «խեցքեկ, աղավաղ լեզու», կորճալեզու, կորճաբառ և այլն<sup>3</sup>: Ինչպես նշում է Ա.Աճառյանը, «կորճ»-ը «Հայաստանի Կորճաթ նահանգի անունից է կազմված: Այս նահանգի ժողովուրդը պատկանում էր մի օտար ազգության և խօսում էր մի առանձին լեզու: Սովորելով յետոյ հայերեն՝ բնականաբար խօսում էին ոչ բոլորովին մաքուր լեզուով. ուստի և առնուեցին ծեքական լեզվի իբրև տիպար. հմմտ. «Եւ պարտ է գիտել եթէ ըստ մերումս բարբառոյ նախագաղափարաւո վարին Կորճաթոյ միայն» (Անանուն մեկնիչ, էջ 147). «Բայց յայլ վայրս, որպէս Կորճաթոյ, վարին կրականին ոչ հմտաբար, այլ ըստ սովորութեան» (Դաւիթ մեկնիչ, էջ 112). «Ջրովանդակ զբառն զեզեբականս, որպէս զԿորճայն և զՏայեցին» (Ստեփ. Միւն. քերակ. 187): Իմաստի զարգացման համար հմմտ. խաղաղուր, խաղտախուղտ»<sup>4</sup>: «Նոր Հայկազեան բառգրքում» Կորճայ բառի մասին ասված է.

<sup>1</sup> Կարծում ենք, որ հունաբանությունները Ազաթանգեղոսի երկրամ խոսում են սկզբնապես Գրիգոր Լուսավորչի «Կարքը» հունարեն լեզվով գրված լինելու մասին:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 21. «Կորդուքաց», 22, 42, 123, 159, 209, 219, 220: Մովսես Խորենացի, էջ 45, 161, 211: Եղիշե, էջ 10, 51: Սեբեոս, էջ 52: Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 245, 270, 327: Ասողիկ, էջ 169 և այլն: «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», § 795. «Կորդուքաց աշխարհին», § 842. «առ Կորդուքաց»:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, էջ 116:

<sup>4</sup> Strabo, XVI, 1, 25: Տե՛ս նաև XVI, 1, 24. ..Κορδοσιών χωρία.,

<sup>5</sup> Հ. Զյուրջման, Հին Հայոց տեղայ անունները, էջ 202:

<sup>1</sup> «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 9, Երևան, 1974, էջ 197: Տե՛ս նաև Է.Ք. Աղաթան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 763: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Երևան, 1973, էջ 651. «Կորճ-«Ընկույզի կեղև»։ Լորագիտ բառ գործածուած նոր վկ. էջ 317. «Պորեալ զընկույզն, կործեցին զկորճն ի վերայ նորա»:

<sup>2</sup> Այս ամենին տեղեկացել եմ մանուկ հասակում, տատիս հետ շփվելով:

<sup>3</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, էջ 652:

<sup>4</sup> Անդ:

«Որոյ բարբառն է փոքր մի թիւրեալ և խանգարեալ, կամ խորթ և կորդ. որպիսի էր բնակչացն յաշխարհին Կորճէից ի Հայս, որ և կոչին Գորդայք, Կորդուք, Կորդուացիք, սահմանակիցք Սարաց...: Գորդայ կոչէ զկորճալեզուն, զոր ի յունին դորացի անուանեն լեզու (որպէս խոտորեալ ի բուն ելլադականէն ատոհիկեցուց) . երզն. քեր: «Ջրոյ լեզուիդ գիտելն բովանդակ զբառն (կամ զբարսն) զգեբրականս, որպէս զկորճայն և զտայեցին և զխութայինն, երզն. քեր\*: Գալիլեայ լեզուն մի է ասեն, և կորճայ, և կարի շինական. և զհարդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս՝ յորում ծնեալ եմք. Տօնակ»<sup>1</sup>:

Ի մի բերելով հիշյալ տեղեկությունները, մենք հարկ ենք համարում նշել, որ ոչ թե «կորճ»-ն է կազմված «Կորճայքից», ինչպէս գրում է մեծարգո լեզվաբանը, այլ Կորճայքի հիմքում դրված է «կորճը»: Հնարավոր է, որ ընկույզի կճեպի անհարթության հետ կապված «կորճ»-ն ունեցել է նաև «անհարթ, թիւր, խեցբեկ» իմաստ, սակայն մենք հակված ենք կարծելու, որ այդ բովանդակությունը նա ձեռք է բերել եզրային բարբառի գաղափարին աղերսվելով: Այրարատի «ուղղախոս» բնակչի համար եզրային բարբառները անհարթ լեզու էին, անկախ այն հանգամանքից, այդ Տայեցին էր, Կորճայք թե Արցախայինը: Ինչպէս հավաստում է Ստեփանոս Սյունեցին (VIII դ.), Կորճայք սովորական հայկական բարբառ էր. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զգեբրականս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զԽութայինն եւ զՉորրորդ Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւննին եւ զԱրցախայինն, այլ մի միայն զՄիջերկրեայսն եւ զՈստանիկսդ, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան, այլ և աւգտակարք ի պատմութիւնսն...»<sup>2</sup>: Նշանակելով եզրային, «Կորճայք»-ը աստիճանաբար դարձրեց սոսկ Կորճայքի բարբառը արտահայտելուց, առավել ևս, որ զարգացած միջնադարից հետո այդ երկրամասը գրեթե հայաթափվեց, և դարձավ ոչ գրական հայերենի, եզրային բարբառների ու խոսվածքների ընդհանրական հասկացություն:

Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչա-քաղաքական բաժանումը գոյատևեց ոչ միայն մինչև ավատատիրության հաղթանակը, այսինքն III և IV դարերի սահմանազուլիցը, այլև դեռ էլի նշանակալից ժամանակահատված, որի ընթացքում երկրի տնտեսական ու քաղաքական զարգացումն իր որոշակի կնիքն էր դնում հիշյալ բաժանման վրա, որը հետպտղոմեոսյան շրջանում որոշակի փոփոխություններ կրեց: III դարի կեսերի և վերջի կացությունը արտացոլում

<sup>1</sup> «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. Ա, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1979, էջ 1120: Տե՛ս նաև էջ 573. «Գորդայիցն գաղափար է, զի դոքս որպէս ծեքելով ի հոմանուն լեզուէ ի խօսս. նմանապէս և հոռոմին դորացի իմն անուանեալ լեզու, որպէս և գորդայիցն. երզն. քեր.»:

<sup>2</sup> Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 187:

է մեկ այլ փաստաթուղթ՝ «Աշխարհացոյց»-ը, որը՝ ստեղծվելով հանդերձ V դարի վերջնամասում, գրվել է III դարի աշխարհագրային արխիվային նյութերի հիման վրա: III դարի քաղաքական և վարչական պատմությունը, դժբախտաբար, մեզ ներկայանում է պատմական մշուշի մեջ, քանի որ սկզբնաղբյուրների հաղորդումները կցկտուր են և շատ հաճախ՝ հակասական: Ելնելով «Աշխարհացոյց»-ի անուղղակի տվյալներից, կարելի է ենթադրել, որ Խոսրով թագավորի սպանությունից հետո, երբ երկիրը կառավարում էր Տըրդատ Գ-ի խնամակալ Արտավազը (հավանաբար՝ Արտավազը Մանդակունին)<sup>1</sup>, Պարսկաստանի քաղաքական ազդեցության ոլորտն առնված Մեծ Հայքի թագավորությունը ստիպված է եղել երկրի հարավ-արևմուտքում, թերևս նաև հարավում տարածքներ զիջել Սասանյան պետությանը: Հետապնդելով հեռուն գնացող ռազմավարական նպատակներ և ձգտելով իրենց վերահսկողության տակ առնել Աղձնիքով անցնող Մելիտենե-Տիգրանակերտ-Նինվե մայրուղին, պարսիկները մեծ Հայքից անջատում են Աղձնիքը և աջափնյա Կորդուքը: Վերջինս, գրկվելով իր արևմտյան հատվածից, տարածքային առումով խիստ կրճատվում է և, ինչպէս դժվար չէ տեսնել «Աշխարհացոյց»-ից<sup>2</sup>, միացվում է Կորճայք աշխարհին: Արտավազդի խնամակալության շրջանը, սակայն երկար չտևեց: Հռոմեական զորքերի ծանր պարտությունից և վալերիանոս կայսեր գերվելուց հետո (260 թ.) Հայոց թագավորության ճակատագրի համար անհանգստացած Արտավազդի պատասխան նամակը Շապուհ Ա-ին, որտեղ ասվում էր. «Դու գերի վերցրիր մի ծերունու, բայց ամբողջ երկրի (իմա՛ Հռոմի - Շ.Բ.) բոլոր ցեղերին դարձրիր քեզ կատաղի թշնամիներ և, հնարավոր է, և մեզ, որ քեզ ուղարկեցինք օժանդակ ջոկատներ: Մենք ձեր հարևաններն ենք և միշտ տուժում ենք ձեզ համար ձեր բախումների ժամանակ»<sup>3</sup>, առաջ բերեց Սասանյան արքայից արքայի զայրույթը, որն իր ռազմական փայլուն հաղթանակներից հետո չէր սպասում այդպիսի հանդուգն պատասխան: Սասանյանները, որ պարթև Արշակունիների օրինակով մտադրություն ունեին Մեծ Հայքի թագավորությունը դարձնել իրենց արքայատոհմի երկրորդ պետությունը, մեծ զորքով ներխուժում են Հայաստան և հայոց

<sup>1</sup> Ա. Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, թիվ 3, էջ 171: Հեղինակը Արտավազդի խնամակալությունը դնում է 257/8-261 թթ.: Այլ կարծիք է Ս. Երեմյանը, որը գտնում է, թե հիշյալ շրջանում Մեծ Հայքի պարսկական մասում իշխել է Արտավազը և Արշակունին («Հայ ժողովրդի պատմություն», հատ. Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 39-40):

<sup>2</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ», էջ 31-32:

<sup>3</sup> Trebellius Pollio Valerianus pater et filius, վերցված է Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մաս Ա, տե՛ս Հակոբ Մանանդյան, Երկեր, հատ. Բ, էջ 97-98:

գահին բազմեցնում Շապուհ Ա-ի որդի Որմիզդ-Արտաշիրին<sup>1</sup>: Դրանից հետո, ամենայն հավանականությամբ, կրկին Մեծ Հայքին են կցում Աղձնիքը, սակայն ռազմավարական նպատակներով իրենց ենթակայության տակ են պահում արևմտյան Կորդուքը, որտեղ աստիճանաբար ձևավորվում է Ծավդեից իշխանությունը: Պատմահայրը, անդրադառնալով Որմիզդ-Արտաշիրի իշխանությանը, որին նա շփոթել էր Արտաշիր Պապկանի հետ, գրում է. «*Եւ Արտաշրի նուաճեալ զազգ նախարարացն՝ զգաղթեալսն անդրէն դարձուցանէ, և զամրականսն ի վայր իջուցանէ, ... Իսկ Արտաշրի գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին հաստատէր: Նա և զԱրշակունիսն, զմեկուսացեալն ի թագէն և յԱրարատն բնակելոյ, կարգէ ի նոյն տեղիս մտիւք և ռոճկօք, որպէս և էինն: Եւ զմեհենիցն պաշտամունս առաւել ևս յորդորէ. այլ և զհուրն որմզդական, որ ի վերայ բազնին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել: Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնիւ յԱրմաւիր, և փոխեցան յԱրմաւրայ ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշիր: Եւ զերկիրս գրով ընդ հարկաւ իւրով արկանէ, և ամենևինք զիւր անունն հաստատէ:*

Նա և զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ, զքարինս յերկրի կացուցանելով, նորոգեաց, և յիւր անունն փոխելով Արտաշիրական անուանեաց»<sup>2</sup>: Այս խիստ արժեքավոր վկայությունից դժվար չէ համոզվել, որ Որմիզդ-Արտաշիրը Մեծ Հայքում անցկացրել է աշխարհագիր, կարգավորել է հարկային համակարգը և պահպանել այն կացությունը, որ կար հայ Արշակունիների օրոք: Մենք հակված ենք կարծելու, որ հենց այս աշխարհագրային նյութերն էլ դրվել են Մեծ Հայքի աշխարհագրության նկարագրության հիմքում:

Ըստ աշխարհների վարչական բաժանումը հայոց Սասանյան թագավորների օրոք, պայմանավորված նոր արքայատոհմի հաստատմամբ և ավատատիրական հարաբերությունների զարգացմամբ, նշանակալից ճեղքեր տվեց<sup>3</sup>: Այդ հատկապես վառ արտահայտվեց Կորճայքում, որտեղ Կորդուքը աստիճանաբար վերածվեց առանձին վարչական միավորի, կապված, ըստ երևույթին, Կորդվաց բոլորության հանդես գալու հետ:

III դարի վերջին Մեծ Հայքում գահակալեց Ներսես Սասանյանը (276-293), որն իրեն համարում էր Սասանյան գահի օրինական ժառանգ, իսկ պարսից

արքայից արքա Վահրամ Ա-ին և նրա հաջորդ Վահրամ Բ-ին՝ բռնավորներ (ուզուրպատորներ): Հենվելով Մեծ Հայքի ռազմական կարողության և հայպարթևական ազնվականության վրա, նա կարողանում է իր դիրքերն ամրապնդել ու լուրջ հավակնություններ հանդես բերել Սասանյան գահի նկատմամբ: Այդ նպատակով նա փորձում է հաշտություն կնքել Պրոբոսի հետ, որը 276 թվին կայսերական ծիրանի հագավ<sup>1</sup>: Սակայն հռոմեացիները գերադասեցին հաշտություն կնքել կամ համաձայնության գալ ոչ թե Ներսեսի, որով կզրկվեին Մեծ Հայքի նկատմամբ իրենց հավակնություններից, այլ Տիգրանի տիրակալ Վահրամ Բ-ի (276-293) հետ, որի պատճառով, ինչպես հավաստում է Փլավիոս Վոպիսկոսը, Ներսեսի ուղարկած դեսպաններին Պրոբոսը՝ նվերները ետ տալով, վերադարձնում է հետևյալ խոսքերով. «*Ես զարմանում եմ, որ այն ամենից, որ մերը կլինի, դու այնքան քիչ ես ուղարկել: Տիրիր առայժմ բոլորին, ինչ քեզ ուրախություն է պատճառում: Եթե մենք ցանկանանք ունենալու այդ ամենը, ապա մենք գիտենք, թե ինչ ճանապարհով կարող ենք ձեռք բերել դրանք»<sup>2</sup>: Ինչպես ճիշտ եզրակացնում է Ա. Մարտիրոսյանը, Հռոմը հանձին Պրոբոսի հայտարարում էր, որ հռոմեացիները չեն ճանաչում Ներսեսի գահակալական իրավունքները Մեծ Հայքում<sup>3</sup>: Շարունակելով իր միտքը զարգացնել, հեղինակը նշում է, որ Ներսեսի՝ կայսրության հետ ինքնուրույն փոխհարաբերությունների մեջ մտնելը վկայում է Մեծ Հայքի թագավորության որոշակի քաղաքական անկախության մասին<sup>4</sup>, որն, իհարկե, շատ բանով պայմանավորված էր Ներսեսի և Վահրամ Բ-ի հակամարտությամբ:*

Այսուհանդերձ, դատելով Պրոբոսի հայտարարությունից, պարսկա-հռոմեական համաձայնությամբ կայսրը լոկ պահպանել էր ստեղծված կացությունը և Ներսեսը շարունակել էր իշխել ողջ Մեծ Հայքի տարածքին: Սակայն այդ չէր նշանակում, թե կայսրությունը հրաժարվում էր Մեծ Հայքն իր ազդեցության ոլորտն առնելու մտքից, քանի որ հռոմեացիները Տրդատին ճանաչում են Մեծ Հայքի թագավոր և օգնական զորքեր տալով, ուղարկում են Հայաստան: Մինչ Տրդատը եռանդուն ռազմական ջանքեր էր գործադրում իր թագավորությանը վերատիրելու ուղղությամբ, Վահրամ Բ-ն՝ ավելի ու ավելի անհանգստանալով Ներսեսի պարսից գահին տիրելու ձեռնարկումներից, իր տոհմակից մրցակցին թուլացնելու և անվտանգ դարձնելու նկատառումներով աս-

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Բ, էջ 49: Ա.Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 154-155:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, II, Հէ, էջ 215-216:

<sup>3</sup> Հավանաբար, նոր արտագրադարաբերությունների պայմաններում այն այլևս իրեն չէր արդարացնում, ուստի Որմիզդ-Արտաշիրը և նրա հաջորդները առանձին ջատագովություն հանդես չէին բերում նրա պահպանման գործում:

<sup>1</sup> Ա.Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 142:

<sup>2</sup> Scriptores historiae Augustae, XXVIII, XVII, 5: Վերցված է Ա. Մարտիրոսյանի վերոհիշյալ հոդվածից, էջ 164-165:

<sup>3</sup> Անդ, էջ 165:

<sup>4</sup> Անդ:

տիճանաբար գալիս է այն մտքին, որ անհրաժեշտ է համաձայնության գալ Դիոկլետիանոս կայսեր հետ և Տրդատ Գ-ին վերադարձնել իր նախնիների թագավորությունը՝ Մեծ Հայքը: Պարսից թագավորի այդ մտադրությունը առավել որոշակի կերպարանք է ընդունում այն բանից հետո, երբ հռոմեական կայսրը Տրդատին մեծ ուժերով ուղարկում է Հայաստան: Այդ մասին Պատմահայրը գրում է. «Մանրախուզի քննեալ՝ գտաք զթագավորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկլետիանոսի, և գալ այսր հանդերձ, մեծաւ զօրու»<sup>1</sup>: Մովսես Խորենացու հետագա շարադրանքից դժվար չէ համոզվել, որ Տրդատը Մեծ Հայքում հաստատվեց առանց կռիվի, որն անուղղակիորեն վկայում է հռոմեապարսկական համաձայնության օգտին<sup>2</sup>: Այդ կացությունը արտահայտվել է այսպես կոչված Տիգրանակերտի հունարեն արձանագրության մեջ<sup>3</sup>: Հայոց հեթանոս թագավորներից մեկը, բոլոր տվյալներից դատելով Տրդատ Գ-ն, արձանագրության մեջ երախտագիտությամբ է արտահայտվում և հռոմեացիների և պարսից արքայի մասին, գրելով. «Որպեսզի մենք երախտապարտ երևանք հռոմեացիների նկատմամբ և պարսից արքայի»: Ավելին, նա պարսից արքային երեք անգամ կոչում է «աստված արքայից արքա»<sup>4</sup>: Հասկանալի է, որ որքան էլ մեծ լինեին Տրդատ Գ-ի հայ-հռոմեական ուժերը, ոչ ոք չէր կարող երաշխավորել անպայման ռազմական հաջողությունը, ուստի հայոց թագավորն իրոք երախտապարտ էր ոչ միայն իր դաշնակից հռոմեացիներին, այլև ոչ վաղ անցյալում թշնամի պարսից արքայից արքային: Վահրամ Բ-ն, հավանաբար, կուզենար և թերևս զիջել է Տրդատ Գ-ին Մեծ Հայքի ամբողջ թագավորությունը, որով ռազմական առումով ծանր հարված էր հասցվում գահի հավակնորդ Ներսեհին, սակայն, ելնելով Պայկուլիի արձանագրության վկայություններից, պետք է ենթադրել, որ վերջինիս հաջողվել է հայպարթևական ավագանու որոշ մասի աջակցությամբ իր ձեռքում պահել հայոց թագավորության արևելյան շրջանները<sup>5</sup>: Նոր ձևավորված կացությունն, ըստ երևույթին, ձեռք էր տալիս թե հռոմեացիներին և թե պարսիկներին, քանի որ այն զրկում էր Տրդատ Գ-ին ինքնուրույն քաղաքականություն վարելուց և ստիպում էր վերջինիս լծվել հռոմեական քաղաքականության ռազմակառքին,

<sup>1</sup> Մովսես Խորենացի, II, 2Բ, էջ 224:

<sup>2</sup> Անդ, II, 2Բ, էջ 224:

<sup>3</sup> Տիգրանակերտը չի տեղադրվում Ֆարկինում, ուստի արձանագրությունը պետք է կոչել այլ անունով:

<sup>4</sup> Г.Х. Саркисян, Тигранакерт, էջ 81-82: Ա.Ա. Մարտիրոսյան, Հայաստանը և առաջին Ասասյանները, էջ 162-168:

<sup>5</sup> W. Henning, A Farewell to the Khagan of the Aq-Aqutaran, տե՛ս Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, XIV, էջ 517-518: В.Г. Луконин, Древний и раннесредневековый Иран, Москва, 1987, էջ 163-164:

իսկ Ներսեհին, ձևականորեն նրան պահպանելով Մեծ Հայքի թագավոր, ոչ միայն անվտանգ էր դարձնում գահակալական պայքարում, այլև պարսից կողմին հնարավորություն էր տալիս պատեհ պայմաններում միջամտել հայկական գործերին:

Վահրամ Բ-ի զիջումը հռոմեացիներին հազիվ թե լավ ընդունելության արժանացավ Պարսկաստանի ազնվականության շրջանում: Ավելին, ըստ երևույթին, Ներսեհի Հայաստանին կառչելը ընկալվում էր վերջինիս համար դրականորեն այն իմաստով, որ նա միակ արժանի ժառանգորդն է Սասանյան գահի, որը կարող է հաջողությամբ պայքարել հռոմեացիների դեմ: 293 թվին պարսից ազնվականության նշանավոր ներկայացուցիչների մեծ մասը որոշում է Ներսեհին հրավիրել Հայաստանից Պարսկաստան և պարսից գահը հանձնել նրան: 287 թ. պարսկա-հռոմեական համաձայնությունից հետո, ամենայն հավանականությամբ, ավելի էին սրվել Ներսեհի հարաբերությունները Հռոմի հետ, հետևաբար նա քաջ գիտակցում էր, որ թիկունքում ունենալով թշնամական հզոր երկիր, խոցելի է դառնում իր հակառակորդների համար հանուն գահի մղվող պայքարում: Իր մեծ երազանքին հասնելու համար նա պետք է փոխհամաձայնության գար ոչ միայն հռոմեացիների, այլև հայերի հետ, ուստի թիկունքը ապահովելու նպատակով նա Տրդատ Գ-ին է վերադարձնում Մեծ Հայքի արևելյան շրջանները, կնքում է պայմանագիր, որով հայոց արքունիքը և, ամենայն հավանականությամբ, հռոմեական կողմը ճանաչում են ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Աղձնիքի, Կորդուքի և Ծավդեքի անցումը Պարսկաստանին: Որ հռոմեացիներն իրոք մասնակցել են կամ պարզապես ճանաչել այդ պայմանագրի արդյունքները, պարզ երևում է Մծբնի 298 թվականի հաշտության հոդվածներից, որոնք հիշյալ երկրամասերը դիտում են որպես Պարսկաստանի տարածք: Նույն 293 թվին Ներսեհը տիրացավ արյաց գահին, իսկ Պայկուլիի արձանագրության մեջ նրան շնորհավորողների մեջ հիշատակվում է հայոց Տրդատ Գ թագավորը<sup>1</sup>: Սակայն հայ-հռոմեական կողմի հետ ձեռք բերած համաձայնությունը պարսից նորաթուխ արքայի համար լուրջ ճարպիկ մարտավարություն էր (տակտիկա) ու քաղաքական խաղ և, երբ Ներսեհը ամրապնդեց իր իշխանությունը արյաց երկրում, նա որոշեց վերանվաճել Մեծ Հայքի թագավորությունը: Ամիանոս Մարկելինոսի հաղորդմամբ, երբ Ներսեհը հարձակվեց Մեծ Հայքի վրա, վերջինս Հռոմի ազդեցության ոլորտում էր<sup>2</sup>: Տրդատ Գ-ն, որ խաղաղ պայմաններում հաստատվել էր գահին, այժմ ստիպված էր, ինչպես հավաստում է

<sup>1</sup> В.Г. Луконин, Древний и раннесредневековый Иран, էջ 169:

<sup>2</sup> Ammianus Marcellinus, XXIII, 5, 11:

Մովսես Խորենացին, պատերազմով պահպանել ձեռք բերվածը<sup>1</sup>: Մարտական գործողությունները, որ սկզբում ընթանում էին հոգուտ Ներսեհի, 297թ. իրենց հանգուցալուծումը ստացան Բասենի դաշտի Ոսխա գյուղի ճակատամարտում, որտեղ հայ-հռոմեական զորքերը խայտառակ ու ջախջախիչ պարտության մատնեցին պարսկական բանակը: Ներսեհի կանանոցի և բազմաթիվ զորապետերի գերի ընկնելը, մեծաթիվ սպանվածները ստիպեցին պարսից թագավորին ընդունել հաղթողների պայմանները<sup>2</sup>: 298 թ. Մծբնի պայմանագրով Անգեղտուն-Ինգեյենեն, Մեծ Ծոփք-Սոֆանենեն ու Արձն-Արզանենեն, որոնք կազմում էին Աղձնիք աշխարհի տարածքը, Կորդուք-Կորդուենեի և Ծավդեք-Ջարդիկենեի հետ անցան Հռոմին, իսկ Մեծ Հայքի սահմանները ընդարձակվեցին Մարաստանի սահմանում մինչև Ջինթա ամրոցը<sup>3</sup>: Ինչպես տեսնում ենք, Հռոմը Մծբնի պայմանագիրը կնքելիս Անդրտիգրիսյան երկրները դիտում էր որպես Պարսկաստանին պատկանող տարածք և՛ հաշվի առնելով դրանց ռազմավարական նշանակությունը, միակցում էր կայսրությանը: Հասկանալի է, որ եթե դրանք մինչև 298 թիվը պատկանեին Մեծ Հայքին, ապա բանակցությունների ժամանակ որպես դաշնակցի տարածքներ առ ու ծախսի առարկա չէին դառնա: Սակայն կայսրության նպատակները շուտով փոխվեցին և Դիոկլետիանոսը նպատակահարմար գտավ դրանք վերադարձնել Տրդատ Գ-ին, որով Մեծ Հայքի տարածքային ամբողջականությունը վերականգնվեց:

Ավատականացման խորացման հետևանքով, թերևս, արդեն III դարում, իսկ եթե ոչ IV դարի առաջին կեսին, Կորձայքի տարածքը՝ Կորդուքի անջատումից հետո, նոր ճեղք տվեց, որի հետևանքով ձևավորվեցին վարչական երկու շրջաններ՝ Կորդիքը և Տմորիքը<sup>4</sup>, որոնք փորձեցին հանդես գալ Արշակ Բ-ի արքայի դեմ և չարաչար պատժվեցին Մուշեղ Մամիկոնյանի պատժիչ արշավանքի ժամանակ, Պապի գահակալության տարիներին: 387թ. Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև: Ծավդեքը և Կորդուքը անջատվեցին և միացվեցին սասանյան հարակից վարչական

<sup>1</sup> Մովսես Խորենացի, II, 2Բ. «Իսկ քաջն Տրդատայ երագապես և բազում ճակատս տունայ, նախ ի Հայս և ապա ի Պարսս՝ իբրով անձամբ առնեթ գյաղթութիւնն»: Հնարավոր է, որ այս հատվածում Տրդատ Գ-ի մեծագործություններին խառնվել են Տրդատ Բ-ի ժամանակաշրջանի անցքերը:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Բ.Է. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչա-քաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, թիվ 2, էջ 79-83:

<sup>3</sup> Petrus Patricius, Fragm. 14 (Dindorf, Historici graeci minoris, I, էջ 443):

<sup>4</sup> Փավստոս Բուզանդ, էջ 159, 209:

միավորներին լայն ինքնավարության պահպանումով, իսկ Կորդիքն ու Տմորիքը մաս կազմեցին Արևելա-հայկական թագավորության, իսկ 428 թվից, երբ Սասանյանները վերջ տվեցին Արշակունյաց թագավորությանը, մտան Հայկական մարզպանության մեջ<sup>1</sup>: Ստեղծված վարչական կացությունը արաբները պահպանեցին, որի հետևանքով Կորդիքը և Տմորիքը մտան Արմինիա ոստիկանության մեջ, իսկ IX դարում՝ Հայաստանի անկախության վերականգնումով, որպես Արծրունյաց տոհմի տիրույթներ մտան Հայ Բագրատունիների թագավորության մեջ: Ինչ վերաբերում է Ծավդեքին և Կորդուքին, ապա 387 թվից հետո նրանք դուրս մնացին հայկական քաղաքական տարածաշրջանից և ազգացեղային իմաստով կորցրեցին իրենց հայկականությունը, չնայած հայկական աղբյուրները դեռևս V դարում դրանք Հայաստանի մաս էին դիտում:

<sup>1</sup> Եղիշե, էջ 94: Լաև էջ 10, 51:

ԳՆՈՒՄ Է

Պ Ա Ր Ս Կ Ա Ն Ա Յ Ք

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Պարսկահայք աշխարհի մասին ասված է. «Է<sup>1</sup>. Պարսկահայք յելից Կորճէից, եւ ցազիզատաբար (?)<sup>2</sup> մտանէ ընդ մէջ Ատրպատականի<sup>3</sup> եւ լերինն Տարոսի այնր կողման որ կոչի Կոհի-Նիհորական<sup>4</sup>, մինչեւ ցերասխ գետ<sup>5</sup>: Ունի գաւառս ինն՝ զԱլլի<sup>6</sup>, որ կոչի Կուռիճան<sup>7</sup>, զՄարի գաւառ, զԹրաբի<sup>8</sup> գաւառ, զԱրիսի<sup>9</sup> որ է Ովէա<sup>10</sup>,

<sup>1</sup> Այսինքն՝ Մեծ Հայքի յոթերորդ աշխարհ:  
<sup>2</sup> Լ. Մարքվարթը գտնում էր, որ «եւ զազիտաւարք մտանէ» անհասկանալի արտահայտութիւնը պետք է նշանակեր «եւ սեպաձև մտնում էր» (Լ. Մարքվարտ, Պարսկահայք նահանգը («Պատմա-բանասիրական հանդես», 1961, թիվ 1, էջ 207: Համաձայն Գ. Աբգարյանի «ցազիտաբար»-ը աղավաղված բառ է: Նրա կարծիքով «Աշխարհացոյց»-ի սկզբնագրում հավանաբար եղել է «զազիտայարար» (լատ. sagitta = «աղեղ» բառից), որը պետք է նշանակեր՝ աղեղնաձև, աղեղնակերպ, սեպաձև: Բառի աղավաղումը գրիչների կողմից կատարվել է երկաթագիր տառերի Ջ > Ց, Գ > Ջ, Յ > Տ շփոթի հետևանքով (Տե՛ս Լ. Մարքվարտ, նշվ. աշխ., էջ 185):  
<sup>3</sup> Անշուշտ պետք է լինի «Ատրպատականի»:  
<sup>4</sup> Ճիշտը՝ Կոհ-ի-Նիհորական:  
<sup>5</sup> «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունում սույն հատվածն ունի ներքոհիշյալ պատկերը. «Եւթներորդ Պարսկահայք յելից կայ Կորճէից առ Ատրպատականիս» (Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349): Որոշ ձեռագրերում, «առ Ատրպատականիս»-ի փոխարեն «առ Ատրպատականա» (К.П. Патканов, Армянская география VII в. ка, էջ 19):  
<sup>6</sup> «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում հանդիպում է նաև Աղու, Ալլին տարընթերցումներով: Որոշ ձեռագրերում գավառանունը բացակայում է: Այլ աշխատություններում գավառանունը հայտնի է Ալլի, Ելի («Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետ Արծրունեայ», էջ 292, 313), Եղի (սեռ՝ Եղոյ), Էղի (սեռ՝ Էղոյ) («Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 146, 149), Կայիլոյ (կարդա՝ Ալլո) և Կայլոյ (կարդա՝ Ալլո) (Ուխտանես, Պատմութիւն Հայոց, հտվ. II, ԼԲ) գրությամբ:  
<sup>7</sup> Հանդիպում է նաև Կուրիճան, Կուռիճան, Կուռճան, Կուրճան, Կուռիճան, Կորիճան, Կուռիճան տարընթերցումներով:  
<sup>8</sup> Հանդիպում է նաև Թրաբի, Թրաբիի, Թրակի, Թակի, Թակիու տարընթերցումներով: Թ. Արծրունու մոտ Թրաբ է (էջ 292):  
<sup>9</sup> «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը Արիսին չի հիշում:  
<sup>10</sup> Ըստ երևույթին «Արիսի, որ է Ովէա» կապակցությունը աղավաղվելով «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունում տվել է Արսերս Արսերսն, Ացուրս, Ըցուտս, Ուես տարբերակները: Ըստ Լ. Մարքվարթի «Ովէա»-ն, հավանաբար, «Ովէս»-ի աղավաղված ձևն է (նշվ. աշխ., էջ 185):

զՈւնա<sup>1</sup>, զՏամբթ<sup>2</sup>, Ջարեհան<sup>3</sup>, զՋարաւանդ<sup>4</sup>, զՀեր<sup>5</sup>: Ունի յերեոց<sup>6</sup> զցիռ եւ զայծեամն<sup>7</sup>:

Պարսկահայք աշխարհի հանդես գալու ժամանակի ու հանգամանքների, ինչպես նաև տեղադրության հարցերը մեծ դժվարություն է, միաժամանակ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի պատմական աշխարհագրության համար: Սակայն «Աշխարհացոյց»-ի նկարագրությունը զուրկ է տեղագրական մանրամասներից, ուստի գավառների տեղադրությունը, շատ դեպքերում թեականությամբ, կարելի է կատարել լոկ օժանդակ աղբյուրների և տեղագրագիտական նյութերի հիման վրա: Պարսկահայքի առաջին ուսումնասիրողներից մեկը՝ Ղ. Ինճիճյանը, կարծում էր, որ աշխարհի Հեր և Ջարեվանդ գավառների հիշատակությունը որոշ դեպքերում նույնանում է Պարսկահայքին<sup>8</sup>: Լ. Մարքվարթի ենթադրությամբ, Փավստոս Բուզանդի հիշատակած այն գավառները, որոնք՝ Հայաստանից անջատվելով ուղղակի պարսից

<sup>1</sup> Հանդիպում է նաև Առնայ, Առայ, Ըռնայ, Արնայ, Ըռայ տարընթերցումներով: Այլ սկզբնաղբյուրներում Ըռնայ գավառ, Ըռնե (Թովմա Արծրունի, էջ 283, 294), Առնայ (սեռ՝ Առնայոյ) («Գիրք թղթոց», էջ 146), Առան (սեռ՝ Առանոյ) (նշվ. աշխ., էջ 149), Առան (սեռ՝ Առանայ) (նշվ. աշխ., էջ 151): Ուխտանեսի պատմության մեջ գավառանվան սեռական հոլովաձևը հանդիպում է Առնոյ (ուղղ. Առնայ) գրությամբ (II, Լ, էջ 55, ԼԲ, 57, ԼԷ, 64):  
<sup>2</sup> Հանդիպում է նաև Տամբթ, Տաբթոս, Տամբթոս, Մանբթ, Տանբթ, Տամբատ, Տաբթոս տարընթերցումներով: Առնայ և Տամբթ գավառանունները թիվ 1717 ձեռագրում աղավաղվել են և առջացրել «Առատաբթոս» անունը, որ ժողովրդական ստուգաբանության արդյունք է: Մեր կարծիքով և Տամբթ և Տամբթ կամ Տամբար ձևերը ճիշտ են:  
<sup>3</sup> Հանդիպում է նաև Ջարեհանան, Ջորայ հասան, Ջարեհասան, Ջարեհասան, Ջարիհուան, Ջարեհուան, Ջահրևան, Ջարիևան, Արեհասան, Ջարահասան տարընթերցումներով: Ուխտանեսի պատմությունը պահպանել է նաև Ջարևանից (սեռ՝ Ջարևանից) գրությունը (I, Լ, էջ 100), իսկ Միխայել Ասրու երկում հանդիպող Zarakvan-ը պետք է կարդա՝ Zarakavan (Chronique de Michel le Syrien, ed. J. B. Chabot, II, 3, Paris, 1904, p. 459 b 39):  
<sup>4</sup> Հանդիպում է նաև Ջարուանդ, Ջարաւանդ, Ջաուանդ, Ջարուանդ, Արաւանդ, Ջորաւանդ տարընթերցումներով: Հովհաննես Դրասխանակերտցին պահպանել է «Ջարևանդ» անվանաձևը («Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», էջ 289), որը կա նաև Սեբեոսի («Պատմութիւն Սեբեոսի», էջ 126), Առնդի («Պատմութիւն Դեռնդեայ Մեծի վարդապետի Հայոց», էջ 102, 134) և Առդիկի («Ատեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», էջ 116) աշխատություններում:  
<sup>5</sup> Ձեռագրերում հանդիպում է նաև «Հէր», իսկ Թովմա Արծրունու մոտ «Խէր» (Խերական դաշտ) գրությամբ (էջ 296):  
<sup>6</sup> Հանդիպում է նաև «Էրե» տարընթերցումով:  
<sup>7</sup> «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացոյ յաւելածովք նախնեաց», էջ 32: Տե՛ս նաև Վենետիկի Միխայելյան միաբանության մատենադարանի թիվ 1245 ձեռագրի 24 բ թերթը: Ձեռագրում Ջարաւանդ գավառանունը աղավաղվել է և դարձել Ջզբարաւանդ:  
<sup>8</sup> Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն ինն Հայաստանեայց, էջ 151:

տիրութենին միացվեցին, պետք է հետևազույն Պարսկահայք նահանգը կազմեին<sup>1</sup>: Լ. Զյուբզմանը, անդրադառնալով Պարսկահայք տեղանվան առաջացմանը, գրել է. «*Ուստի այս անունն ուշ ատեն եւ թերեւ յուն.* Περσαρ-μενία (Հայաստանի բաժանման ատեն՝ 387-ին Խոսրով թագաորին, 428-ին Պարսից ինկած արևելեան բաժինն) անուան վրայէն եւ «Դ. Հայք» ու «Բարձր Հայք» անուանց նմանութեամբը մեջտեղ ելած է»<sup>2</sup>:

Պարսկահայքի ուսումնասիրության ասպարեզում որոշակի ծառայություններ ունեն Ղ. Ինճիճյանը, Լ. Զյուբզմանը, Լ. Մարքվարթը, Ն. Ադոնցը, Լ. Մանանդյանը, Ս. Երեմյանը և Թ. Հակոբյանը: Նրանցից Լ. Մարքվարթը, ինչպես վերը տեսանք, նրա քննությանն է նվիրել իր «Պարսկահայքի նահանգը» ուսումնասիրությունը, որը թարգմանել և հրատարակության է հանձնել Գ. Աբգարյանը և որին բազմիցս կանդրադառնանք շարադրանքի ընթացքում: Ն. Ադոնցը և Լ. Մանանդյանը իրենց աշխատություններում, այլևայլ կապակցություններով, անդրադարձել են Պարսկահայքին<sup>3</sup>, սակայն այդպես էլ փորձ չեն արել բացատրելու նրա անվան ծագումը: Ս. Երեմյանը Պարսկահայքի առաջացմանը և նրա գավառների տեղադրությանը անդրադարձել է իր «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» աշխատության մեջ: Նրա կարծիքով, «Աշխարհացոյց»-ը Պարսկահայքի անվան տակ հասկանում է **Նոր-Շիրական բոեշխության** տերիտորիան և նրան է միացնում **Շեր և Զարավանդ** գավառները: Զարգացնելով իր միտքը, նա գրում է, որ «Պարսկահայք անվան առաջին մասը «Պարսկա» (իմաստավորված՝ պարսիկ բառով), անշուշտ կապ ունի ուրարտական ժամանակաշրջանի *Parsua Barsua* երկրի անվան հետ, որն այն ժամանակ գտնվում էր Կասպուսան (Ուրմիո) լճից հարավ»<sup>4</sup>: Ավելի ուշ նա նշել է, որ «Արտաշեսյանների և Արշակունիների թագավորության օրով կազմել է Նոր Շիրական բոեշխության հիմնական մասը: Մեծ Հայքի 385-ի (387) բաժանումից և Նոր Շիրականը Սասանյան Պարսկաստանին (Ատրպատականին) միացվելուց հետո, այդ տարածքը կոչվել է Պարսկահայք»<sup>5</sup>:

Պարսկահայք աշխարհի ձևավորման, անվան բացատրության հարցերին պատասխանելու համար առաջնային նշանակություն ունի նրա գավառների տեղադրությունը: Լ. Զյուբզմանը, ելնելով այն փաստից, որ **Շեր** և **Զարևանդ**

գավառներն ամենաիյուսայիններն էին, գտնում է, որ գավառների թվարկումը կատարված է հարավից արևելք ուղղությամբ, ուստի **Ալի-Կուրիճանը**, ըստ նրա, Պարսկահայքի ամենահարավային գավառը պետք է լիներ<sup>1</sup>: Թերևս այդ տեսակետի վրա հենվելով, Լ. Մարքվարթը, անդրադառնալով երկրամասի գավառների տեղադրությանը, գրել է, որ «*Այնուամենայնիվ հայտնի է, որ գավառների թվարկումն ընթանում է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք*»<sup>2</sup>: Թե որքանով է համապատասխանում այդ իրական դասավորությանը, ցույց կտա ստորև պատմա-աշխարհագրական քննությունը:

Որքան էլ Պարսկահայքի գավառների տեղադրությունը անձանոթ է և անորոշ, այնուամենայնիվ, որոշ գավառների տեղորոշումը հստակ է: Այսպես, Պարսկահայքի **Շեր** գավառը, որ ներկայիս Խոյ քաղաքի շրջակա տարածքն է<sup>3</sup>, ըստ Ս. Երեմյանի պետք է համապատասխաներ Ասորեստանի թագավոր Սարգոն Բ-ի արձանագրության ՍԻՍ (հայերեն՝ Ուղիս) քաղաքին<sup>4</sup>: Լ. Մարքվարթի կարծիքով, հայերեն «**Շեր**» և «**Խեր**» ձևերը առաջացել են մեդական *Hēd* կամ *Xēd* ձևից<sup>5</sup>: Կոստանդին Ծիրանածինը **Շեր** քաղաքի անունը հիշում է Խերտ (*Χερτ*) ձևով<sup>6</sup>: Կարծում ենք, որ տարակուսանքների տեղիք չի տալիս նաև **Զարևանդ** կամ **Զարավանդ** գավառի տեղորոշումը: Որոշակի է նաև **Ալի** կամ **Կուրիճան** գավառի տեղադրությունը: Կոտուր-Ջագրոշի լեռնաշղթայի կամ Վասպուրականի լեռների արևելյան լանջին գտնվում է **Էլի** բնակավայրը, որն, անկասկած, նույնական է պատմական **Ալլիին** կամ **Կուրիճանին**: Սույն տեղադրությունը հաստատվում է Թովմա Արծրունու տեղեկություններով: Վասպուրականի իշխան Աշոտի եղբայր Գուրգենը, խույս տալով արաբական զորքերից, անցնում է «*ի գաւառն Որսիրանից ... և բանակեալ կային ի լերինն, որ ի վերայ գեղջն Թուայ, ի հովիտս Նորայ, որ կոչի Արեան լիճ, զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի, եւ անդ լինէին ժողովեալ ամենայն բազմութիւն աշխարհակոյտ ամբոխից գաղթականաց գաւառացն կողմաց Աղբակոյ, Զարեհվանի, եւ Ակոյ. եւ ի լեռնակողմանցն Աղզոյ, եւ Ոտնն Առնոյ, մի կողմն ի Զողայ լեռնէն եւ անդր*»<sup>7</sup>:

<sup>1</sup> Լ. Զյուբզման, նշվ. աշխ., էջ 210:

<sup>2</sup> Լ. Մարքվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 186:

<sup>3</sup> «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», էջ 16, 32:

<sup>4</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 63: Հայերեն ավելի շուտ կլիներ «Ալլիս»:

<sup>5</sup> J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 209:

<sup>6</sup> Կոստանդին Ծիրանածին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Չրաչ Բարթիկյանի, էջ 10:

<sup>7</sup> Թովմա Արծրունի, էջ 159-160:

<sup>1</sup> J. Marquart, *Ērānšahr*, էջ 109:

<sup>2</sup> Լ. Զյուբզման, Հին հայոց տեղայն անունները, էջ 90:

<sup>3</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана: Լ. Մանանդյան, Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ, տե՛ս Հակոբ Մանանդյան, Երկեր, հ.ե, Երևան, 1984:

<sup>4</sup> Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 77:

<sup>5</sup> Ս. Երեմյան, Պարսկահայք, տե՛ս ՀԱԼ, հ. 9, Երևան, 1983, էջ 208:



Գուրգենը փորձում է բանակցել Բուղայի հետ, ուղարկելով վերջինիս մոտ իր մորը՝ Վասպուրականի բամբիշ Հռիփսիմին: Մինչ Բուղան ձգձգում էր բանակցությունները, Գուրգենի զորաջոկատը հետապնդող զորքերը. «... եկին հասին ի սահմանս երկրին ուր կայր Գուրգեն զօրօքն իւրովք: Եւ բնակեցան յեզր գետոյն Զաւ կոչեցեալ: Եւ զօրագլուխք զօրացն էին այսոքիկ, Սուբադմ, Յուսփ ի Թփղիս քաղաքէ. Յուսփ որդի Ռահմայ, եւ Ապուհեշմ Եղոյ տէր, եւ ընդ նոսա զօրք Համդոյի պարսից ամիրայի»<sup>1</sup>: Գուրգեն Արծրունու փորձերը, խաղաղ համաձայնության գալ հակառակորդի հետ, անհաջող են անցնում, ուստի հայկական ջոկատը, որ բաղկացած էր ընդամենը 900 մարտիկներից, ստիպված էր կենաց մահու ճակատամարտ տալ արաբական 15000-ոց զորաբանակին: Չնայած ուժերի գերանհավասարությանը, հայերը փայլուն հաղթանակ տարան, իսկ հակառակորդը կորցրեց 1800 զինվոր: Այնուհետև հայերը «Հարին հայածեցին եւ ի փախուստ դարձուցին զզօրսն. եւ կէսքն զհետ մտեալ փախստեիցն մինչ թանձրացաւ մութ զհշերին, հանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն Էլոյ, եւ էր որ ի կողմն Ատրպատականի եւ պարսից»<sup>2</sup>: Առաջնորդվելով այս տեղեկություններով, Հ. Մարքվարթը իրավացիորեն եզրակացրել է, որ Ելին, ինչպես և Ատրպատականն ու Պարսկաստանը գտնվում էին Որսիքանք գավառից արևելք, իսկ Ելին հիշյալ երեք շրջաններից ամենահյուսիսայինն էր, որը չէր պատկանում բուն Ատրպատականին և կից էր անմիջապես նրա հյուսիսային սահմանին<sup>3</sup>: Գերմանացի հայագետի փայլուն տեղադրությամբ, Որսիքանք գավառը համապատասխանել է Նեհիլ կամ Նի-հեյլ-չայ գետի ավազանին կամ Գավառ նահիեին<sup>4</sup>, որի հենց հարևանությամբ էլ գտնվում է Էլի բնակավայրը<sup>5</sup>: Հ. Մարքվարթի եզրակացության օգտին է խոսում Թովմա Արծրունու մեկ այլ հաղորդում ևս, ըստ որի Վասպուրականի իշխան Գագիկի եղբայր Գուրգենը տիրույթ է ստանում «զԱռնիոտն, եւ ի ձորոյն Ընձահից մինչեւ ցերկուս ամրոցսն Սրնգայ եւ Ջղմարայ...» և պայքար սկսում արաբների դեմ. «Որով եւ առ իսկ զգաւառն Ելի, եւ վանեալ զբնակիչս նորա սպառ սպուռ ջնջեաց զյիշատակ նոցա յերկրէ»<sup>6</sup>: Դժվար չէ տեսնել, որ պատմական Այլի-Ելի գավառը գտնվել է իրոք Ջղմարի և Սրինգի մերձակայքում, համապատասխանում է Էլիի շրջակա տարածքին, իսկ Էլի անվանումը

<sup>1</sup> Անդ, էջ 160-161:  
<sup>2</sup> Անդ, էջ 165-166:  
<sup>3</sup> Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 187:  
<sup>4</sup> Անդ, էջ 187-191: Հ. Մարքվարթը նշում է, որ Նիհեյլ կամ Նեհիլ գետի անունը քրդական է և ուղղակի նշանակում է «ձոր» (էջ 190):  
<sup>5</sup> Տե՛ս Բուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը:  
<sup>6</sup> Թովմա Արծրունի, էջ 313:

ոչ թե պատահական համընկնում է Այլի-Ելի գավառանվանը, այլ պատմական իրողություն: Ս. Երեմյանը առավել որոշակիացրել է գավառի սահմանները: Ըստ նրա, Այլին ընդգրկել է Նազուլ-չայ գետի հովիտը՝ Բարադոստ մահալը: Միջին դարերում Այլին կոչվել է Էլի և ընդգրկել միայն նրա արևմտյան լեռնային մասը, իսկ բնակավայրերից հայտնի են եղել Էլին, Սուրենապատը (այժմ՝ Սուրաբան), Կարենիսը և Դաստակերտը (այժմ՝ Դաստագիր)<sup>1</sup>:

Առայժմ բաց թողնելով գավառի սահմանների ճշգրտումը, որ շատ բանով կախված է Պարսկահայքի մյուս գավառների տեղադրությունից, կանգ առնենք մի հարցի վրա: Եթե Հ. Հյուբշմանի և Հ. Մարքվարթի տեսակետը Պարսկահայքի գավառների նկարագրության հերթականության մասին ճիշտ է, ապա ստացվում է, որ Այլի-Կուռիճանը ծայր հարավային գավառն է<sup>2</sup>: Կարծես թե Այլիի վերաբերյալ նման տեսակետը բխում է Թովմա Արծրունու վերը բերված վկայությունից, թե հայերը արաբներին ջշեցին «... ի կողմն Էլոյ, եւ էր որ ի կողմն Ատրպատականի եւ Պարսից»<sup>3</sup>: Ցավոք, ինչպես շուտով կհամոզվենք, նշանավոր հայագետների նշած սկզբունքը չի գործում: Նկարագրության առաջին Այլի կամ Կուռիճան գավառը Պարսկահայքի ամենահարավային գավառը չէ և ընկած է նրա գրեթե կենտրոնում: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում գավառի մյուս՝ Կուռիճան անվանումը: Հնարավոր է, որ առավել նախնականը Կոռճիան տարընթերցումն է, որ պահպանել է Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 2019 ձեռագիրը: Այդ դեպքում, անկասկած է, որ նրա «-ան» վերջավորությունը իրանական հոգնակիակերտ մասնիկն է, հետևաբար գավառանվան հայերեն ձևը կլիներ Կորճայք կամ Կորճէք, որը չի նույնանում Կորճայք աշխարհի հետ և ունի միանգամայն այլ բովանդակություն: Այս հանգամանքը, գոնե մասամբ, նկատել է Հ. Մարքվարթը, որը, ելնելով Թովմա Արծրունու «Քանզի խառն դրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբագ և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց՝ եւ հանապազ առ միմեանս զգծտութիւն կեղծաբերէին մարզպանն, եւ որ զԿորճէիցն ունէին զգործաւարութիւն:

Ելանէ մարզպանն ի վերայ նոցա, եւ յինքն հանէ զՏամբեր եւ զԸնայ գաւառ, եւ որ ասի Ապուջափրի բերդ, ի Վիրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին»<sup>4</sup>: Հաղորդումից պարզվում է, որ

<sup>1</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 35:  
<sup>2</sup> Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 210: Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 186. «Ամենահյուսիսային գավառը՝ Հեր կամ — Կանի բարբառով - իսեր գավառն է» և «դեպի հարավ-արևմուտք ձգվող ամենահեռավոր գավառներն էին՝ Այլի (Ելի, Եղի) կամ Կուռիճան և Թրաքի»:  
<sup>3</sup> Թովմա Արծրունի, էջ 166:  
<sup>4</sup> Անդ, էջ 291:

Արծրունու մոտ Պարսկահայք և Կորճէք (Կորճայք) անունները միևնույն նշանակությունն ունեն: Եվ իրոք, Կորճէից գործակալներից գրված Տամբեր, Առնա կամ Ըռնա գավառները, Ապուռզափրի բերդը և Վիրի (?) քաղաքը գտնվում էին Պարսկահայքում: Լ. Մարքվարթը հակված է կարծելու, որ Կորճէք անունը Թովմա Արծրունու կողմից կյանքի է կոչվել Փավստոս Բուզանդի օրինակով և, ավելի շուտ, կրում էր ազգաբնակչության այն ժամանակ տիրապետող մեծամասնության կնիքը<sup>1</sup>: Շարունակելով իր միտքը զարգացնել, նա գրում է. «Ելնելով վերոհիշյալից մենք կարող ենք Արծրունու հետևյալ նախադասությունը՝ («և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց») (դպր. 3, գլ. ԻԹ, էջ 259) թարգմանել ըստ իմաստի այսպես. «Կորճէք կամ Պարսկահայք աշխարհը»<sup>2</sup>: Կարծում ենք, որ ճիշտ չէ Լ. Նյուբրանը, երբ հայտարարում է, թե Թովմա Արծրունու տեղեկությունը հստակ չէ վերջինիս՝ «Աշխարհացոյց»-ի Կորճայքին, թե Փավստոս Բուզանդի հիշատակած Կորճէքին վերաբերելու խնդրում<sup>3</sup>: Մեր կարծիքով, ինչպես ավելի ուշ կհամոզվենք, Կորճէքն ու Պարսկահայքը ընդհանրապես նույնանում են, սակայն Փավստոս Բուզանդի և Թովմա Արծրունու հաղորդումներում Կորճէքը համապատասխանում է Պարսկահայքի հյուսիսային հատվածին: Կորճէքի և Պարսկահայքի միացյալ հիշատակությունը վերոբերյալ հաղորդման մեջ ոչ թե պայմանավորված է Թովմա Արծրունու աշխարհագրական անորոշ պատկերացումներով, այլ վաղ միջնադարում առկա վարչա-քաղաքական որոշակի կացությամբ: Ենթադրել, որ Արծրունյաց պատմիչը տեղյակ չի եղել աշխարհացոյցյան Կորճայք աշխարհի գոյությունը, անիմաստ է, քանի որ նրա իսկ հաղորդած տվյալներից աներկբա է, որ նա քաջատեղյակ է «Աշխարհացոյց»-ին: Ուստի, ինչպես քըննությունը ցույց կտա, նա համատեղ հիշատակելով Կորճայքն ու Պարսկահայքը, առաջինի մեջ դրել է որոշակի տարածքային ընդգրկում, չնայած կրկնում ենք, դրանք ավելի վաղ ժամանակներում պարզապես նույնացել են:

Փավստոս Բուզանդը, նկարագրելով պարսից համբարակապետի Հայաստան կատարած արշավանքը, նշում է, որ հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը նրա զորքերին ջախջախեց «ի գաւառն Կորճէից ի Սաղամաս»<sup>4</sup>: Պատմիչը ևս երկու անգամ հիշատակում է Կորճէից գավառը և, դատելով այն բանից, որ հետագա դեպքերը ծավալվում են Կոգ և Բագրավանդ գավառներում<sup>5</sup>, խոսքը վերաբերում է նույն երկրամասին: Սաղամասի տեղագրությունը

<sup>1</sup> Լ. Մարքվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 197:

<sup>2</sup> Անդ, էջ 199:

<sup>3</sup> Լ. Նյուբրան, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 86-87:

<sup>4</sup> Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, էջ 158:

<sup>5</sup> Անդ, էջ 251, 255:

հայտնի է: Այն նույնական է հետագայի Սալմաստ քաղաքին: Տարածքային առումով, ինչպես տեսնում ենք, Բուզանդի Կորճէքը դուրս է Կուրիճանի սահմաններից, կարծես թե ավելի մեծ վարչական միավոր է, որը նույնանում է Պարսկահայքին կամ էլ նրա մի նշանակալից հատվածին: Ըստ որում, Կորճէքի տարածքային այսպիսի ընդգրկմամբ հիշատակությունը լոկ Բուզանդի ստեղծագործության արդյունքը չէ, որովհետև, մեր կարծիքով, Կորճէքի որպես աշխարհի հիշատակությունը պահպանել է անգամ Պողոսմենոսի «Աշխարհագրությունը»: Հույն աշխարհագրագետը Մեծ Հայքում հիշատակում է Κοριαία և Κοταία ստրատեգիա-գորավարությունները, որոնք՝ դատելով Հայաստանի երկրամասերի նկարագրության աշխարհագրական հերթականությունից, զրտնըվում էին Կորճայքի և Պարսկահայքի տարածքում: Նա գրում է. «.. Έν δὲ τῷ

λοιπῷ καὶ μεσημβρινώτερω τμήματι μεταξὺ μὲν Εὐφράτου καὶ τῶν Τυγρίδος πηγῶν ἢ τε Ἐνζιτηνῆ καὶ ἢ ὑπ' αὐτὴν Θωσπίτις εἶτα ἡ Κοριαία, („Մնացած դեպի հարավ ընկած հատվածում, եփրատի և Տիգրիսի ակունքների միջև (գտնվում են) Անզիտենեն և նրանից ներքև Թոսպիտիսը, այնուհետև և Կորիայան,») <sup>1</sup>: „Ἀπ' ἀνατολῶν δὲ τῶν τοῦ Τίγριδος ποταμοῦ πηγῶν ἢ τε Βαγρասανδηνῆ καὶ ὑπ' αὐτὴν ἡ Γορδουηνῆ, ἥς ἀνατολικωτέρα ἡ Κοταία καὶ ὑπ' αὐτὴν Μάρδοι, („Տիգրիս գետի ակունքից դեպի արևելք (գտնվում են) և Բագրավանդենեն և նրանից ներքև՝ Գորդյունենեն, որից ավելի արևելք՝ Կոտայան և նրանից ներքև՝ Սարդերը,») <sup>2</sup>:

Առաջին տեղեկության համաձայն Թոսպիտիս ստրատեգիա-գորավարությանը, որն անկասկած արևմտյան Վասպուրականն է, հաջորդել է Κοριαία ստրատեգիա-գորավարությունը, որը՝ համաձայն նկարագրության աշխարհագրական հերթականության, կարող է նույնանալ և աշխարհացոյցյան Կորճայքին և Պարսկահայքին: Κοριαία -ն ձեռագրերում հանդիպում է նաև Κοριανα, Coriana, Coreana, Corica, Κορινέα տարընթերցումներով<sup>3</sup>, հետևաբար, եթե նախնական է Κοριαία -ն, ապա հիշյալ գորավարությունը նույնանում է Կորճայք աշխարհի տարածքին, բացառյալ Կորդուբը, իսկ եթե նախնական է Κοριανα-ն ապա չի բացառվում նրա համընկնումը Պարսկահայքին: Ըստ որում, դժվար չէ համոզվել, որ անկախ գորավարության Κοριαία կամ Κοριανα անվանումից, մենք գործ ունենք τ>1 շփոթի հետ: Բավական է, որ τ -ի գլխամասը ինչ ինչ պատճառներով ընկներ, և Κορταία -ն

<sup>1</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12, 8 (թարգմանությունը կատարել է Գ. Մուրադյանը):

<sup>2</sup> Անդ, V, 12, 9:

<sup>3</sup> Անդ, V, 12, 8-ի ծանոթագրությունները:

կամ Κορτανα-ն կվերածվեր Κορταία-ի կամ Κορίανα-ի: Հետևաբար, ելնելով հայկական նյութի ընձեռած հնարավորություններից, կարելի է առանց մազաչափ սխալվելու եզրակացնել, որ բնագրում զորավարության սնվանումը եղել է սկզբնապես Κορταία կա Κορτανα, որոնցից առաջինը ամբողջությամբ համարժեք է հայկական Կորճայք աշխարհանվանը (Κορται = Կորճայ, α = ք), իսկ երկրորդը կարող էր առաջանալ Կորճան կամ Կորիճան իրանական տարբերակից և համապատասխանել Պարսկահայք-Կորճայքին: Սակայն երկրորդ հնարավոր տարբերակը զուտ տեսական է, ինչպես շուտով կհամոզվենք, ուստի մենք հակված ենք կարծելու, որ Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ Κορταία – Κορταία-ն համապատասխանում է Կորճայք աշխարհի արևելյան հատվածին, որովհետև Κορταία-ի մասին խոսելիս, Պտղոմեոսը գրում է, որ վերջինս գտնվում էր Կորդուքից ավելի արևելք *ἰαννατολικωτέρᾳ*, իսկ նրանից անմիջապես ներքև գտնվում էր Μαρδοί = Մարդպետականը: Եզրակացությունը որոշակի է և հստակ. Κορταία-ի նույնացումը Պարսկահայքին բացառվում է: Պարսկահայքին տարածքով համապատասխանում է Κορταία-ն, որը ոչ թե գտնվում է Կորդուքից անմիջապես արևելք, այլ ավելի արևելք, այսինքն անգամ Պտղոմեոսը ընդունում է նրանց ոչ սահմանակից լինելը և նրանց միջև ինչ որ երկրամասի (անշուշտ արևելյան Կորճայքի) գոյությունը: Κορταία -ն ձեռագրերում հայտնի է Κορταία, Κορρα, Corea, Cortaea տարընթերցումներով<sup>1</sup>, որոնցից դժվար չէ հետևել, որ զորավարության նախնական անվանումը ավելի շուտ Κορταία է, քան Κορταία: Եվ քանի որ Κορταία -ից ներքև գտնվում էր, ինչպես նշվեց, Μαρδοί-Մարդպետականը, ապա այն անվերապահորեն նույնանում է Փավստոս Բուզանդի հիշատակած Կորճեքին և համապատասխանում Պարսկահայքի տարածքին: Նման քննության լույսի ներքո դժվար է համաձայնել Ն. Ադոնցի այն տեսակետին, թե իբր Պտղոմեոսի հիշատակած Κορταία-ն Այրարատ աշխարհի Կոտայք գավառն է<sup>2</sup>: Ի մի բերելով վերոգրյալը, մենք գտնում ենք, որ Կուռիճան գավառանունը պահպանել է Պարսկահայքի մեկ այլ՝ Կորճայք անվանումը<sup>3</sup>: Նման եզրակացության օգտին է խոսում նաև Κορταία (Κω(ρ)ταία) զորավարության անվան օմեգայով գրությունը, որը և ցույց է տալիս Կուռիճան անվանման հանդես գալու հնարավորությունը:

<sup>1</sup> Անդ, V, 12, 9-ի ծանոթագրությունները:

<sup>2</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 302. «Котайя, например, была знакома еще Птоломею, но в армянской литературе впервые у Себеоса в VII в.»

<sup>3</sup> Հ. Հյուբշմանի կարծիքով «Կորճեք» սեռականը ենթադրել է տալիս ուղղակիանում «Կորճեք» ձևի գոյությունը (տե՛ս «Հին հայոց տեղայն անունները», էջ 85):

Ինչպես դժվար չէ եզրակացնել Պտղոմեոսի «Աշխարհագրություն»-ից, Կորճայք կամ Կորճեք տեղանունը Պարսկահայքի տարածքի համար օգտագործվում էր արդեն II դարում, չնայած չի բացառվում նրա ավելի վաղ կիրառման հավանականությունը<sup>1</sup>:

Այլի կամ Կուռիճան գավառին Պարսկահայքի աշխարհացույցյան նկարագրության մեջ հաջորդում են Մարի գավառը և Թրաբին: Ըստ Ս. Երեմյանի Մարի գավառը տեղադրվում է Բարանդուղ-չայ գետի հովտում, որն այժմ հայտնի է Մերգեվեռ (կամ Մարգամվան - Հ.Բ.) անունով<sup>2</sup>, իսկ Թրաբին՝ Բերդեսուր-չայ (հավանաբար՝ Բերդաձոր - Հ.Բ.) գետի հովտում, որն այժմ հայտնի է Թերգեվեռ (կամ Թարգամվան - Հ.Բ.) անունով և, հեղինակի կարծիքով, իր մեջ ուներ Որմի (ներկայումս՝ Ուրմիա) և Նախճավան (ներկայումս՝ Նախիջևան-Թեփե) քաղաքները<sup>3</sup>: Տեղադրություններն, ընդհանուր առմամբ, ընդունելի են, սակայն դրա հետ մեկտեղ կան որոշ հանգամանքներ, որոնք նման տեղադրության դեպքում լուսաբանության կարիք են զգում կամ չեն բացատրվում: Ինչպես արդեն նշվեց, ցուցակում Այլի կամ Կուռիճան գավառին անմիջապես հաջորդում է Մարի գավառը, սակայն հեղինակի տեղորոշմամբ նրանց միջև ընկնում է Թրաբի գավառը, որ, կարծում ենք, չի բխում Պարսկահայքի նկարագրության օրինաչափությունից:

Հարցիս մեջ հստակություն մտցնելու համար ավելորդ չենք համարում հպանցիկ անդրադառնալ հիշյալ տարածքի XIX դարի և XX դարի սկզբի վարչական բաժանմանը: 1849-52 թթ. պարսկա-թուրքական սահմանագիծը ճշտելու համար ստեղծված հանձնաժողովի անդամներից Դերվիշ-փաշայի քարտուղար Մեհմեդ-Խուրշիդ էֆենդին<sup>4</sup>, Պարսկաստանի ներկայացուցիչ Մուշիր-եղ-դոուլ է Միրզա-Ջաֆար-խանը<sup>5</sup> և Ռուսաստանի միջնորդ ներկայացու-

<sup>1</sup> Ղ. Ինճիճյանը հակված է կարծելու, որ Այլին կամ Կուռիճանը Պլինիոսի կողմից հիշատակված (VI, 26) ալոնների (Ալոնք) գավառն է, որի միջով հոսում է Ջերախս գետը և թափվում Տիգրիսի մեջ: Հեղինակը Ջերախսը նույնացնում է Ջարպ (իմա՝ Ջար) գետին: Նրա մեկ այլ կարծիքի համաձայն Այլին կարող է համընկնել Ստրաբոնի հիշատակած Քալոնիտիսին: Սակայն Այլիի հստակ տեղադրությունը Որմիից արևելք բացառում է անվանի հայազետի թե մեկ և թե մյուս եզրակացությունը (տե՛ս Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ. էջ 65):

<sup>2</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 65:

<sup>3</sup> Անդ, էջ 54:

<sup>4</sup> Сияхэт-Наме -и- Худут (Описание путешествия по турецко-персидской границе), составил Хуршид-Эфенди, бывший секретарь турецкого комиссара по разграничению между Турциею и Персиею, с приложением отчета персидского комиссара о том же путешествии, с турецкого и персидского перевел М. А. Гамазов, с картою, С. Петербург, 1877, с. 1-361.

<sup>5</sup> Անդ, էջ 365-424:

ցիչ Ե. Ի. Չիրիկովը<sup>1</sup> թողել են հիշյալ երկրամասերի մանրամասն նկարագրությունը: Հատկապես մանրամասն է և արժեքավոր Սեմեդ-Խորշիդ-էֆենդիի նկարագրությունը, որը հարակից նյութերի հետ տալիս է Պարսկահայքի տարածքի վարչական բաժանման մանրազնին պատկերը: Ըստ նրա, Ուրմիայի մեջ մտնող Մերգավար շրջանը կամ մահալը բաղկացած է եղել 36 գյուղերից, որոնց տեղադրությունը հստակ վկայում է, որ Մարգավառը արևմուտքում տարածվում էր մինչև պարսկա-թուրքական սահմանը, իսկ արևելքում՝ մինչև Մարգավառ (այսպես է կոչվում Բարանդուզ-չայ գետը վերին հոսանքի շրջանում) և Կալա-խանա գետակների ջրբաժանը՝ Ազ և Բերդի-բերյուշկ լեռնագագաթներով, հյուսիսում՝ մինչև Ասպե լեռը և Բարանդուզ-չայ ու Բերդասուր-չայ (Բերդաձորի ջուր) գետերի ջրբաժանը, իսկ հարավում՝ մինչև Բարանդուզ-չայ և Գադեր (կամ Գետառ) գետերի ջրբաժանը Դալամպեր, Ուլուղ, Չակի և Սեկուչե լեռնագագաթներով<sup>2</sup>: Մարգավառից հյուսիս գտնվում էր Բերդեսուր (Բերդաձոր) մահալը, որը հայտնի է նաև Դաշտ մահալ անունով: Վերջինս արևմուտքում տարածվում էր մինչև պարսկա-թուրքական սահմանագիծը, արևելքում՝ մինչև Շար կամ Շահար մահալը, որ զբաղեցնում է Ուրմի (Ներկայումս՝ Ուրմիա) քաղաքի շրջակա տարածքը, իսկ հյուսիսում՝ մինչև Դերե-Շինավա (Ռուուզե-չայ գետի անունը վերին հոսանքի շրջանում) և Բերդեսուր-չայ (Բերդաձորի ջուր) գետերի ջրբաժանը<sup>3</sup>: Մեզ հետաքրքրող թարգման մահալը, համաձայն Խորշիդ-էֆենդիի տվյալների, գտնվում էր Դերե-Շինավա գետի և Նազլու-չայ գետի էլի կամ Այլի վտակի ավազաններում, արևմուտքում սահման ունենալով պարսկա-թուրքական սահմանը, հարավում՝ Բերդասուր կամ Դաշտ մահալը, արևելքում՝ Ռուուզե-չայ մահալը և հյուսիսում՝ Բրադոստ կամ Բարադոստ մահալը, տարածվելով, հավանաբար, մինչև Զարդա լեռը կ Նազլու-չայ ու Բրադոստ գետերի ջրբաժանը<sup>4</sup>: Թարգավառի տարածքը փոքր է, որը և կասկածի տակ է դնում նրա բավական նշանավոր

լինելը 16-րդ դարում: Համաձայն Շարաֆ-խան իբն Շամսադդին Բիդլիսիի «Շարաֆ-Նամե»-ի, Թարգավառը Սոմայի և Դուլի (Դուլ) հետ միասին մտել է Ուրմիայի մեջ և Շահ-Խամայիլի կողմից հանձնվել է Ղազի-Ղանին (Гази-Кирани)<sup>5</sup>: Ըստ քուրդ հեղինակի մեկ այլ տեղեկության, սկզբնապես Թարգավառի շրջանը մտել է Բրադոստ վիլայեթի (թերևս նույնանուն է Ուրմիային - Շ.Բ.) մեջ, անջատվել է վերջինից Սուլթան Ահմադի կողմից, որը Ղազի Ղանի հայրն էր, և այնուհետև ձեռքից ձեռք է անցել<sup>6</sup>: Անկասկած է; որ Շարաֆ-խան Բիդլիսիի հիշատակած Թարգավառը անհամեմատ մեծ է եղել և ընդգրկել է նաև հարևան որոշ մահալների տարածքը: Աշխարհագրական տեսակետից, գրեթե կասկածից վեր է, որ էլիի շրջակայքը, Բերդեսուր կամ Դաշտ մահալի տարածքը (պատահական չէ, որ հաճախ Թարգավառը և Դաշտը հանդես են գալիս որպես մեկ վարչական միավոր) մինչև պարսկա-թուրքական սահմանագծի կայունացումը մտել են Թարգավառի մեջ, իսկ՝ հենվելով քուրդ պատմիչի տվյալների վրա, կարելի է եզրակացնել, որ 16-րդ դարում վերջինս ընդգրկել է մինչև Դուլ (Դուլ) ընկած տարածքը, այսինքն վաղնջականորեն իր մեջ ներառել է նաև Մարգավառը<sup>7</sup>: Թարգավառի մեջ անգամ էլիի շրջակայքի մտնելը բացառում է Թարգավառի և Թրաբի գավառի նույնացումը: Ուստի և մենք հավկած ենք կարծելու, որ Թարգավառ և Թրաբի տեղանունների նմանությունը պատահական է<sup>8</sup>: Թարգավառ տեղանվան բացատրությունը տալիս է Շ. Մարքվարթը, որը, կարծում ենք, մեծ հավանականություն ունի: Հենվելով Շ. Քիպերթի (Շ. Կիպերտ) նեստորական տեղեկատուի տեղեկությունների վրա, նա ցույց է տալիս, որ Ter-gavar և Mer-gavar անուններն ըստ ասորիների կապվում են Gavar գավառի անվան հետ: Այս անունների իմաստը բացատրվում է تارومار («ներքին և վերին») արտահայտությամբ, այսինքն Ter-gavar նշանակում է «Gavar-ից ներքև», Mer-gavar «Gavar-ից վերև»<sup>9</sup>: Կարծում ենք, որ այս նոր հասկացությունն-

<sup>1</sup> «Путевой журнал Е. И. Чирикова, русского комиссара-посредника по турецко-персидскому разграничению (1849-1852), издан под редакцией М. А. Гамазова, бывшего секретаря русской посреднической комиссии, С. Петербург, 1875, տե՛ս Записки Кавказского отдела императорского русского географического общества, книжка IX, изданная под редакцией М.А. Гамазова (с картою), С. Петербург, 1876, с. I-CL, 1-803.

<sup>2</sup> Сияхэт-Намэ-и-Худуд, էջ 295-296: Տե՛ս նաև Сияхэт-Намэ-и-Худуд, Приложение, էջ 408-410: Путевой журнал Е.И. Чирикова, էջ 466-469: Ե. Ֆրանգլան, Առլապատական, Քիֆլիս, 1905, էջ 250: Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը:

<sup>3</sup> Сияхэт-Намэ-и-Худуд, էջ 296-298: Տե՛ս նաև Сияхэт-Намэ-и-Худуд, Приложение, էջ 410-411: Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը:

<sup>4</sup> Сияхэт-Намэ-и-Худуд, էջ 299-300: Տե՛ս նաև Сияхэт-Намэ-и-Худуд, Приложение, էջ 411-413: Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը: جلد ٨، من، هاتو، 8, էջ 618:

<sup>1</sup> Шараф-Хан ибн Шамсаддин Бидлйси, Шараф-Наймэ, том I, перевод, предисловие, примечания и приложения Е.А. Васильевой, Москва, 1967, էջ 345:

<sup>2</sup> Սնդ, էջ 348: Տե՛ս նաև И.П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIXвв., Москва, 1949, էջ 127-128:

<sup>3</sup> Шараф-Хан ибн Шамсаддин Бидлйси, էջ 345. «... пожаловал ему (Гази-Кирани-Ш.Բ.) вместе с грамотой на правление округа Тергавер, Сомай, Дул вместе с прилегающим и относящимся к ним районами и крепостями».

<sup>4</sup> Շ. Մարքվարթը, անդրադառնալով Այլի կամ էլի գավառի տեղադրությանը, գրել է, որ «այն պետք է փնտրել միայն պարսկաթուրքական սահմանը բաժանող լեռնաշղթայի մյուս կողմում՝ Տերգավար բարձրավանդակի վրա կամ Բարադոստի շրջանում, նույնանուն գետի վերին հոսանքում (Այս գետը միանում է Նազլու չային)»: (Տե՛ս Պարսկահայք նահանգը, էջ 199): Ինչպես տեսնում ենք, գերմանացի հայագետը ևս Թարգավառի շրջանում է փնտրել Այլի գավառը:

<sup>5</sup> Շ. Մարքվարթ, Պարսկահայք նահանգը, էջ 199: Տե՛ս նաև Zaratüst-nama, v. 1325, ed. Rosenberg.

ների հանդես գալը պայմանավորված էր **Մարի գավառի** գոյությամբ և ասորական բնակչության դեպի Պարսկահայք ունեցած տեղաշարժով: Ընկալվելով ասորիների կողմից որպես «**Գավառից վերև**», Մարի գավառանունը բնականաբար ծնել է «**Գավառից ներքև**» հասկացությունը, որն արտահայտվել է **Թարգավառ** անունով: Ավելին, նման մոտեցման դեպքում չի բացառվում, որ Որսիրանք գավառի ուշ շրջանի Գավառ անվանումը կարող էր ծնվել նույնպես Մարի գավառի ասորական մեկնաբանության հետևանքով: Թերևս դրան նպաստել է այն հանգամանքը, որ **Մարին** Պարսկահայքի այն 2 գավառներից է, որ օգտագործվում է «**Աշխարհացոյց**»-ում գավառ բառի հետ միասին:

Նշված հանգամանքները մեզ իրավունք են տալիս ընդունելու Մարի գավառի՝ Ս. Երեմյանի տեղադրությունը Բարանդուզ-չայ գետի ողջ ավազանում: Սակայն Ուրմիո լճի մերձափնյա շրջանում, որտեղ բացառությամբ գետերի, այլ բնական սահմանաբաժաններ չկան, սահմանն, ամենայն հավանականությամբ, անցել է ոչ թե Բարանդուզ-չայ գետի հյուսիսակողմով, այլ հենց Բարանդուզ-չայ գետով, որն, ինչպես ճիշտ ենթադրում է Ս. Երեմյանը, հնում պետք է կրեր Մարի գետ անունը<sup>1</sup>: Նման տեղորոշման դեպքում պատմական Մարի գավառն իր մեջ ներառել է ոչ միայն Մարգավառ, այլև Բարանդուզ-չայ մահալների տարածքը:

Ճշտելով **Մարի** գավառի տեղադրությունը, մենք կարող ենք որոշակիացնել նաև **Այլի** կամ **Կուռիճան** և **Թրաբի** գավառների դիրքը: Ըստ «**Աշխարհացոյց**»-ի Մարի գավառի անմիջական սահմանակցության վրա գտնվող Այլին կամ Կուռիճանը իր մեջ պետք է առներ Դաշտ, Թարգավառ և Բրադոստ մահալները, ինչպես նաև մինչև Վասպուրականի լեռները կամ Կոտուր-Ջագրոշի լեռնաշղթան ընկած տարածքը, որ ներկայումս պատկանում է Թուրքիային: Ինչ վերաբերում է արևելյան սահմանին, ապա այն պետք է անցներ Պարսկահայքը գրեթե երկու հավասար մասի բաժանող հյուսիսից հարավ ձգվող լեռներով, որոնք անջրպետում են, բնաշխարհագրական տեսակետից, լճափնյա շրջանը Վասպուրականին և Կորճայքին հարևան շրջանից: Որ հիշյալ լեռները էապես ազդում են վարչական բաժանման համակարգի վրա, պարզ երեվում է մեզ քաջ հայտնի ուշ շրջանի վարչական բաժանումներից: Մահալների մի խումբը զբաղեցնում էր լճափնյա արգավանդ շրջանը, իսկ մյուս խումբը՝ նշված լեռների և պարսկա-թուրքական սահմանի միջև ընկած տարածքը: Այլ խոսքով, ոչ մի մահալ Սալմաստից հարավ ընկած հատվածում չէր ձգվում պարսկա-թուրքական սահմանից մինչև Ուրմիո լճի ափերը: Մակերևութից բխող ճանապարհային ցանցը ևս իր երկու մայրուղիներով, որոնք զուգահե-

<sup>1</sup> Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 65:

աբար ձգվում էին հյուսիսից հարավ, նպաստում էր նմանօրինակ վարչական բաժանման ձևավորմանը:

Այս տեղադրությունների հենքի վրա գրեթե աներկբա է դառնում **Թրաբի** գավառի տեղորոշումը Ուրմիո լճի արևմտյան ափին: Վերջինս պետք է զբաղեցներ Մարի (Բարանդուզ-չայ) գետից մինչև Անգալ մահալն ընկած տարածքը, այսինքն՝ Նազլու-չայ, Ռուզե-չայ և Շահար-չայ (Բերդեսուր կամ Բերդաձոր գետը ստորին հոսանքի շրջանում) գետերի ստորին հոսանքի շրջանը: Շատ հնարավոր է, որ **Թրաբի** գավառանունը իրանական ծագում ունի: Բոլորովին էլ չհավանելով վերջնական բացատրության, կարծում ենք, որ այն կարող էր նշանակել «պղտոր ջուր», հանգամանք, որ կարող էր կապվել Ուրմիո լիճը թափվող, առատ տիղմ բերող գետերի, կամ էլ ձնհալքի ջրերի հետևանքով Ուրմիո լճի մերձափնյա շրջանի ողողման և ճահճակալման հետ: Բնական է, եթե գավառանունը իր ծագումով պարտական էր լճին, ապա ոչ մի **Թրաբի** գետ էլ չէր լինի: Սակայն, եթե գավառանունը կապված էր գավառով հոսող գետերից որևէ մեկի տիղմառատության հետ, ապա **Թրաբի** անունը հավանել կարող են Նազլու-չայ և Շահար-չայ (Բերդեսուր-չայ) գետերը: Ս. Երեմյանը գտնում է, որ **Թրաբի** է կոչվել **Բերդեսուր-չայը**<sup>1</sup>, որ միանգամայն հավանական է, որովհետև նրա հովտում է գտնվում երկրամասի կենտրոն Ուրմիա քաղաքը (հնում՝ Ուրմի): Դեռևս 10-րդ դարում գավառը հայտնի էր Թովմա Արծրունուն **Թրաբ** անունով<sup>2</sup>:

Հաջորդ **«Արիսի**, որ է **Ովեա»** գավառը ենթադրելի է Ուշնուի շրջանում, ինչպես և տեղադրում է Ս. Երեմյանը: Նրա կարծիքով, գավառի և դրանով իսկ Պարսկահայք աշխարհի հարավային սահմանը եղել է Արասի գետը (ներկայումս՝ Գետառ-սու), ուստի Արիսին սրբագրում է Արասի, ենթադրելով ձեռագրում նրա աղճատում<sup>3</sup>: Միանգամայն ուրույն և ընդունելի է **Գետառ-սու** անվան բխեցնելը հեղինակի կողմից **Արասի** անվանումից: Եվ իրոք, եթե գոյություն է ունեցել «գետ Արասի» ձևը, ապա այն թյուրքական լեզուների ազդեցությամբ և ժողովրդական ստուգաբանության շնորհիվ կարող էր վերածվել «**Գետառ-սու**»-ի<sup>4</sup>: Սակայն դրա հետ մեկտեղ հարկ ենք համարում կանգ առնել մեկ հանգամանքի վրա, որը կարող է կասկածի տակ դնել նման անցումը: Պատմական Արասիը ներկայումս կոչվում է ոչ թե Գետառ-սու, այլ Գադեր կամ Գոդեր, իսկ վերին հոսանքի շրջանում Աբի-Սյար-Գադեր (Սյար-

<sup>1</sup> Անդ, էջ 54:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 292. «... մտին ի Թրաբ գառա եւ ի Շնաւս»:

<sup>3</sup> Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 38:

<sup>4</sup> Անդ, էջ 38-39:

ի-Գաղեր) <sup>1</sup>: Ուստի անհրաժեշտ է պարզել, թե գետը Գետառ-սու կոչվել է արդյոք: Գաղեր գետի՝ Կելեշին և Շատի լեռնազազաթներից սկիզբ առնող վտակը կոչվում է **Գետառ-չայ (Գեղեր-չայ)** <sup>2</sup>, ուստի թերևս սա է պահպանել հինավուրց **Արասխ** անունը, եթե, իհարկե, գոյություն ունի նաև **Գետառ-սու** գուգահեռ ձևը:

**Արխսի Արասխ** սրբագրելը բանական է, սակայն չի բացառվում, որ Արասխ կոչվել է միայն գետը, իսկ գավառը կոչվում է **Արխս**: Կարծում ենք, որ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ Արխսիին համապատասխանող **Ացուերս, Այուերս և Ըցուես** տարընթերցումներն առաջացել են «**Արխսի, որ է Ովէա**»-ի կամ «**Արասխ, ով է Ովէա**»-ի աղավաղումից: Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1770, 1518 և 1482 ձեռագրերում հանդիպում է նաև «**Ուես**» տարընթերցումը, որ, կարծում ենք, առաջացել է «**Ովէա**»-ից: Ավելին, կարծում ենք, որ այն հնարավորություն է տալիս վերականգնելու գավառանվան նախնական ձևը «**Ովէս**», որի ուղիղ ձևը կլիներ «**Ովէք**» կամ, որ ավելի հին է, «**Ովայք**», որից էլ առաջացել է «**Ուես**»-ը:

Արխսի (կամ Արասխ) գավառի կենտրոնը եղել է Շնոհը (Շնաւհ, ներկայումս Ուշնուե կամ Օշնկե), որի անունը Հ. Մարքվարթի կարծիքով ծագում է ավեստայի Xšnoθra-ից (գոհացնելը, հանդարտեցնելը) կամ հայերեն փոխառյալ **շնորի** բառից <sup>3</sup>: Արդեն զարգացած ավատատիրության շրջանում Շնոհ քաղաքի անունը անցնում է գավառին: Թովմա Արծրունին, դատելով նրա «**իսկ Պարսկահայոց գոեահն խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս, գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ. հանեն զսուր, վարեն ի գերութիւն, եւ առնուն աւար, եւ ի յանցին դառնան ի ձուաշ եւ ի Թոռնաւան գաւառ, ընդ Կրճունեաց գաւառն: Եւ վարեն ի գերութիւն աւարառութեամբ, զԼեկ, եւ զԱզգի, եւ զԿրերեացն, եւ ի Ճախուկ գաւառ: Ազդ եղեալ Շապիոյ եղբոր Թադէոսի Շերեփեանց, եւ եղեալ ի վերայ Պարսկահայոց գոեհացն, եւ անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ. յուրվից գերելոցն ընդարձակեաց, հանելով եւ գաւարն ի ձեռաց նոցա, եւ վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի ձուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: Իսկ այլազգեացն անցեալ գնացեալ մտին ի Թրաք գաւառ եւ ի Շնաւհ» <sup>4</sup>: Վկայությունից, **Շնավից** դիտվում է Պարսկահայքի ամենահարա-**

վային գավառը, սակայն այլ կապակցությամբ, ինչպես վերը ցույց տվեցինք Այլի գավառի տեղադրության հետ կապված, Այլիից հարավ ընկած հողերը նա համարում է Ատրպատականի մաս <sup>1</sup>: Ըստ Հ. Մարքվարթի, նման մոտեցումը բխում է իբր այն հանգամանքից, որ **Շնավի** գավառի բացակայությունը «**Աշխարհացոյց**»-ի բնագրում ստիպել է նրան հիշյալ տարածքը վերագրել ոչ թե Պարսկահայքին, այլ Ատրպատականին: Շարունակելով իր միտքը զարգացնել, գերմանացի հայագետը եզրակացնում է, որ իբր ըստ «**Աշխարհացոյց**»-ի (հեղինակի մոտ՝ ըստ Շիրակացու) Պարսկահայքի և Ատրպատականի միջև սահմանն անցել է Ուշնուից հյուսիս, առաջինի մեջ թողնելով Բարանդուզ-չայ գետի ակունքները, իսկ հարավային սահմանագլխին գտնվել է Պարեգի հին ամրոցը <sup>2</sup>: Որպես հաստատումն իր տեսակետի նա բերում է Արծրունեաց պատմիչի «**եւ Գուրգէն (Գագիկ Արծրունու եղբայրը ժառանգեց) զկողմանս արևելեկից, յեկից Աղբազոյ եւ որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, եւ ուր եւ ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ, եւ այտքիկ այսպէս**» <sup>3</sup> վկայությունը և ենթադրում, որ Կորդք անվան տակ պետք է հասկանալ քրդական Ուշնուի գավառը <sup>4</sup>: Ավելին, նա հակված է կարծելու, որ Կորդքը նույն իմաստով օգտագործում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին ներքոհիշյալ հաղորդման մեջ. «**... ապա և թագաւորն Գագիկ հանդերձ վայելչագիտակ և բարեպաշտօն եղբարն Գուրգենաւ ոչ սակաւ ինչ քան թե բազում մարտս տազնապից ի վերայ՝ պատրաստէր թշնամեացն, որ ջուլիրս առեալ էին ըստ հրամանին Յուսիպայ ի կողմանս Ատրպատականի: Եւ այսպէս առնաբար քաջութիւնս յանձին իւրեանց տպաւորեալ հանդերձ սպասելար և պայազատ գնդին՝ զբազումս ի Հագարացոցն թաւալզոր խաղացուցանէին: Ոչ մի անգամ՝ այլ բազում անգամ ստէպ ստէպ գայս արարեալ՝ առ ստորտով աշխարհին Կորդաց և Ռստակաց և Ատրպատականի...» <sup>5</sup>: Ցավոք, այս կարծիքը կիսել չենք կարող: Երբ Թովմա Արծրունին խոսում է Պարսկահայոց մահմեդական ռամիկների (գռեաիք) մասին, որոնք ասպատակում էին Մարդաստանը, ձուաշը, Թոռնավանը, Լեկը, Ազգին, Կրերիքը և Ճահուկը, պարզորոշ վկայում է, որ նրանք վերադարձան իրենց բնակատեղիները. «**ի Թրաք գաւառ եւ ի Շնաւհ**», ուստի կասկածից վեր է, որ նա Շնոհը համարում է Պարսկա-**

<sup>1</sup> Անդ, էջ 165-166. «... հանին ի սահմանացն Հայոց, եր որ ի կողմն ելոյ, եւ եր որ ի կողմն Ատրպատականի և Պարսից»:

<sup>2</sup> Հ. Մարքվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 201, 207:

<sup>3</sup> Թովմա Արծրունի, էջ 261:

<sup>4</sup> Հ. Մարքվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 201:

<sup>5</sup> «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», էջ 245 և ծանոթություն 562 (էջ 387):

<sup>1</sup> Տե՛ս Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը: Сияхэт-Намэ-и- Худуд, էջ 344 (Сияхэт-Намэ-и- Худуд, Приложение, էջ 407):

<sup>2</sup> Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը:

<sup>3</sup> Հ. Մարքվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 200-201:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 291-292:

հայքի տարածք: Մնացած դեպքերում Վասպուրականի պատմիչը արտացոլում է քաղաքական կացությունը, երբ Շնոհ գավառը և մինչև Այլի գավառ ընկած տարածքը մաս էին կազմում ատրպատականյան մահմեդական իշխողների տիրույթների: Սակայն հարկ է նշել, որ անգամ այդօրինակ վկայություններում տեղ են գտել շատ հետաքրքիր վարչա-քաղաքական իրողություններ, որոնց կանդրադառնանք ստորև: Ինչ վերաբերում է *«ի մուտս Կորդաց»* արտահայտությանը, ապա Կորդքը Ուշնուփի հետ նույնացնելու դեպքում այն չի ընկալվում: Խնդիրն այն է, որ Վասպուրականի Արծրունեաց թագավորությունն անգամ իր ծաղկման շրջանում չի սահմանակցել և տարածքային իմաստով բավական հեռու է գտնվել Շնոհ-Ուշնուփից: Ուստի, մեր կարծիքով, Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած Կորդքի տակ պետք է հասկանալ պատմական Կորդիքը, որը զարգացած ավատատիրության շրջանում ժողովրդական արտասանությամբ վերածվել էր *«Կորդք»*-ի: Վերջինս հիշատակվում է Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու երկերում, առաջինում *«ամուր աշխարհն Կորդեաց»* և *«զԿորդիս»*<sup>1</sup>, իսկ երկրորդում՝ *«Կորդիք»*<sup>2</sup> ձևով: Բնագրի ներքին տրամաբանությունից բխում է այն միտքը, որ Կորդքը պետք է գտնվեր Կորճայք աշխարհի կողմերում, ուստի պատահական չէ, որ որոշ հրատարակիչ-նախնականներ փորձել են Կորդքը նույնացնել Կորդուբին: Այսպես, Կրեժ Վարդանյանը, թարգմանելով Թովմա Արծրունու *«Պատմութիւնը»*, Կորդքը սրբագրել է Կորդուբի, որի հետևանքով հիշյալ տեղեկությունը ստացել է ներքոբերյալ տեսքը. *«... ամբողջ Պարսկահայքը, մինչև Կորդուբի արևմտյան մասերը և մինչև ուր որ հնար լիներ ձեռք բերել»*<sup>3</sup>: Նույն ձևով է վարվել Սկրտիչ Էմինը Հովհաննես Դրասխանակերտցու *«Պատմութիւն Հայոց»*-ը հրատարակելիս. *«առ ստորոտով աշխարհին Կորդուաց և Ռստակաց և Ատրպատականի»*<sup>4</sup>: Որ Կորդքը անպայման պետք է լիներ Կորդիքը և ոչ թե Կորդուբը, պարզորոշ երևում է Թովմա Արծրունու հիշյալ վկայությունից: Արծրունյաց իշխանների գործունեությունը երբեք չի հասել Կորդուբի արևմտյան սահմանները, ուստի Կորդքի համարժեքությունը Կորդիքին առավել քան հավանական է: Շնոհ-Ուշնուփի պատկանելիությունը Պարսկահայքին վեր է ամեն կասկածից, ուստի Հ. Մարքվարթի տեսակետը Պարսկահայքի հարավային սահմանի մասին, որն իբր անցել է Ուշնուփից հյուսիս ընկած լեռներով, քննություն չի բռնում: 15-րդ

դարում արդեն Շնուփի անունը ծանոթ չէր Թովմա Մեծոբեցուն, որը քաղաքը հիշում է Օշնի անունով<sup>1</sup>:

Քննությունն ամբողջական չի լինի, եթե կանգ չառնենք մի հարցի վրա ևս: Ինչպես արդեն ասվեց, Պարսկահայքի հարավային սահմանն անցնում էր Գադեր գետով, որն *«Աշխարհացոյց»*-ում անվանված է Երասխ<sup>2</sup>: Վերջինս հասկանալի պատճառներով չի կարող նույնանալ Երասխ-Արաքսին, որովհետև, ինչպես ձիշտ նշում է Հ. Մարքվարթը, Պարսկահայքը երբեք չի տարածվել մինչև այդ գետը<sup>3</sup>: Կարելի է անշուշտ ենթադրել, որ Պարսկահայքի Երասխ գետանունն առաջացել է Արասխից Երասխ-Արաքսի ազդեցությամբ: Չնայած չի բացառվում, որ այն իրոք կրել է Երասխ անունը, որը հետագայում *ե > ա* հնչյունափոխության հետևանքով վերածվել է Արասխի: Արասխի որպես սահմանային գետի անունը պահպանել է Թովմա Արծրունին: Խոսելով Վահրամ Չուբինի՝ հայոց զորավար Մուշեղ Մամիկոնյանին ուղարկած նամակի մասին, որով նա հայերին առաջարկում էր իրեն օգնել, խոստանալով վերականգնել Հայոց թագավորությունը, նա բերում է պարսից բռնավորի (ուզուրպատոր) հետևյալ խոսքերը. *«... ձեզ տուեալ լիցի թագավորութիւն Հայոց. եւ զոր կամիչիք արասջիք ձեզ թագաւոր, եւ յԱտրոց կողմանէ զԱտրեստան, եւ զՄծուին, եւ զՆուշիրական մինչև ի սահմանս տաճկաց: եւ ես մի իշխեցից քան զԱրասխ անցանել յայդ կոյս...»*<sup>4</sup>: Սույն տեղեկությունը, որ Թովման, անկասկած, քաղել է Սեբեոսից, վերջինիս մոտ կրում է ներքոբերյալ տեսքը. *«... ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւն. զոր և դուք կամիք՝ արասջիք ձեզ թագաւոր: եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ԳԿապկոհ և ԳՂուռն Աղուանից. և յԱտրոց կողմանէ՝ զԱրուաստան, զՄծուին և զՆոր Շիրական մինչև ԳՍահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արևմուտս մինչև ԳԿեսարիա Կապադովկացւոց: եւ ես մի իշխեցից քան զՋարասպ անցանել յայնկոյս...»*<sup>5</sup>: Համադրելով այս մեջբերումները, մենք տեսնում ենք, որ Թովմա Արծրունու երկում հանդիպող *«եւ յԱտրոց կողմանէ զԱրուաստան»* արտահայտությունը պետք է լինի *«եւ յԱտրոց կողմանէ զԱրուաստան»*<sup>6</sup>,

<sup>1</sup> Թովմա Մեծոբեցի, Պատմութիւն Լանկ-Քամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 94. «Այլ և ի Թաւրզ քաղաքէն եկեալ էին անդ Հեր եւ Ջարեանդ, Օշնի եւ Աղբակ»:

<sup>2</sup> Հ. Մարքվարթի կողմից Երասխի նույնացնելը Բարանդուզ-չայի ժխտվում է վերը կատարված քննությամբ: Սակայն Բարանդուզ-չայի որպես սահմանային գետի տեսակետը բացառվում է նաև տվյալ տարածքի մակերևութի պատճառով: Եթե այդ գետը լիներ սահմանային, ապա Մարգավազը կամ պատմական Մարի գավառը դուրս կմնար Պարսկահայքից:

<sup>3</sup> Հ. Մարքվարտ, Պարսկահայք նահանգը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1961, թիվ 2, էջ 212:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 95:

<sup>5</sup> «Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, էջ 78:

<sup>6</sup> Թովմա Արծրունի և Անանու, էջ 106, ծանոթ. 236 (էջ 350):

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 159, 209:  
<sup>2</sup> Մովսես Խորենացի, էջ 183 (II, ԾԳ):  
<sup>3</sup> Թովմա Արծրունի և Անանու, էջ 240:  
<sup>4</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 245:

«Նուշիրական»-ը՝ «Նոր Շիրական»: Տարբեր մեկնությունների և եզրակացությունների տեղիք է տալիս Սեբեոսի «Զարասպի» և Թովմայի «Արասխի» համեմատությունը: Սեբեոսի պատմության ձեռագրերում **Զարասպը** հանդիպում է առանց «զ» նախդիրի, որը և իրավունք է տվել Թադեոս Միհրդատ Տեր-Աստվածատրյան Միհրդատյանցին և Քերովբե Պատկանյանին այն ընկալելու որպես **զԱրասպ**: Ստ. Մալխասյանցը, Սեբեոսի պատմությունը հրատարակելիս, վերականգնել է **Զարասպ** ձևը: Ավելի ուշ, ուսումնասիրողները հետևել են Միհրդատյանցին ու Պատկանյանին կամ էլ Մալխասյանցին ու նրա կողմակիցներին: Ավելին, Մալխասյանցի տեսակետը առավել հիմնավորելու տեսանկյունից Գ. Գրիգորյանն առաջարկել է **Զարասպին** հավելել որոշյալ հայցականի «զ» նախդիրը<sup>1</sup>: Սեբեոսի բնագիրը հրատարակելիս «զ» նախդիրը ավելացրել է Գ. Աբգարյանը<sup>2</sup>, սակայն իր ժամանակին, զարմանալիորեն, այդ չի կատարել **«Զարասպ»** ձևը վերականգնած Ստ. Մալխասյանցը<sup>3</sup>: Լ. Մարքվարթը<sup>4</sup> առաջնությունը տվել է **«զԱրասպ»** ձևին և այն նույնացրել Թովմա Արծրունու երկի **«Արասխ»**-ին: Առաջին հայացքից թվում է, որ աներկբայորեն պետք է առաջնություն տալ Սեբեոսի **«Զարասպ»** ձևին և Թովմայի հիշատակած **«Արասխ»**-ը սրբագրել **Զարասպ**, ինչպես կատարել է Վ. Վարդանյանը<sup>5</sup>, սակայն չպետք է մոռանալ, որ սրբագրումները կարող են կատարվել ոչ միայն առավել նոր երկերում հին աշխատությունների հիման վրա, այլև հին բնագրերում, առավել ուշ հանդես եկած և այդ բնագրերը օգտագործած աշխատանքների հիման վրա: Տվյալ դեպքում **«Աշխարհացոյց»**-ում հանդիպող **«Երասխ»** գետանունը որոշակիություն է մատուցում նաև Թովմա Արծրունու **«Արասխ»**-ին, ուստի «զ» նախդիրի կարծեցյալ բացակայությունը Սեբեոսի երկում երևութական է. **«Զարասպը»** պետք է ընկալել որպես **«զԱրասպ»**, իսկ որ ավելի ճիշտ է **«զԱրասխ»**: Մեր կարծիքով, սկզբնապես բնագրում եղել է **«զԱրասխ»**, սակայն Սեբեոսի երկում էլի մի քանի անգամ հանդիպող **Զարասպի** ազդեցությամբ գրիչներն իրենք են այն վերածել **«Զարասպ»**-ի<sup>6</sup>:

<sup>1</sup> «Հանդես ամսօրեայ», 1968, էջ 111:

<sup>2</sup> Սեբեոս, էջ 78:

<sup>3</sup> «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանօթութեամբ ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 39:

<sup>4</sup> Լ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, II, էջ 212: Տե՛ս նաև J. Markwart, Die Entstehung und Wiederstellung der armenischen Nation, էջ 68 (ծան. 3): Լ. Մանանդյան, Պատմաաշխարհագրական մանր հետազոտություններ, տե՛ս Լ. Մանանդյան, Երկեր, Ե, Երևան, 1984, էջ 295:

<sup>5</sup> Թովմա Արծրունի և Անանուն, էջ 106, ծան. 238 (էջ 351):

<sup>6</sup> «Եւ ես մի իշխեցից քան Զարասպ անցանել յայնկոյս» հատվածի մասին տե՛ս Սեբեոս, ծան. 204 (էջ 248-249):

Պարսկահայքի հաջորդ գավառը, որ հայտնի է Առնա կամ Ըռնա անունով, Լ. Մարքվարթը հակված է փնտրելու Այլիից կամ Ելիից արևելք: Նրա կարծիքով, գավառը նույնական է Arne եպիսկոպոսությանը<sup>1</sup>, որը հիշատակվում է 1653 թ. գրված նեստորական եպիսկոպոսությունների ցուցակում՝ Saphtan (Մեկ այլ ցուցակում՝ Scibatar՝ Սալամասի թորեպիսկոպոսություն). Targur = Targavar և Urmı անուններից առաջ<sup>2</sup>: Գ. Հոֆմանը՝ անդրադառնալով Առնային, լակոնիկ գրել է **«Առնան Ուրմիում»**<sup>3</sup>, սակայն Լ. Մարքվարթին չի հաջողվել Առնան գտնել ոչ քարտեզներում և ոչ էլ մատչելի գրականության մեջ<sup>4</sup>: Ս. Երեմյանը Առնան (չգիտես ինչո՞ւ նա առաջնությունը տալիս է Ըռնայ ձևին) տեղադրում է Խանասորի լեռնանցքից հյուսիս արևելք ընկած լեռնային շրջանում, ներկայիս Դերիկ գյուղի շրջակայքում, որը, համաձայն հեղինակի, պետք է կոչվեր Առնայ վանք և հանդիսանար գավառի կենտրոնը<sup>5</sup>: Ցավոք սրտի, հեղինակը ընթերցողին չի մատուցում իր խոհանոցը, չի տալիս այն փաստերն ու կովանները, որոնք իրավունք են տալիս Առնան նույնացնել Դերիկին: Ուշնու կամ Օշնկիե քաղաքից դեպի արևելք կա մի բնակավայր Առնա անունով<sup>6</sup>, որը, կարծես թե, համընկնում է Առնային կամ Ըռնային, սակայն այդ գայթակղիչ տեղադրությունը բացառվում է Թովմա Արծրունու վկայությունների լույսով:

Առնա գավառանունը հազվադեպ է հանդիպում պատմագրության մեջ: Բացի **«Աշխարհացոյց»**-ից այն հիշատակվում է լոկ Թովմա Արծրունու երկում: Ըստ ետության, Թովմա Արծրունու տեղեկություններն էլ այն եզակի կովաններն են, որոնց օգնությամբ փորձեր են արվել տեղադրելու Առնա գավառը: Ուսումնասիրողների կարծիքով, Առնան հիշատակվում է Արծրունյաց պատմիչի ներքոհիշյալ վկայություններում:

Ըստ Թովմա Արծրունու, երբ Գագիկ և Գուրգեն Արծրունիները բաժանում էին իրենց տիրույթները, վերջինս **«... առեալ էր ի բաժնի յեսս կոյս, եւ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿկուղան ովիտ, եւ զքուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ, զտոն Առնոյ, զԱղբազ մեծ եւ զփոքր, Ակետամբեր, Տագրեան, Ըռնայ, Զարեհաւան:**

<sup>1</sup> Լ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 200:

<sup>2</sup> J. Assmanni, Bibliotheca Orientalis Clementino-Vaticana, Romee, III, 1, 622a, III, 2, CCCCXXIII.

<sup>3</sup> G. Hoffmann, Auszüge aus syr. Akten pers. Martyrer, էջ 204:

<sup>4</sup> Լ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգ, էջ 200:

<sup>5</sup> Ա.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 53:

<sup>6</sup> Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը: Տե՛ս նաև 1:1.000000 մասշտաբի քարտեզի J-98 (Нахичевань-Төбріз) պլանշետը, В, Г-4 (Тбилиси, 1961):



Բայց զՏամբեր եւ զԸննայն, եւ զԶարեհաւան գաւառ հանեալ էր ի Պարս Հայոց...»<sup>1</sup>:

Անդրադառնալով Գուրգեն Արծրունու տարածքային ձեռքբերումներին, Վասպուրականի պատմիչը նշում է, որ նա «... յինքն հանէ զՏամբեր եւ զԸննայն գաւառ եւ որ ասի Ապուջափրի բերդ, ի Վիրի քաղաքին Կորճէից զիր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին»<sup>2</sup>:

Մանրամասն նկարագրելով Գուրգեն Արծրունու դեպի Պարսկահայք կատարած արշավանքի երթուղին, Թովմա Արծրունին գրում է. «... (Գուրգեն Արծրունին) ելեալ ի Յադամակերտ քաղաքէ յինն ժամու ուրբաթու աւուրն, եւ անցեալ ընդ ծովակն Յըմբայ, եւ ընդ Վարազի Զարեհաւանի: Եւ ընդ այն անաւատն յԸննայն Յամաց գետդ, եւ գիշերազնաց հասեալ մինչև ի Տարօնայ կոչեցեալ գետ: Եւ ի միւսում անաւատին հասին ի վերայ բանակին խնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, եւ անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ եւ Մարաճայ. եւ երիւար մարզպանին պակասեաց առ վազսն, պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, եւ առեալ զբանակն յաւարի, եւ ընդ սուր հանեալ յովս բան թէ սակաւս, հասին ի Գոգ տեղի մի ի Մղունիս գետդ»<sup>3</sup>:

«(Դերենիկ Արծրունին) նա եւ զգաւառն Ըննայն՝ զոր այնքան վաղագոյն այլազգեացն յափշտակեալ էին, զորոյ եւ ոչ զհամբաւն ոք դարուց ի դարս յիշատակել կարողանայ առ նա հասելոցն, բռնաբար կորզէ ի ձեռաց այլազգեացն, ընդ նմին եւ զայլ բազում քաղաքս յԱտրպատականէ, որոց եւ տիրէ մեծաւ ճոխութեամբ»<sup>4</sup>:

Կարծում ենք, որ տեղագրական իմաստով նպատակահարմար է քննությունը սկսել երրորդ վկայությունից: Ս. Երեմյանը, ելնելով այս տեղեկությունից, ինչպես ստորև կտեսնենք, «Վարազի»-ն ընկալել է որպես Վասպուրականի Վարաժնունիք գավառի հիշատակություն և վերջինս, ենթադրաբար, տեղադրել է Սարխալան գետակի (Ջուլա-չայի վտակը) ձորում, որտեղից ճանապարհը տանում է Խանասորի լեռնանցքը և Վասպուրականի ներքին գավառները<sup>5</sup>: Հեղինակը, ինչպես շատ այլ դեպքերում, այս անգամ ևս չի բացատրում իր տեղադրության շարժառիթները, սակայն մենք կարծում ենք, որ նա առաջնորդվել է նույն հիմունքներով, ինչ տարիներ անց Թովմա Արծրունու երկի թարգմանիչ Վ. Վարդանյանը, որը բերված հատվածը որոշ չափով խմբագրել է և թարգմանել. «Դուրս եկավ Հադամակերտ քաղաքից՝ ուրբաթ

օրվա իններորդ ժամին, անցավ Ըմբեա ծովակով, Վարաժնունիքով և Զարեհավանով, այգաբացին հասավ Ըննայն Համաց գյուղը և գիշերով մինչև Տարոնա կոչված գետը»<sup>1</sup>: Ծանոթագրությունների մեջ, անդրադառնալով իր սրբագրությանը, Վրեժ Վարդանյանը գրում է, որ բնագրի «ընդ վարազի»-ն պետք է ուղղել «ընդ Վարաժնունիս», որը փոքրիկ գավառ էր Վասպուրականում: Ըստ նրա «Վարազ» բառը անհարիր է խոսքի իմաստին, որից պետք է մակաբերել, որ Գուրգենի հեծելախումբը անցել է հենց Վարաժնունիքով, որտեղից ուղիները տանում էին դեպի Խանասորի լեռնանցքը և Վասպուրականի կենտրոնական շրջաններ<sup>2</sup>: Ինչպես դժվար չէ տեսնել, Ս. Երեմյանը «ընդ վարազի»-ն հասկացել է Վարաժնունիքով և տեղադրել է Վարաժնունիքը, իսկ Վ. Վարդանյանն էլ, ձեռքի տակ ունենալով այդ տեղադրությունը կատարել է բնագրային սրբագրում: Հիշյալ տեղանքին քաջատեղյակ ուսումնասիրողը, ելնելով Թովմա Արծրունու տվյալներից, երբեք այդպիսի տեղադրություն չէր կատարի: Խանասորի լեռնանցքով Հադամակերտից եկող ճանապարհը մուտք է գործում Սարխալան գետակի հովիտը և այնուհետև լեռնաբազուկը կտրելով մտնում Դըզըլ-քենդ գետակի ձորակը և այնուհետև Ջուլա-չայի ավազանը: Եթե համաձայնվենք, որ Վարաժնունիքի տեղադրությունը և բնագրային ճշտումը իրավացիորեն են կատարված, ապա պետք է ընդունենք, որ Գուրգեն Արծրունու զորամասերը սկզբում անցել են Վարաժնունիքով, իսկ այնուհետև Զարեհավանով: Սակայն որքան էլ փոքր տարածություն զբաղեցնեն Վարաժնունիքը, նրա Սարխալան գետակի ավազանում տեղադրելու դեպքում, Արծրունյաց իշխանը ստիպված կլիներ Վարաժնունիքից անմիջապես մուտք գործել հեղինակի տեղադրած Ըննայն, առանց Զարեհավանի գավառ մտնելու: Իսկ եթե ընդունենք, որ նա, այնուամենայնիվ, մտել է Զարեհավան, ապա նա Տարոն գետին, եթե այն իրոք նույնական է Ջուլաչային, կմոտենար առանց Ըննայն Համաց գյուղը անցնելու: Տարիներ առաջ մենք կարծիք էինք հայտնել, որ հակասություններն ինքնաբերաբար կվերանան, եթե բնագիրը թողնենք անփոփոխ: Ըստ մեզ Թովմա Արծրունին իր այս վկայության մեջ, եթե անգամ հիշատակել է այս կամ այն գավառը, ապա միայն մի նպատակով, ցույց տալու Գուրգեն Արծրունու երթուղու գլխավոր կետերի տեղադրությունը: Ըստ այդմ պարզվում էր, որ Գուրգեն իշխանը դուրս գալով Հադամակերտից անցնում է Ըմբեա ծովակով, Զարեհավան գավառի Վարազի կամ Վարազ բնակավայրով<sup>3</sup>, Ըննայն գավառի Համաց գյուղով և հասնում Տա-

<sup>1</sup> Թովմա Արծրունի և Անանուն, էջ 265:

<sup>2</sup> Անդ, էջ 372:

<sup>3</sup> Մենք ժամանակին կարծում էինք, որ Վարազի Զարեհավանի հիշատակությունը խոսում է այն մասին, որ գոյություն է ունեցել Վարազի անունով բնակավայր նաև այլ գավառում, ուստի ընթերցողին շփոթություն չպատճառելու համար, հեղինակը հատկապես շեշտել է նրա Զարեհավանում գտնվելու հանգամանքը:

<sup>1</sup> Թովմա Արծրունի, էջ 283:

<sup>2</sup> Անդ, էջ 291:

<sup>3</sup> Անդ, էջ 292:

<sup>4</sup> Անդ, էջ 294:

<sup>5</sup> Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82:

րոնո գետին<sup>1</sup>: Քննարկելով սույն հատվածը հետազայում Պարսկահայքի գավառների տեղադրության առնչությամբ, մենք ստիպված եղանք վերանայել մեր որոշ հետևությունները, սակայն Վասպուրականի գավառների տեղադրության հետ կապված մեր հիմնական հարցադրումը, որ «Վարազի»-ն չէր կարելի սրբազրել «Վարաժնունիք», իսկ վերջինս էլ չէր կարող գտնվել Սարխալան գետակի հովտում, լոկ առավել փաստացի հիմնավորում ստացավ: Քննության առնելով սույն հատվածը, Հ. Մարքվարթը բացահայտել է մի շարք հակասություններ և հանգել է միանգամայն նոր հետևությունների: Այսպես, «*Նոր Վարազի Զարնհալանի*» արտահայտությունը նա դարձրել է «*ընդ Վարազի ի Զարնհալանի*», զարմանք է հայտնել «*լճոնայ Յամաց գեղ*» բնակավայրի առիթով, գտնելով, որ գյուղի զույգ անունը շատ տարօրինակ է և պետք է կարդալ մոտավորապես այսպես. [լճոնայ, ի գեղն Ամք] («*Ըռնա գավառը, Ամք /' գյուղը*»)»<sup>2</sup>: Հիշյալ հատվածի պատմա-աշխարհագրական քննությունը նրան բերել է այն մտքին, որ Տարոնո գետը համարժեք է Բարադոստ (կամ Բրադոստ) գետին, իսկ հիշատակված Մղունիք (Մղունիս) գյուղը զուտնըվել է Տարոնո գետի ափ հասնելուց շատ հարավ<sup>3</sup>: Ուղերթի մեր ուսումնասիրությունը ևս ի հայտ բերեց հետաքրքիր մանրամասներ: Այսպես, Թովմա Արծրունու երկրում *Զարեհավան* գավառի անունը հանդիպում է *Զարեհաան* կամ *Զարեհվան* գրությամբ, իսկ հիշյալ հատվածում «*Զարեհաանի*» անսովոր գրությամբ: Եթե «*լճոնայ*»-ը նույնական է *Առնային*, ապա վերջինս մյուս կապակցություններում գրվում է միայն *Ըռնայ*, մեզ հետաքրքրող նախադասության մեջ բացակայում է ստորոգյալը: Պատմա-աշխարհագրական տեսակետից անբացատրելի կետեր ունի հեծելախմբի *Ջոլա-չայ* գետի հովտով շարժվելը: Եթե Տարոնո գետ կոչվում էր *Չեխրիկ-չայ-Ջոլա-չայ*, ապա Սարխալան գետակի հովիտը մտած հեծելախմբին պետք չէր բնավ շարժվելու Դեյրիկ գավառակ և այնտեղից հասնելու Տարոնո գետի ափը, որովհետև այն պարզապես կարող էր Տարոնո գետի ափ դուրս գալ Սարխալան-չայի հովտով: Իսկ եթե, այնուամենայնիվ, ընդունենք հեծելախմբի Դեյրիկ-Առնա մտնելը, ապա հազիվ թե մի ամբողջ գիշեր էր պետք Տարոնո գետ-Ջոլա-չայ գետին հասնելու համար: Նման ուղերթի դեպքում Գուրգեն Արծրունու հեծելախումբը կհարձակվեր հակառակորդի վրա բաց դաշտում, որն անհավանական է, որովհետև մահմեդական ռամիկները հազիվ թե իրենց ավարառու բանակի հա-

<sup>1</sup> Բ. Շարությունյան, *Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի տե՛ս Բանբեր երևանի համալսարանի*, 1983, թիվ 3, էջ 125:

<sup>2</sup> Հ. Մարքվարթ, *Պարսկահայք նահանգը*, էջ 196:

<sup>3</sup> Հ. Մարքվարթ, *Պարսկահայք նահանգը*, էջ 196, 206:

մար իջևանատեղի դարձնելն Սալմաստի անպաշտպան հարթությունը գետի ափին<sup>1</sup>:

Հիշյալ հատվածի քննությունը հստակորեն ցույց տվեց, որ այն մեզ հասել է աղավաղված վիճակում: Ըստ որում, նախնական բնագիրը վերականգնվում է և լույս սփռում Գուրգեն Արծրունու արշավանքի երթուղու և որոշ գավառների տեղադրության վրա: Արծրունյաց իշխանի զորաջոկատը դուրս եկավ Հադամակերտից, որը բոլոր ուսումնասիրողները տեղադրում են Բաշկալեում, և շարժվեց դեպի Ըմբեա ծովակ: Անատոլիայի թուրքական քարտեզում Բաշկալեից հյուսիս-արևելք Աղբակ գետի ձախափնյա շրջանում ցույց է տրված *Ամբի* գյուղը<sup>2</sup>, որն էլ անկասկած իր անունն է տվել *Ըմբեա ծովակին*: Վերջինս գտնվում է *Ամբի* գյուղից արևելք, 5-5,5 կմ հեռավորության վրա: Անցնելով Ըմբեա ծովակը, Գուրգեն Արծրունու զորաջոկատը հասեց Վասպուրականի լեռները կամ Կոտուր-Ջագրոշի լեռնաշղթան ու մուտք գործեց Պարսկահայք: Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ զորաջոկատը չէր կարող և չի անցել Խանասորի լեռնանցքով, ուստի և չի մտել Սարխալան-չայ գետակի հովիտը: Հետևաբար, նրա հետագա երթուղին կարող էր անցնել Սարխալան-չայ գետակի վտակ Շիվա-չայի կամ էլ Չեխրիկ-չայ գետակի վտակ Սուտունաջ (Սուտունեշ) գետակի հովտով: Առաջնությունը մենք տալիս ենք երկրորդ տարբերակին, որովհետև Սուտունաջ և Չեխրիկ-չայ գետակների ջրկիցից մի քանի կմ արևելք գտնվում է *Բարազի-զուր* գյուղը, որը մեր օրերում ենթարկվելով նոր իմաստավորման վերածվել է *Բարոզի*<sup>3</sup>: Բարազի-զուրը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայկական *Վարազի ձոր* տեղանունը: Տեղանվան առաջին բառը թագմանվել է քրդերեն և դարձել *Բարազ*<sup>4</sup>, իսկ *զուրը* պարզապես աղավաղումն է հայկական *ձոր* բառի: Եվ քանի որ *զուր* (զո̈ր) քրդերեն նշանակում է *մաայլ, տխուր*<sup>5</sup> և բացարձակապես չի կապվում վարազ հասկացության հետ, այն աստիճանաբար դուրս է եկել կիրառությունից, որի հետևանքով գյուղը կոչվել է պարզապես *Բարազ*, իսկ ավելի ուշ *Բարոզի*: Վարազի ձոր անունը ցույց է տալիս, որ այն սկզբում գյուղի անուն չի եղել, այլ գետահովտի: Հետևաբար, ներկայումս Չեխրիկ-չայ

<sup>1</sup> Անդ, էջ 206:

<sup>2</sup> Копия турецкой карты Анатолии, изданной в масштабе 1:210000, планшет V-17 (Башкале). Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետում գյուղը հանդիպում է Աղբակ, այլ աղբյուրներում Ամբիկ գրությամբ:

<sup>3</sup> Сияхэт-Намэ-и-Худуд, էջ 303. (Եօրազի-չուր): Ռուսական տասվերստանոց քարտեզում և այլ ժամանակակից քարտեզներում գյուղը նշված է *Баразы, Barozl* գրությամբ:

<sup>4</sup> Курдско-русский словарь (Ferhanga Kurdî-Rûsî), составил кандидат филологических наук К.К. Курдоев, около 34000 слов, Москва, 1960, էջ 76:

<sup>5</sup> Անդ, էջ 816:

կոչվող գետի հովիտը հայերը անվանում էին **Վարազի ձոր**, իսկ գետն էլ **Վարազի ձոր** կամ **Վարազի ջուր**: Կատարված քննության լույսով անդրադառնալով Թովմա Արծրունու երկից բերված տեղեկության **«Ընդ Վարազի Ջարեհաւանի»** արտահայտությանը, գտնում ենք, որ այն իր մեջ պահպանել է հենց **Վարազի ձոր** անունը: Նախապես այն եղել է **«Ընդ Վարազի ձոր եւ հասանի»**, այսինքն Գուրգեն Արծրունու զորաջոկատը անցել է Վարազի ձորով և հասել առավոտյան **«յԼոննայ Յամաց գեօղ, եւ գիշերագնաց հասեալ մինչև ի Տարօնայ կոչեցեալ գետ»**: Անկասկած, գրիչների մեղքով **«հասանի»**-ն **«հասանի»**-ի վերածվելուց հետո **«ընդ Վարազի ձոր եւ հասանի»** արտահայտությունն այնքան անիմաստ էր դառնում, որ հաջորդ արտագրողները **«ձոր եւ հասանի»**-ի մեջ տեսել են **Ջարեհավան** գավառի անունը, սակայն, բարեբախտաբար, **«եւ»**-ը թողել են անաղարտ:

Գուրգեն Արծրունու զորաջոկատը **«յԼոննայ Յամաց գեօղ»** հասնելուց հետո անկասկած բանակում է և լոկ գիշերը տեղաշարժվելով հասնում Տարոն գետին: Նշված հանգամանքը, մեր կարծիքով, լույս է սփռում գյուղի այսպես կոչված զույգ անվան, ինչպես նաև **Ն. Մարքվարթի** բնագրային սրբագրության վրա: Իրականում գյուղանունը **«յԼոննայ»**-ն է, իսկ **«Յամաց»**-ը գրաբարյան **«յամեմ»** բայի անցյալ կատարյալ ժամանակը<sup>1</sup>: Գուրգեն Արծրունու զորագունդը հասնելով **«յԼոննայ»** գյուղ, բանակում է և միայն գիշերը շարժվում մինչև Տարոն գետ: Բնական է, որ **«յամաց»**-ի նման մեկնաբանությունից հետո անիմաստ է **«յԼոննայ»**-ն որևէ ձևով **Առնա** կամ **Ըռնա** գավառանվան հետ կապելը: Մեր կարծիքով, այն պարզապես **Ուռննի** բառի բարբառային ձևն է, հանգամանք, որ իր հաստատումն է գտնում տվյալ շրջանի տեղանուններից մեկի մեջ: Հայտնի է, որ քրդերը ուռնին անվանում են **gарадиө** կամ **ди**<sup>2</sup>: Սովորական երևույթ է քրդերենում **д > в** անցումը, այնպես որ **gарадиө** կամ **gаради** ձևը կարող էր ծնել **Դարավիե** կամ **Դարավի**: Բնրագի-զուր գյուղից դեպի Սոմայի մահալ և Բրադոստ գետ տանող ճանապարհի վրա կա մի բնակավայր, որ կոչվում է **Դարավի** կամ **Դարավու**: Մեր կարծիքով, սա էլ հենց **«յԼոննայ»** գյուղն է, որի անունը քրդերը հետագայում լոկ թարգմանել են: Ի մի բերելով քննության արդյունքները, մենք գալիս ենք այն միակ հետևությունը, որ **Ջուլա-չայը** չէր կարող բնավ նույնանալ **Տարոն**

**գետին**, որը, ինչպես ճիշտ կռահել է **Ն. Մարքվարթը**, **Բրադոստ գետն** է, սակայն չի բացառվում, որ այդպես էր կոչվում **Նազլու-չայ** գետը **Բրադոստ** գետի հետ միասին: Ըստ որում, անալոգիան, գետանունը պետք է տարածվեր **Բրադոստ** գետի Դերե-բինեգա-չայ վտակի վրա ևս: Հայկական զորաջոկատի և մահմեդական խառնամբոխի ճակատամարտը եղավ, հավանաբար, ներկայիս Գումբեդ (Գմբեթ) գյուղի մերձակայքում, իսկ Մղունիս գյուղը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է **Մալունա** գյուղին<sup>1</sup>, որը գտնվում է տափարակ, զոգ վայրում: Ամփոփենք, Թովմա Արծրունու նշված հաղորդումը ոչ մի տեղեկություն չի պարունակում ոչ **Ջարեհավան** և ոչ էլ **Առնա** գավառների մասին, իսկ նրա նախնական բնագիրը ունեցել է ներքոբերյալ տեսքը. **«... (Գուրգեն Արծրունին) ելեալ ի Յադամակերտ քաղաքէ յինն ժամուրբաթու աուրն, եւ անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, եւ ընդ Վարազի ձոր եւ հասանի եւ ընդ այգն ընդ առաւօտն յԼոննայ: Յամեաց ի գեօղ, եւ գիշերագնաց հասեալ մինչև ի Տարօնայ կոչեցեալ գետ...»**<sup>2</sup>:

Առնայի տեղադրության որպես վերջին կովաններ մնում են Թովմա Արծրունու մյուս տեղեկությունները: Համաձայն բերված հատվածներից առաջինի, **Առնան** գտնվում էր Տամբեր, Տագրեան և **Ջարեհավան** գավառների հարևանությամբ կամ մերձակայքում: Գուրգեն Արծրունու տիրույթների ցուցակում այն հիշվում է Ակե, Տամբեր և Տագրեան գավառներից հետո և **Ջարեհավանից** առաջ: Նույն տեղեկության վերջին հատվածում, երբ խոսքը գնում է Պարսկահայքի ազատագրված գավառների մասին, **Առնան** հիշատակվում է Տամբերի և **Ջարեհավանի** միջև: Երկրորդ տեղեկությունից ևս պարզվում է, որ Տամբերը և **Ըռնան**, եթե սահմանակից էլ չէին, ապա գտնվում էին իրարից ոչ հեռու: Չորրորդ վկայությունը անուղղակիորեն հավաստում է, որ **Առնան** համեմատաբար հեշտ նվաճելի էր այլազգիների համար, ուստի և վաղուց գտնվում էր նրանց տիրապետության տակ: Սակայն նրա ռազմավարական դիրքը և տնտեսական նշանակությունը էական դեր են կատարում, որ որոշակի քայլեր ձեռնարկվեն նրա ազատագրման համար: Ինչպես ղոճվար չէ համոզվել, **Ըռնայի**, **Տամբերի** և **Ջարեհավանի** տեղադրությունները սերտ միախուսվում են, ուստի քննությունը ամբողջական դարձնելու նպատակով կամենում ենք ավելացնել Վասպուրականի պատմիչի մեկ վկայությունը ևս, որից բխում է, որ Աղբակն ու **Ջարեհավանը** սահմանակցում էին: Խոսելով Արյան

<sup>1</sup> «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ արքաօր **Ն. Գարբիելի Անտիքեան**, **Ն. Խաչատրոյ Սիւրմելեան**, **Ն. Մկրտչի Ազգերեան**, հատոր երկրորդ **Ն-Ց**, Վենետիկ, 1837, էջ 319: «Յամեմ» բայը նշանակում է ժամանակ անցուցանել, յերկար կալ մնալ, անազանիլ, յապաղիլ, տեսլ, դանդաղել և այլն:

<sup>2</sup> Հայ-քրդերեն բառարան (Хабарнама армани - кӛррсу), կազմեցին **Ս. Սիաբանդով** և **Չաչան**, Երևան, 1957, էջ 335:

<sup>1</sup> Չի բացառվում, որ **Մալունան** Մղունիսի աղավաղված ձևն է:

<sup>2</sup> «Հասանի»-ից հետո **«եւ»**-ը, հավանաբար, ավելորդ է: **Չեռագրի «յամեաց»**-ը պետք է ուղղել **«յամեաց»**: Օգտվելով առիթից մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Պ. Մուրադյանին և է. Պիվազյանին հիշյալ հատվածի բանասիրական քննության ընթացքում ցույց տրված օժանդակության համար:

լճի ճակատամարտի մասին, նա նշում է, որ Որսիրանքի կողմերում հավաքվել էին մեծ թվով գաղթականներ «... գաւառացն Աղբակոյ, Ջարեհվանի եւ Ակեոյ. եւ ի լեռնակողմանցն Աղզոյ, եւ Ուտն Առնոյ, մի կողմն ի Ջողայ լեռնէն եւ անդր»<sup>1</sup>: Դժվար չէ տեսնել, որ տեղադրությունների բանալին տալիս է հենց այս վկայությունը: Մեծ Աղբակի և Ջարեհավանի սահմանակցությունը որոշակիորեն բացառում է Վասպուրականի լեռների արևելյան լանջերին Առնայի, Վարաժնունիքի և Գագրիկանի տեղադրությունը, ինչպես կատարել է Ս. Երեմյանը<sup>2</sup>: Իրականում, Վասպուրականի լեռների ջրբաժան գիծը եղել է սահման երկու գավառների միջև, հանգամանք, որ նկատել է Բահրին և արտացոլել իր կազմած Մեծ Հայքի վարչական անտիպ քարտեզում<sup>3</sup>: Ս. Երեմյանի տեղադրությամբ Ջարեհավան գավառը համապատասխանում է ներկայիս Սալմաստի մահալին,<sup>4</sup> որը սակայն մասամբ է ճիշտ: Այժմ, երբ կրկին անդրադառնում ենք առաջին տեղեկությանը, տեսնում ենք, որ **Ըռնան** պետք է փնտրել Ջարեհավանի, Տագրեանի և Տամբերի միջև: Տամբերի հիշատակությունը Ակեի հարևանությամբ, ինչպես ճիշտ է նկատել Ս. Երեմյանը<sup>5</sup>, ենթադրել է տալիս նրա տեղորոշումը ներկայիս Սոմայի կամ Սոմավա և Ազիզելի մահալների շրջանում, ուստի մնում է ենթադրել, որ **Առնան** զբաղեցնում էր Ջոլա-չայ գետի ստորին հոսանքի շրջանը իր մեջ ունենալով Սալմաս կամ Սաղամաս քաղաքը: Հետևաբար Ջարեհավան և Ըռնա գավառների սահմանաբաժան գիծը պետք է անցներ Սաղամասի կամ ներկայիս Դիլմանի (մինչև իրանական հեղափոխությունը՝ Շահպուր) և Քյոհնա-շահարի, որը Ս. Երեմյանը իրավացիորեն նույնացնում է Ջարեհավանի հետ<sup>6</sup>, միջատարածքով, թողնելով առաջինը Առնայի, իսկ երկրորդը Ջարեհավանի մեջ: Ըստ այդմ էլ, մեծ որոշակիությամբ, կարելի է ասել, որ Վարազի ձոր կամ Վարազի ջուր գետը ստորին հոսանքում կկոչվեր **Առնայի ջուր**, այլ խոսքով **Ջոլա-չայը** հնում կոչվել է **Առնայի կամ Ըռնայի ջուր**: Վերոբերյալ տեղադրությունից հետո պարզ է դառնում, թե ինչո՞ւ տափարակ, դժվար պաշտպանելի Առնայի գավառը ընկել էր մահմեդականների իշխանության ներքո:

Եթե մեր տեղադրությունները ճիշտ են, ապա, Առնայից սկսած, գավառների թվարկումը կատարվել է շրջանաձև: Ուստի Ջարեհավանից հետո սպասելի

<sup>1</sup> Թովմա Արծրունի, էջ 160:

<sup>2</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 53, 82, 46:

<sup>3</sup> Les Cantons Classiques, I-er au V-me sc. ap. J.C. (Բահրիի քարտեզների պատճենները պահվում են հեղինակի արխիվում, որոնք սիրալիրաբար առաքել էր տիկին Բահրին):

<sup>4</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 52:

<sup>5</sup> Անդ, էջ 84:

<sup>6</sup> Անդ, էջ 52:

եր սկզբում **Հեր** գավառի և այնուհետև **Ջարևանդ** գավառի հիշատակությունը: Իրականում նկարագրության մեջ Հերը վերջինն է, որը և, հավանաբար, հիմք է ծառայել որոշ ուսումնասիրողների համար Ջարևանդը տեղադրելու Սալմաստի մահալի տարածքում<sup>1</sup>: **Ջարևանդ** գավառը Ս. Երեմյանի փայլուն տեղադրությամբ համապատասխանում է այժմյան **Ջեյրավանդա** գյուղի շրջակա տարածքին<sup>2</sup>: **Ջեյրավանդա** գյուղը այնքան լավ է պահպանել գավառանունը, որ տեղադրությունը վեր է ամեն կասկածից: **Ջեյրավանդայից** դեպի հարավ-արևմուտք գտնվում է ներկայիս **Խոյ** քաղաքը, որը բոլոր սկզբնաղբյուրների համաձայն հայկական **Հեր** քաղաքն է: Այլ խոսքով, անկախ մեր ցանկությունից, Առնայի հարևանությամբ գտնվում է **Հեր** գավառը: Կարծում ենք, որ հերթականության խախտումը, ինչպես ստորև կհամոզվենք, ոչ այլ ինչ է, բայց եթե Հեր գավառի առավել ուշ ձևավորման արդյունք: Ս. Երեմյանի կարծիքով, Սարգոն Բ-ի (722-705 թթ. մ.թ.ա.) արձանագրություններում հիշվող **Ջարանդա** երկիրը պիտի ընդգրկեր, բացի **Ջարավանդից**, նաև **Հեր** և **Մարանդ** գավառները<sup>3</sup>: Սակայն Սարգոն Բ-ի տարեգրության մեջ և Աշշուր աստծուն ուղղված նամակում հիշատակվող **Ջարանդա** մարզը՝ համաձայն տրվող նկարագրությունների<sup>4</sup>, բնավ չի նույնանում Պարսկահայքի **Ջարավանդին** և պատահական չէ, որ և. Հարությունյանը այն տեղադրում է Ուրմիո լճից արևելք, ներկայիս Ուսկի բնակավայրի շրջանում, Սոհունդ լեռան հյուսիսային լանջին<sup>5</sup>: Անշուշտ, այլ հարց է, թե որքանո՞վ է Ուսկին նույնական ուրարտական Ուշկայա ամրոցին, որովհետև վերջինս գտնվում էր լեռան վրա, լեռնանցքի մերձավորությամբ, իսկ Ուսկին՝ լեռնանցքից հեռու է, համեմատաբար հարթ տեղանքում: Խնդիրն այն է, որ անկախ Ուշկայայի տեղադրության ճշգրտումից, թե այն 20 կմ դեպի արևմուտք կամ արևելք էր, Ջարանդայի հավանական տարածքը չի համընկնում հայկական Ջարավանդի հետ: Ըստ մեզ, քիչ հավանական է նաև Ղ Ինճիճյանի այն ենթադրությունը, թե Պլինիոսի (VI, 27) հիշատակած Zoaranda-ն կամ Zoroanda-ն կարող է նույնանալ Ջարավանդին<sup>6</sup>, որովհետև վերջինս տեղագրվում է Աարեստանի կողմերում:

<sup>1</sup> Ղ Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 57, 106. «Ի մոտից Խոյ գաւառի և ի հարաւոյ Քողուրայ, յից օսմանեան սահմանին և ի մոտից հիւսիսոյ ծովուն Ուրմիոյ, կայ Սալմաս կամ Տիլման գաւառ, որ է Ջարեանդ գաւառ Պարսկահայոց»: Ջարևանդը և Հերը (?) Սալմաստի գավառում է տեղադրում նաև Բահրին:

<sup>2</sup> Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 51:

<sup>3</sup> Անդ, էջ 52:

<sup>4</sup> И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, 46(109), 49(167), տե՛ս «ВДИ», 1951, թիվ 2-4:

<sup>5</sup> Н. В. Арутюнян, Топонимика Урарту, էջ 79:

<sup>6</sup> Ղ Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 154:

Անդրադառնալով **Զարավանդ** գավառի անվան ծագմանը, Պատմահայրը գրում է, որ գավառն իր անվանումը ստացել է **Զրուանից**. «*Քանզի կողմանք արևելից Զրուան գլեմ կոչեն, և Զարուանդ, զգաւառն անուանեալ ասեն մինչև ցայժմ*»<sup>1</sup>: **Զարավանդը** սկզբնապես պետք է ընդգրկեր նաև ապագա **Հեր** գավառի տարածքը: Երբ **Հեր** քաղաքը աստիճանաբար բարձրացավ և այնուհետև քաղաքային տարածք ձեռք բերեց, տեղի ունեցավ նրա վարչական տարանջատումը **Զարավանդից**: Սակայն, հավանաբար, դեռ մինչև **Հերի** առանձին գավառ դառնալը, **Զարավանդը** կոչվում էր երկակի անունով, կրելով և գավառի և **Հեր** քաղաքի անունը: Ազաթանգեղոսի «*Պատմութիւն Հայոց*»-ում **Զարավանդը** հիշվում է **Հերի** հետ միասին, իսկ իշխանը կոչվում է «*շահապ Զարաւանդ*» և **Հեր գաւառի**»<sup>2</sup>: **Զարավանդ** անունը դեռ առաջնային է, սակայն **Հեր** քաղաքի անունը նույնպես բնորոշ է գավառի համար, ըստ որում հիշատակության նման հերթականությունը, ամենայն հավանականությամբ, վկայում է, որ նրանք վարչականորեն դեռ չեն տարանջատվել: Սակայն արդեն Փավստոս Բուզանդի երկում **Զարավանդ** անունը մղվում է հետին պլան («*ի Հեր և ի Զարաւանդ*»)»<sup>3</sup>, իրողություն, որ իր հաստատումն է ստանում եղիշեի «...եկեալ (պարսից զորագլուխը - *Շ.Բ.*) հասանէր յաշխարհն Հայոց ի **Հեր** և ի **Զարաւանդ** գաւառ»<sup>4</sup> և Ղազար Փարպեցու «*Քայց զգոյշ լեր նախ ժողովել առ քեզ զայրուծին Ատրպատականի որ մօտ ի Հայս իցեն, և զայրուծին Հեր և Զարաւանդ գաւառի*»<sup>5</sup> վկայություններում: Վերջին երկու տեղեկությունները հետաքրքիր են նաև այն տեսակետից, որ, մեր կարծիքով, հավաստում են հիշյալ գավառների պատկանելիությունը Հայկական մարզպանությանը<sup>6</sup>, իրողություն, որին կանդրադառնանք Պարսկահայքի վարչական ձևավորման բաժնում: «*Ի*» նախդիրի օգտագործումը **Հերի** և **Զարավանդի** հետ Փավստոս Բուզանդի, եղիշեի, Ղազար Փարպեցու («*ի Հեր և ի Զարաւանդ*», էջ 68, 69) կողմից ցույց է տալիս, որ նրանք բաժանումը և առանձին գավառների վերածվելը կատարված փաստ էր, իսկ Ղազար Փարպեցու կողմից **Հեր** գավառի առանձին հիշատակությունը<sup>7</sup> վերացնում է ամեն մի կասկա-

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 26: Տե՛ս նաև Թովմա Արծրունի, էջ 5. «... ի Զրուան անուն զՋրուանդն անուանեն»:

<sup>2</sup> «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», էջ 414, § 795:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդ, էջ 18:

<sup>4</sup> «Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», էջ 105:

<sup>5</sup> «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», էջ 159:

<sup>6</sup> Б.А. Арутюнян, Административное деление закавказских владений сасанидского Ирана согласно труду Елишэ, տե՛ս «Кавказ и Византия», вып. I, էջ 27:

<sup>7</sup> Ղազար Փարպեցի, էջ 160. «... ի գաւառին որ կոչէր **Հեր**, ի գօթոն որում անուն էր Նարսալք: Կարծում ենք, այս տեսակետի օգտին է խոսում եղիշեի «ի կողմանս **Հերայ** և **Զարաւանդայ**» արտահայտությունը (էջ 75):

ծանք: **Զարավանդը** հիշատակվում է արաբ հեղինակ Յակուտ ալ-Համավիի կողմից<sup>1</sup>, սակայն դատելով նկարագրությունից, այն կարող էր և հայկական **Զարավանդի** հետ աղերս չունենալ: Նկարագրված տեղանքը զբաղեցնում է Ուրմիո լճի մերձափնյա շրջանը, ըստ որում, դժվար է անգամ հաստատորեն ասել՝ լճի արևելյան թե՛ արևմտյան ափին, ուստի այն, բնականաբար չի կարող նույնանալ **Զարավանդին**:

**Հեր** գավառը, որ վարչականորեն ձևավորվել էր IV դարի սկզբներին, **Զարավանդի** հետ միասին կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ: Այն զբաղեցնում էր **Հեր** կամ **Խեր** քաղաքի<sup>2</sup> շրջակա տափարակը, որը Թովմա Արծրունուն հայտնի էր **Խերական դաշտ** անունով<sup>3</sup>: Արաբական տիրապետության շրջանում այստեղ ձևավորվեց **Հերի** ամիրայությունը, որն սկզբում ընդունեց Արծրունիների գերիշխանությունը<sup>4</sup>, իսկ Դերենիկ Արծրունու սպանությունից հետո ձևաչեց Աշոտ Բագրատունու իշխանությունը<sup>5</sup>: Նշանավոր էր **Հեր** քաղաքի բերդը, որ հիշատակվում է Մատթեոս Ուռհայեցու կողմից<sup>6</sup>: Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ **Հեր** գավառում էին գտնվում Նվարսակ և Փեռտակ գյուղերը: Առաջինում, որը ներկայիս Նիսսակ գյուղն է<sup>7</sup>, ինչպես վկայում Ղազար Փարպեցին, կնքվեց 484 թ. Նվարսակի հայպարսկական պայմանագիրը Վահան Մամիկոնյանի և պարսից զորահրամանատար Նիխորի միջև<sup>8</sup>: Համաձայն Թովմա Արծրունու, Փեռտակ գյուղը գտնվում էր **Հեր** քաղաքին հանդիման<sup>9</sup>:

Պարսկահայքի 9 գավառներից առնվազն երկուսը սկզբնապես գոյություն չեն ունեցել և արդյունք են ավատատիրական հարաբերությունների զարգացման: Դրանցից մեկը **Հերն** է, որն, ինչպես նշվեց, ձևավորվեց **Հեր** քաղաքի բարձրանալու և քաղաքային տարածք ձեռք բերելու շնորհիվ: Համեմատաբար ուշ ձևավորված գավառների թվին պետք է ավելացնել նաև **Ջարե-**

<sup>1</sup> Յակուտ ալ-Համավի, տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 76: **Զարավանդի** առնչությամբ հեղինակը հիշում է Ուրմիո լիճը Մուրաթ (Թրուս) անունով և Վադի ալ-Թուրդ կոչված վայրը:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 295:

<sup>3</sup> Անդ, էջ 296: **Խեր** և **Խերական** դաշտ անվանումների արտասանությունը, եթե արդյունք չէր տեղական բարբառի, ապա առաջացել էր Վասպուրականի բարբառի ազդեցությամբ:

<sup>4</sup> Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 111: Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 140-141:

<sup>5</sup> Կոստանդին Միրանածին, տե՛ս «Բյուզանդական աղբյուրներ» Բ, էջ 10:

<sup>6</sup> Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 33:

<sup>7</sup> Ա.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 72:

<sup>8</sup> Ղազար Փարպեցի, էջ 160:

<sup>9</sup> Թովմա Արծրունի, էջ 255:

հավանը, որի առաջացումը նույնպես սերտ աղերս ունի Ջարեհավան քաղաքի բարձրացման, ինչպես նաև Ջարեհավանյան իշխանական ընտանիքի տիրույթների սահմանազատման հետ: Հիշյալ գավառները հավանաբար տեղ չեն գտել Պլինիոսի հիշատակած 120 զորավարությունների մեջ<sup>1</sup>:

Արդ, մեզ մնաց պարզելու ևս երկու հարց, թե ինչ բնագծերով էին անցնում Պարսկահայք աշխարհի սահմանները և ինչպիսին էր նրա վարչական ձևավորման ընթացքն ու հետագա ճակատագիրը: Ելնելով նախորդ քննության արդյունքներից, տեսնում ենք, որ Պարսկահայքի արևելյան սահմանագիծը, որ որոշ ժամանակաշրջաններում, երբ Ատրպատականի՝ հայոց թագավորների ձեռնական իշխանությունը դուրս էր մնում Մեծ Հայքի թագավորության կազմից, վերածվում էր պետական սահմանի, անցնում էր Կապուտան կամ Ուրմիո լճի արևմտյան ափագծով, հարավային սահմանը, որ միաժամանակ հանդիսանում էր պետական սահման, անցնում էր Երասխ կամ Արասխ գետով: Պարսկահայքի արևմտյան սահմանը անցնում էր Կոտուր-Ջագրոշի լեռնաշղթայով կամ Վասպուրականի լեռներով, որի առնվազն հարավային հատվածը «Աշխարհացոյց»-ը համարում է Տավրոսի լեռներ և կոչում է Կոհ-ի-Նիհորական անունով: Ուստի միանգամայն իրավացի է Հ. Մարքվարթը, երբ Կոհ-ի-Նիհորականը նույնացնում է պարսկա-թուրքական սահմանային լեռնաշղթային<sup>2</sup>: Ըստ որում, նա գտնում է, որ Կոհ-ի-Նիհորական լեռները լրիվ համընկնում են Ստրաբոնի հիշատակած Νίβαρος-ին<sup>3</sup>, իսկ վերջինս էլ ծագում է Nexvarakan-ից կամ Nebxvarakan-ից: Ավելին, նրա կարծիքով, այս միջին իրանական անվան հետ աղերս ունի Մովսես Խորենացու հիշատակած «Նիւքար»-ը, որը հետագայում ընդունել է - ական վերջավորությունը<sup>4</sup>: Առավել բարդ է սահմանագծի ճշտումը Հեր և Ջարևանդ գավառների շրջանում: Արևմուտքում այն պետք է անցներ Անձախիձորի արևելակողմով, հյուսիսում՝ ձուռա-ռոտ (այժմ՝ Աղ-չայ) և Կարմիր (այժմ՝ Կոտուր-չայ) գետերի ջրբաժանով, իսկ արևելքում այն իր մեջ պետք է առներ այժմյան Ջունուս-չայ գետի ավազանի մի մասը:

Պարսկահայքի տարածքը մինչև մ.թ.ա. II դարի սկզբները չի մտել Մեծ Հայքի թագավորության մեջ: Հայոց Արտաշես Ա թագավորի (189-160 թթ. մ.թ.ա.) օրոք Ուրմիո կամ Կապուտան լճի արևմտյան ափերը գրավվում են Մեծ Հայքի թագավորության կողմից և օրգանապես ներառնվում նրա կազմի մեջ: Համաձայն Ստրաբոնի մի հաղորդման, Արտաշես Ա-ը մարերից գրավում

<sup>1</sup> Plin, NH, VI, 10, 2:

<sup>2</sup> Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, էջ 212:

<sup>3</sup> Strabo, XI, 14, 2, XI, 14, 14:

<sup>4</sup> Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, II, էջ 231: Տե՛ս նաև Մովսես Խորենացի, էջ 43-44:

է Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան /.../ ἐκ Μηδων μὲν τὴν τε Κασπιανὴν καὶ Φαυσιτιν καὶ Βασοροπέδα.../; որոնցից առաջինը նույնական է Մեծ Հայքի Փայտակարան կամ Կասպեից աշխարհին, սակայն մյուսների տեղադրությունն առ այսօր հայագետների կողմից ճշտված չէ: Մեր կարծիքով, վերջիններիս տեղադրությունը կարելի է հստակեցնել, ելնելով Մեծ Հայքի թագավորության պետական սահմանագլխից՝ մինչև Արտաշես Ա-ի տարածքային ձեռքբերումները: Արծրունյաց պատմիչի մի շատ արժեքավոր տեղեկությունից, որ նա, հավանաբար, քաղել է մեզ անհայտ մի հին աղբյուրից, պարզվում է, որ Երվանդ Վերջին արքայի օրոք Մեծ Հայքի թագավորության սահմանը անցնում էր Անձախիձոր գավառի արևելակողմով. «... դառնայ Երուանդ առ սահմանօցն Ատրպատականի ի ձորն Անձախից: Իսկ Անձախից ձոր վասն այր կոչեցին. բազում ունելով ինչս ի կոխակս բարձրալանդակս, եւ ի կիրճս նրբականս, ի գերծս եւ խոխոմս ձորոյն ի թոխ եւ ի բոխ երկրին անբնակ մարդկան յասպատակէ հինիցն Երուանդայ, եւ երթայ զետեղի ի Նախճաւանն աւանի յիստանին Վասպուրական աշխարհին»<sup>2</sup>: Դատելով Թովմա Արծրունու մեկ այլ տեղեկությունից, որը մեզ հասել է աղճատված վիճակում, Երվանդ Վերջինի օրոք Ատրպատականի մեջ էին Հեր և Ջարևանդ գավառները. «Իսկ Սմբատ առեալ զԱրտաշէս գայ բնակէ ի բարձրալանդակ լերինն Վարագ: Իսկ Երուանդայ հետազօտեալ գայ բնակի առ ստորոտով լերինն ի գլուխս Տոսպ գաւառի, եւ կոչէ զտեղին Երուանդականս. եւ Սահակայ յղեալ առ Սմբատ, մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետեւի զօրս անդ. զի ոչ ելանէ ասէ Երուանդ զօրու ի սահմանս Մարաց, եւ տայր տանել զպէտս մանկանն օր ըստ օրէ»<sup>3</sup>: Դժվար չէ նկատել, որ գործողությունները սկզբում զարգանում են Մեծ Հայքի թագավորության տարածքում՝ Տոսպ գավառում և Վարագա լեռան շրջանում, ուստի Սմբատը մանուկ Արտաշեսի հետ պետք է անցներ մարաց կամ Ատրպատականի սահմանները, որպեսզի թագաժառանգը գտնվեր անվտանգության մեջ: Սակայն մեզ հասած բնագիրը իր «ի հետեւի զօրս անդ» տեսքովի հետ չկապվող արտահայտությամբ անիմաստ է դարձնում Մարաց սահմանների հիշատակությունը: Ինչպես ժամանակին ճիշտ նկատել է Նորայր Բյուզանդացին, հիշյալ հատվածը սկզբնապես եղել է «ի Հեր եւ ի Ջարուանդ»<sup>4</sup>, այսինքն Սահակը Սմբատին խորհուրդ է տվել տեղափոխվել Մարաստանին կամ Ատր-

<sup>1</sup> Strabo, XI, 14, 5:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 55:

<sup>3</sup> Անդ, էջ 54:

<sup>4</sup> Նորայր Բյուզանդացի, Հայկական բառաքննութիւն, Կ. Պոլիս, 1880, էջ 86: Տե՛ս նաև Թովմա Արծրունի եւ Անանուս, 1985, ծանոթ. 67, էջ 513:

պատականին պատկանող Հեր և Զարավանդ<sup>1</sup> գավառները, ուր գործով մուտք գործել չէր հանդգնի հայոց երվանդ թագավորը: Բերված տեղեկությունների համադրումը աներկբա ցույց է տալիս, որ Պարսկահայք աշխարհի հյուսիսային և արևմտյան սահմանները համընկել են Մեծ Հայքի թագավորության պետական սահմանագծին նշված հատվածում: Եվ քանի որ Կասպե-Փայտակարանի հյուսիսային սահմանը անցնում էր Երասխ գետով և մասամբ Կուր գետով, իսկ Նախճավանն էլ պատկանում էր Մեծ Հայքի թագավորությանը, ապա Հեր և Զարավանդ-Կասպե հատվածում թագավորության պետական սահմանը, ամենայն հավանականությամբ, անցել է Կոտոր (Կարմիր), իսկ այնուհետև Երասխ գետերով: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, իսկ մեզ հասած կցկտուր տեղեկությունները խոսում են դրա օգտին, ապա ստրաբոնյան Փավնիտիսն ու Բասորոպեդան պետք է տարածքապես համընկնեին Պարսկահայքին և Մարդպետականին (Արևելյան Վասպուրական): Ինչպես դժվար չէ հետևեցնել Ստրաբոնի հաղորդումից, երկրամասերի թվարկումը կատարված է արևելքից արևմուտք ուղղությամբ, հետևաբար Կասպից ծովի ափին գտնվող

<sup>1</sup> Արծրունյաց պատմիչը, խոսելով մանուկ Արտաշեսի մասին, գրում է, որ սկզբում «... Ամբաստանյալ զԱրտաշես քնակէ ի Զարասանդ Ատրպատականի» (էջ 53): Ժամանակին մենք այն միտքն էինք հայտնել, որ Զարասանդ գավառը Ատրպատականի պատկանելու պատճառով կոչվել է «Զարասանդ Ատրպատականի» (Ք. Հ. Զարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, Բանբեր Երևանի համալսարանի, 1983, թիվ 3., էջ 121-122): Սակայն մեկ անգամ ևս անդրադառնալով այս հարցի քննությանը, եկանք այն եզրակացության, որ խոսքը վերաբերում է մի Զարավանդի, որն՝ ի տարբերություն հայկականի, պատմիչը կոչում է Ատրպատականի Զարավանդ: Սակայն այդուհանդերձ չի բացառվում, որ նշված տեղանունը կարող է ստանալ մեկ այլ բացատրություն, որի հավանականությունը թերևս ավելի մեծ է, քան առաջինը: Խնդիրն այն է, որ Արծրունյաց պատմիչի պատմության ձեռագրերում հանդիպում է ոչ թե «Զարասանդ Ատրպատականի», այլ «Զարասանդ Ատրպատականի» գրությունը, որի ճիշտ լինելու դեպքում տեղանունն իր բովանդակությունը փոխում է: Մենք հակված ենք ենթադրելու, որ Զարասանդի Զարտը անմիջական աղբյուր ունի Զարիադրես (= Զարեհ) անվան հետ, որի հիշատակությունը պահպանել է Ստրաբոնի «Աշխարհագրություն»-ը: Հետևաբար Զարասանդը ոչ այլ ինչ է, բայց եթե Զարեհասանդ, որը, եթե հաշվի առնենք հայերենի և պարսկերենի զարգացման օրինաչափությունները, հայ իրականության մեջ ծնելու էր Զարեհասանդ, իսկ պարսից իրականության պայմաններում՝ Զարեհասանդ ձևերը: Դժվարություն է հարուցում կարծես Զարասանդի վերջին «դ»-ն, որովհետև թվում է, թե քաղաքանունը ավելի շուտ կլիներ Զարեհասանդ: Սակայն հակասությունը անմիջապես չքանում է, երբ դիմում ենք Բուզանդի «ի Բագրասանդ գասանի ի Բագրասանդ անանի, որ է մօտ յաներակս Զարեհասանդ քաղաքի» տեղեկությանը (էջ 251): Դժվար չէ տեսնել, որ Բուզանդը հաղորդում է հայկական Զարեհավանդի, իսկ Թովմա Արծրունին՝ Ատրպատականի Զարեհավանդի մասին: Մեր կարծիքով, Ատրպատականի Զարասանդի անունը առ այսօր պահպանվել է Շարաֆ-խանեն բնակավայրի անվան մեջ՝ ենթարկվելով ժողովրդական կեղծ ստուգաբանության: Շարաֆ-խանեն գտնվում է Ուրմիո լճի հյուսիս-արևելյան ափին՝ Ատրպատականում, իսկ Զարասանդ գրությունը վկայում է Թովմա Արծրունու օգտագործած սկզբնաղբյուրների խոր հնությունը:

Կասպիանե-Կասպին պետք է արևմուտքից սահմանակցեր Փավնիտիսը՝ զբաղեցնելով Մարդպետականի տարածքը, իսկ Արտաշես Ա-ի կողմից գրավված հողերի ծայր հարավ-արևմուտքում գտնվեր Բասորոպեդան՝ համապատասխանելով Պարսկահայքի տարածքին: Թե Փավնիտիս անունն ի՞նչ ծագում ունի և ինչու է տրվել Մարդպետականի տարածքին, մենք առայժմ չգիտենք և որևէ բացատրություն կամ ստուգաբանություն առաջարկել չենք կարող: Սակայն, մեր կարծիքով, Բասորոպեդա տեղանունը ծագումնաբանական աղբյուր ունի Պարսկահայք անվանման հետ<sup>1</sup>: Այն թերևս բաղկացած է երկու մասից, որոնցից Βάσ-ը ոչ այլ ինչ է, բայց եթե պարսկերեն Pas բառը, որ նշանակում է «ամրոց» կամ «սահմանային ամրոց» (հայերեն՝ պահ կամ պահակ), իսկ οροπέδα-ն ստիպում է ենթադրել, որ այն հունարեն թարգմանությունն է «լեռնադաշտ» բառի: Այլ խոսքով, Բասորոպեդա նշանակել է Պասամրոցի լեռնադաշտի երկիր: Պարսկահայքի տարածքը արևմուտքում պաշտպանված է Վասպուրականի լեռներով, լեռնանցքները մեծ մասամբ դժվարանցանելի են, ուստի մեր կարծիքով Pas /Βάσ. կոչվող ամրոցը պետք է գտնվեր Կոտորի հովտում և փակեր Անձախիձորի անցքը: Թերևս հենց նրա ռազմագիտական կարևորությամբ էլ պայմանավորված է երկրամասը ամրոցի անունով կոչելը: Կապված հայերենի զարգացման օրինաչափությունների հետ Pas-ը վերածվելու էր Pars-ի, ինչպես Բասիլիոսը դարձել է Բարսեղ, պահակը՝ պարհակ, ձուռաշ-ը՝ ձուարշ, Մծուխն-ը՝ Մրծուխն և այլն: Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչական բաժանման հետևանքով Պասի երկրամասը դառնում է առանձին նահանգ, որը սակայն ստանում է Կորճայք (ավելի ուշ թերևս նաև Կուրճայք) անունը: Ինչպես վերը տեսանք, Կլավդիոս Պտղոմեոսի երկում այն պահպանվել է Κορταία (= Κορταία) աղճատված գրությամբ և վերապրուկի ձևով արտահայտվել, ինչպես վերը ցույց տրվեց, Փավստոս Բուզանդի և Թովմա Արծրունու երկերում: Չնայած Բուզանդը Սաղամասը հիշատակում է ոչ թե Կորճեից աշխարհում, այլ Կորճեից գավառում, կասկածից վեր է, որ հեղինակն ի նկատի է ունեցել Կորճեից, տվյալ դեպքում Պարսկահայք աշխարհի տարածքը, որովհետև Կորճեքը նեղ իմաստով կիրառվելու դեպքում պետք է նույնանար Այլի կամ Կուռիճան գավառին, իսկ մեր քննությունից պարզ դարձավ, որ Սաղամասը գտնվել է Այլիից բավական հյուսիս, Զարեհավան գավառում:

Ե՛րբ կարող էր հանդես գալ Պարսկահայք անունը որպես Մեծ Հայքի աշխարհանուն: Ինչպես տեսանք, մինչև III դարը այն չի հիշատակվում: Բայց

<sup>1</sup> Մենք չենք կիսում Ղ. Ինճիճյանի, Հ. Քիփերթի, Հ. Գեյցերի, Հ. Մարթլարթի, Հ. Մանանդյանի, Հ. Աճառյանի, Ա. Նովոսեյցկի և այլոց այն տեսակետը, թե Բասորոպեդան նույնական է Վասպուրական աշխարհին, որովհետև, ինչպես ցույց տրվեց, դեռ մինչև Արտաշես Ա-ի գահակալությունը Վասպուրականը պատկանում էր Մեծ Հայքին:

նրա հիշատակության բացակայությունը IV, V և հետագա դարերում, եթե չհաշվենք «Աշխարհացոյց»-ի և Թովմա Արծրունու հաղորդումները, կասկածի տակ է առնում վերջինիս ծնունդը նաև նշված դարերում: Եթե իրավ աշխարհանվանումը ծագել է հիշյալ շրջանում, ապա ենթադրելի էր նրա օգտագործումը գոնե Վասպուրականի հիշատակման հաճախականությամբ: Ճշմարտությանը պատշաճը մատուցելով, հարկ է նշել, որ Արծրունյաց պատմիչի տեղեկությունն ըստ եության քաղված է «Աշխարհացոյց»-ից, հետևաբար Պարսկահայքի իրական միակ հիշատակությունը տեղ է գտել միայն վերջինիս էջերում: Հետևաբար մնում է ենթադրել, որ Պարսկահայքը որպես աշխարհանուն հանդես է եկել III դարում, տեղ է գտել մի ինչ որ աշխարհագրում, որից իրերի բերումով օգտվել է «Աշխարհացոյց»-ի հեղինակը: Հավանական է կարծել, որ այդ կատարվել է Սասանյանների կողմից Մեծ Հայքի թագավորության կարճատև ռազմակալումների շրջանում: Մովսես Խորենացու հաղորդմամբ, Արտաշիր Սասանյանը ռազմակալելով հայոց թագավորությունը, անցկացնում է աշխարհագիր<sup>1</sup>: Աշխարհագրեր պարսից արքունիքի կամ, որ ավելի ճիշտ է, Մեծ Հայքում թագավորած Սասանյանների կողմից կատարվել են, ամենայն հավանականությամբ, նաև Արտաշիրից հետո, որն, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, իրականում Սասանյան հարստության հիմնադիրը չէ, այլ Որմիզդ-Արտաշիրը (261-272 թթ., Մեծ Հայքի թագավոր, 272-273 թթ., արքայից արքա Երան և Աներան)<sup>2</sup>, ուստի այսօր դժվար է ասել, թե «Աշխարհացոյց»-ի հեղինակը հատկապես որ աշխարհագրի նյութերից է օգտվել: Սակայն պարզ է մի իրողություն, որ «Աշխարհացոյց»-ը տալիս է Մեծ Հայքի նկարագրությունը տարածքային այնպիսի ընդգրկումով, որը չի հանդիպում ոչ III դարից առաջ և ոչ էլ հետո: Մասնավորապես Մահկերտան, Դասնի և Նիհորականի հիշատակության բացակայությունը նրանում և ընդհակառակը նրանց Մեծ Հայքի մաս դիտվելը մինչև III դարը և IV դարում<sup>3</sup>, խոսում են մեր ենթադրության օգտին: Հաշվի առնելով Հայոց թագավորության ավատականացման բուռն ընթացքը III դարում, որը երկրի վարչա-քաղաքական կառուցվածքի մեջ լուրջ փոփոխություններ առաջ բերեց, որոնք այնքան հստակորեն արտահայտվել են IV դարի քաղաքական իրադարձություններում, մենք առավել հավանական ենք գտնում, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը օգտվել է Որմիզդ-Արտաշիրի աշխարհագրից, երբ Մեծ Հայքի ըստ աշխարհների վարչաբաժանման սկզբունքը դեռ անխափան գոր-

<sup>1</sup> Մովսես Խորենացի, II, ՀԷ. «Արտաշիրը» եւ գերկիրս գրով ընդ հարկաւ իւրով արկանէ և ամենկիմք զիր անունն հաստատէ»:

<sup>2</sup> «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. Բ, էջ 37, 51, 633:

<sup>3</sup> Claudii Ptolemaei Geographia, V, 12: Փավստոս Բուզանդ, IV, Ծ:

ծում էր: Որմիզդ-Արտաշիրի օրոք Պարսկահայքի տարածքում Սաղամաս (այժմ՝ Սալմաստ) քաղաքի մոտ քանդակում են թագավորական նշանների հանձնման տեսարան, որտեղ պատկերված են երկու հեծյալներ սասանյան արքաների հանդերձներով: Սրանցից առաջինը՝ Շապուհ Ա-ն Մեծ Հայքի թագավորության թագը հանձնում է Որմիզդ-Արտաշիրին: Վիմաքանդակը, որ այսօր էլ գոյություն ունի<sup>1</sup>, վկայությունն է այն իրողության, որ անգամ պարսկական ռազմակալման պայմաններում Որմիզդ լճի արևմտյան ափի հողերը պատկանում էին Մեծ Հայքին: Մեր ենթադրությամբ, Սասանյանները կրկին կյանքի են կոչում Pars անունը, որն, անկասկած, հասցրել էր վերածվել Pars-ի: Ընկալելով Pars-ը որպես պարսից, նրանք երկրամասը կոչել են Pars-ի Հայաստան, այսինքն Պարսահայք, որը վկայված է Թովմա Արծրունու երկում<sup>2</sup>: Եթե անգամ կասկածի տակ առնենք մաման ընկալումը պարսիկների կողմից, ապա ակնհայտ է, որ առավել ուշ ժամանակներում, երբ աշխարհացոյցյան վարչական բաժանումը վաղուց ի վեր դադարել էր գոյություն ունենալուց, վերածվելով դասական վարչաբաժանման, Պարսկահայքը ժողովրդական կեղծ ստուգաբանության հետևանքով ընկալվել է որպես Պարսկական Հայք և ըստ այդմ էլ սրբագրվել Պարսկահայքի:

Պարսկահայք աշխարհի որպես վարչական միավորի գոյությունը, անկախ այն հանգամանքից, թե վերջինս կրել է Կորձայք կամ Պարսկահայք անվանումը, III դարի վերջից բացառվում է: 297 թ. հայ-հռոմեական զորքերի փայլուն հաղթանակը պարսկական բանակի նկատմամբ պարսից արքունիքին ստիպեց կնքել 298 թ. Մծբինի՝ իր համար նվաստացուցիչ հաշտության պայմանագիրը, որի համաձայն Մեծ Հայքի թագավորության տարածքը ընդարձակվում էր Մարաստանի հաշվին՝ հասնելով մինչև Զինթա ափրոցը:<sup>3</sup> Պատելով «Աշխարհացոյց»-ի նկարագրությունից և Փավստոս Բուզանդի հաղորդումներից, Մեծ Հայքի հարավային սահմանագլխին Պարսկաստանը զիջել էր Մահկերտ-տուն, Դասն և Նիհորական գավառների տարածքը, որը մտնում է Նոր Շիրականի բղեշխության մեջ: Վերջինիս մեջ, ուսումնասիրողների կարծիքով, մտել է Պարսկահայքը գրեթե ամբողջությամբ<sup>4</sup> և անգամ հավասարու-

<sup>1</sup> В. Ф. Минорский, Коляшин, Стелла у Топузавы и древнейшие памятники вблизи Урмийского озера, տե՛ս Записки Вост. Отд. Импер. Русск. Арх. Общ., т. XXIX, 1916, էջ 145-193. Таблица VII. Сасанидский рельеф на горе Пир-чауш в Салмасе. М.-Л. Chaumont, Recherches sur l'histoire d'Arménie de l'avènement des Sassanides à la convention du royaume, Paris, 1969, էջ 173-175:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 283. «Պարս Հայոց»:

<sup>3</sup> Petrus Patricius, Fragm. 14 (Dindorf, Historici graeci minores, I, էջ 443):

<sup>4</sup> Ա.Տ. Երեմյան, Արշակունիների թագավորությունը 298-387 թթ., քարտեզ, տե՛ս ՀՄԸ, հ. 2, Երեվան, 1976, էջ 112:



թան նշան է դրվում երկու հասկացությունների միջև: Մեր կարծիքով, Պարսկահայքի գավառների թվարկման հերթականությունն ու օրինաչափությունները, ինչպես նաև «Գահնամակ»-ի տվյալները ցույց են տալիս, որ Նոր Շիրականի մեջ մտել է Պարսկահայքի տարածքի միայն մի մասը, իսկ ավելի որոշակի առաջին չորս գավառները՝ Ալլին կամ Կուրհճանը, Մարին, Թրաբին և Արխին (Ուվեան): Ինչպես վերը համոզվեցինք, Պարսկահայքի աշխարհացույցյան նկարագրության մեջ երկրամասի առաջին չորս գավառները տրվում են հյուսիսից հարավ ուղղությամբ, ի տարբերություն հաջորդ հինգ գավառների, որոնք թվարկված են շրջանաձև հաջորդականությամբ՝ հարավից հյուսիս ուղղությամբ: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ «Աշխարհացոյց»-ը շարադրելիս առաջին չորս գավառներն ունեցել են վարչական այլ կացություն: Եվ քանի որ հենց այս հատվածում էր գտնվում Սիրազանոն գյուղը (ներկայումս՝ Շիրքենդի),<sup>1</sup> ապա սրա տարածքն էլ վերոհիշյալ երեք գավառների հետ կազմել է Նոր Շիրականի բոլեշխությունը: Ըստ այդմ էլ բացառվում է Ջարեհավանի՝ բոլեշխության կենտրոն լինելը, որովհետև այն ընկած էր Պարսկահայքի հյուսիսային հատվածում, և մնում է ենթադրել, որ բոլեշխության կենտրոնը Շիրական (Սիրազանոն) բնակավայրն էր, որն էլ թերևս իր անունը հաղորդել է բոլեշխությանը: Պարսից ռազմակալումը վերացնելուց հետո Պարսկահայքի անունը զրկվում է կիրառությունից, որովհետև եթե նրա հարավային մասը ստանում է Նոր Շիրական անունը, ապա հյուսիսային հատվածը բաժանվում է երկու վարչական շրջանի, որոնք կոչվում են այլ անուններով: Պարսկահայքի հյուսիսային երկու գավառները, որոնք, համաձայն Ազաթանգեղոսի, իշխան շահապի ենթակայության ներքո էին<sup>2</sup>, հիշատակվում են Հեր և Ջարևանդ (Ջարևանդ) անունով, և հավանաբար, ավելի ուշ հանձնվում են մաղխազներին որպես ձեռական իշխանություն<sup>3</sup>: Ազաթանգեղոսի հիշատակած Ջարևանդի և Հերի շահապը չի կարող նույնանալ մաղխազին, քանզի պատմիչի բերած իշխանների ցանկում տեղ է գտել նաև մաղխազության տան իշխանը<sup>4</sup>: Կորճայք անվան հիշատակությունը Բու-

<sup>1</sup> Տե՛ս Ռուսական տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը: Феофилакт Симокатта, История, Москва, 1957, էջ 128. «Σιραζωνών κομηή»

<sup>2</sup> Ազաթանգեղոս, § 795. «իշխանն շահապ Ջարևանդ և Հեր գառափ»:

<sup>3</sup> U.S. Երեմյանի կողմից կարծիք է հայտնվել, որ մաղխազները որպես ձեռական աշխարհ ստացել են Հեր և Ջարևանդ գավառները, որի մասին վկայում է Մաղխազան գյուղանունը, որ նա նույնացնում է Մահլա բնակավայրին («Հայ ժող. պատմ.», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. Ա, էջ 832): Հնարավոր է, որ Մահլան նույնպես կապ ունի մաղխազների անվան հետ, սակայն Մաղխազանը մինչև այսօր պահպանվել է և հայտնի է Մախլազան անունով (Տե՛ս ռուսական 10-վերստանոց քարտեզը):

<sup>4</sup> Ազաթանգեղոս, § 795. «իշխանն մաղխազութան տանն»:

զանդի կողմից պարզորոշ վկայում է այն մասին, որ Կորճայք ընդհանրական անունը վարչական առումով IV դարում իր մեջ ներառում էր միայն Պարսկահայքի կենտրոնական մասը Առնա, Ջարեհավան և Տամբեր գավառներով: Հետաքրքիր է ընդգծել այն փաստը, որ Թովմա Արծրունին X դարում Կորճայք ասելով առաջին հերթին հասկանում էր Պարսկահայքի հիշյալ հատվածը: Այսպես, խոսելով Գուրգեն Մարզպանի տարածքային ձեռքբերումների մասին և Պարսկահայքը հիշելով «աշխարհն Կորճեից եւ Պարսկահայոց» ձևով, Արծրունյաց պատմիչը շատ հստակ ընդգծում է, որ հակասությունը բորբոքվել է Գուրգեն Արծրունու և Կորճեի տերերի միջև: Ըստ որում, նրա գրաված Տամբեր ու Ըռնա գավառները, Ապուլջափրի բերդը և Վիրի քաղաքը գտնվել են Կորճայքում<sup>1</sup>: Բայց երբ նա խոսում է մահմեդական խուժանի դեպի Մարդաստան կատարած արշավի մասին, որը հավաքվել էր Պարսկահայքի մնացած մասից, Թովմա Արծրունին այն կոչում է «Պարսկահայոց գոթահն»<sup>2</sup>, դրանով իսկ տարբերակում մտցնելով Պարսկահայքի երկու հատվածների միջև: Հետևաբար, «աշխարհն Կորճեից և Պարսկահայոց»-ը պետք է հասկանալ ոչ թե պարզապես առանձին միավորներ, կամ էլ սոսկ նույնացնել, ինչպես վարվել է Հ. Մարքվարթը, այլ մի ամբողջություն, որը Պարսկահայքն է իր Կորճայք բաղկացուցիչ մասով: Նմանօրինակ աշխարհագրական հասկացությունը շատ նման է Սյունյաց թագավորության պաշտոնական «Սիւնեաց և Բաղաց թագաւորութիւն» անվանմանը, որտեղ Բաղքը, մաս կազմելով Սյունիքի, հիշատակվում է նրա հետ մեկտեղ<sup>3</sup>, իսկ նրանց միջև հավասարության նշան չի դրվում: Ամփոփելով վերոհիշյալը, գտնում ենք, որ Պարսկահայքի նկարագրության մեջ գավառների թվարկման հաջորդականության երևութական անկանոնությունը պահպանել է հետաքրքիր տվյալներ ու որոշակի սկզբունքներ Մեծ Հայքի վարչա-քաղաքական զարգացման վերաբերյալ:

Հայագիտության մեջ քաղաքացիություն է ստացել մի տեսակետ, ըստ որի 387թ. Մեծ Հայքի թագավորության բաժանման ժամանակ Պարսկահայքի տարածքն ամբողջությամբ հանվել է Մեծ Հայքից և միացվել պարսից բուն տիրույթներին<sup>4</sup>: Սակայն «Գահնամակ»-ում Ջարեհավանյան և Տամբերացի<sup>5</sup> իշխանական ընտանիքների հիշատակությունը<sup>6</sup> այս եզրակացությունը դնում է

<sup>1</sup> Թովմա Արծրունի, էջ 291:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 301 և այլն:

<sup>4</sup> Н. АДОМЦ, նշվ. աշխ., էջ 223-224: U.S. Երեմյան, Հայաստանը 360-440 թթ., քարտեզ և այլն:

<sup>5</sup> «Գահնամակ»-ում անունս պահպանվել է աղավաղված «Մամբերացին» գրությամբ:

<sup>6</sup> «Գահնամակ», տե՛ս Н. АДОМЦ, նշվ. աշխ., էջ 250:

կասկածի տակ: Հանրահայտ իրողությունն է, որ եկեղեցական թեմական բաժանումը, երբեմն որոշ ուշացումով, համապատասխանում է իր ժամանակի վարչա-քաղաքական բաժանմանը<sup>1</sup>: Այդ իմաստով, մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ուխտանեսի երկրում պահպանված հայոց եպիսկոպոսությունների ցանկը, որը հեղինակը վերագրում է Գրիգոր Լուսավորչի գործունեությանը: Ավելորդ է ասել, որ անգամ ոչ խոր քննությունը բացահայտում է այն իրողությունը, որ հայոց եպիսկոպոսությունների հիշյալ ցուցակը որևէ ձևով չի կարող առնչվել հայոց առաջին կաթողիկոսի ապրած ժամանակաշրջանին: Վերջինս արտացոլում է հայոց եկեղեցու մարզպանության առաջին շրջանի թեմական բաժանումը: Այդ իսկ պատճառով «Ելոյ» և «Ջարևհանից» եպիսկոպոսությունների գտնվելը ցուցակում<sup>2</sup> վկայում է «Այլի» և «Ջարեհաան» գավառների վարչա-քաղաքականապես վերաբերելը հայկական մարզպանությանը: Ավելին, հիշյալ ցուցակի «Երուտակաց» եպիսկոպոսությունը<sup>3</sup>, որ նույնական է «Հեր և Ջարևանդին», ցույց է տալիս, որ Այլից սկսած մինչև Ջարևանդի հյուսիսային սահմանը Պարսկահայքը մաս է կազմել հայկական մարզպանության: Եթե անգամ կասկածի ենթարկվի բերված ցուցակի վավերականությունը, հանգամանք, որ ոչնչով հիմնավորված չէ, այլ հաղորդումները գալիս են նույնը վկայելու: Այսպես, Բաբգեն կաթողիկոսի 506թ. հրավիրած Դվնո ժողովին մասնակցում է Ջարեհավանի եպիսկոպոսը<sup>4</sup>, որը հիշատակվում է Դվնո 555 թ. ժողովում ևս<sup>5</sup>: 607 թ. եկեղեցական ժողովին մասնակցել են Էդոյ (Այլի) և Առնայ եպիսկոպոսները<sup>6</sup>, իսկ նույն դարի երկրորդ կեսին Ռոտակքի (որը ոչ այլ ինչ է, բայց եթե Ուխտանեսի երուտակը) եպիսկոպոս Սահակը (679-698/9)<sup>7</sup> բարձրանում է հայ կաթողիկոսության գահին<sup>8</sup>: Ռոտակի եպիսկոպոսը մասնակցում է նաև 726 թվականի Մանազկերտի ժողովին, որի մասին հաղորդում է Միքայել Ասորին<sup>9</sup>: Լ. Մարքվարթը, քննու-

<sup>1</sup> Н. Адоми, նշվ. աշխ., էջ 88-89:

<sup>2</sup> Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, էջ 100:

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 42:

<sup>5</sup> Անդ, էջ 73:

<sup>6</sup> Անդ, էջ 149:

<sup>7</sup> Կաթողիկոսության տարիները տրված են համաձայն Յ. Մարքվարթի (տե՛ս Պարսկահայք նահանգը, մաս II, էջ 235):

<sup>8</sup> «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց», էջ 93. «Եպիսկոպոսութիւն Ռոտակաց», էջ 245. «Ռոտակաց», էջ 290. «Գեարառային կողմամբն Ռոտակայ գաւառին ի Հեր և ի Մաղամաս»:

<sup>9</sup> Chronique de Michel le Syrien, Ed. et trad. par J.B. Chabot, II, Paris, 1904, էջ 497. «Gorgi Rotakay»:

թյան առնելով բերված տեղեկությունները, գտել է, որ «Երբ հայերը Մաշտոցի միջոցով սեփական եկեղեցական ծիսակատարություններին և լեզվին անցան և այդպիսով թոթափեցին իրենց կախյալ վիճակը հունական և ասորական եկեղեցական լեզուներից՝ սկսեցին եկեղեցականորեն կազմակերպել և իրենց գերիշխանությանը ենթարկել բուն երկրից դուրս՝ հռոմեա-պարսկական հողերում գտնվող հայրենակիցներին»<sup>1</sup>: Նման հարցադրումը ճիշտ չէ գոնե վաղ միջնադարի համար, որովհետև այդ դեպքում Հայոց Արևելից կողմերի և Գուգարքի հայկական եպիսկոպոսությունները չէին ենթարկվի Աղվանից և Վրաց կաթողիկոսություններին: Ավելին, հռոմեական տիրույթների հայկական եպիսկոպոսությունները, քաղաքական հանգամանքներից կախյալ, որպես կանոն գտնվում էին կայսերական եկեղեցու ենթակայության ներքո: Ուստի միակ և աներկբա եզրակացությունն այն է, որ հիշյալ եպիսկոպոսությունների տարածքը մտել է հայկական մարզպանության մեջ: Դրա օգտին է խոսում նաև այն իրողությունը, որ հայոց եկեղեցուն էին ենթարկվում մարզպանության տարածքում գտնվող ասորական երկու՝ Ասորեաց և Միա Ասորեաց եպիսկոպոսությունները<sup>2</sup>: Որ Պարսկահայքի մի մասը մտել է Հայկական մարզպանության մեջ, վկայում են նաև հայ պատմիչները: Այսպես, Եղիշեն անդրադառնալով 450-451 թթ. ապստամբության իրադարձություններին, նշում է, որ Վասակ Սյունին ապստամբների «Ջգունդն առաջին հեռացուցի ի կողմանս Հերայ և Ջարևանդայ»<sup>3</sup>, իսկ պարսկական բանակը, որ եկել էր ապստամբությունը ճնշելու, «հասաներ յաշխարհն Հայոց ի Հեր և ի Ջարևանդ գաւառ»<sup>4</sup>: Վկայությունն այնքան հստակ է, որ կասկած չի թողնում, որ հիշյալ գավառները մտնում էին Հայկական մարզպանության մեջ: Սակայն Ն. Ադոնցն առանձնապես չի վստահել Եղիշեի երկին և, հենվելով Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» վրա, եզրակացրել է, որ հիշյալ գավառներն անցել էին պարսից բուն տիրույթների շարքը<sup>5</sup>: Այն հանգամանքը, որ 482-484 թթ. ապստամբության ժամանակ հաշտություն կնքելու համար Նիխորը գալիս է Հայոց աշխարհ, բայց «ոչ իշխեաց միջամխել ի Հայոց տեղիսս, այլ դադարեալ ի գաւառին, որ կոչէր Հեր, ի գեօղն որում անուն էր Նուարսակ»<sup>6</sup>, Ն. Ադոնցին կարծել են տվել, որ հիշյալ շրջանը մարզպանության մեջ չէ: Ի հաստատումն իր եզրակացության անվանի հայագետը դիմել է նաև Ղա-

<sup>1</sup> Լ. Մարքվարտ, Պարսկահայք նահանգը, մաս II, էջ 234:

<sup>2</sup> Ուխտանես, Պատմութիւն Հայոց, էջ 100:

<sup>3</sup> «Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», էջ 75:

<sup>4</sup> Եղիշե, էջ 105:

<sup>5</sup> Н. Адоми, նշվ. աշխ., էջ 224:

<sup>6</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, էջ 160:

զար Փարպեցու երկու այլ վկայություն: Այսպես, Վարդան Մամիկոնյանի ապստամբության ժամանակ հայոց սպարապետը գտնում էր, որ «թերևս անդէն ի տեղւոջն ի Հեր և ի Ջարևանդ գաւառին վճարին ելք գործւոյն պատերազմին, և ոչ ոք լինէր արգել զօրուն Պարսից հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ և գերելով յարձակել և վնասել»<sup>1</sup>: Ներսեհապատի ճակատամտի առնչությամբ Ղազար Փարպեցին հայտնում է, որ «զօր բազում խաղացեալ զայ ի Պարսից. եկեալ հասեալ են ի սահմանս Հերայ և Ջարևանդ գաւառի բազում զօրագլուխք», ուստի Վահան Մամիկոնյան սպարապետը «գումարեալ զզօրսն Հայոց՝ ճեպէր հարկանել նոցա ի դիմի անդէն զայն տեղեօք. «Թերևս ոչ, ասէր, լիցի անցանել բազմութեանն Պարսից ի միջոց կողմն աշխարհիս Հայոց»<sup>2</sup>: Եվ քանի որ Ն. Ադոնցը խուսափել է Ղազար Փարպեցու մի հաղորդումը ևս վկայակոչելուց, մենք, ելնելով հարցի քննության շահերից, այն մեջ ենք բերում: Պարսից թագավորը, Հայաստան ուղարկելով Նիխորին, խորհուրդ է տալիս նրան հնազանդեցնել Վահան Մամիկոնյանին ամեն գնով, սակայն «զգոյշ լեր նախ ժողովել առ քեզ զայրուձին Ատրպատականի որ մօտ ի Հայս իցեն, և զայրուձին Հեր և Ջարևանդ գաւառի. մի գուցէ յղեալ քո առ Վահան, և նա պատճառանօք քաղցր խօսելով ընդ քեզ՝ խաբիցէ զքեզ և վնաս ինչ առնիցէ»<sup>3</sup>: Բերված վկայություններից վերջինը պարզորոշ խոսում է այն մասին, որ Ղազար Փարպեցին տարբերում է Հեր և Ջարավանդի հեծելազորը Հայոց մարզպանության մերձակայքում գտնվող Ատրպատականի այրուձիուց: Եթե, իսկ մինչև այսօր լոկ այդ են պնդում ուսումնասիրողները, Հերը և Ջարևանդը մտել են Ատրպատականի մեջ, ապա վերջինիս այրուձիու մաս պետք է համարվեր Հերի և Ջարևանդի այրուձին: Հայոց մարզպանության համար Հերը և Ջարևանդը սահմանային գավառներ էին, որտեղից թշնամին սովորաբար ներխուժում էր երկրի խորքը, ուստի միանգամայն հասկանալի է, որ սպարապետ Վարդան Մամիկոնյանը պետք է ձգտեր ճակատամարտ տալ սահմանի վրա, փորձելով խանգարել պարսիկների մուտքը միջնաշխարհ: Այդ նույն կացությունն ենք տեսնում նաև Ներսեհապատի ճակատամարտի նախօրյակին, երբ Վահան Մամիկոնյանը և ձգտում էր ճակատամարտ տալ պարսիկներին Հերում և Ջարևանդում, որպեսզի Հայոց միջնաշխարհը փրկի պարսկական ասպատակությունից: Երկու դեպքում էլ, մեր կարծիքով, հայկական հրամանատարությունը խնդիր էր դնում ջախջախել հակառակորդին սահմանի վրա, բայց Հայկական մարզպանության տարածքում: Իսկ այն իրողությունը, որ Նիխորը «ոչ իշխեաց միջամ-

<sup>1</sup> Անդ, էջ 69: Ոչ ոք արտահայտությունը սրբագրելի է որով:

<sup>2</sup> Անդ, էջ 128:

<sup>3</sup> Անդ, էջ 160:

խել Հայոց տեղիսս, այլ դադարեալ ի գաւառին, որ կոչէր Հեր», բնավ չի խոսում երկրամասի անմիջական պարսկական տիրույթ լինելու մասին: Ինչպես պարզվում է հաղորդման սկզբից, Նիխորը գալիս է Հայք, բայց խուսափում է Հայոց տեղերից, այլ խոսքով, նա բանակում է Հայկական մարզպանության տարածքում, սակայն ոչ թե հայ ապստամբների վերահսկողության ներքո գտնվող վայրում, այլ, ինչպես կտեսնենք, պարսկական զորքերի կողմից ռազմակալված Հերում: Արդեն վերը նշեցինք, որ Հերը և Ջարևանդը գտնե այդ շրջանում մաղխազների ձեռակալ երկիրն էին և քանի որ հայոց մաղխազը գործակցում էր պարսիկների հետ, ապա նրա երկրամասն էլ, ըստ էության, պարսից վերահսկողության տակ էր: Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ մաղխազները Հերը և Ջարևանդը որպես ձեռակալ իշխանության երկիր մարզպանության շրջանում ստանում էին պարսից արքունիքից (մինչև 428 թիվը Հայ Արշակունիներից), ապա պարզ կդառնա, որ այն, գտնվելով Հայոց մարզպանության տարածքում, ըստ էության, հանդիսանում էր պարսից արքունի կալված: Բնական է, որ այս հարցադրման դեպքում պարզ է դառնում, թե ինչո՞ւ Հերի և Ջարևանդի հեծելազորը, որի տիրակալն, անկասկած, հայոց մաղխազն էր, տարբերակվում է Ատրպատականի հեծելազորից, բայց և միաժամանակ դիտվում է պարսիկներին դաշնակից ուժ, քանի որ մաղխազը դավաճանել էր ապստամբությանը:

387 թվին Մեծ Հայքի՝ Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև բաժանվելուց հետո, պարսից արքունիքը Հայաստանից անջատեց բղեշխությունները՝ միացնելով, համապատասխանաբար, հարևան սահմանակից վարչական միավորներին: Հասկանալի է, որ անջատվեց նաև Նոր Շիրականի բղեշխությունը, որի հետագա վարչա-քաղաքական կացությունը հըստակ չէ և առանձին քննություն է պահանջում, որը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից: Այսուհանդերձ հարկ ենք համարում նշել, որ վերոբերյալ եկեղեցական ժողովների նյութերը վկայում են, որ բղեշխությանը պատկանող Այլի կամ Կուռիձան գավառը, մեզ անհայտ պատճառներով և շարժառիթներով, թողնվում է Հայոց մարզպանության կազմում: Ի տարբերություն Այլիի կամ Ելիի քրիստոնյաների, որոնց եպիսկոպոսը ենթարկվում էր Հայոց եկեղեցուն, Նոր Շիրականի քրիստոնյաները համարվում էին լոկ հավատակիցներ: Այսպես, Բաբկեն կաթողիկոսը, դիմելով Պարսքի ուղղափառներին, գրում էր. «Արբասեր և ճճմարտասեր, և սուրբ հաւատոց և առաւել Քրիստոսիւ ծառայեցելոց. տէրանց մերոնց և եղբարց սրբոց հաւատակցաց... և այլ հաւատացեալ քրիստոնեայք Նոշիրականին ի Նիսուէ նահանգ»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Գիրք թղթոց», էջ 41:

Երբ արաբները գրավեցին այսրկովկասյան երկրները, նրանք պահպանեցին Սասանյան Պարսկաստանի վարչական բաժանումը: Այդ իսկ աստճառով Մեծ Հայքից Սասանյանների օրոք անջատված բոլորությունների, այդ թվում և Նոր Շիրականի բոլորության տարածքը չմտցրին իրենց ստեղծած Արմինիա ոստիկանության մեջ: Այլ խոսքով, վերջինս որոշ շեղումներով, որ կապված էր արաբ-բյուզանդական սահմանագծի հաճախակի փոփոխությունների հետ, իր մեջ ներառում էր Հայոց, Վրաց և Աղվանից մարզպանությունների տարածքը: Բնական է, որ Արմինիայի կազմում Պարսկահայքի այս կամ այն գավառի հիշատակությունը գալիս է մեկ անգամ ևս հաստատելու այն տեսակետը, որ Պարսկահայքի հյուսիսային գավառները մտնում էին Հայոց մարզպանության մեջ: Այսպես, Իբն Խորդադեհը նշում է, որ Արմինիայի մեջ էր **Խոյը** (Մուսայյ) <sup>1</sup>, ըստ «Հուրուդ ալ-Ալամ»-ի Արմինիան իր մեջ ներառում էր **Ուրմիան**, **Սաղամասը** և **Շերը** (**Խոյ**) <sup>2</sup>, Իդրիսին վկայում է, որ Արմինիայի քաղաքներից էին **Խոյը**, **Սալմաստը** և **Ուրմիան** <sup>3</sup>: Անգամ այն բանից հետո, երբ Արմինիայի այս կամ այն երկրամասում հաստատվում էին արաբ իշխանավորները և հաստատում իրենց ավատատիրական իշխանությունները, վարչականորեն նրանք ենթարկվում էին Արմինիայի ոստիկանին, իսկ ավելի ուշ հայոց թագավորներն իրենց իրավունքն էին համարում դրանք իրենց ենթարկեցնելը: Համաձայն Կոստանդին Ծիրանածին Աշոտ Ա Բագրատունուն էին ենթարկվում **Շերի** (**Խերտ**) և **Սաղամասի** արաբ իշխանավորները <sup>4</sup>: Սակայն հիշյալ փոփոխություններն ի վերջո որակ էին կազմում: Մասնավորապես Ատրպատականի իշխողների տիրապետության հաստատվելը Պարսկահայոց գավառներում ստիպում է, որ արդեն այլ սկզբնաղբյուրներում հիշյալ տարածքը համարվի Ատրպատականի մաս: Համաձայն Իբն ալ-Ասիրի **Խոյը** և **Սալմաստը**, ինպես նաև **Ուրմիան** Ատրպատականի մեջ էին <sup>5</sup>: Այս քաղաքական կացությունն արձանագրում է նաև Յակուտ ալ-Համավին <sup>6</sup>:

<sup>1</sup> Ibn Khordadbeh, Kitab al-masalik wal-mamalik, տե՛ս Bibliotheca geographorum arabicorum, ed. M. J. de Goeje, Pars sexta, Lugd. Bat., 1889, էջ 123:

<sup>2</sup> «Hudūd al-Ālam», The regions of the World, a Persian Geography 372 A.H.-982 A. D., translated and explained by V. Minorsky, 1970, էջ 143:

<sup>3</sup> Idrisi, Opus Geographicum, fasc. VII, Neapoli-Romae, 1977, էջ 820, 829:

<sup>4</sup> Կոստանդին Ծիրանածին, Կայսրության կառավարման մասին, գլուխ 44, տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, Բ, էջ 10:

<sup>5</sup> Իբն ալ-Ասիր, Թարգմանություն թագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, տե՛ս Արաբական աղբյուրներ Բ, էջ 185, 189, 193, 207, 217, 221, 233, 285, 302, 330, 334, 339, 340 և 341:

<sup>6</sup> Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համավին, էջ 10, 15, 20, 32, 62, 70, 76, 77, 79, 86, 108:

Այն հանգամանքը, որ Այլին կամ Ելին մտել է Հայոց մարզպանության մեջ, քաղաքականապես չենթարկվելով՝ մինչ նրա ազատագրումը Արծրունիների կողմից, հայ իշխանավորներին, վկայում է նաև Թովմա Արծրունին: Ինչպես արդեն մեջ ենք բերել, Գուրգեն Արծրունու զորքերը, հալածելով թշնամուն, «հանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն էլոյ, եւ էր որ ի կողմն Ատրպատականի եւ Պարսից» <sup>1</sup>: Քննությունը ցույց է տալիս, որ Հայոց սահմաններն այն երկրամասերն էին, որ գտնվում էին հայ իշխանների կառավարման ներքո, սակայն պատմիչը, որ թվում էր, թե էլին պիտի համարի Ատրպատականի մաս, վերջինս առանձնացնում է նրանից: Արդեն կատարված ուսումնասիրության լույսով պարզվում է, որ այդ հեռավոր արձագանք է այն պատմական իրողության, երբ Այլին գտնվում էր Հայոց մարզպանության մեջ և համարվում էր հայոց երկիր: Պատմիչը վավերացնում է երկու պահ, երբ Այլին Հայոց մարզպանության մաս է և երբ այն հայոց կառավարման ներքո չէ:

Քաղաքականապես մինչև մ.թ.ա. II դարը մաս չկազմելով Մեծ Հայքի, Պարսկահայքի տարածքն, ամենայն հավանականությամբ, ավելի վաղ ժամանակներից ներառնվում է հայ ժողովրդի ձևավորման ոլորտը, հանգամանք, որ իր հաստատումն է գտնում ցայսօր պահպանված բազմաթիվ հայկական տեղանուններում, ինչպես նաև ստվարաթիվ հայկական բնակչության առկայությամբ, որի զանգվածային տեղափոխությունը հյուսիս-արևելյան Հայաստանի տարածքը 1828-1829 թթ. մեծապես ամրացրեց հայ տարրն այնտեղ, ստեղծելով ազգացեղային ամուր կորիզ, որը հետագայում ծնեց Հայաստանի առաջին հանրապետությունը, Հայկական ԽՍՀ-ը, իսկ մեր օրերում՝ Հայաստանի Հանրապետությունը:

<sup>1</sup> Թ. Արծրունի, էջ 165-166:

**ԳԼՈՒԽ Ը**  
**ՎԱՍԿՈՒՐԱԿԱՆ**

Մեծ Հայքի ամենամեծ աշխարհի՝ Վասպուրականի մասին «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ ասված է. «Ը. Վասպուրական ի մտից Պարսկահայոց, եւ առ երի Կորճէից. ունի գաւառս երեսունեւհինգ. զՌշտունիս՝ որ է ընդ Սոկաց եւ ծովուն Բզնունեաց, յորում կղզիք երկու, Ախթամար եւ Արտի եւ ցամաքակղզին Մանգկերտ, եւ՝ Տոսպ յեկից Բզնունեաց. զԲողոնիս, զԱրճիշահովիտ, զԴառնի մինչեւ ցգաւառն Կոզովիտ՝ որ յոտինն Ազատ Մասեաց. զԱռբերան՝ յեկից ծովուն Բզնունեաց, յորում կղզիք Չբատան եւ Լիմն, ցամաքակղզին Ամիկ, եւ Առեստովան, ուստի ելանէ ձուկն. եւ յեկից դոցա Բուժունի, զԱնձովացիս, զՏրպատունիս, զԵրուանդունիս, զԱննոյ-տուն, զՄարդաստան, զԱրտազ մինչ ի Կոզովիտ: Եւ յեկից դոցա զԱկէ, զԱղբակ մեծ, զԱնձահիձոր, զԹոնրաւան, զՃաւառո մինչեւ ցերասխ, զԿըրկճունիս, զՎժնունիս, զՊալունիս, զԳոկան, զԱղանդոտ, զՊասպարունիս, զԱրտաշեզան, զԱրտաւանան, զԲագան, զԳաւեթան, զԳազրիկանս, զՏագրեանս, զՎաժնունիս, զՆախճաւան, յորում հոմանուն քաղաք»<sup>1</sup>: Հիշյալ նկարագրության անգամ թռուցիկ քննությունը ցույց է տալիս, որ այն հեռու է անաղարտ լինելուց: Վասպուրականը մեզ ներկայանում է ոչ թե 35, ինչպես ասված է նկարագրության սկզբում, այլ 32 գավառներով: Հնարավոր է, անշուշտ, ենթադրել, որ Վասպուրականի գավառների քանակությունը 32 է, իսկ

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ յանելուածովք նախնեաց», էջ 32-33: Օգտագործելով ակադ. Ս.Տ. Երեմյանի և մեր քննության արդյունքները, Վասպուրականի աշխարհացոյցյան նկարագրությունը մենք վերականգնում ենք հետևյալ տեսքով. «Ութորոր [աշխարհ] Վասպուրական ի մտից [է] Պարսահայոց եւ առ երի Կորճէից: Ունի գաւառս երեսունեւհինգ. զՌշտունիս, որ է ընդ Սոկաց եւ ծովուն Բզնունեաց, յորում կղզիք երկու, Ախթամար եւ Արտի եւ ցամաքակղզին Մանգկերտ, եւ զՏոսպ՝ յեկից [ծովուն] Բզնունեաց, զԲողունիս, զԱրճիշահովիտ, [զԲառիդովիտ, զԿուղանովիտ], զԴառնի մինչեւ ցգաւառն Կոզովիտ, որ յոտինն Ազատ Մասեաց, զԱռբերանի՝ յեկից ծովուն Բզնունեաց, յորում կղզիք Չբատան եւ Լիմն, ցամաքակղզին Ամիկ, եւ Առեստաւան, ուստի ելանէ ձուկն: Եւ յեկից դոցա զԲուժունիս, զԱննոյտուն, զԱնձեացիս, զՏրպատունիս, զԵրուանդունիս, զՄարդաստան, զԱրտազ մինչ ի Կոզովիտ: Եւ յեկից դոցա զԱկէ, զԱղբակ մեծ, զԱնձահիձոր, զԹոնրաւան, զՃաւառոտ մինչեւ ցերասխ, զԿըրճունիս, զՄեծունիս, զՊալունիս, զԳոկան, զԱղանդոտ, զՊարսպատունիս, զԱրտաւանեան, զԲագան, զԳաւեթան [Գաբիթան?], զԳազրիկեանս, զՏագրեանս, զՎարաժնունիս, [զԳողթն գինեւտ], զՆախճաւան, յորում յոմանուն քաղաք»: Հմտ. Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 108-109:

նկարագրության սկզբում հիշատակվող 35-ը ուշ շրջանի արտահայտություն: Սակայն հիշյալ նկարագրության մեջ այնպիսի նշանավոր գավառի անվան բացակայությունը, ինչպիսին Գողթն է, իրավունք է տալիս եզրակացնելու, որ Վասպուրականի գավառների տվյալ նկարագրությունը մեզ հասել է խաթարված վիճակում:

Գավառանունների առավել ամբողջական ցանկեր պահպանել են «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերը, որոնցում սակայն Վասպուրականի գավառների թիվը հաստատուն չէ: Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում պահվող մի խումբ ձեռագրերում գավառների քանակը 35 է, սակայն ձեռագրերի մեծ մասում այն է 36 է կամ 37: Ավելորդ չենք համարում, ելնելով առաջիկա քննության շահերից, մեջբերել նաև համառոտ խմբագրության համապատասխան հատվածը. «Ը երորդ Վասպուրական ի մտից է Պարսկ[ա]իա[յ]ոց և առ երի Կորճէից. գաւառք նորա. Լե. և են այսոքիկ. Ռըշտաւնիք, Տոսք, Բողունիք, Արճիշակովիտ, Բառիդովիտ, Կուղանովիտ, Դառնի, Առբերանի, Բժունիք, Աննոյոյ տուն, Անձաւացիք, Տրպատունիք, Երուանթունիք, Մարդաստան, Արտազ, Ակէ, Աղբակ Մեծ, Անձահիձոր, Թոնրաւան, Ճաւառոտ, Կրճունիք, Մեծունիք, Պալունիք, Գոկան, Աղանտոտ, Պասպարունիք, Արտաշեան, Արտաւանեան, Բաքեան, Գաբիթան, Գազրիկան, Տագրեան, Վարաժնունիք, Գողթն գինեւտ, Նախճաւան, յորում քաղաքն և մարմանոք»<sup>1</sup>:

Երևանի մատենադարանում պահվող «Աշխարհացոյց»-ի ձեռագրերի<sup>2</sup> համեմատությունը հնարավորություն է տալիս հստակություն մտցնել գավառանունների գրության մեջ: Օգտագործելով նաև Ղ. Խնձիճյանի քննության արդյունքները<sup>3</sup>, մենք ստանում ենք հետևյալ պատկերը.

	Ճիշտ ձևը
1) Ռշտունիք, Ըռշտունիք, Ռըշտաւնիք, Ռուշունիք, Ըռշտուիք, Ըռըշտունիք, Ըռըշտունիք, Ռշտունիս	} Ռշտունիք
2) Տոսպ, Տոսք	} Տոսպ
3) Բողունիք, Բողոնիս, Բուղունիք, Բգունիք, Բողոնիք, Բղունիք, Բուլթունիք	} Բողունիք (Բոգունիք)

<sup>1</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. թիվ 582, 179ա-179բ: Տե՛ս նաև Ա.Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349-350:

<sup>2</sup> Օգտագործել ենք թիվ 582, 1267, 1459, 1482, 1486, 1518, 1717, 1770, 1883, 2019, 2191, 2291, 2370, 3691, 4284, 5613, 7993 ձեռագրերը:

<sup>3</sup> Ղ. Խնձիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 162-163:

- 4) Արճիշակովիտ, Արճիշահովիտ, Արշակովիտ, Արճիշակվիտք, Արշակողիդ } **Արճիշակովիտ**
- 5) Բառիղովիտ, Աղովիտ, Բառաղովիտ, Բալախովիտ, Բառովողիտ, Բալտախովիտ Աղախ, Բառիզակովիտ, Բալակովիտ } **Բառիղովիտ**
- 6) Կուղանովիտ, Կուղանովիտ, Կղանովիտ, Կուզանովիտ, Գուղանովիտ, Կուղանովիդ, Կաղանովիտ } **Կուղանովիտ**
- 7) Դառնի, Գառնի, Պառնի, Վիզառնի } **Դառնի (Գառնի?)**
- 8) Առբերանի, Առբերան } **Առբերանի**
- 9) Բժունիք, Բուժունի, Բուժօնիք, Բժնիքն, Բոժունիք, Բուրժունիք, Բաժունիք } **Բուժունիք**
- 10) Առնիոյ ոտն, Առնոյ-ոտն, Առնիոտն, Առնոտն, Առնուտն, Առնոտն } **Առնոյոտն**
- 11) Անձաւացիք, Անցովացիս, Անձեւացիք, Անձրւացիք } **Անձաւացիք (Անձեւացիք?)**
- 12) Տրպատունիք, Տրպատունիս, Ատրպատունիք, Տրպապատունիք } **Տրպատունիք**
- 13) Երուանթունիք, Երուանդունիս, Երիթունիք, Երեւանթունիք, Երուանդունիք, Երեւանդունիք } **Երուանդունիք**
- 14) Մարդաստան, Մարգաստան } **Մարդաստան**
- 15) Արտազ } **Արտազ**
- 16) Ակէ, Ասէ } **Ակէ**
- 17) Աղբակ Մեծ, Աղբակգ Մեծ, Աղբան Մեծ } **Աղբակ Մեծ**
- 18) Անձախիձոր, Անձահիձոր, Անձախաձոր, Անձահից ձոր, Անձահից ձոր, Անձախիձոր } **Անձախիձոր (Անձահիձոր)**
- 19) Թռռնաւան, Դուռնաւան, Թռնրաւան, Թռռնասոն, Թռռնայւան, Դուռն ասան, Թռռնաւան } **Թռռնաւան**
- 20) Ճուաշառտ, Ճւաշոտ, Ճուաշ ոտտ, Ճուաշ, Ճուայշառտ, Ճուաշոյ ոտն, Ճուաշռունգ } **Ճուաշ ոտտ (Ճուաշ)**

- 21) Կրճունիք, Կըրկճունիս, Կըրճունիք, Կճրունիք } **Կրճունիք**
- 22) Մեծնունիք, Վժնունիս, Մեծկունիք, Վրջունիք, Վրընջունիք, Վրնճունիք } **Մեծնունիք**
- 23) Պալունիք, Պալունիս } **Պալունիք**
- 24) Գուկան, Գուկան, Գուզան, Դուկան, Դուկան } **Գուկան**
- 25) Աղանտռտ, Աղանդոստ, Աղուանդռտ, Աղանառտ, Աղանգոտտ, Աղանդոտտ, Աղանգուրտ, Աղուանգռտ } **Աղանդ-ոտտ**
- 26) Պատսպարունիք, Պասպարունիս, Պատսարունիք, Պարապատունիք, Պարսպարունիք } **Պատսպարունիք (Պարսպատունիք)**
- 27) Արտաշեան, Արտաշեզան, Արտաշեզեան, Արտաշիզօն, Արտաշիզան, Արտաշիզան, Արտաշեսեան, Արիտաշեան, Արտաշիսան, Արտաշիսեան } **Արտաշիսեան**
- 28) Արտաւանեան, Արտաւենան, Արտաւեան, Արտաւիւան, Արտաւանան } **Արտաւանեան**
- 29) Բաքեան, Բազան, Բաքան, Բաքուսեան, Բաքոսեան } **Բազան (Բաքան)**
- 30) Գաբիթան, Գաւթան, Գաբիթեան, Գաւաքան } **Գաբիթեան (Գաբիթան)**
- 31) Գազրիկան, Գազրիկանս, Գազրիքան, Գազրիզէն } **Գազրիկան**
- 32) Տագրեան, Տագրեանս, Տանկրիայն, Մատեան } **Տագրեան**
- 33) Վարաժնունիք, Վաժնունիս, Վարժունիք, Վարժունիք } **Վարաժնունիք**
- 34) Գողթն Գինեւէտ, Գողթն գինաւէտ, Գողդն գինեւէտ } **Գողթն գինեւէտ**
- 35) Նախճուան, Նախճան, Նախչուան, Նախշուան } **Նախճուան**
- 36) Մարմանք, Մարանդ, Մազանդ, Մարմարոն, Մարմանդքն, Մարմարանքն, Մարմարսն } **Մարանդ?**
- 37) Հայոց ձոր } **Հայոց ձոր**

Այժմ փորձենք տեղադրել Վասպուրականի գավառները և վերլուծել Վասպուրականի գավառացանկի ներքին օրինաչափությունները: Վասպուրականի գավառների տեղադրությունը, ըստ մեծի մասին, հայտնի է<sup>1</sup>: **Ոչտունիքը** գտնվում էր Վանա լճի հարավ-արևելյան ափին, տարածվելով երևաք գավառի սահմանից մինչև Ոստան քաղաքի արևելակողմը<sup>2</sup>: **Տոսպը** տարածվում էր Վան քաղաքի շրջանում, իր մեջ առնելով Գուկանք ամրոցի արևելակողմից մինչև Մարմետ գետն ընկած տարածքը<sup>3</sup>: **Բողունիք**<sup>4</sup> կամ **Բոգունիք** գավառը զբաղեցնում էր Մարմետ գետի ստորին հոսանքի շրջանը: Միջին դարերում այստեղ հայտնի էր Անըստան գյուղը, որը Ս.Ս. Երեմյանի տեղադրությամբ համապատասխանում է ներկայիս Աննավանք գյուղին<sup>5</sup>: **Արճիշակովիտը** համապատասխանում է Արճիշակ կամ ներկայումս Արճակ կոչվող լճի և համանուն գետակի (այժմ՝ Մահմեդիկ-սու) փակ ավազանին<sup>6</sup>: **Ջգալի դժվարություն** է ներկայացնում հաջորդ **Բառիղովիտ** գավառի տեղադրությունը: Ակադ. Ս. Ս. Երեմյանը Վասպուրականում տեղադրում է Աղիովիտ գավառը **Բառիղովիտի** փոխարեն: Նրա կարծիքով, սկզբում գոյություն է ունեցել մեկ Աղիովիտ գավառ, սակայն հետագայում, երբ բարձրանում է վաճառաշահ **Ջարիշատ** քաղաքը, վերջինս, ի պատիվ Արտաշես Ա-ի հոր **Ջարեհի**, ստանում է **«արքունի քաղաքի»** իրավունք և նրա հետ միասին հողային տարածություն՝ Աղիովիտ գավառի արևմտյան մասը, իբրև **Ջարիշատ քաղաքի քաղաքային տերիտորիա**, որը **«Աշխարհացոյց»**-ում հիշատակվում է Տավրուբերան աշխարհի գավառների թվում: Ինչ վերաբերում է Վասպուրականի Աղիովիտ գավառին, ապա այն Առբերանի գավառի հետ միասին՝ իբրև Արշակունյաց տան սեպուհների բնակավայր, կոչվել է **«Սեպու (ր) հական»** կամ **«Վասպուրական»**, **«Երկիրն սեպական գնդին»**<sup>7</sup>: Մեր կարծիքով, այդ ուշագրավ տեսակետը չի ապացուցվում **«Աշխարհացոյց»**-ի ձեռագրերի տվյալներով: Ելնելով Վասպուրականի գավառների նկարագրության օրինաչափություններից, դժվար է ենթադրել, թե Արճիշակովիտից հետո կհիշատակվեր մի գավառ, որը նրան սահմանակից չէ, երբ Բառիղովիտին հաջորդող Կուղանովիտ գավառը գտնվում է Արճիշակովտի հարևանությամբ: Ուստի տրամաբանական է այն փնտրել

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս «Վասպուրականի քարտեզը»:

<sup>2</sup> **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, էջ 315: **Ս.Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 79:

<sup>3</sup> **Н. Адонц**, նշվ. աշխ., էջ 315: **Ս.Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 86:

<sup>4</sup> Կարծում ենք, որ գործածական են եղել երկու ձևերն էլ: Մեկը հանդիսացել է գրական, իսկ մյուսը՝ բարբառային տարբերակը (Ն.Ք.):

<sup>5</sup> **Ս.Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 45:

<sup>6</sup> **Ս.Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 40:

<sup>7</sup> **Ս.Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 33:

Արճիշակովտի շրջակայքում: **«Աշխարհացոյց»**-ի ընդարձակ խմբագրության մեջ Բառիղովիտ գավառի անունն, անշուշտ, գրիչների մեղքով, բացակայում է<sup>1</sup>, իսկ համառոտ խմբագրության ձեռագրերում այն հանդիպում է, ինչպես վերը տեսանք, որպես կանոն **Բառիղովիտ**, **Բառողովիտ**, **Բառովողիտ**, **Բալախովիտ**, **Բալտախովիտ**, **Բառիգակովիտ**, **Բալակովիտ** տարընթերցումներով: Բացառություն են կազմում **Աղովիտ** և **Աղալիս** ձևերը<sup>2</sup>, որոնք հազվագյուտ են պատահում և, համաձայն մեր քննության, վերջին հաշվով ծագում են Բառիղովիտ ճիշտ ձևից: Դժվար չէ համոզվել, որ Բառիղովիտ ձևից առաջացել են Բառողովիտ և Բառովողիտ ձևերը: Գրիչների կողմից թույլ տված **«գ»**-ի և **«ղ»**-ի շփոթի հետևանքով Բառիղովիտից՝ Արճիշակովտի գրության ազդեցության ներքո հանդես է եկել Բառիգակովիտը: Ելնելով ձեռագրերի համեմատության և քննության արդյունքներից, հակված ենք կարծելու, որ Բառիղովիտ գավառանունը դեռևս վաղ անցյալում ինչ որ մի ձեռագրում գրչի կողմից սխալմամբ արտագրվել է **Բաղովիտ**, իսկ վերջինս հաջորդ արտագրողների կողմից ընկալվել է որպես **Բ Աղովիտ**, այսինքն **Երկրորդ Աղովիտ** և այնուհետև համարվել Տավրուբերանի Աղիովիտ գավառի համանվանակից: Սակայն Բաղովիտ սխալ գրությունն ընկալվել է ոչ միայն Երկրորդ Աղովիտ, այլև նմանեցվել է Տոփաց աշխարհի Բալահովիտ գավառին և նրա անվան ազդեցության տակ վերածվել Բալախովիտի, որից էլ ավելի ուշ ծագել են Բալակովիտ և Բալտակովիտ տարընթերցումները: Վերջապես նույն Աղովիտը, չնայած հանդիսանում է Բառիղովտի լուկ տարընթերցումը, երկրորդ անգամ վերաձևվելով ծնել է Աղալիս անունը, ինչպես Կուղանովտից առաջացել է Կուղանովիտը<sup>3</sup>: Որ գավառանվան ճիշտ ձևը եղել է Բառիղովիտ, ապացուցվում է Թովմա Արծրունու աշխատության տվյալներով: Անդրադառնալով Գագիկ և Գուրգեն Արծրունիների կալվածքներին, նա գրում է. **«Յելս կոյս եւ ի մուտս որ առ հիւսիսի զհայեցածն բերէ, առեալ էր ի բաժնէ Գագիկ իշխանի: Ջճուաշ գաւառն եւ զԹոռնաւան, Արտազ, Մարդաստան, Դառնի, Առբերանի, Աղանդոռո, Բառիլովիտ, Պալունիք եւ Սեծնունիք, Տոսպաշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփականս իւր արարեալ ունէր հայրըն նենգութեան Մարդպետն կոչեցեալ. զոր եւ վեր անդ յիշատակեալ ցուցաք զորպիսութիւն. եւ մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին եւ յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի:**

Իսկ Գուրգենի մարզպանի հայոց, առեալ էր ի բաժնի յելս կոյս եւ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղանովիտ, եւ զԲուն Մար-

<sup>1</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ», էջ 32-33:

<sup>2</sup> **Ղ Ռճիճյան**, նշվ. աշխ., էջ 162:

<sup>3</sup> Մեսրոպ Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. թիվ 582, 179ա:

դաստան գաւառ, գլորհիշակովիտ, զոտն Առնոյ, գԱղբագ մեծ և զգիոքր, Ալե-  
տամբեր, Տագրեան, Ըռնայ, Զարեհաւան:

Բայց զՏամբեր եւ զԸռնայն, եւ զԶարեհաւան գաւառ հանեալ էր ի Պարս  
հայոց. իսկ զՆախճաւան քաղաք, եւ զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպու-  
րականէ բազում ժամանակօք յառաջ...»<sup>1</sup>: Չնայած Շ. Նյուբրըմանի այն կարծի-  
քին, թէ «բաւական պայծառ չէ գաւառաց համայնքումն Արծրունւոյ քով»<sup>2</sup>,  
Վասպուրականի պատմիչի հաղորդած տեղեկությունները անգնահատելի են  
հիշյալ աշխարհի գավառների տեղադրության համար, ուստի և դրանք մեջ-  
բերեցինք ամբողջությամբ: Գագիկ Արծրունու տիրույթների մեջ մտնող գա-  
վառների մեծ մասի դիրքը հայտնի է, ուստի՝ հենվելով Թովմա Արծրունու  
վկայության վրա, կարելի է ենթադրել, որ Բառիլովիտը գտնվել է Մարդաս-  
տան, Դառնի և Աբերանի գավառներից հարավ, Աղանդոտից արևմուտք և  
Տոսպից՝ արևելք: Հաշվի առնելով Վասպուրականի լեռնագրությունը և ըն-  
դելուզքը (լանդշաֆտ), Բառիլովիտ-Բառիղովիտը հնարավոր է տեղադրել  
միայն Մարմետ գետի վերին հոսանքի շրջանում, որն ուրարտական շրջանում,  
հավանաբար, կոչվել է Բարելե կամ Բարիլե: Չի բացառվում, որ այդ անունը  
կրել է Մարմետ գետը իր վերին հոսանքի շրջանում: Ամփոփելով վերոգրո-  
յալը, գտնում ենք, որ Վասպուրական աշխարհում Աղիովիտ գավառ գոյութ-  
յուն չի ունեցել, իսկ սկզբնաղբյուրներում հանդիպող Բառիղովիտ<sup>3</sup> գավառը  
գտնվել է ոչ թե Վանա լճի հյուսիս-արևելյան ափին, այլ Մարմետ գետի վե-  
րին հոսանքի շրջանում:

Կուղանովիտ գավառը U.S. Երեմյանը միանգամայն իրավացիորեն տե-  
ղադրում է ներկայումս Կելան-դարասի կոչվող ձորահովտում: Նրա կարծի-  
քով, Կուղանովտի հնագույն ձևը եղել է Կուղխանովիտ, որի հետ կապվում է  
Պտղոմեոսի մոտ այս տեղերում հիշվող (Κολχίς) վայրը<sup>4</sup>: Մեր կարծիքով,  
հնագույն ձևը ենթադրելի է Կուլլան, որը տվել է բարբառային երկու տարբե-  
րակ Կուլլան > Կուղղան > Կուղխան > Կուղան և Կալլան > Կաղղան > Կաղ-  
խան > Կաղան, որոնց հետագայում ավելացվել է «ովիտ» բառը: Կալլան նա-  
խատիպը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է ասորես-  
տանյան արձանագրության մեջ հիշատակվող Կալլանիա գետանվանը: Սար-  
գոն II-ը իր 714 թ. մ.թ.ա. արշավանքի ժամանակ դուրս գալով Այադուկից

<sup>1</sup> «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունեոք», էջ 282-283:

<sup>2</sup> Շ. Նյուբրըման, Հին Հայոց տեղոյ անունները, էջ 225:

<sup>3</sup> Ա.Գ. Աբրահամյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստում Բառիղովիտ գավառանունը սխալմամբ տպագրվել է «Բոտիղովիտ» «առ»-ն «ոտ»-ի հետ շփոթվելու հետևանքով (տե՛ս «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 350):

<sup>4</sup> U.S. Երեմյան, նշվ աշխ., էջ 61:

անցնում է Ալլուրիա, Կալլանիա և Իննայա գետերը, մուտք գործում Ուայախ  
երկիրը: <sup>1</sup> Ալլուրիան Մարմետ գետի հինավուրց անունն է և կապվում է Բո-  
գունիք գավառի Ալլուր գյուղանվան հետ, իսկ Կալլանիան Հայոց ձոր կամ  
ներկայումս Խոշաբ կոչվող գետն է: Չնայած ներկայումս Կելան է կոչվում  
միայն Խոշաբի աջակողմյան վտակներից մեկը, ուրարտական տիրապետութ-  
յան շրջանում այդ անունը տարածված պետք է լիներ ողջ գետի վրա: Ալ-  
լուրիայի և Կալլանիայի տեղադրությունից հետո անհիմն չէ կարծել, որ Ին-  
նայա գետը համապատասխանում է Արևելյան Տիգրիսին կամ Զերմին:

Գառնի կամ Դառնի գավառը գտնվում էր Առեստ կամ Բանդիմահի գետի  
վերին հոսանքի շրջանում, իսկ Աբերանին ստորին հոսանքում՝ տարածվելով  
Վանա լճի հյուսիս-արևելյան ափագծով, ընդգրկելով մինչև Կտուց կղզին  
(հնում՝ Չքատան) ներառյալ ընկած հողերը<sup>2</sup>: Բուժունիք գավառը, համա-  
ձայն Մովսես Խորենացուն վերագրվող «Ճառ պատմութեան բանից ի սուրբն  
Հռիփսիմէ և յընկերսն» գրվածքի, U. S. Երեմյանը տեղադրում է Սուրբ Տիկին  
կամ Սև Տիկին կոչվող գետակի ձորահովտում՝ Շատախից հյուսիս<sup>3</sup>: Բուժու-  
նիքից հարավ գտնվում էր Առնոյ ոտն գավառը, որն իր անունն ստացել էր  
Առնոս լեռան անվանումից (ներկայումս Առնոս-դաղ)<sup>4</sup>: Անձավացիք կամ Ան-  
ձևացիք գավառը զբաղեցնում էր Զերմ գետի ակունքների շրջանը: Այստեղ  
էին գտնվում Կանգաւար ամրոցը, Ալաման և Լէկ գյուղերը, Պաշատ լեռը:  
Նշանավոր էր Ագռավաքար վայրը, որտեղ հիմնվեց Հոգեաց վանքը<sup>5</sup>: Հա-  
ջորդ Երուանդունիք գավառը տարածվում էր Հայոց ձոր կամ Խոշաբ գետի  
միջին հոսանքում՝ Գուկանք և Արտամետ բնակավայրերից դեպի արևելք,  
ունենալով իր մեջ Որտոք գյուղը<sup>6</sup>: Հայոց ձոր գետի կամ Խոշաբի վերին  
հոսանքում գտնվում էր Տրպատունիքը<sup>7</sup>, որն, անկասկած, համապատասխա-  
նում է Թովմա Արծրունու հիշատակած Բուն Մարդաստան գավառին: <sup>8</sup> Այլ  
խոսքով, «Աշխարհացոյց»-ը բնավ չի մոռացել Բուն Մարդաստան գավառը,  
այլ տվել է նրա մեկ այլ անվանումը՝ Տրպատունիք, ուստի «Աշխարհացոյց»-ի

<sup>1</sup> И.М. Дьяконов, Ассирио-вавилонские источники по истории Урарту, տե՛ս «Вестник древней истории», 1951, № 2, էջ 329:

<sup>2</sup> Н. Адонц, նշվ. աշխ., էջ 315-316: U. S. Երեմյան, նշվ. աշխ., էջ 46, 37:

<sup>3</sup> U.S. Երեմյան, նշվ. աշխ., էջ 45:

<sup>4</sup> Անդ, էջ 37:

<sup>5</sup> Н. Адонц, նշվ. աշխ., էջ 316: U.S. Երեմյան, նշվ. աշխ., էջ 36:

<sup>6</sup> Ղ. Մեծիճյան, նշվ. աշխ., էջ 199-200: Н. Адонц, նշվ. աշխ., էջ 316: U. S. Երեմյան, նշվ. աշխ., էջ 51:

<sup>7</sup> Н. Адонц, նշվ. աշխ., էջ 316:

<sup>8</sup> Թովմա Արծրունի, էջ 283:



մեջ այն կարելի է մուծել միայն որպես Տրպատունիքի համարժեք: Համաձայն «Աշխարհացոյց»-ի և Թովմա Արծրունու տվյալների, թե Տրպատունիքը և թե Բուն Մարդաստանը տեղադրվում են միևնույն՝ Հայոց ձոր գետի վերին հոսանքի շրջանում<sup>1</sup>: Մարդաստան գավառն ըստ Ադոնցի տարածվում էր Արձակ կամ Արձիշակ լճից մինչև Արտազ<sup>2</sup>: Մեր կարծիքով, ավելի ճիշտ է Ս.Տ. Երեմյանի տեղադրությունը, որի համաձայն Մարդաստանը գտնվում էր Մակուհից դեպի արևմուտք, Վասպուրականի (Կոտուրի) լեռների արևելյան փեշերին: Հեղինակը, միանգամայն իրավացիորեն, այն նույնացնում է Սեբեոսի մոտ հիշատակված Մարդուցաջր գավառին<sup>3</sup>: Մարդաստանին սահմանակից Արտազ գավառը զբաղեցրել է Մակու քաղաքի շրջակա տարածքը: Արտազի բնակավայրերից եղինդը և Հացյունը մինչև այսօր էլ պահպանվել են համապատասխանաբար երինդ և Հայսուն անվանումներով<sup>4</sup>: Արտազը Պատմահոր վկայությամբ կոչվել է նաև Շավարշան<sup>5</sup>: Գավառացանկի հաջորդ Ալե գավառը գտնվել է Մեծ Աղբակից հարավ<sup>6</sup>: Ն. Ադոնցի այս տեղադրությունը չնայած սխալ չէ, այնուամենայնիվ որոշակի չէ: Ս.Տ. Երեմյանը Ալե գավառը տեղադրում է Ականիս լեռան շրջակայքում (այժմ՝ Մերթեզ-դաղ)<sup>7</sup>, որտեղ մինչև այժմ էլ գտնվում է Ակնիս կամ Ականիս բնակավայրը: Դատելով Թովմա Արծրունու վերը բերված վկայությունից, որտեղ հիշվում է Ակեն Տամբերի հետ միասին Ակետամբեր ձևով, այն պետք է սահմանակից լիներ Տամբեր գավառին, ուստի հնարավոր են երկու տեղադրություն: Մեծ Աղբակն անմիջական սահման չի ունեցել Փոքր Աղբակի հետ և նրանց իրարից բաժանել է Ակեն, կամ էլ Մեծ Աղբակը և Փոքր Աղբակը սահմանակցել են, որի հետևանքով Տամբերին սահմանակից Ակեն գտնվել է ոչ թե Ականիսի շրջանում, այլ նրանից արևելք: Կարծում ենք, որ առավել հավանականը առաջին տեսակետն է:

Աղբակ Մեծ գավառը տարածվում էր Մեծ Զաք գետի վերին հոսանքի կամ Աղբակ գետի ավազանում, կենտրոն ունենալով Հաղամակերտը կամ ներկա-

<sup>1</sup> Ս.Տ. Երեմյանը Տրպատունիքը տեղադրում է Ջերմ գետի Շահբուր-սու վտակի ավազանում, իսկ Բուն Մարդաստան գավառը Խոշաք գետի վերին հոսանքում՝ մուծելով վերջին գավառանունը Վասպուրականի գավառացանկի մեջ (տե՛ս «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 86, 45):

<sup>2</sup> Н. АДОНИ, նշվ. աշխ., էջ 316: Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 188:

<sup>3</sup> Ս.Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 65:

<sup>4</sup> Н. АДОНИ, նշվ. աշխ., էջ 316: Ս.Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 40:

<sup>5</sup> Մովսես Խորենացի, էջ 157, 182:

<sup>6</sup> Н. АДОНИ, նշվ. աշխ., էջ 316-317:

<sup>7</sup> Ս.Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 32:

յի Բաշկալեն<sup>1</sup>: Քաջ հայտնի է Անձախիձոր կամ Անձահիձոր գավառի դիրքը: Այն գտնվում էր Կոտոր (ներկ. Կոտուր) գետի վերին հոսանքի շրջանում: Կենտրոնն էր Կոտորի բերդը: Կոչվել է նաև Ընծայից ձոր<sup>2</sup>: Որոշակի դժվարություն է ներկայացնում Թռռնավան գավառի դիրքի ճշգրտումը: Այս գավառում միջին դարերում հայտնի էր Նկան բերդը որի դիրքն անծանոթ է Ղ.Խնձիճյանին և Հ. Հյուբշմանին<sup>3</sup>: Ն. Ադոնցը, անդրադառնալով Թռռնականի և Նկանի տեղադրությանը, գրում է, որ Թռռնավանը (Ն.Ադոնցի մոտ Тонраван) Նկան ամրոցով, որը համապատասխանում է Նագան գյուղին, գտնվել է Կոտորից արևելք<sup>4</sup>: Սակայն նույն էջում թիվ 1 ծանոթագրության մեջ նա հայտնում է իրարամերձ կարծիք, ըստ որի Նկանի տեղադրությունը հիմք է ծառայում, որպեսզի Թռռնավանը տեղափոխվի Արաքսի համակարգից, ուր տեղադրում է Հ.Հյուբշմանը, Վանա լճի ավազան<sup>5</sup>: Այլ խոսքով, ծանոթագրության մեջ արդեն փորձում է Նկանը տեղադրել Կոտորից արևմուտք ընկած հատվածում: Ս.Տ. Երեմյանը Թռռնավանը տեղադրում է Մարմետ գետի վերին հոսանքի շրջանում՝ Տաշ-Ռոմի գյուղի մոտերքը<sup>6</sup>: Նրա կարծիքով, Թռռնավան ավանը պետք է հանդիսանար գավառի կենտրոնը և նույնական լիներ Տավերնիե ճանապարհորդի կողմից հիշատակված Darnavin վայրին<sup>7</sup>: Մեզ անհայտ նյութերի հիման վրա, նա իր հրատարակած մի շարք քարտեզներում տեղադրել է նաև Նկան ամրոցը Արձիշակ գետի վերին հոսանքի շրջանում<sup>8</sup>: Չնայած մեր բոլոր ջանքերին, մեզ այդպես էլ չհաջողվեց հայտնաբերել Նագան գյուղը ռուսական 5 և 10 վերստանոց, Անատոլիայի թուրքական 5 վերստանոց, Կովկասի և Լինչի քարտեզներում: Իր օգտագործած սկզբնաղբյուրները բժախնդրորեն նշող Ն.Ադոնցը, որ նույն էջում իր պարտքն է համարում հիշատակել Սևան ամրոցի տեղադրության կապակցությամբ ռուսական և Լինչի քարտեզները, զարմանալիորեն ոչինչ չի հայտնում Նագան գյուղի մասին վկայող աղբյուրի մասին: Բացի Ն. Ադոնցի մոտ վերը նշված

<sup>1</sup> Н. АДОНИ, նշվ. աշխ., էջ 316: Ս.Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 33:

<sup>2</sup> Н. АДОНИ, նշվ. աշխ., էջ 317: Ս.Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 36:

<sup>3</sup> Ղ. Խնձիճյան, նշվ. աշխ., էջ 209-210: Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 220:

<sup>4</sup> Н. АДОНИ, նշվ. աշխ., էջ 317:

<sup>5</sup> Անդ:

<sup>6</sup> Ս.Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 53:

<sup>7</sup> Անդ, էջ 53:

<sup>8</sup> Ս.Տ. Երեմյան, Բագրատունիների թագավորությունը IX դ. վերջին և X դ. առաջին կեսին (քարտեզ), տե՛ս «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ.2, Երևան, 1976, էջ 200 և այլն: Թռռնավանի Ս.Տ. Երեմյանի տեղադրությունն ընդունում է Թ. Հակոբյանը, ըստ որի հիշյալ գավառը զբաղեցրել է այժմյան Կոտուր և Մեհմեդիկ գետերի վերին հոսանքը և հայտնի եղել Սևան և Նկան բերդերով (տե՛ս «Հայաստանի պատմական աշխարհագրություն», էջ 190):

հակասությունից, անհասկանալի է մտնում այն հանգամանքը, թե ինչպես է նա Մարդաստան գավառը տեղադրում Արճիշակ լճից մինչև Արտազ ընկած շրջանում և միաժամանակ փորձում հենց նույն հատվածում տեղավորել Թոռնավանը: Հակասություն գոյություն ունի նաև Ա.Տ. երեմյանի բերած փաստարկներում: Տավերնիեի մոտ նրա անցած երթուղին հանգում է ներքոհիշյալ բնակավայրերին. Van-Darchek-Nuchar-Kuticlar-Kalvat-Kogia-Darkavin-Solimen-Sera-Kours-Devogli-Checheme-Davachiler-Marand-Sofian-Tauris<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, Տավերնիեն տեղեկություն չունի Darnavin բնակավայրի մասին, իսկ եթե անգամ ընդունենք, որ Darkavin-ը նույն Darnavin-ն է, ապա ելնելով երթուղու տվյալներից, այն չէր կարող գտնվել Տաշ-Ռումի բնակավայրի շրջանում: Լավագույն դեպքում այն պետք է փնտրել Սուլիմեն-Սերա (ներկայումս Սուլեյման-քենդ) բնակավայրից հյուսիս՝ Արտազի տարածքում: Ավելին, շատ հավանական է, որ Դարկավինը տեղանվան ճիշտ ձևը չէ: Ինչպես Արճակը դարձել է Darchek, էվոլյուն՝ Devogli, ստանալով հող, այնպես էլ Արկեվանը կարող էր վերածվել Darkavin-ի: Փորձենք, Թովմա Արծրունու տվյալների հիման վրա, հստակություն մտցընել Թոռնավանի տեղադրության մեջ, օգտագործելով նաև տեղանվանագիտական նյութը:

1. «... եկին մտին ի բերդն դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնաւան գաւառի...»:

2. «... զգունդ ազատացն՝ որ մտեալ էին ընդ նմա յանձաւն Նկանի»:

3. «Եւ ասպատակեալ ի ձուաշ եւ ի Թոռնաւան յաւարի առնուն»:

4. «... ի Նկան բերդի...»:

5. «... Զամուրն Նկան ի Թոռնաւան գաւառի. եւ զամուրն Կոտոր ի ձորն Ընծայից. զամուրն Սեւանի ի փորն Լմբայ»:

6. «... ԶԱշոտ տարեալ յանկասկածելին Նկան: ԶԳագիկ յամուրն Սեւան: ԶԳուրգեն ի Կոտորն բերդ»:

7. «... Զձուաշ գաւառն եւ զԹոռնաւան, Արտազ, Մարդաստան, Դառնի, Արբերանի, Աղանդոտ, Բառիլովիտ, Պալունիք եւ Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան...»<sup>2</sup>:

8. «... գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ. հանեն զտուր, վարեն ի գերութիւն, եւ առնուն աւար, եւ ի յանցին դառնան ի ձուաշ եւ ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն: Եւ վարեն ի գերութիւն աւարառութեամբ զԼեկ, եւ զԱղզի, եւ զԿրեթեացն եւ ի Ճախուկ գաւառէ...»:

<sup>1</sup> "Les six Voyages de Tean Baptiste Tavernier, Ecuyer Baron d'Aubonne, en Turquie, en Perse, et aux Indes", Paris, MDCXCII, vol. I, էջ 309-310:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 146, 148, 219, 253, 261, 264, 282:

9. «Եւ ապա իբրեւ աւուրք ինչ լինէին պարապոյ, կոչէ զԱշոտ եղբարքն հանդերձ ի բերդ Կոտորոց, պատուասիրութենէ ինչ աղագաւ: Եւ անդէն ի միում գիշերի կալեալ կապէ զնոսա, եւ յղէ զԱշոտ եւ զԳուրգէն ի բերդն Նկան կոչեցեալ, եւ տուեալ ի բանտ պահէ մեծաւ զգուշութեամբ: Իսկ զԳագիկ խաղացուցանէ ի ձուաշ գաւառ, յամրոցն Շամիրամ, քանզի իբրեւ զմանուկ տղայ խաբեալ էր զԱշոտ, տալով նմա զբերդն Ագարակայ, հանդերձ ձախուկն կոչեցեալ գաւառաւ, փոխանակ իւր առնելով զբերդն Նկան, եւ զԹոռնաւան, եւ ձուաշ գաւառք, ուր եւ շինեալ զՇամիրամն պարսպէ յիւր անուն»:

10. «... Ի գաւառն Թոռնաւան յաւուրս ձմերայնոյ»<sup>1</sup>:

Ինչպես պարզվում է I և V տեղեկությունից, Թոռնավան գավառում է գտնվել **Նկան ամրոցը** կամ **Դղեակ բերդը**: II, IV և X վկայությունները անորոշ են, V-ից պարզվում է, որ Սևան ամրոցը Թոռնավանում չի գտնվել, այլ Լմբա Փորակում: VI հաղորդումը՝ ոչինչ չավելացնելով V-ի վրա, լույս վկայում է **Նկանի** անառիկությունը: III տեղեկությունը անորոշ, իսկ VII-ը և IX-ը առավել հստակ խոսում են Թոռնավանի ձուաշի հարևանությամբ գտնվելու մասին: Ավելին, հիմք ընդունելով VII տեղեկությունը, կարելի է առանց սխալվելու ընդունել, որ Թոռնավանը գտնվում էր ձուաշից արևմուտք, Արտազից, Մարդաստանից և Դառնիից՝ հարավ, Աղանդոտից՝ հյուսիս: Նման տեղադրության դեպքում այն պետք է գտնվեր Մարմետ գետի կամ ձուաշ-ռոտ գետի (ներկայումս Աղ-չայ) վերին հոսանքի շրջանում: Ինչպես վերը տեսանք, ուսումնասիրողների մեծ մասը նախապատվություն է տվել առաջին տեղադրությանը: Սակայն, մեր կարծիքով առավել հավանականը Թոռնավանի Աղ-չայի վերին հոսանքում տեղադրելն է: Մեր տեսակետն իր հիմնավորումն է գտնում հետևյալ փաստարկներում: Ամենից առաջ Բառիլովիտ-Աղիովիտ շփոթը պարզելուց և Բառիլովիտը տեղադրելուց հետո բացառվում է Թոռնավանը Մարմետ գետի վերին հոսանքում տեղորոշելը: Ա. Տ. երեմյանն իր կազմած քարտեզներում ձուաշ-ռոտ գավառի մեջ է մտցնում ձուաշ գետի որջ ավազանը: Բնականաբար, նման տեղադրությունից հետո նա ստիպված է Թոռնավանը տեղադրել Մարմետ գետի վերին հոսանքում: Իրականում, ձուաշ-ռոտ գետի ավազանը ոչ տնտեսական և ոչ էլ բնաշխարհագրական ամբողջություն չի կազմում: Նրա արևելյան մասը ճանապարհներով և հաղորդակցության այլ ուղիներով կապված է Արտազի, Ջարեվանդի և Մարդպետական երկրամասի հետ, իսկ արևմտյան հատվածը՝ Մարդաստանի և Հերի հետ: Երկու լեռնաբազուկներ, որոնք իրարից անջրպետվում են ձուաշ գետի կիրճով, միանգամայն անհաղորդակից են դարձնում ձուաշի ավազանի երկու մասերը: Եթե դրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ Կոգովիտից Հեր

<sup>1</sup> Թովմա Արծրունի, էջ 291, 303, 307:

գնացող մայրուղին անցնում էր Ճուաշի ավազանի արևմտյան մասով, կասկածներ չեն մնում, որ վերջինս պետք է հանդիսանար որևէ մեկ այլ գավառի տարածք: Թովմա Արծրունու տեղեկություններից կարելի է կատարել միայն մեկ եզրակացություն, որ Ճուաշի ավազանի արևմտյան մասը զբաղեցրել է Թոռնավան գավառը, որի կազմում, ինչպես շատ չանցած կհամոզվենք, գրտնրվել է Աղանդ-ռոտ գետի ավազանը: Կատարելով այս տեղադրությունը, կամ թե ակամա, կամ ենում ենք նոր բացատրություն տալ Թոռնավան անվանը: Հ. Հյուբշմանը այն կապում էր Թոռն անվան հետ և համեմատում Թոռնիկ անձնանվան հետ<sup>1</sup>: Թ. Հակոբյանը, ընդունելով հանդերձ Թոռնավան ձևի գոյությունը, նախապատվությունը տալիս է Թոնրավանին, կապելով վերջինս, հավանաբար, «թոնիր» հասկացության հետ<sup>2</sup>: Մեր կարծիքով, «Աշխարհացոյց»-ի մի շարք ձեռագրերում հանդիպող «Դուռնաան» տարընթերցումը պատահական չէ: Ըստ երևույթին, տեղական բարբառում «թոռն» նշանակում էր «դուռն» և տվյալ դեպքում նշանակում էր լեռնանցք<sup>3</sup>, իսկ լեռնանցքի հարևանությամբ գտնվող ավանը, դրա հետևանքով, կարող էր կոչվել «Թոռնաան»: Անտրամաբանական չէ կարծել, որ ուշ շրջանի գրիչները, իմանալով նրա նշանակությունը, սրբագրել են այն «Դուռնաան»: Քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով ավանը կարող էր վերածվել գյուղի, որի հետևանքով բնակավայրը կստանար «Թոռն գիւղ» կամ «գիւղ Թոռն» անունը: Հեր գավառի անմիջապես սահմանի վրա Ճուաշ-ռոտ գետի ավազանի արևմտյան մասում մինչև այսօր լեռնանցքից ոչ շատ հեռու գոյություն ունի Գյուղուր գյուղը, որը թերևս հին Թոռնավանն է: Մեր տեսակետի օգտին է խոսում այն հանգամանքը, որ հայկական մի շարք բարբառներում «դուռն» բառը հնչում է «թոռ» (Տիգրանակերտ), «տեռո» (Մոկր), «տո՛ռնը» (Ղարաբաղ), «դո՛ռ» (Ոզմի) և այլն<sup>4</sup>:

Թոռնավանի նման տեղադրությունը բնավ չի հակասում Թովմա Արծրունու VIII տեղեկությանը, որի համաձայն թշնամիները, ասպատակելով Մարդաստանը և գերեվարելով Լեկը, Աղզին, Կրեբիքը և ձահուկը, վերադարձին Կրճունիքի վրայով անցնում են Ճուաշ և Թոռնավան: Անձախիձորից քիչ հյուսիս գտնվում է Կուրջան-գյաղուկ լեռնանցքը, որը հինավուրց Կրճունիքի լեռնանցքն է, որի վրայով էլ թշնամին մտել էր Ճուաշ և Թոռնավան:

Ճուաշ կամ Ճուաշռոտ գավառը գտնվում է Ճուաշ-ռոտ կամ Աղ-չայ գետի միջին և ստորին հոսանքի շրջանում՝ տարածվելով մինչև Երասխ և Կո-

<sup>1</sup> Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 349:

<sup>2</sup> Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 190:

<sup>3</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ. Ա, Երևան, 1971, էջ 684:

<sup>4</sup> Անդ, էջ 685:

տոր<sup>1</sup> գետերը: Ճուաշ գավառի դիրքը՝ մի շարք հայտնի բնակավայրերի շնորհիվ, ուսումնասիրողներին քաջ հայտնի է, սակայն, օգտվելով առիթից, կամենում ենք տեղադրել Ճուաշ բնակավայրը: Ճուաշը սկզբնաղբյուրներում վկայված չէ, սակայն դատելով Ճուաշռոտ գետանունից, գետն իր անունն ստացել է այդ բնակավայրի անունից: Ժամանակի ընթացքում՝ հայերենի գրագրման որոշ օրինակությունների հետ կապված, Ճուաշը վերածվել է Ճուարշի, ինչպես Բասիլետոսը /Βασίλειος/՝ Բարսեղի, Մծբին-Մծուկինը՝ Մծուկնի, Աշարունիքը՝ Արշարունիքի և այլն: Հաջորդ փուլում Ճուարշը դարձել է Ճուրշ և ի վերջո ժողովրդական ստուգաբանության հետևանքով վերածվել է Չորսի, պահպանելով Չուրս բարբառային ձևը: Այլ խոսքով, ներկայիս Չորս կամ Չուրս բնակավայրը հանդիսանում է պատմական Ճուաշը:

Ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները<sup>2</sup>, Կասպուրականի նկարագրության ժամանակ «Աշխարհացոյց»-ի հեղինակը առաջնորդվել է որոշակի սկզբունքով: Գավառների նկարագրությունը կատարվում է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք երեք շարքով: Առաջին խումբը կազմում են Ռշտունիք, Տոսպ, Բողունիք, Արձիշակովիտ, Բառիղովիտ, Կուղանովիտ, Դառնի և Արբերանի գավառները: (8 գավառ):

Երկրորդ խումբը կազմում են Բուժունիք, Առնոյ ոտն, Անձաացիք, Տրպատունիք, Երուանդունիք, Մարդաստան, Արտազ գավառները (7 գավառ):

Երրորդ խումբը կազմում են Ակե, Աղբակ մեծ, Անձախիձոր, Թոռնաան և Ճուաշռոտ գավառները (5 գավառ):

Գավառների տեղադրությունը ցույց տվեց, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն իրոք առաջնորդվել է աշխարհագրական հաջորդականությամբ: Տրամաբանական էր կարծել, որ հիշյալ գավառներից դեպի արևելք պետք է գտնվեին մնացած գավառները՝ կազմելով գավառների չորրորդ խումբը, ծայրակետեր ունենալով Կրճունիքը և Մարանդը: Հ. Հյուբշմանը փորձել է «Ճուաշ-ռոտ մինչև ցերասխ...» արտահայտությունից հետո բնագրում ավելացնել «չիլից դոցա» բառերը, սակայն համոզվելով, որ այդ գավառների տեղադրությանը չի օգնում, ափսոսանք է հայտնել, որ «Աշխարհացոյց»-ում ոչինչ չի ասված 21-35-րդ գավառների աշխարհագրական դասավորության մասին<sup>3</sup>: Նիկ. Աղոնցը Կոտորից հյուսիս գտնվող Կուրջան բնակավայրի միջոցով, հենվելով Թովմա Արծրունու հաղորդումների վրա, տեղադրում է Կրճունիքը<sup>4</sup>: Մարանդը մինչև այսօր էլ գոյություն ունի և գտնվում է Թավրիզից հյուսիս-

<sup>1</sup> Կոչվել է նաև Կարմիր գետ, որի թարգմանությունն է Կրճուլ-չառ:

<sup>2</sup> Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 224-225: Ռ. ԱճՈՒԿ, նշվ. աշխ., էջ 315-318:

<sup>3</sup> Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 224:

<sup>4</sup> Ռ. ԱճՈՒԿ, նշվ. աշխ., էջ 317-318:

արևմուտք Զիլբիր-չայ գետի վերին հոսանքի շրջանում: Ուստի մնացած գավառները պետք է գտնվեին Կրճունիքի և Մարանդի միջև: Մակայն իրականության մեջ աշխարհագրական հաջորդականությունը չի պահպանվում և հիշյալ գավառները սփռված են Վասպուրականի ողջ տարածքում՝ Կոտոր գետից և արևմուտք, և արևելք ընկած հատվածներում: Ապացուցելով, որ մնացյալ գավառները չորրորդ շարք չեն կազմել, Ն.Արոնցը կասկած է հայտնել նրանց վավերականության մասին, առավել ևս, ինչպես նշում է նա նույն էջի 3-րդ ծանոթագրության մեջ, Թովմա Արծրունին ծանոթ չի եղել Պատսպարունի, Արտավանեան, Բագան և Գավեթան գավառներին<sup>1</sup>: Անդրադառնալով Վասպուրականի պատմիչ Թովմա Արծրունու այն տեղեկությանը, թե Գագիկ և Գուրգեն Արծրունիները ինչ ձևով բաժանեցին Վասպուրականի գավառները միմյանց միջև, Ն. Արոնցը ուշադրություն է դարձնում այն փաստի վրա, որ ըստ պատմիչի Գագիկ Արծրունուն անցած գավառները հնում կազմում էին հայր Մարդպետի կալվածները: Արոնցի կարծիքով, էական այն չէ, թե IX դարի պատմական բաժանման հետևանքով ծնունդ առած Գագիկ Արծրունու հայրենիքը համապատասխանում էր հայր Մարդպետի տիրույթներին, թե ոչ, այլ այն, որ Վասպուրականի մի մասը հնում կրել է մարդպետի անունը և կոչվել է Մարդպետական<sup>2</sup>: Հեղինակի կարծիքով, Մարդպետական անունը երբեմն փոխարինվում է Սեպհական տերմինով որպես աշխարհագրական հասկացություն, որի պատճառով միևնույն անձը մերթ կոչվում է Մարդպետական, մերթ Սեպհական եպիսկոպոս: Ն. Արոնցը, սեպհականը բխեցնելով Sepuhrakan-ից, այն համարում է առավել հին Vaspuhrakan-ի (Vaspuhrakan) համեմատաբար նոր ձևը և որ սկզբնաղբյուրներում նրանց զուգահեռ գործածությունը բացատրվում է նրանով, որ նրանք հարաբերում են միմյանց, ինչպես մասը ամբողջին<sup>3</sup>: Արդ, ինչպիսի տարածք էր ընդգրկում Մարդպետականը: Պատմահոր մի շատ արժեքավոր տեղեկությունից պարզվում է, որ Վաղարշակ արքան «ներքինս հրամայե ի նոյն ազգէ խզել և նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչև ցճուաշ և ցՆախճաւան, և նահապետութեան ազգին սա մեծարոյ»<sup>4</sup>: Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու Մարդպետության բուն տարածքի վերաբերյալ տեղեկություններից մենք նախապատվությունը տալիս ենք անշուշտ Պատմահոր վկայությանը, չնայած, ինչպես շուտով կհամոզվենք, իր մեջ պատմական ճշմարտություն

<sup>1</sup> Անդ, էջ 318: Ծանոթության մեջ սխալմամբ տպագրված է. «из числа сомнительных Патопагаруні, Артаванեան, Баган, Гавеթан знакомы даже Фоме»:

<sup>2</sup> Անդ, էջ 318-319:

<sup>3</sup> Անդ, էջ 319:

<sup>4</sup> Մովսես Խորենացի, էջ 112:

է պարունակում նաև Թովմա Արծրունու հաղորդումը: Համաձայն Պատմահոր, Մարդպետականը Ատրպատականի սահմաններից տարածվել է մինչև ճուաշ և Նախճաւան գավառները, իսկ չէ որ Վասպուրականի առաջին 20 գավառների տարածքը ընդգրկում է մինչև Նախճաւան գավառը և Կոտոր կամ Կարմիր գետն ընկած շրջանները: Արդյո՞ք այդ չի վկայում այն մասին, որ Վասպուրականի տարածքում Մարդպետականից բացի հնում գոյություն է ունեցել մեկ այլ վարչական շրջան, որը տարածքային առումով համապատասխանել է հիշյալ 20 գավառներին: Այս հարցադրման պատասխանը տալիս է Պտղոմեոսը:

.. Εν, δὲ τῷ λοιπῷ καὶ μεσημβρινώτερω τμήματι μεταξὺ μὲν Εὐφοράτου καὶ τῶν Τιγρίδος πηγῶν ἦ τε Ἀνζιτηνὴ καὶ ἡ ὑπ' αὐτὴν Θωσπίτις εἰτα ἡ Κορταία καὶ πόλεις ὁμοίως ἐν τούτῳ... (Իսկ մնացյալ և ավելի հարավ [ընկած] բաժնում՝ եփրատի և Տիգրիսի աղբյուրների միջև [գտնվում է] Անզիտենեն և նրանից ներքև Թոսպիտիսը, այնուհետև Կորտիան և նրանում նույնպես քաղաքներ [կան]...) <sup>1</sup>:

Ἄπ ἀνατολῶν δὲ τῶν τοῦ Τιγρίδος ποταμοῦ πηγῶν ἦ τε Βαγρασανὸν δηνὴ καὶ ὑπ' αὐτὴν ἡ Γορδουηνί. ἤς ἀνατολικότερα ἢ Κορταία καὶ ὑπ' αὐτὴν Μάρδοι πόλεις δὲ εἰσι καὶ ἐν τούτῳ ὁμοίως εἶδε... (Տիգրիս գետի աղբյուրների արևելա[կողմում] [գտնվում է] Բագրավանդենեն և նրանից ներքև Գորդունենեն, որից ավելի արևելք Կոտայան և նրանից ներքև Մարդքը: Նրանում նույնպես քաղաքներ կան...) <sup>2</sup>:

Պտղոմեոսն իր առաջին հաղորդման մեջ հիշատակում է Սեծ Հայքում Thospitis ստրատեգիա-մարզը, որի անունը հայերեն պետք է հնչեր Տոսպ կամ Տոսպք: Այլ խոսքով, արևմտյան Վասպուրականը, համաձայն Պտղոմեոսի, հանդիսացել է առանձին վարչական շրջան և կոչվել է Տոսպ կամ Տոսպք իր գլխավոր գավառի անունով: Ելնելով երկրորդ տեղեկությունից, կարելի է հաստատապես պնդել, որ Վասպուրականի արևելյան մասը կազմել է Μάρδοι-Mardi ստրատեգիա-մարզը, որը համապատասխանում է Մարդպետականին:

Սեծ Հայքի պտղոմեոսյան նկարագրությունը մեկընդմիջտ ցրում է այն պատրանքը, որ Վասպուրականը գոյություն է ունեցել մ.թ.ա. II դարում և համապատասխանում է Ստրաբոնի հիշատակած Basoropeda երկրանվանը <sup>3</sup>: Այդ տեսակետը, որ առաջ է քաշել Ղ. Ինճիճյանը <sup>4</sup>, հետագայում պաշտպանել են Հ. Քիպերթը, Հ. Գելցերը, Հ. Մարքվարթը և Հ. Մանանդյանը <sup>5</sup>: Հ.

<sup>1</sup> Claudii Ptolemaei Geographia, Voluminis Primi, Pars secunda, էջ 945:

<sup>2</sup> Անդ, էջ 947:

<sup>3</sup> Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, էջ 56-57. "...ἐκ Μηδων μὲν τὴν τε Κοσποανὴν καὶ Φωνίτιν καὶ Βασοροπέδαν..." (Մարերից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպետան...):

<sup>4</sup> Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 156:

<sup>5</sup> Վ.Մ. Կարդանյան, Մարդքը Վասպուրականում, տե՛ս ՊԲՀ, 1971, թիվ 3, էջ 57:

Հյուբշմանը հիմնովին մերժում է այդ տեսակետը, ցույց տալով, որ եթե Վասպուրական աշխարհը Ստրաբոնի ժամանակ էլ կրեր նույն անունը, ապա անպայման հիշատակվելու էր հին հայ մատենագրության մեջ: Սակայն անունն անծանոթ է Փավստոսին, Կորյունին, Ագաթանգեղոսին, Եղիշեին և Ղազար Փարպեցուն, իսկ Մովսես Խորենացին էլ այն հիշատակում է միայն մի անգամ<sup>1</sup>: Եթե դրան ավելացնենք այն հանգամանքը, որ Վանա լճի ավազանը, որ հանդիսացել է հայ ժողովրդի ձևավորման հնագույն կենտրոններից մեկը, իբր միացվել է Հայքին միայն մ.թ.ա. II դարում, ապա հիշյալ տեսակետը կզրկվի ամեն մի հիմքից<sup>2</sup>: Հիշյալ կարծիքը վերակենդանացնելու փորձ կատարեց վերջերս Ա.Նովոսելցևը, որը գրում է. «бывший селевкидский стратег Арташес (Артакий), после 190г. до н.э. ставший царем Великой, или Большой Армении, в числе прочих областей отнял у правителей Атурпатакана, или Малой Мидии, область Басоропеду, которая, очевидно, не что иное, как историческая область Веспуракан. Веспуракан же был расположен на северо-восток от озера Ван до Аракса, включая и район Масиса. Идентичность Басоропеды и Веспуракана очевидна, хотя имеются и иные точки зрения на данный вопрос»<sup>3</sup>: Այլ տեսակետ ասելով հեղինակն ի նկատի ունի Ա. Փերիխանյանի քննությունն այն մասին, որ *vāspuhrakān* նշանակում է «**ժառանգական**», հոր թողած ժառանգության տղայի կամ դստեր բաժինը, օժիտ և այլն<sup>4</sup>, սակայն, ելնելով դրանից, նա անմիջապես եզրակացնում է, որ Վասպուրականը, հավանաբար, եղել է ատրպատականյան իշխողների ժառանգական տիրույթը<sup>5</sup>: Ակադ. Ս.Ս. Երեմյանը բացառում է Վասպուրականի նույնացումը Βασσοροπέδα-ի հետ գտնում է, որ այն համապատասխանում է «**Աշխարհացոյց**»-ի մեջ հանդիպող **Պատսպարունիք** կամ **Պարսպատունիք** գավառին, որը նա տեղադրում է Արաքս գետի աջ ափին՝ Սյունիքի հարևանությամբ, ներկայումս Ղարադաղ կամ Ղարաջա-դաղ կոչված երկրամասում: Ըստ որում, հեղինակի կարծիքով, Բասորոպեդա-Պարսպատունիքը ընդգրկել է 5550կմ<sup>2</sup> տարածություն<sup>6</sup>: Ամբողջությամբ համաձայնելով հեղի-

<sup>1</sup> Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 93:

<sup>2</sup> Վասպուրական տերմինն, անշուշտ, իրանական փոխառություն է, ուստի այն վաղ շրջանում փոխառնվելու դեպքում պետք է ծներ **Վասպուհական** ձևը:

<sup>3</sup> А.П. Новосельцев, О местонахождении библейской «горы Арарат», տե՛ս «Восточная Европа в древности и средневековье», Сборник статей, Москва, 1978, էջ 63:

<sup>4</sup> А.Г. Периханян, Сасанидский судобник, Ереван, 1973, էջ 533:

<sup>5</sup> А.П. Новосельцев, նշվ. աշխ., էջ 63:

<sup>6</sup> «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, էջ 17, 531: Ս.Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 77:

նակի հետ Բասորոպեդայի՝ Վասպուրականի հետ չնույնացման հարցում, մենք չենք կիսում Ս.Ս. Երեմյանի տեսակետը Բասորոպեդան Պարսպատունիքին համարժեք հայտարարելու և վերջինս էլ Ղարադաղում տեղադրելու խնդրում: Ընդամենը 50 զինվոր մարտադաշտ դուրս բերող Պարսպատունիքի իշխանը<sup>1</sup> չէր կարող տիրել այդպիսի մեծ տարածքի և, որ կարևորն է, ինչպես ցույց կտա հետագա քննությունը, Պարսպատունիքը չէր կարող երբեք գտնվել Կարմիր կամ Կոտոր գետից արևելք ընկած շրջանում: Ի մի բերելով վերագրյալը, գտնում ենք, որ Պտղոմեոսի դարաշրջանում և նրանից էլ հետո երկար ժամանակ Վասպուրական աշխարհն այն տեսքով, ինչպես հանդիպում է «**Աշխարհացոյց**»-ում, դեռևս չէր ձևավորվել: Մինչև Կարմիր գետն ընկած արևմտյան Վասպուրականը կազմում էր **Տոսպ** կամ **Տոսպը** աշխարհը, իսկ Կարմիր գետից արևելք հատվածը՝ **Մարդպետական աշխարհը**:

Այժմ անցնենք հաջորդ 15 գավառների տեղադրությանը և վերլուծությանը: Այսպես կոչված չորրորդ խմբի գավառները ցրված են Վասպուրականի ողջ տարածքով մեկ: Ինչպես վերը նշեցինք, Ն. Արտնցը Կրճունիքը տեղադրում է Կուրջան գյուղի շրջանում, որը գտնվում է Կոտորի արևմտակողմում: Այդ տեղադրությունը անվերապահորեն համապատասխանում է Թովմա Արծրունու հաղորդած տեղեկություններին<sup>2</sup>: Հաջորդ **Մեծունիք** գավառը, դասելով Արծրունյաց պատմիչի բերած արժեքավոր տեղեկությունից, գտնվելու էր Բառիլովիտ և Պալունիք գավառների մերձակայքում: Նման պարագաներում **Մեծունիքը** պետք է գտնվեր կամ Մարմետ գետի հովտում՝ Բառիլովտից արևմուտք, կամ Արճիշակ գետի վերին հոսանքում՝ Բառիլովտից հարավ: Այդ հարցին մեկընդմիջտ պատասխանելու համար ոչ պակաս կարևոր է Պալունիքի տեղադրությունը: Ս.Ս. Երեմյանը Պալունիքը տեղադրում է Մարմետ գետի միջին հոսանքում, որտեղ իբր միջնադարում գտնվել է Պղուանք ավանը, որը համապատասխանում է ներկայիս **Պողանց գյուղին**<sup>3</sup>: Տեղադրությանը մենք համաձայն ենք, սակայն չենք կիսում Պղուանքը Պողանցի հետ նույնացնելու միտումը: Թովմա Արծրունին որոշակի վկայում է, որ Պղուանս գյուղը գտնվել է «ի գաւառին Լումբայ կոչեցյալ Փարակ»<sup>4</sup>: Միաժամանակ հայտնի է, որ նույն Փորակում գտնվել է Սևան ամրոցը, որի ավերակները մինչև այժմ էլ պահպանվել են և կոչվում են Սեվան կամ Սեյվան-կալա<sup>5</sup>: Այս տեղեկություն-

<sup>1</sup> Տե՛ս «Ջորանամակ», տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 251:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 283, 291:

<sup>3</sup> Ս.Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 76:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 309:

<sup>5</sup> Н. Адонц, նշվ. աշխ., էջ 317: Տե՛ս նաև ռուսական 5-վերստանոց քարտեզի համապատասխան պլանշետը:

ները բացառում են Պողանսի և Պողանցի նույնացումը: Եթե ընդունենք, որ Պողանսը իրոք կապվում է Պալունիների տոհմանվան հետ, ապա ստիպված ենք Պալունիքը տեղադրել Լիմբի Փորակում, որն աշխարհագրական տեսակետից անհնարին է, որովհետև Գուրգեն Արծրունուն անցած Արձիշակովիտը ընդհանուր սահման չէր ունենա նրա մյուս տիրույթների հետ: Բնականաբար, անվերապահորեն ընդունում ենք Ս.Ս. Երեմյանի Պալունիքի տեղադրությունը Պողանց գյուղի շրջանում, Մարմետի գետահովտում: Պալունիքի հիշատակվելը Բառիղովտից անմիջապես հետո, կարծում ենք, որ խոսում է նրանց հարևանության օգտին: Եթե Պալունիքը գտնվում էր Բառիղովտի հարևանությամբ Պողանց գյուղի շրջակայքում, ապա Մեծնունիքի տեղադրությունը նույն գետահովտում, ինչպես կատարում է Ս.Ս. Երեմյանը,<sup>1</sup> հնարավոր չէ: Ուստի վերը բարձրացված տեսակետներից առավել հավանականը երկրորդն է: Մեծնունիքը պետք է գտնվեր Բառիղովտից հարավ Արձիշակ գետի վերին հոսանքի շրջանում: Մեծնունիքը հանդիպում է բազմաթիվ տարընթերցումներով. Մեծնունիք, Վժնունիս Մեծկունիք, Վրջունիք, Վրընջունիք, Վրնճունիք: Թովմա Արծրունու մոտ հանդիպում է (նրա ձեռագրերից մեկում) Մեծնունիք ձևը<sup>2</sup>: Ղ Խնձիճյանի կարծիքով Պվնի ժողովում հիշատակված Մեծնունեաց եպիսկոպոսը պետք է լինի Մեծնունյաց<sup>3</sup>: Կարծում ենք, որ Մեծնունիք ձևը գրական է, որի կողքին գոյություն է ունեցել բարբառային Մեծնունիքը, որի մեջ «Մեհ»-ը կամ «Մահ»-ը նույնպես նշանակվում է «մեծ»: «Մ»-ի և «ժ»-ի շփոթի հետևանքով առաջացել է Մեծնունի ձևը, որն իր հերթին ծնել է՝ «մ»-ի և «վ»-ի գրչական սխալի հետևանքով, Վժնունիք տարընթերցումը: Վժնունիքի հանդես գալուց հետո Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի ազդեցության ներքո<sup>4</sup> գրիչների համար բնավ դժվար չէր նրա մեջ նոր իմաստ տեսնել և սրբագրել Վրջունիք, Վրընջունիք կամ Վրնճունիք<sup>5</sup>:

Գուկան գավառը և Արոնցը և Ս.Ս. Երեմյանը իրավացիորեն տեղադրում են Խոշաբ գետի ստորին հոսանքում, որտեղ գտնվում է Գուկանց գյուղը<sup>6</sup>: Վերջինս Ղևոնդ պատմիչի մոտ հիշվում է որպես Ռշտունյաց գավառի

<sup>1</sup> Ս.Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 70: Պալունյաց իշխանը մարտադաշտ կարող էր դուրս բերել 300 զինվոր, ուստի ենթադրել, թե Պալունիքը միայն զբաղեցնում էր Պողանցի շրջակայքը, հիմնավոր չէ: Այն տարածքը, որ Ս.Ս. Երեմյանը հասկացնում է Մեծնունիքին, մեր կարծիքով, պետք է մտներ Պալունիքի մեջ:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 282:

<sup>3</sup> Ղ Խնձիճյան, էջ 212:

<sup>4</sup> Մովսես Խորենացի, էջ 83:

<sup>5</sup> Հնարավոր է անգամ, որ նախնական է Մեծնունիք ձևը, որը թերևս մարական ծագում ունի: Վերջինս էլ իր զարգացման ընթացքում ծնել է և Մեծնունիք և Մեծնունիք ձևերը:

<sup>6</sup> Н. АДОМ, նշվ. աշխ., էջ 318: Ս.Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 48:

բնակավայր<sup>1</sup>: Ոչ մի դժվարություն չի ներկայացնում Աղանդ-ռոտ գավառի տեղադրությունը, որովհետև գավառանունը պահպանվել է Կարմիր կամ Կոտոր գետի ձախափնյա վտակ Ալանդ-դերեի կամ Ալանդ-չաքի անվան մեջ: Ալանդի գետավազանը գտնվում է Անձախիձորից հյուսիս, Վասպուրականի լեռների արևելակողմում: Նախքան Պասպատունիք-Պարսպատունիքի տեղադրությանն անցնելը, անդրադառնանք Արտաշեսեան գավառի դիրքին, որը նույնպես հայտնի է: Արտաշեսեանը գտնվել է Վանա լճի արևելյան ափին, ներկայիս Արտամետ բնակավայրի շրջակայքում, որովհետև Արտամետը հիտմ կրել է նաև Արտաշեսեան ավան անունը<sup>2</sup>: Մեզ համար անհասկանալի շարժառիթներով Ս.Ս. Երեմյանը Արտաշեսեան գավառը նույնացրել է Արտավանեան գավառին և «Աշխարհացոյց»-ի համապատասխան հատվածը սրբագրել է «զԱրտաշեսեան, (որ է) Արտաւանեան»<sup>3</sup>: «Աշխարհացոյց»-ի և ոչ մի ձեռագիր նման նույնացման ամենադուրյզն հնարավորություն անգամ չի տալիս, ուստի, ելնելով թեկուզ այն հանգամանքից, որ այդ սրբագրման հետևանքով պակասում է Վասպուրականի գավառների քանակը, մենք այն ընդունել չենք կարող: Ավելին, դատելով Արտավանեանին հաջորդող գավառների դիրքով, Արտավանեանն, ամենայն հավանականությամբ, գտնվել է Մարդպետականի հատվածում՝ Կոտոր կամ Կարմիր գետից արևելք ընկած շրջանում:

21-25 և 27-րդ գավառների տեղադրությունը արևմտյան Վասպուրականում, ուր մինչ այդ մենք տեղադրել ենք առաջին քսան գավառները, մեզ հուշում է մի շատ կարևոր իրողության մասին: Բոլոր նոր գավառները, որոնք ավելի շուտ գավառակներ են, իրենցից ներկայացնում են իշխանական փոքրիկ տիրույթներ, որոնք, անկասկած, Մեծ Հայքի թագավորության ավատականացման արդյունք էին, երբ ժամանակի ընթացքում առանձին ավատատիրական տիրույթը ձեռք էր բերում վարչական միավորի իրավունք: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, օգտվելով հին արխիվային նյութերից, սկզբում տվել է Տոսպի գավառների ցուցակը, որից հետո ավելացրել այն գավառանունները, որոնք հանդես էին եկել Մեծ Հայքի թագավորության քաղաքական-տնտեսական զարգացման հետևանքով: Ամբողջական դարձնելով արևմտյան Վասպուրականի գավառների թվարկումը, հեղինակն այնուհետև անցել է արևելյան Վասպուրականի գավառների նկարագրությանը: Հարցը այս տեսանկյունից քննարկելու դեպքում Աղանդ-ռոտ և Արտաշեսեան գավառների միջև հիշատակվող Պարսպատունիքը պետք է անպայման գտնվեր արևմտյան Վասպուրականում, ուստի նրա դիրքորոշումը նարադաղում պատճառաբան-

<sup>1</sup> «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», էջ 26:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 146, 242:

<sup>3</sup> Ս.Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 41, 109:

ված չէ: Մենք բնավ էլ չենք կարծում, որ մեր Պարսպատունիքի տեղադրությունը գերծ է թեականությունից, սակայն համոզված ենք, որ այն առավել մոտ է իրականությանը: Դիմենք մեզ հասած կցկտուր տեղեկություններին: Թովմա Արծրունու մի շատ արժեքավոր տեղեկությունից, որ նա հավանաբար քաղել է մեզ անհայտ մի հին աղբյուրից, պարզվում է, որ Երվանդ Վերջին արքայի օրոք Մեծ Հայքի թագավորության սահմանը անցնում էր Անձախիձոր գավառի արևելակողմով<sup>1</sup>: Արծրունյաց պատմիչի մյուս հաղորդման համաձայն, Երվանդ արքայի օրոք Ատրպատականի մեջ է եղել նաև Ջարեվանդ գավառը, որն այդպես էլ կոչվում է «Ջարաանդ Ատրպատականի»<sup>2</sup>: Տվյալ քաղաքական կացության պայմաններում Վանա լճի ավազանը Մարաց կամ Ատրպատականի թագավորության հետ կապող գլխավոր մայրուղին անցնում էր Անձախիձորով: Սահմանագիտին Արձախիձորի անցքը փակող ամրությունը, դատելով Βασσοροπέδα և Պա[ր]սպատունիք տեղանուններից, պետք է կոչվեր Պաս, որ պահլավերեն նշանակում է պահ կամ պահակ<sup>3</sup>: Հայտնի է, որ հայերենում կամ պարսկերենում հանդիպող շատ անուններ, որոնք գրվում են «պ»-ով, տառադարձվում են հունարեն «բ»-ով<sup>4</sup>: Նման բացատրության դեպքում Βασσοροπέδα-ն կազմված կլինի Βάσ-Պաս և οροπέδα մասերից, թարգմանվելով որպես կիրճի ամրության լեռնադաշտ<sup>5</sup>: Հետևաբար Βασσοροπέδα-ն համապատասխանում է իր տարածքով «Աշխարհացոյց»-ի Պարսահայք կամ Պարսկահայք աշխարհին: Պաս ամրության բերդապահն, անշուշտ, կոչվելու էր Պասպատ, որն իր իշխանությունը ժառանգական դարձնելուց հետո հիմք էր դնելու Պասպատունիների փոքրիկ իշխանությանը: Բնաշխարհագրական տեսակետից Պասպատունիքը զբաղեցնելու էր Հերից դեպի արևմուտք Կոտորի ավազանում գտնվող Գոգհովիտը և ավելի շատ վերաբերելու էր Անձախիձորին: Ուրմիո լճի արևմտյան ափագիծը հայկական թագավորությանն անցնելուց հետո այդ գոգհովիտն անցնելու էր Անձախիձորին, որովհետև ստրկատիրության շրջանում վարչական շրջանները ստեղծելիս, առաջին հերթին առաջնորդվում էին բնաշխարհագրական ամբողջականության և տնտե-

սական արդյունավետության սկզբունքներով: Ըստ որում, նման անցումը կատարվելու էր Տրդատ Ա-ի վարչական նորամուծությունների շրջանում: Ժամանակի ընթացքում Պասպատունիքը վերածվեց Պարսպատունիքի վերջ հիշված լեզվական օրինաչափության համաձայն<sup>1</sup>: Ավատատիրական հարաբերությունների զարգացման շրջանում Պարսպատունիքի իշխանությունը վերածվեց առանձին գավառի: IX դարում Գագիկ և Գուրգեն Արծրունիներն իրենց տիրությունը սահմանազատելիս, ըստ երևույթին այլևս չէին տիրապետում Պարսպատունիքին, ուստի այն չի հիշատակվում Թովմա Արծրունու երկում: Ամենայն հավանականությամբ, Պարսպատունիքն անցել էր Հերի արաբական ամիրայությանը, որն առանց հիշյալ փոքրիկ գավառակի լրիվ անպաշտպան էր մնում Վասպուրականի իշխանության նկատմամբ: Պարսպատունիք, Արտավանեան, Բագան և Գաւթան գավառներին Թովմա Արծրունու անձանոթ լինելը առանձին հիմնավորվում չի պահանջում, որովհետև Պարսպատունիքը, որ արևմտյան Վասպուրականում էր գտնվում և հաջորդ երեքը, որ Մարդպետականի տարածքում էին, չէին մտնում ոչ Գագիկ և ոչ էլ Գուրգեն Արծրունիների տիրություններում, ուստի Արծրունյաց պատմիչը ոչ մի անհրաժեշտություն չուներ դրանք հիշատակելու:

Այժմ անցնենք արևելյան Վասպուրականի կամ Մարդպետականի տարածքում գտնվող գավառների տեղադրությանը: Արտավանեան գավառը, ինչպես տեսանք, Ս.Տ. Երեմյանը նույնացնում է Արտաշիսեանի հետ: Որչափ մեզ հայտնի է, այլ տեղադրություններ չեն եղել: Գավառի ծագումը մենք կապում ենք Պարսկաստանում պարթև Արշակունիների հարստության անկման և Սասանյանների իշխանության գլուխ անցնելու հետ: Վերջին պարթև Արշակունի Արտավանի հարազատները և շատ կողմնակիցներ, Սասանյան Արտաշիրից փրկվելով, ապաստան գտան Մեծ Հայքի թագավորությունում: Ըստ երևույթին, հայոց արքունիքը նրանց կալվածքներ տվեց Մարդպետական կողմերում՝ ստեղծելով Արտաւանեան գավառը: Թե մասնավորապես որտեղ էր այն տեղադրվում, դժվար է ասել, որովհետև ոչ մի հուշող տեղեկություն չի պահպանվել: Թեականորեն մենք այն տեղորոշում ենք Ղարադաղում, որտեղ մի քանի տեղանուններ, կարծես թե, խոսում են դրա օգտին: Հնարավոր է, որ Արտավանեան տեղանվան հետքերը պահպանում է Վասստան գյուղը: Պարթև Արշակունիների այստեղ գտնվելու մասին կարող է վկայել Արտաշիր գյուղը: Այդ տեղադրությունից հետո Բագան-Բաքանը պետք է գտնվեր Արտավանեան գավառից դեպի արևմուտք մինչև Կոտոր և Երասխ գետերի ջրկիցը<sup>2</sup>:

<sup>1</sup> Նույն ձևով կարծում ենք, որ Պարսկահայք աշխարհը սկզբում կոչվելու էր Պասահայք, որը վերածվելու էր Պարսահայքի, ինչպես վկայված էր Թովմա Արծրունու երկում, իսկ վերջինս էլ գրիչների ստուգաբանության հետևանքով՝ Պարսկահայքի:

<sup>2</sup> Ս.Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 44:

<sup>1</sup> Թովմա Արծրունի, էջ 55. «...դռնայ երուանդ առ սահմանօքն Ատրպատականի ի ձորն Անձախից: Իսկ Անձախից ձոր վասն այնր կոչեցին. բազում ունելով ինչս ի կոհակս բարձրասանդակս, եւ ի կիրճս նրբակասս, ի գերծս եւ ի խոխոմս ձորոյն ի թոխ եւ ի բոք երկրին անբնակ մարդկան յասպատակէ հինիցն Երուանդայ, եւ երթայ գետեղի ի Լախձաւանն ասանի յոստանին Վասպուրական աշխարհին»:

<sup>2</sup> Անդ, էջ 53:

<sup>3</sup> «Պահլավերեն - պարսկերեն - հայերեն - ռուսերեն - անգլերեն բառարան», կազմեց Ռ. Աբրահամյան, Երևան, 1965, էջ 296. « ւ - պահ, պահակ»:

<sup>4</sup> Օրինակ՝ Կապաղակ — (Κάβαλλάκι):

<sup>5</sup> οροπέδα հունարեն նշանակում է լեռնադաշտ:

ներկայումս Միշոուդադ կոչվող լեռնաշղթայից դեպի հարավ՝ մինչև Ուրմիո լիճը և Հաջի-չայ գետը, պետք է գտնվեր, հավանաբար, **Գաբիթեան** գավառը: Ա.Տ. Երեմյանը, կատարելով այս տեղադրությունը, գտնում է, որ **Գաբիթեանը** պետք է Կասպուտան անվան տեղական ձևը լինի<sup>1</sup>:

Մարդպետականի ավատատիրական զարգացումն այստեղ ևս ծնեց նոր գավառներ ի դեմս **Գազրիկանի, Տագրեանի** և **Վարաժնունիքի**: Ա. Տ. Երեմյանը **Գազրիկանը** ենթադրաբար տեղադրում է Տարօնոյ գետի (այժմ Նազլուչայ) ակունքների շրջանում, որտեղ գտնվում է Կասրիկ գյուղը<sup>2</sup>: Տեղադրությունն անընդունելի է մի շարք պատճառներով: Ամենից առաջ Կասրիկ անունը կրող մի քանի բնակավայրեր կան հարավային Վասպուրականի տարածքում, ուստի անհասկանալի է, թե ինչո՞ւ է առաջնությունը կամ նախապատվությունը տրվել հատկապես այդ Կասրիկին: Շատ տարօրինակ է, որ Գուրգեն Արծրունու տիրույթներում գտնվող գավառները թվարկելիս, Արծրունյաց պատմիչը Մեծ Աղբակ, Փոքր Աղբակ, Ակե, Տամբեր, Տագրեան, Ըննայ և Ջարեհավան գավառների շարքում չի հիշատակում **Ջարեհավանի** և **Մեծ Աղբակի** միջև գտնվող **Գազրիկանը**<sup>3</sup>, որտեղ պետք է նա գտնվեր համաձայն Երեմյանի տեղադրության: **Գազրիկանը** տեղ չի գտել նաև Թովմա Արծրունու մեկ այլ տեղեկության մեջ, որտեղ դեպքերը ծավալվում են Աղբակի, **Ջարեհավանի** և Ակեի շրջանում. «... եւ անդ լինէին ժողովեալ ամենայն բազմութիւն աշխարհակոյտ ամբոխից գաղթականաց գաւառացն կողմանցն Աղբակայ, **Ջարեհավանի** եւ Ակեոյ. եւ ի լեռնակողմանցն Աղզոյ, եւ Ոստն Առնոյ, մի կողմն ի Ջոդա լեռնէն եւ անդր»<sup>4</sup>: Որոշ հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ Թովմա Արծրունին Մուսեի դեմ դուրս եկած Արծրունյաց և նրանց դաշնակից ու ենթակա իշխաններին հիշատակելիս, տալիս է **Գազրիկն Ապուհարազ** իշխանի անունը<sup>5</sup>, որն անկասկած **Գազրիկան** տոհմից էր: Թերևս այս վկայությունից կարելի է եզրակացնել, որ **Գազրիկանը** գտնվել է Արծրունյաց իշխանների տիրույթների մերձակայքում, սակայն **Գազրիկ Ապուհարազի** հետ մեկտեղ Սմբատ Ապահունու, Վահան Հավնունու, Վարդան **Գաբաթեղենի** և այլոց անունների հիշատակությունն այդ եզրակացությունը դարձնում է անիմաստ: Անշուշտ, Սմբատը, Վահանը և Վարդանը համապատասխանաբար Ապահունիքի, Հավնունիքի և Գաբեդյանքի իշխանները չէին, որովհետև Թովմա Արծրունին նրանց համարում է «այլը ի նախարարացն Վասպուրա-

կան իշխանին»<sup>1</sup> և կրում էին լոկ իրենց տոհմանունները: Ուստի և ոչ մի ուսումնասիրողի մտքով չի անցնի Ապահունիքը, Հավնունիքը կամ Գաբեդյանքը տեղադրել Վասպուրականում: Այդպես էլ **Գազրիկ Ապուհարազի** հիշատակությունը այս տեղեկության մեջ բնավ չի կարող հաստատուն կռվան համարվել **Գազրիկանը** **Ջարեհավանի** արևմտակողմում տեղադրելու համար: Այլևայլ վայրերից հայ իշխանների Վասպուրականում հայտնվելը պայմանավորված էր արաբական տիրապետության հաստատմամբ: Համեմատաբար մեծ ռազմական ուժ չներկայացնող իշխանությունները վերացվում էին արաբների կողմից, իսկ նրանց իշխաններն ապաստան էին գտնում հայ անվանի ու հզոր նախարարների մոտ: Մեծ Հայքի թագավորության որոշ հատվածներում, չնայած հայ ժողովրդի համառ և բուռն դիմադրությանը, օտար նվաճողների վարած կրոնական և տնտեսական խտրական քաղաքականության հետևանքով տարածվեց մահմեդականությունը, որի հետևանքով, շատ հաճախ, հայկական իշխանական ընտանիքները, մահմեդականություն չընդունելու պատճառով, ստիպված էին թողնել իրենց տիրույթները և հեռանալ Հայաստանի լեռնային անառիկ շրջանները՝ հովանավոր փնտրելով հայ հզոր իշխանների մեջ: Մարդպետականի տարածքը, դժբախտաբար, Հայաստանի այն մասերից էր, որտեղ մահմեդականությունը, մի շարք պայմանների հետևանքով, լայնորեն տարածվեց, ստեղծվեցին արաբական ամիրայություններ, որոնց ճնշման ներքո հայ իշխանական ընտանիքները թողեցին այդ երկրամասը, ապահովություն փնտրելով Վասպուրականի արևմտյան մասում: Դատելով մի քանի անուղղակի վկայություններից, և **Գազրիկան** և **Տագրեան** և **Վարաժնունիք** տոհմերը հեռացել են իրենց բնիկ վայրերից և հաստատվել Արծրունյաց տիրույթներում: Արդ, այնուամենայնիվ, որտեղ էր գտնվում **Գազրիկանը**: Հնարավոր է, որ **Գազրիկան** գավառի անվան արձագանք լինի **Ջարագան** գյուղանունը: Վերջինս գտնվում է Մարանդից արևելք, **Զիլբիր-չայի** ակունքների շրջանում<sup>2</sup>: Մեր տեղադրությունն, անշուշտ, խիստ թեական է, սակայն որոշակի է այն հանգամանքը, որ **Գազրիկանը** կարող էր գտնվել միայն ու միայն **Մարդպետականի** տարածքում<sup>3</sup>:

<sup>1</sup> Անդ, էջ 46:

<sup>2</sup> Տե՛ս Ռուսական 5-վերստանոց քարտեզը:

<sup>3</sup> Եւ Աղոսքը ևս հաված է եղել **Գազրիկանը** տեսնելու Ատրպատականի սահմանագլխին, ուստի անորոշ գրել է. «Малоизвестные княжества Бакан, Патспаруни, Газрикан, Вижануни и Важнуни, Човаршян, Тайгрян и другие примыкали большей частью, вероятно, к атропатенской границе. Эти фамилии не могут претендовать на большую древность; большинство из них относится к эпохе Васпураканского царства (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 321): Դժվար է համաձայնվել հեղինակի այն մտքի հետ, թե հիշյալ իշխանությունների մեծ մասը հանդես է եկել Վասպուրականի թագավորության դարաշրջանում:

<sup>1</sup> Անդ, էջ 46:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Թովմա Արծրունի, էջ 283:

<sup>4</sup> Անդ, էջ 160:

<sup>5</sup> Անդ, էջ 121:



Որոշակի հետաքրքրություն և բարդություն է ներկայացնում **Տագրեանի** տեղադրությունը: Համաձայն **Ս.Ս. Երեմյանի** տեղադրության վերջինս գտնվել է Խանասորի լեռնանցքի և Աղբակ գետի միջև, որտեղ այս գավառի անունը հիշեցնում է **Դեյգր** վայրը, որը հարգարժան հայագետի կարծիքով Դարեհ Ա-ի Բիսիթունի արձանագրության Տիգրե (**Tigre**) տեղանվանը պետք է համապատասխանի<sup>1</sup>: Տագրեանը Տանգրեան գրությամբ հանդիպում է Գուրգեն Արծրունու տիրույթներում և հիշատակվում է Աղբակ Մեծ և Փոքր, Ակե, Տամբեր գավառներից հետո և Ըննայ, Ջարեհավան գավառներից առաջ<sup>2</sup>: Հիշյալ տեղեկությունը կարելի է մեկնաբանել երկու ձևով: Առաջին, որ գավառները թվարկված են հետևյալ հաջորդականությամբ. Աղբակ Մեծ և Փոքր, Ակե, Տամբեր (արևմուտքից արևելք) և Տագրեան, Ըննայ և Ջարեհավան (արևմուտքից արևելք): Եթե իրոք այսպիսին է եղել հիշատակման կարգը, ապա **Ս.Ս. Երեմյանի** տեղադրությունը միանգամայն արդարացված է: Հնարավոր է նաև երկրորդ տարբերակը, երբ գավառները հիշատակվում են շրջանաձև. Աղբակ Մեծ և Փոքր, Ակե, Տամբեր (Տամբերը տարածվում է մինչև Ուրմիո լիճը, թվարկումը կատարվում է արևմուտքից արևելք), և Տագրեան, Ըննայ ու Ջարեհավան (թվարկումը շրջվում է և կատարվում արևելքից արևմուտք): Այն հանգամանքը, որ Թովմա Արծրունին հստակ պատկերացնում է Մեծ Հայքի վարչական բաժանումը ըստ «**Աշխարհացոյց**»-ի և գիտի, որ Տամբերը, Ըննան և Ջարեհավանը Պարսկահայքի գավառներ են, իսկ վերոհիշյալ վկայության մեջ Տագրեանը հանդես է գալիս Տամբերից հետո, մենք նախապատվությունը տալիս ենք երկրորդ տարբերակին: Այդ դեպքում, ինչպես և բխում է Վասպուրականի գավառացանկի ներքին տրամաբանությունից և, Տագրեանն իրոք պետք է գտնվի Մարդպետականի տարածքում, Պարսկահայքից արևելք: Ուրմիո լճի հյուսիսային ափին կա մի բնակավայր, որ ցարական և արդի քարտեզների վրա նշված է **Չեգրեվան** անունով: Կարծում ենք, որ կատարվել է **տ > չ** հնչյունափոխություն և հնում բնակավայրը պետք է կոչվելիս լիներ **Տեգրեվան** կամ **Տեգր ավան**, որի տիրակալը կկոչվեր **Տագրեան**:

Որքան մեզ հայտնի է, ինչպես վերը նշվեց, Վարաժնունիքի տեղադրության փորձ կատարել է միայն **Ս.Ս. Երեմյանը**: Նրա կարծիքով այն գտնվել է, հավանաբար, Սարխալան գետակի (Ջուլա-չայի վտակը) ձորում, որտեղից ճանապարհը տանում է դեպի Խանասորի լեռնանցքը և Վասպուրականի ներքին գավառները<sup>3</sup>: Հեղինակը չի բացատրում իր տեղադրության շարժառիթները, սակայն մենք ինչպես արդեն ասել ենք, կարծում ենք, որ նա առաջ-

<sup>1</sup> **Ս.Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 84:

<sup>2</sup> **Թովմա Արծրունի**, էջ 283:

<sup>3</sup> **Ս.Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 82:

նորդվել է նույն հիմունքներով ինչ **Թովմա Արծրունու** երկի թարգմանիչ **Վ.Վարդանյանը**: Այսպես. Արծրունյաց պատմիչը, խոսելով Գուրգեն մարզպանի (Արծրունի) դեպի Պարսկահայք կատարած արշավանքի մասին, գրում է. «... եւ ելեալ ի Յաղամակերտ քաղաքէ յինն ժամու ուրբաթու աւուրն, եւ անցեալ ընդ ծովակն Յըմբայ, եւ ընդ Վարազի Ջարնհաւանի: Եւ ընդ այգն ընդ առաւօտն յԸննայ Յամաց գետոյ, եւ գիշերագնաց հասեալ մինչ ի Տարօնայ կոչեցեալ գետ»<sup>1</sup>: Այս հատվածը **Վ. Վարդանյանը** որոշ չափով խմբագրել է և թարգմանել. «Դուրս եկավ Հաղամակերտ քաղաքից՝ ուրբաթ օրվա իններորդ ժամին, անցավ Ըմբեա ծովակով, Վարաժնունիքով և Ջարեհավանով, այգաբացին հասավ Ըննայի Համաց գյուղը և գիշերով մինչև Տարոնայ կոչված գետը»<sup>2</sup>: Ծանոթագրությունների մեջ, անդրադառնալով իր սրբագրությանը, **Վրեժ Վարդանյանը** գրում է, որ բնագրի «**ընդ վարազի**»-ն պետք է ուղղել «**ընդ Վարաժնունիս**», որը փոքրիկ գավառ էր Վասպուրականում: Կամենալով իր միտքն առավել հիմնավոր դարձնել, նա գտնում է, որ «Վարազ» բառը անհարիր է խոսքի իմաստին, որից պետք է մակաբերել, որ Գուրգենի հեծելախումբն անցել է հենց Վարաժնունիքով, որտեղից ուղիները տանում էին դեպի Խանասորի լեռնանցք և Վասպուրականի կենտրոնական շրջաններ<sup>3</sup>: Ըստ էության, **Ս. Երեմյանն** է «**ընդ վարազի**»-ն հասկացել «**Վարաժնունիքով**» և ըստ այդմ էլ տեղադրել քարտեզում, իսկ **Վ. Վարդանյանը**, ձեռքի տակ ունենալով այդ տեղադրությունը, կատարել է բնագրային սրբագրում: Հիշյալ տեղանքին քաջատեղյակ ուսումնասիրողը, ելնելով Թովմա Արծրունու տվյալներից, երբեք այդպիսի տեղադրություն չէր կատարի: Խանասորի լեռնանցքով Հաղամակերտից եկող ճանապարհը մուտք է գործում Սարխալան գետակի հովիտը և այնուհետև՝ լեռնաբազուկը կտրելով, մտնում Դըզըլ-բենդ գետակի ձորակը և այնուհետև Ջուլա-չայի ավազանը: Եթե ընդունենք, որ Վարաժնունիքի տեղադրությունը և բնագրային ճշտումը իրավացիորեն են կատարված, ապա պետք է ընդունենք, որ Գուրգեն Արծրունու զորամասերը սկզբում անցել են Վարաժնունիքով, իսկ այնուհետև Ջարեհավանով: Սակայն որքան էլ փոքր տարածություն զբաղեցնեն Վարաժնունիքը, նրա Սարխալան գետակի ավազանում տեղադրելու դեպքում, Արծրունյաց իշխանը ստիպված կլիներ Վարաժնունիքից անմիջապես մուտք գործել Ըննայ, առանց Ջարեհավանի գավառ մտնելու: Իսկ եթե ընդունենք, որ նա, այնուամենայնիվ, մտել է Ջարեհավան, ապա նա Տարոն գետին կմոտենար առանց

<sup>1</sup> **Թովմա Արծրունի**, էջ 292:

<sup>2</sup> **Թովմա Արծրունի** և **Աննուն**, Պատմություն Արծրունյաց տան, ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վրեժ Վարդանյանի, էջ 265:

<sup>3</sup> **Անդ**, էջ 372:

Ըննայ Համաց գյուղը անցնելու: Կասկածներ է հարուցում նաև Տարոնոյ գետը Ջուլա-չայի հետ նույնացնելու միտումը: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ «վարագի»-ն իրոք անհարիր է այդ հատվածին, սակայն միաժամանակ «ընդ վարագի» արտահայտությունը ոչ մի դեպքում չի կարելի սրբագրել «ընդ Վարաժնունիս»: Ինչպես հանգամանակից ցույց տրվեց Պարսկահայքի բաժնում, «ընդ Վարագի Ջարեհաւանի» կապակցությունը աղավաղված է: Բնագրում սկզբնապես եղել է «ընդ Վարագի ձոր եւ հասանի»<sup>1</sup>, հանգամանք, որ Վարաժնունիքի տեղադրության առաջարկված տարբերակի բավականին կասկածելի միակ կռվանը ի չիք է դարձնում: Հավանականը և տրամաբանականը մնում է այն, որ Վարաժնունիքը պետք է գտնվեր Մարդպետականի տարածքում: Ջուլֆա (հնում՝ Ջուղա)-Մարանդ ճանապարհից արևելք, Արաքս գետից հարավ գտնվում է **Լավարջան** գետակի ավազանը համանուն բնակավայրով: Ռուսական քարտեզներում այն հիշատակվում է նաև **Լուվարջան** գրությամբ<sup>2</sup>: Կարծում ենք, որ Լավարջան անունը ծագում է արաբականացված Ալ-Վարջանից, իսկ վերջինս էլ հանդիսանում է Վարաժնունիքի տեղագրական հեռավոր արձագանքը:

Ինչպես տեսանք, նոր գավառների առաջացումը կատարվեց **Բագան** և **Գաբիթեան** գավառների հաշվին: Ըստ երևույթին, ավատականացման երևույթներն «Աշխարհացոյց»-ի շարադրման շրջանում դեռևս էապես չէին արտահայտվել **Արտավանեան** գավառում, որտեղ որչափ մեզ թույլ է տալիս կատարված քննությունը, նոր գավառներ չէին ծնվել: Եթե հետագայում անգամ ծընվեցին էլ այդպիսիք, ապա դրանք չէին կարող գրավել հեղինակների ուշադրությունն այն պատճառով, որ Մարդպետականը դուրս մնաց Հայաստանի քաղաքական շրջանակներից, որն էլ իր հերթին օտար տիրապետության պայմաններում հանգեցրեց ազգացեղային կազմի փոփոխմանը: Հիշյալ գավառակների հետ կապված մեզ մնաց լուծելու մի հարց ևս: Այն բանից հետո, երբ կրճատվեցին **Բագան** գավառի հողերը հօգուտ **Գազրիկանի** և **Վարաժնունիքի**, որտե՞ղ էր գտնվում փոքրիկ **Բագանի** իշխանության տարածքը: **Բագան** գավառի հարավ-արևմտյան հատվածը, որ հսկայական տարածություն է զբաղեցնում, գրեթե անապատային երկիր է, այնպես որ այդ հատվածն էլ պետք է կազմեր **Բագանի** իշխանությունը, իսկ այստեղ հանդիպող **Բագլար** կամ **Բաղլար** բնակավայրերը ոչ թե պետք է նշանակեն այգիներ, այլ հանդիսանան **Բագան** իրանական ձևի թուրքականացված արտահայտությունը **Բագ-լար** (= **Բագ-ան**):

<sup>1</sup> Բ.Հ. **Շարությունյան**, Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1989, թիվ 3, էջ 19-23:

<sup>2</sup> Տե՛ս Ռուսական 5-վերստանոց քարտեզը:

Վասպուրականի 34 և 35-րդ գավառներն են **Նախճավանը** և **Գողթնը**: Թվում է, թե մի նոր անկանոնություն է տեղ գտել Վասպուրականի նկարագրության մեջ, որովհետև, եթե այս գավառներն իրոք վերաբերում էին Մարդպետականին, ապա տրամաբանական էր կարծել նրանց հիշատակությունը **Գազրիկան**, **Տագրեան** և **Վարաժնունիք** գավառներից առաջ, քանի որ վերջիններս հանդես էին եկել ավելի ուշ շրջանում: Սակայն, այդ բոլորով հանդերձ, հիշյալ գավառները զբաղեցնում են ցուցակի վերջին երկու աստիճանները: Այս հանգույցը լուծվում է, մեր կարծիքով, Պատմահոր հաղորդած տեղեկությունների շնորհիվ: Ինչպես տեսանք վերը, համաձայն Մովսես Խորենացու հաղորդման, Մարդպետականը տարածվում էր Ատրպատականի սահմաններից մինչև **Ճուաշ** և **Նախճավան**: Եզրակացությունը մեկն է: Գոնե հին շրջանում **Նախճավանը** չի մտել **Մարդպետականի** մեջ և դրանով իսկ **Վասպուրականի** մեջ: Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում Պատմահոր մյուս հաղորդումը. «Իսկ գիղշտունիս և գԳողթնեցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարև հատուած. ոչ գիտեմ թէ յանուն արա՛նցն զգաւառսն անուանեալ, և թէ յանուն գաւառացն զՆախարարութիւնսն կոչեցեալ»<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, Գողթնեցիներին այստեղ վերագրված է սիսական ծագում, որը բնավ էլ պատահական չէ: Գողթնը իր իշխանական ընտանիքով և արքունի քաղաք **Նախճաւանը**, որը չէր կարող տեղ գտնել հիշյալ տեղեկության մեջ Մարդպետականի ստեղծման շրջանում, պետք է գտնվեին մեկ այլ վարչական միավորի՝ Սյունիք աշխարհի մեջ: Անդրադառնալով այս հարցերին, Ն. Ադունցը գրել է, որ Թովմա Արծրունու Վասպուրականի գավառների հիշատակության մեջ **Նախիջևանի** և **Գողթնի** բացակայությունը բացատրվում է նրանով, որ առաջինը 210 (Թովմա Արծրունու մոտ 211), իսկ երկրորդը 186 տարի առաջ՝ մինչև պատմիչի այդ մասին գրելը, խլվել էին Վասպուրականից: Եվ քանի որ «Աշխարհացոյց»-ի երկու խմբագրություններում էլ դրանք վերագրվում են Վասպուրականին, ապա ըստ հեղինակի «Աշխարհացոյց»-ի խմբագրությունը պետք է կատարված լիներ Թովմայից 210 տարի առաջ ընկած ժամանակաշրջանում: Մյուս կողմից, զարգացնելով իր թեզը չորրորդ խմբի գավառների

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 117: Համաձայն Ստ. Օրբելյանի մի հաղորդման Գողթն գավառը և Օրդվատ գյուղը մտնում էին Սիսական աշխարհի մեջ: Եվ քանի որ խոսքը վերաբերում է Բարդուղիմեոս առաքյալի գործունեությանը (թեկուզ և ավանդական), մենք կարծում ենք, որ այն իր մեջ պարունակում է վարչական բաժանման հին իրողություններ, երբ Գողթնը իրոք մաս էր կազմում Սիսական աշխարհի: Ավելորդ չենք համարում մեջբերել հիշյալ հատվածը. «Ի դառնալն Բարդուղիմեոսի ի Պարսից անցեալ ընդ Ատրպատական՝ գայ իւրովք աշակերտօքն, և անցեալ ընդ գետն Երասխ՝ մտանէ ի սահմանս Սիսականու, և սկիզբն արարեալ քարոզութեան զՌոդվատ գետը և յերկիս գաւառ և ի տունն Բաղաց և ի Գողթն» (Տե՛ս «Պատմութիւն Նահանգին Սիսական», էջ 21): Տե՛ս նաև էջ 23-24:

անվավերականության մասին, նա այն կարծիքն է հայտնել նաև, որ, ըստ երևույթին, Գողթնը և Նախճավանը մյուս 13 գավառների հետ մուծվել են Վասպուրականի մեջ Թովմա Արծրունու դիտողությունների հիման վրա, որի հետևանքով «Աշխարհացոյց»-ի խմբագրությունը պետք է կատարվեր Արծրունյաց պատմիչից հետո<sup>1</sup>: Այսպիսով, անվանի հայագետը ևս կասկածել է հիշյալ գավառների Վասպուրականին վերաբերելը: Սակայն, իրականում, այդ վարչական կացությունը, հավանաբար, գոյություն է ունեցել II-III դդ.: Մեզ անհայտ պատճառներով, արքունիքը վերոհիշյալ գավառներն անջատել է Սյունիքից և մտցրել Մարդպետականի մեջ, որը վերջին հաշվով արքունի տիրույթ էր: Տրամաբանական է կարծել, որ նման վարչական փոփոխությունը նպատակ ուներ սահմանազատել արքունի տիրույթները Սյունյաց իշխանների ժառանգական տիրույթներից: Եվ քանի որ Մարդպետական ներքինի իշխանության տարածքը արքունի տիրույթների մի որոշակի ձև էր, աշխարհագրական տեսակետից արքունիքը նպատակահարմար է գտել նրան կցել Գողթն և Նախճավան գավառները, որոնցից առաջինը համապատասխանում է ներկայիս Օրդուբադի և Ապրակունիսի, իսկ երկրորդը՝ Նախիջևանի շրջանին համանուն քաղաքով (բոլորն էլ Նախիջևանի ԻՀ կազմում)<sup>2</sup>:

Վասպուրականի գավառների այս համառոտ և զուսպ նկարագրությունը, ինչպես տեսանք, իր մեջ վարչական փոփոխությունների մի ամբողջ պատմություն է պարունակում: «Աշխարհացոյց»-ի հեղինակը ձեռքի տակ ունենալով իր ժամանակի և արխիվային հին նյութեր սկզբում տվել է 1. Տոսպքի գավառների ցուցակը, այնուհետև 2. ավատականացման հետևանքով Տոսպք աշխարհում հանդես եկած գավառանունները: Այս ցուցակին ավելացվել է 3. Մարդպետականի հիմնական գավառների ցանկը, ինչպես նաև 4. ավատականացման հետևանքով նրա տարածքում հանդես եկած նոր գավառանունները<sup>3</sup>: Եվ ամենավերջում 5. Նախճավան ու Գողթն գավառները, որոնք անջատվել են Սյունիքից և միացվել Վասպուրականին, կամ, որ ավելի ճիշտ է, Մարդպետականին: Այս բոլոր եզրակացությունները խիստ արժեքավոր են «Աշխարհացոյց»-ի ներքին տրամաբանությունը<sup>4</sup> բացահայտելու և ինչ որ

տեղ նրա գրության ժամանակը որոշելու գործում: Սակայն չի պարզվում մի հարց, թե, այնուամենայնիվ, ե՞րբ է ձևավորվել «Աշխարհացոյց»-յան Վասպուրական աշխարհը:

Մեր կարծիքով, Վասպուրականի ձևավորումը Հայ Արշակունիների թագավորության շրջանում կտրականապես բացառվում է: Հայկական թագավորության գոյության պայմաններում, քանի դեռ գոյություն ուներ մարդպետության գործակալությունը, անհնարին էր Վասպուրականի վարչական ձևավորումը: Ավելին, Հայաստանի ավատականացման հետևանքով արմատապես քարուքանդ էր լինում Մեծ Հայքի ըստ աշխարհների բաժանման ողջ վարչական համակարգը, որի հետևանքով V դ. հայ պատմիչները շատ հաճախ տարբերություն չէին տեսնում «աշխարհ» և «գաառ» հասկացությունների միջև: Կենսունակ գտնվեց Մեծ Հայքի գավառաբաժանումը, որը պայմանավորված էր լեռնային դիրքին հատուկ ընդելուզքային (լանդշաֆտային) կաշկանդիչ համակարգով: Սակայն ավատականացման հետևանքով անգամ գավառաբաժանման քարացած կառուցվածքը սկսեց ձեղքեր տալ: Այն բանից հետո, երբ այս կամ այն գավառը դառնում էր մեկից ավելի իշխանությունների տիրույթ, աստիճանաբար ավատատիրական տիրույթը դիտվում էր որպես վարչական միավոր և ի վերջո վերածվում ինքնուրույն գավառի: Բնականաբար, նման պայմաններում անհնարին էր Վասպուրականի վարչական ձևավորումը: Սակայն Արշակունյաց թագավորության շրջանում արդեն ծնունդ առան այն պայմանները, որոնք երկրի հետագա սոցիալ-քաղաքական զարգացման հետևանքով հանգեցրին Վասպուրական աշխարհի ձևավորմանը:

Էլլենիստական աշխարհում արքունի գանձերի պահպանությունը իրականացնում էր γαζοφύλακος կոչվող պաշտոնյան<sup>1</sup>: Հայաստանում պարթև Արշակունիների հարստության կրտսեր ճյուղի հաստատվելուց հետո<sup>2</sup> այդ պաշտոնը հանձնվեց մարդ ցեղի առաջնորդներին, որոնք կոչվում էին «մարդպետ» և դրանով իսկ ծնունդ առավ այդ գործակալության նոր «մարդպետություն» անվանումը: Մարդերի ցեղային կազմակերպության շնորհիվ գործակալությունը դարձավ ներքինացվող առաջնորդների մենաշնորհը երկար ժամանակով: Սակայն մարդերի ցեղը շուտով՝ որպես առանձին էթնիկ տարր, անհետացավ հայկական միջավայրում, որի հետևանքով «մարդպետություն» գործակալության անպայման հանձնումը մարդ ցեղի ներքինացված նահապետին բնականոն ճանապարհով ի չիք դարձավ: Ուստի ավելի ուշ շրջանում, ինչպես ցույց են տալիս սկզբնաղբյուրները, հայոց արքունիքն իր

<sup>1</sup> М. АДОМ, ԵՎ. աշխ., էջ 319:

<sup>2</sup> Ա. Տ. Երեմյան, ԵՎ. աշխ., էջ 48 և 72:

<sup>3</sup> Ուշադրության արժանի է այն փաստը, որ Մարդպետականի տարածքում հանդես եկած Գազրիկան, Տայգրեան և Բագան փոքրիկ իշխանությունների անունները իրանական բնույթ ունեն: Ավելին, չի բացառվում, որ Վարաժնունիքը նույնպես կրել է իրանական Վարժան կամ Վարջան անունը, որը Տուրոսերանի և Այրարատի Վարաժնունիք գավառանունների ազդեցության ներքո ձեռք է բերել Վարաժնունիք գոտությունը:

<sup>4</sup> «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության Վասպուրականի նկարագրությունը ավարտվում է Նախճավան գավառով, սակայն համառոտ խմբագրության մեջ Նախճավանին հաջորդում է Մարանդը, որ հայտնի է նաև Մարմանոք, Մագանդ ձևերով, իսկ որոշ ձեռագրերում նաև Հայոց ձորը: Հիշյալ գավառները ավելացվել են հետագայում, ուստի նրանց քննարկմանը չենք անդրադառնում:

<sup>1</sup> С.Т. Еремьян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, տե՛ս ИАНАОН, 1948, թիվ 12, էջ 70:

<sup>2</sup> Հնարավոր է, որ մինչև այդ էլ հիշյալ պաշտոնը հանձնված էր մարդ ցեղի առաջնորդներին:

հայեցողությամբ հանձնում էր այդ այս կամ այն ազնվականին՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Պատահական չէ, որ մարդերի ցեղային գոյության շրջանում և դրանից էլ հետո դեռ երկար ժամանակ, արքունիքը հաշվենկատ ձևով **Մարդաստան** կամ ըստ Սեբեոսի **Մարդուցայք** գավառը չէր մտցնում հայր-մարդպետի իշխանությանը հանձնված երկրամասի մեջ, զրկելով նրանց առանձին իշխանական տոհմ հիմնելու ամենադուրյալ իսկ հնարավորությունից: Մարդպետական իշխանությունն իր գոյության ողջ ընթացքում եղել է արքունական տիրույթ, որը **ձեռական իշխանության իրավունքով** հանձնվում էր **ներքինի հայր-մարդպետներին**, ուստի երբեք էլ չէր կարող վերածվել ժառանգական տիրույթի: Հայր-մարդպետները հանդիսանում էին Արշակունիների կանանցի և արքունիքի վերակացուներ, նրանց էր հանձնված թագավորական ամրությունների և բերդերի պահպանությունը և արքունի գանձերի ու կալվածների վերահսկողությունը<sup>1</sup>: Նման իրավունքների առկայության պայմաններում նրանց գործնական իշխանությունը լայնորեն դուրս էր գալիս Մարդպետականի սահմաններից: Ինչ վերաբերում է Մարդպետականին որպես աշխարհի, ապա նոր արմատավորվող ավատատիրական վարչական կարգը երկար ժամանակ նրա վրա ազդեցություն չթողեց, որովհետև այն արքունական տիրույթ էր և գտնվում էր մարդպետի պաշտոնը զբաղեցնող ներքինիների ձեռքին:

Անդրադառնալով Ագաթանգեղոսի աշխատության մեջ հանդիպող հայ իշխանների ցուցակին, որը տասնվեց անուն է պարունակում, և, իրավացիորեն, մերժելով նրա գահնամակային բնույթը, Ն. Ադոնցը գրում է. «...из 16 князей, 8-представители стран, принятых в **Геопр.** именно: Арзанены, Кортчеи, Гогарены, Моксены, Сюнии, Цодеи или Завдеи = Арцаха, Отена-Утии, Зареванда и Хера = Парскаһайка; остальные восемь-представители центральных областей, той страны, которая называлась Танутеракан. Мы видели выше, на какие части распалась танутерская страна. Список еще не знает об этих частях; намечается лишь различие между Мардпетаканом и Васпураканом в тесном смысле, в пределах представительства Арцруниев и Руштуниев. Часть танутерской страны, которая впоследствии называлась Таруберан, представлена в лице Мамиконидов и Хорхоруниев. От Айрарата нет представителей: как домен Аршакидов, он представлен в лице самого царя. Часть его, Багре-

<sup>1</sup> **Հակոբ Մանանդյան**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 64: Տե՛ս նաև «Զորանամակ» (Н. АДОНИ, նշվ. աշխ., էջ 252): Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, էջ 113-114, 191: «Սուրբը Հայկականք», Զ, էջ 41:

ванд с прилегающим Коговитом, имеет представителем кн. Багратидов.

Эти представительства отражают собой положение вещей конца VI ст., соответствуя делению армянской страны до **Геопр.** Список носит тенденциозную печать: автор его хотел приобщить к рукоположению и вообще деятельности Просветителя армянскую страну в ее главных частях»<sup>1</sup>: Չհամաձայնելով հանդերձ հեղինակի մի շարք եզրակացությունների հետ, մենք ուզում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ն. Ադոնցը, ելնելով հիշյալ ցուցակից, տարբերում է իրարից Մարդպետականը և Վասպուրականը նեղ իմաստով: Որ Արծրունիները և Ռշտունիները պետք է ներկայացնեին Վասպուրականը նեղ իմաստով, միանգամայն տրամաբանական է, և մեր կարծիքով, դրա անուղղակի հետքերը պահպանվել են հայկական սկզբնաղբյուրներում: Սակայն մենք չենք կիսում Ն.Ադոնցի եզրակացությունը, թե նրանցից մեկը ներկայացնում էր Վասպուրականը նեղ իմաստով, իսկ մյուսը՝ Մարդպետականը, որովհետև նույն ցուցակում հիշվում է նաև մարդպետության իշխանը:

Ինչո՞վ բացատրել Արծրունիների և Ռշտունիների նման ազդեցիկ դիրքը Մեծ Հայքի թագավորությունում, երբ նրանք մարտադաշտ էին դուրս բերում 1000-ական զինվոր, այսինքն այնքան, որքան ի վիճակի էին դուրս բերելու առանձնապես աչքի չընկնող Վանանդեցիները, Ապահունիները, Վահունիները և այլն: Ուստի մնում է ենթադրել, որ բացի ռազմական կարողությունից, նրանք ինչ-որ առանձնաշնորհյալ դիրք ունեին: Փավստոս Բուզանդը, հետաքրքիր մանրամասնություններ հաղորդելով Հայոց Խոսրով Գ Կոտակ թագավորի դեմ հանդես եկած իշխանությունների ոչնչացման մասին, հայտնում է, որ նա «... դներ օրէնս, զի մեծամեծ աւագունին նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեցին, և մի ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս արքունի: Զի երկնչէր նա յերկմտութենէ նոցա, զի գուցէ զնոյն գործ Դատաբենայն գործիցեն, և ապստամբ լինիցին ի նմանէ»<sup>2</sup>: Առաջին եզրահանգումը, որ կարելի է կատարել, այն է, որ չնայած ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով ըստ աշխարհիների վարչական բաժանումը ճգնաժամ էր ապրում, զորքի ըստ աշխարհիների բաժանումը որպես վերապրուկ շարունակում էր գոյատևել: Փավստոս Բուզանդը աշխարհիների կուսակալներին բաժանում է երկու խմբի՝ աշխարհակալների և աշխարհատերերի, որոնցից առաջիններն արքունի պաշտոնյաներ էին սոսկ, իսկ երկրորդները՝ ժառանգատեր

<sup>1</sup> Н. АДОНИ, նշվ. աշխ., էջ 294:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 20:

իշխաններ, որոնց հանձնված էր՝ ավատատիրական իրավունքի համաձայն, տվյալ աշխարհի կառավարչի ժառանգական պաշտոնը: Որ իրոք ռազմական կազմակերպության այդ կառուցվածքը IV դարի սկզբներին գոյություն ուներ, երևում է «Զորանամակ»-ի տվյալներից: Պարզվում է, որ 10000-ոց զորաբանակներ կարող էին դուրս բերել Սյունյաց և Կաղմեսցվոց իշխանները, իսկ մյուսների ռազմական կարողությունը, բացառությամբ բոջիսների, Կասպեից, Բզնունյաց ու Անգեղտան իշխանությունների, շատ համեստ էր<sup>1</sup>: Ուստի անհասկանալի է դառնում, թե ինչպես դավաճան Մերուժան Արծրունին՝ իր համեմատաբար համեստ ուժերով, IV դարի 60-ական թվականներին հավակնում էր հայոց գահին: Կարծում ենք, որ հարցը լիակատար լուսաբանում կստանա, եթե Ն. Արտնցի օրինակով ընդունենք, որ Մերուժան Արծրունին հանդիսացել է Տոսպքի, ինչպես վկայված է Պտղոմեոսի մոտ, կամ Վասպուրականի նեղ իմաստով, ինչպես ընդունում է Ն. Արտնցը, կառավարիչը: Այդ դեպքում, ձեռքի տակ ունենալով մի շարք նախարարությունների և արքունի տիրույթ հանդիսացող գավառների ռազմական ուժը, Արծրունիները պատկառելի մեծության զորաբանակ պետք է գլխավորեին: Սակայն այդ պաշտոնը ժառանգական չէր և արքունիքը կարող էր հանձնել այլ ընտանիքների ևս: Խոսքով Գ Կոտակի օրոք Տոսպքի կառավարչությունը, հավանաբար, հանձնված էր Ռշտունիներին<sup>2</sup>, որոնք Տրդատ Գ-ի և նրա 2 հաջորդների օրոք գլխավորում էին նաև Մեծ Հայքի հարավային զորաբանակը<sup>3</sup>: Ռշտունիների և Արծրունիների ուժեղանալը մեծ վտանգ էր ներկայացնում արքունիքի համար, որի շահերը պաշտպանում էին ներքինի հայր-մարդպետները: Տիրան թագավորի օրոք հայր-մարդպետի շնորհիվ գրեթե բնաջինջ արվեցին թե Ռըշտունիները և թե Արծրունիները, որոնցից միայն երկու մանուկներ փրկվեցին Մամիկոնյանների վճռական միջամտությամբ, Տաճատ Ռշտունին և Շավասպ Արծրունին, որոնք էլ հետագայում վերահաստատվեցին իրենց հայրենի տիրույթներում<sup>4</sup>:

Ինչպես վերն արդեն նշել ենք, մարդպետների գործնական իշխանությունը լայնորեն դուրս էր գալիս Մարդպետականի սահմաններից: Դատելով Փավստոս Բուզանդի տեղեկություններից, Արծրունիների և Ռշտունիների ոչնչացումից հետո մարդպետների իշխանությունը պետք է տարածվեր նաև Տոսպքում, էական սրբազրություն մտցնելով մարդպետության լիազորությունների մեջ: Թերևս հենց այդ է պատճառը, որ Թովմա Արծրունին, ինչպես

վերը տեսանք, թվարկելով Գագիկ Արծրունուն անցած գավառները, դրանք համարում է հայր մարդպետի երբեմնի տիրույթներ: Ամենայն հավանականությամբ, Արշակ Բ-ի գահակալության սկզբում, թերևս ոչ առանց պարսից արքունիքի աջակցության, Մերուժան Արծրունին կրկին տիրացավ Տոսպքի կուսակալությանը, որը նրան հնարավորություն տվեց կարևոր դեր խաղալու Հայաստանի քաղաքական կյանքում: Սակայն Արշակավան քաղաքի կործանումից հետո, երբ արքունիքը սկսեց հաշվեհարդար տեսնել անհնազանդ նախարարների հետ, վերջինս՝ ահաբեկված թագավորի վրեժխնդրությունից, փախավ Պարսկաստան և ապաստան որոնեց Շապուհ Բ-ի մոտ: Դժվար չէ տեսնել, որ Մերուժանի փախուստից հետո, արքունիքը Տոսպքը նորից վստահելու էր հայր-մարդպետին և այդ վիճակը գոյատևելու էր թերևս մինչև Հայ Արշակունիների թագավորության վախճանը: Անկախ այն հանգամանքից, որ որոշ մարդպետներ կարող էին անգամ հանդես գալ արքունի իշխանության դեմ և դավաճանել թագավորին, մարդպետության պաշտոնը կրող ներքինիները որպես կանոն հանդիսանում էին արքունիքի արտաքին և ներքին քաղաքականության պաշտպանները, ուստի նախարարության դեմ մղվող պայքարում Հայ Արշակունիները լայնորեն հենվում էին նրանց վրա: Մարդպետների վերահսկողության տակ գտնվում էին հողեր ոչ միայն Տոսպքի, այլև Մեծ Հայքի տարբեր երկրամասերի տարածքում: Անդրադառնալով Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկությանն այն մասին, որ մարդպետը, «շրջեր ընդ մարդպետությունն իր. ապա եկն էջ Հայր մարդպետ ի գաւառն Տարոնոյ ընդ իր գեղսն տեսանել»<sup>1</sup>, Ղ. Ինճիճյանը և Նորայր Բյուզանդացին ենթադրել են, որ այս և համանման հաղորդումները պետք է ընկալել որպես ապացույց Տարոնում մարդպետական սեփական տիրույթների գոյության մասին<sup>2</sup>: Ըստ երևույթին, նույն վկայություններն ի նկատի ունենալով, Վ. Վարդանյանը գտնում է, որ մարդպետների տիրույթները ցրված էին երկրով մեկ, հանգամանք, որի պատճառով նրանք հանդես էին գալիս Արշակունյաց թագավորների կենտրոնացված իշխանությունն ստեղծելու ջանքերի ջատագով և, հենվելով հայոց թագավորների վրա, փորձում ընդլայնել իրենց տիրույթները, քաղաքական կշիռը<sup>3</sup>: Եթե իրոք գոյություն ուներ Մարդպետական նախարարական տուն, ապա նա չէր կարող դավաճանել իր էությանը և վարել այնպիսի քաղաքականություն, որ բնավ չէր բխում նրա ավատատիրական բնույթից: Անգամ Մամիկոնյանները, որ առաջին հայացքից ուժեղ թա-

<sup>1</sup> «Զորանամակ», տե՛ս Н. АДОМЦ, նշվ. աշխ., էջ 251-252:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 24:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, էջ 231, 262-263:

<sup>4</sup> Փավստոս Բուզանդ, էջ 46-47, Մովսես Խորենացի, էջ 273-274:

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 113-114:

<sup>2</sup> Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Լ.Բ., էջ 136-137: Նորայր Բյուզանդացի, Կորին և Նորին թարգմանութիւնք, Տիգրիս, 1910, էջ 268:

<sup>3</sup> Վ.Մ. Վարդանյան, Մարդերը Վասպուրականում, տե՛ս ՊԲԸ, 1971, թիվ 3, էջ 54:

գավորական իշխանության պաշտպաններն էին, ինչպես ցույց են տալիս սկզբնաղբյուրները, միշտ պատրաստ էին հանդես գալ արքունի իշխանության դեմ, եթե վտանգվում էին նրանց դասային իրավունքները<sup>1</sup>: Ուստի, անկասկած, ճիշտ են Ա. Գարագաշյանը, Հ. Մարքվարթը և Հ. Մանանդյանը, որոնք ցույց են տալիս, որ հիշյալ տիրույթներն արքունի ոստանի մասերն էին, որոնք գտնվում էին մարդպետների տեսչության ներքո<sup>2</sup>:

Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո մարդպետության գործակալությունն ավելորդ դարձավ, սակայն, մեզ անհայտ պատճառներով, մարդպետության հաստատությունը պարսից արքունիքը պահպանեց: Կամենալով թերևս Արծրունյաց իշխաններին ներառել իր ազդեցության ոլորտը և դարձնել իրենց քաղաքականության գործիքը, պարսից թագավորները նրանց հանձնեցին մարդպետության իրավունքը<sup>3</sup> կամ նրան մոտ մի պաշտոն, որ Ղազար Փարպեցու կարծիքով նույնանում էր մարդպետությանը: Դատելով եղիշեի հաղորդումներից, Արծրունիները ստացել էին Ռմբոսեան տիտղոսը կամ պաշտոնը<sup>4</sup>: Քսենոփոնն իր «Կյուրոպեդիա» աշխատության մեջ հիշում է ոմն մար Ռամբակասի (Ῥαμβάκας) կամ Ռամբակի, որը գլխավորում էր մարական այրուձին<sup>5</sup>: Եթե ենթադրենք, որ Ռամբակասը փաղաքշական ձևն է, ապա, ըստ երևույթին, այն ծագում է Ῥαμβός կամ, որ ավելի հավանական է, Ῥαμβάς ձևից, որից ստուգաբանորեն կարող էր ծագել «Ռմբոսեան»-ը: Չի բացառվում, որ մարական հեծելազորը գլխավորողը կոչվում էր Ռամբ կամ Ռամբոս, որը վերածվել է նաև հատուկ անվան: Եթե մեր այս ենթադրությունը համապատասխանում է իրականությանը, ապա «Ռմբոսեան»-ը և «մարդպետը» նույնանում են, որովհետև հայր-մարդպետները գլխավորում էին մարդպետական հեծելազորը: Թե այժմ գործունեության ինչ ոլորտ ուներ մարդպետը կամ Ռմբոսեանը, մեզ հայտնի չէ, բացի հիշյալ հանգամանքից: Սակայն ամենակարևոր փոփոխությունը, որ այնուամենայնիվ կատարվեց, մարդպետներին ներքինացնելուց հրաժարվելն էր: Մարդպետության հանձնումը Արծրունիներին շատ հարթ անցավ, որովհետև վաղուց արդեն մարդպետության գործակալության ետև չկար մարդերի ցեղային ուժեղ

կազմակերպությունը և գոյությունն չունեի առանձին հզոր նախարարություն, ուստի սխալվում է Ն. Արդնցը, երբ գրում է, թե Արծրունիների և Մարդպետների տոհմերի միջև մղվող պայքարը ավարտվեց մարդպետների տոհմի ոչնչացմամբ<sup>1</sup>: Մենք չենք կարող համաձայնել նաև Վ. Վարդանյանի այն տեսակետին, թե «Հայոց թագավորության վերացումից հետո Պարսկաստանն արդեն անմիջաբար սպառնում էր հայոց նախարարների, այդ թվում Արծրունիների և Մարդպետների ինքնավար վիճակին: Մյուս կողմից Մարդպետներն իրենց հենարան Արշակունիների անկումից հետո մղվում են հետին պլան: Սասանյանները, հարքունիս գրավելով հայոց Արշակունիների տիրույթները, Մարդպետներին ևս զրկում են իրենց տիրույթներից: Արշակունիների պես Մարդպետները զրկվելով կալվածքներից, մարդպետության շրջանում կորցնում են իրենց երբեմնի դիրքերը, դիմազրկվում են, մանավանդ, որ Հայաստանում չունենին այնպիսի խոր արմատներ, որպիսիք ունեին Արծրունիները: Պայքարը Արծրունիների և Մարդպետների միջև, որը երբեմն արյունոտ բնույթ էր կրում, նոր պայմաններում մարում է և դառնում անիմաստ: Ջրկված լինելով Արշակունիների հովանավորությունից և նրանց արքունիքում վարած հույժ կարևոր պաշտոններից, մարդպետները բարվոք են համարում միավորվել Արծրունիների հետ, հանգամանք, որը թելադրվում էր նաև պարսից տիրապետությանը համատեղ դիմակայելու բնական մղումով: Կարծել, թե Մարդպետների տիրույթներն անցան Արծրունիներին, սխալ է: Ֆեոդալական սուբորդինացիայի շրջանակներում տեղի է ունենում այս տոհմերի միավորումը, որն ավելի է ուժեղացնում Արծրունիների դիրքերը: V դ. արդեն այս տոհմում հիշվում են երկու ճյուղ, իսկ 451 թ. ազատագրական պատերազմի մասնակից Սերշապուհ Արծրունուն Ղազար Փարպեցին անվանում է «Մարդպետ»: Մարդպետներն այլևս ինքնուրույն հանդես չեն գալիս, այլ Արծրունիների հետ»<sup>2</sup>: Հեղինակը ճիշտ է, անշուշտ, այն հարցում, որ Մարդպետական տիրույթները որպես արքունական տիրույթների մի տարատեսակ անցնում են Սասանյանների վերահսկողության ներքո, սակայն Մարդպետական և Արծրունյաց տոհմերի ոչ մի միավորում էլ տեղի ունենալ չէր կարող, որովհետև Մարդպետական տոհմ գոյություն չունեի: Եթե անգամ ընդունենք, որ այդպիսի նախարարական ընտանիք գոյություն ուներ և վերածվել էր Արծրունյաց տոհմի կրտսեր ճյուղի, ապա Մարդպետ տիտղոսը պետք է կրեր ոչ թե Արծրունյաց նահապետ Ներշապուհը կամ Սերշապուհը, այլ 450-451 թթ. ապստամբության մեկ այլ մասնակից Ապրսամ Արծրունին<sup>3</sup>:

<sup>1</sup> Н. Адонц, *Узл. азт.*, էջ 319-320:

<sup>2</sup> Վ. Վարդանյան, *Նշվ. աշխ.*, էջ 54-55:

<sup>3</sup> Ղազար Փարպեցի, էջ 75, 86:

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, էջ 46-47, 234-235:

<sup>2</sup> Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 7 և 20: J. Markwart, *Südarmenien und die Tigrisquellen*, էջ 36: Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 64-65:

<sup>3</sup> Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, էջ 71. «... գտերն Արծրունեաց, և զմարդպետն Միհրշապուհ'...»: Հրատարակիչները «Արծրունեաց» բառից հետո սխալմամբ ստորակետ են դրել (Հ.Բ.):

<sup>4</sup> Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, էջ 71, 74:

<sup>5</sup> Ксенофонт, *Киропедия*, V, III, 42, էջ 120:

Անդրադառնալով այս հարցին, և Ադոնցը գրում է, որ Ադբակի տերը Ներշապուհն էր, ուստի պետք է Մարդաստանին իշխեր Ապրսամը, սակայն, հակառակ սպասվածի, Ներշապուհն է կոչվում Մարդպետ և ոչ թե Ապրսամը, որն արդյունք էր այն բանի, որ ժամանակի ընթացքում այդ տիտղոսը կարողացել էր վերածվել Արծրունյաց ողջ տոհմի առանձնաշնորհման<sup>1</sup>: Իրականում Արծրունիները չէին ընդարձակել և չէին էլ կարող ընդարձակել իրենց կալվածքները ի հաշիվ արքունական տիրույթների, որոնց մաս էին կազմում նաև հայր-մարդպետների ձեռական կալվածքները: Ստանալով «Ռիբոսեան» կամ «մարդպետ» պաշտոնը, Արծրունիներն առանձնաշնորհյալ դիրք ստացան մյուս նախարարությունների նկատմամբ: Այդ տեսակետից, մեր կարծիքով, կարևոր են եղիշեի հաղորդած տեղեկությունները, կապված 450-451 թթ. ապստամբության հետ:

*«Եւ այս է պատճէն հրովարտակին, զոր գրեցին առ Թէոդոս կայսր.*

*«Յոսկսէի եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իմովք և ամենայն զօրօք Հայոց, Վասակ Մարզպան և Ներշապուհ Ռիբոսեան հանդերձ սպարապետաւս և ամենայն մեծամեծ նախարարօքս առ մեծանունդ Թէոդոս կայսր, բազմասցի ողջուն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յերկրաւորացս, որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայցէ»<sup>2</sup>:*

*«Եւ զամենայն զօրսն յերիս գունդս բաժանէին:*

*Ջգունդն առաջին տային ցՆերշապուհ Ռիբոսեան, և գումարէին զնա պահապան աշխարհին, մերձ ի սահմանս Ատրպատական աշխարհին...»<sup>3</sup>:*

*«Իսկ նա (Վասակ Սյունին - Չ.Բ.) յամրածածուկ հաւալոցէն ճեպով դեսպանս արձակէր առ գունդն Պարսից. «Ահաւաղիկ քակեցի զմիաբանութիւն ուխտին Հայոց, և ընդ երիս կողմանս զգունդն քակեալ բաժանեցի: Ջգունդն առաջին հեռացուցի ի կողմանս Հերայ և Ջարևանդայ...»<sup>4</sup>:*

Դժվար չէ համոզվել առաջին վկայությունից, որ Հայկական մարզպանության համակարգում Ներշապուհ Արծրունին զբաղեցրել է շատ ավելի բարձր պաշտոն, քան հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, որը հանվանե չի էլ հիշվում հրովարտակում: Ավելին, համաձայն հրովարտակի նա մարզպանությունում Վասակ Սյունի մարզպանից հետո երկրորդ անձնավորությունն է: Ներշապուհ Արծրունուն հանձնված հայկական առաջին զորաբանակը ուղարկվում է Ատրպատականի սահմանագլուխը, պաշտպանելու՝ համար Հա-

<sup>1</sup> Н. Адоиц, 2-й изд., т. 2, с. 320:

<sup>2</sup> Եղիշե, էջ 71:

<sup>3</sup> Եղիշե, էջ 74:

<sup>4</sup> Եղիշե, էջ 75:

յաստանի սահմանները Հեր և Ջարևանդ գավառների կողմից: Այդ հանձնարարությունը բնավ պատահական չէ, որովհետև նրան ուղարկում էին իր ենթակայությանը հանձնված երկրամասը՝ Մարդպետական, որ այդ ժամանակ ներառնում էր նաև Պտղոմեոսյան Տոսպքի մեծագույն մասը:

Սեբեոսի, Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած տեղեկություններից ելնելով, կարելի է ենթադրել, որ Հայկական մարզպանությունը վարչականորեն կազմված էր երեք հիմնական շրջաններից. Տանուտիրական Գնդի երկիր, Սեպիական կամ Վասպուրական Գնդի երկիր և Սյունիք: Անդրադառնալով Հայաստանի 591 թ. երկրորդ բաժանմանը, Սեբեոսը թողել է երկու արժեքավոր վկայություն.

*(Խոսրովը կայսր Մորիկին) «Տո՛ւր ինձ զգահ և զտեղի թագաւորութեան հարց և նախնեաց իմոց, և արձակեա՛ ինձ զաւր յաւզնութիւն, որով կարացից հարկանել զթշնամին իմ, և կանգնե՛ա զթագաւորութիւն իմ, և եղէց քոյ որդի: Եւ տաց զկողմանս Ատրուոց-զԱրուաստանն ամենայն մինչև ի Մծբին քաղաք, և յերկրէն Հայոց՝ զաշխարհն Տանուտերական իշխանութեանն մինչև ցԱյրարատ և ցԴուին քաղաք, և մինչև ցեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստ աւան. և զմեծ մասն Վրաց աշխարհին՝ մինչև ցՏփիսիս քաղաք. և կալցուք ուխտ խաղաղութեան ի մէջ մեր մինչ ցմահ երկոցունցս, և անշուշտ լիցի այս երդումն ի միջի մերում և ի մէջ որդւոց մերոց, որ թագաւորելոց իցեն յետ մեր»<sup>1</sup>:*

*«Եւ հաստատեցաւ (Խոսրովը) յաթոռ թագաւորութեան. և զխոստացեալ պարգևսն կայսերն կատարեաց. ետ նոցա զԱրուաստան զամենայն մինչև ցՄծբին և զերկիրն Հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեզր ծովուն Բզնունեաց, և ցԱռեստաւան և զԳոգովիտ գաւառ մինչև ցՀացիւն և ցՄակու: Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային: Եւ ի նախարարացն Հայոց բազումք ի Յունաց կողմանէ և սակաւք՝ ի Պարսից: Ետ և զմեծ մասն Վրաց աշխարհին մինչև ցՏըփիսիս քաղաք»<sup>2</sup>:*

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները, որոնք որոշ տարբերություններ ունեն Սեբեոսի և նրան հետևող Թովմա Արծրունու հաղորդումների համեմատությամբ.

*«... Խնդրէ Մօրիկ ի Խոսրովայ զՄիջագետս Դարայիւ և Մծբնաւ հանդերձ, և ի Հայոց զայն աշխարհ, որ Տանուտիրական Գունդն անուանէր՝ բայց յՈստանէն, ի Դվին քաղաքէ և յերկուց ևս գաւառաց, որ է Մասեացոտն և կողմն*

<sup>1</sup> Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 36-37: Տե՛ս նաև Թովմա Արծրունի, էջ 94:

<sup>2</sup> Սեբեոս, էջ 47: Տե՛ս նաև Թովմա Արծրունի, էջ 96:

**Արագածու:** *Ջայտոսիկ ի բաց զատուցեալ՝ զայլն ամենայն թողու Խոսրով ի Սօրիկ, ի լեռնէն որ կոչի Ընծաքիսար մինչև ցԱռեստն աւան և ցՀացիսն*<sup>1</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հովհաննես Դրասխանակերտցու աշխատությունը պարունակում է Սեբեոսին անհայտ որոշ մանրամասնություններ, որոնք հիմնականում չեն հակասում վերը բերված վկայություններին, պետք է ենթադրել, որ նա Սեբեոսից բացի ունեցել է այլ սկզբնաղբյուր ևս: Միակ անհամապատասխանությունը Սեբեոսի նկատմամբ **Արագածու կողմն գավառի** հիշատակությունն է: Առաջին, որ այդ անունով մեզ գավառ հայտնի չէ, և երկրորդ, եթե այն համապատասխանում է Արագածոտն գավառին, ապա վերջինս չէր կարող մնալ պարսիկներին, որովհետև հենց Հովհաննես Դրասխանակերտցու և Արսեն Սափարացու տվյալներով պարսկա-բյուզանդական սահմանագիծն անցնում էր Ազատ գետով<sup>2</sup>: Ամենայն հավանականությամբ, բնագրում եղել է ոչ թե **Արագածու կողմն**, այլ **Արածու կողմն**, որը հաճախ է հիշվում սկզբնաղբյուրներում և կարող էր գրիչների կողմից սխալմամբ վերածվել Արագածու կողմն գավառի, ազդվելով մասնավորապես Մասեացոտն գավառի հիշատակությունից: Համադրելով երկու հեղինակների տվյալները, գալիս ենք այն եզրակացության, որ **Ընծաքիսար լեռ-Բզունեսաց ծով-Առեստ աւան-Հացյուն-Մակու-Մասեացոտն գավառի** արևմտակողմ-**Դվին-Ազատ գետ-Գառնի-Հրազդան** գծից արևմուտք ընկած հողերը, որ անցան Բյուզանդական կայսրությանը 591 թվի պայմանագրով, Մասեացոտն, Արածու կողմն և Ոստան Դվնա գավառների հետ միասին Հայկական մարզպանության մեջ մինչև 591 թվականը կազմել են առանձին վարչական շրջան, որը կոչվել է **Տանուտիրական իշխանության երկիր**, **Տանուտիրական տուն կամ Տանուտիրական Գնդի երկիր**: Սեբեոսի վկայությունից պարզվում է, որ Հայկական մարզպանության մյուս մասը կոչվում էր **Վասպուրական Գնդի երկիր** և շարունակում էր գտնվել պարսից իշխանության ներքո: Այլ խոսքով, Բյուզանդական կայսրությունը և Պարսկաստանը սահմանագատվել էին, եթե ի նկատի չունենանք **Մասյացոտն, Արածու կողմն և Ոստան Դվնա** գավառները, **Վասպուրական Գնդի և Տանուտիրական Գնդի երկրների** սահմանով: Բնական է, որ այս իրադարձությունների կապակցությամբ չի հիշատակվում Սյունիքը, որը 571 թ., գուցե և ավելի վաղ<sup>3</sup>, վարչականորեն մտցվել էր

<sup>1</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 67-68:

<sup>2</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 73. «Իսկ մեծ հայրապետն Աբրահամ ըստ նախասաց բանին ի Դվին քաղաքի բնակէր ի Պարսից բաժնի անդ. վասն զի գետն Ազատ զսահման բաժնիցն երկրոցունց ընդ մէջ հաստանէր»: Արսեն Սափարացի, տե՛ս Լ Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա (Ե-ԺԲ դար), Երևան, 1934, էջ 43. «Չեմ անցնի (հայոց Մովսես կաթողիկոսը — Ն. Բ.) Ազատ գետն, որ է սահման պարսից, չեմ ուտի հուևաց (թերձենների) թխվածքը և չեմ խմի նրանց թերմունքը»:

<sup>3</sup> Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.,—Л., 1941, էջ 165:

Ատրպատականի աշխարհագրի մեջ և վերածվել առանձին միավորի<sup>4</sup>: Ավելորդ չենք համարում նշել, որ VII դարի սկզբի վարչական կացությունը բյուզանդացված ձևով արտացոլվել է Սեբեոսի երկրում: Վերջինս շատ լավ իմանալով, որ Սյունիքը հայկական երկրամաս է, այն հիշում է Հայկական մարզպանությունից անկախ՝ տուրք տալով ժամանակի վարչական բաժանմանը: Այդ իմաստով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Սեբեոսի ներքոհիշյալ վկայությունները.

*«Եւ էին ընդ նմա (Թեոդորոս Ոշտունու հետ) միաբան Վրացին և Աղուանն և Սիւնին, որք ըստ հրամանի նորա գնացին յԻւրաքանչիւր աշխարհս և ամրացան ի նմին»*<sup>5</sup>:

*«Եւ արար արքայ (բյուզանդական կայսրը) զՄուշեղ Սամիկունէից տէր՝ իշխան Հայոց հեծելոցն, և արձակեաց զնա ի կողմն Սեպիական Գնդին Գ հազարաւք. նոյնպէս արձակեաց ի զաւրաց իւրոց ի Վիրս և յԱղուանս և ի Սիւնիս՝ քակտել զնոսա ի միաբանութենէ: Այլ զաւրքն նստէին շուրջ զԱրփայիւ ի լեռնակողմանն և ի դաշտակողմանն, իսկ թեպէտ առ ժամանակ մի ոչ կամեցան հնազանդել, սակայն յետոյ նուաճեալ ի ծառայութիւն: Բայց Աղուանն և Սիւնին և Գունդն Սեպիական ոչ հնազանդեցան, զորոց զերկիրն աւար առեալ տարան զինչ և գտին, և դարձան անդրէն առ արքայ»*<sup>6</sup>:

*«Յետ այսորիկ գնաց Թեոդորոս Ոշտունեսաց տէրն առ Մաւիաս իշխանն Իսմայելի ի Դամասկոս և ետես զնա մեծամեծ ընծայիւրք: Եւ ետ նմա իշխանն Իսմայելի հանդերձս ոսկեղէնս և ոսկեթելս, և վառ մի նորին աւրիկանկաւն: Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցՎասպկոհ և զպարիակն ձորայ, և արձակեաց զնա պատուով: Եւ նորա պայման էր եղեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»*<sup>7</sup>:

Առաջին և երկրորդ վկայությունների համադրումից պարզվում է, որ Թեոդորոս Ոշտունին Սեպիական կամ Վասպուրական Գնդի երկրի ներկայացուցիչն է, որին միաբան էին Վրաց ու Աղվանից մարզպանությունները և Սյունիքը, այլ խոսքով, 591 թվից հետո Պարսից պետության շրջանակներում մնացած Հայկական մարզպանության տարածքը, շարունակելով հանդերձ հանդիսանալ մարզպանություն<sup>8</sup>, պաշտոնապես ստանում է **Վասպուրական**

<sup>1</sup> Սեբեոս, էջ 27:

<sup>2</sup> Սեբեոս, էջ 142:

<sup>3</sup> Սեբեոս, էջ 143:

<sup>4</sup> Սեբեոս, էջ 146:

<sup>5</sup> Կարծում ենք, որ այս հանգամանքը շատ կարևոր կազման է ցույց տալու համար, որ «Աշխարհացոյց»-ը չէր կարող ստեղծվել Հայաստանի 591 թվի բաժանումից հետո: Չնայած Հայկական մարզպանությունը, որի տարածքը խիստ կրճատվել էր, շարունակում էր գոյատևել, այն պարսից արքունիքի կողմից ստացել էր Վասպուրական Գնդի երկիր անունը: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, եթե հետևում էր պարսից պաշտոնական վարչական բաժանմանը, հիշատակելու էր, անշուշտ, նոր անվանումը: Եթե անգամ ընդունենք, որ նա տվել է Հայք անվանումը, տուրք տալով ազգային ավանդույթներին, ապա տարածքային կորուստներից հետո Հայոց մարզպանությունը հազիվ թե զբաղեցներ երկրորդ տեղը **Վասպուրական** թուստական:



Գնդի երկիր անունը: Սասանյան Պարսկաստանի իշխանության տակ ընկած հայկական հողերը մտնում էին Վասպուրական Գնդի երկիր, Սյունիք, Վրաց և Աղվանից մարզպանություններ (Գուգարք, Արցախ և Ուտիք) վարչական միավորների մեջ: Ըստ որում, եթե պարսից արքունիքին ձեռք էր տալիս Վրաց կամ Աղվանից մարզպանությունների տարածքի ընդարձակումը ի հաշիվ հայկական երկրամասերի, որովհետև դրա հետևանքով Վրաց և Աղվանից բնակչության տոկոսը փոքրանում էր հիշյալ վարչական շրջաններում, ապա նա Հայաստանում վարում էր հայկական հողերի մասնատման և տրոհման քաղաքականություն, նպատակ ունենալով վարչական միջոցներով անջրպետ առաջ բերել նրա առանձին մասերի միջև: Մեծաթիվ, միացյալ և ակտիվ հայկական տարրը միշտ էլ վախ էր պատճառում պարսկական պետությանը, որն ամեն մի միջոցի դիմում էր նրան հնազանդության մեջ պահելու համար: Թե ինչպիսի կարևորություն էին տալիս Սասանյանները հայկական տարրին, պարզ երևում է Ղազար Փարպեցու այն հաղորդումից, որ պարսիկների կարծիքով, եթե հայերը սերտ կապվեին նրանց հետ, ապա Վիրքն ու Աղվանքը առանց այլևայլության հնազանդ կմնային Պարսից տերությանը<sup>1</sup>:

Երկրորդ վկայությունը, կարծում ենք, լիովին հաստատում է մեր եզրակացությունները: Բյուզանդական զորքերը հարձակվում են Սասանյան Պարսկաստանի, որ արդեն գոյություն չուներ, մաս հանդիսացող Սեպհակյան Գնդի երկրի, Վիրքի և Աղվանքի մարզպանությունների և Սյունիքի վրա: Եվ հետաքրքրականն այն է, որ դրանք նախկինում Պարսկաստանի մեջ մտնող վարչական շրջաններն են (Սյունիք, Սեպհակյան Գնդի երկիր, Աղվանից մարզպանություն), որ շարունակում են համառ դիմադրություն ցույց տալ բյուզանդական զորքերին:

Հայ-արաբական ռազմական համագործակցության շնորհիվ Թեոդորոս Ռշտունուն հաջողվեց ազատագրել բյուզանդական տիրապետությունից հայկական հողերի մեծ մասը և անգամ գրավել Տրապիզոնը: Սեբեոսի վարչական պատկերացմամբ, արաբները ճանաչել էին Թեոդորոս Ռշտունուն իշխանությունը Հայքում, Վիրքում, Աղվանքում և Սյունիքում մինչև Վապկոհ և Ճորա պահակ: Ինչպես տեսնում ենք, Սեբեոսը, որ հիանալի գիտե, որ Սյունիքը վարչականորեն մտել էր Հայքի մեջ Սասանյան պետության անկումից հետո, տուրք է տալիս VI դարի վերջի և VII դարի սկզբի վարչական բաժանմանը: Ուստի համաձայն վերջին վկայության, նրա համար Հայքը միայն նախկինում բյուզանդահպատակ հայկական հողերն էին և Վասպուրականի երկիրը, իսկ հայկական մյուս երկրամասերը հանդես են գալիս պաշտոնապես Սասանյան Պարսկաստանում գոյություն ունեցող վարչական այնպիսի միավորներով,

<sup>1</sup> Ղազար Փարպեցի, էջ 43:

որպիսիք էին Սյունիքը և մասամբ Վրաց (Գուգարք) և Աղվանից (Ուտիք և Արցախ) մարզպանությունները<sup>2</sup>:

Որ Սեբեոսի համար Հայաստանի 591 թվի բաժանումից հետո Հայկական մարզպանությունն ու Վասպուրականի Գնդի երկիր վարչական հասկացությունները նույնական էին, երևում են նրա այլ հաղորդումներից.

«Արդ՝ իբրև տեսանէր թագաւորն Պարսից զմարդկան փախուստ ի կայսերէն՝ արձակոյր ի Հայս զՎասպուրականն համարակարն հանդերձ զանձու բազմաւ և մեծամեծ պատուոք, զի այնպէս նուաճեալ ածցէ զնոսա ի ծառայութիւն իւր. և զնայր համարակարն ի Հայս, և ընդ նմա զանձ ուղտուք բազմաւք»<sup>3</sup>:

«Գնացին ոմանք առ համարակարն (Վասպուրական - Ղ.Բ.), և դարձան անդրէն յերկիրն իւրեանց: Եւ ժողովեալ համարակարին զամենայն իշխանս և զզաւրս Հայոց, որ ի Պարսից կողմանէ՝ ողոքաւ և ևս քաղցր բանիւք յորդորեալ զամենեսեան միաբանեաց, արար գունդս գունդս»<sup>3</sup>:

Պարզելով Այրկովկասի վարչական բաժանումը VI դարի վերջին և VII դարի սկզբին, մենք պետք է պատասխան տանք մի հարցի ևս. կապ կար, արդյո՞ք, Հայաստանի V և VII դարերի վարչական բաժանումների միջև: Մեր կարծիքով, կային և նմանություններ և տարբերություններ: Կրկին անդրադառնալով եղիշեի հաղորդած տեղեկություններին, մենք տեսնում ենք, որ Հայկական մարզպանությունը V դարում ևս բաղկացած էր երեք վարչական շրջաններից: Թեոդոս կայսերը ուղարկված հրովարտական հիշատակված Վասակ Սյունին, որ հայոց մարզպանն էր, ներկայացնում է երկու վարչական միավոր՝ Տանուտիրական Գնդի երկիրը և Սյունիքը: Եթե հանգամանքների բերումով Վասակ Սյունին մարզպան չլիներ, ապա մարզպանից հետո կհիշվեին Ներշապուհ Ռմբոսեանի և Սյունյաց իշխանի անունները: Հնարավոր է, որ անմիջապես մարզպանի ենթակայության տակ գտնվող երկրամասը V դարում դեռ Տանուտիրական Գնդի երկիր անունը չէր կրում և որ այն վերջնական վարչական ձևավորում ստացավ միայն Վահան Մամիկոնյանի 482-484 թթ. ապստամբությունից հետո, երբ մարզպանությունը որպես կանոն հանձնվում էր հայ իշխաններին, որոնք կրում էին տանուտեր տիտղոսը: Սակայն պարզ

<sup>1</sup> Սեբեոսը հիանալի գիտե Մեծ Հայքի տարածքը, չնայած մեծ մասամբ օգտագործում է պաշտոնական վարչական բաժանումը: Այդ երևում է մասնավորապես Վահրամ Չուբինի հայ նախարարներին գրած նամակից. «... Ընդ տուեալ լիցի թագաւորութիւն հայոց. եւ զոր կամիցիք արասցիք ձեզ թագաւոր, եւ յկարող կողմանէ զԱսորեստան, եւ զՄծուին, եւ զՆուշիրական մինչեւ ի սահմանս տաճկաց: Եւ ես մի իշխեցից քան զԱրասխ անցանել յայր կոյս...» (Պատմութիւն, էջ 95):

<sup>2</sup> Սեբեոս, էջ 50:

<sup>3</sup> Սեբեոս, էջ 51:

է, որ իրականացնելով պարսից արքունիքի գերիշխանությունը Հայկական մարզպանության ողջ տարածքում, մարզպանները անմիջական, չմիջնորդավորված իշխանություն ունեին առաջին հերթին հետագայում **Տանուտիրական երկիր** կոչված երկրամասում: Ավելին, առանձնաշնորհյալ դիրք շնորհելով Սյունյաց և Ռմբոսեան կամ Մարդպետի պաշտոնն ստացած Արծրունիներին, պարսից արքունիքն աշխատում էր ոչ միայն սիրաշահել և իր կողմը գրավել այս ընտանիքներին, այլև ինչ-որ տեղ հակակշիռ ստեղծել մարզպանների իշխանությանը, որոնք կփորձեին հանդես գալ Սասանյանների իշխանության դեմ:

Սակայն V դարում այս վարչական միավորները դեռ լիակատար կերպով չէին ձևավորվել և ստացել այն կերպարանքը, որ նրանք ունեին VII դարում: V դարի առաջին կեսին Սյունիքի մեջ պետք է մտնեին նաև **Փոքր Սյունիքի** կամ **Արցախի** հողերը, որոնք Վարդան Մամիկոնյանի 450-451 թթ. ապստամբությունից հետո պարսից արքունիքը կցեց Աղվանից մարզպանությանը<sup>1</sup>: Վասպուրական կամ Սեպհական **Գնդի երկիրը** պետք է իր մեջ ներառներ Պտղոմեոսյան շրջանի **Տոսպք-Տոսպիտիս** և **Մարդպետական-Մարդոի** աշխարհների տարածքը, որպես անմիջական հետևանք հայր-մարդպետների կողմից դեռևս IV դարում իրենց տեսչությունը նաև Տոսպքում հաստատելու իրողության:

Սոցիալական իմաստով այդ երկու մասերի միջև գրեթե տարբերություն չկար, որը և նպաստեց նոր վարչական միավորի հանդես գալուն: Սակայն, եթե Մարդպետականը ամբողջությամբ արքունական տիրույթ էր, ապա Տոսպքը մի մասով նաև նախարարական երկիր էր: Հայր-մարդպետների իշխանությունը, եթե չհաշվենք Ռշտունիների և Արծրունիների ժամանակավոր անկման շրջանը, Տոսպքում տարածվում էր միայն արքունական տիրույթների վրա, սակայն մարդպետությունը Արծրունիներին հանձնվելուց հետո, վերջինների իշխանությունը տարածվեց ողջ աշխարհի վրա: Վարչական ձևավորումը, ինչպես տեսանք, հիմնական զծերով բացատրվում է, սակայն անհասկանալի է մնում մի հարց, թե ինչպե՞ս նոր ձևավորված վարչական շրջանն ստացավ Վասպուրական անունը:

Պատմահայրը վկայում է, որ Արտաշեսյանների և Արշակունիների օրոք **Հաշտյանք, Աղիովիտ և Առբերանի** գավառները հանձնված էին արքունի

սեպուհներին բնակության համար: Մովսես Խորենացին Տիգրան Մեծի որդուն՝ Արտավազդին է վերագրում իր եղբայրներին ու քույրերին **Աղիովիտ և Առբերանի** գավառները որպես ժառանգություն հանձնելը. *«Հայոց թագաւորէ Արտաւազդ որդի Տիգրանայ: Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս ի գաւառս Աղտյ ովտի և Առբերանոյ, թողլով ի նոսա զմասն արքունի որ ի շէսն այնց գաւառաց, հանդերձ առանձին մտից և ռոճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատուակաւագոյն և առաւել թագաւորազն քան զայնս Արշակունիս. միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի»*<sup>1</sup>: Սակայն ընդամենը մի քանի թերթ հետո նա հավաստում է, որ Արտաշես Ա-ի որդի Արտավազդ Ա-ը հալածել է իր եղբայրներին Այրարատից **Աղիովիտ և Առբերանի** գավառները, զրկելով նրանց արքունիքում ապրելու իրավունքից. *«Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատայ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի բնակեցցեն յԱյրարատ ի կալվածս արքայի. բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա»*<sup>2</sup>: Հնարավոր է, որ Խորենացին միևնույն փաստը վերագրում է երկու տարբեր Արտավազդների, սակայն մի բան պարզ է, որ հիշյալ գավառները հանձնվել էին արքունի սեպուհներին շատ հին ժամանակներում: Ըստ երևույթին, արքունի սեպուհներին Աղիովիտ և Առբերանի գավառները ուղարկելը հին ավանդույթ էր և ծնունդ էր առնում դեռևս Վանի պետության շրջանից, որովհետև ասորեստանյան Սարգոն Բ թագավորի (722-705 թթ. մ.թ.ա.)՝ դեպի Վանի թագավորություն կատարած 714 թվականի արշավանքի նկարագրությունից պարզվում է, որ հիշյալ գավառների տարածքը հանդիսանում էր Ռուսա Ա-ի (735-714 թթ. մ.թ.ա.) եղբայրների և թագավորական ընտանիքի բնակության վայրը<sup>3</sup>: Արքունի սեպուհների, առաջին հայացքից, արտոնյալ վիճակը, իրականում, չէր համապատասխանում իրականությանը: Արքունի սեպուհների թիվը բնական աճի հետևանքով մեծանում էր, իսկ արքունիքը հաստատակամորեն նրանց նոր հողեր չէր հատկացնում: Ինչպես հայտնում է Խորենացին, Արտաշես Ա թագավորի որդու Տիրանի գահակալության շրջանում *«...եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից՝ ասեն. «Ընդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է, քանզի բազմազաք յոյժ»: Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ: Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ՝*

<sup>1</sup> Տե՛ս մանրամասն Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին, տե՛ս «Բանբեր երևանի համալսարանի», 1976, թիվ 2, էջ 77-95: Բ. Ա. Арутюнян, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, տե՛ս «Кавказ и Византия», вып. I, Еրևան, 1979, էջ 25-27:

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 137:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, էջ 191:

<sup>3</sup> АВИИУ, տե՛ս ВДИ, 1951, թիվ 2, էջ 329:

ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հաւասար տրոհել յին-  
քեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթվի՝ գտաւ պակաս ժառանգութիւն բնա-  
կողացն Հաշտենից, վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառ: Աղիովտի  
և Առբերանոյ»<sup>1</sup>: Որքան էլ տարօրինակ լինէր, արքունի սեպուհները հայ  
Արշակունի թագավորներից գոհ լինելու առանձին պատճառներ չունեին:  
Արքունիքն ամեն ինչ անում էր նրանց տնտեսական ուժեղ հիմքից զրկելու  
ուղղությամբ, որպեսզի վերջիններս նրա դեմ գործելու ամենափոքր իսկ  
հնարավորություն չունենան: Վաղուց ի վեր ընդունված կարգ էր, որ արքունի  
ոստան հանդիսացող Այրարատում կարող էին բնակվել միայն թագավորը  
և թագաժառանգը, իսկ արքայական ընտանիքի մյուս անդամները պետք է  
բնակվեին Հաշտյանքում և մյուս սեպուհական գավառներում<sup>2</sup>: Ի տարբերու-  
թյուն նախարարական տների սեպուհների, որոնք արքունի ծառայության մեջ  
կարող էին բարձր դիրքերի հասնել, արքունի սեպուհները բարձրաստիճան  
պաշտոններ զբաղեցնել, հավանաբար չէին կարող:

IV դարի երկրորդ կեսին հիշյալ գավառները շարունակում էին հանդի-  
սանալ արքունի սեպուհների բնակատեղի, որովհետև անդրադառնալով Գնել  
Արշակունու Արարատյան դաշտում հաստատվելուն և Արշակ Բ արքայի վեր-  
դավունքին, նա գրում է. «Ընդէ՛ր բնակեցար յԱյրարատ և լուծեր զկարգ հայ-  
րենեաց: (Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ  
որդոյ նորա, զոր փոխանորդ թագաւորի պահէին, և այլոց Արշակունեաց  
բնակել ի գաւառս Հաշտենից և Աղիովտի և Առբերանոյ, հանդերձ ռոճկօք և  
մտիւք յարքունուստ): Եւ արդ՝ ընտրելի է թեզ, կամ ընդունել զմահ, կամ գնալ  
յԱյրարատայ, և արձակել ի թէն զուստերս նախարարացդ»: Զայս լուե-  
ալ Գնելոյ՝ արար զհրամանս արքայի և գնաց յԱղիովտ և յԱռբերանի»<sup>3</sup>:  
Սեպուհական գավառներից, ինչպես նշվեց Տավրոսբերանի բաժնում, Աղի-  
ովտն ամբողջությամբ չէր պատկանում արքունի սեպուհներին, որի արևմուտ-  
յան մասը՝ դատելով Թովմա Արծրունու հաղորդումից<sup>4</sup>, պատկանում էր Գնու-  
նիների իշխանական ընտանիքին:

Մեծ Հայքի թագավորության 387 թվի բաժանումից հետո Հաշտյանք գա-  
վառն անցավ Հռոմեական կայսրությանը (395 թվից Բյուզանդական կայս-  
րություն) որպես ինքնավար իշխանություն կամ սատրապություն: Հաշտյան-  
քի գավառակալը, որ սովորաբար նշանակվում էր հայոց արքունիքի կողմից  
Կամիւնական տոհմից, կայսրության կողմից ճանաչվեց ժառանգատեր իշխան,

<sup>1</sup> Մովսես Խորենացի, էջ 193:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, էջ 118, 282-283:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, էջ 282-283:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 277:

որի հետևանքով Արշակունի սեպուհներն այդ գավառում վերածվեցին փաս-  
տորեն սովորական ազատների և նրանց հետագա ճակատագրի մասին մեզ  
ոչինչ հայտնի չէ: Արևելա-հայկական թագավորության կազմում մնացին  
Աղիովտը և Առբերանին, որոնք, անկասկած, մինչև թագավորության անկու-  
մը շարունակում էին հանդիսանալ արքունական՝ սեպուհական կալվածներ:

Մեծ Հայքի թագավորության վերացումից հետո հայոց արքունական տի-  
րույթները, այդ թվում նաև սեպուհական գավառները, վերածվեցին Սասան-  
յանների սեպուհականության: Վերջիններս աշխատում էին ձեռնական իշխանու-  
թյուն ունեցող հայ նախարարներին ժառանգատեր դարձնելու միջոցով գրա-  
վել իրենց կողմը<sup>1</sup>: Սասանյան արքունիքը որոշեց իր կողմը գրավել նաև  
Արշակունյաց սեպուհներին, որոնք հայ թագավորների օրոք կաշկանդված  
վիճակի մեջ էին գտնվում: Նրանց հողեր տրվեցին մարդպետների տեսչու-  
թյան տակ գտնվող Տոսպքի և Մարդպետականի արքունի կալվածքներում:  
Ստեղծվեց մեծաքանակ մանր ազնվականների մի խավ, որը պետք է զինվո-  
րական ծառայություն կատարեր պարսից արքունիքի համար: Տնտեսապես  
առանձնապես մեծ ուժ չլինելով, նրանք առանձնաշնորհյալ դիրք էին ստա-  
նում իրենց բարձր ծագման շնորհիվ: Սեպուհներից հավաքվող զորքը կոչ-  
վում էր Սեպուհական գունդ, իսկ երկիրը՝ բնականաբար Սեպուհական Գնդի եր-  
կիր: Սակայն այսպես կարող էին կոչել նրանց հայերը, իսկ պարսից արքու-  
նիքի համար նրանք վասպուկներ էին: Թե «սեպուհ»-ը և թե «վասպուկ»-ը  
ծագում են գենդական «visahpu-šra»-ից, որ նշանակում է «տոհմի որդի»<sup>2</sup>:  
Հենինզի կարծիքով «վասպուկ»-ը նշանակել է ոչ թե «արքայազն» կամ «իշ-  
խանազն», այլ «առանձնահատուկ, մասնավոր դիրք ունեցող», ուստի «Վաս-  
պուրականն» էլ պետք է նշանակեր «հատուկ դիրք ունեցողներ»: Հիշյալ  
տերմինը ունեցել է նաև թագավորի «հատուկ, մասնավոր ունեցվածքը»,  
«անձնական կալվածքը» նշանակությունը, որը հանդիպում է Նախշի-Ռուս-  
տեմի արձանագրության մեջ<sup>3</sup>: Ա. Փերիխանյանը գտնում է, որ Սասանյան

<sup>1</sup> Անուշտ այս հանգամանքով պետք է բացատրել այն իրողությունը, որ որոշ ըսու նախարա-  
րներ պարսից արքունիքի սպորանքով պահանջեցին Արտաշես կամ Արտաշիր (422-428) թագա-  
վորին գահընկեց անել:

<sup>2</sup> Այս մասին տե՛ս և Մառ, Հայոց «սեպուհ» և վրացոց «սեպիտ» բառերի ստուգաբանությունը.  
տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1892, էջ 165: Н. Адонц, նշվ. աշխ., էջ 401, 443, 472-473: Z.  
Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979, էջ 202-203: A. Périkhanian,  
«Revue des Études Arméniennes», V, 1968, 16-23: A. Г. Периханян, Сасанидский Су-  
добник, Ереван, 1973, էջ 533, ինչպես նաև 4, 11; 32, 17; 101, 14; 106, 8; A 2 9, 11:

<sup>3</sup> A. Г. Периханян, Armeno-Iranica I, տե՛ս «Տեղեկագիր ՀՍՄՀ ԳԱ» հասարակական գիտու-  
թյուններ, 1965, թիվ 11, էջ 91: Վ. Կարդանյան, Մարդերը Վասպուրականում, տե՛ս ԴԲՀ, 1971,  
թիվ 3, էջ 56-77:

դատաստանագրքում «Վասպուրական» տերմինն ունի նաև «մասնավոր ունեցվածք» իմաստը, որն արտահայտված է «*pēsikan*» տերմինով և: Վասպուրական է նշանակել հայրական ժառանգության տղային կամ աղջկան անցած բաժինը կամ աղջկա օժիտը: Հայերենում նրան համարժեք է «սեպհական»-ը<sup>1</sup>: Ելնելով «Վասպուրական» տերմինի վերոհիշյալ բացատրությունից, դժվար չէ տեսնել, որ հայ իրականության մեջ Վասպուրականը պետք է նշանակեր արքունի սեպուհների մասնավոր կալվածք, տոհմական տիրույթներից նրանց տրված բաժինը: Ամենայն հավանականությամբ, ի տարբերություն Հայաստանի մյուս արքունական կալվածքների, որոնք իրենց իրավական դրությունը չփոխեցին, պարսից արքունիքը Վասպուրականում ճանաչեց սեպուհների ժառանգական իրավունքը: Սակայն սեպուհները, քանակապես մեծ թիվ կազմելով, փաստորեն լրացրեցին ազատների շարքերը և հիմք չդրեցին առանձին նախարարական ընտանիքների:

Հայ մատենագրության մեջ «Վասպուրական» անունն առաջին անգամ հանդիպում է Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» մեջ անորոշ «նախարարս Վասպուրականի» ձևով<sup>2</sup>, որը, մեր կարծիքով, արդեն խոսում է Վասպուրական աշխարհի ձևավորման մասին<sup>3</sup>: Պարսից արքունիքի համար հայ սեպուհները պաշտոնապես վասպուրներ էին, իսկ նրանց երկրամասը Վասպուրական: Թե մեկ և թե մյուս հասկացությունները մուտք են գործել հայ իրականություն, կապված Արևելյան Հայաստանում Սասանյանների գերիշխանության հաստատման հետ, այլապես նրանք կունենային «վասպուհ» և «Վասպուհական» արտասանությունը:

Հայագիտության մեջ արմատացած է այն տեսակետը, որ Վասպուրականը կարող էր ձևավորվել միայն 591 թվի իրադարձություններից հետո, երբ Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց Բյուզանդական կայսրության և Պարսկաստանի միջև: Բայց որքան էլ տարօրինակ լինի, այդ բաժանման հետևանքով Վասպուրականի՝ որպես աշխարհի, գաղափարը մեռավ: VI դարի վերջին և VII դարի սկզբին Արևելյան Հայաստանն իրենից ներկայացնում էր հետևյալ վարչական պատկերը. Սյունիքը, որ 571 թվին անջատվել էր Հայկական մարզպանությունից և միացվեց Ատրպատականի աշխարհագրին, իրենից ներկայացնում էր Սյունյաց իշխանների տոհմական կալվածքները: Տանուտի-

րական Գնդի երկրի մեծագույն մասի Բյուզանդական կայսրությանը միացնելուց հետո Հայոց մարզպանության Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հատվածը, որը՝ դատելով Սեբեոսի տեղեկություններից, պաշտոնապես ստացավ Վասպուրական Գնդի կամ Վասպուրական երկիր անունը, շատ ավելի ընդարձակ էր, քան Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը: Վասպուրական Գնդի երկիրը, համարժեք դառնալով մարզպանությանը, իր մեջ առավ Վասպուրական աշխարհի տարածքից զատ նաև Այրարատի արևելյան հատվածը՝ Մասյացոտն, Արածու կողմն և Ոստան Դվնա գավառներով, Մոկքը, Տմորիքը, Պարսկահայքի կամ, որ ավելի ճիշտ է, Պարսահայքի հյուսիսային գավառները և այլն<sup>1</sup>:

Արծրունյաց ընտանիքը, ձեռք բերելով պարսից արքունիքից ձեռական իշխանության կամ կառավարչության իրավունք Վասպուրական աշխարհի տարածքի նկատմամբ, պարսկական տիրապետության առաջին շրջանում կարողացավ աստիճանաբար իր ավատատիրական ազդեցությունը ուժեղացնել ոչ միայն նախկին արքունական կալվածքների, այլև Տոսպիտիս-Տոսպում գտնվող նախարարությունների նկատմամբ: Ավելին, եթե անգամ այդ շրջանում հիշյալ երկրամասերը նրանց ժառանգական տիրույթը չդարձան էլ, ապա հող նախապատրաստվեց Արծրունիների հետագա բարձրացման համար:

591 թվից հետո Արծրունիների գործունեության ոլորտն ընդլայնվեց, չնայած մարզպանության տարածքը խիստ կրճատվել էր: Նրանց հաջողվեց իրենց ազդեցության տակ առնել Մոկքը, Տմորիքը, Կորդիքը, Պարսկահայքի մի մասը և այլն: Արաբական տիրապետության շրջանում այդ երկրություններն ավելի բուռն ընթացան: Արծրունիները տարածվեցին ոչ միայն Վասպուրական աշխարհի տարածքով մեկ, այլև հարևան երկրամասերում և հիմնադրեցին բազմաթիվ ժառանգական իշխանություններ, իրենց ենթարկելով դեռևս գոյությունը պահպանող իշխանությունները<sup>2</sup>: Այս բոլորի հետևանքով Արծ-

<sup>1</sup> Б. А. Арутюнян, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, տե՛ս «Кавказ и Византия», вып. 1, էջ 19-35:

<sup>2</sup> Թովմա Արծրունի, էջ 261. «...բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի որպէս ասացաք յառաջագոյն, զգահն նախնական իշխանութեան, այլովք յովվագոյն միջոցօք աշխարհիս մինչեւ յամուրն Լախճասնու:

Իսկ Գագիկ գլորմանս Ռշտունեաց, այլովք մօտակայիք գաւառօք եւ որքան իցէ հասումն ուժոյ, անոր եւս յաշխարհն Մոկաց: Եւ Գուրգեն գլորմանս արեւելից, յելից Աղբագոյ եւ որ շուրջ զնովքս ամենայն Պարսկահայք մինչեւ ի մոսսս Կորդաց, եւ ուր եւ ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ, եւ այսորիկ այսպէս»:

էջ 276. «Եւ գրէ թէ ամենայն իշխանք Հայոց, Կրաց եւ Աղոսանից եկեալ էին ընդ զօրս հայոց ի վերայ աշխարհին Ապահունեաց, էր ընդ իշխանս եւ մեծ իշխանն Վասպուրական Աշոտ որդի Դերանկին, եւ ընդ նմա Գրիգոր իշխանն Մոկաց, եւ զօրքն Անձաացեաց: Վասն զի իշխանն Մոկաց եւ իշխանն Անձաացեաց նուաճեալ էին ընդ ձեռամբ Վասպուրական իշխանութեան. եւ անցեալ բանակեալ էին զօրքն Հայոց ի դաշտին Օշական ի Մանաազեան նահանգին»:

<sup>1</sup> А. Г. Периханян, Сасанидский Судебник, էջ 533:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, էջ 194:

<sup>3</sup> Վ. Վարդանյանը դեռևս 1976 թվին այն կարծիքն է հայտնել, որ Վասպուրականը որպես վարչա-բնատարածքային միավոր եղել է V դ. և դրանից էլ առաջ, սակայն Վասպուրական աշխարհի ձևավորումը կապում է Հայաստանի 591 թվականի բաժանման հետ (Տե՛ս «Հայ-իրանական փոխհարաբերությունները V դ. վերջին և Վասպուրականը», տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, թիվ 2, էջ 96-97, 102-103:

րունիները վերածվեցին Հայաստանի երկրորդ քաղաքական ուժի, զիջելով միայն Բազրատունիներին:

Վասպուրական աշխարհի հիշատակությունը, որ եզակի է V դարում, առավել հաճախակի է դառնում VI և հետագա դարերում: Հայկական մարզպանության վարչական կառուցվածքն իր ազդեցությունը ունեցավ նաև Հայոց եկեղեցու թեմական բաժանման վրա: Սակայն պետք է խոստովանել, որ եկեղեցական բաժանումը միշտ չէ, որ համընկնում էր վարչա-քաղաքական բաժանմանը: «Գիրք թղթոց»-ում հիշվում է «Սեպհական Գնդի եպիսկոպոս» Թեոդորոսը, որն անշուշտ ներկայացնում է Վասպուրական աշխարհը, սակայն այն հանգամանքը, որ Նրա հետ մեկտեղ հանդիպում է նաև Անձևացյաց եպիսկոպոսը<sup>1</sup>, ցույց է տալիս, որ Թեոդորոսը ներկայացնում է ոչ թե ողջ աշխարհը, այլ Արծրունիների ազդեցության ներքո գտնվող գավառները: Այն իրողությունը, որ «Գիրք թղթոց»-ում Մարդպետական և Արծրունյաց եպիսկոպոսները նույնանում են<sup>2</sup>, բացահայտ կերպով խոսում է մարդպետների տեսչության տակ գտնվող երկրամասերի Արծրունիներին անցնելու մասին:

«Աշխարհացոյց»-ի հեղինակն արձանագրել է հենց այն շրջանը, երբ պարսից արքունիքի կողմից արքունի սեպուհները որպես ժառանգություն ստանում են մարդպետի տեսչության տակ նախկինում գտնված արքունական կալվածները և կազմում Սեպհական կամ Վասպուրական Գունդը: Հեղինակն, օգտագործելով հանդերձ հին արխիվային աշխարհագրային նյութերը, Մեծ Հայքի վարչական բաժանումը տվել է V դարի, հավանաբար, երկրորդ կեսի կացությամբ: Չնայած Վասպուրականը որպես աշխարհի վերջին հաշվով պարսից արքունիքի վարչական գործունեության արդյունք էր<sup>3</sup>, սակայն ծնունդ էր առել հայկական իրականության կենսունակ հողի վրա, ուստի ջննություն բռնեց և գոյատևեց հետագա դարերում:

## Վ Ե Ր Զ ԱՌԱԶԻՆ ՄԱՍԻ<sup>4</sup>

<sup>1</sup> «Գիրք թղթոց», էջ 151:

<sup>2</sup> Անդ, էջ 70, 73, 76, 81:

<sup>3</sup> Ինչպես արդեն նշվել է, դրա հիմքերը դրվել էին դեռևս Յայ Արշակունիների թագավորության վերջին շրջանում:

<sup>4</sup> Անձնանունների և տեղանունների միասնական ցանկերը տրվելու են աշխատության երկրորդ մասում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ԳԼՈՒԽ Ա - Բարձր Յայք .....	56
ԳԼՈՒԽ Բ - Ծովք .....	114
ԳԼՈՒԽ Գ - Աղձնիք .....	146
ԳԼՈՒԽ Դ - Տավուրբերան (Տուրուբերան) .....	219
ԳԼՈՒԽ Ե - Մուկր .....	255
ԳԼՈՒԽ Զ - Կորճայք .....	271
ԳԼՈՒԽ Է - Պարսկահայք .....	310
ԳԼՈՒԽ Ը - Վասպուրական .....	354

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ՄԵԾ ՀԱՅՔԻ ՎԱՐՉԱ -ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»- Ի

Ստորագրված է տպագրության 22.10.2001: Չափսը 60x84,<sup>16</sup>  
Թուղթ օֆսեթ N1: Հրատ. 23 մամուլ, տպագր. 25.25  
մամուլ=23,48 պայմ. մամուլ:

Տպաքանակ 300: Գինը պայմանագրային: Պատվեր 171:

Երևանի համալսարանի հրատարակչություն  
Երևան, Ալ. Մանուկյան 1:

---

Երևանի պետական համալսարանի օպերատիվ  
պոլիգրաֆիայի ստորաբաժանում  
Երևան, Ալ. Մանուկյան 1